Գ. ՏԷՐ-ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ

# ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

на Дворцовой ул.
въ Главномъ Арсенал
въ Тифлисѣ

Հրատարակութիւն Թիֆլիսի ընկ. հայերէն գրքերի հրատարակութեան.

1729

ԳԷՈՐԳ ՏԷՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ

# ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

## ՄԱՍՆ Ա.

Ցուց 2767

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

(Աղօթքներ, երգեր, առածներ եւ ասացուածներ, հանելուկներ եւ շուտասելուկներ, օրհնանք եւ բարեմաղթութիւնք, անէծք եւ քիշոց, երդումն, սպառնալիք, փաղաքշանք եւ խնդիր, ողջոյն եւ շնորհակալութիւն, ծաղր եւ հանաք, կանանց սուգ, կենացներ, փողոցէ փողոց շրջող մանրավաճառների (կինտօների) բացականչութիւններ, աւելի եւ հին անուններ եւ ազգեր եւ զանազան երկրացոց մասին ածականներ, երեխանց թոթովանք, ոճեր եւ դարձուածներ, հեքիաթներ).

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ԵՐԵՒԱՆԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1|2
1885

Дозволено цензурою. Тифлисъ, 24 Октября 1885 г.

Типографія И. Мартиросіанца, Орбел., ул., д. 1/2.

# ՆՈՒԷՐ

## ԳԷՈՐԳ ԱԽՎԵՐԴԵԱՆԻ

### ԱՆՄՈՌՈՒՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ։

Ա՛խ, ափսոս վուր կինքդ կարճ էր
Միր Հախվերդինց Գէուրք աղբէր։

---

Քիզպէս մարթուն գլխուննիմէն
Աստուծ վո՛ւնց պիտի չը ջոգէ
Էրգար կինքով ու շատ ըմրրով,
Սաղ ջանով ու անմաշ մարմնով։

---

Վուր ինչ որ քու մտկումը կէր,
Ու օրէցօր աւելնում էր,
Չէր կորի միր խալխի համա,
Նրան գիր ըլէր, ճար ու դարման։

---

Ինչի՞ համա, ա՛խ, Աստված իմ,
Նրա պէս մարթիք քիչ իս տալի.
Ի՛փ տալիս իս, էլ ո՞ւր իս Դուն
Ձեռներեմէս չուտ կիդ խլում։

---

Գիշիր ցերեկ, ամեն սահաթ
Փիքըր էր քաշում խալխի համա,

Թէ խօսկով ու թէ գլխով,
Ըմեն թահար, ամեն ճանփով։

---

Ղուրթ է, ջանի էլ էր հեքիմ,
Անփուղ առվուղչացնում շատին.
Ըմա ուփրօ խալխի հոքուն
Էր խիղճը հեքմութին անում։

---

Իր գլուխը մոէն էր դըցի,
Փառքն ու պատիւը վըրաղ դըրի.
Խալխի ցաւիրը քըքըրում,
Նըրանցը դուր ու դարման անում։

---

Գըրում էր, յիդ էլի գըստում,
Գըրածին ինքը չէր հաւնում.
Ըմա նրա էն չըղըստածն էլ ․
Միզ համա մինձ օգուտ կու՚լէր։

---

Միր ուստէն էր նա շատ բանում,
Նըրամէն օրինակ վիկալնում.
Ինձ էլ էս ճանփէն շանց տվող
Նա է էլի իր գըրերով։

---

Էնդուր էլ իս էրած սրտով,
Լալով, խորին—մորին գալով
Միշտ ասիլ իմ
Ու ասում իմ՝

---

Ա՛խ, ափսուս վուր կինքտ կարճ էր
Միր ճախվերդլինց Գէուրք աղբէր։

Գ. Տ. Ա.

---

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս ժողովածուն, որ այժմ ընթերցող հասարակութեան առաջն է դրուած, 26 տարուան աշխատութեան պտուղ է։ Չեմ ուզում ասել դորանով, թէ չէր կարելի աւելի շուտ հրատարակել այդ, բայց որովհետև նիւթը ժողովրդից քաղելու էր և այն մեծ ընտրողութեամբ, վասն որոյ հարկաւորուեցաւ աւելի ժամանակ՝ կարելի լիակատարութեան և ճշդութեան հասցնելու համար։

Դեռ. ուսումնարանի նստարանից (1859 թ.) սկիզբն է առնում աշխատութիւնս և ինձ այս գործին համարեա թէ իմ ամբողջ կեանքը նուիրելու զրդող պատճառ եղաւ թէ ռուսաց և թէ այլ ազգերի մէջ ժողովրդեան մտաւոր պտուղների հաւաքումը և թէ յուսահոգի Գէորգ Ախվերդեանի հրատարակուած Սայեաթ-Նովան և անմոռանալի Խաչատուր Աբովեանի Վէրք Հայաստանին։

Ով որ ծանօթ է այսպիսի ժողովածուների նշանակութեան, ի հարկէ նորա համար աւելորդ է կրկնել, որ ժողովրդի մտաւոր կեանքը և հոգին ներկայացնելու հետ միասին այսպիսի ժողովածուն տալիս է և բարբառի հարստութիւնները պարունակող մի գիրք։

Նա մանաւանդ մեզ հարկաւոր է այսպիսի տեղական բուն հայկական ժողովրդական բարբառների հարստութեանց ամփոփումն, քանի որ զանազան տեղերում ցրուած հայոց բարբառները հետզհետէ աղաւաղւում են այլ և այլ ազդեցութեանց ներքոյ և քանի որ մեր գրագէտք, ժողովրդական բարբառներին անտեղեակ լինելով, շեղւում են բուն հայկական ոճերից և ձևերից, ենթարկուելով այն լեզուների ազդեցութեան, որոնցով ստացել են իրանց կրթութիւնը, օրինակ՝ ռուսաց, գերմանացոց, փրանսիացոց և այլն։

Այժմ հասարակութեան ներկայացրած իմ ժողովածուն կազմուել է գլխաւորապէս անձամբ իմացածովս և լսածովս։ Բայց հաւաքել չէր կարելի բոլորը, որովհետև մարդուս միտքը ծով է և հնար չը կայ ամբողջապէս ըմբռնել ժողովրդի բոլոր մտաւոր արտայայտութիւնքը։ Եւ ընդ. սմին հաւաքել և մտցնել ժողովածուիս մէջ չէր կարելի բոլոր լսածը. այլ դորա համար դիմում էի ես

աւելի ճիշդ աղբիւրին՝ այն է բուն Թիֆլիսեցի պառաւ և անգրագէտ կանանց և մասամբ ծեր և անգրագէտ տղամարդկանց, որոնք՝ հեռու զանազան ազդեցութիւններից, կարողացել են պահպանել իրանց պապերից հասած աւանդութիւնը սրբութեամբ։ Իսկ թէ ինչ աստիճան ես կարողացել եմ ըմբռնել լսածս և իմացածս և ճշդութեամբ պահպանել, դորան քիչ թէ շատ երաշխաւորութիւն կարծեմ կարող են տալ իմ աշխատասիրութիւնները Թիֆլիսի բարբառով, որ ժամանակ առ ժամանակ, այն է 1859 թուից սկսած լոյս են տեսել մեր պարբերական մամուլի մէջ և գլխաւորապէս «Մեղու Հայաստանի» լրագրում և «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագրում, թէ իմ ազգանուան ստորագրութեամբ և թէ կեղծ անուններովս՝ Գէօ Աւետխով, Դարբաղ Ղազօ և Աղվլենինց Դաւիթ։

Չեմ կարող ասել թէ ճշդութեան կողմից անսխալ եմ, բայց կարելին արել եմ, որքան հնար կար ինձ համար և չեմ կասկածում, որ մի քանի անճշդութիւնք մնացած լինին ժողովածուիս զանազան մասերում։

Բացի լսածիցս օգուտ եմ քաղել նմանապէս թէ հայոց և թէ օտարազգի համանման ժողովածուներից և․ այլ և այլ մեր գաւառական բարբառներով գրուած աշխատութիւններից։ Իսկ միւս բարբառներից կամ օտար լեզուներից ոչ թէ թարգմանօրէն կամ փոխադրութեամբ եմ մուծել ժողովածուիս մէջ ինչ և իցէ, այլ նոցա հետևելով՝ Թիֆլիսի բարբառում գտել եմ համապատասխանը և դրել. այնպէս որ միւս ժողովածուներին դիմելս լոկ այն նպատակով է եղել ինձ համար, որ յիշեցնեն ինձ նոքա այս կամ այն տեսակ ասած մի բան, որ գուցէ այլապէս ականջս չընկնէր ժողովրդի բերանից։

Այստեղ աւելորդ չեմ համարում յիշել այն աղբիւրները՝

1) Գէորգ Ախվերդեան—Սայեաթ-Նովա.
2) Խաչատուր Աբովեան—Վէրք Հայաստանի.
3) Պերճ Պռօշեան—Սօս և Վարդիթեր.
4) Ղազարոս Աղայեան—Արութին և Մանուէլ.
5) Գաբրիէլ Սունդուկեան—Պէպօ, Քանդած օջախ, Խաթաբալա, Էլի մէկ զոհ, Գիշերվայ սարբը խէր է, Օսկան Պետրովիչը դժոխկումը.
6) Միքայէլ Տէր-Գրիգորեան—Նինօի նշնիլը, Պիպօի ակճուր, Պառաւներուն խրատ, Էս էլ քեզ մօցիքլութին.
7) Միքայէլ Պատկանեան—Միջի մարդ.

8) Նիկողայոս Փուզինեան—Դալալ Ղազօ.
9) Գարեգին Վ. Սրուանձտեան—Գրոց և բրոց, Հնոց և նորոց, Մանանայ, Համով—հոտով.
10) Ալլահվերդեան—Ուլնիա կամ Զէյթուն.
11) Արիստակէս Վ. Տէր Սարգսեան—Վանցի պանդուխտ.
12) Արիստակէս Վ. Սեդրակեան—Քնար Մշեցոց և Վանեցոց.
13) Գէորգ Շերենց—Վանայ սազ.
14) Միքայէլ Մխանոսրեան—Քնար Հայկական.
15) Աւագ Գրիգորեան—Սոխակ Հայաստանի. 3-դ հատոր, ուր են՝ աշուղների երգեր, առածներ և այլն.
16) Քերովբէ Պատկանեան—Изслѣдованіе о составѣ Армянскаго языка, Изслѣдованіе о діалектахъ Армянскаго языка, Матеріалы для изученія Армянскихъ нарѣчій: выпускъ I говоръ Нахичеванскій, выпускъ II Мушскій діалектъ.
17) Սարգսեան—Ագուլեցոց բարբառը (Զօկերի լեզուն).
18) Սիմոն Վ. Ճուլարտեան—Առածք ազգայինք.
19) Տիգրան Նաւասարդեան—Հայ ժողովրդական հէքեաթներ (երեք տետրակ). Հանելուկներ, առածներ, շուտասելուկներ, անէծքներ, օրհնութիւններ, երդումներ—(մէկ տետրակ).
20) Միքայէլ Քոչարեան—Ազգային առածներ (Կռունկ ամսագիր 1860).
21) Յովսէփ Խոջայեան—Հայկական առածք. (Արարատ ամսագիր 1870).
22) Գրիգոր Կերակոսեան—Ազգային առածք. գաւառական հանելուկներ. (Մեղու Հայաստանի լրագիր. 1860).
23) Даль-Пословицы русскаго народа.
24) Аѳанасьевъ—Народныя русскія сказки.
25) პეტრე უმიკაშვილი—ქართული ანდაზები.
26) რაფაელ ერისთავი—ქართული გამოცანები.

Գ. Քերովբէ Պատկանեանի և հանգուցեալ Գէորգ Ախվերդեանի վերևը յիշուած աշխատասիրութիւններից առաջ եմ բերում մի քանի մտքեր գաւառական բարբառների նշանակութեան և նոցա ուսումնասիրութեան մասին և մասնաւորապէս Թիֆլիսեցոց բարբառի վերաբերութեամբ։

Աշուղների երգերի վրայ խօսելիս հանգուցեալ Ախվերդեանը

վերոյիշեալ իւր Թատրոնական գրուածքներում այդպիսի ե տառը որոշում է յե. իսկ ես աչքի առաջ ունենալով, որ այդ ե տառի հնչիւնը աւելի մօտ է է տառին, վասն որոյ յարմար դատեցի այդ տառը որոշելու այսպիսի նշանով՝ ե՛։

Բառի սկզբում օ գրում եմ ըստ հնչման Թիֆլիսեցոց՝ վօ, իսկ եթէ այդ տառը բառի սկզբում հնչվում է իբրև օ, և ես միշտ դնում եմ օ տառը։

Թիֆլիսեցիք ունին մի հնչիւն, որ համապատասխան է Թուրքաց, պարսից և արաբացոց ق կամ վրաց ყ տառին, վասն որոյ ես այդ հնչման համար գործ եմ դնում մեր ղ տառը շեշտով՝ ղ̀ և արտաբերելու է վրաց ყ և արաբացոց ق տառի նման։

Ու վանկը բառի մէջ տեղում ձայնաւոր տառերի առաջ գրոց լեզվում ևս հնչվում է իբրև ւ. օր. Աստուած. Թիֆլիսեցէնում գործ եմ դնում վ կամ ըվ տառը այդպիսի — վանկի տեղ. օր. Աստվաձ, աղվէս, օրվայ, լեզվի, կատվի, տըվի, բանվեցաւ, բռնվեցաւ։

Թէպէտ Թիֆլիսեցէնում ւ և վ տառերի արտասանութեան մէջ տարբերութիւն չը կայ, բայց, ինչպէս հանգուցեալ Ախվերդեանն էլ ասում է, պարզաբանութեան համար դնում եմ՝ տեսաւ, ասաւ, ակռաւ, ակռաւի, սեւ, սեւի, սեւութին, արեւ, անձրեւ, անձրեւի։

Այժմ պարտքս է ասեմ մի քանի խօսք հաւաքած նիւթիս դասաւորութեան մասին։ Բոլոր նիւթս 18 բաժանմունքի մէջ եմ ամփոփել, որոնցից 15-ը, այն է բացի Երգերը, Աղօթքները և Հեքեաթները, դրել եմ այբբենական կարգով։ Ես առ այժմ դժուարացայ ուրիշ ազգերում ընդունուած ըստ բովանդակութեան բաժանման եղանակին հետևել, մէկ՝ այն պատճառաւ, որ այդ կերպով դասաւորելիս կարելի է շատ անգամ սխալուել ասացուածի ներքին և արտաքին նշանակութեան մասին. երկրորդ՝ որ միևնոյն ասացուածը հարկաւորվում է մի քանի բաժանման մէջ կրկնել և երրորդ՝ հետևեցայ մեծարգոյ Քերոբէ Պատկանեանի խորհրդին՝ դասաւորել այբբենական կարգով, որ շուտ կարելի լինի հրատարակել այս ժողովածուն։ Այս ասելով, չեմ հերքում այսպիսի ժողովածուի ըստ բովանդակութեան դասաւորելու առաւելութիւնը։

Գուցէ ես իմ քննադատների առաջ չը կարողանամ արդարանալ այսպէս դասաւորելուս համար, բայց որովհետև ես հրատարակում եմ իբրև հում նիւթ, վասն որոյ չուզեցի իմ հասկացողութեամբ բաժանմունքներ անել. այլ ամեն մի մասնագէտ իրան

պէտանին կարող է քաղել և այսպէս դասաւորուած նիւթից, երբև մի անմշակ հանքից։

Թէպէտ Թիֆլիսեցոց լեզուով բաւականաչափ գրքեր կան և յօդուածներ հրատարակուած, բայց մինչև ցայժմ չը կար մի գիրք (բացի Գէորգ Ախվերդեանի լոյս գցած Սայեաթ-Նօվան), որ ամփոփէր իւր մէջ լեզուի բոլոր գեղեցկութիւնները և Թիֆլիսեցու մտաւոր կեանքի պտուղները. այն ինչ ուրիշ մեր գաւառական բարբառները, օրինակ Վանեցոցը, շատ բազմաթիւ և բազմակողմանի ժողովածուներ ունին։ Եւ այս պակասը լրացնելու համար հրատարակում եմ այս ժողովածուն։

Այժմ իմ կարծիքով դեռ այսպիսի ժողովածուներ հրատարակելու ժամանակ է մեր ամեն բարբառներով. իսկ յետոյ, երբ գրականութիւնը կը հարստանայ այսպիսի նիւթերով, այնուհետև, ինչպէս և ուրիշ ազգերի մէջ է եղել, կարելի կը լինի ձեռնամուխ լինել (ի հարկ է մասնագէտներին) և միւս գործին, այն է՝ նիւթերը բաղդատել միմեանց հետ և միւս ազգերի համանման նիւթերի հետ և այդ նիւթերի հիման վրայ հետազօտութիւնք անել՝ պատմական, փիլիսոփայական, դիցաբանական, լեզուագիտական և այլն։

Ի հարկ է ժողովածուիս մէջ ես չը կարողացայ, ինչպէս վերևն էլ ասացի, հաւաքել բոլորը, ինչ որ Թիֆլիսեցին ունի. վասն որոյ ես իմ պարտականութիւն եմ համարում շարունակել այս գործը և ապագայում, հետզհետէ յաւելուածներ հրատարակելով ըստ ամենայն բաժանմանց։

Ժողովածուիս հետ միասին ես պատրաստում եմ երբև երկրորդ մասն հրատարակելու և մի ուրիշ աշխատութիւն՝ «Թիֆլիսեցոց սովորութիւնք» անունով, որ պարունակելու է իւր մէջ՝ Թիֆլիսեցոց ծէսք, արարողութիւնք, սովորութիւնք, նախապաշարմունք, աւանդութիւնք և այլն։

Եւ այս ժողովածուները նիւթ են տալու Թիֆլիսեցոց բարբառի համար մի բառարանին, որի կազմելով պարապում եմ վաղուց, հետևելով ռուսաց Դալի Толковый словарь живаго Великорусскаго языка յայտնի բառգրքին։

Գ. Տ. Ա.

# ԹԻՖԼԻՍԵՑՈՑ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

## ՄԱՍՆ Ա.

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

---

### Ա

## ԱՂՕԹՔՆԵՐ

### 1.

(*Թիֆլիսեցի հայք, ինչպէս եւ ուրիշ գաւառացիք, աղօթելը սկսում են Տէրունական աղօթքով՝ Հայր մերով, որ պառաւ կանայք եւ ծեր տղամարդիք աղաւաղուած ձեւով են ասում. Եւ վերջը, այս աղօթքից յետոյ, աւելացնում են այսպիսի մաղթանք*)։

---

☛ *Ազդ այս գրքի յառաջաբանը չը կարդացողների համար. գրքիս մէջ գործ է ածվում երկու տառ. Նշանով՝ է՛ արտասանելու է ըէ, չէ (ինչպէս ֆռչն. բառում) կամ ռուսաց ЪИ, իսկ ւ՛ հնչելու է իբրեւ արաբացոց ق կամ վրաց ყ տառը։*

Գ. Տ. Ա.

Տէր Աստուած, Դուն աշխարհս հաղաղութիւն տաս. հացին՝ էժնութիւն, ցաւին թանգութին, կենթնին՝ արխուշատութին, հիւնդին՝ առվուղչութին, մեռլին՝ արքաութին, ճանփուրթին՝ աչողութին։ Դուն փրգիս ու ազատիս Քու ստղծածին ամեն ցաւեմէն, փուրցանքսեմէն ու անսկամի շառեմէն (չըրդ—րթ——Բէ—ն)։ Մէ՛ կտրի աՀը սրտէս, ամութն էրեսէս։ Տէր, Դուն բաց արա՛ դիփունի համա Քու օղորմութէնի դռնիրը։

---

## 2.

Խա տունը տաճարինն է.
Տաճար Սողոմոնինն է,
Փիլոնը Ներսէսինն է,
Գաւազան Քրիստոսինն է.
Գաւազան դռան փակիչ է,
Փիլոնը կտիր ծածկիչ է։
—Մարիամ, քո՛ւն իս, թէ զարթուն։
«Ղունց քուն իմ ու վունց զարթուն.
Հորէն էկան էրիք էրիք,
Մէկն է Խոսս, մէկն է Քրիստոս,
Մէկն է ամեն ցաւի Փրգիչ։

---

### 3.

Պօղոս Պետրոս Ընթանիօս,
Գերեզմանի տէրն է Քրիստոս.
Իրան արած խաչն էր ուսին,
Հինգ պլպլան վարթ ծիրանին.
Իւ դուջդուջէ (?) Գաբրիէլին.
Եկեղեցու դուռը բաց բաց,
Աստուածածին վէր էր չոքած,
Ծնկն ու էրեսն արուն էղեր։

Ով էս աղէ աղչի գիշեր երեք բերան, վունց հուրը, վունց ջուրը ննջնի, վուչ իր մեղկին հարցումս ըլի։

### 4.

Մտայ ի տեղս (անկողին), ի գերեզմանս,
Անխօսիլ, անխոստովանիլ.
Անմահ մեռնիլ իմ,
Անգերեզման թաղվիլ իմ.
Անթառամ փսակին,
Լուսեղէն դրախտին,
Քրիստոսի տեսին
Արժանի ըլիմ։

### 5.

Իսուսին ու Քրիստոսին,
Աչն ու խաչը քիզ վրայ։

(Երեխային քուն դնելիս խաչակնքելով)։

## 6.

Ահա՛ քու շան ակռէքը,
Տո՛ւ իմ օսկէ ակռէքը։

(Երեխայի առաջին անգամ փոխած ատամը մի անկիւն գցելով)։

## 7.

Ղո՛ւնդ, ղո՛ւնդ, էտի կա՛ց,
Ալթա՛մ, դուն վկայ կա՛ց,
Ի՛փոր հարցնիմ, հաշլիր կա՛ց։

(Կտրած եղունգները գետնումը թաղելով)։

## 8.

Լուսինը նուր շնահաւուր,
Ի՛ս միղաւուր, դուն թաքաւուր.
Նստած բանիս՝ բարաքաթ (——փ——թի—ն).
Կանգնած ջանիս՝ հարաքաթ (ոյժ, զօր——թի—ն)։

(Նոր լուսին տեսնելիս)։

## 9.

Ալալիօս, Գալալիօս,
Աղա Ստեփան, Ստեփանիօս.
Կալիլ իմ, կապլիլ իմ
Ութը մատով, էրկու բթով,
Սուրբ Սարքսի ձիու ձարով (ձող),
Աստուածածնի քաղցր կաթնով.
Ինչրու արեգակը դուս գայ,
Չո՛ւշ, թու վերի խար (ճշմյ. չ—շ, թէ էշ ես)։

(Կարիճ տեսնելիս են ասում և իբր նա դառնում է անվնաս.)

Դոպ 2767

## 10.

Մէրն ու վուրթին
Չորէք ճանփին նստած էին.
Սիւ օցը կլթէին,
Մածունը մերէին.
Օվ կ’ուտէր, կու տրաքվէր,
Օվ կու տեսնէր, դարմանէր։

(Երեք անգամ ասում են երբ մէկի կոկորդումը կերակուր է մնում)։

## 11.

Ըստուած օղորմի էն պառւի հոգուն,
Վուր կու նստէր չորէք ճանփին.
Լիդը գգէր, լիդը մանէր,
Լիդը խճուճը կու հանէր (կամ՝ խտկէր)։

(Խճճուած թելի համար)։

## 12.

Ըստուած օղորմի անխշատակ Մանիշակի հոգուն, նրա խճուճն էնդի լիդ գայ (—ըյ—լ—ի), իմն էսոի։

(Նոյնպէս խճճուած թելի համար)։

## 13.

Մին կտոր էգնէն ծով կայ,
Ծովի մէջը կալ կայ,
Կալի մէջը դէզ կայ,
Դէզի մէջը խուրց կայ,



ՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ

Խուրցի մէջը հատիկ կայ․
Հատիկ կու տանք, կու հանինք։

(Աչքումը հատիկ ունեցողին տալիս են մի ամանով ջուր, որ կժի գլուխ պիտի լինի. աղօթողը 7 հատիկ ցորեն կամ բրինձ է վեր առնում, ասում այս աղօթքը եւ մէկ մէկ հատ գցում ջրի մէջ։ Վերջը աղօթածը այն ջուրը պիտի իւր գլխից յետ ածէ։ Մէկ առաւօտն են աղօթում, մէկ էլ երեկոյին, մինչեւ որ հատիկը կը հալուի)։

---

## 14.

Մէր ու վուրթին չորէք ճանփին դլխի լացէին, դլխի գոչէին։ Քրիստուս ճանապարին անց էր կենում։ — Ո՞ւր իք լաց ըլում, ո՞ւր իք գոչում։ Սեւ օցը կթում էին, մածունը մերում էին. օվ անց էր կենում, աճկն էր դլփչում. աճկը, աճկը, աճկը։ Քրիստուս նրա աճկը հանէ, քար ու քացախը մէջն անէ, փուշ ու տատաշի ([illegible]) անէ։ Աչն ու խաչը քիզ վրայ։

(Աչքացաւի համար)։

---

## 15.

Դուչին, բուչին, ղօրիկ խան, Թթու Թան, փէտէ խան, մէ կտուր գարէհաց, ([illegible]) փուրին դի՛ղ, դի՛ղ, դի՛ղ։

(Փորացաւ ունեցողի փորը մերսելով)։

---

## 16.

Քու սկեսուրը հարս կու սիրէ,
Հարսի էգնէն մազ կու սիրէ
Իմ էրգէնքը, ջրի լէնքը.
Աչն ու խաչը քիզ վրայ։

(Գլուխը լուանալուց յետոյ սկեսուրը հարսի մազերը հիւսելով ասում է, որ իբր նորա մազը աւելի երկարանայ)։

---

### 17.

Սրամբիլը (Ղրոյ. պտէտն) վար արաւ,
Ըկռաւը ցան արաւ.
Ի՛ս էս դիղը քսեցի.
Երկսին քար ու քանդ արաւ։

(ասում են որքինի վրայ քսելով, նորա ոչնչացնելու համար)։

### 18.

Օվոր խօսի, խոստովանի,
Օչիլն ուտէ ղրղճալի.
Գարփուն դէղի ց... ուտէ,
Լէզզու պ... ուտէ.
Քարափուժը մէ կնիկ կայ,
Թո՛ղ նրա ձիրձիղէն (Վր. դոլոր) ուտէ։
Կա՛պ։
Կողպէքը քի, բալնիքն ինձ։

(Շատ խօսողին լռեցնելու համար)։

### 19.

Դմբրի, դմբրի, դմբրակալի,
Ի՛ս գնացի շան Հարսանի,
Դուն մնացիր տմպլ տանի։

(Ոտները Թմրելուց ազատելու համար)։

### 20.

Հաւկուրը միտս է,
Հաւը խտխտս է։

(Ջատկից մինչեւ Համբարձումը երեկոներին բան չեն ցի-

նում կանայք, հավկուրից ազատ լինելու համար. և եթէ մէկը պատահմամբ այդ միջոցին բան է շինում, ասում են այս, որ չարը չը խփէ ու աչքերը չը կուրացնէ)։

## 21.

Քու փայ խուղը (ծըլ-ն) է ուտում։

(Հող ուտող երեխայի ծնողը օծ տեսնելիս ասում է այս, կանցնի իբրև թէ երեխայի սովորութիւնը)։

## 22.

Մօղիկ բարեկամ շատ ունէ, նրան տանէ. քի մօղ ի՞նչ դավլի ունէ։

(Ննջեցեալի վրայ խօսելիս փռշտացողին են ասում)։

## 23.

Ի՛ս քի մաշլիմ, դուն լինձ չէ։

(Նոր շոր հագնողը ոտը վրան դնելով ասում է, իբր եր-կարակեաց լինելու համար)։

Բ

# ԵՐԳԵՐ

Ա

## ԵՐԵԽԱՆՑ ԵՐԳԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ (*)

### 1.

Քար—պահուկ (գո՛ւղ), պահուկ, պահուկ,
Իմ քարը գախմ պահէ՛.
Գավըրընդա դա ծովլիդա (Վրաց. Ըուու և գնաց):

*(Երեխայք շրջանակ կազմած կանգնում են ձեռքերը յետեւից բռնած եւ դէղէն (Վր. ձուրը), որ նմանապէս երեխայ է, նոցա յետեւից պտտելով քար պիտի դնէ մէկի ձեռքում այս տեղով)։*

---

(*) Այստեղ գրուած են այնպիսի խաղեր, որոնց մէջոցին մի երգանման ասացուած կայ. իսկ խաղերի մանրամասն նկարագիրը կը մտնի աշխատութեանս 2-դ մասում, «Սովորութիւնք» անունով, որ պարունակելու է Թիֆլիսեցոց ծէսք, արարողութիւնք, սովորութիւնք, նախապաշարմունք, աւանդութիւնք և այլն։

Գ. Տ. Ա.

**2.**

—Ականա՛, դէդա։
«Նա՜, դէդա։
—Ջուռնով գու՛քա՞ս, թէ դափո՞վ։
«Ջուռնով էլ գու՛քամ,
«Դափով էլ գու՛քամ.
«Կճուճ կոտրտելով գու՛քամ,
«Հուլունք փշրտելով գու՛քամ,
«Մարգրիտ մլքազելով գու՛քամ։

(Երեխայք երկու շարք կազմած առանձին առանձին իրանց շաթիրբաշու (——Ը-դ-է) բերանով միմեանց հետ խօսում են այսպէս, յետոյ խառնվում և խաղը շարունակում).

**3.**

—Դէդի՛, դէդի՛, ո՞ւր ես գնում։
«Կոտմի (—Ն—Ն) ժամը։
—Ի՛ս էլ գու՛քամ։
«Վա՜յ թէ գցիս։
— Չիմ գցի.
Սիպտա Հաց իմ կերի,
Կարմիր գինի իմ խմի։

(Երեխայի մէկը ներկայացնում է պառաւ կին և միւս երեխան հետը այսպիսի խօսակցութիւն է անում).

**4.**

Դօլ դօլ ախբան,
Ախչա ախչա չախբան.
Մոթալ, մոթալ,
Գանջու մոթալ,
Ին ալթալ,
Դամբուլ ղալթալ,

Խանձուլի,
Ջիանձուլի.
Օվոր բռնէ
Նա վիքաղէ.
Պ'ալաձուչ,
Պ'ափնի ան (դ---ւ է-յ -ւ-')։

(Երեխանցից մէկը երկու ձեռքի ցուցամատները և բութերը միմեանց կպցնում և այդ կերպով մի փոս կամ սնդուկ ձևացնելով ասում է այս. միւս երեխայք մատները մէջը դնելով աշխատում են չը բռնուիլ)։

5.

Ատատա, բատատա, շամամշու,
Ճամշուրակի, բիթամբու,
Բամբուխիար վ... թ...

(Երեխայք բոլորակի ձևով նստած ոտները ձգում են, ինծիլօ-բինծիլօ խաղը խաղում. մէկը այս երգի մի մի բառն ասելով կարգով ամեն մէկի ոտի վրայ է դնում ձեռքը. ում ոտի վրայ ասվում է վերջին բառը, այն ոտը ծալվում է, աչքատվում. վերջը ասպարէզի վրայ մնացած ոտի տէրը պատժվում է)։

6.

Տիտօխին, տխտմօրօխին,
Ջուրնա թխին, թուխ մանուկին.
Եփի քաղա, կուպուլուճան,
Ի'ղն ի վրէն կու պճպճայ.
Ուտէին, խմէին,
Մաշէին, ելնէին։ (*)

(Նոյն տեսակ խաղի ժամանակ է ասվում)։

(*) Այս խաղը երևանցոց բերանը պիտի լինի Թիֆլիս, ինչպէս երևում է և տառի գործածութիւնից.

## 7.

—Միա՜վ կատու.
«Ո՞ւմ կատուն ես.
—Աղաբէգի.
«Ի՞նչ ես ուզում.
—Մեղր ու կարագ.
«Ո՞ւմ համա.
—Իմ վուրթկներանց համա։

(Երեխայի մէկը կատու է ներկայացնում եւ միւս երեխան նորա հետ խօսում)։

## 8.

—Էշը ջուրը տարել էս.
«Տարայ.
—Տա՜ք էր, թէ սառը.
«Տաք էր.
—Բաս սառցո՛ւ.
«Սառն էր.
—Բաս տաքցո՛ւ.
«Ճանդարտ էր (Բարեխառն, հովհանով)։

(Ականջքաշուկ խաղը խաղալիս մինչեւ վերջին խօսքն ասելը քաշում են ականջը եւ յետոյ թողնում)։

## 9.

—Էն ո՞վ է գալի.
«Աղէն է գալի.
—Վո՞ւրդյանց է գալի.
«Բաղէն է գալի.
—Տօ՛, պստի տղայ,
Ինչի՞ ես լալի.

«Էնդուր լիմ լայլի,
Ինձ միրք չին տալի։
—Զաղ մի ուտի, դէր կի,
Մէ պստի ձգան ծէր կի։
—Միրուքտ օ՞վ է ներկի.
Պըծի պըծի (Փէ-ըշ) Օսէփի (Օ-Ֆէյի) դէդէն։
(Երկու երեխայ միմեանց հետ ասում)։

## 10.

Կոպալ, կոպալ,
Լիգր ու կոպալ,
Քոան սալակ (կամ Գիսան սալա,),
Գիլլի թալակ (կամ Գիլթան թալա),
Ըղրէրն էկաւ
Տախտակն ուտին.
Նա հուս արաւ,
Նա դուս արաւ։

(Այս ասում են իմանալու, թէ ով պիտի խփէ աչքերը աչքախփան խաղը խաղալիս. ում որ վերջին բառն է ընկնում, նա է խփում աչքերը)։

## 11.

Ծի՜տ, ծի՜տ, (կամ ծի՜ւ, ծի՜ւ,) ծտաքուն
Խփոր մթնի, գնաս տուն. թ՜ռռ։

(Երեխայք ձեռքերը միմեանց ձեռքերի վրայ դարսելով եւ միմեանց ձեռքի կաշին քաշելով ասում են)։

### 12.

Մէկ, էրկու, տասնու վից,
Տասնու վիցը օ՞վ ա սաւ.
Տասնու վիցը ե՛ս ա սի.
Թէ չիս աւտա, համբրէ՛, տե՛ս։

(Խաղ. եթէ համարել ինչպէս գծած է, կը լինի 16).

### 13.

Ջան ջան կիրագի,
Վա՜յ էրկուշաբթի.
Դէդի ջան, փուրս ցաւում է,
Զիմ գնա աշկիրտ։

### 14.

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն է բարին,
Խիտն է ծառին,
Հաւն է թառին.
Բէգօվլաթի քունն է տարի,
Դօվլթաուր, վե՛կաց, բանէ՛։
Խրգնքի դռնիրը բաց էր,
Օսկէ աթուռը դրած էր,
Քրիստոս վրէն նստած էր,
Լուսաւորիչը կանգնած էր,
Օսկէ ժալամը բռնած էր,
Մինձ ու պստիկ գրում էին.
Միղաւրնիրը լալում էին,
Արթարնիրը խաղում էին։

## 15.

Արեգա՛գ, արեգա՛գ, դուս արի՛,
Հէրն ու մէրտ էկել է,
Օսկէ բլիթ բերել է,
Պատի ծակը կոխել է.
Մուկն էկել է, տարել է,
Կատուն էգնէն վազել է,
Գոմշի վուտը կոտրել է,
Աղամանը վիթել է։

## 16.

Էքուց կիրագի է,
Կոկոն քաղելու է.
Կոկոն քաղիմ, գէղին տամ,
Գէղէն ինձ մէ բլիթ տայ.
Բլիթ տանիմ չօբան (չօբնին) տամ,
Չօբան ինձ մէ գառը տայ.
Գառը տանիմ Աստուծ (Ա-ծ—ն) տամ.
Աստուծ ինձ մէ աղբէր տայ։
Աղբէ՛ր, աղբէ՛ր, ի՞ս քու շուն,
Գօտկի ծէրին արբեշում.
Արբեշում չըլի, կազ ըլի,
Սուփրի ծէրին սազ ըլի։
Հաւերուն հալվա կու տանք,
Բադերուն բակլա կու տանք,
Թուրքի տղին ջուր կու տանք,
Վուտով կու տանք (էշ խփէնք), շուռ կու տանք։

II

## ԴԱՆԴԱՆՆԵՐ

*(Փոքր երեխանց մայրը ձեռքին խաղացնելովասում է)։*

**17.**

Դա՛ն դա՛ն դինկլիկօ ջան,
Դիրա լիզին (տեղէ աչքին) վազնիկօ ջան,
Ճուլթ հաղուղը գողնիկօ ջան.
Բաղմնջին վրայ հասնի,
Վ... խփէ կոմբլիկօ (վր. ճահոյ) ջան։

**18.**

Դա՛ն դա՛ն դնգուցը,
Մրդրով լիքը քթուցը,
Փօթլումը (վր. տերեւ) կոլլածը,
Վազնի (վր. ոտք) տակը պահածը։

**19.**

Դա՛ն դա՛ն աննման,
Կուզին (վր. աչքէ) կտրած՝ շան նման։

**20.**

Դա՛ն դա՛ն դա՛ն չունիս,
Պապանց տանը բան չունիս,
Քարով կու տան (էր ծոցին), բան չունիս։

## 21.

Դա՛ն դա՛նի դան արա՛,
Էրէվան մէյդան արա՛,
Թավրիզ առուստուր արա՛.
Գրդգի ([illegible]) ճուղը կտրէ,
Թէ կտրիս, խուռը կտրէ։

## 22.

Դա՛ն դա՛նի դա՛ն դնդուցն խա,
Միղլով լիքը քթուցն խա,
Զաղ օխչարի դմակն խա,
Դուն մութը տան ճրաքն խա.
Օվ քիզ սիրէ՝ սիրադիզ,
Օվ քիզ ատէ՝ մահադիզ։

## 23.

Դա՛ն դա՛նի դա՛նեցի,
Բերանտ է էգեղեցի,
Տուն գնացի, Համբուրեցի,
Դուս էկայ, բարովեցի,
Վարթաջուրը ջրեցի,
Մանուշակը փռեցի։

## 24.

Դա՛ն դա՛ն դա՛ն, շվիլի ([illegible]),
Մուշտարիքտ դան, շվիլի,
Ճանփին իրար տան ([illegible]), շվիլի։

## 25.

Գյա՛ն գյա՛նի, գյա՛ն գյա՛նի,
Կարէտ կարիմ ժանգառի (Բոյ յանուն գոյն),
Քոբէն (Խէր) գնիմ լանգարի՞
Կոճկնիրը Գիլանի ([illegible])
Կարիմ գօշլիտ (կուրծք, կրծկալ) բերանին.
Ճապիք կարիմ ռեհանի (ռեհանի գոյն [illegible]),
Գդակ ծածկիմ ծիրանի։

## 26.

Գյա՛ն գյա՛նի գիարն ([illegible]) իս,
Կանանչ բաղի խիարն իս,
Փօթլումը ([illegible]) կոլլած իս,
Եզլիզ տիղը պահածն իս,
Ճաքրումը շաղխածն իս.
Ճաքրի Թիւով քի ջուր տամ։

## 27.

Գյա՛ն գյա՛նի, գյա՛ն գյա՛նի.
Գլիղիս, քի ումը կու տամ.
Քաղքի մէլիքի տղին կու տամ,
Լդրանուց ջնջիլ կու տամ,
Չարէքէն ([illegible]) չափրաստ ([illegible]) կու տամ,
Մէ չարէք քամար կու տամ,
Վէրա՝ ջուր ու ջաղաց կու տամ,
Օրթաճալա՝ բաղ կու տամ,
Կրծանիս՝ իգի ([illegible]) կու տամ,
Խլանի ([illegible]) բաղնիսը ջիբխարջլուխ կու տամ,
Թանգարին ([illegible]) գօգօ ([illegible]) կու տամ,
Ջաքարին բինձօ ([illegible]) կու տամ։

Ի՛վոր վիսալին կու մեձրիմ,
Երկու դուռը բաց կ'օնիմ (ունիմ),
Երկու անկլին պաչ կ'օնիմ,
Օթախը խալըվաթ կ'օնիմ (էլ առանձին),
Միջումը սօյրաթ (նկար) կ'օնիմ.
Ի՛վոր վիսալէն կու գարթի,
Տաշտն ու այթափէն (աւազան ջրաման) մօտ կու տանիմ,
Երեսը լըվանալ կու տամ,
Երեսըփին մօտ կու տանիմ։
Դան արա՛, Կէկէլօ ջան,
Բան արա՛, Կէկէլօ ջան.
Էսօր մէ դան չիս արի,
Մէ փուղի բան չիս արի.
Մէ փուղ կու տամ շամամի,
Դուն քու դէզին թամամիս (ծոյր հասած աղջիկ)։

28.

Դա՛ն դա՛նի, դա՛ն դա՛նի,
Կարէտ կարիմ ժանգառի (Եօյ ժանգու գոյն),
Քորէն (նոր) դնիմ ծիրանի,
Կոճկնիրը Գիլանի (Պարսկաստանի նահանգի անուն),
Օսկէ սուրա, քի մեռնիմ.
Կլկլան կուլա, քի մեռնիմ.
Թայ ջուհարդար, քի մեռնիմ.
Ղ'ալամքրի ծառ, քի մեռնիմ.
Սուփրի մազա, քի մեռնիմ,
Ձուշա բազար, քի մեռնիմ։
Էսօր դա՛ն ու էքուց դա՛ն,
Էլօր թամամ տարեկան (կամ՝ Դաւիթ խան).
Ճաքիգը քիգ շիրվան խան,
Նարգիվանը դիվան խան,
Թիփլիսը քիգ սիրան խան.

Թուղն ու նուշն ուտելու տամ,
Ճաքար կրկտելու տամ,
Ճաքրի թիւով քի ջուր տամ։
Գիդիս քի ումը կու տամ,
Բէհրուզի տղին կու տամ,
Օրթաճալա՝ բաղ կու տամ,
Վէրա՝ ջրի ջաղաց կու տամ,
Կրծանիս՝ իգի (այծէ) կու տամ,
Ձորսօի (Բուշէ անուն) դուքնիր կու տամ,
Մէլիքի բաղնիս կու տամ,
Ձարէքէն չափրաստ կու տամ,
Լդրանուց քամար կու տամ,
Քաղքի կէսը քիզ կու տամ,
Քաղքումը դարբաս կու տամ,
Չալաբարը (քաղաքէ մասն) քօծ կու տամ,
Զուղուրէթը (քաղաքէ մասն) բիջ կու տամ։

III

## ԵՐԳԵՐ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ (*)

### 29.

Ծիտ իմ, ծիտ իմ, կու ծլվլամ,
Աղունակ իմ, կու զռնտամ.
Հօր մորթած իմ, մօր կերած իմ,
Աղիզ քվիր թռցրած իմ։
(Վերջին երկու տողը ասվում է և այսպէս)
Հէրս մորթից, մէրս կերաւ,
Սիրուն քուրս վրէս լաց էլաւ։

(*) Այս երգերը տես և իւր տեղում՝ Հեքիաթների մէջ.

## 30.

Նանա նանա, Օրսանդուլ,
Օրտ աւելնայ, Օրսանդուլ,
Մինձափօլթօլ՝ կարաշուր ([illegible]),
Մանդրափօլթօլ՝ կռանշուր ([illegible]),
Քամին փչէ, օրօրէ,
Լուսնիակը բոլորէ,
Պախրէն գու՚քայ, ծիծ կու տայ,
Ձիգար ([illegible]) չունէ, ի՞նչ կու տայ,
Մէ լաւ էլ ածկի ([illegible]) կու տայ։

## 31.

Չօ՛նդուր ([illegible]), չօ՛նդուր,
Դուն Հաստ մանիս, ի՛ս բարակ.
Փուշը տրվի, լօշը առայ.
Լօշը տրվի, օխչարն առայ.
Օխչար տրվի, Հարսին առայ.
Հարսը տրվի, չօնդուրն առայ.
Ցնդլի՛, ցնդլի՛,
Ի՛ս Հաստ մանիմ, դուն բարակ։

## IV

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԱՇՈՒՂՆԵՐԻ ԵՐԳԵՐ

(Ամբողջ և հատվածներ)

### 32.

Էրթի քալի (կամ գօգօ), էրթի վաժի (կամ բլճի) ջուրը գնում է օ։
([illegible])
—Քալօ, կօկա միղմա դադէ, մէկ պաչ անիլ տու օ։
([illegible])
«Քա՛, ճար կտրած, էտ ինչ ասիր, դէդէս կու ծեծէ օ.
Մակրատէլի խէլթ ուճիրամս, մազս կու կտրէ օ.
([illegible])
Բանդէ խօրքալի դավփինէ՝ չօրնալու համա օ.
([illegible])
Ձիտի մօվիդա, ակէնկա՝ ուտելու համա օ.
([illegible])
Ավիդէ, կէնճի վէսրօլէ՝ սպանելու համա օ.
([illegible])
Դ՛ասպիսա դանա վիթխօվէ՝ մօրթելու համա օ.
([illegible])
Մէլիքիս քվարի վիթխօվէ՝ էփելու համա օ.
([illegible])
Մէլիքիս չամչա վիթխօվէ՝ խառնելու համա օ.
([illegible])
Մէլիքիս սինի վիթխօվէ՝ ածելու համա օ.
([illegible])
Սուլ քալաքի դավպատիժէ՝ ուտելու համա օ.
([illegible])
Աղափխանա վէր վիշօվէ՝ նստելու համա օ։
([illegible])

## 33. (*)

Վի կացան ու վերի քուչէն խալեցին,
Միր աղօտկն ու ժամի ճանփէն կալեցին.
Միչումը կանգ՚նեցաւ էրէց Լարաձէն,
Մինձ ցաւը վուչ գուս գայ նրա ջաննմէն.
Ըմա՛ն նրա տաննմէն.
Չինք դառնա Հայ, չինք դառնա,
Կու խափինք, վրացի չինք դառնա։

—

Կարքով-կարքով իրիցներուն շարեցին,
Նշնով-նշնով սուրաթնիրը գրեցին.
([illegible])
Չինք դառնա Հայ, չինք դառնա,
Կու խափինք, վրացի չինք դառնա։

## 34.

Փնթի ([illegible]) կնդայ թարխին ([illegible]) ասիմ.
Ինչկլի ճաշը քնած կու՚լի,
Մարթը կ՚էրթայ հօրանց գիղը,
Մարթու թաքուն կ՚ուտէ լիղը,
Իսկի չի վիքաղի տիղը ([illegible]).
Ջաւիրը վրէն ծրտած կու՚լին։

---

(*) Այս երգը ասել են 1750-ական թուերում Թիֆլիսում կաթոլիկները, որոնց վրայ թագաւորը հալածելիս է եղել խստութեամբ՝ վրաց իշխանների և ժողովրդի մէջ կաթոլիկութիւն տարածելու համար այն պատճառն, որ մինչև անգամ վրաց Անտոն կաթողիկոսն էլ մեղադրվում էր կաթոլիկներին օգնելու մասին։ Վրաց կառավարութիւնը կաթոլիկ քահանաներին աքսորել է դէպի Ախալցխայ և պահանջել է կաթոլիկներից, որ կամ հայոց և կամ վրաց եկեղեցի գնան. իրանց եկեղեցին էլ Թիֆլիսում փակել է տուել։

Ի՛վի կու տեսնէ լիքը տիկը,
Իսկի չի կապի գօդիկը.
Ճարմաղ ալրէն հաց կ՚օնէ,
Սեւ-սեւ ծծերը բաց կ՚օնէ.
Սախվէքները ([illegible]) բրթէ թելէն
Ճատ խլինք սրփելէն փթիլ է.
Աղլուխ ունէ մուխիս ([illegible]) քէրքի ([illegible]),
Ջար չիքելէն լօշի նման.
Նախերը կ՚էհայ, նախերը գու՚քայ,
Օրը մէ շուլօ ([illegible]) կու մանէ,
Մաստկի կու՚տայ, կու ծամէ.
Կտիր ծէրին ննգած կու՚լի.
Օրը մէ խօնջան կու գործէ,
Ոճկերը ([illegible]) դուս թափած կու՚լի։

35.

Իսզանց ([illegible]) գնացի Մարնէուլ ([illegible]),
Նահախ ([illegible]) ննգայ դաւի մէչը.
Տակս խալիչա գցեցին,
Լրվով լիքն էր խաւի մէչը.
Բերին ու կարքով շարեցին,
Գինի չըկէր գաւի մէչը.
Ալնի կերակուր գիդէին,
Համ չը տեսայ հաւի մէչը.
Վ՛ունց աղբէր ու քուր գիդէին,
Վ՛ունց դոնաղ ու հուր ([illegible]) գիդէին,
Վ՛ունց գինի ու ջուր գիդէին։
Ալին-օինը կցեցին,
Սրտումս դանակ ցցեցին,

Հինգ կոթ հացի համա,
Ինձ պէս ձեռնարացի ([illegible]) համա
Ինձ զցեցին կալի մէջը։
Նստիլ իմ դարբսի ափը,
Իմ բաժինը մսի քափը,
Երկու Թասանուց է չափը։
Մոսկովէն դու՛քայ փինջանը,
Կրակ ննդնի Թամարի ջանը,
Ինձ դցիլ է ցաւի մէջը.
Թաք ([illegible]) լիս էսդանցէն պրծնիմ,
Թող խիխտվիմ ձավլի ([illegible]) մէջը։

(Շամչի-Մելքօ) (*)

## 36

Քու զօղլիկը Գանջու Թիլ է,
Քու դարդէն սիրտս փԹիլ է.
Քու աղլուխը Գանջու քաշած,
Քու էշխէն սիրտս է մաշած։

—

Ծառի վրայ կու՛լի բալին,
Օրն ինչկլի մուԹն իմ լալի.
Արտասունքներուս մազխար ([illegible]),
Արունս դէվէր է գալի։

—

Ծառի վրայ կու՛լի ծիտը,
Նստիլ իմ, զցիլ իմ ճիտը.
Խորովածին կ՚օնին աղը,
Սրտումս դրիլ իս դաղը։

—

(*) Այս երգը Թէպէտ և չունի իւր մէջ յիշուած հեղինակի անունը ըստ սովորուԹեան, բայց հանգուցեալի աղջիկ Սօֆիօյի ասելով, նորա հօր ասածն է։

Դուքնին հաջաթ ([illegible]) է տախտակը,
Մէ՛ շինի հօրանց աղկատը.
Դուն նստած իս դուքնի մէջը,
Հօքիս տամ հօքուտ մէջը,
Դուն անգին իս օսկու մէջը։

—

Քու քօչօրը ([illegible]) ջաճվի ([illegible]) մերի,
Կրակ ննգնի, արիւտ էրվի.
Վուր չիս գալի,
Դուշմանտ էրվի։

—

Դուն նստած իս բացրահովին,
Փափուում է դօշիտ մօվին ([illegible])։

—

Գդակիտ ափրէն ([illegible]) ջիգարի ([illegible]),
Ջիգարտ ([illegible]) էրվի, վուր չիս գալի.
Իմացայ քարվան է գալի,
Եանա-ճանա ման իմ գալի,
Ինձ համա խաբար չէ գալի.
Տօ՛, բէմուրվաթ ([illegible]), քաղաքն արի,
Ի՞նչ գէթ ([illegible]) արի, վուր չիս գալի։

(Կարօտ նշանած աղջիկը իւր փեսացուի մասին, երբ սա Թիֆլիսից հեռացած է եղել)։

~~~~~~~~
~~~~~~~~

## 37. (*)

Թաքաւորս ես, դիւանս (դարբազն) արա, Թաք քու արիւն կու [սիրիս,
Ուրոր գնաս, ինձ էլ հիդտ տար, քու արիւն կու սիրիս.
Սկռաւը բուլբուլ չի դառնա, քանի գ'ուզէ վուր ախ անէ.
Ամեն ռանգ ծաղկի մէջը կարմիր վարթը սիրեկան է,
Գուղ մարթն մանդաղով դու'քայ, ձիք կու'տայ, տակռէն կու [հանէ։

—

Մէ Թողնի ասկիտ (?) քաղելու, վա՛րթ, քու արիւն կու սիրիս.
Բուլբուլը սարեմէն դու'քայ, իր լիզվովն բաղ կանչելով.
Սայեաթ-Նօվէն վուր բեզրիլ է, շատին էրից խաղ կանչելով.
Օվ ջավահիր անգին ալմաս, եա՛ր, քու արիւն կու սիրիս։

(Սայեաթ-Նօվա.—մուխամմազ)

## 38.

Գէլն ու չոբանը մէկս մէկու ռաստ էկան.
Գէլն ասաւ՝ ո՞ւր իս գնում, բարո՛վ, իմ չոբան աղբէր։
Չոբանն ասաւ՝ գլխեմէս ռադ էլ.
Վո՞ւնց քու խէրը գ'ուզիմ, վո՞ւնց քու շառը։

—

Գէլն ասաւ՝ հեստի Թաքուն դու'գամ, դուն էլ չիմանաս.
Սկռէքս կու գցիմ ղօչի (խոյ) գմակին.
Կէսը կու կոտորիմ, կէսը կու խիխտիմ.
Առատեհան վիր կու կենաս, խէրն ու շառը շանց կու'տամ։

—

(*) Այս և հետևեալ 38-րդ երգը Սայեաթ—Նօվայի չը տըպուած երգերիցն են, մի արտագրած տետրակից հանած, որոնք յառաջաբանովս տպուած են «Արձագանք» շաբաթաթերթի 1885 Թ. № 1. Գ. Տ. Ա.

Չոբանն ասաւ՝ հենց գիդիս, թէ ղուրթ քուն ունիմ.
Մէ աճկս ու անդաճս քու կռնէն (ֆուշի) ունիմ. (*)
Թէ ճանգս կու ննգնիս, իս իղբալ ունիմ.
Առուտեհան շընքիտ էրկթէ կրկալը (շէջ-ն-ֆ) շանց կու՚տամ։

—

Գէլն ասաւ՝ հեստի թաքուն գու՚քամ, ղուն էլ չիմանաս.
Ակռէքս կու գցիմ գօչի դմակին.
Կու գցիմ քամագիս.
Առուտեհան մէ-մէկ մէ-մէկ սարի ծէրին շանց կու՚տամ։

—

Սայաթ-Նօվէն ասաւ՝ իս կարմիր կով իմ,
Կովկիթս կոտրեցի, հարսի հիդ խռով իմ.
Գիլլի հիդ բան չունիմ, չօբնին կու գովիմ.
Մէ գամ էլա գառնի համը շանց կու տայ։

(Սայաթ-Նօվա.—Քէչնիս)

39.

Մէ տարի գնացի Չիթախինց բաղը.
Իս էսէնց վերանայ (—երեւլ) բաղին ինչ անիմ.
Օրը տասն ու հինգ գամ կռիւ ին գալի.
Կուզօին (—ղ-ղ-ւն) ջուղաբ տամ, կաղին ինչ անիմ։

—

Տօտը (ֆեռէ ձի-ղ) բարակիլ է, չէ բանում չարխը (-նի-),
Ճատ իմ չալիշ գալի, չէ գալի արխը ([illegible]).
Թամաշա ին գալի վուղչ քաղքի խալխը.
Իս էլ նստիմ ջրի ղրաղին ինչ անիմ։

—

(*) Այս տողը լսել եմ և այսպէս՝
Ամեն գ՚օչի գլխին մէ-մէ շուն ունիմ.

Տարին բարաստ ([illegible]) էլաւ, չ'էկաւ սահարին ([illegible]).
Ծառւրը չորացաւ, չ'էրևտ գուլարին ([illegible]).
Վո՛ւնց պէտկ է մտնիկ տամ չուրս ծառ ունոքին.
Ի՛ս իմ նաչար ([illegible]) օղլուշաղին ի՞նչ անիմ։

—

Բուղկը գլուխ չ'էրևտ, չ'էկաւ գազարը.
Էս բաղը գցիլ է իմ ջանն ազարը ([illegible]).
Կանանչի էլ չը կայ, ղրղիմ բազարը.
Ի՛ս իմ տարէկուսած աղին ի՞նչ անիմ։

—

Ղօղնօշէն ([illegible]) սաաւ՝ գարբէ գլարը ([illegible])
Ուզում իմ գնա, փախչի հնդու գլարը ([illegible]).
Հնդուհնդը կուտօլացաւ ([illegible]) խնարը.
Մտնիկ տամ էս չուր-չուր թաղին ([illegible]) ի՞նչ անիմ։

(Շամչի-Մելքօ) (*)

## 40. (**)

Աթամորթի, քու Անծու մօտ դրուստ կա՛ց.
Սթխով ([illegible]) աղօտկ արա՛, թէ կանաս, կանաս.
Աշխարհս փախչունթինն անցօրական է.
Հոքուտ ճանապարտ գթի, թէ կանաս, կանաս։

—

(*) Այս երգը նոյնպէս հանուած է մի արտագրած տետրակից և Շամչի Մելքօյինն է համարվում, թէպէտ երգի մէջ ըստ սովորութեան երգչի անունը չէ յիշուած։

(**) Այս երգը և Քօռաչի-օղլանի երգերի իմ գտած գավթարի մասին տեղեկութիւնը տպագրուեցաւ Մեղու Հայաստանի լրագրի 1864 թ. № 23. Գ. Տ. Ա.

Մեր վերջը չինք պտռում, վո՛ւնց կու՚լի մեր հալ.
Միզ ուտկական չի՛լ՝ աշխարհս մալ.
Միզի սուրմիշ կ'օնին ([illegible]) հուրնէ՛ինկալ ([illegible]).
Կու հրամաէ, ջուղաբ տո՛ւ, թէ կանաս, կանաս։

—

Էս աշխարհս դամ ու դօվրան ([illegible]) քաշիլ ինք.
Ջարլու ղումաշ ([illegible]) բէհր-բէհր ([illegible]) հաշիլ ինք ([illegible]).
Մարմններուս ուրախացրիլ ինք, հոքեններուս մաշիլ ինք.
Էն կինքը ջուղաբ տալ վո՛ւնց կանաս, կանաս։

—

Քօբաչ-օղլան միզկտ լացէ՛ դահանով.
Խոստովանքտ դրուստ արա՛ քու գուրծկով ու քու բանով.
Ըօթնանումն (*) քօմագ ըլի իր բարով.
Քաշէ՛ նրա ղուլուղը, թէ կանաս, կանաս։

(Քօբաչի-օղլան)

## 41.

Խարագի աղաթն է կու կրծէ կաշին.
Առուտեհան վաղ-վաղ կու ղրգէ խաշին.
Օրն ինչկլի մութը կու նստի սաուզմի ([illegible]) ճաշին։
Խարագ Ալի՛, իմ մէ շաին ինչ արիր.
Իշս կերար, իմ թանգիրէն ([illegible]) ինչ արիր։ (**)
Կօլվիլ իս քրքումը.
Ածկի ([illegible]) կու՚տամ, դէվէր ննգնիս թրքումը.
Շամչի-Մելքօն թքէ էտ քու մամի մրքումը։

(Շամչի-Մելքօ)

(*) Յովհաննէս Մկրտչի եօթն անունն է՝ Յովհաննէս, Մկրտիչ, Կարապետ, Մարտիրոս, Առաքեալ, Նահատակ և Մարգարէ.

(**) Այս տողը ասվում է և այսպէս՝
Իշս կերար, խաշամանս ինչ արիր.

## 42. (*)

Օվ վարթ, ես իմ քիզ մօդ գալու,
Դուն մէ լալի. ես իմ լալու.
Քու էշխեմէն քաղաք գալու,
Ձուրչ ու բոլորքս ման գալու:

Խէյլվանումս ման իմ գալի.
Իմանում իմ չում (վր. ը——) ես լալի.
Հուսոտ խիստ անուշ է գալի.
Մուխ ես տալի գարմանալի:

(Շամչի-Մելքօ)

## 43.

Ձամչի-Մելքօն տեհաւ էրազ՝
Ձուրսը տանէին վաղեվազ.
Մահին օրը ճարիմ հինգ գազ.
Կօլլվիմ, էհամ, կտաւի մէջը:

(Շամչի-Մելքօ)

## 44.

Էս տարվայ օխնածնիրը դիփ լօթի ուստա.
Նրանց անած մուժը խոկի չի լուս տա:
Ուստէն ասաւ՝ էսօր խմինք, էքուց չէ.
Աշկերտն ասաւ՝ կէս-կէս թունգին հերիք չէ:

(*) Շամչի-Մելքօն Թէյլրանում եղած ժամանակ գրել է այս երգը իւր կնոջը Թիֆլիս, իսկ ինձ հասաւ Շամչի-Մելքօյի աղջիկ Սոփիօյից, որ այժմ 70 տարուց անց մի կին է և մասն և բաժին ունի իւր հօր բանաստեղծական քանքարից. Գ. Տ. Ա.

## 45.

Հաշտուլ դէզէն ու Մանթաշը
Կէս գիշերին կերան խաշը,
Քնոտեցան ինչրի ճաշը։

(Պարապ կանայք)։

## 46.

Նազ իս անում, հազ իս անում ([illegible]).
Լիզվով իլթիմազ ([illegible]) իս անում.
Քու սիրողին սազ իս անում.

(Սիրահարին)։

## 47.

Դարդս դարդիս մէկն է.
Սրի, ճանփէն դէսն է.
Ինչպէս բան բռնինք,
Ոչով չը տեսնէ.
Թամամ աշխարումս
Դուն կու՛լիս գոված։

(Սիրահարին)։

## 48.

Ս' տղա՛յ, դռնովն արի,
Լեհերի (վերմակ) տակովն արի.
Դուռը ճռռայ վուչ,
Կատուն մռռա՛յ վուչ.
Վուտօքս ([illegible]) արի։ ([illegible])։
Քիղանը սազի,
Դուն դուս վազի։ ([illegible])։

(Կինը իւր ամուսնու ներկայութեամբ ընդունում է սիրահարին եւ վերջին տղերն ասելով ճանապարհ է դնում, իւր մարդուն ձեւանալով իբր թէ ցնորքի մէջ է)։

## 49.

*Բօյտ սալրու ([illegible]) չինարի,*
*Ծուցտ գուլի շանուրի. (*)*
*Էրնէկ կու տամ քու եարին,*
*Քիզ պէս նօվ ջիվան ([illegible]) ունիմ.*
*Աճկիրտ օսկէ փինջան,*
*Ունքիրտ կամար ունիս,*
*Մէնակ իմ տէրը դուն իս.*
*Ինչ որ անիս, հախ ունիս.*
*Թաք քու ձեռով սրպանիս,*
*Դիվիուն սուլթան, խան ունիս։*

(Աղջիկը ասել է իւր սիրահարի մասին)։

## 50.

*Մէ օր ինչկլի մուլթը տուցաղ ([illegible]) պահեցիր,*
*Էկար, մէ խօսկ ասիր, սիրտս դաղեցիր.*
*Դուն ափիցար ([illegible]) էիր, փուղ շատ ուզեցիր.*
*Սիրունին վռւնց թողիր, չօլախն ([illegible]) ուզեցիր։*
*—Մէ ափիցարի վար, արա մաք չինի.*
([illegible])
*Բարբարէսթան ծավալ, մամիվա ձիլի։*
([illegible])

(Ասել է մի ապայի սիրահարը, երբ նա Թողնելով սո-
րան, պսակուել է ճարուստի վրայ)։

(*) Գեւլ չէն—շատ վարդենեք.

### 51.

Աքլարը կու կանչէ վաղտին.
Թաք չէի նստի էս տաղտին.
Չէի դէմ էլի էս բախտին։

(Նորահարսն է գանգատվում. Թաղտին նստել—նորապսակների գահույքի վրայ նստելը)։

### 52.

Վանքումը բաց կ'օնին մասունքն ու աչը,
Բաջին (ծոցը) գողցել է սուտ օսկէ խաչը։

### 53.

Պառաւ պապը կրակ ու պէծ էր,
Կնգան կու թրխվէր, զոնքճին կու ծեծէր։

## V

## ՈՏԱՆԱՒՈՐՈՎ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

### 54.

Ճարէ՜, Հարէ՜, խնոցի,
Մէջտ է բարի, խնոցի.
Ճուր (հէ-ր) է էկի, տեղ չըկայ.
Փլաւ իմ էփի, եղ չըկայ.
Խղը քի ու կարաքն ինձ։

(Խնոցի հետ է խօսում տանտիկինը, հիւրի համար շտա-պելով իւղ հարել)։

## 55.

—Բարի լուս քի, առուտնճան.
Ձեռիս ունիմ ձագլէ (աչծէ ճաղէշ) չլան.
Թէ չը կապլիմ խուրջը քսան,
Գօղլիկս անլիմ հլիղը կցան։

—

«Բարի լուս քի, առուտնճան.
Ձեռիս ունիմ հունէ չօմախ.
Թէ չը կտրլիմ կուղկտ քսան,
Քարլին անլիմ հլիղը կցան։

(Ոսոխները պատրաստած ժամանակ այսպէս են բարեւել միմեանց)։

## 56.

—Մունթէկ, մունթէկ,
Տօ՛, շ‥ վուրթի.
Մտիկ արա՛ դռան տակը,
Կացին մի կա՛լ կռան տակը.
Թէ իմանան՝ իրանց կացին.
Թէ չ'իմանան՝ միր ճաշագին։

—

. . . . . . .

## 57.

—Վանքին՝ խալի.
Կուլի (գէ–շէ –ն––ն) իգին (–յգէ),
Քառասուն փլօրին (––լէ),
Կապուտ ջորին.
Մեռնի կինը.
Առնէ քենին.
Ճա՜մ է, հայր սուրփ։
«Ճա՛մ է, հա՛մ է.
Օխտը պուրտեմէն էլ անց է։

(Ձմառը կաշառքով ծառ է դառնում)։

## 58.

Երկուշաբթի՝ շըլդօրա.
Իրեքշաբթի՝ տաշտաբօրա.
Չորէքշաբթի՝ հաց կու թխիմ.
Հինգշաբթի՝ բաղնիս կ՚էհամ.
Ուրփաթը՝ թուրքի կիրագի,
Շափաթը՝ ջհտի կիրագի.
Կիրագի՝ ու միր կիրագի.
Տօ անիրաւ, ի՞նչ բան անիմ։

(Ծոյլ կինը իւր մարդուն)։

## 59.

Յանն ինչ կ'օնիս՝ տղուտ ([illegible]) է.
Յամբակը կորիզուտ է.
Մաստակ պլոտի, վուր ծամիս,
Գոմփալ ([illegible]) պլոտի, վուր մանիս.
Կտիրը տխտիկ անիս ([illegible]),
Տղերանց մտիկ անիս.
Ուտիս, տխտիս,
Մթնի, Նանաս ([illegible]):

(Սոյլ կնոջ մասին).

## 60.

Տաշաճնուց խուրղա արմ, մու մէ չարէք միս, բատօնօ. (*)
Իմ փառուն աղ մի անի, քու փառուն փլփիլ, բատօնօ։
Աղջկերքը բաղն են գնում, ինձ էլ մեծրում են, բատօնօ.
Թէ ինձ նրանցմէն կու ջողիս, Նազանիտ ([illegible]) մեռ-
[նի, բատօնօ։

Տեփրումը ([illegible]) նստի, բատօնօ,
Կանանչին ննդրէ, բատօնօ,
Ծիպլիքտ (վր. [illegible]) սրփէ, բատօնօ.
Բատօնօ ջան, կծիկ արմ,
Մինձ մի անի, պստիկ արմ,
Ժամանակին մտիկ արմ։

(Հարսը իւր սկեսուրին).

---

(*) Բատօնօ (վր. պարոն). բայց այստեղ նշանակում է՝ պատուելի և վերաբերվում է պառաւ կնոջ։

## 61.

Մկրատը կու դնիմ ձիւով ու կարով,
Իմ ասկը քու ասկին չէ տըվի բարով.
Մունջ կա՛ց, թէ չէ դաւ կ'օնիմ ([illegible]).
Քու բարուրը ([illegible]) մէյդնումը քաշ կ'օնիմ։
Էլի ու էլի,
Իմ ասկը քու ասկի ննգիր չէ էլի.
Քու ասկը իմ ասկի նօքար է էլի.
Իմ ասկը քու ասկի աղա է էլի։

(Մեծ տարգեր կինը ասել է փոքրին կուսումը)։

## 62.

Էվօ-Մէվօի տղայ իս,
Չարնա-Գէօի տղայ իս.
Նստած Հաւի նման իս,
Կանգնած գաւի նման իս.
Պուն քու մէջն ինչ միղ ունիս.
Պիփի քու մամի (վր. [illegible]) նման իս։

(Կարծահասակի մասին)։

## 63.

Թարխանաղինց Գօզին
Կու առնէ մէ չարէք լոբին,
Կէսը կու էփէ Բզօբին (վր. [illegible]),
Կէսն էլ Խարէբօբութին (վր. [illegible])։

(Ծլատ է եղել)։

## 64.

Օհանջանինց աղջիկը
Վուտին (կամ՝ հաքին) ունէ լափչիքը.
Կէս հացը կռան տակը,
Զուրչխնլէն վ... տակը,
Մամի պօլօզ (Եչէ—ր՝ գդակը,
Իր դէղի փ...

(Առաջին անգամ է հագել կիսակօշիկ).

## 65.

Թարխանադինց քօծը
Ձուրում ունէ օցը։

(Զարահօգի է եղել).

## 66.

Արութին,
Արքաութին,
Հասնիքա ուտինք
Գալ տարութին։

## 67.

—Ի՛ս ու իմ հոքին։
» Գասպարն ու Գօգէն
Առչիւտ չոքին,
Խըննմէտ բօկին (Խլեղ)։

(Նրդուողին հեգնօրէն պատասխան).

## 68.

Ճուշա (Երեւ-ր-յէ) բաղրիջան,
Խորվէ, Խօրիշան,
Ճուռ. արէ, Ճուշան.
Կուլ տու, տ... ջան.
Ըծա, Գօգլի ջան, սանթուրը,
Գօգօ (վր. ուշ-խէն), դուն խորվէ շամփուրը։

(Քէֆի սիրականի մօտ)։

## 69.

Ուլ էիր ու տիկ դառար.
Տկահան չարչրվեցար.
Հալվարրի (թուշախէ մուշ) դարիդուսին
Տվինք մշակի ուսին։
Օ՛վ, օվ, սուրփի տկճուր,
Նուլէտ բաց, միզ ողորմա։

## 70.

Տարան, տվին, տէր Օհանին,
Ալէլուիա, ալէլուիա.
Նա միզ չի անի մունթութին (ծէշ-յա-ըեն),
Ալէլուիա, ալէլուիա.
Նա միզ կ'օնէ վարպիտութին,
Ալէլուիա, ալէլուիա։

(Աշակերտը վարպետին հակառակութիւն է եղել անում)։

## 71.

*Աղջիկ ունիմ հունարի (չուրդուլէ),*
*Զիմ տա հազար թումանի.*
*Յաժինքը՝ ձի ու ջորի,*
*Թիկզցիքը (մանեակ)՝ փլօրին (ոսկի).*
*Օվոր գ՚ուզէ, գայ, տանէ։*

(Մայրը իւր աղջկայ գովքն է սասում)։

## 72.

*Դէդաս (կր. մօր) քալօ (աղջիկ), Եազունդի.*
*Յաժինք կու՚տան մէ դուլթի.*
*Մարքրտէ պըլըլ (խօշոր) կոճակը,*
*Ննգար հալալ օջախը.*
*Ճանդարի (Բարակ) ծառի տակը*
*Ուտինք քու փալուտակը։ (*)*

(Նոյն)։

## 73.

*Մեռնի դէդէն քի համա,*
*Հանց տուն էհաս՝ դնջղնջա (խրխնջալ).*
*Գէշ ու դէն մտիկ արա,*
*Գինի տան՝ մադլի (կր. [illegible]) արա։*

(Մայրը խրատում է իւր նորապսակ աղջկան)։

(*) Փալուտակ՝ հրուշակ, իսկ դորա ուտելը նշանակում է՝ նշանտուէքն ուտել։

**74.**

Ընիչկէն մեռնի կտիրը,
Ըճկլիրը հանին ծտիրը,
Իրան թաղինք բաղչումը,
Ձուրիրը մնայ բօղչումը,
Քօշիրը մնայ թախչումը։

*(Մայրը բարկանում է իւր աղջկայ վրայ)։*

---

**75.**

Ունքիրը շօրի-շօրը (վր. հե——հէ——),
Ըճկլիրը քօռի-քօռը.
Քինթը փափուկ խմոր է,
Պունչը լօքօի տուտ է։

*(Փոնում է աղջկան)։*

---

**76.**

Սարի էծ իս, եղ չունիս,
Կէս կօպիտի (½ կոպէկ) խիլք չ'ունիս.
Վունց Թիուլ իս, վունց Օս իս,
Ծուտի-պուտի կու խօսիս։

*(Աղջիկն է ասել իւր նշանածին, որին չէ հաւանել յիմար խօսակցութեան համար)։*

---

**77.**

Սատանայ, սատանայ,
Վուտիտ տակը իմքին կայ.
Կէսն ինձ,
Կէսը քիզ։

*(Ասում են մի բան որոնելիս)։*

---

## 78.

Խապանախի, շօրշօրի (նէծ ադանաէ).
Ձէթխախիլի, ջօնջօլի.
Օրագուլի, փիչխուլի.
Մէկ պաչ անիմ, ինչ կուլի։

## 79.

Գիմպլիպլիտօ, Նազարա,
Աղչի՛, վի՛ կաց, խաղ արա՛.
Մէ մարթ ունիմ ճաղարա (վր. ուլուր).
Մաղրնիրը (վր. էնաճ) չաղ արա՛ (ղուրըթայնել)։

## 80.

Վարանցովը գցից,
Փռանգը բռնից,
Մօլլէն խլից։

(Իշխան Վարանցովը, Կովկասեան փոխարքան, 1847 թուին սահմանել է Թիֆլիսում ամեն օր թնդանօթ արձակել կէսօրի ժամանակ եւ այս առիթով ասուել է այս։ Թնդանօթն արձակում էին այժմեան Գունիբեան հրապարակից թէ չէ, իսկոյն կաթոլիկների եկեղեցու զանգակն էին խփում եւ նոյն միջոցին թուրքի մօլլէն մզկիթի մինարէթից ազան էր տալիս. այժմ այս վերջին երկու գործողութիւնքը շարունակվում են նոյնութեամբ)։

**81.**

Ջգրաշէնը (գիւղերին) ջիգր է արի·
Փէթխաւինը (գիւղերին) փիքր է արի·
Մողնինի (գիւղերէ) քունը տարիլ է·
Խամփօլին (գիւղի անուն) ջուրը տարիլ է։ (*)

**82.**

Ըմէ՛ն, ամէ՛ն, ասիմ ձիգ.
Ինչոր ասիմ, լսեցէ՛ք.
Բակլա կու տամ, գցեցէ՛ք։

**83.**

Գուն վուր ինձ ասիր՝ գնա՛, ․ասա՛.
Գնացի, ասի.
Ըսաւ՝ գու՛քամ.
Էկաւ (սիրահարը) ու էլ չէկաւ (կինը)։

(Մարդը կանչել է մէկի բերանով իր խռոված կնոջը, բայց նորա մօտ գնացել է սիրահարը եւ կինը էլ չէ գնում իր մարդու մօտ)։

**84.**

Չօփուրը (ծաղկոտը) ննգաւ կարասը,
Մուկը կերաւ էրեսը։

---

(*) Վերջին երկու տողը ասվում է և այսպէս՝
Ս... քունը տարել է.
Նօրգանէն (Հր. Յորդան) ջուրը տարել է։

### 85.

Քաչալ, քաչալ (ճաղատ), քաչքաշի,
Քաչալն ուտէ շան կաշի.
Խապանախը հում բերէք,
Միր քաչալին տուն բերէք։

### 86.

Չոլախ, չոլախ (ձեռ), չոլ գցէ.
Փ... հանէ, դէն գցէ.
Ի՞փոր քու մարթը տուն գայ,
Ոռչխը սուփրա գցէ։

### 87.

Արի՛, գնա՛նք գամուժնէն (բաղարջի հէն մատաղատուն),
Ուտէ՛նք սախրի մարօժնէն (տանը շարունակէն)։

## VI

## ՋԱՆԳՈՒԼՈՒՄՆԵՐ

### 88.

Ամբիլ է, ձուն է գալի, (*)
Մթնիլ է, տուն չէ գալի.
Տիղ (ունքուղին) լիմ գըցի, պառկիլ լիմ,
Անկումս քուն չէ գալի։

### 89.

Ամբիլ է ամբի տակը,
Դունգս ծնգանտ տակը.
Գիդիս վո՞ւրդի սիրեցի՝
Միխակի ծառի տակը։

(*) Իւրաքանչիւր տողի վերջին ասում են՝ ջան գուլում ջան ջան։

**90.**

Ամբիլ է ամբի նման,
Ճաքար իս ղանդի (*) նման.
Եարս հէնց ինձ պահիլ է՝
Ծալած դուբընդի (գէ—ղէ—է)
[նման։

**91.**

Անձրիւ գու՚քայ շաղալով,
Կանանչ խոտը դողալով.
Աղիզ եարս գալիս է,
Ալ ձին տակը խաղալով։

**92.**

Արխումը (——) ջուր է գնում,
Հարցրէ՛ք ո՛ւր է գնում.
Ինէկ էն քվիր աճկին,
Օխտն աղբուր հուր (կ—ք) է
[գնում։

**93.**

Ախալուխը կարիլ իմ,
Կոճկնիրը շարիլ իմ.
Խուն օր պաս իմ պահի,
Քիզ պէս եարին ճարիլ իմ։

**94.**

Աղջի՛, մազիրտ հուսէի,
Թուշտ էրեսիս քսէի.
Խրթալի աներանցս,
Բլբուլի պէս խօսէի։

**95.**

Աղջի՛, անուշտ Մաի,
Աճկիրտ չալ-չալ (Ն—խշ—Ն) շաի.
Թուշտ ինձի, մէ պաչիմ,
Աստված քու աղբէր պահի։

**96.**

Ա՛ տղայ, դուն բաղամիչին,
Վուտնիրտ է շաղամիչին.
Ինձ ածիլ քի ճար չը կայ,
Իս իմ քու խաղամիչին։

**97.**

Ա՛ տղայ, դուն բաղումն արի՛,
Վուտտ տո՛ւ, շաղումն արի՛.
Լըթէնը ղալմաղալ կայ,
Ձուռ տո՛ւ, էն թաղումն արի՛։

---

(*) Մանրագլուխ շաքար Պարսկաստանի։

### 98.

Ա՛ տղայ, դուն սառում էլ չիս,
Բոյիմէտ ամանչում էլ չիս.
Դունօքս անց իս կենում,
Տէրս իս, ճանանչում էլ չիս։

### 99.

Ա՛ տղայ. անունտ է Սարգիս,
Արի, նստինք էս կարգիս.
Ես ու դուն մէ բաղումն ըլինք,
Ես չինար ու դուն նարգիզ։

### 100.

Ա՛ տղայ, դուն ալ կարաուր,
Տուն ունիս չարդխաուր. (*)
Էն օրին էրնէկ կու՚տամ,
Դուն գաս մեր տուն Թաքաուր։

### 101.

Ա՛ տղայ, դուն ախրն ([illegible]) արամ,
Օխչարը չախրն ([illegible]) արամ.
Ինձ ու քիզ վուր ճոշում ին
([illegible]),
Ուզիլտ Թաին ([illegible]) արամ։

### 102.

Ա՛ տղայ, դուն էլ (կամ հէր) իս,
[մէլ (կամ մէր) իս ([illegible]),
Ո՞ւր էկար կէս գիշերիս.
Տիղումս ([illegible]) քիզ տիղ չըկայ,
Գլուխտ դի՛ կուներիս։

### 103.

Ա՛ տղայ, դուն ատար ([illegible]) ըլիս,
Սիւ հաւի կատար ըլիս.
Թէ ինձ աւել եար սիրիս, (**)
Դիփ ճուլթ ու պատառ ըլիս։

### 104.

Բացը տիղը տախտ կու՚լի,
Իմ դուշմանը սախտ ([illegible])
[կու՚լի.
Ամենմէն ումիկ ունիմ,
Ինձ համա լաւ բախտ կու՚լի։

### 105.

Գնացի ջուրը տեսայ,
Ճարաքա ([illegible]) դուռը
[տեսայ.
Ճարաքա դուան էղնէն
Մէ սիրուն տղայ տեսայ։

---

(*) Այս տողը ասվում է և այսպէս՝
Ուրաքը գոտկիտ սավուր ([illegible]).

(**) Այս տողը ասվում է և այսպէս՝
Թէ էտ խօսկին էլ ասիս,

**106.**

Գնացի Քուռը տեսայ,
Ճարաքա գուռը տեսայ.
Մեռնեմ ծլած բլխերուտ,
Իմ դէդի ազիզ փեսայ։

**107.**

Գուլում կ'օսիմ, կու շարիմ,
Ջվալը կ'օծիմ, կու լարիմ.
Օլքա-օլքա ման գու'քամ,
Կանց քի լաւը կու ճարիմ։

**108.**

Գնացի ջուրը լվածկ,
Սապունս էր օսկէջրած.
Իմ հէրն ու մէրն ինչ անին,
Իմ ճակտին էս էր գրած։

**109.**

Գանջու քամին գալիս է,
Ճախ-շախ գուռը տալիս է.
Մէյդան արէք, առաջ գնամ,
Կարօտ եարս գալիս է։

**110.**

Գդակի ափրէն (Ռոֆ, փոխը)
[խաս ա (Թուրքերէն),
Գնա՛, քու դէդին ասա՛՝
Ի՛ս քու դէդին հարսնացու,
Դուն իմ դէդին փեսացու։

**111.**

Դուն նստիլ իս գերանին,
Օսկէ շըվլին բերանիտ.
Օսկէ ղայլթան գործիլ իմ,
Կարիմ ջիբլիտ բերանին։

**112.**

Դուն նստիլ իս դօշակին,
Ուշկ ու միտկտ փէշակին.
Խմիլ իս նռան գինին,
Հուտ կալնիս մանիշակին։

**113.**

Դարիդուսը վազում իմ,
Կանգնում իմ ու հազում իմ.
Սարարի վուրթին մեռնի,
Թէ չէ, էս քիզ ուզում իմ։

**114.**

Դարիվէր ջուր է գնում.
Հարցրէք ո՞ւր է գնում.
Քենուն մահանա է արի,
Իր եարի տուն է գնում։

**115.**

Եարի կարէն կարիլ իմ,
Կոճկնիրը շարիլ իմ.
Իսուն օր պաս իմ պահի,
Թազա եարը ճարիլ իմ։

**116.**

Էքուց ուրիաթ է, պաս է,
Դիմացը կալ ու կալս է.
Իրիցի վուրթին մեռնի,
Նա ինձ ասաւ՝ չը հաս է։

**117.**

Թուրն ու թվանքը թամքումը,
Պուն աղունակ իս վանքումը.
Իս մէ պստիկ եար ունիմ
Էրէվանայ խալխումը։

**118.**

Իմ աղբէր ծառի տակը,
Սաղմուսը կռան տակը.
Սաղմուսը գիր է դառի,
Նիգուն բլբուլ է դառի։

**119.**

Իմ դէրվէն ալ պխտի,
Բօղչէն ծալէծալ պխտի.
Ուժ տուն վուր նս տուն կ՚էհամ,
Օսկին սարէ սար պխտի։

**120.**

Իմ եարը խռով գնաց,
Մէ բացը սարով գնաց.
Իս լուր (ջուր) դառայ, նա կա-
[կաք ([illegible]).
Ախրումը ([illegible]) թռաւ,
[գնաց։

**121.**

Լուսնիակ կամար-կամար,
Իս նստած իմ քլիզ համա.
Խուն օր պաս իմ պահի,
Քու աղիզ խաթիր համա։

**122.**

Ծլվլանինց կտիրը
Ծլվլում ին ծտիրը.
Ազապ տղի դիղն ինչ է՝
Կոկոմ շամամ ծծիրը։

**123.**

Ծառի տակը հով քամի,
Աշլուխը քամին տանի.
Արէ, գնանք դադաստան,
Ում նասիբն ([illegible]) է, նա տանի։

**124.**

Ծիտը թռաւ էն արտին,
Պատռաւ իմ սրտի փարդին.
Աշուղ չէի, աշուղ դառայ,
Բէմուրվաթ (անողորմ) եարի դար-
[դին։

**125.**

Ծառի տակը կացիլ իմ,
Լէչաքս լըվացիլ իմ.
Իմ նանին (մայր) խաբար արէք՝
Ճատ դարդին դիմացիլ իմ։

### 126.

Ծառի տակը հով քամի,
Քանքուլը (շշ—նփ) քամին տա-
[նի.
Գլուխս ծուցըտ կու դնիմ,
Ընուշ քունս կու տանի։

### 127.

Կանգնած իս, կաց կու մանիս,
Արեգակի նըման իս.
Վլի կաց էտվանց, տուն գընա,
Ձատ մարթուն խիլքէն կ'օնիս։

### 128.

Կանանչ տեփուր (Բ—ֆ—ր) մէյ-
[դան է,
Տեսնինք ում նարը տանն է.
Մեռնիմ ծլած բլխերուտ,
Օսկէ թիլլի նման է։

### 129.

Կակաբը (ֆ—ֆ—) նստիլ է քա-
[րին,
Կըտուցը լիքն է արին.
Մէ ազլուխ վարթ իմ քաղի,
Տարէ'ք իմ աղբուր եարին։

### 130.

Հաց իմ թխի գարի է,
Եար ունիմ սափարի (օֆ—ր—
[Բֆ—ն) է.
Սափար գնալուտ մեռնիմ,
Խօսկերտ շաքարի է։

### 131.

Հաց իմ թխի գաթացու,
Իմ եարն է մեյլիքացու.
Գիղումն օխտը տղայ կայ,
Իմ եարի նօքարացու։

### 132.

Հաց իմ թխի մշակին,
Ցիդ իմ նստի գօշակին.
Եարիս հենց կարօտիլ իմ,
Վունցոր վարթ, մանիշակին։

### 133.

Ձիր տուն, միր տուն մէկ պիտի,
Մինչի պատը չը պիտի.
Մինչի պատը ինչ անէ,
Ձուն քօփակը չը պիտի։

### 134.

Ձիու վրայ ալ ղաջարի (ֆ—գճ—ֆ),
Իրազումս քիզ պաչ արի.
Արազունճի (—րԲ—ն) ինչ դէթ
[արի,
Ի՞նչ ջիգր արիր, վուր չիս գալի։

### 135.

Մէ խնձուր ունիմ, կծած է,
Կծած չէ, էրծթած է.
Աղբէրս ուզից, չը տվի,
Սաի՝ եարիս ղըրգածն է։

**136.**

Միր տան էգնէն բաղչա կայ,
Բաղչի մէջը ռեհան կայ.
Ռեհանին քաղող սլիտի,
Նուցումը խաղող ալիտի։

**137.**

Մոլիկ արէք էն գլին,
Վուտը դրիլ է փշին.
Մնունիմ չալ-չալ (Ն—խ—շ—ն) ուն-
[քերուն,
Թուխ աճկ ու կարմիր թշին։

**138.**

Մէ բարց իմ կարի, իմն է,
Մէկ էլ իմ կարի, իմն է.
Գանջու քարվան է գալի,
Միջի մինձ խօջէն իմն է։

**139.**

Միր բաղումը բաղմնչի,
Ճվին շվի նման չի.
Քաղքումը տղէրք շատ կան,
Մէկն իմ եարի նման չի։

**140.**

Մէ բարց ունիմ դրած է,
Եարս վրէն քնած է.
Աճկ ու ունքին հաւան իմ,
Մէ քիչ ռանգը թռած է։

**141.**

Միր կոլիր էգնէն մէ մառան,
Տղէրքն էկան, լիք դառան.
Ձեռս տրվի, թէ բռնիմ,
Պինփ լալ (—ղ—ն) ու մարջան
[(Ե——ր), դառան։

**142.**

Շահարի (շ—ր) անգը (հ—ր) փոխէ,
Շահլիտ դալբ է, տափ, փոխէ.
Էտով ինձ գուգլիս խափի,
Տափ, հալէ, աճկտ կոխէ։

(Աղջիկը չէ ճանաչում իւր նշանածի բերած ընծան եւ նշանը)։

**143.**

Ջուրը գալիս է լանդ տալով,
Էրկու խնձուր ծափ տալով.
Հօրէն (—հ—՛) եարս գալիս է,
Ու գդակը թափ տալով։

**144.**

Ջուր է գնում արխումը,
Արրէշում է չարխումը.
Գլուխս գլխիտ ղուրբան,
Ջօմարդ (Ջ—ր—ն) կանգնիս խալ-
[խումը։

**145.**

Ջաղցի դուռը տաշած է,
Եարս ղալամ քաշած է.
Ղ՛ալամ քաշիլն ինչ կ'օնէ,
Սիրտս հալած-մաշած է։

### 146.

Ջաղացս բանի, բանի,
Պարզու քունս չի տանի.
Քիզ պէս դէղին ի՞նչ կ'օնիմ,
Ինձ վուր մարթու չիս տալի։

### 147.

Սարերու սրնձն ([illegible]) ի՞նչ է,
Կաթնուժը բրինձն ի՞նչ է.
Ծարը վուր խարին սիրէ,
Խօսկ ու գրիցն ի՞նչ է։

### 148.

Սիպտա ձին նալն (դոշ) ի՞նչ
[կ'օնէ,
Սիրունը խալն ի՞նչ կ'օնէ.
Պառաւ ձին գարին ի՞նչ կ՝օնէ,
Պառաւը խարն ի՞նչ կ՝օնէ։

### 149.

Վերնաքամին գալիս է,
Դուռը դխդխկեցնում է.
Մէյդան արէք, անց կենամ,
Կարօտ խարս գալիս է։

### 150.

Փլաւը ղ՛արով ([illegible]) պիտի,
Խօսկը լաղ՛ափով ([illegible]) պիտի.
Ի՛ս չուխկով մարթն ի՞նչ կ'օնիմ,
Իմ խալը կարով պիտի։ (*)

---

(*) Ջան գուլումը պիտի որ երևանցիք լինին բերած Թիֆլիս և Թիֆլիսեցիք իրանց ճաշակի համեմատ փոփոխած, պահպանելով երևանու բարբառի մի քանի բառերը և ձևերը. օր. գրից, պառաւ, նման չի, տանն ա, հըլթալ, կռներիս, հըէվանայ, ինձանից, արին (արիւն), պահի (պահէ)։ Գուցէ այս ձևերից մի քանիսը առել են Թիֆլիսեցիք՝ Ջան գուլումի ոտը յարմարացնելու համար։

Գ. Տ. Ա.

Գ

# ԱՌԱԾՆԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

Անկէն հիւու, սրտէն էլ հիւու։
Ապրի վուրթատէրը, չ'ապրի դըրամատէրը։
Ասողին էլ լսող պիտի։
Աշխարքը դմակ, դուն սուր դանակ։
Աշխարքը դմակ, մարթը դանակ. քանի գ'ուզէ, կու թլաշէ։
Աղբէրն աղբուր մխը ծամից, ծամից, չը կուլ էրխու։
Առջի խաղը սատանինն է։ ([illegible])։
Աղկատ ու հմպարտ։
Անգաճն էնդու համա չէ մինձանում, վուր շատ բան է իմանում։
Ամեն մարթ չալիշ է գալի ([illegible] է) իր ծառին ջուր տա։
Աղբէրը վուր լաւ բան էր էլի, Աստուած էլ աղբէր կունենէր։
Առուտվայ շառը ([illegible]) լաւ է, քանց գիշերվայ խէրը ([illegible])։
Անճարի կերակուրն է բանջարը։
Արէ ու գիլի գլխին աւետրան կարթայ։
Առջի տանողին, էդի ցնցողին ([illegible])։
Աստուած վուր կու տայ, էրկու ձեռով կու տայ։
Ալինի դարդը ([illegible]) փլաւն է։
Անկն արթար լաւ է, քանց միտկը միղաուր։
Անգէր օլքա ([illegible]), էս էլ ուտիմ, դուն էլ ուտիս։
Աղբուր տղին պարնութին տվին, առաջ իր մամիգին (ժը. հօրա-
    քոյր) իշի վրայ նստեցրուց։
Աղջիկն օրական, բաժինքը տարեկան։
Անողը պրծաւ, ասողը չը պրծաւ։
Ահի տարին ինչ էր, վուր մահի տարին ինչ ըլի։

Անգը (եղբ) ննգանք, մանգը ննգանք, ակուններու ճանգը ննգանք։
Աքլորն ասիլ է՝ ես կու կանչիմ, գ'ուզէ լուսանայ, գ'ուզէ չէ։
Աստուած ջէր սարը կու տեսնէ, իժում (չեփը) ձուն կու դնէ։
Աստված գիդէ, թէ ինչկլի վուտն ի գերեզմանը ինչ է գալու մարթուս գլխին։
Աստուած էլածն օխնէ։
Աճկլի համա աճկ կու հանէն։
Անունս Ալի ըլլի, գուրծկս բարի ըլլի։
Անձրուի վրայ անխլը կտրելու նշան է։
Անհախ (անխօսք) ըլլի, անճաշ չըլլի։ (հիմէը)։
Ախլ լին՝ ճա ու տուր. խոմ չին ասի՝ ճա ու կուլ։
Աղչկայ ու տղի բանը կարմունջ է։
Ալինինը Մուսինին է անում. Մուսինինը՝ Ալինին։ (հնարագէտ մարդ)։
Անհունար (անշնորհ) մարթու լիզուն էրգար կու'լի։
Աղվէսին հարցրին՝ վկէտ ով է. ասաւ՝ իմ կուդին (վր. -գէ)։
Ալի (տաջառանձէ) հիդ քար կրիը լաւ է, քանց բէդասլի (ապարաճէ) հիդ փլաւ ուտիլը։
Ալ (ծիրան) էլ հաքնիս՝ սազ գու'քայ. շալ (ճոթնշէն) էլ հաքնիս՝ սազ գու'քայ։ (հարուստ մարդ)։
Աշխարովի մահը հասնիք է։
Առաչ փիքը արա, իժում ասա։
Ակուէքը քչփորելով փուրը չի կշտանա։
Աղչիկը ուրիշի ապրանք է։
Աշխարքս սանդուխտ է. վուրը դիվիր է գնում, վուրը դէվէր է գալի։
Աշխարքս անցորական է. վուրը գնում է, վուրը գալիս է։
Արէ, գնամ, ջուրը ննգնիմ. կ'օսիմ՝ եճ իղքալ (ճոշր)։ (Չուրն ընկնողը ճոշր չի ճոյոտ)։
Ապրնքին իր տէրը, վուրթուն իր հէրը։
Աղչիկն ուրիշի վուրթի է. տղէն բինադար (ճոյոն) է։
Աղչիկը ծախու ապրանք է։
Աղչկերանց տէրը դունջը (ոռը) հուփ կու տայ։

Ամէն բան խօմ բոխչա ([illegible]) չէ՞ն շինի։
Աղբուր վուրթի՝ ջան վուրթի. քվիր վուրթի՝ շան վուրթի։
Ունկի համփիրութինը իշի մարտիրոսութին է։
Ապրիլ կայ՝ էրկաթ է. ապրիլ կայ՝ էրծաթ է։
Ամէն խաղը խաղացիլ իմ. բաղկի կուկուն ([illegible]) մնացիլ է։
Աստուծ կանչողը մաղբուն ([illegible]) չի մնա։
Աստուծ հալալին ([illegible]) կու տայ։
Աստուծ շատին ու քչին չէ մտիկ անում. սրտին է մտիկ տալի։
Աղբէրն ասաւ՝ քուր չունիմ. քուրն ասաւ՝ իմ աղբուր արիւր։
Ակուլի ահու մարթ իշին չի կանայ չօշ ասի։
Անցկացած օրին օր չի հասնի։
Աշխարքս ուս ու տխս է։
Ամէն մարթ իր բէղօվլաթ ([illegible]) տղին կու գովէ ու իր շիլ աղչկան։
Աղկտի դարդը աղկատը կու իմանայ։
Ամէն բան իր ժամանակն ունէ։
Ամէն բան իրա տիղն ունէ։
Անտէր հաւերուն օ՞վ կու՚լի տէր։
Ալին գնաց, Մուսին էկաւ։
Առան, տարան, բրդի շուն. քունն ի՞նչ տարան, բրդի շուն։ ([illegible])։
Աչքիւտ մտիկ արա ([illegible])։
Աղ կայ, վուր ճղ ըլէ՞։ ([illegible])։
Աստուծ էն վախտը ջիանճվէլին ([illegible]) խուռվեցաւ, վուր օրը թիւ էրիտ։
Արունն արնով չին լվանա, արունը ջրով կու լվանան։
Ամանաթը ղիամաթ։ ([illegible])։
Ամանաթը ղիամաթ. ամանաթը գեղին էլ կու պահէ։
Աթմորթիս փքած տիկ է։
Աշխարքը դմակ է. քաղցր լիզվով թլաշէ՛ ([illegible]) ու կե՛։

Ուշի թիքին թիքա (դ-տ---) չի հասնի։ (հ-ռեղ է)։
Աշխարքն օչովին չէ մնացի։
Ա՜խ Աստուած. շատին կու տաս ոէլով փէտ. վուրին չիս տա ցախ, Աստուած։
Արջի խաղալը տանձի համա է (——չէ հնուրաքիտումնին)։
Առանց իշի գլուխ հարսնիք կուլի՛։
Ահը դժար է քանց մահը։
Աշխարքս քարվասլա (իջևանատուն) է. մէկը մտնում է, մէկը դուս է գալի։
Աղէկայ լաւ մազն էլ (կամ՝ լաւ բօլին (հ---ք) էլ) մէ աղէկ ամ է։
Աճկը կշտանալ չունէ։
Աստուածն էլ լաւին է տանում։
Աճկը մէնակ խուղով կու կշտանայ։
Ամեն մարթ իր խիլքն իր գլխումն ունէ։
Ամուվայ անձրևին, ձմուվայ արեգակին մի՛ աւատա։
Աստուած վուր մարթու գլխին խռով կու կենայ, առաջ խիլքը կու խլէ։
Ասծու պահած գառը գէլը չի ուտի։
Աստուծ վուր չէ տվի, փէյղամբարն (մարգարէ) ի՞նչ անէ։
Աղէտ վուր ձէթ տայ՝ փիշտ (տղունյա) դէմ արա։ ([illegible] մին [illegible])։
Աղվէսն էլ իր կուդին (վր. ագի) է մօծամա (վր. վիրոյ) բերում։
Անգաճտ էրկու շինէ։ (լր- լուր)։
Աստուած վուր չէ տվի, խէչն ի՞նչ անէ։
Ամեն բանի վիրջն է գովելի։
Անվուրթին մէ դարդ ունէ. վուրթատէրը՝ հազար։
Անկածակի աճկը մէնակ խուղով կու կշտանայ։
Առուտուրը հէրն ու մէր չունէ։ (առևտուրը ո՛չ հայր ունի ո՛չ մայր)։
Ամեն մարթ էլ աշխատանքի մէջն է. բանը պահելն է։
Ասծու ձեռին վունչիչ դժար բան չը կայ։

Ըռակն անխոթելի է: (անխօտելի, դադարածն):
Ամեն մարթ էլ իր գլուխն է գովում:
Ակռաւը լէշի վրայ կ'էրթայ:
—Անէծկ, անէծկ, ո՞ւր ես գնում: «Անիծողի ծուցը»:
Ահը տալիս է, մահը վրէն:
Ամբ օրը նորահարսը գիշեր գիդէր:
Աստուծ ձեռնիր (կամ՝ էրկու ձեռն) է տվի՝ բան շինելու համար:
Աշխարքս չարխ (անի) է, պտուտ է գալի:
Աման վէր ննգաւ, չը կոտրվեցաւ. ձէնը վիր էլաւ:
Ակուին ասին՝ ոչերու (Թոշոն) մէչ վո՞ւրն է սիրունը. ասաւ՝ իմ ճուտը:
Աղբէրն աղբուրն ասաւ՝ արի, հեսաբը տեսնի՞նք, էլի աղբէր ըլի՞նք:
Աղվէսի դունչը (անւ) հաղղին (խուււ) չը հասաւ. ասաւ՝ չէր (դեռ) խակ է:
Ամեն բանի սկսըտկեցնիլը լաւ չէ:
Ակուլի տեսած սիրմը չի կանանչի:
Ամեն մարթ Պ'ազար չի ըլի. ամեն տակռի (ոչ-ոց) գազար չի ըլի:
Ամեն բանումը չին լուս ննգնի:
Ամեն փորցանքին մէ-մէ խրատ:
Ամեն օր կուժը ջուր չի բերի:
Ամեն խաղը խաղացիր, մնաց եալլին (ձ տեղ դոր):
Աթմորթիս (կամ՝ անձը) բօղաղով (ֆոֆոցը) է առաչ գնում:
Ամեն ջուր գերան չի բերի:
Անգամի (անհոգ) ժամը Աստուծ է քաշի:
Անցկացած բանին մէ ափսուսա, անհաւատ բանին մէ աւատա:
Ամանաթը (դրսոնը) տէրը գ'ուզէ:
Աղվէսի փախչիլը ինչկլի ճոնխանէն (գործարան խոշխոցել) է:
Ամեն մարթուն աւատալ չի ըլի:
Ամեն իծիր իրա շլնքեմէն (դրսոյ) քաշ կ'օնին:
Աշխարքս Սողոման իմաստունին էլ չէ մնացի:

Աստուած օրը կու տայ, բարին էլ հիգը։
Աշուղի խաղը վուր կու հատնի (կամ՝ կու պակսի), նէյնիմ նէյ-
նիմը կու ննգնի։
Ընգլին քարը էրան տիղը ծանդր կու՛լի։
Ախլըն էլ ցաւ է, չաախլըն էլ։
Ընօթի հաւը էրազումը կորիկ է տեսնում։
Աստուած իր սիղծածին չի կորցնի։
Առնողի աճկը ծախողի վրայ է։ ([illegible])։
Ախլը հիշտ է, անխլը՝ դժար։
Ընդէր գառը գէլն է կերի։
Ընունը կայ, ինքը չըկայ։
Ըմեն մարթ իր գլխի տէրն է։
Ըմենքն էլ իրանց ձին ին քշում։
Ընունը կայ, ամանումը չը կայ։
Ածու փիշը ([illegible]) բռնողը չի կորչի։
Աստուած մինձ, օղորմութինը շատ։
Աղպը քանի քրքրիս, հոտ գու՛քայ։
Աշխարքն է կերի ումիկը ([illegible])։
Ապսպրանքով վուրթի չի շինվի։
Աստուած սար ու ձուրն էլ մէ հաւսար չէ սիղծի։
Ընսղալ մէնակ Աստված է։
Ածու շինածը մարթ չի կանայ քանդի։
Աշխարքն էրվի, քու մէ խօրօմ ([illegible]) խուտը չի էրվի։
Ընխիլքի հացը՝ խելօքի փուրը։
Աղբէրը մեռաւ, աղբուրն աւելցաւ։
Ըմեն դարիվէր ([illegible]) ունէ իր դարիդուսը ([illegible])։
Աստուած օղորմած է։
Աշխարքս ունայն է։
Արի ու էշը ցխեմէն հանէ։
Արի ու իշի գլուխը շուռ տո՛ւ։
Անցկացած բանի էդնէն չին ննգնի։
Ըմեն մարթուն իրա վուտով քաշ կ՝օնին։

Ընդէր ժամին սատանէքը տէր կու՚լին։
Աստուած իրա սիրծանի մօդ սեւերես չի մնա. ան (եամ) էս գլխէն կու տայ իր օղորմութիւնը, ան էն գլխէն։
Ուսկի թիւքէն (դուքուր) ծվ է դէն գցի։
Աստուած ջէր խիլքը կու առնէ, իժում դօվլաթը (հարաման— բէկն)։
Աղչիկը պլտի մարթանց տանը դուս կանգնի. մարթանց տունը քուրախանա (հուրոց, բոխչ) է։
Անխիլը դադում է, խելօքն ուտում է։
Առծու փիշը (թշանչթ) բռնէ։
Առանց շուն գլող չի ըլլի։
Ամեն մարթ էլ իրը գ՚ուզէ։
Ամեն բան իր գինն ունէ։
Ամեն տիղ լուս ննգնիլը լաւ չէ։
Աստուած գլիդէ դուղն ծվ է։
Աստուած ամեն շնուք մէ մարթուն չի տա։
Աշխարք քօռ (եոզ) գալիս ինք, քօռ գնում։
Անփոխնի մտկումը օրը տասն ու հինգ գազ կտաւ կու անց կենայ։
Աստուած մէ մարթուն ուրիշի աքօվ (յոլ) չը թողնէ։
Ամեն օխչար իրա դմակը կու պահէ։
Ավիր (ասրէալ) քաղքին՝ շէն անուն։
Աշխրքի շինողն ու քանդողը լիզուն է։
Ամեն մարթուն իր հարէն (վերթ) է ցաւ տալի։
Աստուած էրկու ձեռն է տվլի, մէ գլուխ։
Աստուած աջու ձեռը ձախու ձեռի աքօվ (յոլ) չը թողնէ։
Աշխրքի դօվլաթը (հարամաբէկն) աշխրքումը կու մնայ։
Ուսկի թիւքէն (դուքուր) փուր չի ծակի։
Անունը տոն, տիղը (անկուղին) գցէ։
Ամեն ամբելով անձրեւ չի գա։
Անզգալ մարթ չի ըլլի։
Աքլարը վուր բէվախտ (անժամանակ) կանչէ, գլուխը կու կտրին։

Աղն է սրպանում մառղին (տուզ)։ (Ըրհեըս ուէրըէն օրհնած ող են թուլըօ, ող ին պատտեըլմ, ողլ մըրնեըս մոթով)։
Առնողը գթնում է, ծախողը կորցնում է։
Ամեն ծղարօումը (կր. ողէերը) վուր թ·քիս, վուրղանցեմէն պխտիս ջուր խմի։
Անօթին էրազումը հաց կու տեսնէ, ծարաւը՝ ջուր։
Անիծկն անիծողինն է։
Անիծկը էրկու բերնանի թուր է, համ (Ի) դէսն է կտրում, համ դէնը։
Ամեն անգամ սէլը վէտ չի բերի։
Անսկամ մարթումէն Աստուած էլ է էրեսը շուռ տվի։
Ամանաթը (գոգոնդ) խուղն էլ կու պահէ։
Աշխարքս փուխ հաց է։
Ակռաւն ուղից կակալի ճրեշի (ֆնդուխ) գնա, իրանն էլ մտէն գցի։
Առանց խաշ խմուր չի դառնա։
Աճկը տեսածեմէն է վախենում։
Աչողութիննն ու ձախուրթութինը աղբրտիք են։
Աղօտկն իր տիղն ունէ. սուրն՝ իրը։
Աղվէսը փողոցումն ինչ բան ունէ։
Աստուած էրկու անգաճ է տվի, վուր մէկեմէն տուն գնայ, մէ-կէլեմէն դուս գայ։
Անունը տու, սուփրէն (սօֆրա) գցէ։
Աշխարքը ալան-թալան (ալանդ ֆոխչընդ) է. նամարդը (նամէրդ) իշի փալան (սամէր) է։
Արեգագն ու լուսնիակը իմ կուռն (չուլ) ըլի, թէ չէ. մատնիրս ատղերու վ...
Աշխարքն էհէնց էկել է, էհէնց էլ կ՚էհայ։
—Ա՛յ, վուրփի, ո՞ւմը կու ք... «Պահողիս»։
Ամեն մարթուն իր թոկով (ուրղան) կու խիխտին։
Ամեն մարթ իր դարդը կ՚օսէ։
Ամեն բան վախտին մտիկ կ՚օնէ, վախտը՝ վուչ մէ բանին։

Ամեն չամիչ իրա կուժը կունենայ։
Ամեն մարթու դարդը իրա համա ուղտ է։
Աղբէրն աղբուր միսը ուտէ էլ, օսկոռը չի դէն գցի։
Աշխարքս տեսնելով է ու սորվելով։
Անիծկը բերնեմէտ դուս գայ, ծուցտ մտնի։ ([illegible]):
Ապրիլն ([illegible]) ապրեցրուց, հիդ էկաւ, տ...։
Անփուտ լուսնիակն էլ չէ։
Ուելին աճկ չի հանի։
Ամեն օր ինծի վ... բաց չըլի. մէ օր էլ օխչըրի վ... ըլի բաց։
Ամառ—ձմիռ մէ խիլքն ինչ անէ։
Արունն աճկիրը կու կապէ։ ([illegible])։
Այրնքի գլուխը կապիլը լաւ չէ։ ([illegible])։
Ահը իշին ձիէմէն չուստ կու վազեցնէ։
Աջի գուղն ու ուղտի գուղը մէկ է։
Անգճով իմացածն ուրիշ է, աճկով տեսածն՝ ուրիշ։
Անհիմք տուն չի շինվի։
Աճկով տեսած բանն ուփրօ (վր. [illegible]) լաւ է, քանց անգճով
լսածը։
Աճկով տեսածը սիրտը գ'ուզէ։
Առանց Աստուծ բան չի ըլի։
Առանց Աստուծ փօթօլն (վր. [illegible]) էլ չի վէր ննգնի ծառեմէն։
Առանց աքլըրի կանչելու էլ է լուսանում։
Առծու տվածը գլխի ([illegible]) բարի է։
Աղկտին դուսը ծեծեցին, տանը պարծեցաւ։
Ափր՝ կու լախս, արիր՝ կու գլծնիս, մէ տա՝ կու սորվեցնիս։
Արջը մինք խաղացրինք, շաբաշը ([illegible]) դուք առաք։
Աճկ պիտի, վուր տեսնէ։
Աշխարքը միզ հիդ չի գա, մինք նրա հիդ կ'էհանք։
Ամեն ժամանակ ջուրը տօփ ([illegible]) չի բերի։
Ուել-պակասը Աստված կու դրստէ։
Աստուծ տալիս է, Աստուծ խլում է։

Աստուած իր սիրածին իր ուզածը ([illegible]) կու տայ (կամ չի կորցնի)։
Ածու ձեռքին ամեն բան հեշտ է։
Ա՛ն՝ հա՛, ա՛ն՝ չէ։ ([illegible])։
Արամը ([illegible]) փուրումը կու տայ վարամը ([illegible])։ ([illegible]).
Ամեն օր ջուրը փէտ չի բերի, դէդէն ([illegible]) վուրթի չի բերի։
Աշխարքը խելքով կ'ուտին։
Աշխատաւորը քաղցած չի մնա։
Արջն իր ահու կու գոռայ։
Ալնի էր, դառաւ խնձրահամ։ ([illegible])։
Աղաւթինը տալով, ղօչաղութինը խփելով։ ([illegible])։
Աննամուսի ([illegible]) էրեսին թքեցին. էրեսը սրփից, ասաւ՝ անձրեւը վուրդանց է գալի։
Անդէր օխչարը գէլը կու տանէ։
Ակուէքը գիղէ անդամը։ ([illegible])։
Աղ ու հացը քարն էլ կու իմանայ։
Անգը ([illegible]) տէս, կտաւն առ. դէդէն տէս, աղջիկն առ։
Արջը վուր գիլի փայ ([illegible]) դառաւ, նրա բանն էն չախը ([illegible]) խարար ([illegible]) էլաւ։
Արած ցխին մէ կուժ ջուրն էլ հերիք է։
Անցկացած ու մտէն գցած։
Աճկով տեսածը հաստատ է, քանց անդճով լսածը։
Ալիր փեսէն անէրանց ունեցածը իրանը գիդէ։
Ամեն կինտօ ([illegible]) բազազ չի դառնա։
Աթմորթուն ջուր խմելիս օցն էլ չի կծի։
Ամեն օր քաղա ([illegible]) չի ուտվի։
Անունը կայ, զօրքը չը կայ։
Անդազգա ([illegible]) փէշակը ([illegible]) հառամ ([illegible]) է։
Անշուն գիղ է գլթի, առանց ջոխի ման է գալի։
Ածու ձեռը թաքաւորի սրտի վրայ կու՛լի։ ([illegible])։
Անճարի ճար Աստուած։

Աշխրքումը ամէն բան կու ճարվի, սավաի (բաշքէ) հէրն ու մէրը։
Աստված ցաւը տալիս է, դեղն էլ հետը։
Անճարն է կերի բանջարը։
Այինի դդակը Մուսինին է ծածկում, Մուսինինը՝ Այինին։
Աշխարքը դմակ, փօչաղը (ք—չ)՝ դանակ։
Ածու բանը անքննելի է։
Աջողալն Ածու ձեռին է։
Աշխատելը հեշտ է, պահելը՝ դժար։
Անցաւել գլուխտ մէ ցաւեցնի։
Անչափ բարդութին, մսի թանգութին։ (ազ ու չօք բօլլուղ, ...)։
Ամէնքի տանը մէ-մէկ կճուճ լափ (...) է եփ գալի։ (...)։
Ամէն բան դրուստ (...) չի ասվի։
Ամէն բանը խաղացել ենք, ակռուփուշին (...) մնացել է։
Անը սրտին, էրկուղն էրեսին։ (...)։
Աղ ու հացին դրուստ չը մտիկ տվողի աճկերը կու քոռանայ։
Ամռվայ փուշը, ձմռվայ նուշը։
Անցկացած բանին էլ չիս հասնի, հազար էլ գ'ուզէ ղաստ անիս (...)։
Աղբէրը մեռաւ, աղբուսն աւելցաւ։
Ամէն ծաղիկ իր (կամ՝ մէ-մէ) հոտ ունէ։
Աղչիկը վուր հօրանց տանեմէն ննգղի (...) քարն էլ հետը տանէ, էլի կ'ասէ՝ քիչ է, վունչինչ չիմ տարի։
Աղբէրն աղբուրը վուր քօմագ (...) անէ, սարը սարին կու դնին։
Ամր օրը անրան կնգայ համա նուր է լուսանում։
Աստուծ մարթուն չը կոըցնէ, թէ չէ բանդէն (...) վունչինչ չի կանայ անի։
Ակուլի ձէնը Աստուծ վուր իմացել էր, Վարթէուրին ձուն գու՛քէր։

Ակռաքեմէտ թէ կու յիդ գցիս, թէ չէ, ուրիշ վունչիչ։

Աճկեմէն հանում է, անգճումն է դնում. անգճեմէն հանում է, աճկումը դնում։

Աստուած էրիտ, Աստուած առաւ։

Ամեն բան էս աշխրքումն է սարքվում, մարթ ու կնգայ բանը կի՝ երգնքումը։

Ակռէքը սիրելի է, ամա՛ երփոր դառնացնում է, գջլում ենք ու գէն գցում։ ([illegible])։

Ալրինք՝ ալրանք ([illegible]) պիտի, մեռնինք՝ պատանք։

Ալրողին՝ ալրանք ([illegible]), մեռնողին՝ պատանք։

Անպտուղ ծառին քար գցող չի ըլի։

Արջը մերեմէն ([illegible]) խռովիլ է, մերին իսկի խաբար չէ։

Անաղուն ([illegible]) ջաղցի քարն էլ չի պտուտ գա։

Աղբէրն ու աղբուրը մէկ է։

Աչով տուռ, ձախով մի իմանա։

Ակռաւը տարածն է լալի, ըլբուլը՝ թռչածը։

Աստուած վուր ինձ հիդ ըլի, լուսնիակն ինչ բան ունէ։

Աղջկայ մէ սիպտկութինը օխտը այբ ([illegible]) կու պարտրկէ ([illegible])։

Ամեն մարթ իրա սարփէն ([illegible]) է պտռում։

Աստուած մահ տայ. մէկս մէկումէն բաժան-բաժնութին չը տայ։

Աղջիկ ունեցող դէդի մէ ձեռը ծուցումը կու՛լի։ ([illegible])։

Աշտարակ է ու դաստառակ։ ([illegible])։

Ասիլ չէ՞ ասողինը։

Անվէրի վէրի, անմարթաձէնի։ ([illegible])։

Ասծուն Ղմէրթ․ ([illegible]) չէ ասում։ ([illegible])։

Աստուած միզ վրայ է պարպլի։ ([illegible])։

Աստուած հոքի է տվի ու չէ առի։ ([illegible])։

Ամեն ցաւի մերանն ([illegible]) իս։ ([illegible])։

Արուն է դուս թողնիլու, պիտինք դուս թողնի էլի։ ([illegible])։

Ամութը ձի է նստի ու փախել է։ ([illegible])։

Անար կունենայ աղալու։ ([illegible])։

Անկիրս չէ ուտի քիզ համա։ ([illegible])։

Անկիւ բանը կլոր ([illegible]) դցեցիր։

Ակաս-մակաս, էտ էր պակաս։

Ասի՝ վուր իմանաս. խօմ չասի՝ վուր սորվիս։

—Աթօ ջան, դէվէր արի։ ([illegible])։

Աշխարքը ծով (կամ շէն), դուն մէջը ծվ։ ([illegible])։

Աբարանի ([illegible]) գոմէշ իս դառէ՞։ ([illegible])։

Աղն ու հացը ծնգանը, աճկը կնգանը։ (?)

Աքլորը օրը հինգ գրօշի ջուր է խմում։ ([illegible])։

Աղբուրը ([illegible]) վուր գայ, աղբուսը ([illegible]) կու կորվի։ ([illegible])։

Աճկը քանի էլ գ՚ուզէ մինձանայ, ունքիմէն դէնը չի անց կենա (կամ չի բացրանա)։

Ասիմ գիժ ([illegible]) կու՚լիմ, չասիմ էշ կու՚լիմ։

Ամեն քալլիմէն ([illegible]) մէ-մէ ձէն է դուս գալի։

Ամեն մարթու սրտումը մէ ցաւ կայ։

Աճկիմէն էլ պրծայ, աճկացաւիմէն էլ։ ([illegible])։

Առջի ասողը չի գիդի, թէ էդի ասողն ինչ կ՚օսէ։

Ակռաւի խնամին կաչաղակը կու՚լի։

Ասկի փէշակ՝ օսկէ փէշակ։ ([illegible])։

Արակ-բարակ, մանդր ու բարակ, սանամէր։ ([illegible])։

Աճկերն էլ մէկս մէկու հիդ չէին բարիշի ([illegible]), թէ քինթը մէջը չըլէր։

Ակռաւը աղբի վրայ նստած էր, փիֆ էր անում։
Անդամ ([illegible]) հարսը՝ հօրանցը, անդամ փեսէն՝ աներանցը։
Ասի ունքս ([illegible]) դնիմ, աճկս էլ հիդը հանեցի։
Առանց ախոռ ձի չին առնի։
Արջը հաղուղ գլթաւ, տանձը մտէն գցից։
Ամեն մարթ իր ձին է քշում։
Ապրի ապրեցնողը, ծաղկի ծաղկեցնողը։ ([illegible])։
Ապրի գրգածը, չ'ապրի գրգողը։ ([illegible])։
Ածու թուրը ուշ կու կտրէ, ամա խուռը կու կտրէ։
Ան քիչ առաչ վո՞ւրդի էիր, ան քիչ էգնէն։ ([illegible])։
Աւարայ ջաղցի պէս ինչ իս դուս տալի։ ([illegible])։
Աստուած-Աստուած է անում։ ([illegible])։
Ածու խիղճ իմ։ ([illegible])։
Ակռէք չը կանաց կփցնի։ ([illegible])։
Աշխարքը տանին-բերին, նա վունչիչ չի իմանա։ ([illegible])։
Աստուած նրան էլ շատ արաւ ([illegible])։
Աստառն էրեսկի վրայ թանգ ած է։ ([illegible])։
Աստանդարին (?) վուր բիրթն էին տանում, էն ժուգվայ է։ ([illegible])։
Ատուցի ([illegible]) աղկտի պէս ցից է էլի։
Ամեն (կամ՝ հազար, կամ՝ օխտը) չլեմէն ([illegible]) դուս էկած օմքին է։ ([illegible])։
Ամեն թալաքեմէն ([illegible]) դուս էկած է։ (նոյն)։
Աստված մի արասցէ։
Ալամ-ղալամ ([illegible]) մարթ է։
Աճկերու պարունն էկիլ է։ ([illegible])։
Անգաճը բաղմնչու ([illegible]) է արի (կամ՝ տվի)։ ([illegible])։
Ալան-թալնութին է։ ([illegible])։
Աւարայ ջաղցի պէս է աղում։ ([illegible])։
Աստուած կու վիկալնէ։ ([illegible])։
Ական-թօթափելի էլաւ։ ([illegible])։

Ագուռը դուս ննգաւ։ ([illegible])։
Ածու կարող զօրութէնով։ ([illegible])։
Աստուծ զրգից քիզ ինձ մօգ։ ([illegible])։
Անկումը լուս ունէ։ ([illegible])։
Անկով անկ չունիմ նրան մոնիկ տալու։ ([illegible])։
Անգծնիտ բամբակը հանէ։ ([illegible])։
Արէ, գուքնմէտ ([illegible]) քարը վէր անծա։ ([illegible])։
Անգանճտ ճումն ըս քըրհով ([illegible]) տվի։ ([illegible])։
Աւխտրանի կուղկնմէն է խօսում։ ([illegible])։
Ամենքի գլխին կակալ ([illegible]) է կոտրում։ ([illegible])։
Աշխրքի գարդը խօմ քիզ չին տվի։ ([illegible])։
Արուն կու դուս գայ նրա փուղնմէն։ ([illegible])։
Աստուծ հալրաթ ([illegible]) մէ ճար կ'օնէ. էրկու գռնմէն մէ գռուն էլա բաց կ'օնէ։ ([illegible])։
Աջալն էկել է։ ([illegible])։
Անմիղ նրա մօզ բերանտ մի անհամացնի։ ([illegible])։
Ակռէքնիրն ինձմէն է ուզում դանակը։ ([illegible])։
Ամեն մէ խօսկտ մէ-մէ ջավահիր ([illegible]) աժ է, ամա ումն ասիս։ ([illegible])։
Աղաքարը փուրն է ննգի։ ([illegible])։
Անկ ունէ, անկումը լուս չունէ։
Արէ, ասա էլի։ ([illegible])։
Ածնմէն իրիք խնձոր դէվէր էկաւ. մէկը ասողին, մէկը լսողին, մէկը բարի հրիշտակին։ ([illegible])։
Աշխրքումը մէկ դուն իս, մէկ իս իմ։ ([illegible])։
Անցանած տիղնմէն քաղում է։ ([illegible])
Աղն ու հացը ծնգան ծէրին ունէ վրացու պէս ([illegible])։
Ամիրանն ու Ճամիրանը փուրն է ննգի, քըքըրվում է, քաղկին տէր է լուս ննգի։ ([illegible])։
Անգանակ ինձ մորթում է։

Առանց կրակ ինձ էրում է։ ([illegible])։
Աճկով տէս, սրտով օղորմա։
Աղբումը հուլունք ([illegible]) է գթի։ ([illegible])։
Աղբումը հուլունք է գթի, հէնց գիդէ մարքրիտ է։
Անում ես, արա. քիզմէն քարվան ([illegible]) կտրող չը կայ։ ([illegible])։
Անգաճտ կանչէ։ ([illegible])։
Արէ, քու դէդի մուլթաքէն ([illegible]) մէ քըքըրի։ ([illegible])։
Աշխըքի «ասմ-կօսէն» դառաւ ([illegible])։
Աստուձ, շնէրը թողել ես ու քարէրը կապել ես։ ([illegible])։

Բարեկմացանք, բարեբըրացանք ([illegible])։
Բաքո ([illegible], [illegible]) ճանչցի։
Բարեկմի հիդ կեր ու խում արա, առուտուր մէ անի։
Բաղը բէդօվլաթ ([illegible]) աղբէր է։
Բախշած ձիու ակռէքը չին տնդղի։
Բանը բան կու շանց տայ։
Բալին կրծումը ([illegible]) կու դառնանայ։
Բանը վազ վի կենալը չէ, Աստուձ պիտի աչողայ։
Բուգն ([illegible]) էնդուր է խաղէխազ, վուր խօսկը չը դուս գայ վազէվազ։
Բաղը բաղմնչունն ([illegible]) է ու բաղլինը ([illegible])։
Բարեկամը նիղ օրվայ համա է։
Բանն արա, իժում պարծեցի։
Բերանը դուռը չունէ։
Բախտիտ աձկով ([illegible]) մէ տար։
Բարգացող մարթը ջալդ ([illegible]) կու պառվի.
Բիրթն իր մէջեմէն կու քանդվի։
Բօշեմէն ([illegible]) փաշա չի ըլլի։

Բրուդը խմլաղի ([illegible]) ունգը վուրթէնը գ'ուզէ, էնթէնը կու շինէ։
Բէթխէր ([illegible]) մարթուն Աստուած էլ չի սիրի։
Բանուզոլին տէրը կու տանէ։
Բանը գիդմնալը չէ. բանը բան շինիլն է։
Բաղնսարած՝ խիլքէն էլած։
Բրթիմ եմ, խրթիս ([illegible]) դ՛ուն։
Բօշ չմալ, բօշ չանախ։ ([illegible])։
Բերնով ասիլը հիշտ է։
Բերողը կու աղտէ գրողին։ ([illegible])։
Բանտ մ՛ալիմ ([illegible]) բռնէ, թէ փիս ([illegible]) գայ, էրեսիս թքէ։
Բիր ([illegible]) ըլլի ու փիր ([illegible]) ըլլի։
Բիր բաշ, բիր տաշ։ ([illegible])։
Բանն Աստված։
Բանիտ մոտիկ տօ՛ւ։
Բանն սանլով կու'լլի։
Բաղի տէրը բաղ՛ալն ([illegible]) է։
Բան տա՛մ, վուր բան ըլլի։
Բերնումտ էկածը մի դուս տա։
Բանը բանեմէն վուր կու անց կենայ, խիլք դնող շատ կու'լլի։
Բզի ([illegible]) ծէրին մուշտով ([illegible]) տալ չի ըլլի։
Բանն օ՞վ անէ՝ ես ու դուն. հացն օ՞վ ուտէ՝ ես ու դուն։
Բանը շինելով, էշը քշելով։
Բուղկը քանի նօստրն ([illegible]) ըլլի, էնքան գլուխը հաստ կու բռնէ։
Բօղազտ ([illegible]) քիզմէն ցածրն է։
Բարի զաւակը օրօրոցումը մալում ([illegible]) կու'լլի։
Բանը շատ բան անիլը չէ, տուրքն Աստծմէն պիտի ըլլի։
Բուղկի նօստրը ([illegible]) լաւն է։
Բարաստու ([illegible]) ծառը գլուխը կախ կու գցէ։
Բան վուր գիդմնաս, օչովին մի ասի։
Բանն էն է, վուր Աստուած կու աչողայ։
Բուրթ ու բամբակը բօլանայ ([illegible]). էրեխէն թէզուզ հանա-

նայ, Թէգուզ Թուրքանայ։ ([illegible])։

Բախտը իրան-իրան գու՛քայ։

Բաժան-բաժնութիւնը տուն է քանդում։

Բանը ջէր փիքը ([illegible]) արա՛, իժում խօսէ. փուղերուտ հէսաբն ([illegible]) իմացէ, իժում մխսէ։

Բան կու տամ, կնիկս էլ կու տամ, թէ ինձ պէս պահիս։ ([illegible])։

Բանի վախտը փախչիմ, հացի վախտը գամ, ուտիմ։

Բանը՝ անելով, ճանփէն՝ գնալով։

Բերան կայ, հաց չը կայ. հաց կայ, բերան չը կայ։

Բունումս թքէ, ճակտիտ տամ ([illegible])։ ([illegible])։

Բրթողը գիղէ, ուտողն ի՞նչ գիղէ ([illegible])։

Բան դրին՝ փախաւ. հաց դրին՝ հասաւ։

Բերնէ-բերան՝ հազար բերան։

Բռուղը խելադա ([illegible]) չի ունենա. ճասաբը ([illegible])՝ դանակ։

Բացը սարի վրայ բուքն ու քամին շատ կու՛լլի։ ([illegible])։

Բաց բերանը անօթի չի մնա։

Բան չունի՞ս։ ([illegible])։

Բարեքրին ([illegible]) ճարուլ ([illegible]) իմ։

Բուրթը դրին, բամբակը գզեցին։ ([illegible])։

Բերնեմէտ խօմ քրիհ ([illegible]) չին ուզում։ ([illegible])։

Բանը բանեմէն անց կացաւ։ ([illegible])։

Բձան, բձան. կերան, պրծան։ ([illegible])։

Բաղի, բաղի, ինձ էլ բաղի՛։ ([illegible])։

Բաց ասիմ ու վուչ ամանչիմ։

Բերնեմէն ջէր ([illegible]) կաթնի հուտ է գալի։ ([illegible])։

Բայրաղնիրը ([illegible]) խիստ ին վիր թողի։ ([illegible])։

Թմբլի ([illegible]) զարբաղնիր ([illegible]) է գցում։ ([illegible])։
Թերնումս բուրթի ([illegible]) ինն խցկում։ ([illegible])։
Թա՛ն է, վուր կու տեսնէ։ ([illegible])։
Թուրթին ([illegible]) ու մէյդանը ([illegible]) նրան է մնացի։ ([illegible])։
Թարափ է մանում։ ([illegible])։
Թրինձ, բրինձ, դիրա ինձ (կամ՝ մէկ էլ ինձ)։
Թանը բուրթ է։ ([illegible])։
Թանը շլուր է։ (նոյն)։
Թանը փիթռուկ է։ (նոյն)։
Թօխախանա ([illegible]) խօմ չէ՞, վուր գցիմ ու հանիմ։ ([illegible])։
Թերանս միղրով ես լքցրի՞։ ([illegible])։
Թերանս բալով չես լքցնի։
Թարերար ու սարէ սար։ ([illegible])։
Թանի անունը տալիս գլխի ցաւը բռնում է։
Թուխի քիլէն ([illegible]) ես ննգի՞։ ([illegible])։
Թերան չէ, տաճար է՞։ ([illegible])։
Թերան չէ, սաղմոս է՞։ (նոյն)։
Թերանտ էլի բաց արիր ինձ վրա՛յ։
Թագի ([illegible]) շուն կայ, վո՛ւնց ինքը կ'ուտէ, վո՛ւնց ուրիշին կ'ուտեցնէ։
Թարգեղանքի օրիր է, խիւքը գլխէս կորել է։

Գդակս թողուտ տեսան, ջաղցապան գիդէին։
Գիդ կանգնի, գերան կտրէ։
Գիշերը վար անողն էլ է մեռի։
Գէջն էլ ջուրի հիդ է էրվում։
Գթնողը մէ միղկ է անում, կորցնողը՝ հազար։
Գրի մէ էրեսը կարթացիլ ես, մէկէլը՝ չէ։
Գէլը տղայ է բերում։ ([illegible])։

Գիշերը կատուն էլ սամուր կու թվայ (կամ՝ կու էրեվայ)։
Գիժի գլխին աւետրան էին կարթում, ասաւ (կամ՝ ջալդ արէք)՝
 օխչարս սարն է գնում։
Գժին (ԽԵՆԹ) բան դի, հիգը գնա։
Գիժը խնլօքին մտիկ է տալի. նա բան է անում։
Գժի աղուքսը (ողնը) իրգնքումն է աղվում։
Գժին տարան հարսնիքը, ասաւ՝ էս լաւ է քանդ միր
 տունը։
Գիժի ահու օխչարն ծվ է վիր գցի։
Գդակը վէր դի, դադաստան արա։
Գողնողը մէ միղկ է անում. կորցնողը՝ հազար։
Գինին ծիրուց գաւազան է։
Գժին մէ հուշն է պակաս։
Գժի համա ամեն օր հարսնիք է։
Գիժի շլինքն (պարանոց) էնդու համա է հաստ, վուր իր բանն իր
 ձեռով է շինում։
Գիշերվայ սաբըր (Չէյ ֆանգալ) խէր (բարի) է։
Գուղը գուղէն գողացաւ, Աստուծ վերէն զարմացաւ։
Գուղ՝ սիրտը դուղ։
Գիժը դաղէ (աշխատէլ), խնլօքն ուտէ։
Գնա, մեռի. արի, սիրիմ։
Գէլը վուր կու պառվի, շներու ճանգը կու ննգնի։
Գիշերը սուփրէն (սփռոց) չին թափ տա։
Գէլն էլ վուր բերանը բաց անէ. աղչկան պիտին բերանը գցի.
 բախտը չը կապին։
Գովելով խարաբ (քանդուել) կու՚լի։ (Երեւան)։
—Գուղն ինչ գ՚ուզէ։ «Մութը գիշեր»։
Գիժը մէ քար գցից ջուրը. հարուր խնլօք չը կանաց հանի։
Գուղի ու բ… Աստուծ։
Գժի հիդ գիժ չին ըլի։
Գիժը խնլօքին մասխարա (ծաղր) կու գցէ։
Գժի ածկումը խնլօքն էլ գիժ կու էրեվայ։

Գէմումը (ნავი) նստիլ է, գէմչու (ნავჩირ) հէդ կուլու է տալի։
(ეს ჭორიკი ნავჩიერის ანგრევს)։
Գերի ազատիլն ու էգեղեցի շինիլը մէկ է։
Գժեմէն դրուստ ջուղաբ (პასუხი)։
Գնացող ջուրը կիղտ չի մի կալնի։
Գառալնու գօրա (ძალით) անձրև չի գա։
Գիլի փուրը իր օրումը չի կշտանա։
Գուղ մարթը իր օրումը դուղ կու՚լի։
Գառը գիլին չին պահ տա։
Գիշերվայ կերածը կորած է։
Գու՚քայ տարին, հիդը բարին։
Գիղի գլուխը վուր կ՚էհան, էրեխին կու հարցնին։
Գէմումը (ნავი) նստած իմ, գէմչու (ნავჩირ) միրուքը բռնած ունիմ։ (ნავჩიერის ფაფარი მაქვს)։
Գդալով մօդ իմ անում. շերեփով դէն իմ ածում։
Գողնողը մէկի մեղքը տարաւ (կամ՝ մի կալաւ). կորցնողը՝ հա-զարի։
Գուքումս (ფოფ) նստիմ, միրուքս փետիմ (կամ՝ քաղիմ)։
Գեղինը հօվ է։ (მიწაზე არ ფეხი ჰ მიწავს, ფეხით ცხელი ტყა-ნავს ჰ)։
Գոմէշը դանկի մօտ տարան, վուր մորթին։
Գիլի անունն է կոտրած. աղվէսն աշխարքը վիր դցից։
Գիլի բերնեմէն դառը չիս կանայ ազատի։
Գայուն դու՚քայ։
Գինի, էլմանն (ჰოჲ) գինի (ჰარამ)։
Գիժն ամեն օր հարսնիք ունէ։
Գէլը համբրանք չի գիդի։
Գլուխտ վուր ցաւի, վուտիտ ցաւը մոէդ կու գցիս։
Գլուխը սաղ (ოლ) ըլի, գդակ շատ կու ճարվի։
Գիդում աղվէսը էրկու վուտով խափանգը (ხაფანგი) կու ձնդնի։
Գիլի ահու գիղ չը շինինք։
Գերեզմանս էլ լէն ըլի։

Գիլխմէն տամազլուխ ([illegible]) խօ ուզում։
Գլխիտ պտուտ արի։
Գլխիտ տիրութիւն արա։
Գիշերը կու մթնանայ, ցաւը կու շատանայ։
Գինին մինձինն է, ջուրը՝ պստկինը։
Գիժն ու Հարփածը մէկ է։
Գիժը չէ ամանչում, գժի տէրն է ամանչում։
Գէլը վուր կու պառվի, շներու թրխվելու կու դառնայ։
Գիլի բերանը բան չին գցի։
Գիղի շունը վուր քաղաք կ'էրթայ, փարսէվար կու Հաչի։
Գառնեմէն շուն կու ծնանի. շանմէն գառը կու ծնանի։ ([illegible]
[illegible])։
Գիլին ամանաթ ([illegible]) կու պաՀ տան։
Գիլեմէն գառն է ծնի։ ([illegible])։
Գէլն ու գառը մէտի լին արծում։
Գէլն ամպ օրը կու ուրախանայ։
Գինու սիրու շիրաչխանի ([illegible]) պստը կու լպստին ([illegible])՝
Գուղի Հախեմէն Աստուծ գու՚քայ։ ([illegible])։
Գիդացողը գլիդէ։
Գալը քու ձեռին, գնալը միր ձեռին։ ([illegible])։
Գիժ Մարտ։ ([illegible])։
Գժի Հիդ վարվի, խելօքի Հիդ սազ արի ([illegible])։
Գիղցու խօսկը ջվալ ([illegible]) չէ մտնում։ ([illegible])։
Գիլի բերնեմէն Հանեցի, օցի բերանը գցեցի։ ([illegible]
[illegible])։
Գիլինը անունն է. ուտէ էլ՝ գէլ է, չուտէ էլ՝ գէլ է։
Գուղն ու բ... իր սանթն ([illegible]) ունին։
Գուղ կատուն մուկը չի բռնի։
Գուղ մարթը էրեսեմէն մաշուր ([illegible]) կու՚լի։
Գէլը օխչարը տարաւ, վա՜յ մէկի տիրուչը։
Գիլի տարածը խէչին մատաղ ([illegible]) է ասում։
արէ Հացը տ.. Հարսին մաՀանա ([illegible])։

Գլխիս վէքիլն (փոխանորդ) իս, անկը հանելու վէքիլը խօմ չէ՞ս։
Գիղ նստում իս, գաւառ հաչում իս։ (տեղդ հանգիստ նստած ես, բայց վերայ խօսում ես)։
Գիլեմէն փախայ, արջի ճանգը ննգայ։
Գէլը բուրթը կու փոխէ, բնութքը (բնաւորութիւնը) չի փոխի։
Գարի ունիս՝ քու ձիաններուն տուր։
Գաղէն (ծառայ) շուրեմէն կու էրեվայ, ասլն (ծագումնէն)՝ էրեսնմէն։
Գիշիրվայ գուղին ցերեկով կու բռնին։
Գիշիրը չին ուզում քնի, առուտեհան չին ուզում վի կենա։
Գիրն էլ ձեռին է, գրի բալնիքն էլ։
Գնացիլ է, գիժ Թէրգի ջուրը խմիլ է։ (խենթացել է. Թերգ գետը շատ աղմկոտ է և փրփրոտ)։
Գլխին ածէ, հերիք է։ (շատ բաւական է)։
Գնա ու գնա։ (յաջողութիւն)։
Գավլինինց Պապէն դառաւ էլի՞։ (շատախօս)։
Գնացիլ է, քօռ (կոյր) վարթապիտի ձեռին պաչ է արի (կամ աչը համբուրիլ է)։ (լաւ բան չէ եղել. կամ հարբել է)։
Գործլի (ածուխ) իք էրում։ (կեղտոտ էք)։
Գուլբքի չխիրը գուս ննգաւ։ (գործը խանգարուեց)։
Գդակտ շուռ տաս, տարին անց կացաւ։
Գարու հուրն է ննգլի։ (բարգաւաճութիւն)։
Գոմշի մես ին շինի իմ բանը, վունց էփվում է, վունչ չի՞։ (Բամբասանք են)։
Գահկիրի (կամակոր) ձիու վրայ է նստի։ (կամակորութիւն է անում)։
Գրի սիւն ու սիպտակը չիմ իմանում. ամմա իմ կարճ խիլքով իմանում իմ, վուր էսէնց պիտի ըլի բանը։
Գիղ գղէ, գաւառ մանէ։ (աշխարհը ոտք տակն անէ)։
Գնաց կատուն, տարաւ չաթուն (անուր, օջաք)։ (գործը ջուրն գնաց)։
Գինու կարասն իս ննգլի՞։ (ուրախ է)։
Գթիլ իս Տէր Հմաօնինց տէրօղորմէն։ (բարերարութիւնը [illegible]

[illegible] «[illegible]» [illegible]).

Գդակ ունիմ ծածկած ([illegible]).

Գաս, աղա ջան։

Գիմ ասիս ([illegible])։

Գանք, հիմի։

Գետնի տակն ինչ բան անց կենայ, ես կու իմանամ։

Գնաց, գնաց. շատն ու քիչն Աստուծ գիդէ։ ([illegible])։

Գիժը տուն է գնում, խելօքը դուս է գալի ([illegible])։

Գլուխտ գովելով գովելով գլորվեցար։

Գլուխս քուչումը ([illegible]) խօմ չիմ գթլի ([illegible]).

Գոռտ ([illegible]) խօմ չիս տանի քիզ հիդ ([illegible])։

Դալի հիդ կերած խուն ([illegible]) հօքու հիդ դուս գու՛քայ։

Դագումն ([illegible]) ու գարարը ([illegible]) աղբրտիք (կամ՝ ներն-
գրտիք) ին։

Դարդ ([illegible]) տամ, դարդ մռռանամ։

Դրուստ է ասած, թէ՝ ջօխին դրախտեմէն է դուս էկլի։

Դիփ ([illegible]) փուխ ու տուրսի բան է։

Դիփ սուտ, Աստուծ ղուրթ։

Դիփ ([illegible]) էստի կու մնայ։

Դուն իմը ([illegible]) մի ասի, վուր ես քունը չասիմ։

Դարդը տալիս է, դարցն ([illegible]) էլ հիդը։

Դրուստ ասողին մէ ձի պիտի։

Դարդն ու ուրախութինը ննգրտիք ին։

Դիփ Աստու բան է։

Դիփ ունայն է էս կինքը։

Դուանտ կողպէք դի, հարեւնիտ գող մի բռնի։

Դիղին օսկին սեւ օրվայ համա է։

Դարդ անողին դարդ ([illegible]) չի պակսի. քէփ անողին քէփ
([illegible]) չի պակսի։

Դալի հետ կերած խաշլամթը ([illegible]) խուլը կու դրստէ։

Դուն աղա ([illegible]), ես աղա. միր աղունն ո՞վ աղայ։

Դրուստ ([illegible]) էշի վրայ նստիլն ու ուրիշի հետ բան բռնիլը մէկ է։

Դուն ինձ պահէ՛ բոխչի ([illegible]) միջին. ես քեզ պահիմ մարթամինչին։ ([illegible])։

Դիփ մէ տեղ կու անց կենայ։ ([illegible]).

Դիղ գիդլիա, քու գլխին արա։

Դարդի ([illegible]) հետ մի՛ ննդնի։

Դիփ Աստու տուրս է։

Դիփունին չի գա շէշ ([illegible]) ու բէշ ([illegible])։ ([illegible])։

Դանակը ինքնի մօդ տաննլու մազխար ([illegible]), ինքն ին տանում դանկի մօդ։

Դուն կի մի գովլի քեզ, թո՛ղ ուրիշը գովէ։

Դուն մերքը կե՞, բազմնչին ([illegible]) ինչքոտ է ալէտկ։

Դուն քու ձին (կամ էշը) քշէ։

Դուն քու բանը տես։

Դուն քեզ համա կա՛ց։

Դիփ մէկ է։

Դարփունը ([illegible]) դանակ չի ուննենա։

—Դէղլի, ես լաւ եմ, թէ քուրս։ «Վուրթեի, վո՞ւր մասս կտրեմ, վուր չը ցաւի։ Դուն իմ շէնքն ես, նա իմ շնուքն է»։

Դիփ էլ մահի վուրթիք ենք։

Դարդակ կարասը մինձ ձէն հու հանէ։

Դարդակ կարսի ձէնը բացը կու դուս գայ։

Դրուստ խօսող մարթու դդակը ծակ կու՚լլի։

Դամբաչէն ([illegible]) իր հրեշտակն ունէ։ ([illegible])։

Դանակը վուր ծալես, ջիբտ ([illegible]) դնես, կու ժանգոտվի։ ([illegible])։

Դրուստ խօսողի ձին դռանը պիտի, վուտն էլ ուզանգօումը ([illegible])։

Դրուստ խօսողի ձին պիտի թամքած ըլլի։

Դուն քեզ համա, ես ինձ համա։ ([illegible])։

Դարդակ ռումբուն ([illegible]) խփում էին, դմբդմբուցը ճուր էր գնում։ ([illegible])։

Դուքանը ([illegible]) գուղ է։ ([illegible])։

Դուն տու, ջուրն իր ճանփէն կու գթնէ։ ([illegible])։

Դրսեմէն սուրփ է, ներքսեմէն թուրք է։

Դրսեմէն գահանայ, ներքսեմէն սատանայ։

Դադաստան ունինք գնալու, պատասխան ունինք տալու ([illegible])։

Դեղ ունիս՝ քու գլխին արա, եղ ունիս՝ ձիր քիլումը ([illegible]) պահէ։

Դարդաքաշի դարդը ([illegible]) պակաս չի ըլլի։

Դիփ գնացին շան հարսնիք, ես մնացի տան բալնիք։ ([illegible])։

Դուն գիդիս մէկն ու էրկուսը, ես գիդիմ տասէրկուսը։

Դէդին ([illegible])՝ բախտ, աղջկան՝ տախտ ([illegible])։ ([illegible])։

Դարմանը վուր քունը չէ, դարմնանուցը խօմ քունն է։ ([illegible])։

Դուռտ ժախմ ([illegible]) կողպէ, հարեվնիտ գող մի բռնի։

Դալաքութինը ([illegible]) իմ գլխի վրայ իս սովրում։

Դէդի ծծիր, բարեխօսի։ ([illegible])։

Դավլին ([illegible]) փուղով է առնում։ ([illegible])։

Դուշմնի ([illegible]) տանը խօմ չիս։ ([illegible])։

Դիփունանց վրայ շունը հաչեցաւ. ինձ վրայ կատուն էլ չը կլավեցաւ։ ([illegible])։

Դուն բան ասա, բան ըլլի։

Դո՛ւն էիր պակաս։

Դարմնի տակի ջուրն իս։ ([illegible])։

Դուն իս, վուր ինձ չլումը ([illegible]) կոլլած իս տեսնում։

Դանակը խփիս, արտեմէս արուն չի կաթի։ ([illegible])։

Գարդ ունիմ, դարման չունիմ։
Գարդիս մէկն է։
Գրուստն սամ, մէ հոգու տէր իս։
Գուն էլ փչացար, ինձ էլ փչացրիր։
Գուս թողնելու արուն էր, թողի, պրծայ ([illegible])։
Գունչ ([illegible]), քի վուղչութին (կամ առուղջութին). դէդա, քիզ արքայութին։ ([illegible])։
Գէմուղէմն է խաղացի։ ([illegible])։
Գուն արի, տիս։ ([illegible])։
Գուն սամ։ ([illegible])։
Գուսը դուշմնի ([illegible]) աճկն է հանում, տանը՝ տիրուչը՝ ([illegible])։
Գէդի մանածը ծախող իս էլի։ ([illegible])։
Գրա արունն ինձ բախշէ։ ([illegible])։
Գրա սուֆն իմ փուրումն ըլլի։ ([illegible])։
Գրա փուրն ուրիշ տիղ է ցաւում։ ([illegible])։
Գունչը ([illegible]) գնչին տված՝ աղունակի պէս գունտում ին ([illegible])։ ([illegible])։
Գանակն էկաւ, օսկուին հասաւ, իժում ([illegible]) իս փիքը անում։ ([illegible])։
Գուռտ մինձ մի բաց անի։ ([illegible])։
Գուն վուր ջուրը գնաս, ջուրը կու ցամքի։ ([illegible])։
Գրուստ ասելով ինչ դառանք, վուր սուտ ասելով ինչ դառնանք։ ([illegible])։
Գիդգիուրինց ([illegible]) աղչկան տվին Գ'օրգանինց (կամ Օքօինց) իշին։ ([illegible])։
Գուշմնակլը իս տալի։ ([illegible])։

Էշ մի մեռնի, եօնջա ([illegible]) գու'քայ։
Էրուսաղէմ շուն չէ հաչում։
Էշը մատաղ ([illegible]) չի ըլի, իշագինը խօմ կու'լի։

Էշուն ճիլօր ([illegible]) տուր, էնդի խալիչա ([illegible]) տամ։ ([illegible])։

Էրէց արա, գլիղը գցէ. թէ վուր չապրի, գլիղը (կամ՝ ջուրը) գցէ։

Էծը մէ խծի գլուխը լաւաշ ([illegible]) է, քանց մէ սուրու ([illegible]) օխչարը։

Էշն էլի էն էշն է, ամմա փալանը ([illegible]) փոխել է։ ([illegible])։

Էրեխին՝ ըլիթ, խէչին՝ մում։ ([illegible])։

Էշը վուր ասիլ էր, անգաճը կու կտրէին։ ([illegible])։

Էսօր Ծնունդ, էքուց Կնունք։ ([illegible])։

Էն հանաքին ([illegible]) ինչ ասիմ, վուր կէսը ղուրթ ([illegible]) չըլի։

Էրեսկ մի տա, աստառ էլ դու՛զէ։

Էրկաթը էրկթով կու բանին, մարթը՝ մարթով։

Էշը վուր քու պարունն ըլի, չուշ մի ասի։

Էսօր կանք, էքուց չը կանք։

Էս աշխրքեմէն օվ ինչ է տարի։

Էն կինքեմէն օչով խաբար ([illegible]) չէ բերի։

Էրած սրտին՝ ք.. մխիթար։

Էգեղեցու դուռը բաց, շանն էլ ոիրաթ ([illegible])։

Էշը դադիլ է, ձին ուտում է։

Էն վաղ էր, վուր էշը կաղ էր։

Էրեխէն վուր կու՚լի ([illegible])՝ «Ննգայ» կ'օսէ։

Էս կինքվայ դրախտը տունն է, սեփական տունն է։

Էշը վուր մէ ջէր ([illegible]) ցխը ննգնի, էլ դէնը չի անց կենա։

Էս անդամը բանելու մադխար ([illegible])՝ մէկէլ անդամն իս բանում։

Էշը ննգաւ դարու հուրը. ասաւ՝ էս լաւ է քանց իմ ախուռը։

Էրեխէն մահանա ([illegible]), դէդէն կշտանայ։

Էսօրվայ բանը էքուց մի գցի։

Էնէնց արա, վո՛ւնց շամփուրն էրվի, վո՛ւնց խորովածը։

Էշն ինչ գիտէ, խուրմէն (խուրմա) ինչ է։

Էծն իր շնքեմէն [illegible] կախ կ՚օնին, օխչարն՝ իր վուտեմէն։

Ինէնց բան չըկայ, վուր մարթ ուզէնայ ու չանէ։

Իրագումը քաղցածը հաց կու տեսնէ, ծարաւը՝ ջուր։

Էշը (կամ՝ ջօրին) պալօն [illegible] գջլեց, առչի գամը իրան (կամ՝ մինձկին) գիրաւ։

Ինէնց թուրքացել է, վուր «Սուրփ Աստուծոն» էլ մոէն է ցցի։

Էն ծէրեմէն բանէ, վուր էս ծէրը քու ձեռքին մնայ։

Ինթի ափեմէն բանէ, վուր էսթի ափը քիզ մնայ։

Էշը կորցրել ին, փալանի [illegible] էգնէն ին ման գալի։

Էշն ինչ գիտէ, զափռանն (զաֆրան) ինչ է։

Ինէնց թուրքացել է, վուր հօր խէչն էլ մոէն է գցի։

Էս աշխըրքի ապրանքը էս աշխըրքումը կու մնայ։

Էս օրվայ ձուն էքուցվայ հաւեմէն լաւաշ [illegible] իմ։

Շանվրին [illegible] էշն ախուռին կու իմանայ, վուր օրն էրգարացել է։

Շազը [illegible] գնալով-գալով բարեկմացաւ, բարեկամը չըր գնալով-չըր գալով եազացաւ։

Շաղլուջի [illegible] տիրուչն ասել ին թէ՝ խալխը քօչ էլաւ [illegible], գարգկվեցաւ Շաղլուջէն. ջուղաբ է տվի թէ՝ դուն մէ ինձ ասա, Շաղլուջէն խօմ իր տեղն է, էլի դու՚քան, մի վախենա։

Էծ ասա, թէ չէ օխչար շատ կայ։ [illegible]։

Էրէգվայ մեռլին էրէգ թաղեցին։

Էս մինը, ո՞ւր է ինը։

Էրգէն մարթը ախմախ [illegible] կու՚լի, կարճ մարթը՝ չախմախ [illegible]։

Էս ձեռն էն ձեռի աքօվ [illegible] չըր մնայ։

Էսօր է ու էսօր է, էքուց էլ ինչկլի կէսօր է։ [illegible]։

Էրեխին ասէն՝ ինչի՞ ես լալի· ասաւ՝ խօսկս անց է կենում, էնդու համար։
Էն թահար (տեսակ) ծառ չը կայ, վոր վրէն թռչունք չը նստի։ ([illegible])։
Էս աշխրքումը դիփունքս ղօնաղ (հյուր) ինք։
Էժան բանը թանգ կու՚լի, թանգն՝ էժան։
Էն ջրեմէն վախեցի, վոր վունց թշշում է, վունց խշշում։
Էշն իշի մօտ կապիս, եա (կամ) խուն. ([illegible]) կու սորվի, եա խասիաթը ([illegible])։
Էծը կտաւումը դուս։
Էնէկ էն բանին, վոր ըլելու է։
Էրեսն էրեսեմէն կու ամանչի (կամ կու քաշվի)։
Էրկու գժին՝ մէ խելօք։
Էշ կերել է, էշ մինձացի։ ([illegible])։
Էծը սատանայ կու՚լի։
Էրեխին բան դի՛, հիդը դնա՛։
Էրեսիս մի՛ մտիկ տա, ճակտիս մտիկ արա՛։ ([illegible])։
Էնդանցի մեռելն էնդի լին թաղում, էսդանցի մեռելն՝ էստի։ ([illegible])։
Էրեխէն լաց ըլելով կու մինձանայ։
Էյաւ, պըծաւ։ ([illegible])։
Էրկու լսէ՛, մէկ խօսի՛։
Էրկու ձեռն արա՛, մէ գլուխ։ ([illegible])։
Էն հարեվնին մեռնիմ, վոր ձվիս աղ կ՚օնէ։
Էրեխի ղունդն ու մազը մէ տարի չին կտրի։
Էնէնց բան բռնէ՛, վոր վունց միսն էրվի, վունց մորթին։
Էնէնց կշտացայ, վունցոր էրէց։
Էտուրը դուն գիդիս, քաղկինը՝ մէլիքը։
Էքուցվայ բանը էսօր չին խօսի։
Էրկուսը՝ մէկ, վա՛յ ջանիրէդ։ ([illegible])։
Էլի էն ջուրն է, էլի էն ջաղացը։

Էսօրվայ մէ ձուն էգուցվայ ձիու վրայ լաւ է։

Էն կուշտին ([illegible]) ինչ ասիմ, վուր քառսուն թիքա ([illegible]) էլի չը դնէ։

Էժան միսը խաշու չ'ունէ։

Էրկաթը տաք-տաք կու կռացնին։ ([illegible], [illegible])։

Էշը ([illegible]) գնրան կու կտրէ։

Էրես-էրես հալիլի ([illegible]), տակէ-տակ ածիլլի ([illegible])։

Էս հաւը միր տանը կռկռում է ու ուրիշ տեղ ձու է դնում։ ([illegible])։

Ինքան չ'էլար ինձի պէս, ինձ էլ արիր քիզի պէս։

Էժան վախտը առնողի մէչը, թանգ վախտը ծախողի մէչը խճպտանք չը կայ։

Էսօր ժարլու փլաւ էլ ուտիս, էգուց փուրտ էլլի իր ուզածը գ'ուզէ։

Էրնխէն ծնծղլով կու մինձանայ։

Էրկաթ ըլէր, կու հալվէր։ ([illegible])։

Էտ քի խրատ, գնչիտ ([illegible]) մկրատ։

Էլն ([illegible]) էլ իմացաւ, բէլն էլ իմացաւ։

Է՞տ էր պակաս։

Էտ է, վուր գթիլ իս։

Էրէգ մէկ, էսօր էրկու։ ([illegible])։

Էլի աճար ([illegible]) կ'ունենայ աղալու։

Էրկու ձեռն է անում, մէ գլուխ։ ([illegible])։

Էտ խօսկը մինձ կռաւումն էլ չէին ասի։

Ինչ'նց արա, վուր իմանայ, թէ թանը մածնեմէն է։ ([illegible])։

Ինչ'նց քաղցած իմ, վուր շան հաչալը չիմ իմանում։

Էն էլ մէ բան էր, Ծատուրը տաննն էր։ ([illegible])։

Է յարդ է, պատն ագուռ ([illegible]) է։ ([illegible])։

Ինչ'նց լաւ կայ իր համա, վուր ամբրու հիդ գոռում է։ ([illegible])։

Ինչ'նց մտէս ննդաւ, վունցոր Բզօրվան ([illegible]) ակռաւը։ ([illegible])։

Էտ խօսկը վուր ցանիս, բուղկ կու դուս գայ։ ([illegible])։

Էսօր ինձ, էքուց քիզ։

Էտէնց չէ, վունցոր դուն կիդիս։

Էնէկ էլաւ իմ դէդի ծօշերուն ([illegible])։

Էրկու կրակի (կամ ջրի) մէջն իմ մնացի։

Էս էն թաուր ([illegible]) ուղտ է, վուր գլխունի դռանն էլ (կամ առջիւն էլ) կու չոքի։ ([illegible])։

Էլի էն սուփրէն ([illegible]) է, էլի էն հացը։ ([illegible])։

Էնէնց մարթ է, վուր իր միսն ուտում է, էլ ղասաբին ([illegible]) մունաթ ([illegible]) չէ անում։ ([illegible])։

Էնէնց սիրուն է, վուր մութը պատերուն լուս է տալի։ ([illegible])։

Էտով իմ ճարէն ([illegible]) չի սաղանա ([illegible])։ ([illegible])։

Էն գնալն էր, ինչոր գնաց։ ([illegible])։

Էփած կու ճանչնամ նրան։ ([illegible])։

Էն աշխարքն ի՞նչ խաբար ([illegible]) պխտիս տանի։ ([illegible])։

Էնէնց մոտէս ննգաւ, վունցոր հերվայ ձունը։ ([illegible])։

Էրեստ խէչ հանէ, վունչինչ չը հանդիրի։

Էրնէ՜կ Գարանին ([illegible]), վուր էրէք ձիով փսակ գնայ։ ([illegible])։

Էրկու էշ չիմ պահ տա նրան։ ([illegible])։

Էլ՜ կորէկ կ'ունէննայ ծեծելու։

Էլի կալ կ'ունէննայ կալսելու։

Էրնէ՜կ էլաւ շէն աշխրքին։

Էրի հա՜։ ([illegible])։

Էն էլ թող նրա աճկումն ըլլի։

Էծը կտաւի հէդ փոխեց։

Էրեստ խաչակնքէ։ ([illegible])։

Էրազումս էլ չիս տեսնի էտ բանը՝ ([illegible])։
Էտէնց լիդ ու առաչ խօսիլ մէ գլդենա։ ([illegible])։
Էրեգվայ կերածս էլ միտս չէ՛։ ([illegible])։
Էնէնց արմ, վուր կարմնջի տակի ջուրը չը փախցնիս։ ([illegible])։
Էնէնց խօսկ իս ասում, վուր էշն ախուռին կու զռայ։ ([illegible])։
Էս ([illegible]) աղն է պակաս, եա մաղը։ ([illegible])։
Էլիլ է ու չէ էլի, մէ թաքառը է էլի։ ([illegible])։
Էս ի՞նչ բան էկաւ իմ գլխին։ ([illegible])։
Է՛տ է, սէփին ([illegible]) գործում է։ ([illegible])։
Էտի կանց (կամ՝ կանգնի)։ ([illegible])։
Էրեգ նրանց տուն գուղ է գնացի։ ([illegible])։
Էրեգ նրանց տուն հազար թուման (10 [illegible]) է էկի։ ([illegible])։
Էրեսս նրամէն չէ էրվում։ ([illegible])։
Էնդղա ([illegible]) տալին, ինչկէլ իս ու դուն կ'էհէլինք ստկելու։ ([illegible])։
Էնդղա ([illegible]) խալխ ([illegible]) էր մօդ էլի, վուր մէ ասեղ գցելու տեղ չըկէր։ ([illegible])։
Էնէնց կու սարքիս ու կու կարքիս, վունցոր քեզմէն գլդենամ։ ([illegible])։
Էտումը մէ եւ կայ։ ([illegible])։
Էտ էլ քու աճկումն ըլի։ ([illegible])։
Էշ կերիլ ին, մուտրուկ ([illegible]) մինձացիլ ին, նախրումը մինձացած (կամ՝ պահած) Ար...ցիք։
Էրնէկ մէճկս չորցիլ էր, քեզ չէի բերի ([illegible])։ ([illegible])։

Զէլէն ([illegible]) կլիկօ ([illegible]), զէլէն կլիկօ։ ([illegible])։
Զարալի ([illegible]) կիսեմէն փախչիլն էլ լաւ է։

Ջիզի ([illegible]) շուրլը կու հաքնին, սեւ-սեւ օրեր կու տեսնին։ ([illegible])։
Ջօդ ([illegible]) օսկին ժանգ չի բռնի։
Ջուռնէն չօլումը ([illegible]) վուր փչում ըս, շաբաշն ([illegible]) ծվ է տալի։
Ջօնքաճը փեսի սիրեկան է։
Ջանգկի ձէնը հեռվանց լաւ գու՚քայ։
Ջուռնաչու կնգան հարցրին՝ պար ղիդչիս. ասաւ՝ փէշակս ([illegible]) ի՞նչ է, վուր չիմ գլդի։
Ջուքվէ՛, զուքվէ՛, նախարարածը գու՚քայ, շափաթ գիշեր է։ ([illegible])։
Ջուր ([illegible]) ինչ գրեցի, գրեցի։
Ջո՛ւրն ([illegible]) ասիմ, կամ զո՛ւրն խոստովանիմ։
Ջուրս ([illegible]) դուն պատվիրեցիր։ ([illegible])։
Ջուռնէն ասաւ՝ մէ արասի (20 է.), դօհօլն ([illegible]) ասաւ՝ թէ տան, թէ տան։ ([illegible])։
Ջատկվան կարմիր ձվի պէս ակռաքիս խփիլ իմ։ ([illegible])։
Ջադիկ օրն էլ վուր ասէ թէ՝ Քրիստոսս յարեաւ ի մեռելոց, էլի չիմ առտա։ ([illegible])։
Ջար-վարաղդ ([illegible]) խօմ չի՛ վէր գա։ ([illegible])։
Ջադիկը գալիս է, բանքը ([illegible]) բերնումս մոլրվիլ է։ ([illegible])։

Ըսկսած գուրծկտ կիսատ մի՛ թողնի։
Ըլում է, չէ ըլում, մէ թաքաւոր է ըլում։ ([illegible])։

Թուրքը թուրքի մասաբն ([illegible]) է. հայն հառւ ղասաբն ([illegible]) է։
Թուրքն՝ անիծած, խօսկն՝ օրինաց։

Թէժ ([illegible]) քացախը իր ամանը կու տրաքացնէ։
Թաքաւուրն էլ թաղի լակոտ ([illegible]) պիտի։
Թէ ունիս՝ իմը դուն իս. թէ չունիս՝ իմ դիւը դուն իս։
Թէ զար ([illegible]) իս հաքի՝ պլպլուցտ ([illegible]) ուր է. թէ ճղ իս կերլի՝ ծլծլուցտ ([illegible]) ուր է։
Թուխ ըլլի, բօլ ([illegible]) ըլլի։
Թաքաւորի էղնէն էլ կու խօսին։
Թաց լիզու է, ամէն բան կ՚օսէ։
Թազէն ([illegible]) հնի տեղ չի բռնի։
Թրի կտրածը կու սաղանայ ([illegible]), լիզվինը՝ չի սաղանա։
Թոնդիրը տաք-տաք հացը կուլը կու տանի։
Թէ մարթ չը դառնայ, տէրտէր խօմ կու դառնա՜յ։
Թաքաւորութինը իր միչիմէն կու քանդվի։
Թքածս մի լպստի ([illegible]): ([illegible])։
Թուրքին ինչկլի չը ծնծիս, բարեկամ չի ըլլի։
Թաքաւուրը հիւռու է. Աստուած բաց է։
Թէ ասիմ ճուճ (?) է, հոքիս մնուճ (?) է. թէ ասիմ տանձ է, հոքիս վտանգ է։ ([illegible])։
Թէ ր... չիս՝ ր...խանումն ինչ բան ունիս. թէ լօթի ([illegible]) չիս՝ շիրաչխանումը ([illegible])։
Թէ դու՚քայ՝ մէ աճկիս լուսը կու՚լի. թէ չի գայ՝ էրկու աճկիս լուսը։ ([illegible])։
Թէ ոխտուր չիս կերլի, վ... ինչի՞ է էրվում։
Թէ աղչկայ ու տղի բան իս քանդլի, թէ մէ էղեղեցի իս քանդլի։
Թէ ունիս, իմը դուն իս. թէ չ՚ունիս, իմ դռան շունն իս։
Թամբալ ([illegible]) մարթը հաց ուտելիս ղօչաղ ([illegible]) կու՚լի, բան շինելիս՝ հիւանդ։
Թէ խէչն իմն է, զօրութինը իս գլխիմ։
Թէ վուր չուզենաս, սաղուժը ([illegible]) կէնճի ([illegible]) չիս գթնի։
Թէ գուզ իրիցի բերանը գցիս, թէ գուզ՝ գիլի բերանը։
Թէ գուզ էրած, թէ գուզ մրկած ([illegible])։

Թթու է, թան չէ. ամեն մարթու բան չէ։

Թիքէն ([illegible]) վէր ննգնի, ամանը ննգնի։ ([illegible])։

Թուրքն ասիլ է՝ հառւ էգլի խիլքն իմն ըլի։

Թագա ([illegible]) շուրը կարում ին, հնի վրայ ձեվում ին։

Թրով չը կտրածը հացով կու կտրվի։

Թոնդիրը տաք պիտի ըլի, վուր հացը կփչի։

Թքիլը մէ այբ ([illegible]) է, լպստիլն ([illegible])՝ էրկուս

Թէ գու՛քայ աջալ ([illegible]), չի տա մաջալ ([illegible])։ ([illegible])։

Թիլը վուր բարկի, կու կտրվի։

Թէ լուս կու ննգնիմ, դուս կու ննգնիմ։

Թուչունք կայ, վուր միսն ին ուտում. թուչունք կայ, վուր միս ին ուտեցնում։

Թէժ ([illegible]) քացխամանը իր գլուխը կու տրաքացնէ։

Թքէ մէ անկումս, թքիմ էրկու անկումտ ([illegible])։

Թէ բախտ է գրած, լագլագի ([illegible]) ձիով գու՛քայ։

Թէ լաւ օխչար իս, քու դմակը պահէ։

Թանը կերար, արթարացար։ ([illegible])։

Թողիլ ին շէն տունը, աղկտի դռանն ին զօռ տալի։

Թուրքն ասիլ է՝ կլի, իժում ([illegible]) խօսի. հայն ասիլ է՝ հիգը կլի, հիգը խօսի։

Թէ նա մարթ դառնայ, իս իշին կու նստիմ։ ([illegible])։

Թոկը ([illegible]) կարճ էր, քիզ չը հասաւ։ ([illegible])։

Թէ ասիմ՝ վայ է. թէ չասիմ՝ վագլախ ([illegible])։

Թէ ամանչում իս, էրեսիտ փարդա ([illegible]) շինէ։

Թոկ ([illegible]) կու տամ նրան խիղտվելու ([illegible])։

Թէ չիմ մեռնի, կու տեսնիմ։ ([illegible])։

Թիու թաթին կու դնին, աղբսի ([illegible]) ծէրին կու վէր գցին։ ([illegible])։

Թէ նա միր տուն չը գայ, շունը թարէքը ([illegible]) կու ննգնի։ ([illegible])։

Թէ էտ թաՀար ([illegible]) բան կ՚օնիս, քու Հօր Համա ժամ կ՚օնիս ([illegible])։

Թէ սրտումտ ախղ ըլի, քիլումտ ([illegible]) էլ ինղ ըլի։ ([illegible])։

Թուղտը շուռ տուր, արասին (20 ֆ.) կուլ տուր ([illegible])։

Թալարրագա ([illegible]) ու սուփրի մազա ([illegible])։

Թօրօզի ([illegible]) գուղումն ([illegible]) է։ ([illegible])։

Թիթու Հ։ ([illegible])։

Թալաթ ([illegible]) Ամիրան էիր, Հիմի ձամիրան դառար։ ([illegible])։

Թէ խնլօքը խիլքը չի տանուլ տա, դիժն ինչ ունէ, ինչ տանուլ տայ։

Թօփի ([illegible]) գուլլի ([illegible]) պէս գուս ննգաւ ([illegible])։

Ժամնժէն իս իմ դալի․ օղորմի Աստուծը դուն իս ասում։

Ժամը՝ դուս գալու վախտը․ սուփրէն՝ գցած վախտը։

Ժամը Զադկին պիտի արնգազով դուս գայ․ Ծննդին՝ մթնով։

Ժամի դուռը բաց, շանն էլ սիրաթ ([illegible])։

Ժամին մուժ, էրեխին ըլիթ մի խոստանա։

Ժամանակը թէ էսէնց կ՚էՀայ, ջուրը ննգնելու կու դառնանք։

Ժամանակն էն ժամանակն էր, վուր աքլարը փալէվան ([illegible]) էր։

Ժամանակն էրծաթ է։

Ժամանակին մտիկ արա։

Ինչկէլ չը պղտորվի, չի պարզի։

Իշտահն ([illegible]) ակռքի տակն է։

Ինչ միտն է, էն խտիտն է։

Ինչօր կ՚օնիս, քիզ կ՚օնիս։

Ինչկլի ձուշանը գարթարվնցաւ, ժամիրն արցակվնցաւ։

Ինչկլի սէլը չը շուռ գայ, ճանփէքը չի դըստվի։
Ի՞ղը թանգ է, ծմրուռն ([illegible]) էժա՞ն։
Իշին նստիլը մէ այբ ([illegible]) է, վէր գալն՝ էրկու։
Ինչոր ձէն կու տաս կարսին, էն ձէնը կուտայ կարասը։
Ինչկլի չը գայ լիգինը, չի իշնի առջինը։
Ինչըի խնլօքը փիքը արաւ, գինն իր տղին հարսնիք արաւ։
Իրն իրին, նալաթն ([illegible]) օտարին։
Իր դաղած ([illegible]) ու իր կերած։
Ի՞րգնքի պարտկը գեդնին չի մնա, գեդնի պարտկը՝ ի՞րգնքին։
Ինչոր հիմի ասիս՝ քիզ. ինչոր իժում ասիս՝ ինձ։ ([illegible])։
Ինչկէլ քամին փուտնիրը չը տարաւ, գուլըքնիր չառաւ։
Ինչ էշը տանջից, էն տէրը։ ([illegible]
[illegible])։
Ինչկլի սուրն էկաւ, լիզուն մարթ սըպանից։
Ի՞ս աղա, դուն աղա, միր ջաղացն ՞վ աղայ։
Ինչ օլքա ([illegible]) գնաս, էնդ՚անցի գդակ ծածկէ։
Ինչ մարթ իր գլխին կ'օնէ, դուշմանը ([illegible]) չի անի։
Ինչկլի մէկը չը մեռնի, մէկէլի բանը չի դըստվի։
Ինչկլի մէկը չը մեռնի, մէկէլին տիղ չի ըլի։
Ինչկլի հասոը բարկեցաւ, բարակի հոքին դուս էկաւ։
Իմացիլ ին՝ Ալին մեռիլ է. ամա չին գիդի՝ վ՞ուր Ալին է։
Ինքը տալիս է, ինքն առնում։ ([illegible])։
Ինչոր մարթու ճակտին գրած է, էնէնց կու անց կ'էնայ (կամ՝
կու կատարվի)։
Ինչոր վուր է, փուղն է։
Ինչկլի էրեխէն չը լաց ըլի, դէդէն ծիծ չի տա։
Ի՞րիք գազ կտաւնանց ([illegible]) վունչինչ չիս տանի էս աշ-
խըրքեմէն։
Ինչոր գրած է, գրած է։
Ի՞ս փաշա, դուն բօշա ([illegible]), բարեկմացանք՝ բարեբրա-
ցանք։
Ինչոր չիս գիդի, մի խօսի։

Ինչ կու պակսի, բաղեմէն (այգէն) կու պակսի. բաղմնչուն (այ-գեպան) ի՞նչ կու պակսի։

Ի՛փոր իշտահն (ախորժակ) ունէի, փլաւ չունէի. հիմի փլաւ ունիմ, իշտահ չունիմ։

Իշին վուր խիղճ (հաճարեր) կու տեսնին, ջուխտ-ջուխտ (զոյգ-զոյգ) կու նստին վրէն։

Ինչկլի մէկը չը մեռնի, մէկէլը չի շէնանա։

Ինչոր մարթուն գու՛քայ, գլխի (ճակտը) իր խիլքեմէն։

Ինչկլի խնլօքը փիքը սրաւ, գլուխն իր բանը տեսաւ (կամ շի-նից)։

Իմն ու քուն՝ տուն է քանդում։

Իշի դաղածը (ձեռնանքել) ձիու համա է։

Ի՛փոր հաւը կու չաղանայ (գիրանալ), վ... կու հուփ տայ։ (էլ յաւ չէ ածել)։

Իմը վուր քիզ չասիմ, իմ սիրտն ինչո՞վ հովցնիմ։

Ինչպէս էրեխէն, էնպէս ծիրը։ (նը ըմէ)։

Ինչոր ըլլի, կուշտ փորի վրայ ըլլի։

Ինչոր գալու է, թող, կուշտ փորի վրայ գայ։

Ինչկլի շան առչիւը ոսկոր չը գցիս, չի մունջ կենա (լռել)։ (խօսած նայէ)։

Ինչ տեղ վուր փուրտ չի կշտանա, բերանտ մի բաց անիր։

Ինչ տեսիլ իս, էլ չիս տեսնի։

Իմ բանն աչի, ով գ՚ուզէ հաչի։

Ի՛գը դանկլի մօտ չին տանի։

Իշի ածկեմէն (ականջ) բէղամաղ (մեծ դամբուլ) մի ըլլի։

Ինչոր չ՚ուզենաս, էն առաջտ գու՛քայ։

Ինչոր գլիգենան, չին գուս տա։

Իր վուտով էկած ջօնաղը (հիւր) պատիւ չունէ։

Ինչոր ցանիս, էն կու հնձիս։

Ինսանս (մարդու) հում կաթնակեր է։ (մարդը ... կաթ կերած է)։

Ինչ կու ըրթիս, էն կու խրթիս (առնել)։

Իշխմէն շափթվան փուղ իս ուզում։
Ինչկլի մարթս կենթան է, օչով նրա գլուղը (յորէ) չի գլոգլինվոր կու մեռնի, էն չախը (ծածանել) կ'օսին՝ Ալին մեռաւ, մնացին իշանիրը։
Ինչոր գ'ուզէ ուղտը վէր ննգնի (ներհարէլ), կօզակն (աղտոր) (կամ կաշին) էլի մէ իշի բեռը գու՛քայ։
Ինչ գ'ուզէ ուղտը վէր ննգնի, կօզակը (աղտոր) տիղը կու մնայ։
Ինն ամիս քու դէդի (ձր. հօր) փուրումը վռւնց դիմցար։ (ամփոփբերքն)։
Իր միճկէն էլած վուրթին ուրիշ է։
Ի'ղը դմակլին ին քսում։ (թէչը գնում է շատի հօր)։
Իմ տան ծառէն իմ, ուրիշի աղէն (գոբին) իմ։
Ինքը ձեվում է, ինքը կարում է։
Իշին՝ իր փալանը (հաճոյ), մարթուն՝ իր շուրը։ (չորքորում է)։
Իշի համա մէ բուռը խոտը լաւ է ամեն բաներմէն։
Ինչոր էլաւ, էլաւ։
Ինչոր իմանաս, անգճի էդնէն արա։
Ինչկլի դարդ (յառ) չը տեսնիս, ուրախութին չիս տեսնի։
Իշեմէն տամազլուխ (հօր ջուրեր աչքով) իս ուզում։
Ինչկլի դժուխկը չը շանց տաս, դըրախտին չի տիրանա։
Ինձ տիս, քիզ օղորմա։ (օրհնեալ ա'ռ քսյաներ)։
Ինձմէն էլածը ինձ լիղ է սորվեցնում։
Ինչոր կ'օսիս, էն կու լսիս։
Իրն իրի միսը կերաւ, ոսկոռը չը դէն գցից։
Իրա հացն ուտում է, ուրիշի վրայ խօսում է։
Ինչոր էծն արաւ թրիմին (աշօր), թրիմն արաւ իծին։
Իշի գերեզմանը գիլլի փուրումն է։
Ինքն իրան վէր ննգնողը չի լաց ըլի։
Ինչկլի մարթու սիրտը չ'էրվի, աճկեմէն արտասունք չի գա։
Իմ տանու ցամաք հացը լաւաշիմ (ըսս հանթել), քանց թէ ձէր ճաբլու փլաւը։

Ի՞նչ կու տանինք էս փուչ աշխրքեմէն. վունցոր դարդակ էկել ինք, էնէնց էլ դարդակ կ'էհանք։

Ինչոր սրտումն է, էն էլ բերնումն է։

Իր գլխի պատիւը չը գիդացողը ուրիշի պատիւն ի՞նչ կու իմանայ։

Իր գլուխը չէ կանացի կապի, գնում է նորահարսի գլուխը կապում։

Ի՛փոր կու մեռնինք, լժում ([illegible]) կու դնջանանք ([illegible])։

Ինչոր վարել իք, էն վարեցէք։

Ինչկի գարունք չը գայ, ծառը չի ծաղկի։

Իշի կուդին ([illegible]) մէյդնումը ([illegible]) չին կտրի. վուրը կարճ ասաւ, վուրն՝ էրգար։ ([illegible])։

Ինչկի գարունքը չը գայ, էշն էլ չի գռայ։

Ինչկի ամպը չը գոռայ, Աստուծ-Աստուծ չին անի։

Իշին խավաշ ([illegible]) տեսան, ջուխտ-ջուխտ ([illegible]) վէր էլան։

Ինչ մարթ վուր Աստու փիշը ([illegible]) կու բռնէ, քաղցած չի մնայ։

Ինձ տու, քիզ տամ։

Իմացողին՝ մէկ, չիմացողին՝ հազար։

Ի՛ս էլ քու Աստով իմ ապրում։

Իր աճկի գերանը թողել է, ուրիշի աճկի ծիղն է պտռում։

Ի՞նչ կու տանիս էս փուչ աշխրքեմէն՝ չորս տախտակ, հինգ գազ կտաւ։

Ինչկէլ կէս գիշերը մարթն էր աղանչաք անում, կէս գիշերվայ դէնը՝ կնիկը։ ([illegible])։

Իմ պարդէդէն ([illegible]) վուր միրուք էր ունեցի, իմ պապը կու'լէր։

Իշի վրայ նստած է, իշին պտռում է։

Իմ խօսկին չէ աւտում, շան խօսկին է աւտում։

Իշին պուզիր (եղջիւր) չը դուս էկաւ, ասին քուռակ է։

Ինչկլի մէ մարթու հէդ մէ փութ աղ չուտիս, չիս ճանչնա։
Ի՞նչ կ'օնիմ օսկէ լագանը ([illegible]) (կամ տաշտը), վուր մէջը արուն թքիմ։
Ինչկլի ամբը չը գոռայ, անձրիւ չի գա։
Իշեմէն վէր է ննգի (կամ վէր է էկի), չուշ չուշը ձեռնեմէն չէ թողնում։
Ի՞նչ տանձ ըլլի, վուր կութը չունենայ։
Ինչկլի սուրը սրվեցաւ, լիզուն գլուխը թռցրուց։
Իր տունը մարթուս էս կինքվայ գերեզմանն է։
Իմքինը ջէր ([illegible]) աճկին պլիտի դուր գայ, իժում ([illegible]) սրտին։
Իշի խնամին ջորին կու՛լի։
Ի՛րեք օրվայ վրէն իրեքը գիդէ․ իրեք օրվայ էդնէն՝ աշխարքը գիդէ։ ([illegible])։
Իր ձեռով հուր փորէ, ինքը դէվէր ննգնի։ ([illegible])։
Ինչ իրգիր վուր գնաս, տեսնիս վուր դիփ էլ քօռ ([illegible]) ին, դուն էլ քօռացի։
Ի՛ս կծիլ չէի գիդի, քիզմէն սովրեցայ։
Ինչ գ'ուզէ էլը ([illegible]) տայ, տանտիրուչ աղը շատ կէհայ։ ([illegible])։
Ի՞նչ անինք թէ պօճա ([illegible]) մարթ է․ փուղ շատ ունէ, սրտի վարթ է։
Իշի թանաքամնին իշի ղալամ ([illegible]) պլիտի։
Ի՛ս քիզ ասում իմ՝ խօջա ([illegible]) իմ․ էլի հարցնում իս՝ քանի վուրթի ունիս։ ([illegible])։
Իշին նստիս՝ իշաուր իս․ ձիուն նստիս՝ ձիաուր իս։ ([illegible])։
Իրանց տանը կռկռում ին, ձուն խալխի տանը դնում։ ([illegible])։
Ինչկլի քու չիրը դուչվեցաւ, իմ հոքին թռչվեցաւ։
Իշի համա մէ բուռը խոտը հարսնիք է։
Ինչ կու բրթիս, էն կ'ուտիս։

Իմ սկեսուրին իմաց արէք, քու տղի մուխը աճկիրս էրում է։ (գանգատ ճորտ էր տնային վերայ)։

Իր ճղը իր գլխին քոլից։

Ինչտեղ պանիր, էնդի բանէ։

Իր ծառը ծարաւ թողել է, ուրիշինը ջրել է։

Իշին ռնճան (չորհոդրում) էն տվլի, խոտի տեղ կերել է։

Ի՞նչ տամ, վուր մէ լաւ խօսկ ասիս (վատ հարցում)։

Ի՞նչ կ՚օնիմ աշխրքի դօվլաթը (հարստութիւն), թէ ինձ լուս չի տա։

Իշին հարցրին՝ մարխվաթա (շնորհք) ինչ է. կուդին (վր. ագի) վի քաշից, գնաց։

Ինչկլի հէրթը միզ հասաւ, բալի լուսը բաց էլաւ։

Ի՞ղն ու մեղրը քաղցր է, ամա շան գուդումն (մահուն) է։

Ինչկլի դուն էտ բանը կու հասկանաս, ուղտի կուդին (վր. ագի) գեդնին կու հասնի։

Ինչ չէր տեսի ճակտէն կախ, հիմի տեսաւ պատէն կախ։

Իշին նստիմ՝ ղարդ (ցաւ) չունիմ. դէվէր գամ բարդ (բեռան) չունիմ։

Իմ վարը վարեցի, բահակութը ուրիշին տվի (ծեծն է տվել)։

Ինքն էստի չէ, իրա փայ (բաժին) Աստուծն էստի է։

Ինքը չը կայ թիզ ու կէս, արարմունքը գազ ու կէս։

Ինձ մի դխփչի՝ վնասն իմ, հազար թումնի (10 ռ.) զիւմաշն (կերպաս) իմ, մատի չափ մատադիղն իմ, ղնգան չափ սիրադիղն իմ։

Իշանիրը կու գկուտան քիզ համա (ոչ ոք չի ուզէլ)։

Ի՞նչ իս թողի, ի՞նչ իս պտռում։

Ի՞ս ու դուն վուր գիդինք (երկուսս էլ մի ծածուկ բան)։

Ինչկլի էն չախը (ժամանակ) Աստուծն է կենթանի։

Իշտահս (ախորժակ) արծելու է գնացի (ախորժակ չունեմ)։

Ի՞նչ բուղկիր իս ուտում (անհեթեթ բան ես խօսում)։

Ի՞ս քու կուռն (կողմ) իմ. դուն՝ սատաներունը։

Իմ սրտով Աստուած ինձ տայ։

Ի՞նչ իծանիր, վուրթի Դաւիթ։ ([illegible])։
Ի՞նչ իս շատ փիքր անում ([illegible]). Հարուր թումնի (10 ռ.) կէսը իսուն թուման է։ ([illegible])։
Ի՞նչ ըիգու պլիտի ըիդ ասէ իմ դարդիրը ([illegible]), ամուկալ օր պլիտի ու ձմուկալ գիշիր։
Ի՞նչ դառաւ, կթի էշ դառաւ էլ՞։ ([illegible])։
Իմ խօսկը նրա մօդ ու Մածախու ([illegible]) արասին (20 կ.) դիփի մէկ է։ ([illegible])։
Ինչկըի գդակտ շուռ տաս, տարին անց է կենում։
Իրա ըիգվով գնաց կրակը ննգաւ։
Ինչոր էսօրգա ժուդ ([illegible]) ծածկած էին ղրգում, հիմի բաց-բաց ղրգին, վուր ակուննիրը մէչը ծռտին։
Իրան տու տասչուրս շախին։ ([illegible])։
Ինչ քարվան ([illegible]) կտրելու գիշիր է՞։
Իմ դարդը ([illegible]) ննգնի քու փուրը, իմանաս թէ դարդը վո՞ւնց է։
Ի՞նչ պտուղ է։
Ի՞նչ տղայ է։
Ի՞նչ վուրթի է։
Ինչ կու՚ըի, կ՚ուըի։
Ի՞նչ քու խօսկի ջուղարն ([illegible]) է։ ([illegible])։
Ինչկըի հին Աստուձը հիդը գնաց։ ([illegible])։
Իմ էծն ու քու էծը չին բարիշում ([illegible])։ ([illegible])։
Իս ձիաուր դառայ, նա հեդեվակ, էլի էդնէն չը հասայ։
Իրան էլ մտիկ արա, իր արարմունքին էլ։
Իշի Զաղկին, գիլի բարգեդանքին։ ([illegible])։
Ի՞նչ սորվեցրիր, վուր խփեցիր։ ([illegible])։
Իժում ([illegible]) արէ ու էշը ցխեմէն հանէ՞։ ([illegible])։

Իսկի ասում են, թէ Ջուլաք կայ: ([illegible]):

Ինչ ելլիկն է, էն բիլլիկն է, ձամշագլին ու իր կնիկն է: ([illegible]):

Ինչ ալխանէն է, էն չալխանէն: ([illegible]):

Իմ խօսկը Մածախու ([illegible]) աքասի է դառի նրա մօդ: ([illegible]):

Ինձ փլաւ, քեզ չլաւ ([illegible]): ([illegible]):

Ի՛ս ճիլ, դուն ճիլ: ([illegible]):

Ինձ չէ ասում, իշին է ասում: ([illegible]):

Իշի քամին բռնիլ է: ([illegible]):

Իմ խէչի զօրութինը էս գիդիմ:

Ինչկլի էն օրը՝ խա ([illegible]) էշը, խա իշի տէրը:

Ինքը պստիկ է ու մինձ էրազնիր է տեսնում:

Ինչ անում է բանդ. արէ՜: ([illegible]):

Իմ բանը գլուստ ([illegible]) հեքիաթ է:

Իրա համա քնիլ է, ուրիշի համա էրազնիր տեսի:

Ի՛փոր գ'ուզիս՝ Արէլ Առաքելիչ էս, ե՛փոր գ'ուզիս՝ Իվան Առաքելիչ: ([illegible]):

Ի՛ս քեզ ծաղկեցրի ու դուն ինձ մոռանում ե՞ս:

Ի՛ս մաշեցի, նրան բախշեցի: ([illegible]):

Ի՞նչ է, կարճ գարի էս հնձէ՞: ([illegible]):

Ի՞նչ էս խուռը փիքը անում. ուզում էս իմանա, թէ փշի ծէրն օվ է սրէ՞:

Ի՛ս վուր տեսնում իմ, էտ բանը ձու չի դնի: ([illegible]):

Ինչոր խուզ էլի դառի, էտ թահար ([illegible]) ք.. չէլի կերի:

Իշի քնթումը մախաթ ([illegible]) չի կանայ անց կացնի: ([illegible]):

Ի՛փոր վուտնիրս կու ձքիմ, իմ ղադրը ([illegible]) էն չախը ([illegible]) կու իմանաք: ([illegible]):

Ի՛ս քու կուռը ([illegible]), դուն՝ սատանեքունը:

Ի ծննդենէ սուրփ աւազանի մինչի ցայսօր ինչոր գիդէր, դիփ դուս կու'տէր: ([illegible]):

*Իս քիզ ջահէլուցն ([illegible]) էլ իմ տեսի ([illegible])։*
*Ի՞նչ մտէս ննգաւ, Տէր Աստուած, միտս բէ՛։ ([illegible])։*
*Ինքը պստիկ է, լիզուն մինձ ունէ։*
*Իս նրանց մեռնելեմէն փախիլ իմ, սաղն ([illegible]) էլ բերին, գըլ-*
*խիս փաթթեցին։*
*Իմ օրը կերիլ իմ ես, դուն քու դորդը ([illegible]) քաշէ՛։*
*Ի՞ղը քիզ, ճմրուռն ([illegible]) ինձ։*
*Ի՞նչ անինք, թէ մէ կուժ կաթն իս ուտեցրի. կու առնիմ, կու տամ։ ([illegible])։*
*Ինչոր ես քիզ համա իմ էլի, թո՛ղ էն Աստուած իմանայ։*
*Իմ սրտեմէն ջուր խմեցիր։ ([illegible])։*
*Ինչի՞գա գեդնի էրեսին է, էրկու էնդի՞գամի էլ գեդնի տակն է։*
*([illegible])։*
*Ինչոր ես նրա համա իմ էլի, Աստուած ինձ տայ. ինչոր նա ինձ համա է էլի, Աստուած նրան տայ։*
*Ինչկլի նա գու՛քայ, իմն ինձ կու հասնի։*
*Իրգինքն ու գեդինքը մէկ չի դառնա, Թանձմինդէն ու Մա-*
*խաթը ([illegible]) մէկ չի դառնա։*
*Ի՞նչ փլաւ, ի՞նչ չլաւ։ ([illegible])։*
*Իրա շվաքեմէն ([illegible]) վախենում է։*

*Լաւ անողին՝ լաւ չը կայ։*
*Լէն-լէն մէ՛ բռնի բանը։*
*Լաւ տունը էս կինքիլայ դրախտն է։*
*Լէհէրիտ ([illegible]) գօրա ([illegible]) վուտտ ձքէ՛։*
*Լաւ ձին իր էմը ([illegible]) կու աւելցնէ, փիս ([illegible]) ձին՝*
*մաթրախը ([illegible])։*
*Լաւ ձին իր պատիւը կու աւելցնէ, վադ ձին՝ մաթրախը։*
*Լիզվի տակն օսկոռ չըկայ, վուր աւելի խօսկ ասելիս ծակէ։*
*Լաւութէնին լաւութին չըկայ։*
*Լաւ լիղնուրթը վիրչը ջրի փայ ([illegible]) կու՛լի։*

Լացը լաց կու բերէ, ծիծաղը՝ ծիծաղ։

Լաւութիւն պարծեցի, թէ չէ վաղութիւնը խոմ շանեմէն էլ է դուս գալի։

Լիզվի սըպանածը դժար է, քանց թրի սըպանածը։

Լաւ է արթար աճկը, քանց միտկը մըղաուր։

Լաւ աղչիկը օխտը տղին աժ է։

Լաւութիւն անիս՝ լաւութիւն կու տեսնիս. վաղութիւն՝ անիս՝ վաղութիւն։

Լաւ կնիկը տուն ու տեղ է, վադ կնիկը՝ ցաւ։

Լիզուտ քիզ համա պահէ։

Լվին նաշտար (Նշտըր) տվին, էնդու աւել չէր ուզի։

Լաւ գլուխը էրեսէն վուրքանց է, ամա գլխին պաչ իմ անում։

Լաւ կ'օնիս՝ քիզ կ'օնիս, վադ կ'օնիս՝ քիզ կ'օնիս։

Լէնին չարա (ճար) կայ, նիղին չարա չըկայ։

Լացի վիրչը ուրախութիւն է։

Լիզուն ոսկոռ չունէ։

Լաւ ինը լծկանումը կու էրեվայ, լաւ կնիկը՝ օրորոցի տակը։

Լաւ փոքրաւրը իր տիրուչ էրկու աճկի լուսն է։

Լիզվով ամեն բան հիշտ կու շինվի։

Լաւ օրը բարեկամ շատ կու'լի։

Լիզվիտ աղ արա։ ([illegible])։

Լաւութիւնը ջուրը գցիս՝ չի տանի։

Լիզուտ կտրէ, թէ քու գլխի լաւը գ'ուզիս։

Լաւութիւնն անում իս, կարմնջօքն էլ անց կացրու։ (Ջնջէ Վերջը [illegible])։

Լաւ է մեռնիս, քանց ծիրանաս ու աղկտանաս։

Լաւ ձին ու լաւ խարաղը ([illegible]) մուրազ ([illegible]) է։

Լաց ըլելուն գժի տէրն է։

Լիզուն խօսելու համա է, անգաճը լսելու համա։

Լաւ մարթու կնիկն ուզէ. լաւ գինու տականքսն ([illegible]) ա՛ռ։

Լաւ մարթու վուրթին լաւը չի բահամ դա ([illegible])։

Լաւ հունձ անողը հանգումն ([illegible]) էլ կու հնձէ, սարումն էլ։

Լաւ ձին մաթրախ ([illegible]) չի խփիլ տա։
Լաւ է տան շուն ըլլիմ, քանց պստիկ ըլլիմ։
Լղար ([illegible]) միսը խաշու չունէ։
Լաւ պահէ՛, լաւ կու գթնիս։
Լաւին լաւ չը կայ։
Լէն օրին նիղութին կայ։
Լաւ թուխսը իր ճտերուն կու պահէ։
Լաւ շէն տուն հարս է գնացի։ ([illegible])։
Լէն պռասը, լիքը թասը, մուկաշըրէ ([illegible]) տպասը։
Լա՞ւ էրազ է, թէ կու կատարվի։ ([illegible])։
Լա՛ւ տեղ իս դուքանը ([illegible]) բաց արի։ ([illegible])։
Լօրի ([illegible]) չի էփվի, (կամ՝ չի դուչվի) նրա բերնումը։ ([illegible])։
Լիզակխանա խօմ չէ՞, վուր գցիմ ու հանիմ։ ([illegible])։
Լուսնիակին ասում է՝ դուն մէր մտի՝ ([illegible]), իս էստի կանդնած իմ։ ([illegible])։
Լուն ուղտ ին շինում։ ([illegible])։
Լիզու մի խառնի միր մէջը։ ([illegible])։
Լօշի մէջը հալվա չըկայ, դարդակ է։ ([illegible])։
Լաւ Հոքով-Արփով իմացայ բանի զօրութինը, ամա՛ վո՛ւնց կանամ բերնեմէս դուս թողնի։ ([illegible])։
Լաւ բդդանը ([illegible]) ննդաւ։ ([illegible])։
Լիզկի հակը ([illegible]) ջուրն է ննդի հալբաթ ([illegible])։ ([illegible])։
Լիզակը խօմ չէ՞ փչացի, վուր դուն էտունք իս ասում։ ([illegible])։
Լիզակխանէն փչացիլ կու՚լի, էնդու համա էտ մօզօնիլ ին ([illegible])։ ([illegible])։
Լուս ննդնիլն էլ վայ է, չը լուս ննդնիլն էլ։

Խղճութիւն ու գղճութիւն ([illegible])։
Խէտեւնակին՝ խոտոռնակ։ ([illegible])։
Խիղճ մարթուն Աստուած չէ սիղծի։
Խլնքուտին մուխն ([illegible]) էր պակաս։
Խնլօքը բան անէ, գիժը մտիկ անէ։
Խակը՝ խանը ([illegible]). հասածը՝ ջանը ([illegible])։
Խփած աճկին բափա ([illegible]) չը կայ։
Խէչին իր տէրը կու զօրացնէ։
Խիղճ հաւքի ([illegible]) բունը Աստուած կու շինէ։
Խղճին ասին՝ քիզ ծ̃վ էրիտ. շէնին ասին՝ բարով մաշիս։
Խիղճ մարթը օց կերաւ, ասին՝ գիժ է. շէնը կերաւ, ասին՝ գիղ է։
Խօսկն էկաւ բերնումդ. հուփ տու, կուլ տու։
Խիղճ վուր չիս էլի, խիղճ հարեվան խօմ ունեցի՞լ իս։
Խնլաղա քիզ լիժ ասում. կուժ, դուն իմացի։
Խաչը վուր ջուրը կու ննդնի, օրիրը կու տաքնայ։
Խղճի վուրթին վուր լաւը բաժան դայ ([illegible]), էլ ի՞նչ խղճալու է։
Խօսկը դօվլաթը ([illegible]) չէ՞, խօսկը կառավարիլն է։
Խիղճ գիլի անունն է կոտրած, աղվէսն աշխարքը վեր գցից։
Խուղը խուղին խփիս՝ ձէն չի հանի. օսկոռն օսկրին խփիս՝ ձէն կու հանէ։ ([illegible])։
Խիլքը տարիվայ վրայ չէ։
Խղճինն էլ Աստուած է։
Խղճի մահը բամբակ է, շէնի մահը զանգակ է։
Խիզիլալէն ([illegible]) էլ սիւ է, ամա լաւն է։
Խօսն էն է՝ անջուր ջաղաց պտուտ տան. թէ՝ չէ ջրով ջաղացը գլխունքը պտուտ կու տան։
Խիղճը՝ խղճութէնով, շէնը՝ շէնութէնով։
Խղճի ու վուրփի Աստուած։
Խնլօք մարթու հիդ քար կրիլը լաւ է, քանց գժի հիդ փլաւ ուտիլը։

Խօսկ կայ՝ բան կու շինէ. խօսկ կայ՝ բան կու քանդէ։
Խուովութէնի էղնէն բարիշութին (հաշթալըգը) կայ։
Խալխի (ժողովուրդ) սաս-կօսէն ծով կու մունչ կացնէ (չոգեցնել)։
Խուովկանի փայն (բաժին) քաղցր կու՚լլի։
Խիլքիտ տիրութին արա։
Խօսկը խօսկ կու բերէ։
Խիլքիտ պտուտ արէ։
Խօսկը մինձինն է, ջուրը՝ պստիկինը։
Խելօք դուշմանը (թշնամի) լաւ է քանց խիւ բարեկամը։
Խիլքը լաւ է քանց դօվլաթը (հարստութիւն)։
Խօսկը վաղ վի կենալը չէ, Աստու աչօղալն է։
Խուղի գլուխը խալիչի (գորգ) վրայ չի մնա։ (գառնէ-ը չըհանէ-յոշէ հանին)։
Խուղի գլուխ է, խալիչի (գորգ) վրայ սովոր չէ։ (նոյն)։
Խըրատ գիդիս, քու գլխի համա պահէ։
Խաղ շատ գիդիմ, ամմ (բայց) ձէն չունիմ։
Խիղճը չէնացաւ՝ տաս տարի խիղճ էր. չէնը խղճացաւ՝ տաս տարի չէն էր։
Խօսկը բերնուտ էփէ ու էնէնց դուս թող։
Խարազն (խօշի-խօր) անչէքմա (անխօշին) կու՚լլի։
Խուղը խարար (համբար) կու տանէ։ (գառն օխտը ով)։
Խփան տակի օմքին չին ուզում։ (...... .. ....... ....... ..... .......)։
Խունդ ու մմով դրախտը չին գնա։
Խղճին ձեռ բռնող չի ըլլի։
Խիղճ մարթուն քարը դարիդուսումն (չարչին) էլ կու հանի։
Խուղն ու հաւը մէկ է, ինչքան տաս՝ կուտէ։
Խիղճ իրիցի քարօզը չի անց կենա։
Խէր (բարի) ու խալաս (չար), չուլ (հնոցէ) ու փալաս (խողէր)։ (խնձոր չլոր վեր ա՛ա)։
Խօսկը մինձին չին լիդ դարցնի։
Խօսկիտ տէր կաց։
Խղճի վուրթին քանի մինձանում է, իշանում է։

Խղճմտութիւնը գայր ([illegible]) դէրէվս մաշիլ երիտ:

Խուփը գլորվեցաւ, կճուճը գթաւ:

—Խիղճն ինչնմէն է խիղճ. «իրա խիլքնմէնս»:

Խօսկն ասելու համա է, անդաճը՝ լսելու համա:

Խիլքը խիլքի վրայ թափառութին ([illegible]) ունէ:

Խունկն ու մումը իր ճամփէն կու գթնէ: ([illegible]):

Խօսկով փլաւ չի եփվի, եղն ու բրինձ է հարկաւր:

Խեյօքին՝ մէկ. յիմարին՝ տասը:

Խօսկը՝ մէկ. Աստուծ՝ մէկ:

Խօսկը դադողինը ([illegible]) չէ, ասողինն է:

Խայխի ([illegible]) աճկը քիր վրայ մի թողնի:

Խափեցի՛ր Փիլօի աղայ Պատամին: ([illegible]):

Խափեցի՛ր Կանիօինց Օհանին: ([illegible]):

Խիլքը վուր բաժնում էին, դուն վճրդի էիր: ([illegible]):

Խայինէն ([illegible]) վուտխտ տակնմէն կու դուս քաշէ: ([illegible]):

Խուտ խոմ չինք կերի, մինք էլ մարթ ինք: ([illegible]):

Խիլքս խոմ հացի հիտ չիմ կերի: ([illegible]):

Խօսկն էլ է կոլած ու ջուղարն ([illegible]) էլ: ([illegible]):

Խօսկ ու ջուղարով մարթ է: ([illegible]):

Խիարը ([illegible]) ծուռն է դուս էկի: ([illegible]):

Խիարը ([illegible]) ծուլիլ է թաւին ([illegible]): ([illegible]):

Խադալը ([illegible]) վէր է ալլի: ([illegible]):

Խօսկը կտուրն է դցում: ([illegible]):

Խօջի ([illegible]) բաղնիսը դառաւ գրուատ: ([illegible]):

Խարարը ([illegible]) կու տանիս: ([illegible]):

Խէրը ([illegible]) տեսնէ հէրապխոր, ջաւխմէն ([illegible]) քաշէ կարապխոր: ([illegible]):

Խիղտելու վուր տանում ըլլին, մէ գըօշ չիմ փուխ տա նրան: ([illegible]):

Խարազ ([illegible]) ձէրմազանի սուփրէն ([illegible]) խոմ չէ: ([illegible]):

Խաշամանը իմն է, խաշն՝ ուրիշինը։ ([illegible])։

Խաչը խաչապաշտին կու բռնէ։ ([illegible])։

Խան ([illegible]) պուպու, խան Գիզօլու մամա ([illegible])։ ([illegible])։

Խարջի ([illegible]) զօրա ([illegible]) աւելի վունչիչ։ ([illegible])։

Խնդրբէգինց թավլէն ([illegible]) խօմ չէ։ ([illegible])։

Խմիլ է փունջը ([illegible]), մոլիլ է քունջը ([illegible])։ ([illegible])։

Խրատ ըլիլա, քու գլուխը խրատէ. Ես խրատած էլ իմ, մկրատած ([illegible]) էլ։

Խոստովանք թէ կու պահիս։ ([illegible])։

Ծիրանն ինչ արաւ. կորիզն ինչ անէ։

Ծովը ննջողն անձրևմէն ինչ կու վախնայ։

Ծխոն ([illegible]) ինչ է, վուր իր իղն ինչ ըլի։

Ծախելու չէ ու փոխելու չէ։ ([illegible])։

Ծառը վուր վէր ննգնի, կացնաւորը կու շատանայ։

Ծովմէն դուս իմ գալի, մի գդալ ջրումը խեղտվում իմ։

Ծուռը կ'օսվի, ամմա սուտը չի ըլի։

Ծովը գդալով կու հատնի։

Ծառը մէ խփելով չի վէր ննգնի։

Ծալած շուրն ինքն իրան կու մաշվի։

Ծառը քանի պտուղ (կամ՝ բար) շատ ունենայ, գլուխը կու կռացնէ։

Ծանդր կաց, լիդր գաս։

Ծիրանաս, ծիրի ղադրն ([illegible]) իմանաս։

Ծիրանաս, պատիւս իմանաս։

Ծակ հուլունքը գեդնին չի մնա։ ([illegible])։

Ծուռը մարթուն կուրօն ([illegible]) կու դրսոտէ։

Ծիպլիան ([illegible]) աճկիտ պաչ կ'օնիմ, վուր ինձ համա բլիթ կու թխիս։

Ծիտն ([illegible]) իր բունը կու սիրէ. մթնացաւ, իր բունը կու գթնէ։

Ծառն էնդուր կու տնգիմ, վուր ինձ շվաք ([illegible]) անէ։

Ծիծը ծծին կու գիփչի։ ([illegible])։

Ծնծիլն էլ է աղաթ ([illegible]), սիրիլն էլ։

Ծուռը նստինք, էլի ըլինք աղբէր։

Ծառն իր տիրուջը շվաք ([illegible]) չի տա։

Ծիրացար՝ ծուխցար։

Ծակ բուդ ([illegible]) չէ, ինչոր տաս, կուլ կու տայ։

Ծովը մտայ. ցամաքօքը դուս էկայ։ ([illegible])։

Ծովը մտնում ես, ցամաքը դուս ես գալի։ ([illegible])։

Ծիպլի ([illegible]) Ծատուր, քօռ ([illegible]) Խէչատուր։ ([illegible])։

Ծարաւ ջրի վրայ կու տանէ ու կու բերէ։ ([illegible] ։

Ծտի ([illegible]) հիդ (կամ՝ էդնէն) արասի է գցում։ ([illegible])։

Ծտի ձու (կամ՝ կաթը, կամ՝ իղ) էլ վուր ուզենաս, կու ճարվի նրանց տանը։ ([illegible])։

Ծովն էլ գցիս, այչու ([illegible]) կու կանգնի նրա կօճին ([illegible])։ ([illegible])։

Ծտի ([illegible]) ծիրտը արասի գիդէ ([illegible])։ ([illegible])։

Ծէրօ ([illegible]) է կուլ տվի, հօքին դժար է դուս գալի։ ([illegible])։

Ծտի ([illegible]) լիզուն չի գիդի։ ([illegible])։

Ծիծու վրայ չէ անում։ ([illegible])։

Ծէրը ծէրին ձլլու ([illegible]) ինք հասցնում։ ([illegible])։

Ծիղը ծղեմէն կու հանէ։ ([illegible])։

Ծառուրը կտուրը կու՚լլի։ ([illegible]).

Կերածն ու կորածը մէկ է։
Կճուճը գլորվեցաւ, խուփը գթաւ։
Կուշտը քաղցածին համաց կու բրթէ։
Կանց ինձ խուլ ասին. քիչ ա... ասի՞ն։
Կատուն մսին չը հասաւ, ասաւ՝ էսօր ուրբաթ է։
Կնգայ շինած տունը Աստուծ չի քանդի. Ասծու շինած տունը կնիկը կու քանդէ։
Կիրազվայ դանդանը ([illegible]) էրկուշաբթի էլ պէտկ գու՚քայ։
Կատվի խաղը՝ մկան մահը։
Կու մինձանաս, կու մոռանաս։
Կու կակղիս, կուտիս։
Կնգայ բերած փուղը փուղութիւն չի անի։
Կարմիր ձուն Զադկին կու սազի։
Կրակ ննգնիս բողազ ([illegible]), ինչոր տեսնիս, կու դողաս։
Կուժը համաշա ([illegible]) ջուր չի՛ բերի։
Կատվին ասին՝ կճխտ դիղ է. տարաւ, խուռը թաղեց։
Կխրարովի արտը մուկն է կերի։
Կուլի վերջը փօշմանութիւն ([illegible]) է։
Կուժը ջրի ճանփին կու կոտրվի։
Կնգայ բաժնքով մարթ չիս դառնա։
Կրակի վրայ կրակ չին ածի։
Կատվի վուտն էլ պիտի փորցվի։
Կու խաղայ կշտափուրիկը, չի խաղա կարմրաշուրիկը։
Կատու խօմ չի՛մ, վուր կուդլիս ([illegible]) ժաժ տամ։ ([illegible])։
Կատուն կատվի հիդ. վուր կռվում է, չանչիլն ([illegible]) էրեսին է պահում։ ([illegible])։
Կաթնէ սպաս ուտիլը լաւ է՝ մէ օր միր տանը, մէ օր ձիր տանը։

Կշիռքը վուրթէնը հակն է տալի ([illegible]), բանն էն է։ ([illegible])։

Կատուն Քրիստոսի աղլուխն ([illegible]) է։

Կալօշներու ([illegible]) հաքնելու վախտը ([illegible]) կու իմացվի։ ([illegible])։

Կնդայ բերան փուղը քիղ համա թանխա ([illegible]) չի դառնա։

Կնգայ բերան փուղը զանգակ է, քանի անց կենաս, կօնկլէն ([illegible]) ճակտիտ կու դիփչի։

Կատվին էնէնց պիտիս ք..., վուր ձեռնիրտ չը չանգռէ։

Կուժը մէկի գլխին կու կոտրվի։

Կանգնած ջէր ([illegible]) չիս ք...։ ([illegible])։

Կուլի օրը կուլու պիտի, բարիշութէնի ([illegible]) օրը՝ բարիշութին։

Կծիլ չէի դիդի, քիզմէն սովրեցայ։

Կնիկը մարթուն ասաւ՝ դէնը պառկի.—ինչ պարկիմ, իս ու դուն մէ թավումն ինք էրվում։

Կատվի գլխին ջիգար ([illegible]) խփից։ ([illegible])։

Կնիկ ուզիլն էլ ցաւ է, չուզիլն էլ։

Կնիկարմատը հաւ չի մորթի։

Կնիկարմտի արտասունքին աւատալ չի ըլի։

Կնգայ խիլքի հիդ մի՛ ննդնի։

Կէսն աւել է։ ([illegible])։

Կարմիր կովը կաթը չի տա։ ([illegible])։

Կովը կթիլ չէր դիդի (կամ՝ կաթ չէր տալի). ասաւ՝ էրթիկը ծուռն է (կամ՝ գեղինը ծուռն է), չիմ կանացի կթի։

Կնիկարմտին օխտը լուծ գոմէշը չի կանայ զաւթի ([illegible])։

Կատուն մէ աքասի չունէ՝ ապրում է։

Կակալն ([illegible]) էլ քու ձեռքին է, չաքուչն ([illegible]) էլ։

Կանանչ դէրիա մի՛ հաքնի, օխչարը խուտ կու դիդենայ։

Կրակի առջիւը չախմախ ([illegible]) չին տա։

Կիսրաբովի բաղը ([illegible]) էշն է կերի։

Կնիկարմտի խիլքը կարճ է, մազն՝ էրգէն։

Կաթնի հիդ կերածը հոքու հիդ դուս գու՛քայ։
Կաթ գ'ուզիս՝ կով պահէ։
Կատվնիրը մեռան, մկներու մէյդանը ([illegible]) բաց էլաւ։
Կտաւ գործողը աբրէշում ([illegible]) գործողին չի հաւնի։
Կտրած հացը էլ չի վուղչանա։
Կրկուան հաւը ձու չի դնի։
Կժի առչիւը շատ խնլադա կու կոտրվի։
Կաթնեմէն էրածը մածնին էր փչում։
Կունձին ([illegible]) վի՛ կալ՝ տէրը տու ([illegible]), ասլի համա փարա ([illegible]) տու։ ([illegible])։
Կէհայ հուրը ([illegible]), կու մնայ մուրը։
Կանց «հա՛» ասիմ, մէչը մնամ. հազիր «չէ՛» ասիմ ու պրծնի՛մ։
Կարսի մէչը ինչ ձէն տաս, էն կու իմանաս։
Կատվնիրը դուս գնացին, մկնիրը շուշպար ին խաղում։
Կուժը կժին խփիս, եա ([illegible]) մէկը կու կոտրվի, եա մէկէլը։
Կոտրած գդալի պէս մէչ է ննգնում։ ([illegible])։
Կարուց Կարապլտ իս էլի՛։ ([illegible])։
Կտրած մատի դիղն իս էլի՛։ ([illegible])։
Կապը կտրած, թուկէն ([illegible]) փախած։ ([illegible])։
Կէտն է հանաք։ ([illegible])։
Կծանի էդնէն կու կանգնիս, ածկի ([illegible]) տվողի առչիւը ([illegible])։
Կ'օսխս, կ'օսխս ու չիս գա։
Կխսին էլ արժնիկ չիմ։ ([illegible])։
Կուլի ծաղիկ ին շինում։ ([illegible])։
Կարկտանը ուսին էկաւ։ ([illegible])։
Կթի էշ է դառի էլի՛։ ([illegible])։
Կրակի վրայ սառը ջուր ածաւ։ ([illegible])։
Կշուքի աբրա ([illegible]) իս հա՛։ ([illegible])։
Կուղին ([illegible]) մէկս մէկու հիդ կապած ունին։ ([illegible])։
Կանց ջուրը շատ գնացիր, կանց աւազ մնացիր։ ([illegible])։

Կու ճանչնանք, ի՞նչ պտուղ իս։ ([illegible])։

Կալս կալսեցի, դարմանս քամու տվի։ ([illegible])։

Կիրակուսը չըլլի, Բախնդուրն (կամ Մարտիրուզն) ըլլի։ ([illegible])։

Կոճին ([illegible]) ալչու ([illegible]) նստեցաւ։ ([illegible])։

Կարմնջի վրայ չի անց կենա։ ([illegible])։

Կօլատինց գոմումը փէլին ([illegible]) է ծախվում ու իմ ապրանքը չի ծախվի։

Կատվի լակոնները պէս գէս ու գէն է թրևվում։

Կու ներկին ու կու թողնին։ ([illegible])։

Կ'օսիս թէ՝ խանի ու բէգի վուրթի ըլլի։ ([illegible])։

Կամաց խօսի, կտիրը հիւանդ կայ։ ([illegible])։

Կատու է դառի նրա առջիւը։ ([illegible])։

Կատվի պէս մէճկը գեդնին չէ խփում։ ([illegible])։

Կանթիղի ձիթի պէս ի՞նչ իս ճռճռում։ ([illegible])։

Կու'լի, կու'լի. չի ըլլի, չի ըլլի։

Կարմիր կովի պէս կթվում իս, կթվում. վիրչի դամը վուտը խփում, շուռ տալի։ ([illegible])։

Կակալը ([illegible]) համըրքով իս տվի։ ([illegible])։

Կուժը նրա գլխին կոտրվեցաւ։ ([illegible])։

Կու'լի, չի ըլլի, մէ թաքառը կու'լի։ ([illegible])։

Կողոպուրտի էշ պիտի ըլլի, վուր ինձ համա ղրգիս։ ([illegible])։

Կորուստա-Մինասի համա մում ասէք, վուր գայ։ ([illegible])։

Կարմիր կովի պէս մի կթվի։ ([illegible])։

Կանց շունը շատ՝ Արմ…ցիք, օչլապաճիճ ([illegible])՝ Ղ'որ…ցիք, ասկի բիդօ ([illegible])՝ Ման…ցիք, նախուրմախուր ([illegible])՝ Ար…ցիք։

Կանց փուփն (ձերաձառը) աւիրվի. կուճին (որմզդայն) տրաքի:
(ասել է մայրը որդուն բարեխնդութեան, երբ շատ ձերաձառը է ընդամ):
Կանց մնայ փուփուն (ձերաձառը), թող պառաւի կուկուն (նենեխայ):
Կարճ կտրէ: (քիչ խօսէր):
Կարճ կապէ: (նոյն):

Հալալ (հոտաղաց) դէղի (մայր) պէս սուտ է, վնւնց կնիկն է, վնւնց վուրթին:
Համբրած օխչարը դէլը չի ուտի:
Հարսվանը Հարսմնի մեռելը քնած գիղէր (ջարծել):
Հայ գիղի ստակ (դրամ), բանը կու շինիս խստակ:
Հարցնելով Երուսաղէմ կ'էՀան:
Հարցնելով Բաղդադ կ'էՀան:
Հացս գարի ըլի, անգաճս բարի ըլի:
Ցեղ գցելով արա: (ինայողութեամբ):
Հիւնդի աճկը դուռը կու՛լի:
Հեղեվակը ձիաուրին էր մասխարա (ծառը) գցում:
Հօրանց տունը դաշտ ու մէյդան (հրապարակ), մարթանց տունը խուղը գնդան:
Հէսարն (հաշիւ) անինք եաղի (օդար) պէս, էլի ըլինք աղբուր պէս:
Հիւնդութինը սէլով տուն կ'էՀայ, մախլով դուս դու՛քայ:
Ցարդն յարգէուրաց, պատիւն արժանաուրաց:
Հազար խփին, մէ դրուստ ասիլ տան:
Հայ՝ Սածու փայ (բաժին):
Հինգ մատեմէն վնւրը կտրիս, վուր չըցաւի:
Հիւնդացի, քու լաւն ու վադն իմացի:
Համփիրութինը կինք է:
Հացը՝ Հուրէն, վուրթին՝ փուրէն:
Հասս ու բարակ մէ գին է, վա՛յ բարակ մանողին:
Հազար թուման (10 ոս.) պարտկ ունենամ, մարթամիչի մարթ ունենամ:

Ճմպարտին դուռը ծնծեցին, տանը վունչիչ չասաւ։
Ճաու խիլքը գլխումն է, վրացունը՝ աճկումը։
Ճագար չափէ՛, մէկ կտրէ՛։
Ճէսարեմէն (հ–չէ–) օջով չի փախչի։
Ճախը (էր––––նէ) նհախին (ա̃նօրէն) չի մնա։
Ճաու չիղի խիլքն իմն ըլի։
Ճաու վիրչի խիլքն է գովելի։
Ճայն վուր մէքիչ դունդ (եչր–նգ, ոչժ) ունենայ, Սածուն Ղմէրթօ (վր. Ս–տ–––ծ) չի աալի։
Ճայլի (ոըդէ––Բէ–ն) գօրա (հ–Թ–Մ–տ), ջանի (Մ–րԲն. հ–գէ) գօրա։
Ճայն էլ վայ է, վրացին էլ՝ վագլախ (վ–տԲ–ր)։
Ճամ (Ե) գլխարաթ (––էտ), համ թուջարաթ (––––տ––ր)։
Ճաւը վուր չաղանայ (ճէր–ն–ւ), էլ ձու չի դնի։
Ճաւն էլ վուր ջուր է խմում, Սածուն է մտիկ տալի։
Ճամ (Ե) ամռվայ պիտի ըլի մարթ, համ ձմռվայ։
Ճարտն ու փեսէն վրայ տախտին, ում նասիբն (ճ–չտ) է, նա տանէ։
Ճուրն (հ։–ր) էկաւ, հուրը գնաց. աւիլն աւիլողի ձեռին։
Ճիմիկվայ քօծիրը (–չ–էէն) աղչիկ պարնիր (տէչէն) ին, հիմիկվայ բջիրը (ծ–––յ)՝ աղա (գ–րն)։
Ճին հաւերուն՝ քշա՛ քշա՛, նուր հաւերուն՝ ջուջու, ջուջու։
Ճագար կայ՝ մէկ չաժ է. մէկ կայ՝ հազար աժ է։
Ճացը չը կտրվի, թէ չէ, չի սաղանա (կամ՝ էլ չի վուղչանա)։
Ճանաքն էլ իր տիղն ունէ։
Ճանած խանջլին (տ–չ–ն) ձեռը տալ չի ըլի։
Ճօր փուղիրը վուրթու համա ցից է։
Ճամփիրութին՝ արքաութին։
Ճարսին տէրը կ'օնէ համաուր, խէչին տէրը կ'օնէ զօրաուր, շանը տէրը կ'օնէ հաչան։
Ճուր փորողը ինքը կու ննգնի մէչը։
Ճարեվանը հարեւնի հայլէն է։
Ճիւնղին գողնքումը կու ք...։

Հասածին խփում ին, խակն է վէր ննդնում: ([illegible]):
Հառամ ([illegible]) փուղը կրակ կու դառնայ:
Հօրն ու մօր միջկը վուրթկերանցը հարցումս կու՚լի:
Հոքին խուրն է, դժար է դուս գալը:
Հանաքը դանակ կու դառնայ:
Հոքին առաւիլ է քանց մարմինը:
Հառամը ([illegible]) դու՚քայ, հալալը ([illegible]) կու տանէ: ([illegible]):
Հիշտ դադած ([illegible]) ու հիշտ մաշած (կամ կերած : ([illegible]):
Հիւնդլի տէրն է հիւանդ:
Հաց ու պանիր, կեր ու բանի:
Ցոպոյն ինքը հոտած էր, հէնց գիդէր, թէ իր բունն է հոտում: ([illegible]):
Հաց ու գինի, պառկի, քնի: ([illegible]):
Հիմիկվայ աղչիկերքը մէ թօփ ([illegible]) կտաւ ին, պատռտէ ու դէն ածա:
Հնազանդ հուրթը օխտը կով կու ծծէ:
Հաւուն ղունդ ([illegible]) չէ տվի Աստուած, վուր գլուխը քորէ:
Հաւն էլ իր ճուտը, օցն էլ իր ճուտը: ([illegible]):
Հարսնիքն ու մահը աղբրտիք ին:
Հիմիկվայ ու վաղուցվայ ջէհէլներու ([illegible]) մէջը շատ սարքիր ու ձուրքիր կայ:
Հին դարմանը քամուն ([illegible]) չին տա: ([illegible]):
Հասկանողին՝ մէկ. չը հասկանողին՝ հազար:
Հառամ ([illegible]) փուղը բինա ([illegible]) չի բռնի:
Հայ էլանք՝ հաւատ չը տեհանք. թուրք էլանք՝ սունաթ ([illegible]) չը տեհանք:
Հօրը տեհնիմ, մօրը տեհնիմ, աղին էլ էնպէս տեհնիմ:
Հաւը տանը կու մնայ, կուտը տանը կուտէ: ([illegible]):

Համքարը ([illegible]) համքըրին կու ճանանչէ։
Հացը թխողին թխել տուր, մէ հացն էլ աւելի տուր։
Հարեւմնի խաթիրը (համար) էրեխէտ գլուխը պատռէ, էնքան ծեծէ։ ([illegible])։
Համփիրութինը համ կու բերէ։
Հանած աճկը իր տեղը չի գա։
Հաւն էնդու համա գ՚ուզիմ, վուր ձու վի կալնիմ (կամ՝ դնէ)։
Հօքին քաղցր է։
Հիւու տեղեմէն դափի ու զուռնի ձէնը լաւ գու՚քայ։
Հազար կնիկ վուր մօդ ըլի, ծլնգղնի ([illegible]) ցաւը չի պակսի։
Հիւանդը վուր լաւնալու վրայ ըլի, հէքիմը (բժիշկ) դէմ գու՚քայ։
Հալալ (արդար) ապրանքը գէլը չի ուտի։
Հատ կուղկը փթած մարթը լաւ է, քանց ըէզըրգան (վաճառական) վուրթին։
Հարսնիքը՝ աղբուրս, մահինիքը՝ պապինս։
Հալալը (արդար) մազ էլ դառնայ, չի կորվի. Հառամը (անիրաւ) գերան էլ դառնայ, կու կորվի։
Հացը դրած է, պանիրը վրէն. աշխատանքն էլ ի՞նչ կ՚օնէ։ ([illegible])։
Հարեւմնի համա հուր մի՛ փորի, վուր առաջ դուն դէվէր չը ննգնիս։
Հին հարեւանը բարեկմի հիդ բարեբար (հաւասար) է։
Հիւանդ խօմ չիմ, հիւնդին կու հարցնին՝ գ՚ուզիս, թէ չէ։
Հէստի քաղցած իմ, շան հաչալը չիմ իմանում։
Հաւի հէնչաք (չափ) խելք չունէ։ ([illegible])։
Հանաքը դէնը կ՚էնայ։ ([illegible])։
Հազար մաղի հաց կերած մարթ է։ ([illegible])։
Ցիդ ու առաջ գլխունքս գնալու ինք էնդի ([illegible])։
Հալած ի՛ղ իս պահ տվի՜։ ([illegible])։
Հէսաբը ([illegible]) խօմ շունը չէ կերէ՜։ ([illegible])։

*Չէստի թաՀարը ([illegible]) մոլիկ է տալի, Հէնց գլուխնաս նրա Հօրը ին ըլիմ սըպանի։ ([illegible])։*

*Չէստիկն է, վուր մէ գլոխ առանց շուն կու պաՀէ։ ([illegible])։*

*Չէստի օմքին ([illegible]) է, վուր չիմ կանայ ասի թէ՝ առչիւս ին նստած, յլիդ նստի։*

*Չէստի Համով է շինի կերակուրը, վուր մատնիրն էլ Հետը կուտվի։*

*Չէստի Համով է շինի կերակուրը, վուր ուտելով չիս կշտանա։*

*Չոռոմի տ.. շինեցիր գըրուստ։ ([illegible])։*

*Չէստի խուռը քնած է, վուր վուտներեմէն քաշիս, չի իմանա։*

*Չա՛յ-Հա՛յն գնացիլ է, վա՛յ-վա՛յն մնացիլ է։ ([illegible])։*

*Չէնց գլուխնաս իմ կնքվատէքումը վերի թարեքումն ([illegible]) իս էլի նստած։ ([illegible])։*

*Չէստի խարար ([illegible]) էր, վուր շունը տիրուչը չէր ճանչնում։ ([illegible])։*

*Չասան-խանի կոզդէքը ([illegible]) բերնումը դրած ունէ։ ([illegible])։*

*Չայր ու Պուրթի չիմ կանայ ասի նրա առաչ։ ([illegible])։*

*Չէնց կու տանին, վունց գառը պատարաքին։ ([illegible])։*

*Չարցնիլն ամութ չըլի։ ([illegible])։*

*Չատն ու կտուրն է, ճութն ու պատառն է։ ([illegible])։*

*Չաչան կայ, կծան չըկայ։ ([illegible])։*

*Չաչում ին, չին կծում։ ([illegible])։*

*Չիռու մ֊ր իս գնում։ ([illegible])։*

*Չէստի սիրուն է, Հէստի սիրուն՝ օխտն օր ու օխտը գիշիր վունց ուտեցնին ու վունց խմեցնին, գլխի նրան մոլիկ տալ տանի։ ([illegible])։*

*Չէնց ուզում ին աճկիրը էդնեմէն Հանի։ ([illegible])։*

*Չէստի տղայ է, վուր պղտուր ջրի Հիդ կու խմվի։ ([illegible])։*

*Չուր տանիմ աքլըի Հիդ փոխիմ։ ([illegible])։*

*Չամ ([illegible]) չէ տալի, Համ էլ ծեծում է։ ([illegible])։*

Համ ([illegible]) տակն ([illegible]) է ու համ տաքին ([illegible])։
Հէստի սիրուն է՝ քու տած, քու հանած։ ([illegible])։
Հրիշտակ անց կացաւ ([illegible])։
Հէստի բարի մարդ է, վուր մրչիմի վրայ էլ վուտը չի դնի։
Համ ([illegible]) չիս ուտեցնում, համ ակուէքս իս կտրում։ ([illegible])։
Հաւի ծիրտը արատի (20 ֆ.) դիդէ ([illegible])։ ([illegible])։
Հէնց գլուխն թէ՝ լօշումը հալվա կայ ([illegible])։
Հիմնիկվաննիրը մեծրած են, ապալլրած խոմ չէ՛ն ([illegible])։
Համ ([illegible]) հոքուս վարծկ ըլի, համ մարմնուս շահ։
Հոքի իս էլլ՛։ ([illegible])։
Հոքի խոմ չէ՛։ ([illegible])։
Հէտոնկ է, կատվնեըու թրխված։ ([illegible])։
Հէնց արա՛, վուր կարմնջի տակի ջուրը չըփախցնիս։ ([illegible])։
Հանաքը չանաք ([illegible]) գտաու։ ([illegible])։
Հէստի վիր է քաշում, վուր վէր ննդնի, թիքա-թիքա ([illegible]) կու՛լի ([illegible])։
Հէստի բան տամ, վուր բան ըլի։
Հնդու մաթա ([illegible]) է հա՛։ ([illegible])։
Հէստի իմքին է, վուր արա՛ քիդ ի՛նչ արմցնիմ։ ([illegible])։
Հէտոի տրաքածն է, վուր հատը չունէ։ ([illegible])։
Հէնց գլխէ, միրուք վէր անելու մարթ իմ։ ([illegible])։
Հոքին նրան է մնում։ ([illegible])։
Հո՛քուն վրայ հաստու։ ([illegible])։
Հոքուն վրայ հաստու։ ([illegible])։
Հէստի օմքին է, բերանը վուր կապիս, էդնեմէն կու խօսի։
Հուրթո վէր կու ննդնի, վուր չուտի՛ս։ ([illegible])։
Հէնց ին մէկ-մէկու համա՝ մահ ու մին։ ([illegible])։
Հէնց ին՝ կաթն ու կորիկ։ ([illegible])։

Հէնց գլխնաս, ձիլխնց հալան ըլլի ([illegible]):

Հէստի տեղ է, վուր օցն իր պուրտով, հաւն իր թեւով չի գթնի նրան: ([illegible]):

Հէստի կերակուր էփեցի, մեռլին դուր էկաւ: ([illegible]):

Հէստիկ էր, հէստիկ, վուր տեղ էիր դցի, դեղնին չէր վեր ննդնի: ([illegible]):

Հիւանդը չաղ թէ՝ էն հիւանդ իմ, մէկէլը՝ սաղ ([illegible]). մահն անկլի տակն է:

Հէնց շէն էս, վուր փեթիր ([illegible]) էս. կարմիր կովը կթել էս ([illegible]). ճալամքարին ([illegible]) հաւնում չէս. անկա մնաց մթէլին ([illegible]): ([illegible]):

Հէստիկ օմքին է, վուր կաթն ու կորեկ: ([illegible]):

Հնդուհաւի պէս, վուրդիոր մթնում է, էնդի քնում է: ([illegible]):

Հաց չէ ուզում քիզմէն ու ջուր չէ ուզում: ([illegible]):

Հէստիկ են, վունցոր շունն ու կատուն: ([illegible]):

Հացը ջրին էրնէկ է տվի: ([illegible]):

Հալած եղ էս տվի ու մաղած ալուր: ([illegible]):

Զվի դուղն ու ձիու դուղը մէկ է:

Զվի դուղը ձիու դուղ կու դառնայ:

Զուգը գլխեմէն կու հոտի:

Զվածիղի սիրու թավի կութին պաչ են անում:

Զուգ բռնողը ջրեմէն չի վախենա:

Զգանը հարցրին՝ ծովեմէն ինչ խաբար ([illegible]) ունիս, ասաւ՝ խաբար շատ ունիմ, ամմ բերանս ջրով լիքն է:

Զիէմէն վէր էկաւ, էշին նստեցաւ:

Զուգը ձգան ասաւ՝ դէնը պաւկի:—Վուրթէնը պաւկիմ, էրկուսս էլ մէ թավումն ենք տաբակվում:

Ձու գնող հաւի կուզին ([illegible]) կու ճանչվայ։
Ձուգը ջրումը գին չի ըլլի։
Ձու ածող հաւը կըկըան կու՚լլի։
Ձեռը ձեռը կու լվանայ, էրկուսն՝ էրեսը։
Ձմեռը՝ բաղնապան, ամառը՝ բաղմնչի ([illegible])։ ([illegible])։
Ձուգը ինչ վախտի ([illegible]) բռնես, գլխի թազա ([illegible]) է։
Ձուգը գլխեմէն կու բռնին։
Ձուն՝ ձվումը, մանուկն՝ օրորոցումը։ ([illegible])։
Ձին դաղում ([illegible]) է, էշն ուտում է։
Ձեռը ջիրը ([illegible]) կու դնէ, ինչկըի մութք վուռքն Աստուն ([illegible]) շանց կու տայ։ ([illegible])։
Ձախ վուտի վրայ է մի կացի էսօր։ ([illegible])։
Ձեռնեմէն փախած ձուգը մինձ կու՚լլի։
Ձեռխ թքէ, էրեսխտ խփիմ։ ([illegible])։
Ձուգը լայուչեմէն ([illegible]) կու բռնին։
Ձուգ բռնողը մի... թաց կունենայ։
Ձեռի տուրը սրտի վրայ մաշուր ([illegible]) կու՚լլի։ ([illegible])։
Ձեռտ իղոտ է, գլխիտ քսէ։ ([illegible])։
Ձախ ձեռով հաց ուտիլը ջանին ([illegible]) չի կպչի։
Ձախ ձեռով հաց չին ուտի, փուրը չի կշտանա։
Ձին քրինհի ([illegible]) տակը կու սատկի։
Ձունն էնդու համա գու՚քայ, վուր վուտը մրսի։
Ձին ու ջորին կռվիլ ին, մէջ տեղը էշն է ճխլվի ([illegible])։
Ձրի փավլի ([illegible]) համը բերնումս մնաց (կամ՝ ջէր էլ բերնումս է)։ ([illegible])։
Ձեռնիրտ փափա ([illegible]) էր ուտում։ ([illegible])։
Ձրի միսը չի էփվի։ ([illegible])։
Ձեռնիրտ լվացէք էտ բանեմէն։ ([illegible])։
Ձիաւորին ձիէմէն դէվէր կու բերէ։ ([illegible])։

Ձ'էթ կու դառնայ քու արած վարծկը, ջրի էրեսը կ'օնէ։ ([illegible])։
Ձ'ղի մէջը մազ է պտռում։ ([illegible])։
Ձ'որ մէջը բացը ու ցածր չը կա՛յ։ ([illegible])։
Ձ'որ վուտը շատ է իմանում, քանա իմ գլուխը։ ([illegible])։
Ձ'ուն ծռվիլ է։ ([illegible])։
Ձ'էն չէ, ձէն ու կէս է։ ([illegible])։

Ղ'օնաղն (հիւր) Աստուծնն է։
Ղ'օնաղը տանտիրուչ էշն է։
Ղուրթը ճանփայ է գնում, չունքի ([illegible]) շատացիլ է խալխի ([illegible]) սուտը։
Ղ'օնաղի խաթրու ([illegible]) շանը թ.աթա չին ասի։
Ղ'օնաղի խաթրու ([illegible]) կատվին հափսա չին ասի։
Ղ'ասափխանի ([illegible]) դուռը բաց, շանն էլ սիրաթ ([illegible])։
Ղ'ախմ ([illegible]) մարթու աղն ածլի կէհայ։
Ղուրթ է, ակռէքը քաղցրն է. ամա՛ իփոր դառնացնում է, հանում ին ու դէն ին գցում։ ([illegible])։
Ղուրթ է, էրեդվայ մեռիլը մեռաւ. չալիշ արէ՛ ([illegible]), վուր էսօրվայ սաղն ([illegible]) էլ չը մեռնի։
Ղ'ափլանինց կարէն դառաւ էղի՛։ ([illegible])։
Ղ'օրդան դէղի ջարթուքսն է։ ([illegible])։
Ղ'օրդան դէղի ջարթուքսի պէս մնաց էստի։ (Նոյն)։
Ղօրդան դէղի աղուքսն ի՛ս։ (Նոյն)։
Ղ'օնաղի (հիւր) պէս ինչ իս նստի։ ([illegible])։
Ղ'անդ ([illegible]) ու շաքար ([illegible]), հիլ ու բահար։ ([illegible])։

Պ՛ալիանի ջուրը չիս փոխի՛ ([illegible]).
Պ՛ագարը գիղէ իրա բագարը։

Ճիլափան ([illegible]) կատուն մուկը չի բռնի։
Ճար կորանը ճար ([illegible]) կէհայ. Ճարի ճանփէն չի գթնի, Բէլաքան ([illegible]) դուս կէհայ։
Ճուկն էլ քունն է, թափն էլ, թօխանն էլ, ու ալչուն էլ, մէ ջիկլէն ([illegible]) է խմը։ ([illegible]).
Ճանջը միղրի վրայ է մօղ ըլում։
Ճար գիղիս, գլխիտ արա։
Ճանխութի գնալն իրան ձեռին է, ելը դառնալն Աստուծ գիղէ։
Ճար ունիս, ճարտ արա։
Ճուտը ձվում մալում ([illegible]) կու՛լի։
Ճիկլէուլութինը ([illegible]) հիրթով կու՛լի։
Ճրաքն ինչկլի լուսը լուս չի տայ։
Ճէրքը ([illegible]) ջուրը վուր կու պղտորվի, էլ չի ապրի։
Ճրաքն ինչրի լուսը վառ չի մնայ։
Ճրաք չի վառվի (կամ չի կպչի) նրամէնի ([illegible])։

Մամա ([illegible]) դառնայ, մարթ դառնայ։
Մարթ մէ ձեռը տան վրայ պիտի ունենայ։
Մինք ինք շտապում, Աստուծ չէ շտապում։
Մումն իր տակը լուս չի տայ։
Մէկի անունը վունց լաւով կոտրվի (կամ վիր ըլի), վունց վաղով։
Միր հինգ մատն էլ մէ հաւասար չէ սիղծի Աստուծ։
Մարթ մարթու դիղ է։
Մարթ է ու մաղա ([illegible])։
Մարթ է ու քէփի։
Մարթու խիղճ չիմ, Աստու խիղճ իմ։

Միզըն ունենամ, թէ չէ, ճանչը Բաղդադու դու՛քայ։
Մէկն է կտորի հազարի անունը։
Մէ տարի օխչրութին արա, խմում գիլութին։
Մունջ (…) կատուն շատ մուկը կու բռնէ, քանց խօսունը։
Մարթ չասէ թէ՝ իմ ճրաքը ինչկէլի լուսը վառ կու՛լի։
Մահն ամեն տեղ կու գթնէ։
Մարթ կայ՝ աշխարք ած է, մարթ կայ էշ էլ չած է։
Մարթ կայ՝ էրէց կու ըլլէ, մարթ կայ՝ խրիցի կնիկ։
Մահը մինձ ու պստիկ չէ հարցնում։
Մէ կոթ կորկի շարիլը (կամ ծակիլը) հիշտ է, քանց մէ վուր-
թու մինձացնիլը։
Մարթ հեստի բան պիտի անէ, վուր մէ անունն էստի թողնէ,
մէկն էլ էնդի տանէ։
Մինձ էղեղեցումը պստի պատարաք չի ըլի։
Մօղիկ հարեվանը լաւ է, քանց հեռու բարեկամը։
Միծ՝ է զօրութինը Քրիստոսի։
Մուլքը (…) սիրեկան է։
Մէ ձեռը մէկէլ ձեռի արօվ (…) չը մնայ։
Մէ ձեռով էրկու ձմերուկ չի բռնվի։
Մկան շլուն էլ ջաղցին շահ է։
Մէկ մի տա, էրկու գ՚ուզէ։
Մինձ գուռը մի բաց անի։ (…)։
Մէ խօսկը մարթուն կու քանդէ էլ, կու շինէ էլ։
Մարտը (…) վուր միս ուտէ, լաւ չէ։ (…)։
Մնջի (…) լիզուն տէրը (կամ մունջը) կու իմանայ։
Մէ ձեռը ծափ չի տա։
Մարթ վուր չուզենայ, սաղումը (…) քար չի գթնի։
Մէ թխիլը (…) օխտն աղբէրը փայ (…) ին արի։
Մեռելը միզը ունէ։ (…)։
Մեռլի վ... միզըստ (կամ քաղցը) կու՛լի։ (…)։
Միսը միս է, ծվէնին (…) աճկի լիս է։
Միզըն ու կարաքը լաւն է, ամմ շան գուղումն (…) է։

Մէ տիղ քօծ ([illegible]) չըկէր, իշի անունը Վարդիսախար էր։
Մարթ վուր դուս գնայ, վուտի պճղով ([illegible]) էլ պիտի մէ բան տուն բերէ։
Մարթ մարթու դարդը չէր իմանում, կէս գիշերին խաղ էր կանչում։
Մէկի խիլքը լաւ է, էրկուսինն ու իրիքինն ուփրօ (Վր. [illegible]) լաւ է։
Մարթ էլ կայ, մարթ էլ։
Մարթ պիտի իր մէչն ըլի (կամ իրմէն ըլի)։
Մարթս ողալական է։
Մարթուս հինգ մատն էլ մինձ ու պստիկ է։
Մարթ մարթու գաhանայ, մարթ մարթու սատանայ։
Մարթ պիտի բարեաց պատճառ ըլի։
Մարթու բախտը մէ Աստուձ պիտի բաց անէ, մէկ էլ՝ մարթ։
Մէ արասու (20 կ.) չըհաւնողը պիտի ջիբեմէն ([illegible]) հինգ շահի (5 կ.) հանէ։
Մէ ծիտ ունիմ մորթելու, գլուխ ու գաւառ մեձրելու։ ([illegible])։
Մարթուս աճկը դուս գայ Լ՛Ն լաւ է, քանց անունը։
Մամի (Վր. [illegible]) անիծած, դէդի (Վր. [illegible]) օխնած։ ([illegible])։
Մարթուն շուրերու զօրա ([illegible]) կու ընկալնին ու խիլքի զօրա ճանփու կու գցին։
Մատով գերեզման չին փորի վուրթիքը։
Մարթու սիրտն աղլուխ ([illegible]) (կամ բօխչա) ([illegible]) չէ, վուր գլխունի առչիւը բաց անէ։
Մամի ուզիարը ([illegible]) վուրթուն կու հասնի։
Մարթու քանդած տունը կնիկը շինից, կնգայ քանդած տունը հազար մարթ չըկանաց շինի։
Մինձ պասը հենց կու անց կենայ, վուր խիղճ մարթը մէ ախրի ([illegible]) գին չի ճարի։
Մարթ պիտի մէ խօսկի տէր ըլի։

Մարթ մարթով է։
Մարթ ինչոր իր գլխին կ'օնէ, դուշմանը ([illegible]) դուշմնին չի անի։
Մէ մաղ թիփ աւել ուտիս, էլլի կ'էհաս էնգլի։
Մեռնողի հիդ օվ է մեռի (կամ գնացի)։
Մէ ժամանակն օչովին չէ մնացի։
Մարթ ինչոր կ'օնէ, իր գլխին կ'օնէ։
Մէ մարթ ինչոր անէ, էն առջիւը դու՛քայ։
Մարթ ու կնգայ լանը իրգնքումն է շինվում։
Մին ըլէ, փիր ([illegible]) ըլէ։
Մէ օր էլիլ ինք, մէ օր պիտինք մեռնի։
Միրքը վուր բերան ունենայ, իր գլուխն ինքը կուտէ (կամ
իրան կուտէ։
Մէ ծաղկով ամառ չի դառնա։
Մէ ծառեմէն թի էլ կու՛լի, բահի կութ էլ կու՛լի։
Մարթուս աճկը մէնակ սիւ խուղով կու կշտանայ։
Մինձի սասած՝ փուքրի լսած։
Մարթուն ջուր խմելիս օցն էլ ձեռը չի տայ։
Մանկուց գաղումը ([illegible]) ծիրուց գաւազան է։
Մէ մարթու փուղիրը վուր կու աւելնայ, տան սնիրը ծուռը
կու էրեվայ։
Մինձը մինձ փուր պիտի ունենայ։ ([illegible])։
Մէ տանեմէն ինք, մէ հալեմէն ([illegible]) ինք։ ([illegible]
[illegible])։
Մէ տանէն չինք, մէ ձէն ինք։ ([illegible])։
Մէ անգաճը բիրթ է, մէկէլը բիրթի դուռը։ ([illegible]
[illegible])։
Մէ փուր հացը օչովին չի քանդի։
Մարթ իր աճկումը գերանը չի տեսնի, ուրիշի աճկումը ծիղը
կու տեսնէ։
Մարթ մարթու իգի ([illegible]) կու տայ, մարթ մարթու մէ ճութ
հաղուղ չի տայ։ ([illegible]
[illegible])։

Մէ օխչարը էրկու ջէր կու մորթվի՛։
Մէ օխչըրմէն էրկու մորթի կու վի կալնի՛ն։
Միր մեռոնը ծանդր է։ ([illegible])։
Մահը միրն է, մինք մահինը։
Մարթուս աճկը ծակ է։
Մէ գիժ ջուրը (կամ՝ ծովը) քար է գցի, տասը խելօքը չէ կարնացի հանի։
Մինամ ([illegible]) Աստուն է այդնի (կամ՝ Աստված գիդէ)։
Մանէն ([illegible]) մանած է, ճակտէն քաշ արած է։ ([illegible])։
Մանէն էս աշխըրքումն է (կամ՝ էս կինքումն է), հալբաթ ([illegible]) օմքնու մասխարա ([illegible]) իս գցի, գլուխս էկաւ։ ([illegible])։
Մանէն մանա է, դուան էդնէն պահած է։ ([illegible])։
Մէ փուղ կու տամ՝ խօսի, էրկու փուղ կու տամ՝ մունջ կաց ([illegible])։
Մահին չարա ([illegible]) չըկայ։
Մարթուս իրա արածը իր աճկին չի էրեւա։
Մարթ մարթու էրեսին կու մտիկ տայ, Աստուած՝ սրտին։
Մարթուս սիրտը շուշա ([illegible]) է, վուր կոտրվի, էլ չի սաղանա ([illegible])։
Մէ մարթուն Աստուած վուր կու աչողայ, աթմորթին ինչ կարնայ անի։
Մէ դօվրը ([illegible]) օչովին չէ մնում։
Մեռնիլ լվանողը իրա արասին (20 կ.) առնում է, նրան ինչ՛ն է պէտկ՝ դժուխկը կէհայ, թէ դրախտը։
Մարթ իր աճկը քօռ ([illegible]) գ՚ուզէ։
Մէճկս ումնոր դէմ տամ, քար դնող շատ կու՚լի։
Մատաղը ([illegible]) մէ տիղ կու՚լի, տասը տիղ խօմ չի՛ ըլի։
Մինձի խօսկն ու մուխնի ([illegible]) տ… մէկ է հիմիկվայ ժուղը խալխի համա։
Մահը՝ մէ օր, լացն էլ՝ մէ օր։

Մարթ կայ, վուր մարթումէն լաւ է. մարթ կայ, էշը լաւ է նրա վրայ. մարթ կայ, վուր խօսեցնես, մարթ կայ, վուր չըխօսեցնես, լաւ է։

Մէյմունը ([illegible]) մինք խաղացրինք, շարաշն ([illegible]) ուրիշը տարաւ։

Մինձկին խփեցին, սսաւ՝ վա՛յ արխա ([illegible])։

Միզըր՝ լպստելով ([illegible]), չամիչը՝ հատիկ-հատիկ ուտելով։ ([illegible])։

Մաշն Ասծու, փառք Ասծու։

Մէ տանը վուր էրկու տանտիկին կու՚լի, տունը անաւիլիլ կու մնայ։

Մարթ իր ձեռով օց բռնէ լաւ է, քանց ուրիշի ձեռով ձուկ։

Մեռլնիրը հենց գիդին, թէ սաղիրը ([illegible]) ամեն օր հալվա ([illegible]) ին ուտում։

Մէձկ մէձկի վուր տանք, սար կու շուռ տանք։

Մարթուս բարեկամը իր ջիբն ([illegible]) է։

Մարթ քանի ապրի, շատ բան կու սովրի։

Մարթ լաւ օրին չի գիմնա, վադին ուփրօ ([illegible]) կու գիմնայ։

Մարթ՝ մարթով, էրկուսն էլ՝ Ասծով։

Միր սիրտն է նեղ, թէ չէ Ասծու սիրտը շատ լէն է։

Մարթուս հինգ մատն էլ մէ նման չէ՝ վուրը կարճ է, վուրն էրգար։

Մարթ ինչոր իր ձեռով կ՚օնէ, աշխարք մօդ ըլի, չի կանայ անի։

Մարթուս կարողութինը հաքուստով կու իմացվի։

Մա՛րթ պլիտի, վուր փլաւ ուտէ։ ([illegible])։

Մէյմունն ([illegible]) իր վուրթու շատ սիրելեմէն հուփ է տվի ու խեղտել է։

Մէկ՝ տղուց, մէկ՝ ծիրուց։ ([illegible])։

Մալ դուշմանս ղալմասն։ ([illegible])։

Մարդուս իր լեզուն իր դուշմանն (Թշնամի) է։
Մաձը միր անգձի էգնէն է։ (Մօտ է)։
Մինձ տուն, մինձ ցաւ։
Մէկի արածը հազարը չի անի, հազարի արածը մէկը չի անի։
Մէ մարդ ինչոր չունենայ, սրտով էն գ՚ուզէ։
Մի՛ առի, մի՛ լաի։
Միսն առանց օսկոռ չի ըլի։
Մէ փուր հացը մէ հուր (հուր) հաց է կորցրի։ (Մէկ ճիշդ բանի դործածուելով մեծ գործերը ջնջուել)։
Մինձ մարդ ես, խան (Իշխան) պիտիս քոռանայ, խան պիտիս խլանայ, չիմանաս։ (Մեծ մարդը հնազանդ պիտի լինի)։
Մինձ մարդը մէ աճկը քոռ (կոյր) պիտի ունենայ, մէ անգաճը խուլ։ (Նոյն)։
Միր տանը կուտ է ուտում, հարևնի տանը ձու դնում։ (Հաւ հաւ, Հաւ ըստ...)։
Մէ-մէ դրօշով (½ կ.) հաւաքում իմ, թուման-թուման թափում իմ։
Մէ աղա (դործակիր) մարդ չըկայ, դիփ տլիկ-պլիկ (անշահ)։
Մումն էլ լուս չունէ հիմի, Աստուած է խառվի։ (Ժամանակը փոխուել է)։
Մեռլիլը տաք-տաք կու լվանան։
Միրուք չունիմ, վուր խօսկս անց կենայ։
Մազն ի՛նչ խելք ունէ։
Մազումը վուր խելք ըլի, (կամ՝ մազը վուր խելք ունենայ), ամեն տեղ չի դուս գայ։
Մարդուս աճկը մէ բուռը խուղը կու կշտացնէ։
Մէ էծը մէ իծին լաւաշէ (լաւ համարել), քանց հարուր գլուխ օխչարը։
Մէկ փորցեցիր, էրկու փորցեցիր՝ հերիք է։
Մինք վաղինն (անցած) ինք, վաղը (ապագայ) միրն է։
Մարդ մարդու հիդ էնէնց պիտի կռվի, բարիշելու (հաշտուելու) փայն (բաժին) թողնէ։

Մեռլի աճկը ի՛նչ լաւ է, վուր ճանփին ըլլի։ ([illegible])։

Մէ օր Ըլթամն էլ խափվեցաւ, գրախտեմէջն ննգաւ։ ([illegible])։

Մէ մուկը հազար (կամ՝ օխտը) կարաս է մուռտրի ([illegible])։

Մէ խուզը մէ կախէթ ([illegible]) է քանդի։

Մէ քունը ջրին էլ գու՛քայ։ ([illegible])։

Մասխարէն ([illegible]) մարթ չի սըպանի։

Մուշտրի ([illegible]) աճկը քօռ ([illegible]) է։ ([illegible])։

Մինձին պատիւ տո՛ւ, վուր մինձանաս։

Մինձն իր տիղն ունէ, պստիկն՝ իր տիղը։

Մի՛ քրքրի, վուր հուտը չիմանաս։

Մէ մարթ իր պապի պ... թողնէ ու իր պարդէզի ([illegible]) պ... բռնէ։ ([illegible])։

Մատղի մսով փուր չի կշտանա։

Մածուն է, թան չէ՛. ամեն մարթու բան չէ։

Մէ գիժ մէ կարաս կոտրից, հազար խելօք չըկանաց սաղացնի։ ([illegible])։

Մռւացար ու ուրացա՛ր։

Մինձ մարթը մինձ խելք կունենայ։ ([illegible])։

Մեռնիս լաւ է, քանց շնանուց ու գիլանուց ըլլիս։

Մէ էգեղեցի քանդիլն ու մէ աղչկայ անուն կոտրիլը մէկ է։

Մէ մարթու վուր լաւութին անիս, ինքը թէ չի իմանա, Աստուած խօմ կու իմանայ։

Մարթուն ճանչնալ թէ գ՚ուզիս, հիդը ճանփայ գնա։

Մինձի խօսկին անգաճ չըդնողը քաղցած կու մեռնի։

Մէ ց... ի՛գը մէ նախիրի անունը բէգնամ արաւ ([illegible])։

Մէ խելօքին՝ օխտը գիժ։

Մեռելը գեղնի էրեսին չի մնա։

*Մարթս ժամանակին է մնում ([illegible]). ժամանակը մարթուս չէ մնում։*

*Մարթը՝ դուս, դադումը ([illegible])՝ տուն։*

*Մարթը չէր մարթանման, խօսին էր մարթասըպան։*

*Մէ դարդը մարթուս չի սըպանի։*

*Մասա տարայ, ունքը շինելու տիղ, անկս էլ հանեցի։ ([illegible])։*

*Մէկ միխին է տալի ([illegible]), մէկ՝ նալին ([illegible])։ ([illegible])։*

*Մէ գդալ ջրի վարձկն էլ կայ։*

*Մարթուս փուր տիղն էլ փուր ցաւի, հոքին էնդէ է։*

*Միծատնիր, մինձ-մինձ դունիր, քաղցած շնիր։*

*Միր արխումը ([illegible]) ջուր գայ, փուրծանց գ'ուզէ թող գայ։*

*Մշակն էլ իր տիղը ծանդր է։*

*—Միր տանը հարսնիք կայ. «քիզ ի՞նչ. – Ձիր տանը հարսնիք կայ. «ինձ ի՞նչ»։*

*Մէ մախալ էրծթով զառափխանա ([illegible]) կու բանեցնէ։ ([illegible])։*

*Միղկն էլ սովորովի է։*

*Ման էկողին՝ ան փուրին, ան վ...։ ([illegible])։*

*Մուխունդը ([illegible]) կտուց ունէ, տանձը կութ ունէ։ ([illegible])։*

*Մէ ջաղցաքար չէ պտուտ էկի գլխիս, թէ չէ ամեն բան անց է կացի։*

*Մինձ էշը նախրումն է մնացի։ ([illegible])։*

*Մէ ձեռը ինդումն է, մէ ձեռը միղրումը։ ([illegible])։*

*Մէ տուն է ու մէ շուն։*

*Մեռլի գլուխը փուրթէնը գ'ուզին, շուռ ին տալի։ ([illegible])։*

*Մախլի գդալնիրն աւեցրուց։ ([illegible])։*

*Մաշտուց է նրա բերանը՞։*

Մկան ծակին հազար թուման (10 ռ.) կու տայ։ ([illegible])։

Մկան ծակին էրնէկ է տալի։ (Նոյն)։

Մկան ծակը հազար թումնով է պտռում։ (Նոյն)։

Մատով վուր խփիս, խալ (Նէշ) կու վինկալնէ։ ([illegible])։

Մէ վուտն էտի է, մէ վուտն՝ էնդլի։ ([illegible])։

Մէ բան էի ուզում ասի, ամմա վախեցայ, խիարը ([illegible]) ծուռը չըրդուս գայ։ ([illegible])։

Մէ ակռքի տակն անց կացի, տեսա, ինչ կու խօսի։

Մէ միրքի տակն անց կացի, տեսա, ինչ կու իմանայ։

Մազը մազէն կու հանէ (կամ կու ջոկէ) հմա ([illegible])։

Մատի վրայ է խաղցնում։ ([illegible])։

Մաստակը ([illegible]) խօմ քը… չէ՞ ննցի։ ([illegible])։

Մխռոնվիլ է, չէ մեռլի։ ([illegible])։

Միղա՛յ Գիգ, Տէր Աստուծ։ ([illegible])։

Մէ մատը միզը դառաւ աշխրքումը։ ([illegible])։

Մէ մատը միզը լին շինի նրան։ (Նոյն)։

Մինք չը հասանք նրանց էդնէն, նրանք կու հասնին մեր էդնէն։ ([illegible])։

Մէ մարթ հանաք չէր գիդի, հաւի ծիրտն ուտում էր, թէ հանաք իմ անում։

Մարխփաթտ ([illegible]) քիրմանշալ ([illegible]) է գործում։ ([illegible])։

Մուկը մէ աքի ([illegible]) ունէ, ես էլ մէ ([illegible]) ունիմ։

Մէ հաւի խիլք չունէ։ ([illegible])։

Մեռած է ու թաղած չէ։ ([illegible])։

Մէ-մէկին իս ասում, ամմա լաւ-լաւն իս ասում։ ([illegible])։

Մածնի քոթան է լպստի ([illegible]) նորահարսը։ ([illegible])։

Մէ էշ չիմ պահ տա նրան։ ([illegible])։

Մատին փաթթիլ է իմ ասած խօսկը։ ([illegible])։

Մարթ իշի վրայ էր նստած ու էշն էր պտռում։ ([illegible])։

Մատաղն իր վուտով էկել է։ ([illegible])։

Միսը՝ քիզ, օսկոռն՝ ինձ։ ([illegible])։

Մեր վարն արել ենք, ցանն էլ ցանել ենք, բաշակութն էլ խցկել ենք։ ([illegible])։

Մուքթա ([illegible]) պատանք է, վուտնիրտ ձքէ։ ([illegible])։

Մէ վուտը կտրած շուն էլ չը ղրղեցին մեր մօտ։ ([illegible])։

Մէ անդճեժէն տուն է գնում, մէկէլեժէն դուս է գալի։ ([illegible])։

Միղկն ու վարծկը կէս անինք։ ([illegible])։

Մէ իմ սրտումն էլ դէվէր մտիկ արա՛ է։ ([illegible])։

Մեռլի գլուխը ղրատից։ ([illegible])։

Մինք՝ գնացական, դուք՝ մնացական։ ([illegible])։

Մալ-հալալ ([illegible]) ու ջան ([illegible]) ազատ ըլիմ ձիզ-մէնի։ ([illegible])։

Մեռլը գցից։ ([illegible])։

Մէ թիլը քաշիս, հազար կարկտան կու վէր ննգնի։ ([illegible])։

Մարթուն կու շինին ջավգ ու փուփալ ([illegible])։ ([illegible])։

Մօլլա Նասրադինը իր մատակը ([illegible]) դէն կու գցէ։ ([illegible])։

Մածնի քիլէն ([illegible]) խս ննգլի։ ([illegible])։

Մարթ մարթու մօղ ղրղեցին, ինձ էլ՝ քիզ մօղ։ ([illegible])։

Մէյդանումը ([illegible]) բան կա՛յ։ ([illegible])։

Մէ ուրփաթ պարտ է նա։ ([illegible])։

Մունաթ ([illegible]) էլ ունիս ([illegible])։

Մէկ ասում է, տասը ծիծաղում։ ([illegible])։

Միր մէջը քար մի խառնիր։ ([illegible])։

Մէ գազ չիթ (կամ ամիրիկա) ունէր, պատուից։ ([illegible])։

Մէ ճիլօրի ([illegible]) վրայ մարթ ու կնիկ դառանք։ ([illegible])։

Մինք էլ քու ջուրը ննգանք։ ([illegible])։

Միր չալէն (վր. [illegible]) կտրած է։ ([illegible])։

Միրուքտ իմ ձեռին է։ ([illegible])։

Մահս ձէն է տալի էնգլի գնալը։ ([illegible])։

Մսեմէտ կտրեցիր ու տվճիր։ ([illegible])։

Միզաուր դմբրի (?) արթար։ ([illegible])։

Մէ հացը կտրէ՛, Աստուն մատաղ ([illegible])․ արա՛ ([illegible])։

Մէկս մէկու արուն ին խմում։ ([illegible])։

Նուր ափը լաւ կու ափյէ։

Նախրարածի խնամին հուրթարածը կու՛լի։

Նարինճվարը (վր. [illegible]) տասէրկու սատանայ ունէ։

Նիսիս ([illegible]) գինին էրկու ջէր ([illegible]) կու հարփեցնէ․ մէկ՛ խմեյիս, մէկ էլ՛ փուշը տալիս։

Նախրաթուղին ([illegible]) էշն էլ իմացաւ, վուր օրն էրգաբացիլ է։

Նիզութէնին լէնութին կայ, լէնութէնին՝ նիզութին։

Նուր նուր հաւիր ին էկի, էրկթէ ձվանիր ին դնում։

Նմանը նմանին կու սիրէ։

Ննգրովլի արտը մուկն է կերի։

Նարինճվարն (վր. [illegible]) էլ կնքիլ գ'ուզէ։

Նա վուր քար ըլի, դուն կակալ ([illegible]) պիտիս ըլի։

Նամուսն ([illegible]) էլ լաւ բան է։

Նամուս-Նամուս ([illegible]), շունչս էլաւ թանթանուս։ ([illegible])։

Նիրքիւ չիմ նստի, վերիւն էլ չին արժանացնի։

Նիհար միսը ծվէնի ([illegible]) չի ունենա։

Նրա ափալին ([illegible]) թօփուր ([illegible]) չըկայ։ ([illegible])։

Նխտը կուտայ, անխղը կու հանէ։ ([illegible])։

Նխտը գցում է, անխղը թախ է կացնում։ ([illegible])։

Նրա խօսկիրը հինգ գիդիմ ճանջի բզզուց է, ջրի խշշուց։ ([illegible])։

Նրա վուտի տակի ցխին էլ արժանի չիս։

Նրա փ... կէնայ քու գլխին։ ([illegible])։

Նրա հան հա է, ու չէն՝ չէ։

Նազին ([illegible]) զու՛քայ, սազին հիդը։ ([illegible])։

Նազին գիդէ իր սազին։ (Նոյն)։

Նա չըլլի, նրա բիձու ([illegible]) տղէն ըլլի։ ([illegible])։

Նրանց լուն հազար (կամ՝ օխտը) լիդր իւղ ունէ։ ([illegible])։

Նուր չար, նուր բարի։ ([illegible])։

Նրան վուր տեսայ, հինգ գիդիմ աշխարքն ինձ բախշեցին։ ([illegible])։

Նրա մատի ղնգնեբումը աւելի խիլք կայ, քանց քու գլխումը։ ([illegible])։

Նրա առջիւը ձեռնիրը խաչած էին կանգնում ամենքը։ ([illegible])։

Նահախ ([illegible]) անիծկը չի գնա։

Նաղդ ([illegible]) փուղը հանած թուր է։

Նրա ասիղ ուտողը մախաթ կու ք...։ ([illegible])։

Նրամէն չիս կանայ պըծնի։ ([illegible])։

Նրա մէ մազը չիմ տա քու ուլ ([illegible]) ու բարին ([illegible])։

Նրա մէ մազին չաժ իս։

Նրա դունգը լաւաշիմ (լաւ հացթուխ), քանց քու գլուխը։
Նրանք հասան իրանց մուրազին (եղչ), դուք էլ հասնիք ձեր մուրազին։ (հեքեաթներէ վերջը)։

Շատ մէ սիրի, ատիլ կայ. շատ մէ ատի, սիրիլ կայ։
Շէնի խօսկը զանգակ է, խղճի խօսկը թմբակ է։
Շուր տու, շնուք տամ. հաց տու, լաղամ (հ—մ) տամ։
Շէնին ասին՝ բարով մաշիս. խղճին ասին՝ քիզ ո՞վ էրիտ։
Շունը շանմէն. էրկուսը մէ տանմէն։
Շատ անողին (կամ՝ դաղողին)՝ շալ շապիք. քիչ անողին (կամ՝ դաղողին)՝ ալ (կարմիր) շապիք։
Շատը՝ շատին, իշի կուդին (վր. —գէ) աղկտին։
Շէնը խղճին տալով խղճացաւ, խիղճը չըշէնացաւ։
Շուն ըլիմ, պստի աղբէր չըլիմ։
Շուրին (գետ) ջվալումը (պարկ) չի թախ կենա։
Շանեմէն գառը կու ծնի։
Շունը հաչելով կու սատկի։
Շունը սատկեցնողին կու քաշիլ տանի։
Շունն իր դռան առջիւը ցօչաղ (քաջ) կու՚լի։
Շունը ծեծելով չի սատկի։
Շատ գիդիս, քիչ խօսէ։
Շատ բան կու խօսվի։
Շունը հաչում է, քամին տանում է։
Շատ ապրիլ կայ, ուշ մեռնիլ կայ։
Շատը շատի մօդ կէհայ։
Շատ ծիծաղը լաց կու բերէ (կամ՝ կու դառնայ)։
Շաու (5 կ.) տիղ՝ աբասի (20 կ.) է զցում։ (շաչու)։
Շնիրը կռվեցան, աղկտի բախտը բանեցաւ։
Շատ չալի պտուղը, սսած է, փտին (վ—) ռասստ գու՚քայ (դ—հէլ)։
Շունը հաչում է, քարվանը (կարաւան) քօչում է (չուէլ)։
Շանը սատկիլ չըկայ, վաղ մարթուն՝ մեռնիլ։

Շատ ձեռին մեռնիմ ու քիչ բերնին։ ([illegible])։

Շունը տիրուչը (կամ՝ իր Թիքա ([illegible]) տվողին) կու ճանչնայ։

Շուն կու քաշ տամ, փուղ կու աշխատիմ։

Շանը տէրը հաչիլ (կամ՝ կծիլ) կու սորվեցնէ։

Շունը ժամարխանեմէն ([illegible]) մէ փուտը դուս տարաւ, իր էհտիբարն ([illegible]) էլ կորից։

Շատ բան կայ, ինչկլի չըսորվիս, չիս կանայ անի. շատ բան էլ կայ, ինչկլի չանիս, չի սորվի։

Շատ խնլագա կու գլորվի կժի առչիւը։

Շատ ապրողը շատ բան կու տեսնէ։

Շատ բան շինէ, քիչ խօսէ։

Շանեմէն մազ դչլիլը խէր ([illegible]) է։ ([illegible])։

Շունը շան միսը չի ծամի։

Շունը վուր հաղուղ ուտիլ սորվի, բաղը ([illegible]) կու վիր գցէ։ ([illegible])։

Շաղխած ցխին մէ խնլագա ջուրն էլ է հերիք։

Շատ մունջ ([illegible]) կենալը (կամ՝ շատ համփիրութինը) իշի մարտիրոսութին է։

Շունը շան ոսկոռը չի կոտրի։

Շունը շան հիդ վուր կռվում է, գիլլի բախտը բանում է։

Շան կաղալուն մի աւատա։

Շուրեբու գօրգ ([illegible]) տուն կու տանին, խիլքնու գօրգ ճանփու կու դնին։

Շատ խնլօքն էլ խիլքը կու տանուլ տայ։

Շուն խօմ չիմ, վուր կուդիս ([illegible]) ժաժ տամ։ ([illegible])։

Շունը կծիլ չէր գիդի, տէրը սորվեցրուց։

Շուրով տկլուրը ([illegible]) լաւ է, քանց փուրով տկլուրը։

Շունը նստի, իր Թալթը ծամէ։ ([illegible])։

Շան հիդ ննդրացար, փէտը ձեռնեմէտ մի վէր գցի։

Ձահը գլուխը կուտէ։

Ձունը կաղալով չի սատկի։

Ձատ հուշ ([illegible]) անիլը կովին կու գժվեցնէ։

Ձունը շան միսը կերաւ, օսկոռը չը դէն գցից։

Ձունը հաչելով կու մինձանայ։

Ձատ խոստանում է, քիչ տալիս է։ ([illegible])։

Ձէն հարեվանն էլ լաւ է։

Ձատին՝ շատ, քչին՝ քիչ։

Ձատ տեսնում ես, քիչ սսա։

Ձունը սրպանողին կու թրեվիլ տանի։

Ձուր տու, շնուրք տամ. հաց տու, ռանգ ([illegible], [illegible]) տամ։

Ձուն ըլլի ու տանտէր չըլլի։

Ձան կուղլին ([illegible]) կտրլիս, էլլի էն շունն է, էլլի էնի։

Ձատ ապրողը շատ բան չի գիտենա, շատ ման էկողը ([illegible]) կու գիտենայ։

Ձէնութինը գղճին ([illegible], [illegible]) սիրունացնում է, մնչին ([illegible])՝ լիզու, չօլախին ([illegible])՝ ջուխտ ([illegible]) վուտը, քօռին ([illegible])՝ էրկու աճկ ու տուտուցին ([illegible]) էլ խիլք է տալի։

Ձուր տու, շնուրքի գամ. հաց տու, ուշկի գամ։

Ձատ ման էկողը (կամ՝ պտուտողը) ([illegible]) վուտով-գլխով դէ-վէր կու ննդնի։ ([illegible])։

Ձատ բան գիդիմ, մաղլամ ([illegible]) քիչ կ'օսիմ։

Ձտապով գնամ՝ գիժ կ'օսին. կամաց գնամ՝ էշ կ'օսին։ ([illegible])։

Ձանը ջղրվի ([illegible]), տանտիրուչն իմաց արա։

Ձատը՝ շատին, իշի վուտնիրը՝ աղկտին։

Ձունը գնաց ղառարխանէն ([illegible]), վուտը չը տարաւ, իր վուտը կտրից։

Ձէն տան աղչիկ՝ տաք հացի կարուտ։ ([illegible])։

Ձանը քանի քար գցիս՝ կու հաչի։

Ձունն էլ ուտելիս ձէնը կու կտրէ։

Շունն էլ իր տիրուջ վրայ չի հաչի։
Շէն տան կատուն էլ լաւ է։
Շատ բանի, քիչ կլի։
Շատը գնացել է, քիչը մնացել է։ (դէպք է համբերել)։
Շուն ես, թէ գէլ ես, միր (այս ինչ անուն) ես։
Շահի գէդի (մաշ) ջիրումը (ծերդան) արասի (20 կ.) չըկայ (կամ չէ ճարվում, կամ չի գթնվի)։ (սաղ է դրամական փեճալը)։
Շահի «դէյդի-դէյդի» (նժոա, ն՞ոա) դառաւ էլի։ (շատ աշխատալու մասին)։
Շատ մարթու գլուխ կու չորնայ ինչկի էն վախտը (ժամանակ)։ (շատ ժամանակ խանդէ)։
Շուրտ նուրի ձէն է իմացի։ (սառն էր, երբ հէն շըրը դառանալ է)։
Շատ գովկըսմէն էշ կորվեցաւ։ (էշ դառաւ)։
Շունը կապէ՛, նրան վէր թող։ (կապուար մարդու մասին)։
Շինողին միչնմէն հանում է։ (երբ մէկը գէմնդ բամակը բոլորովին դադարել է)։
Շան կաշի է. վուրթէնը քաշի, կու քաշվի։ (անհոգ մարդ)։
Շահրուգաղն բաղը վար։ (կայծ ունի անօգուտ, միայն անուան)։
Շան անունը կայ, նրա անունը չը կայ։ (վատ մարդ)։
Շառն (շառ) էտու վրայ անց կացաւ։ (երբ պատը մի բան կարվել է)։
Շէն տանեմէն էկած հարս ես։ (ծաղկած)։
Շատ է ծարաւ, ամա չի կանայ ասի՝ խնլաղէն ես (ինչ) տու։ (խորամանկ)։
Շահ էլի, Շահրազ դառաւ։ (աւելի ծծացած)։
Շան հարմնիք, գելի բարդեղանք։ (անկարելի բան)։
Շուշա (ապակի) խոմ չի՞ս, վուր կոտրվիս. մում խոմ չի՞ս, վուր հալվիս։ (շատ նուր անողին)։
Շատ է զնում, քիչ է դնում. շատն ու քիչը Աստուծ գիդէ։ (հեռատեսութեան)։
Շատ մի փատփատա, Հ... կատկատա։ (մի փորձիր)։
Շատ ուրախու՝ «փառք Աստծու» է ասում։ (ճաշահարել)։
Շատ ալնի է խօսում, մէքիչ վուր աղ անէ, լաւ կու՛լի։

Չիմ Աստված, թէ չանիմ դադաստան. չուստ կու իմանամ, ուշ կ'օնիմ դադաստան։

Չուստ ադկատը լաւ է, քանդ կամաց փէշաքարը ([illegible])։

Չէինք էլի նմանի, չէինք դառնա խնամի։

Չարութինը չարութին կու բերէ։

— Չաչանակին ([illegible]) ծիլ սուս կացրուց։ «Մունջը» ([illegible])։

Չուտողի ապրանքը ուտողին հալալ ([illegible]) է։

Չիմ ուղի, ջիրս ([illegible]) դի։

Չուստ ման էկողը ճանփին կու մնայ։

Չար խօսեցար, կու չարչրվիս։

Չարը բարու հակառակ է։

Չըկայ դարխդուս ([illegible]), վուր դարխվէր ([illegible]) չունենայ։

Չը փորցած ձիու էդնեմէն մի կանգնի։

Չուստ-չուստ ման էկողը չուստ ([illegible]) կու դաթրի։

Չիքը սատանէն է։ ([illegible])։

Չը ծնած էրեխի համա շուրիր չին կարի։

Չալիշը ([illegible])՝ քունը, աչողալն՝ Ածունը։

Չօլախ ([illegible]) չըլի, կաղ ըլի. թաք ([illegible]) բօլ ([illegible]) ըլի, թուխ ըլի։

Չօրանը ([illegible]) վուր ուզենայ, դօշի ([illegible]) պ... ճիղ կու հանէ։

Չափտ ճանչցի։

Չուստ հիւնդանալ կայ, ուշ մեռնիլ։

Չը ծնած էրեխին անուն չին դնի։

Չունիս փուղ, մտի հուղ։

Չուրս պատը չուրս անգաճ ունէ, մարթու խորուրթը դուս կու տանէ։

Չօրանը ([illegible]) տարածի գլուխն էր վայ տալի, գէլը՝ մնացածի գլուխը։

Չուրն ու գէջն էլ մէտի է էրվում։

Չունէուրութինը փարչէս ([illegible]) մաշիլ էրկտ։

Չի ասի՝ աճկիտ վերևը սիւ ունք կայ։ ([illegible])։

Չարն՝ էնդի, բարին՝ էստի։ ([illegible])։

*Չրին մէկ է կծում, չամչին՝ էրկու: ([illegible]):*
*Չանգլապնի ([illegible]) մի… միշտ թաց է:*
*Չեքիլա ([illegible]) ունիմ ծածկած: ([illegible]):*

*Պստիկ ([illegible]) է ու չստիկ ([illegible]) է:*
*Պարտկը՝ տալով, միզիկը՝ լալով:*
*Պաճելով արա:*
*Պայը շուր կերաւ, թուռնի ակռէքը կտրից ([illegible]):*
*Պաս ուտողը տուրս ու տալիք շատ պիտի ունենայ: ([illegible]):*
*Պառաւը գնաց ժամը, էն էն կրէտը ([illegible]) կծից:*
*Պարտկը յու կու դառնայ, տուն կ'էհայ. ուղտ կու դառնայ, չի*
*դուս գայ:*
*Պանիր ու հացի անունը մարթուն մտէն կու ննգնի:*
*Պառաւը տան բօձի ([illegible]) է:*
*Պանրի դուզը պանրի վրայ է փիքը անում ([illegible]):*
*Պպզած հաց չին ուտի:*
*Պաչ արա մէ անկուժս, պաչ անիմ էրկու անկուժտ:*
*Պարտկեմէն չը վախենողը Աստծմէն էլ չի վախենայ:*
*Պարտկանտիրուչ էրեսը սեւ կու՚լի. լիզուն՝ կարճ:*
*Պատն էլ անգաճ ունէ:*
*Պանիր ու հաց, սիրտը՝ բաց:*
*Պիտի էրկաթը էրկթին սաղ գայ ([illegible]), վուր ետ գայ:*
*Պստկեմէն կցէ ([illegible]), վուր մինձին հասնիս:*
*Պասը պրծանք, ապասը պրծանք:*
*Պարապ մնալեմէն դարդակ բան շինիլը լաւ է:*
*Պստի մարթիք մինձ-մինձ էրազնիր ին տեսնում:*
*Պաս ուտիմ, պաս ուտիմ, թանէ ապաս ուտի՛մ:*
*Պարնին ասին՝ գինի անողտ մեռաւ.—վա՛յ նրա միզկը, կօսէ,*
*թէ չէ, ինձ գինի անող չի պակսի, դուն գինի ասա՛:*
*Պղինձը ([illegible]) վէր ննգաւ, չը կոտրվեցաւ, ամա՛ ձէնը վիր էլաւ:*
*Պանիր ու հաց. կերաւ, գնաց:*
*Պառաւին ք…, գռնիրը կիդ գրին: ([illegible]):*

Պստի հարսին մինձ կ... էին վախեցնում։
Պառաւ ձին գարի չի ուտի։
Պառւին պատիւ դի՛, վուր պառվիս։
Պառաւն իր թանին թթու չի ասի։
Պառկած շանը դաթար տու՛, քար մի՛ գցի։
Պլոտի ծամիս ու բերանը դնիս։ ([illegible])։
Պա՛րզ ջրեմէն չէ։ ([illegible])։
Պճուռս ([illegible], [illegible]) խոմ չէ՞ կտրվլի ([illegible])։
Պատանք ըլի, հաց ըլի. մլթօնի ([illegible]) փուլի հալվա դը՛ր։
([illegible])։
Պարնի ղազար ([illegible]) է։
Պալրապ է էլի դլրա շինողը։ ([illegible])։
Պատանքը պատռվից, դուս էկաւ։ ([illegible])։
Պատիւ չէ՛, պատիժ է։
Պատիւ տվլի, պատիժ առայ։
Պաչ անելու էրեսս թքելու ինչի՞ շինիմ։
Պռաս խոմ չի՛մ, մէկ էլ դուս գամ։
Պպզած վուր հաց ուտիս, սատանէքը կու մօտ ըլին։
Պօղոսը չըլի, Կիրակուան ըլի. Կիրակուսը չըլի, Բախնդուրն ըլի։
Պահապանտ թռիլ է։ ([illegible])։

Ջանն ([illegible], [illegible]) ազիզ ([illegible]) է։
Ջէր (տէր) սարը կու տեսնէ, իժում ձուէնը կու դնէ։ ([illegible])։
Ջուլհակը ([illegible]) աղլուխ ([illegible]) չի ունենա, դար-փունը՝ դանակ։
Ջոմարդի ([illegible], [illegible]) դաղածը ([illegible]) նամարդն ([illegible]) է ուտում։
Ջուրը սաթավեմէն ([illegible]) կու կտրվլի։
Ջան ասա՛, ջան լսէ՛. չօռ ասա՛, չօռ լսէ։
Ջրի էնթի էրեսմէն կցէ՛ ([illegible]), վուր էսթի էրեսը քիզ մնայ։
Ջէր (տէր) էշը չիս առլի, փալանն ([illegible]) իս կարճում։
Ջրի շատ գալը ցամքելու նշան է։

Ջէր ([illegible]) նուրի տիղ արա, խմում հինը դէն գցէ։
Ջուրը վուր մէ տիղ շատ կանգնի, կու հոտի։
Ջուրը վուր քիզ հիդ չը գայ, դուն ջրի հիդ գնա։
Ջանն ([illegible]) է, ինչոր վուր է։
Ջրի բերանը ջուրը տարաւ ([illegible])։
Ջէր ([illegible]) չէ մտի աւազանը, ձեռն է բռնի գաւազանը։ ([illegible])։
Ջէր ([illegible]) չէ ու չէ, խմում դէ ու դէ։
Ջոխին էրկու ծէր ունէ։ ([illegible])։
Ջուրն իր ճանփէն կու գթնէ։
Ջիգրը ջիգր ([illegible]) կու բերէ։
Ջոխին վուր կու վիկալնին, դուղ շունը կու իմանայ։
Ջաղաց մտնողը կու ալրոտվի։
Ջուրը քաղցր է, քանզ նուան ծվէնին ([illegible])։
Ջուր խմելիս, օցը վուր օց է, նա էլ գէթ ([illegible]) չի տա։
Ջուրը դարիդուս ([illegible]) չի գնա, դարիվէր ([illegible]) կէհայ։
Ջէր ([illegible]) վուտիտ տիղ արա, խմում վ...։
Ջուլհակը ([illegible]) պատանք չի ունենա։
Ջուրն իր գնացած տիղովը էլի կէհայ։
Ջրի ու կրակի հիդ բան բռնիլ չի ըլի։
Ջաղացը ջուրն է տարի, չախչախն ([illegible]) է հարցնում։
Ջվալումը ([illegible]) չէր մտնում, խուրջինը ([illegible]) կոխեցին։
Ջրի լազաթը ([illegible]) հուրթն է տեսնում։
Ջուր կայ, կարմունջ չը կայ. կարմունջ կայ, ջուր չը կայ։
Ջուրն ինչի՞ է աւի բաս ([illegible]), թէ խամին ([illegible]) իմ պտռում։
Ջրի վրայ գնացինք, ծարաւ յիդ էկանք։
Ջէր ([illegible]) ջուրը չիս տեսի, փ... իս հանում։
Ջուրը չը պղտորվի, ձուկ չի բռնվի։
Ջան ([illegible]) է, բադրիջան ([illegible]) խօմ չէ։
Ջուրը ջրեմէն կու հանէ։ ([illegible])։
Ջրի պէս գնում է, աւզի պէս մնում է։
Ջահիլի հիդ ջահիլ է, ահիլի ([illegible]) հիդ ահիլ է։

Ջէր ([illegible]) էլ թէ գու՚քայ՝ ([illegible])։
Ջէր ([illegible]) թիւփրը չէ գուս էկլի, թուցնում ըս։
Ջաղցաքար խօմ չէ՞, վուր հիգս ման ածիմ։
Ջուրը գու՚քայ, կարմնջի վրայ կու անց կէնայ, ըս կու մնամ մաթալ ([illegible])։ ([illegible])։

Ռանգմա բախմա, բախտմա բախ։ ([illegible])։

Սէրը սէրով պլտի, քաշքշելով չի ըլի։
Սրտի վուտնիրը կարճ է։
Սիրտն էրվլի ու լիզուն խօսի։
Սար ու ձուր, տ... փուր։
Սարը սարին չի դիփչի, մարթ մարթուն կու դիփչի։
Սուփրէն ([illegible]) գցած, բանն անիծած։
Սուխ ու հաց, սիրտը բաց։
Սուտ է վաղ վի կենալը, թէ Աստուծ չի աչողա։
Սրտի տունն էրվում էր, չէին աւտում։
Սուտ միղին (կամ օրթումին)՝ սուտ թողութին։
Սատանէն հակառակ է։
Սխպտկութինը օխտը այբ ([illegible]) կու պարտկէ ([illegible])։
Սէլը վուր շուռ գու՚քայ, կացնաուրը կու շատանայ։
Սկեսիր ուժը հարսին հերիք է։
Սէրը սէր է բերում, վուրթի է բերում։
Սիրը սովորն ուտէ, թանը՝ մոլորը։
Սրտի սիրեկանը սիրուն կու՚լի։
«Սուրփ Աստուծ» խօմ չէ՞, ըրիք ջէր ([illegible]) տախմ։
Սաղը ([illegible]) գիդէ, մեռլի գլուխը վուրթէնը կ՚օնէ։
Սիրտն արթար լաւ է, քանց միտկը միղաուր։
Սուտը խօմ փուղով չէ՞։ ([illegible])։
Սէլաւի (կամ՝ օղողի) (հեղեղ) բերածը սէլաւը կու տանէ։

Սիրտը վուր կայ, շուշա ([illegible]) է. թէ կոտրվի, էլ վունչցով չի սաղանա ([illegible])։
Սուտը սատանինն է։
Սաղ-սաղ (ողջ) գլուխը ատմարանի տակը մի դնի։ ([illegible])։
Սէլը վուր կոտրվի, խրատ տվող շատ կու՚լի։
Սուտն ու ղուրթը ([illegible]) Աստուծ գիդէ։
Սև էզը վէր ննգաւ, դանկաւուրը շատացաւ։
Սէլաւը (հեղեղ) չուռը ([illegible]) կու կտրվի։
Սամանի ([illegible]) Աստուծն օվ է արթար։
Սովոր գէլն ուտէ լաւ է, քանց խամը ([illegible])։
Սաղութին՝ սուլթանութին։ ([illegible])։
Սատանի ճանփին կայ, Ածու ճանփին չը կայ։
Սրտիտ հէրդ մի ննգնի։
Սովոր ցաւը սրպանէ ինձ, հաջաթս ([illegible]) չէ։
Սուտ խօսողի դադումն ([illegible]) էն է, վուր ղուրթ ([illegible]) էլ ասէ, չին աւտա։
Սար ու ձուրն էլ մէ հաւսար չէ ստիղծի Աստուծ։
Սրտով սիրածը ձեռատուրսի վրայ մալում ([illegible]) կու՚լի։
Սիպտա ակռէք, սև սիրտ։ ([illegible])։
Սուփրա ([illegible]) չիմ, վուր բաց ըլիմ։
Սև ըլի, բօլ ([illegible]) ըլի։
Սանդխտի վրայ մէ-մէ վուտը ([illegible]) դիվլիր կէհան։
Սիպտա շունը բամբկին վնաս է։
Սկեսուրը մեռաւ, տիղը լէնացաւ։
Սիւլին սապունը ([illegible]), խիւլին խրատը ի՞նչ կ՚օնէ։
Սփ խէչն արա՝ տուն մտի. Սփ կիրքն արա՝ ծակ մտի։ ([illegible])։
Սիրտը ճրաք չէ, վուր լուս տայ. Ըծուն է այդնի։
Սէլը վուր շուռ է գալի, հազար բան ին ասում։
Սէլը վուր շուռ գայ, ճանփէն կու դրստվի։
Սիպտա էծը չաղ ([illegible]) գիղիս ([illegible])։

Սև է, թէ գլու է, լիրը նա է։ (գէօզ է բօսդան լէնիլ ...)։
Սատանէն ամեն բանումը իր կուզին (ադէթ) ժաժ է տալի։
Սատկած էշը գին չի ունենա։
Սխպտկի անունը կայ, սևինը՝ համը։
Սուտը սատանի փէշակ (արհեստ) է։
Սուխի քաղցրը չի ըլի։
Սէլը գնաց փէտի վրայ. էրի, էրի. չէրի ու ինքը փէտ է ու փէտ։
Սիրտս սուփրա (սֆրայ) չէ, ամեն տեղ բաց անիմ։
Սողոման իմաստունն էլ չիմացաւ իր վերջը։
Սուտ խօսողի լեզուն կարճ կու՛լի։
Սևագլխի ([illegible]) անէծկը քարին էլ դիփչի, քար կու պատռէ։
Սուրօն (հօտ) վուր չօբան (հովիւ) չունենայ, գէլը կուտէ։
Սատանի շինածը Աստուած կու քանդէ։
Սև օցը տեսնողը սև թօկեմէն (պարան) կու վախենայ։
Սէրը սուր է դառի, արունը ջուր է դառի։ ([illegible])։
Սուտը վուտը կ՚օնէ, ամմ չի գնա։
Սուտը կու վուտնաւորվի, չի գնա։
Սուրօէմէն (հօտ) փախած օխչարը գէլը կուտէ։
Սատանէն իր տունը չի քանդի։
Սիրէ ինձ, սիրիմ քեզ։
Սիրտս նիղանայ թէ չէ՝ եալլի տնւ (խաղալ)։
Սխպտա միսն էրեվալեմէն, սև կարկտանը լաւ է։
Սարի անհուտ ծաղիկն էլ իրա տեղումը իր փառքը վարթի հէդ չի փոխի։
Սարը սարեմէն խռովել է, նա կի վունչեչ խաբարութիւն (համբաւ) չունէ։
Սատանէն վա՛ւնց մեռել է, վա՛ւնց կու մեռնի։
Սարերու օրոտալու մագլխար ([illegible]), ձուրերն են օրոտում։
Սագ անողին խաղ անող պլոտի։
Սաղ (ողջ) ըլիմ, Բաղդադ ըլիմ։

Սովորին մի պակսեցնի, անսովորին մի սովեցնի։
Սխուն ու սիպտակը բաղնասումը կու էրեվայ։
Սառած օցը առաջ իր տաքցնողին կու կծէ։
Սափրէն ([illegible]) մէկ է, միչինը՝ հազար։
Սև իմ, սևակած իմ, խանի աղաքին ([illegible]) վէր էկած իմ։
([illegible])։
Սև օխչարը դմակ չի ունենա։
Սիրը քաշիլ է, թանը թողիլ է, թանամանը ինձ է տալի։
Սուխն ու սխտորն էլ օխտը տարի բարիշեցան ([illegible])։
([illegible])։
Սըտի մանգղիլը ([illegible]) կարճ է։
Սև շունն էլ, սիպտա շունն էլ, էրկուսնեվէտ շուն է։
Սև ճիզնին դանակ չըկայ։ ([illegible])։
Սատկած էշ է պտռում, վուր նալնիլը ([illegible]) հանէ։
Սատկած հաւ է պտռում, վուր պլոկէ ([illegible])։
Սատկած ձիու նալն ([illegible]) է պտռում։
Սարդլինց կարէն դառաւ էլի։ ([illegible])։
Սատանէքը ռումբիքը ([illegible]) շուռ էին տալի, օչով տիղ կի գինի չըկէր։
Սատանի անգաճը խուլ ըլի, իս էտ բանը չիմ իմացի։ ([illegible])։
Սարի էղնէն Սփ Սարքիս ([illegible])։
Սատանի ձիու վրայ է նստի ([illegible])։
Սև կատու անց կացաւ նրանց մէչըլ։ ([illegible])։
Սըտեմէս ջուր խմեցիր։ ([illegible])։
Սալեան գնաց ձուգ բերելու ([illegible])։
Սափրումը ([illegible]) թիքա ([illegible]) չը պիտին թողնի։
Սատանի անունը մի իշի վախտ ու բէվախտ ([illegible])։
Ցև իմ, սև իմ, սևակած իմ, խանի աղաքին ([illegible]) վէր էկած իմ. սիպտակ իս, սիպտա թան իս, շան աղա-

քին վէր էկած ի՞ա ([illegible])։
Սրանք էն օխչարը չին, վուր դմակը հալվի, իղ դառնայ ([illegible])։
Սատանէն վրէն նստիլ է (կամ կապիլ է), գիմիշ չէ անում ([illegible])։ ([illegible])։

Վուրփին մէ բլիթ, էն էլ ծակ։
Վուրին՝ աւար, վուրին՝ խաւար։
Վո՞ւր մատո կտրիս, վուր չըցաւի։
Վադ շունը վո՞ւնց ինքը կուտէ, վո՞ւնց ուրիշին կուտեցնէ։
Վուրփին ումիկ (յոյ-) տվող շատ կայ, բլիթ տվող՝ քիչ։
Վուրթին արա (կամ գնայ)՝ հէրը հիղը, տունն (կամ ապրանքն) արա (կամ գնայ)՝ տէրը հիղը։
Վա՜յ քի ջան ([illegible]), գլխի սուտ է էլի։
Վիրչն է գովելի մարթուս։
Վադ մարթը Զադիկ օրն էլ վադ կու՚լի։
Վուրդիոր կառ, ծանդր կա՜ց։
Վա՜յ ունիլն է, վադլախ ([illegible]) չունիլը։
Վուրթին պէտկ է բահամ դայ ([illegible])։
Վա՜յ՝ հախին ([illegible]), վա՜յ՝ նահախին ([illegible])։
Վա՜յ մէկի տիրուչը։ ([illegible])։
Վա՜յ մեռնողի մեղկը։
Վադուցվայ կնդգիրքը քար ու կիր էին։
Վադուցվայ ծառերը կտրտվեցաւ։ ([illegible]);։
Վունցոր տան պահողը բօձին ([illegible]) է, էնէնց էլ տան մինձը պառաւն է։
Վո՜ւնց հարսնիքը կու պակսի, վո՜ւնց սուքը։
Վուրթի կի չին առի, օրթունք ին առի։
Վուրդիոր բարկեցաւ, էնդի կտրվեցաւ։
Վո՜ւր տղամարթը գու՚քայ հիմիկվայ կնդգերանց մօդ։
Վիրչվան բանը փիքը անելու է ([illegible])։
Վարթն էլ փուշ ունէ։

Վարթ քաղողի ձեռնիրը փշով կու ծակծկվի։
Վադ լիզուն ածիլեմէն սուր է։
Վադ պահողը գուղի ննգիրն է։
Վունցոր քօռն (կուր) Ածու համա (կամ՝ Ածուն մոտիկ կու տայ), էնէնց էլ Աստուծ քօռի համա։
Վազող ձիու գլխին չին խփի։
Վուրդիոր դրիլ իս, էնդի պտուղ։
Վունցոր գոռգռում է, էնէնց չէ կաթկթում։
Վուրփի տէրն էլ Աստուծ է։
Վէր ննգածի վի քաշող չի ըլի։
Վադ բանը վաղեմէն է առաջ գալի։
Վունցոր վի կուլար (կամ՝ առիլ իս), էնէնց էլ տու։ ([illegible])։
Վուր տնասուրվի, խիլքը գլուխը գու՛քայ։ ([illegible])։
Վա՛յ քի քաղաք, վուր մանուկը դաղամէր ըլի։
Վաղ ուէր կէր, հիմի անուրութին է։
Վախտը վախտին ([illegible]), թէ չէ, ժամանակն անց է կենում։ ([illegible])։
Վադ ասողին՝ լաւ լսող։
Վուրդի բարկի, էնդի կտրվի։
Վուտնատուրին շտապի։ ([illegible])։
Վէր իմ թքում՝ միրուքս է. վիր իմ թքում՝ բիխիրս է։
Վո՛ւնց կուտիմ քու կօմշին ([illegible]), վո՛ւնց կու քշիմ քու գոմշին։
Վուրդի գուրք կայ՝ վիրք չըկայ, վուրդի վիրք կայ՝ գուրք չը կայ։ ([illegible])։
Վո՛ւչ լուցանք, վո՛ւչ լուսի հարեվան դառանք։
Վիլա-վիլա, ննգիրս էկաւ։
Վո՛ւչ աւատամ սուտ Քրիստուսին։
Վուրթին վուր ձեռի գլուխը ([illegible]) ձվաձիղ չինէ, էլի իր մօր պարտկեմէն չի դուս գա։
Վուր կու՛լի, կու՛լի մարթ։ ([illegible])։
Վո՛ւնց էրեխի ըլիլը կու իմացվի, վո՛ւնց ճանփուրթի գալը։

Վո՛ւնց կուտին, վո՛ւնց կուտեցնին. կու դնին, կու հուտեցնին։ (Վէ բան բնայուլէ համէն)։

Վո՛ւնց սուխ իմ կերի, վո՛ւնց սիրտս էրվի։

Վո՛ւնց ես քեզ քսու (ծոյր) ասիմ, վո՛ւնց դուն ինձ՝ քաչալ (ծաղուտ)։

Վարծկը շատ գամ մեղկ կու ծնանի։

Վա՛յ էն մարթուն, ում խիլքը պակաս է։

Վո՛ւնց մէ՛ ասի, վո՛ւնց մէ՛ լսի։

Վուրփին ասաւ՝ ես կու ապրիմ. Աստուծ ասաւ՝ Ես վո՛ւրդի իմ, վուր դուն կու ապրիս։ (Աստուած էր հոգայ որբին համար)։

Վուր շուննն էլ ուզենան սըպանի, կ'օսին ցոփիան (կատաղած) է։

Վուրդիոր հաց կայ, բերան չըկայ. վուրդիոր բերան կայ, հաց չըկայ։

Վարծկը մեղկ կու բերէ։

Վունցոր ծանդըրացրիլ ին, էնէնց էլ ամեն բանը ծանդր է։ (այծմ)։

Վա՛յ տէր, վա՛յ անտէր։

Վարթապիտին ասին՝ վուրթիտ մեռնի. ասիլ է՝ ես վուրթի չունիմ, ամա մարխիաթտ (խաչանախճարանեան) մարխիաթ չէ։

Վուրթի չունիս՝ հոքի չունիս։

Վուրդի հաց, էնդի կա՛ց։

Վուրդի գինի, էնդի քնի՛։

Վազող ջուրը կու դաթրի, նրա լիզուն դաթար չունէ։ (շարախօսի համար)։

Վարթապիտի խազեմէն անց կացաւ։ (չափէն անցնիլ)։

Վունցոր առիլ իմ, էնէնց էլ ծախում իմ։ (լսածս եմ ասում)։

Վո՛ւնց աստառ ունէ, վո՛ւնց էրեսի։ (անամօթ մարդ)։

Վո՛ւր մէկն ասիմ։ (մոլորուել է)։

Վո՛ւնց հէր էթող, վո՛ւնց մէր։ (անհոգի չէրեւ անծնունդ)։

Վա՛յ նրա մեղկը, օվոր քեզ չէ ճանչնում։ (խորամանկ մարդուն)։

Վուրփի հուլ (Անկոգին ոչը, ու ետև օյը խաղաղնում է) է։ (ասում են, օրինակ՝ անպատաս կեանպատուղ համար)։

Վա՜ս էկաղրէրա։ ([illegible])։
Վարթ էր, փշեմէն դուս բերի։ ([illegible])։
Վո՜յ քու պէծին։ ([illegible])։
Վա՜յ քու տխրուչ միղկը։ ([illegible])։
Վա՜յ քու տղխո տղայ։ ([illegible])։
Վո՜ւնց աղո է պակաս, վո՜ւնց մաղո։ ([illegible])։
Վո՜ւր ջուրը ննդնիմ։ ([illegible])։
Վո՜ւնց էծ ունիմ, վո՜ւնց ուլ, սատանի անգաճը խուլ։
Վո՜ւչ առ ունիմ, վո՜ւչ տուր. սատանի անգաճը խուլ։
Վո՜ւնց ինքն է ուտում, վո՜ւնց ուրիշին ուտեցնում։ ([illegible])։
Վո՜ւնց ապրեցնում ին, վո՜ւնց սըպանում։
Վո՜ւնց տալըւ, վո՜ւնց էրկի ([illegible])։
Վո՜ւնց դէմն է, վո՜ւնց՝ դէնը։ ([illegible])։
Վո՜ւնց լաւ է, վո՜ւնց անբախտ։ ([illegible])։
Վո՜ւնց Ռաէս է, վո՜ւնց Մօսէս է։ ([illegible])։
Վո՜ւչ տանունը գիդէ, վո՜ւչ տիղինը։
Վո՜ւչ գնաս Խգիպտոս։ ([illegible])։
Վերի թաղ, ներքի թաղ. բարով մնաս միջի թաղ։ ([illegible])։
Վո՜ւչ էս կրակն է ինձ էրում, վո՜ւչ էս ջուրն է ինձ խիղտում։ ([illegible])։
Վո՜ւնց կանանք հայր ու Վուրթի սսի նրա առջիւը։ ([illegible])։
Վո՜ւնց ամրի դուռայը, վո՜ւնց ճանփուրթի գալը, վո՜ւնց կնիկ-արմտի ազատվիլը։ ([illegible])։
Վո՜ւնց հառւ խունգ իս, վո՜ւնց թուրքի ծխանելիք։
Վա՜յ նրա միղկը, օխոր նրա ձեռը կու ննգնի։ ([illegible])։
Վո՜ւնց մեռած է ու վո՜ւնց թաղած։

Տանու աղջիկը անկտրիլ խաբբուղակ ([illegible]) է։

Տանեմէս դուս էհամ, բախտեմէս ո՞ւր էհամ։

Տունս էնդուր կու տամ քըրհօլ ([illegible]), վուր կտուրը էս չը քերիմ։

Տանու գուղին ինչն օհտա ([illegible]) գու՛քայ։

Տղի վուտի ցխին էլ լաւ է։

Տան մինձը մինձ բան է։

Տանդիկնի ձեռը դուղ պիտի ըլի ([illegible])։

Տղայ ունենամ ջիրաուր, աղչիկ կու ճարիմ ջիղաուր ([illegible])։

Տէրը տարածն էր լալի, գէլը՝ մնացածը։

Տանու տէրտէրին «օրհնեա տէր» չըկայ։

Տու օսկէգօտկաուրին, մի՛ քննի։

Տանձը կութեմէն է փթում։

Տասը ջէր ([illegible]) չափէ՛, մէկ կտրէ՛։

Տանտէրը շանը թաթա չը պիտի անէ։

Տարէնը մէ Զադիկ, էն էլ Նաւակատիկ։

Տաշին ([illegible]) կու սորվեցնէ շուշպարը ([illegible])։

Տղէն շան փայ ([illegible]) է դառնում։

Տղամարթը վուր աւար-խաւար կու՛լի, կնիկարմատն էլ խարաբ ([illegible]) կու՛լի։

Տունը միրն է, խօսկն էլ միրը։

Տանձը կութ ունէ, մարթը փուտն ունէ։ ([illegible])։

Տանը կատուն էլ լաւ է, վուր սիրուն ըլի։

Տվողն Աստուծ է։

Տատն ամեն օր քաղա ([illegible]) չի ուտի։

Տանու աղչիկը միշտ լաւը կու՛լի. մարթանց տունը քուրախանա ([illegible]) է, էնդի պիտի աղչիկը դուս կանդնի։

Տանտէրը վուր տանը չի ըլի, կատվնիրը վշտլի ([illegible]) կու տան։

Տէրտէր արա՛ գիղը գցէ. թէ չապրի՝ տա՛ր, գիղը (կամ՝ Քուռը) գցէ։

Տանը՝ հալիլի, դուռը՝ ածիլի։

Տիրաուրինը տէրն է, անտէրինն էլ՝ Աստուծ։

Տիրատուր ու զօրատուր։
Տունտ վուր կրակ ընգնի, ձեռնիրտ դէմ արա։
Տան պահողը բօձին ([illegible]) է։ ([illegible])։
Տանտիրուչ աղն էլ աւելի կէհայ։
Տաք կերակուր կերայ, բերանս էրվեցաւ. հիմի մածնեմէն էլ իմ վախենում։
Տանձն իր տակը կու վէր ընգնի։
Տարի կայ՝ օրին է պահում. օր կայ՝ տարին է պահում։
Տիրուչ փուղն է գնում, նօքրի (Ծ---յ) հօքին է դուս գալի։
Տիրատուրին տէրն է պահի. անտէրին գէլն է տարի։
Տունը լին է ուզում. տիղն լին է ուզում։
Տայուն՝ տու, առնէյուն՝ առ։
Տափումը գէլն էլ վուր Պ՚օրդ…նինց ասկեմէն ջանդակ (փէշ) տեսնէ, ձեռը չէ տալի. վա՛յ թէ գլխիս դալլի (ջէճ) դառնայ, կօսէ։
Տէրտէրին ճիլօրումը ([illegible]) կու ճանչնան։
Տկլուր ([illegible]) էկիլ ինք, տկլուր կէհանք։
Տաւարածի խնամին հուրթարածը կու՚լի։
Տանը չունիս փոշի, դուս իս գալի խօշի ([illegible])։
Տանու խօսկը դուսը չի պէտկ գա։
Տան փեսայ՝ շան փեսայ։
Տունը՝ միրը, խօսկը՝ միրը։
Տա՛լ, քի՛զ իմ ասում. հա՛րս, դու՛ն իմացի։
Տկլուրի մտկումը օրէնը տասնուհինգ գազ կտաւ է անց կենում։
Տուն քանդողի տունը Աստուած կու քանդէ։
Տանը՝ գահանայ, դուսը՝ սատանայ։
Տանը հարս մեռնի, դուսը՝ փեսայ։
Տանը՝ սատանայ, դուսը՝ գահանայ։
Տանու խօսկը չօլումը ([illegible]) չի անց կենա։
Տզամարթու նամուսը ([illegible]) գդակն է. կնիկարմտինը՝ չի-քիլէն ([illegible])։
Տանձն ի՛նչ արաւ, վուր կուլթն ի՛նչ անէ։

Տարէ ցտարվան վրայ, տարին գլխէ։ ([illegible])։

Տանը ուղտ կուտին, հալսին ու աղջկան չի հասնի։ ([illegible])։

Տանձ չիմ, վուր հասնիմ. խնձուր չիմ, վուր կարմրիմ. ինչ կամ՝ կամ։

Տուտուց տուտուց ([illegible]), կարմիր կտուց. համ ([illegible]) պտտուց ու համ ուտուց։ ([illegible])։

Տէր Ղիմաօնինց տէրօղորմէն դառաւ էլի։ ([illegible])։

Տարէք, տվէք Տէր Օհանին։ ([illegible])։

Տեանինք, ծէրը վճուրգի կու կտրվի։ ([illegible])։

Տիղը ([illegible]) թող ջուգ գցէ։ ([illegible])։

Տիրացուին գինի ածէք։ ([illegible])։

Տէր Աստուծ, հոքիս սատաններու փայ ([illegible]) մի անի։ ([illegible])։

Տունը վուր կրակ տաս, շուրահուտ չի վիր ըլի։ ([illegible])։

Տանելիս նօքար ([illegible]) է, բերելիս՝ աղա ([illegible])։ ([illegible])։

Տաշիղ է քու արած վարծկը, ջրի էրեսը կ'օնէ։ ([illegible])։

Տեանինք, ծէրն ու՞ր կերթայ։ ([illegible])։

Տղայ են, թէ աղջիկ։ ([illegible])։

Տեխուրը ([illegible]) մէ փուղ մի շինի։ ([illegible])։

Տան կատվի պէս իրա ժամանակին գալիս է ճաշի վախտը։ ([illegible])։

Տաք հացի հուտը մեռլին կէհայ։ ([illegible])։

Տան տղամարթը իր տան մշակն է։

Տունը քիզ լիմ բախշի, կտրեմէն ման արի։ ([illegible])։

Տէր Նիկողոսին ծմծման ([illegible]) ծղարօն ([illegible]) է գառի։ ([illegible])։

Ցան անզած ունէ։
Ցաւը տալիս է, դարմանն էլ հէդը։ ([illegible])։
Ցամաք գդալը բերանը չէ մտնում։
Ցամքած արխումը ([illegible]) էլի ջուր գու՛քայ։
Ցաւը լնուանն ([illegible]) է քաշի։
Ցամաք գդալը բերանը չին տանի։
Ցուն իր գլուխը լուս կու զցէ, թէ վուր դուն վրէտ չըդըրիր ([illegible])։
Ցաւը քաշողը գիդէ ([illegible])։
Ցռան կովը նախիրի անունը կու կոտրէ։
Ցորնի հաց վուր չունիս, ցորնի լիզու խօմ ունիս ([illegible])։
Ցիցիանի գալի ([illegible]) է։ ([illegible])։
Ցերեկը խօմ կատուն չէ կերի ([illegible])։

Փուչ է էլի էս աշխարքը։
Փլան ում առչևն է, լիշտահն ([illegible]) ծվ ունէ։
Փլան ումն իս տվլի, լիշտահն ում։
Փուղը դժուխկին լուս է տալի։
Փիս ([illegible]) պահողն է առաջի գուղը։
Փախի էն ջրեմէն, վուր վունց կու խշշայ, վունց կու թշշայ։
Փուրը փուրին շահ չէ։
Փուղը ձեռի կլիղտ է։
Փուղին պահիլ գուզէ։
Փախչիլն էլ մէ հունար ([illegible]) է։
Փուղն ամենքն ին աշխատում, բանը պահիլն է։
Փուղը միր պստի Աստուծն է։
Փողը փուղ կու աշխատէ։
Փուրտ մի պուկ տար

Փքլի ([illegible]) հիդ մի՛ նստնի։
Փէշակը ([illegible]) ծմծման ([illegible]) ծղալօ ([illegible]) է։
Փարա ներքին է, վերևը խօմ չէ։
Փուշը մէ-մէկ մէ-մէկ կու հանվի, մէքաշ ([illegible]) չի ըլլի։
Փառք Քիրդ, Աստված։
Փուղը մուրթը տիղը լուս կու՛տայ։
Փուղն ուժն է տվլի, հունարն ([illegible]) ծվ ունէ։
Փարին ու հարը մէկ է։
Փառք ու պատիւ սիրողը լուսնիակի հիդ կու ման գայ ու
    արեգակի հիդ։
Փարա խօմ գլխեմէտ բացը չէ։
Փախն օխտը տուն է պահի։
Փլաւ ուտիլն ամեն մարթու բան չէ։
Փէտի մէջը օրթունքն իրմէն բաշամ գու՛քայ ([illegible])։
Փիս ([illegible]) խօսկն ու փիս կնիկը տիրուչն է։
Փուղը՝ ծլնդ, բանը՝ տլնդ։
Փուղը ձեռի կիղտ է, ըլլանաս՝ կէհայ։
Փորցանքս չէր գա մարթուս գլխին, թէ վուր ճակտին չըլէր
    գրած։
Փափսալը տուն կու քանդէ։ ([illegible])։
Փիս ([illegible]) օրը կու լուանայ, փիս մարթը չի լուանա։
Փուղը ձէն է տալի։
Փախի՛, պրծնիս։
Փուղի ձեռին ինչ կայ դժար։ ([illegible])։
Փուրը հուրի նման է, ինչ դէվէր ածիս,՝ չի իմանա։
Փիս ([illegible]) շանը մէ քարն է պակաս։
Փորցած սատանէն լաւ է, քանց չըփորցած հրեշտակը։
Փիս ([illegible]) խաբարը ([illegible]) չուստ տիղ կու հասնի։
Փուղ չիդ գցէ՛ ([illegible])։
Փուղը գնում է, ամա ապրանքն էլ ապրանք է դառնում։ ([illegible]
    [illegible] է)։
Փուղը կու բազմանայ։ ([illegible])։

Փուղ ունեցող մարդու խօսկը ամեն տեղ առաջ է։
Փեսէն զոնքձի սիրելան է։
Փուչ մամի ([illegible]) վուրթին փուչ կու՚լլի։
Փէտէ կրակ, մարխէ ([illegible]) ճրագ։ ([illegible])։
Փթած կօմշու ([illegible]) պէս դուս կանգնեցաւ։ ([illegible])։
Փիս ([illegible]) տէքէրկնդդերանց պէս ի՜նչ իք կուլում։
Փուղ է, խուղ խօմ չէ՞։ ([illegible])։
Փչէ՛, գէօ։ ([illegible])։
—Փլաւ էլ ունինք։ «Փլաւը դուք ունիք, մաղէն ([illegible]) ես ունիմ»։
Փառք Քու ողորմութէնին, Աստված։
Փլաւը միշտ լաւ է՝ խան ([illegible]) ձիր տանը, խան միր տանը։
Փուղ է՝ կու գնայ. կուտ է, կու մնայ։
Փափէն ([illegible]) ինչկլի բուղը ([illegible]), շիլավլաւն ինչկլի դուռը։ ([illegible])։
Փէշքշի ([illegible]) ձի է։ ([illegible])։

— Քի՞չ, ո՞ւր ես գնում։ «Ջատի մօղ»։
Քինթը պռնգեմէն ([illegible]) չի կտրվի։
Քիչ ուտողը շատ կուտէ, շատ ուտողը ք.. կուտէ։
Քարն իր տեղը ծանր կու՚լլի։
Քարը վուր վի կալնիս, զուղ շունը կու իմանայ։
Քաչալը ([illegible]) վուր դիղ գիդենայ, առաջ իր գլխին կ՚օնէ։
Քունը քաղցր է։
Քնեմէն քաղցր բան չըկայ։
Քունը քուն կու բերէ։
Քնածն ու մեռածը դիփ մէկ է։
Քօռ ([illegible]) բախտ։
Քօռի ([illegible]) վրայ շիլը լաւ է։

Քանի հաքնիս ալ ([illegible]) ու ատլաս ([illegible]), էլլի կ'օսին՝ Միխլանջունց հալս։

Քարափի տակը ճալթ քար ([illegible]) շատ է ննգած։

Քուրն աղբուրը ծիծ կուտայ. աղբէրն աղբուրն ու քվիրը չի տա։ ([illegible])։

Քամու բերանը քամին կու տանէ։

Քիչ մի քնի, մինձ էրազ մի տեսնի։

Քիզ տէխ, ինձ օղորմա՛ ([illegible])։

Քանի թոնդիրը տաք է, հացը կուղը տու։

Քարն էլ ձեռւին (կամ՝ ինքն) ունէ, կակալն (ճէվիզ) էլ։

Քու անըլխտութինը քիզ կու մնայ։

Քուրը մեռնի աղբուր համա, աղբէրը մեռնի ուրիշի համա։

Քրիստոսին աճկով չըտեսան, խիլքով ճանչցան։

Քինթն էրեսեմէն վէր գու՛քայ (կամ՝ կու կտրվի՛, կամ՝ կու վէր ննգնի՛)։

Քրթամը ([illegible]) մուլթ տիղին էլ (կամ՝ դժուխկին էլ) լուս կու տայ։

Քիչ բարցէ ու չուստ ([illegible]) չիդ դառնի։

Քամբախտութինը մէկս մէկու վրայ է գալի։

Քամբախտութինը քամբախտութէնի վրայ է գալի։

Քիչ խօսի, շատ լսէ։

Քօռ (քօր) ձիուն՝ քօռ նալբանդ ([illegible])։

— Քօռն (քօր) ինչ գ'ուզէ։ «Ջուխտ ([illegible]) աճկով լուս»։

Քամին ասաւ մարաքին՝ դուռտ բաց արա՛, դարման տուն ածիմ. ասաւ՝ վո՛ւնց քու բերանը գ'ուզիմ, վո՛ւնց քու տարածը։

Քօռ (քօր) հաւքի ([illegible]) բունը Աստուծ կու շինէ։ ([illegible])։

Քաղցր լիզուն օցն իր բնէն կու հանէ։

Քչին ղաբուլ արա՛ ([illegible]), վուր Աստուծ շատ տայ։

Քանի էլ գ'ուզէ աճկը մինձանայ, ունքեմէն բարցր չի դնա։

Քանի պստիկ էլի, մինձեմէն էլի վախենում. էփոր մինձացայ՝ պստկեմէն։

Քունը վուր չասիմ, ինչով էրիմ քիզ։ ([illegible])։
Քաղցած օջով չէ մնալ։
Քաղցը սամ, քաղցը լսէ. ջան սամ, ջան լսէ։
Քրիստոսուն անց կացաւ, սաաւ՝ գոնքածը փեսի գերին է նստած։
Քանդ սսիմ ու ամանչիմ. հաղիր ([illegible]) չա-
սիմ ու պրծնիմ։
Քու ծառը ծարուն մէ թողնի, ուրիշինը մէ ջրի։
Քուրն սսաւ՝ աղբէր ունիմ. աղբէրն սսաւ՝ քուր չունիմ։
Քիչ խօսի, լաւ խօսի։
Քէնուն մաշանա (պատճառանք) է արի, խարի (օտարական) տխս է
դնում։
Քնածը քօռ (կոյր) է. դօվլաթը (հարստութիւն) զարթուն մար-
թունն է։
Քուռակը դէդի (մայր) առջիւը տուտինգ արաւ, գէլը տարաւ։
Քիչ խօսիլն ու քիչ ուտիլը օջովին վնաս չէ տվի։
Քչնմէն կցէ, վուր շատին հասնիս։
Քօռը (կոյր) թէ գուզ էստի, թէ գուզ Բաղդադ։
Քաչալը (ճաղատ), քօռը (կոյր), չօլախը (կաղ) քօսէն (անմօրուս)
ու շէկը խարամազ (խաբեբայ) կու՝լին։
Քիզ էնպի էլ տեսանք, էստի էլ ինք տեսնում։ ([illegible]
[illegible])։
Քիչ խօսիս, շատ կու լսիս։
Քօռի (կոյր) ինչ վէջն (պէտք) է, թէ մումը թանգ է։
Քու ուստէն (վարպետ) իմ աշկերտն է։
Քօռ (կոյր) (կամ օրպակաս) չիմ ու ջխտի ([illegible]) հատ։
Քու խօսկը մուհր (կնիք) խօմ չէ։
Քու տէրն էլ կ՚օսէ, թէ նախրումը էշ ունիմ։ (անշնորհք մար-
դուն)։
Քիչ էինք, դա էլ էկաւ, աւելցաւ։
Քու հօր ճուրտը ([illegible]) խօմ չիմ։
Քէփ արա, փլաւ էլ ունինք։
Քրիստոսի շապիք խօմ չը դառաւ։ ([illegible])։

Քամին կու վի կենայ։ (ստախօսին)։
Քրիստոսի սուք է իմ ջիբումը (գրպան)։ (դատարկ է)։
Քու շաքարն էլ չիմ ուզի։ (ատելի մեղրդ)։
Քու սովն իմ փուրը դցէ։ (խեղճը՝ հարուստին)։
Քիզ ծով է ասում թէ՝ արի, միր կալը չափէ։ (Ձեր ծովն Ձեզ Ձ՝ խառնուեր)։
Քու լիլիցի փուրը դցէ էտ խօսկը։ (ձեռքի խառնուրդին պահէ)։
Քռան ու մէ մատը ցից է արի ու բոլբուղնիր (հրաման) է անում։ (պարապ մարդուն)։
Քնթեմէն ննգած հօր նման է։ (շատ նման)։
Քու աճկը քիզ լուս չէ տալի։ (ուրիշին է լոյս տալիս)։
Քունը նիղ արա, լինձ տիղ արա։
Քիզ էլ մոիկ արա ու քու արարմունքին էլ։ (փորձիր)։
Քու տունը չը քանդվի։ (օրհնանք ձեւ է, որ ասում են)։
Քու տունը չը ծակվի։ (նոյն)։

Օվ չուստ (շուտափոյթ), նա կուշտ։
Օվ կու խաղայ, նա կու կաղայ։
Օվոր շտապի՝ նստի, հանգչի։
Օվոր քու բարը (հաւասար, նման) չէ, նրա հիդ մի ձքվի։
Ուշ ըլի, նուշ ըլի։ (նուշը ուշ է հասունանում)։
Օվ տուն չէ շինի, բօձիքը (սիւն) բանովի գլիղէ (ճարծել)։
Օվ ալարի (դանդաղի), վօւչ դալարի. օվ չ՚ալարի, նա դալարի։
Ում մատը մլիղրումն է, առաչ նա կու լպստէ (լիզել)։
Ուրիշի ձեռով փուշ քաղէ։
Ուրիշի կերի վրայ մի նստի։
Ուտէ վուրթին, վճարէ հոքին։
Օցի ճրէլութինը (խորամանկութիւն) ղրսեմէն է, մարթունը՝ ներքսեմէն։
Ուրաք կի մի ըլի, խէրխի (աղոյ) էլի. գլխի քու կուռը (ճոչ) մի տաշի, վուրը դէսն արա, վուրը՝ դէնը։

Օվոր միր էշը կու՚լի, մինք նրա փալանը (հ–ֆ–)։
Ուղտին ասին՝ կօզակդ (––դ––) ծուռն է.—Ի՞նչս է դրուստ, կ'օսէ, վուր կօզակս ըլի դրուստ։
Օվոր փուղ ունէ, խօսկը նրանն է։
Օվոր էստումէն դէնը տուն պահէ, թո՛ղ նա պարծենայ։
Օցն ամեն տեղ ծուռն է ման գալի, իր բունը մտնելիս կի՝ դրուստ։
Ուղտին գդալով ջուր է տալի։
Ունեուրը չունեուրին պարտական է։
Ուրիշի համա փոս մի՛ փորի։
Ում հացը կուտիմ, նրա էշը կու քշիմ։
Ուրիշի փուրն ինձ ի՞նչ շահ։
Ուրիշի միզկը մի՛ վի կալնի։
Օվ ումը կու սիրէ, լաւը (կամ՝ նրա սիրունը) նա է։
Օվ ինչ գիդէ, ի՞նչ կու դուս գայ ինչեմէն։
Ուրաքն իր կուռը (է–շ–) կու տաշէ։
Օգորմի ուտողին, վո՛ւչ օգորմի բըլթողին։
Ուղխարը (վր. –ծեր–––բե–ն) օչովին չի մնա։
Օչով չասէ, թէ իր ճրաքը ինչկլի լուսը լուս կու՚տայ (կամ՝ վառ կու մնայ)։
Ուղտի շուշպարը (խ–շ) կարմնջի վրայ կու էրեվայ։
Օխտր հարրի էփած փափէն (խ–շէլ) աղի կու՚լի։
Ուրիի (հըէ–յ) հացն ուտիս, ուրիի համա թուր տա՛ս։ (հ–––փ–ր–ն–բե–ն)։
Օ՞վ է իմացի իր վերջը, վուր դուն իմանաս։
Օրը գնացած, շառը (չ–ր) մնացած։
Օխչրի դմակն իր համա բեռը չէ։
Ուշ գթայ, չուստ (չ––) կորցրի։
Օսկին պստիկ է, գինը մենձ է։
Օրհնեալ է գօրութինը Քրիստոսի։
Օրհնեալ է Աստված։
Օխնվի Քու դադաստանը։

Ուղտն ինչքան գ՚ուզէ մէր ննգնի, կաշին մէ իշարիւը կու գառնայ։

Ուրիշին հաղորթեցի, իս անհաղուրթ իմ մնանում։

Օցն իր շապիկը կու փոխէ, խասիաթը (բնութիւն) չի փոխի։

Ուրիշի դաւակը քիզ վուրթութին չի անի։

Ուժով բաց արած վարթը հուտ չի ունենա։

Ո՞ւր է էն աչը, վուր ռունէ խաչը։

Օխչարը քանի էլ մորթին, էնքան բազմանում է, չունքի (որով-հետեւ) վուր Աստուծ օխնիլ է։

Օսկին մութը տիղը լուս կու տայ։

Օրը մթնանայ, ցաւը շատանայ։

Ով գլխունին կու փտնէ, ինքն է առչի փտնելուն։

Ով քիչ է փորցի, քիչ էլ գիդէ։

Ո՞վ գիդէ, թէ ո՞վ է դադում, ո՞վ ուտում։

Ով թուր չէ վի կալի ձեռին, թրի ջաղըն (ջրաղ) ի՞նչ կու իմանայ։

Օվոր ծնողն ուրանայ, էրկու աճկով կուրանայ։

Ո՞վ գիդէ, թէ էքուց միր գլխին ինչ է գալացու։

Օվոր թամբալ (ծոյլ) է, թո՛ղ նա դարդ (ցաւ) անէ։

Ուզողին՝ մէկ. չուզողին՝ տասը։ (ով ուզում է տալ, չէ՛ ուզելով էլ կը տայ)։

Ուրիշի աճկը քիզ լուս չի տա։

Ումնոր լաւութին արիր, նրամէն մուղայիթ (զգոյշ) կաց, վուր վաղութէնով չը վջարէ։

Ուշանալ կու՚լի, ուրանալ չի ըլի։

Օվոր շատ կու ջոգջգէ, փիս (վատ) կու խուլլի (չեն տանելիս)։

Օրը նուր, բանը նուր։

Ով վուրթի չէ բերի, գթնովլի գլուխ (խործել)։

Օվոր քչին ղարուլ կ՚օնէ (բարեխնամուլ), շատ կու գթնէ։

Ուղտն ասիլ է, թէ չըլէին չոքեցնում, աշխարքս կու վի քաշէի։

Օվոր իր ունեցածով գուհանակ չէ, ունեցածն էլ կու կորցնէ։

Որ դաղում ենք ([illegible]), որ ուտում ենք։
Ուրիշի հացին եղ քսող չի ըլի։
Օցի սիւլին էլ նալլաթ ([illegible]), սիպտակին էլ։
Ուրիշի համա հուր փորողը առաջ ինքը մէջը կու ննգնի։
Որ է, կու անց կենայ։
Որը կերթայ, չարը կու մնայ։
Ուշ քնէ, վաղ վէ կաց։
Ունիս՝ հոգիտ շահէ, օրտ խիլթարէ։
Ովոր կնդայ խիլքի հետ է գնում, նա էլ կնիկարմատ է։
Ո՞վ է իմացի, վուր տէրտէրի վուրթին լաւը բահամ դայ ([illegible])։
Ովոր չի մեռնի, թող նա պարծենայ։
Ուրիշի համա լաց ըլողը իր աճկերը կու քօռացնէ։
Օչով թող չըպարծենայ։
Որը դայ, բարին հիդը։
Ուղտանիրը կուվեցան, մէչ տիղը էշը ճխլվեցաւ ([illegible])։
Ուրաքն իր կուլթը չի տաշի։
Ումնոր ասի՝ իմը դուն իս. ասաւ՝ իմ գլուը դուն իս։
Ով փուղ ունէ՝ խիլք չունէ. ով խիլք ունէ՝ փուղ չունէ։
Օջախի ([illegible]) մուխը մի կտրի։
Ուրիէն (հրէայ) վուր կու խղճանայ, հին նիսիէրու ([illegible]) ջանը կու ննգնի (կամ՝ հին պարտկերը կու հարցնէ)։
Օխնանքն ու անիծկը էրկու բերնանի թուր է, համ ([illegible]) դէսն է կտրում, համ դէնը։
Ուղտին ասին՝ աճկտ լուս, քի վուրթի է էլի. ասիլ է՝ ինձ ինչ աւելցաւ, բեռս կի չըպակսեցաւ ու։
Ով կու նստի, գիրա իրան կու տաշէ։ ([illegible])։
Ով շունչ չունէ, շուն չած է։
Ումնոր սուլը սըպանից, ինձ ումուդը (յոյս) պահից։
Օցի գլուխը վուր ցաւում ըլի, ճանփի մէչ տիղը կու պառկի (կամ՝ կու վէր ննգնի)։

Ցի սատկիլը վուր գայ, մէչ ճամփի վրայ կու պառկի։

Օվ հասնում է, ուտում է։ ([illegible])։

Օղորմի բըլթողին, վուչ օղորմի խուլթողին ([illegible])։

Օրօշտն օրօշտ ([illegible]) կու բերէ, վայ իմ դարմնի տակի կնիկ։ ([illegible])։

Ումիկը ([illegible]) վուր չըլլի, մարթ քարափնմէն դէվէր կու ննգնի։

Ուրիշի ձեռով փուշ մի քաղի, սեւ օց բռնէ։

Օղլուշաղատիրուչը ([illegible]) Աստուծ իր ռուզզը ([illegible]) կու հասցնէ։

Ուզողի՝ մէ էրեսը, չը տվողինը՝ էրկուսը։ ([illegible])։

Օխտը եաղը ([illegible]) տուն դու՛քայ, տանտիրուչը տանեմէն դուս կ՚օնէ։

Օխչրի պէս վուրթէնն էլ մէկն է գնում, գլխունքն էլ նրա էգնէն։ ([illegible])։

Օցը գնաց, ճուտը էգնէն. վուրթին գնաց, հէրը էգնէն։

Օխտը բաջանաղ ([illegible]) ճամփայ գնալիս ասիլ ին՝ մէ մարթ չըկայ, հիդը խօսինք։

Օչով չի ասի, թէ իմ գիժ ([illegible]) իմ։

Օվ փեսի մունաթը ([illegible]) ննգաւ, փշի մունաթը ննգաւ։

Օվ կու մտնի էս մէշէն ([illegible]), կու սովրի էս փէշէն ([illegible])։

Ուզողն՝ ուզողին, բուրթը՝ գզողին։

Օցը կծիլ չէր գիդի, քիզմէն սովրեցաւ։

Ուրախութենեմէն մազն է էրգարում, դարդեմէն՝ ղունգը։

Օվոր բաղ ([illegible]) ունէ, սրտի մէչը դաղ ([illegible]) ունէ։

Օրը կէհայ, օրվայ շառը ([illegible]) չի գնայ։

Օղորմողին էլ Աստուծ կու օղորմայ։

Օվ դադէ ([illegible]), նա ուտէ։

Ուղտի խաղը կարմնջի վրայ բռնիցի։

Ունեւորին՝ շատ բարեկամ, չունեւորին՝ քիչ բարեկամ։

Օ՛վ գուզէ իր աճկը իր համա քօռ ([illegible])։

Օչով թող չասէ, թէ ես ես իմ. հենց կու դառնաս, վունցոր ես իմ։

Ուրիշին մասխարա ([illegible]) գցողը իրա գլխին կու կատարի։

Ումնոր ումուդն ([illegible]) ապրեցրուց, նրան ռուլը սատկեցրուց։ ([illegible])։

Օց մանկի անդաձը, ով մինձի խոսկը չի լսի։ ([illegible])։

Ովոր խոսի՝ խոստովանի։

Ով մնայ՝ նա պարծենայ։ ([illegible])։

Ունքը շինելու (կամ դնելու) տեղ աճկը հանից։

Ովոր տարով էր մինձանում. նա օրով էր բօյ ([illegible]) անում։ ([illegible])։

Օխտը մինք էինք, օխտը իմ հէրանք, մէ մլակի կանճին ([illegible]) կերանք։

Ուզում էի կաքաւի քիրիշ ([illegible]) տամ, ակռաւի քիրիշն էլ մոռացայ։

Ուղտին նստիմ՝ դարդ ([illegible]) չունիմ. վէր գամ՝ բարգ ([illegible]) չունիմ։

Օրօնն օրօն ([illegible]) է էկի, օրօնը դուռն է էկի։ ([illegible])։

Ով կերաւ, նա մարսից։

Ուտիմ՝ տխտիմ ([illegible]), նունում ([illegible]) (կամ մթնի)՝ նանա ([illegible])։ ([illegible])։

Ուղտը մէ փուղ։ ([illegible])։

Ուրախ շան հաքլի ([illegible]) ես։ ([illegible])։

Ո՞վ կարող է քու իշին չօշ ասի։

Ո՞վ կարող է քու թանին թթու ասի։

Օխնիմ՝ օխնելու չես. անիծիմ՝ անիծելու չես։ ([illegible])։

Ով ասում է՝ ասէ. դուն ո՛ւր ես ասում։

Ուրիշի ջիբումէն ([illegible]) լէն-լէն ես ձեվճում։

Ուրիշի ջիբումէն ([illegible]) բրօ-բրօ ([illegible]) ես անճում։

Ուրիշի ջիբումէն ([illegible]) փանջ-փանջ ([illegible])։

Օվոր առէ-չառէ, նա վճռնց է առում։
Ուզում է թէ՝ մատը տայ, աճկը հանէ։ (չորքոտնիր)։
Ո՜վ կանայ նրա զէհլին (ամենեւին հիւանդած. դարձ) զլխիցը։
Ո՜վ կանայ նրան ասի, թէ աճկիտ վերիւը ունք կայ։
Ո՜վ դիմնայ քիզ։ (ո՞վ կարող է դիմանալ իր դառնութիւններին)։
Ուստա (վարպետ), քիզ ու քիզ։
Օչովլի ունքը չէ ծիծաղում էս թարիղին (տարեկան)։ (ով որ գործը յաջող չէ)։
Օխտը քաչալ (ճաղատ) աղչիկ էլ ունենամ, նրան չիմ տա։ (այնպէս շատ հարուստ է)։
Օխտը մաղի հաց կերած մարթ է։ (փորձուած)։
Օցի բերնումը թքիլ է։ (շատ հարուստ մարդն)։
Օքօինց իշի պէս մէ զռա։
Օրթաճալի չարխի (անիւ) պէս ճի՛նչ իս ճռճռում։ (յանկարծակի մարդն)։

⁂

Դ

# ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԵՒ ՃՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Ա

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

*Ածու շինած մարաք ունիմ, մէջը լեցրած մարմար ունիմ։*

(Բերան եւ ատամներ)։

*Առուտեճան չուրս վոտի վրայ է ման գալի, ճաշին՝ էրկու վոտի վրայ, իրիգնապահը՝ իրեք վոտի վրայ։*

(Մարդ)։

*—Արի, արի՛ չէ գալի.—մի՛ գա, մի՛ գա՝ գալիս է։*

(Շրթունքներ)։

*Ալ (Տոլմէր) ինգը, չալ (ետյուգիւլէր) ինգը. քանի բարցիմ՝ տակը ինգը։*

(Դրդալ)։

*Ածու շարած, մարթու քանդած։*

(Նուռն)։

*Էն ինչ պտուղ է, քանի խակ է, քաղցր է. հիմը հասնում է՝ դառը։*

(Որդի)։

*Խոտի պուպուղ (նոփէլ), էնդի պուպուղ. տօ անիծած, քանի՜ պուպուղ։*

(Խեղաղա, ջրաման, փարչ)։

*Էրգէն աղիք, ծէրը ծաղիկ։*

(Մեծ պաս եւ Զատիկ. մոմ)։

*Էրկու տուն ու մէ սուն։*

(Քիթ)։

Էն ինչն է, վուր խուփ չի ունենա ու էն ինչն է, վուր սուն չի ունենա։

(Սոլ, երկինք)։

Էն ինչն է, դուսն էրծաթ է, մէջն՝ օսկի։

(Ձու)։

Էն օ՞վ է, վուր փողոցումն անց կացնելիս գլխունքը նրա համա գդակ են վի կալնում։

(Ննջեցեալ)։

Ուլիկ ուլիկ տուվլլիկ, ուլկի վրէն տուկ, տկի վրայ ջաղաց, ջաղցի վրէն բաղ (այգի), բաղումը խուզիրը ման են գալի։

(Մարդ)։

Թախելու չէ ու փոխելու չէ։

(Կին)։

Կապում եմ՝ գնում է. բաց եմ անում՝ կանգնում է։

(Տրեխներ)։

Կտրում եմ, էրգարանում է. տաշում եմ, լէնանում է։

(Հոր)։

Կամար կամար, Աստուծ կապից ալ ու կանանչ։

(Ծիածան)։

Հուփ տու, կուլ տու։

(Փափա, խաշիլ)։

Հինգ աղբէր մէ կօշկ (աշտարակ) են շինում. չուրսը մէջն են բանում, վրայ հինգը նրանց վրակացուն է ու նրանց բոլորքը պտուտ է գալի։

(Գուլպայ գործելու հինգ շխիրներ)։

Մէ դօլաբ (պահարան) ունիմ, կօճերով (կէտ) լիքը։

(Բերան եւ ատամներ)։

Մէ աղլուխ (թաշկինակ) ունիմ, ցամքեցնում եմ, ցամքեցնում եմ, չէ ցամքում։

(Լեզու)։

Մէ աղլուխ (թաշկինակ) ունիմ, ծալում եմ, ծալում եմ, չէ ծալվում։

(Ճանապարհ)։

Մէ տուն ունիմ, մէջն աղլուխ (թաշկինակ) է փռած. չէ ցամքում վո՞ւնց օր ու վո՞ւնց գիշեր։

(Լեզու)։

Միր կտիրը կտորած տեփուր (Թաֆսա) է ննգած։

(Լուսին)։

Միր կտիրը զօրք (հողն էշա էտուրներ) է կլոտած։

(Աստղեր)։

Մէկը կանգնած խօսում է, էրկուսը անգած լին դնում, էրկուսն էլ մտիկ լին տալի։

(Բերան, ականջներ, աչքեր)։

Մէ ծառ կայ, տասէրկու ճուղկ ունէ, ամեն մէ ճղկանը՝ եառասուն փօթօլ (թերթ)։

(Տարի, ամիսներ, օրեր)։

Մէ սեւ արար բիխն օլրից, հազար մարթ–կնիկ գեղին գլորից։

(Գիշեր)։

Պստի (կամ՝ Թուրքի) տղայ վազի–վազ, գօղիկ ունիս քառասուն գազ։

(Ճանապարհ, իլիկ եւ վիլյալար)։

Պստի ճրղինք, տակը ձուն է գալի։

(Մաղ եւ ալիւր)։

Տօր, խաղ արա. բէ, կախ արա։

(Սազ)։

Տօմարա ([illegible]), տօմ տօմ արա, անունը տամ, դուն չիմանաս։

(Պարկ)։

Տա տա տա տա, գէլ է գալի,
Վուտնիր չունէ, ման է գալի.
Աճկիր չունէ, լուս է տալի.
Բերան չունէ, կուլ է տալի։

(Ձուն)։

Ցերեկը նորահարս, գիշերը ժարավաշ (ուշունը)։

(Անկողին)։

Ցերեկը լքցվում է. գիշերը՝ դարդկվում։

(Մալք)։

Փէտը տաշիլ ին, ալուրը կփցրիլ ին, շապիքը հաքցրիլ ին։

(Փշատ)։

Փողոցումը չէ ծախվում, կշռքումը չէ քաշվում, էնդումէն էլ քաղցը բան չըկայ։

(Քուն)։

Քանի սաղ (ողջ) էր, խուտ ու դարման էր ուտում. Էփոր մեռաւ, գինի էր խմում։

(Տիկ գինու)։

Ուղտեմէն բացր , ձիեմէն պստիկ (փոքր), լեղու պէս դառը, նշի պէս քաղցր։

(Ընկոյզ)։

Ուն (ունք) ունէ, բուն ունէ, հաւի պէս կտուց ունէ։

(Սիսեռ)։

## II

## ԾՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

Ալուր, ալուր, ալուր... (Կրկնել շուտ-շուտ)։
Հաւ, հաւ, հաւ... (շատ անգամ ասել. շատ հաչելուն է նմանում)։
Զուգ գցիմ ձուգ կուլ տամ. մուկ գցիմ ձուգ կուլ տամ։
Տէր Ստեփանի տանձի ծառը տասը լիդր տանձ է տալի։

Ե

# ՕՐՀՆԱՆՔ ԵՒ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՔ

Աճկի լոյս պաւլլիս։

Աստուած ձեռք տայ։ ([illegible])։

Աստուած հանգիստ արքայութին տայ։

Աստուած հոքին լուսաւորէ։

Անծու ողորմութինը հասնի քիզ։

Աստուած ազատէ կնիկարմտի շառեմէն ([illegible]), մինձի մագարեմէն ([illegible])։

Աստված բարի ճանապար տայ։

Աստուած ողորմի քու մամի ([illegible]) հոքուն։

Աստուած մէ ձէնով ազատէ։ ([illegible])։

Աստուած շնաւոր անէ. կատուն թաքաւոր անէ։ ([illegible])։

Աստված փրգէ ու ազատէ ամեն ցաւեմէն, ամեն չօռեմէն։

Աստուած յոռդ-կատարող ըլլի. ամէն, Տէր Աստված։

Աստուած կլինօք պահէ։

Աստուած վիրչը բարի անէ։

Աստուած բարին կատարէ։ ([illegible])։

Աստուած քու ճանփուրթի տխսին արժնիկ անէ։

Աստված պահէ։ ([illegible])։

Աստված անհաստ ու անպակաս անէ իր ողորմութինը։

Աստված բարաքաթ ([illegible]) տայ քու դուքնին ([illegible]), առուտրին։

Աստուած վուրթիքտ զօրացնէ. ծլլին, ծաղկլին, բարատու ծառ ըլլին։

Անծու տունը շէն ըլլի։ ([illegible])։

Աճի՛ք, բազմի՛ք, ծլի՛ք, ծաղկի՛ք. մէ բարցի ծիրանա՛ք, ձիր ձեռը
դալար ըլի՛, առջնիկնիրտ տղայ ըլի՛ ([illegible]):
Ամաղտ ([illegible]) էկուտաղէմ:
Աստուած քու ծնողաց անզուրձ մեղացը թողութին տայ:
Աստու ումիկը ([illegible]) քիզ:
Աստուած քու հօրն ու մօր գաղատանը քաղցր անէ:
Աստուած բարաքաթ ([illegible]) տայ՝ առնողին էլ, ծախողին էլ:
Աստու աճը քիզ վրայ քաղցր ըլի:
Աստուած բախշէ էրեխանցտ:
Աստուած քու լաւ ուզողին տայ, ինչոր նրան բան էկլաւ:
Աստուած քիզ օր տայ:
Աստուած քու հօրն ու մօրը լոյ վրայ ([illegible]) անէ:
Աստու ամանաթ ([illegible]) ըլիս:
Աստուած էն հացը տայ քիզ, վուր վո՛ւնց հատնի, վո՛ւնց պակսի:
Աստուած քու մէկը հազար անէ: ([illegible]):
Աստուած քու օջախը ([illegible]) հաստատ պահէ:
Աստուած քու սրտի մուրազին ([illegible]) արժանացնէ:
Արեգաղով կշտանաս:
Աստուած սէր ու միաբան պահէ ձիզ:
Աստված ազատէ ճրէլ ([illegible]) աճկերեմէն:
Աստված ցամաք աճկով պառվեցնէ:
Աստուած քիզ մէ դ՛օշ ([illegible]) վուրթի բախշէ:
Աչն ու խաչը քիզ վրայ:
Աստուած օղորմի ձիր հին ու նուր ննջեցելուցը:
Աստուած էնէնց բախտաւորէ քիզ, վունցոր քու սիրտը գ՚ուզէ:
Աստու օխնանքն ըլի քիզ վրայ:
Աճկդ բարին տեսնէ:
Աճկներուդ լուս:
Աստուած անփոշիմնելի անէ: ([illegible]):
Աստուած չարը խափանէ, բարին առաջարկէ (կամ՝ առաջէ):
Աստուած իմ դուշմնին ([illegible]) էլ չըտայ: ([illegible]):

Աստուած իմ դուշմնին (թշնամի) էլ չը շանց տայ իմ քաշած օրը։

Աշխրքումը վունցոր գինին ու հացը բոլ ([illegible]) կու՚լի, էնէնց էլ քու անունը բոլ ըլի։

Աստված բէթարեմէն ([illegible]) ազատէ։

Աստուած գլխունանցը բարի տայ։

Աստուած կինաց պահէ, թխսով, ճտերով։

Աստուած քխխտ ([illegible]) բարաքէն ([illegible]) չը կտրէ։

Աստուած ուխլի համփիրութին (կամ՝ կարօղութին) տայ։

Աստուած բանիտ, դուրծկիտ աչողութին տայ։

Աստուած կրակեմէն ու ջրեմէն թափէ ու ազատէ։

Աստուած անէ՞ ձիր էծը ջուխտ-ջուխտ (զոյգ) ծնի։

Բարի խշատակ ըլիս։ ([illegible])։

Բարով մաշխս, ուրախութէնով։ ([illegible])։

Բարի դաւակ ըլի, հօրով-մօրով մինձանայ։ ([illegible])։

Բարի սահաթի (ժամ) ըլի։ ([illegible])։

Բերնիտ շաքար ըլի։

Բերանտ՝ տաճար։

Բարով կանանչ-կարմիրտ կապինք (կամ՝ տեսնինք)։ ([illegible])։

Դուն սաղ (ողջ) ըլիս։

Դուն թափվլիս ու ազատվլիս ամեն չարեմէն։

Դուն պրծնիս ամեն չարեմէն, ցաւեմէն ու կարիքեմէն։

Դուն ինձմէն էրգար ապրիս (կամ՝ շատ կու ապրիս)։ ([illegible])։

Դոստրս ([illegible]) սուփրի ([illegible]) վրայ ըլէն, դուշմնիրս ([illegible]) դուսն ըլէն։

Դուշմնի (թշնամի) սրտով չըլիս։

Ընէնց քու լաւ ուզողին ըլի, ինչոր նա է․
Ընէնց դառնամս, վուր քու աճկը քիզ էրնէկ տայ։
Ընէնց հալալ ([illegible]) ըլի քիզ, վունցոր քու դէդի ([illegible]) կաթը։

Ջօրանամս, վուրթի, իմ տարոր դառնամս։ ([illegible])։

Ըմբըրով ([illegible]) կշտանամս (կամ՝ խնդամս)։

Թաքաւրի թուրը կտրուկ ըլի, նրա աճկը քաղցր ըլի քիզ վրայ։
Թաքաւրի աճկը քիզ վրայ քաղցր ըլի, ձեռը քու սրտի վրայ ըլի։

Ինչոր նրանցն օր պակսեցաւ, քու վուրթկերանցն աւելնայ։ ([illegible])։
Իմ տարոր դառնամս։ ([illegible])։
Իմ մեղաւր ըերնով խնդրում իմ, վոռը էտ բանը գլուխ գայ։
Ինչոր քիզ համա ուզիմ, Աստուծ թող ինձ տայ։
Իմը՝ դուն, քունն՝ Աստուծ։ ([illegible])։
Իմ մէս կտրողին (կամ՝ ծամողին) չը ռաստ գայ ([illegible])։ ([illegible])։
Ինչ գուն ինձ համա, Աստված քիզ համա։ ([illegible])։
Ինչոր էս քիզմէն պակսեցրի, Աստուծ աւելցնէ։ ([illegible])։
Էրգինքն ու գեդինքը քիզ պատիւ տայ՝ ինձ պատիւ տալու համա։ ([illegible])։

Լուս վէր գայ նրա գերեզմնի վրայ։
Լուս դառնայ նրա հոգին։
Խնդամս, խիթարվիս։

Ծլիս, ծաղկիս, վարթ բոլորիս։
Ծառի պէս էրգէնանամս, ծառի պէս ճղկնիրք ճարիս։

Տէրը քի բարի տայ, մէ ջվալ (պօրչ) գարի տայ։
Տէր Աստուած, Դուն գլխունին դէվէր մտիկ տաս։ (օքնէ)։
Տէր, Դուն թափէ ու ազատէ կնգայ շառաժէն (չըրպղըրթըլըմէն)։
Տէրը պահէ, տէրտէրը փաակէ։
Տէր Աստուած ու տէրտէրի աղօտկ։
Տարի քից ումըը (կէտէ)։
Տէր Աստվա՛ծ, վուրդի ճանփուրթ կայ, հիւանդ կայ, խիղճ կայ, անճար կայ, ծլնգդան (ծննդական) կայ, գերի կայ, նեղա-ցած կայ, նրանցն օղորմա՛ս ու նրանց արիւ սաղաղա (հա-նար)՝ իմ վուրթկերանցը. ցաւին՝ փրգութին, ժահին՝ թան-գութին, էրգնքէն՝ ցօղ, գետնէն՝ պտուղ, թաքաւրնե-րուն՝ հաշտութին, աշխարհ՝ հաղաղութին։

Ցամաք աճկով պառվիս։
Ցամաքը գնաս, ջուր դառնայ։

Փուշ բռնիս, վարթ դառնայ։

Քու հոքուն դէմ գայ քու արած լաւութինը։
Քու ձեռի խուղին արժնիկ ըլիմ։
Քու մէ օրը հազար անէ։ (Աստուած)։
Քու տունն Աստուած շինէ։
Քարի վրայ գնաս, քարը կանանչի։
Քու վուրթու թագին արժանի ըլիս։
Քու աճկը դուս գայ վուչ։
Քունտ՝ անուշ, էրազդ՝ բարի։
Քու սուփրէն գցած ըլի, քու հացը դրած ըլի, գինին տաղա-րով (թասով) ըլի, խօսկտ շաքարով ըլի։

Ուրախ տանդլկին (կամ՝ դէդա) պառվիս։
Օղորմի քու հօրը։
Օվ միզ համա չար ուզէ, Աստուած նրան բարի տայ։
Ուրախ սրտով պառվիս։

Զ

# ԱՆԻԾՔ ԵՒ ՅԻՇՈՑ

Աստուած վրէ՜չ գիգէ քու գլուխն ու քու արիւը։
Անիծած, կատղի կծած։
Աստուած օղորմի կշտի մեռլներուն։
Անկլի պտուղտ ([illegible]) կարէմ։
Աստուած անէ՛ քու գլխանն ու դաղաստանը։
Լածու կրա՛կ։ ([illegible])։
Անուն չօր, անկտ քօռ ([illegible])։
Աստված տա՛յ քու ջուղարը ([illegible], [illegible])։
Աստուած քուս տայ, ղունդ չը տա՛յ։
Անհօքլի, անխճպտանք. օվոր էստի չիս, չիս իմանում. ձեռս ու էրեսս նրա կուռը։
Անկլտ լսեմէն դարդակ նստիս։
Անկտ էլ տրաքվլի։
Անտէր մնաս ու մունդուէկ։
Ախա-վազլախ ([illegible]) քու տիրուչ գլխին։
Անջան-անդուաթ ([illegible]) ըլլիս։
Անկլտ՝ ջիրլիքօ ([illegible]), մատխտ՝ մատնաշունչ, մէճկլտ՝ ձիր-ձիդա ([illegible]), վուտխտ՝ քարխէչ ([illegible])։
Անգարծակլի գաս։ ([illegible])։
Ախտա խանի դազարի ([illegible]) գաս։ ([illegible]

Զ

# ԱՆԻԾՔ ԵՒ ՅԻՇՈՑ

*Սատուձ վուշ գլիդէ քու գլուխն ու քու արխը։*
*Անիծած, կատվի կծած։*
*Սատուձ օղորմի կշտի մեռլներուն։*
*Աճկի պտուղը* (բիբ) *կարէմ։*
*Սատուձ անէ քու գլխանն ու դաղաստանը։*
*Սածու կրակ։* (կայծակ)։
*Անուն չօր, աճկտ քօռ* (կոյր)։
*Սատկած տայ քու ջուղաբը* (պատասխան, [illegible])։
*Սատուձ քուս տայ, դունդ չը տայ։*
*Անհօքլի, անխճպտանք. օվոր էստի չիս, չիս իմանում. ձեռս ու էրեսս նրա կուռը։*
*Աճկիտ լսեմէն դարդակ նստիս։*
*Աճկտ էլ տրաքվլի։*
*Անտէր մնաս ու մունդուէկ։*
*Ախա-վազլախ* ([illegible]) *քու տիրուջ գլխին։*
*Անջան-անդրուաթ* (անշօք) *ըլլիս։*
*Աճկիտ' ջիրլիրօ* ([illegible]), *մատիտ' մատնաշունչ, մէճկիտ' ձիր-ձիրդա* ([illegible]), *վուտիտ' քարխէչ* ([illegible])։
*Անգարծակի գնաս* (յանկարծամահ)։
*Ալտա խանի ղազաբի* (դահիճ) *գնաս։* ([illegible]

[illegible] [illegible]):
Ալէ, Ալի. փուրի ճրաքուտ ([illegible]) հալվէ:
Աստուծ խռով կենայ քիզ:
Աստուծ ինձ առէ, քիզ տանէ:
Աճկիտ լուսը դուս գայ:
Աճկիտ լուսը սիպտկէ:
Աստուծ գլխիտ քար գցէ:
Աճկտ բաց ըլի, մէջը լուս չըլէ:
Արիւտ խաւրէ:
Ածու ղազարի ([illegible]) գնա:
Արժանի չըլէս խուղին: ([illegible]):
Անունտ կտրվէ:
Անտէր ու բրիշակ ([illegible]) ըլէ քու օջախը ([illegible]):
Ամուլթ քաշէ:
Ամուլթ քու էրեսին:
Աճկտ դուս գայ:
Աճկիտ կակալը ([illegible]) կարէմ:
Աստուծ խռովէ քու գլխին ու քու արեվուն:
Աստված գլխիտ խռով կենայ:
Անադուհաց քըթի շուն:
Աղ ունիմ, աղջուր ունիմ. թէ բաց անիս, աճկիրտ հանիմ:
Աճկտ բլչէ:
Աճկտ բշտէ:
Աստուծ սարարի ([illegible]) տունը քանդէ: ([illegible] է [illegible] [illegible]):
Աստուծ սարաքի գլխին քար գցէ: (նոյն):
Աստուծ չունէս:
Ածեմէն առնէս քու ջուղաբը (կամ պատիժը):
Աստուծ կէծակ գցէ գլխիտ:
Աստուծ գայ քու հախեմէն ([illegible]):
• Անիշատակ վիր ննգնէս:

Աստուծ անիծէ՛ քու սատանին։ ([illegible])։
Աշխրքի մասխարա (ծաղրալի) դառնամ։
Անտէր ու անտիրական մնամ։

Բէսար ([illegible]) նամազուլ ([illegible]) կը անում։
Բաբիտ (հայր) օղորմի։
Բերանտ կրակ ննգնի։
Բոբլիկ սատանայ։
Բայղուշ (բու) ու բարաղուլ (?)։
Բէմուրազ ըլլիս (ըղձիդ չը հասնիս)։

Գլուխտ մեռնի, ջանդակտ (գէշ) դնջանայ։
Գլխարաց բարով տամ քիզ։ (Երբ մեռած կը լսէ)։
Գեղլինը պասաւէ՛, քիզ դէվէր տանէ։
Գեղլին ձեվլիս դուն։
Գեղլին մտամծ։
Գլուխտ ուտիս։
Գրողի փայ (բաժին) ըլլիս։
Գլուխտ քարին, էրեստ պատին։
Գլուխտ քարով, մէճկտ պատով։
Գալտ էլ ու գնալտ էլ նալլաթ (նզովք)։
Գնալտ ըլլի ու գալտ չէ։
Գեղլինը մտնիս դուն։
Գլուխտ մինձ քարն կը տալի։
Գեղլինը մտնիս լաւ չէ։
Գրողը տանէ քիզ։
Գիժ լէլօ (?)։
Գիժ հարուլղլի (շան աման)։
Գիժ դնջօ (խենթօ)։
Գիլանուց ու շնանուց դառնամ։
Գուբէղօռ (գերեզմանափոր) ըլլիս։
Գողնքումն ուտիս լինձմէն փախցրած փուղիրը։

Գօռումը (ֆէրէլման) չը դնջանայ։
Գնա, իշի վ.. դայրա (տ—ք) ածող։
Գրողի դավթրումը (մատեան) գրվիս։
Գրողը քօռանայ, վուր քիզ չէ տեսնում։
Գէլն ուտէ քիզ։
Գլուխտ փթի։
Գեղին չափիս դուն։
Գեղինը մտնիս շուրերով։
Գեդին բշտեցնիս դուն։ (Եղշուել)։
Գրողի դանդան (խաշալէք)։

Գարդակ նստիս քու էտ մէկ ու ճար վուրթումէն։
Գժուխկի փայ (բաժին) ըլլիս։
Գարդ (ցաւ) ու բալի (պատիժ) գաս։
Գարդակ նստիս քու ջանեմէն (մարմին, կեանք)։
Գարդ ցաւի գաս ու Ըսծու կրակի գաս։
Գար ու գարդակ նստիմ քիզմէն։
Գժար ցաւի տիրանաս։
Գարդ (ցաւ) ու բալա (պատիժ) ու դարդուզնա (?)։
Գժուխկի մաշխալա (ծոծակ)։ (չար ոգեղ)։
Գունէ դուռը ննդնիս։

Ինձգզա դուն տնքաս ու վռչաս (ջանջէլ)։
Խօր էլ մթնացաւ։ (Վատ մարդու մասին, որ չէ թանում)։
Իս օրվայ անմահ պատարագի զօրութինը խռով կենայ քու գլխին։
Ին առէջ-կերէքի զօրութինը խռով կենայ քու գլխին։
Ինքան ապրիս, վուր պատի ճռիկ (ճպուռ) դառնաս։
Իրեստ սիւնայ։
Իտ էլ քու աճկումն ըլլի։
Իրեստ պարզ կենայ։ ([illegible])։

Գոռումը ([illegible]) չըր դնջանայ:
Գնա՛, խշի վ․․ դայլրա ([illegible]) ածող:
Գրողի դավթըրումը ([illegible]) գրվլիս:
Գրողը քոռանայ, վուր քիզ չէ տեսնում:
Գէլն ուտէ քիզ:
Գլուխտ փթի:
Գեղին չափիս դուն:
Գեղինը մտնիս շուրերով:
Գեղին բշտեցնիս դուն: ([illegible]):
Գրողի դանդան ([illegible]):

Գարդակ նստիս քու էտ մէկ ու ճար վուրթումէն:
Գժուխկի փայ ([illegible]) ըլլիս:
Գարդ (ցաւ) ու բալի (պատիժ) գա՛ս:
Գարդակ նստիս քու ջանեմէն ([illegible]):
Գարդ ցաւի դա՛ս ու Աստու կրակի գա՛ս:
Գար ու գարդակ նստիմ քիզմէն:
Գժար ցաւի տիրանա՛ս:
Գարդ (ցաւ) ու բալա (պատիժ) ու դարդուզնա (?):
Գժուխկի մաշխալա ([illegible]): ([illegible]):
Գռնէ դուռը ննգնիս:

Ընդղա դուն տնքա՛ս ու վռչա՛ս ([illegible]):
Իսօր էլ մթնացաւ: ([illegible]):
Իս օրվայ անմահ պատարաքի զօրութինը խռով կենա՛յ քու գլխին:
Ին առէք-կերէքի զօրութինը խռով կենա՛յ քու գլխին:
Ինքան ապրիս, վուր պատի ճռիկ ([illegible]) դառնա՛ս:
Իրեստ սիւնա՛յ:
Իտ էլ քու աճկումն ըլլի:
Իրեստ պարզ կենա՛յ: ([illegible]):

Էն բերանն արնով լիքը։ ([illegible])։
Էնէ՛նց դուք քնէք, վունցոր էս էի քնած։
Էգ՛նեվա՛նց նալնած ([illegible]) սատանայ։
Էնի՛գա նրանք էմ ([illegible]) մազերը համբրէն։
Էնի՛գա քեզ է՛նչ ասեմ։
Եարէտ ([illegible]) մէկ ըլէ՛, փիլթէն ([illegible])՝ օխտը։

Ջահրումար ([illegible]) ու դարդ ([illegible]) ու բալա ([illegible])։
Ջխկո՛ւ ([illegible])։
Ջխկումի կտո՛ւր։
Ջկուի թթո՛ւ։
Ջկուի ջո՛ւր։
Ջուռնա՛։
Ջահրուզումթի ([illegible])։
Ջահրումար ([illegible]) ու Աստու կրակ։

Ժունով ([illegible]) ուտեմ քու գլուխը։

Իմ ամաղն ([illegible]) ու աշխատանքը քեզ հառամ ըլէ՛։
Ինչոր էնձ անում էս, թող քու հոքուն դէմ գա՛յ (կամ՝ թող քու հոքու համա ըլէ՛ պահած)։
Իր գլուխն ուտէ՛։ ([illegible])։
Իշէն նստէս, կուդէն ([illegible]) բռնէս։
Ի՛րգնաէն Տէրն անէ՛ քու դիվանն ու դադաստանը։
Ի՛նչ Աստուծ խռովեցաւ քու գլխէն։
Ի՛նչ գլուխտ քարօքն էս տալէ։
Ի՛ս քու հալալ ([illegible]) ասողէն է՛նչ ասեմ։
Ի՛րգնաուր թաքաւորն անէ՛ քու դադաստանը։
Իմ մամի ([illegible]) ցաւը՛։
Իմ տան աղ ու հացը աճկէրտ բռնէ՛։
Ինչոր դուն էնձ արէր, քու վուրթուն դէմ գա՛յ։

Իմ մազօքը տնքան էնղաղա։ ([illegible])։
Իրիք աճկով պառվիք էրկուստ։
Իմ աղ ու հացը քնթեժէտ դուս գայ։
Ինձպէս նստիս։ ([illegible])։
Ինչըղա ուտիս, չը կշտանաս։
Իմ էղնէն քարը քարի վրայ չը մնայ։
Իր անիծկը իր գլխին։
—Ի՞նչ է։ Ձուը ([illegible]) պինչտ է։
—Ի՞նչ քու դէղի ([illegible]) թխածնիրն իս ուտում։ ([illegible]
[illegible])։
Իմ օխտը պուրտի միղկը քիզ ըլի։

Լիզուտ պապանձվի։
Լաւ տարի գայ լէզգերու գլխին։
Լիզուտ չորանայ։
Լաւ տարի գայ քու գլխին ([illegible])։
Լաւ տարի գայ, լաւ օմքին դուն իս։
Լաւ լարով խիղտվիս, անբախտ ([illegible]) ցաւով մեռնիս։

Խանի խալրմը։ ([illegible])։
Խուղիմ քու գլուխը։
Խաչը խռով կենայ քու գլխին։
Խնչիմ գլխիտ, վէր գայ քնթիտ. ինչոր մնայ, վէր գայ դնչիտ։
Խուղս նրա գլխին։
Խանի խարարի ([illegible]) գաս, Սածու ղաղարի ([illegible])։

Կրակ ննգնի քու փուրը։
Կրեմ քու գլուխը։
Կիրը նրա գլխին։
Կոտորվիք ու վիր ննգնիք։
Կլնծիտ ([illegible]) կոտրվի։
Կոտրվի ձեռտ վուչ։ ([illegible])։

Կորէ՛, աճկեմէս ուռդ էլ (հեռանալ)։
Կինձի (դորանյայ) կորձան ըլլիս։

Հախմլանուէլն (արարադրութ, Աստուած) անէ՛ քու դիվան-դադաստանը։
Հախմլանուէրը տանյ քու ջուղաբը (դատաւորն, ֆէֆրէն)։
Հօրս ցաւը՛։
Հա՛, քու գլխի արխը։
Հեստի ցաւի դա՛ռ, վո՛ւր..
Հանդչլի քու տան ճրաքը։
Հենց Հլունդանմա, վուր մէ քիշմիշին (էմէլ, խոնէտ) օխտը դամ կծէս։
Հենց Հլունդանմա, վուր բամբկով ջուր կաթեցնին քիզ։
Հոքուտ դէմ դա՛յ քու արարմունքը։
Հրաժարիմ քիզ (ճէչարէյ) սատանայ, էշմակմա խէլլի գատանա, շադկլրա, շադրէճդա, թան ծաղկի՛վանա։ (Վր. տարածան բանէ ճեղ, խաղէ, ճնճէ, հետը անէ)։
Հոքիտ սատանեւու փայ (բաժին) ըլլէ։
Հենց պառւլլիս, վուր Սիօնը (Վր. Էքէչէթ Թիֆլիսամ)՝ կանկալ (ընթոյչ) ու Զօրսօն (Եաղ Թիֆլիսամ)՝ փիլալա (բաժա՛) էրեւ-վա՛յ քիզ։
Հին ու նուր, կաղպարը (խաշաղար) չուր (կամ չուլ) (հնոտիք). Էտ էլ մաշիս, մնաս տկլուր։ (հեքեմօրէն. հին՝ նորոգեալէր, խաշաղար չորանայ խամ հնանայ)։

Ձիր քօքը (արմատ) վիր ննդնէ (կամ կտրվէ)։

Ճիճու
Ճարտ կտրվէ։
Ճանջ դառնաս, պատին կփչլիս։
Ճանփէտ փուշ ու տատաշ (փուշփուշ) ըլլէ։
Ճար ու մաղաթ (օգնութիւն) կտրվէ։

Կորի՛, անկեժէս առաւ էլ ([illegible])։
Կինծի ([illegible]) կործան ըլլիս։

Հախմխանտէյին ([illegible], Ս[illegible]) անէ՛ քու դլխան-դադաստանը։
Հախմխանտէրը տա՛յ քու ջուղարը ([illegible], [illegible])։
Հօրս ցաւը՛։
Հա՛, քու գլխի արիւը։
Հետսի ցաւի դա՛ս, վո՛ւր..
Հանդչի՛ քու տան ճրաքը։
Հենց հիւնդանմա, վուր մէ քիշմիշին ([illegible], [illegible]) օխտը գամ կծիս։
Հենց հիւնդանմա, վուր բամբկով ջուր կաթեցնին քիզ։
Հոքուտ դէմ դա՛յ քու արարմունքը։
Հրաժարիմ քիզ ([illegible]) սատանայ, էշմակմա խէլլի գատանա, շաղկրա, շագրէճդա, թան ծաղիզվանա։ (Վր. [illegible])։
Հոքիտ սատանեւրու փայ ([illegible]) ըլլի։
Հենց պառւլլիս, վուր Սիօնը (Վր. [illegible])՝ կանկալ ([illegible]) ու Զօրսօն ([illegible])՝ փիալա ([illegible]) էրեվա՛յ քիզ։
Հին ու նուր, կաղալարը ([illegible]) չուր (կամ՝ չուլ) ([illegible]). էտ էլ մաշիս, մնա՛ս տկլուր։ ([illegible])։

Ձիր քօքը ([illegible]) վիր ննդնի (կամ՝ կտրվլլի)։

Ճինճու
Ճարտ կտրվլլի։
Ճանջ դառնամս, պատին կփչլիս։
Ճանփէտ փուշ ու տատաշ ([illegible]) ըլլի։
Ճար ու մաղաթտ ([illegible]) կտրվլլի։

Մաշվի՛ քու ջանը (մաշըդըն)։
Միզկն ու վարծկը քու շնքին։
Մաշն ինձ առէ, քիզ տանէ։
Միլթօնի (ֆասդաշա) ջինս (չարմ) է դրուստ։
Մածուն ա՛ռ, գլխիտ ածա՛։ (ադամածի քեփերէն քուշ ճան է անաջարխուն
կաշ կըմարաշը)։
Մէ Սածեմէն էլա քաշվի է (ամալէլ)։
Մէ Սածուն էլ մոլիկ արա՛ է։
Մէ խջալաթ (պաքլավանէ) քաշէ՛ է։
Մէ քու Սածեմէն էլա ամանչի՛ է։
Մինձ քունը ջանտ մտնի, չը կանենա՛ս զարթի։
Մեռնի՛ արխտ։
Մինձ քնէն քնիս, պստի (քութր) ջրէն խմիս։
Մեռիլտ անպատանք մնա՛յ։
Մուրազիտ (էշլ) չը հասնիս։
Մուրազը (էշլ) փուրումտ մնա՛յ։
Միստ վէր թափի՛։

Նալլա՛թ (նալին) քի, չար սատանայ։
Նամազուլ (մանջըկանաբէկան) է արի, սավալի քիզ, էտու ատողը։
Նրանց վազին էլ նալլա՛թ (նալին), լաւին էլ։

Ձնէ շուն հաչի՛ս։
Ձուն դառնա՛ս դուն։
Ձուրեբով թաղէմ քիզ։
Ձլինքտ (շէնի, պարանոյ) կոտրվի՛ վո՛ւչ։
Ձուն ու գլլի փայ (բոժին) դառնա՛ս։

Ջէիր էլի՛ (ծանէլ) քու դէզի (մոյը) փուրեմէն։
Ջարս տանիս։
Ջըլի՛ք ու չըքվի՛ք։
Ջօռ (յազ) ու ցաւ ու զահրումար (օչէ քոյն)։

Չբվլլիս, չորանամ։
Չարչարանքով ապրիս քու օրը։
Չիքն ու չօռը (յա—) տանէ՜ քու գլուխն ու քու արխւը։

Պտուղտ (բէբ) էլ կարեմ։
Պխպօտ (բէբ) կարեմ։
Պարնի ձագարի ([illegible]) գամ։
Պխպլիկտ (բէբ) էլ կարեմ։
Պխպլիկտ (բէբ) էլ գուս գամ։
Պուճպուճի ([illegible]) պէս փչանամ։ ([illegible])։

Ջանխտ ([illegible]) վրայ տնքամ։
Ջուրս դուչէ՜ քիզ։ ([illegible])։
Ջառ ([illegible]) ու ջանդամը ([illegible]) քու գլուխն ու քու արխւը։
Ջառը ([illegible]) գնամ ու ջանդամը ([illegible])։
Ջուր էիր կտրվիս քու դէդի ([illegible]) փուրումը։
Ջանեմէտ դարդակ նստիմ։
Ջրատար ըլլիս։
Ջահանդամի ([illegible]) էնթի պուճախը ([illegible]) գնամ։

Սև սրտով ու արէն լիրթով։
Սխրատ մեռնիս։
Սաս ([illegible]) ու սօրաղտ ([illegible]) կտրվիս։
Սև ցաւն անէ՜ քու էրեսը։
Սաղ ([illegible]) ըլլիս, չօլախ ([illegible]) չըլլիս, կաղ ըլլիս։ ([illegible])։
Սատանեբու փայ ([illegible]) ըլլիս։
Սփ Գէուրքի զօրքը քու գլխին խռով կենայ։
Սարաբի ([illegible]) տունը հախմխանտէրը ([illegible], [illegible]) քանդէ։
Սև հաւով էրազ տեսնիս, սև թագ դնվիս աղչկատ։
Սատանի չաքուչ ([illegible])։

Սատանի սանդուխտ։
Սատանի աքանդազ (ողճոյուլ)։
Սատանի բուրվալ (ճուռճառ)։
Սրտին ի՛նչ ասիմ։

Վա՛յ տամ քու գլուխը։
Վ՛ուչ բարով գայ։
Վէ՛ր ննգնիս դուն։
Վ՛ուչ խնդաս դուն։
Վ՛ուչ գնջանայ նա զօռումը (գէրէնչօռա)։
Վ՛ուչ ու փուչ ըլլի՛ս։
Վ՛ուչ խնդաս ու խիլթարվիս։
Վ՛ուչ մինձանաս։
Վ՛ուչ էիր բաշամ էկլ (գոյանուլ, տաշը գուլ) էսօրվայ համա։
Վ՛ուչ կապիմ կանանչ-կարմիրտ։
Վարցկտ շունն ուտէ։ (ճարյա եա արէլ, ճոյյ երէսէն տալը)։
Վ՛ուչ գնիս թագը, վ՛ուչ հասնիս Մողնու (Սուրբ Գէորգ) պասը,
    վ՛ուչ բռնիս ձեռիտ թասը։
Վուտտ կոտրվիլ էր, դէսը չէիր անց կացի։
Վիր ջնջվի՛ քու անունը։

Տնքա՛ս ու վռչա՛ս (ֆունչէլ)։
Տունտ քանդվի՛ ու ըրիշակ (ասէր) ըլլի՛։
Տանտ սունգ դուս գա՛յ։
Տիզ դառնա՛ս, պատին կփչլի՛ս։

Ցաւս փո՛ւրտ։

Փո՛ւչ կենթանի։
Փո՛ւչ փչանալու։

Քանդվի՛ ձիր դադաստանը։
Քու դադաստանը քու առջիւը (կամ՝ դուռը) գա՛յ։

Քու գլխի ճոթովկը (կամ պատովկը) գիդենայ։
Քու մէջն Աստուծ կայ։
Քու տիրուչ պղինձը (կաթսայ) ննգնիս։
Քու հօրն օղորմի։
Քոռանա՛ս ու կուրանա՛ս։
Քու ա՛ճկն էլ։
Քարէ քար ըլլիս ու սարէ սար։
Քու Լոլ՛նցն ու Լ՛նլ՛նցը։
Քար ու քանդ ըլլի ու բըլիշակ ([illegible]) ըլլի նրա տունը։
Քու տիրուչ էշը կորչի։
Քսան կտուր ըլլիս։
Քիզ տեսնիմ, գունդ ու կծիկ գաս։
Քու պտուղը կարիմ ուսի կանեփով։ (որ շատ դժար է)։
Քու լաւ (կամ հալալ) ([illegible]) սառղին ինչ ասիմ։
Քրքրվիս ու քծծվիս։
Քիզ տեսնիմ, քու լիզումը տարակվիս։
Քանս ջուր շատ քարէ քար գաս։
Քրքրվի քու ջանը (մարմին)։
Քու աճկիրը դուս գայ։
Քառ (խաւլ) ու փուչ ըլլիս։

Օխնիմ, օխնիմ, ծիրանա՛ս.
Ամեն ցաւին տիրանա՛ս.
Պատի պատէն հիռանա՛ս,
Մինձ պատի տակը մնա՛ս։
Օխնիմ, օխնիմ, ծիրանա՛ս,
Ամեն ցաւին տիրանա՛ս.
Օցի պէս սողա՛ս,
Կատվի պէս դողա՛ս.
Մինձ պատէն պատրաստ (դժոլէ, ուղղ) կենա՛ս։
Պատի պատեմէն դէվէր ննգնիս.
Պօլօճիկս ([illegible]) դուս ննգնի.

Սիւ ջուրը լուս ննգնի.

Պատովի դօլաբի (պտրտահան) հէնչաք.

Փիլթա (պատրույգ) բանի կէլէպտրի (ճերմ) հէնչաք։

Օջախտ (տուն) քանդվի։

Օրտ պակսի։

Օրթումտ օրթունք կտրվի (տառանել) ջանումտ (մորմքի) ու ջանտ ծակծկէ։

Ուրախ ըլիս համաշա (Աչք), ակռաւը գայ թամաշա (ի դեր)։

Օրթունք գնէ, ինչի չիս ղրգում ինձ համա էլ էն մրքեմէն։

Օրտ խաւրի։

Օսկոտանքտ չը գնջանայ (հանգչել) գերեզմնումը։

Օցի ծակին նստիս, կարճի բնին։

# Է

## ԵՐԴՈՒՄՆ

Առաջի Ածու։
Ածու արթարութինը գիդենայ։
Անհաղուրթ ըլիմ, թէ..
Ածուն քի մէջ իմ տվի։
Ածու տակն իմ ասում։
Ածուն իրան անան (յոյոա՞ն) է։
Աստուծ գիդենայ։
Աստո՛ւծ, ե՛րգինք, խա՛չ, աւետրա՛ն։
Աստուծ վկայ։
Աստո՛ւծ, ե՛րգինք, գեդի՛նք։
Առանց ալլխվալլ իմ ասում։
Ածու անունը գիդենայ։
Աստո՛ւծ, ե՛րգինք, ծո՛վ ու ցա՛մաք։
Ածու առջիւը սիւէրես գնամ, թէ...

Գլուխս կու կտրիմ, թէ...

Դո՛ւն ու քու Աստուածը։
Դո՛ւն ու քու խճպտանքը։
Դո՛ւն ու քու հերվան հոքին։
Դո՛ւն ու քու գջլտած հոքին։
Դո՛ւն ու քու արիւը։
Դրուստ սա՛մ, հոքի ունիս տալու։

Դուն ու քու քրքրված հոքին։
Դուն ըլլա, քու դէղի (մայր) հոքին։
Դժուխկի փայ (բաժին) ըլլիմ, թէ…

Էս բարի լուսը գիդենայ։
Էս օրվայ լիքը սկիհի զօրքը գիդենայ։
Էս օրվայ պաշտում-պատարագը գիդենայ։
Էս տարած (անցած) օրը գիդենայ։
Էս օրվայ օրը գիդենայ։
Էս օրվայ անմահ պատարագի զօրութինը գիդենայ։
Էն «առէք-կերէքի» զօրքը գիդենայ։
Էն դաթրած (կամ պէլացած) արեգաղը գիդենայ։ (օրը պարա-
ժամ ժամանակ)։
Էս հացի բարաքաթը (տառապանքին) գիդենայ։
Էն կամարկատար Աստուծածնի զօրքը գիդենայ։
Էս ճրաքը վկայ։
Էս մմի լուին (կամ ճրաքին) քոռ (քոյր) մտիկ տամ, թէ…
Էն օրը մահ ըլէ իմ գլխին։
Էն քաղցր Աստուծածինը գիդենայ։
Էն կանանչ մխռոնը վկայ։
Էս քինթս կու կտրիմ, թէ…
Էս հացը գիդենայ։

Ջինաուր Սուփ Գէուրքի զօրութինը գիդենայ։

Թէ քու արիւը չիս ատում, իմ արիւը գիդենայ։
Թող Աստուծ գլխիս քար գցէ, թէ…

Ինչկլի էքուց չը լուսացնիմ, թէ…
Իմ ճանփուրթի տխսին արժնիկ չըլլիմ, թէ…
Իս ու իմ Աստուծը։
Իմ ու քու Սիրծողը գիդենայ։

Իրիք մանէթ էր, Երիք Ուստրանը գլխենայ։
Իմ գլխատած հոքին գլխենայ։
Իմ հոքին գլխենայ. Ի՞նչ ունիմ հոքէ ի զաղ։
Իրրուրթը գլխենայ։
Իրգինքը գլխենայ։
Ի՛ս ու իմ հոքին։
Իմ կարքը գլխենայ։ ([illegible])։
Իմ արիւը։
Իմ հօր գերեզմանը գլխենայ։
Իմ մէկ ու ճարի արիւը գլխենայ։
Իփող տաքը տալիս ըլիմ ու սառն առնում ըլիմ։ ([illegible])։
Ինձ թաղիս, թէ սուտ ըլիմ ասում։
Իմ մամի (հայր) հոքին գլխենայ։

Խաչը գլխենայ։

Ծամիրս վէր գայ, թէ...

Կուռս կու կտրիմ, թէ...
Կարքա վկայ։ ([illegible])։
Կարքս վկայ։ ([illegible])։

Ցութի ([illegible]) բաժին ըլիմ, թէ...
Հոքուտ տակն ասմ։ ([illegible])։
Հոքիտ մի էրի։ ([illegible])։
Հալս ([illegible]) Աստու։
Հաղուրթը գլխենայ։
Հոքուտ ծանդրութին մի տաս։ ([illegible])։
Հոքիս դժուխկի բաժին ըլի, թէ...
Հոքի ունիմ տալու։
Հոքիս սատանի փայ ([illegible]) դառնայ, թէ...
Հոքիտ մի ծախի։ ([illegible])։

Չեռս կու կտրիմ, թէ…

—Ղ'օնաղ (հելու), քու գնալու ճամփէն գիդենայ։ (տասան է տան-տէրը հիւրին)։ «Էն ամբրի հացը գիդենայ, վուր մինք պի-տինք մէտի ուտի։ (դատապարտուած է հիւրը)։ (հետեւ-ընթերցուած)։

Մրաքի հիդ հանդչիմ, թէ…

Մայր էգեղեցին գիդենայ։
Մուրազիս (էլչ) վ'ուչ հասնիմ, թէ…
Մուրազատուր Սուփ Սարքիսը գիդենայ։
Մէր ու վուրթութինը գիդենայ։

Շավնաբադի (Սուրբ Գէորգայ եկեղեցին Թեքէլիի մօտ) զօրութինը գիդենայ։

Պարտական ըլիմ աՀիղ դադաստանին,՝ թէ…
Պարտական ըլիմ, աւուր դադաստանին, թէ…

Սուփ Սարքսի զօրքը գիդենայ։
Սուփ Գէուրքը գիդենայ։
Սուրփ Աստուծածինը քիզ մէչ իմ տվի։

Վ'ուչ արժանանամ իմ վուրթու տխութէնին, թէ…

Փէթխաինի զօրութինը գիդենայ։

Քիղվարթը գիդենայ։
Քու անուշ բարովը գիդենայ։
Քու քաղցր սալամը (ողջոյն) վկայ։
Քու աղ ու հացը իմ աճկիրը քօռացնէ (ճաշակով), թէ…
Քուր ու աղբրութինը գիդենայ։

-Քրիստոս քեզ մէջ իմ տղի։
-Քու միղաց տէր ըլիմ, թէ...
-Քրիստոսի «առէք-կերէքը» գիղենայ։
-Քրուստոսի չարչարանքը գիղենայ։
-Քրիստոսի անունը գիղենայ։
-Քու ագիզ արիւը գիղենայ։
-Քու միղկն ունենամ, թէ...
-Քու արիւը սուտ չը գիղենաս, իմ արիւն իմ ասում։
-Քրիստոսի միխ խփողն ըլիմ, թէ...
-Քու արիւը հազար թումնով սուտ չիմ օրթում ուտի։
-Քրիստոնայ իս, աւատմ՛։
-Քաղցը աղ ու հացը գիղենայ։
-Քու օխտը պուրտի միղկն ունենամ, թէ...
-Քու հատը վուրթուս թաղիմ, թէ...
-Քու ձեռի խուղին վ՛ուչ արժանի ըլիմ, թէ...

Ը

# ՍՊԱՌՆԱԼԻՔ

Աճկի պիպիկը ([illegible]) կու հանիմ.
Աճկիրս էգնէմէս կու հանիմ.
Արա՛, թէ մարթ իս ու էս բանը կ՚օնիս.
Աճկիրս կու խփիմ, բերանս կու բաց անիմ, հէնց կու շինիմ,
 վուր Քոռուն ու Արագը քի չը խսակէ.
Անգճներուս վրայ սուխ չը կոտորիս.
Ակռքնիրը սրում է քիզ վրայ.

Թուրթ ու բամբակս կու գզիմ.

Գունդ ու կծիկ կ՚օնիմ քիզ. ([illegible]).
Գէլ կու ձեվլիմ քու գլխին.
Գանձ ([illegible]) քանի գլուխ պիտի ունենայ, վուր նա էստի գայ.
Գնա՛, գլխիս տիրութին արա՛, թէ չէ՝ իս գիդիմ քունը.
Գլուխս թացնիլ ([illegible]) կու՚տամ.
Գլուխս կէս կ՚օնիլ տամ.
Գնա՛, թէ չէ, նիկօրի աստղին կու կպցնիմ քիզ. ([illegible]).

Գանակ է սրում քիզ համա.
Դիփունքն էլ գիդին՝ իս ծվ իմ, դուն ծվ.
Ընէնց անէ՛, վուր էլ բաժին չը ղրգէ.

Իժան չիս պրծնի ինձմէն։
Իտ արարմունքը քիզ չէ՛ մնա։
Իտ հաթաթէն ([illegible]) քու շանը տո՛ւ։
Ինէնց բան կու բերիմ գլխիտ, վուր էկած ճանփէտ մտէտ ննդնի։
Ինէնց կ'օնիմ, վուր լէշը (գէշ) չափարին ([illegible]) մնայ։
Իժան չիմ նստեցնի նրան։
Իտ մէկ սալ իս, էլ չասիս։

Թո՛ղ սառը ջուր խմէ՛, թէ բէդամաղ ([illegible]) է էլի։
Թո՛ղ բաժինը եաքա ([illegible]) ուտէ՛։
Թէ մէ պստի ղունղը կունենա՛յ, նա գիդէ ինչոր կ'օնէ։
Թէ ճանդս կու ննդնիս, իս գիղիմ ձիուտ գլուխը վուրթէնը շուռ կու՚տամ։
Թէ խիլք ունիս, ինձ լսէ՛։
Թօխլօ ([illegible]) ձվի պէս կու խաշտիմ քիզ։
Թօկ ([illegible]) կու՚տամ խիղտվելու, վուր խիղտվի՛ս։
Թէ չէ՛, իրնի մահին կու կտրվինք մէկս մէկէմէն ([illegible])։
Թէ ղուն ինձմէն կու խռովիս, էլ Մէյդնումը աղ չի գա՛, Տափի թաղումը ցախ չի գա՛ ([illegible])։
Թէ ղուն միր տունը չէկար, շունը թարէքը ([illegible]) կու՚լի։

Իմ ձեռնեմէն չիս կանայ պրծնի։
Ի՛ս քու հախեմէն ([illegible]) գու՚քամ։
Ի՛ս քու օհտեմէն գու՚քամ ([illegible])։
Ի՛ս նրա տակը չիմ մնա։
Ի՛ս նրա պուրտը տիղը կու դնիմ։
Ի՛ս քու կնիկ չիմ դառնա ([illegible])։
Ի՞նչ տղայ կու՚լիմ, թէ քու օհտեմէն չը գամ։ ([illegible])։

Իս քիզ կու շանց տամ հա՛։
Իս նրա ծվանը ([illegible]) կու ցամքեցնիլ տամ։
Իս էտ ուշունցը (կամ՝ բէաբրութինը) ([illegible]) չիմ ուտի։
Ինձ էլ կու ճանչնան, քիզ էլ կու ճանչնան։
Ինչոր ձեռնեմէտ գայ, չըխնախիս։
Իս քու ջիգրը ([illegible]) չիմ ուտի։
Իժում Ածեմէն չիս վախենում։
Իժում քու Ածուն ի՞նչ ջուղաբ ([illegible]) իս տալի։
Իս գլըգիմ մեռլի գլուխը վո՛ւրթէնը կու շուռ տամ։
Իմ արունըն էտէնց էժան չիմ ծախի։ ([illegible])։
Ինձմէն էլ չիս կանայ պրծնի։
Իժում Աստուծ կու վի կալնէ։
Ինչոր ինձմէն տանիս, քիզ համա մատուռ շինէ։ ([illegible])։

Սիգուտ կարճ պահէ, թէ չէ…
Սիգուտ քիզ համա պահէ, թէ չէ…
Սիգուտ քաշէ, թէ չէ…
Սիգուտ կարճացրու, թէ չէ…

Խմէ, թէ չէ՝ գլխիտ կ'օծիմ։ ([illegible])։
Խելօք կացէք, թէ չէ՝ չիմ գիդի, ինչ կ'օնիմ։ ([illegible])։

Ծնգնիրս չէ դողում քիզմէն։

Կուտէի դանա ([illegible]) նրա վադութինը՛։
Կամանց պարծենա՛ս։
Կամանց բըլթէ՛։

Ջոքիտ կու հանիմ։

*Հեռուն օր կանդնեցնեմ գլխուտ, վուր ասիս թէ հա՛։*
*Հենց կու շինեմ, բուրթ ու բամբակը քամու կու՛տամ։*
*Հեռուն բան կու բերեմ քու գլուխը, վուր Ցիմբիրը (Սէֆէր) դէօը մնայ։*
*Հեռուն կու հասցնեմ ([illegible]), վուր աճկերտ մթնանայ։*
*Հեռուն բան կու բերեմ քու գլուխը, վուր աշխարքը քեզ վրայ թամաշա ([illegible]) գայ։*
*Հազար ջէր ([illegible]) ասիլ եմ քեզ՝ մէ՛ անի։*
*Հեռուն կու խփեմ, աճկերեմէտ պէծերը ([illegible]) վէր թափի։*
*Հէնց կու շինեմ քեզ, վունցոր քարարչու ([illegible]) հովիչի ([illegible])։*

*Չէնա կորէ՞, թէ չէ...*
*Չէնա քեզ համա պահէ՞, թէ չէ...*
*Չէնը՞տ, թէ չէ...*
*Չեռնիկտ (կամ՝ մէճկտ) խօմ քոր չէ գայէ՞։ ([illegible])։*
*Չէնա վուրտ ըցէ՞։*
*Չէն վուր չըտաս, քու խէյրաթն ([illegible]) է։*

*Ճռնկրս ([illegible]) չէ գողում քեզմէն։*

*Մինձ թիքէն ([illegible]) անգաճտ կու թողնեմ։*
*Մէ շաու (5 կ.) լօբի վուր ուտեմ...*
*Մէ գրօշ (1/2 կ.) չեմ տա, վուր աճկտ դնիս։*

*Նրա համա սպաս է էփվում։*
*Նրա անունը ինձ մօտ մէ՛ տա ([illegible])։*
*Նրա հէնչաք ([illegible]) էլա չըկա՛մ։*

*Ճուշպար ([illegible]) կու խաղցնեմ քեզ։*
*Ճան սատակ կ'օնեմ քեզ։*

*Չըլէ՛մ, չիմանամ։ (([illegible])։*
*Չեմ էրեսս խէչ հանի ձիր կուռը ([illegible])։*

Իս քիզ կու շանց տամ հա՛։
Իս նրա ծվանը ([illegible]) կու ցամքեցնիլ տամ։
Իս էտ ուշունցը (կամ՝ բէաբռութինը) ([illegible]) չիմ ուտի։
Ինձ էլ կու ճանչնան, քիզ էլ կու ճանչնան։
Ինչոր ձեռնեմէտ գայ, չըխնախիս։
Իս քու ջիգրը ([illegible]) չիմ ուտի։
Իժում Աստծմէն չիս վախենո՛ւմ։
Իժում քու Աստուն ի՛նչ ջուղաբ ([illegible]) իս տալի։
Իս գիդիմ մեռլի գլուխը վո՛ւրթէնը կու շուռ տամ։
Իմ արունն էտէնց էժան չիմ ծախի։ ([illegible])։
Ինձմէն էլ չիս կանայ պրծնի։
Իժում Աստուծ կու վի կալնէ՛։
Ինչոր ինձմէն տանիս, քիզ համա մատուռ շինէ։ ([illegible])։

Լիզուտ կարճ պահէ, թէ չէ…
Լիզուտ քիզ համա պահէ, թէ չէ…
Լիզուտ քաշէ, թէ չէ…
Լիզուտ կարճացրու, թէ չէ…

Խմէ, թէ չէ՝ գլխիտ կ'օծիմ։ ([illegible])։
Խելօք կացէք, թէ չէ՝ չիմ գիդի, ինչ կ'օնիմ։ ([illegible])։

Ծնգնիրս չէ դողում քիզմէն։

Կուտէի գանա ([illegible]) նրա վադութինը՛։
Կամանց պալծենա՛ս։
Կամանց բրթէ։

Հոքիտ կու հանիմ։

Հնստի օր կանդնեցնեմ գլխիտ, վուր ասիս թէ հա՛։
Հենց կու շինեմ, բուրթ իւ բամբակտ քամու կու՚տամ։
Հնստի բան կու բերեմ քու գլուխը, վուր Յեմբերը ([illegible]) դէօը մնայ։
Հնստի կու հասցնեմ ([illegible]), վուր անկլըտ մթնանայ։
Հնստի բան կու բերեմ քու գլուխը, վուր աշխարքը քեզ վրայ թամաշա ([illegible]) գայ։
Հազար ջէր ([illegible]) ասիլ իմ քեզ՝ մի անի։
Հնստի կու խփեմ, անկերեմէտ պէծերը ([illegible]) վէր թափի։
Հէնց կու շինեմ քեզ, վունցոր քարարչու ([illegible] [illegible]) հոկիչի ([illegible])։

Չէնտ կտրե՛, թէ չէ…
Չէնտ քեզ համա պահէ՛, թէ չէ…
Չէնը՛տ, թէ չէ…
Չեռնիրտ (կամ՝ մէճկտ) խօմ քոր չէ գալէ՛։ ([illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible])։
Չէնտ փուրտ դցէ՛։
Չէն վուր չըտաս, քու խէյրաթն ([illegible]) է։

Ճռնիրս ([illegible]) չէ գողում քիզմէն։

Մինձ թիքէն ([illegible]) անգաճտ կու թողնեմ։
Մէ շառու (5 [illegible]) լօքի վուր ուտիմ…
Մէ գրօշ ($^1/_2$ [illegible]) չիմ տա, վուր անկտ դնիս։

Նրա համա սպաս է էփվում։
Նրա անունը ինձ մօղ մի տա ([illegible] [illegible])։
Նրա հէնչաք ([illegible]) էլա չըկա՛մ։

Շուշպար ([illegible]) կու խաղցնեմ քիզ։
Շան սատակ կ՚օնեմ քիզ։

Չըլիմ, չիմանամ։ (([illegible] [illegible] [illegible])։
Չիմ էրեսս խէչ հանի ձիր կուռը ([illegible])։

Ջէր ([illegible]) իմ ծեծողը չէ ծնվլի․

Պատանքտ կու ձեվլիմ․

Սպաստ կու էփիմ։

Վուրդլոր քուՆՆ ասխ, էնդի էլ իմՆ ասա․
Վա՛յ ջան կու կանչիլ տամ քիզ․
Վուր ասէ, թէ մածունը սիւ է, ասա՛ սիւ է։
Վա՛յ քու կաշուՆ․
Վուրվանց գ՚ուզիս, սիղծէ՛ ու բէ՛․

Տիղը ([illegible]) կու գցիլ տամ քիզ։

Փուստ ([illegible]) ու փալանգտ ([illegible]) կու հանիմ․

Քիչ խօսլի ([illegible])։
ՔնթեմէՆ կու հանիմ․
Քու իդն ([illegible]) ու թօզը ([illegible]) էստի չէրեվայ․
Քիզ տիղն ու տիղը բանհօքի կ՚օնիմ ([illegible])։
Քու խօսկի տակը չիմ մնա։
Քարը քարի վրայ չիմ թողնի։

Ո՞ւմ առջիւն իս էտ մալաղնիրը ([illegible]) խաղում։
Ուլուփումս ([illegible]) թիփ չը խառնի՛ք։ ([illegible])։
Ո՞ւմ հատն իս շինում ինձ։

---

Թ

# ՓԱՂԱՔՇԱՆՔ ԵՒ ԽՆԴԻՐ

Աճկումս վուր ննգնիս, աճկիս ձեռը չիմ քսի։
Ասծու սիրու։
Անմըրթի չըլլինք։
Արեւուտ մեռնիմ։
Անունիտ մեռնիմ։
Արգս (ծնկներ) սու։
Աճկիս լուս։
Աճկիս վըրայ տեղ ունիս։

Բուդտ կուտիմ։
Բերանտ շաքար։

Գլխիս վըրայ տեղ ունիս։
Գլուխտ ի՞նչ ցաւեցնիմ։
Գլուխս քիզ չարխփուխ ըլլի։

Դուն ապրիս։
Դուն վուչ մեռնիս։
Դուն իս իմ պարունը։

Էրկու աճկիս վըրայ։
Էն բանն անց կացաւ, ցաւ էր քիզմէն հիռացաւ։

Թողութին կու խնդրիմ։ (ներողութեան)։
Թէ աղբէր իս։
Թէ Աստուծ կու սիրիս։

Իմ անկլի լուս։
Ի՛ս քիզ համա գլուխս չիդ դրած ունիմ։
Ի՛ս էն իմ ուզում, վուր քուՆՆ էլ կանանչի ([illegible])։
Ի սէր Աստու։
Իմ էրեսը քու վուտի տակը։
Ի՛ս քու ջանին (հոգի) մատաղ (շուն)։

Խօսկտ շաքրով իմ կտրում։

Հոքումս կու Նստեցնիմ քիզ։
Ցատուկը կու խնդրիմ։
Հոքիս էլ չիմ խնախի քիզ համա։
Հենց ապրի՛ս։
Հոքուտ մեռՆիմ։
Հիւլի քիզմէՆ։
Հա՛ ջան։
Հոքէ՛ ի զադ. ի՛Նչ կու խնախիմ քիզ համա։ ([illegible])։
Հենց քու հօր գերեզմՆին լուս վէր գայ։

Չիր ցաւը տարաւ ([illegible])։
Չիր չարը տարաւ ([illegible])։

ՄեռՆիմ Քու օղորմութէնին, Տէր Աստուծ։
Միթամ ([illegible]) մէ էգեղեցի իս շինի, մէ աղչիկ իս մարթու տվի, մէ կարմունջ իս շինի, ան միթամ մէ ջուր իս բերի։

Զը մեռՆիս դուՆ։
Զարըտ տանիմ։
Զարիփուխ էհամ քի։

Պարուն դուՆ իմՆ իս։

Ջանիտ (հոգի) մեռՆիմ։
Ջուխտ ([illegible]) անկլիս վրայ։

Սէրը Քրիստուսին։

Վերևուն Աստուծ, ներքևը դուն․ (օգնական)։

Տէր Աստուած, ինձ իմ դուշմնի սրտով չանիս․

Յաւ էր, գլխմէտ անց կացաւ․

Փուշը, քու վուտը վուր պիտի մտնի, իմ աճկը մտնի․

Քու ցաւը տանիմ։
Քու արև սաղաղա (համար)։
Քու ջանին (հոգէ) մեռնիմ․
Քու ձեռի խուղին արժնիկ ըլիմ։
Քի չը թաղիմ․
Քու վուտի տակին մեռնիմ։
Քու հոքուն մեռնիմ․

Օ՛վ կամարկատար սուրբ Աստվածածին, փուխ էհամ քու օղոր-մութէնին։

Ժ

# ՈՂՋՈՅՆ ԵՒ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

—Աճկտ լուս։ «Աճկի լուսով ըլլիս»։
—Աշխարք փարտում իս ու միր կուռը կի իսկի չիս անց կենում։
—Այավէրդի (Աստուած տուեց)։ «Եախշի եօլ» (լաւ ճանապարհ)։
—Աստ, ինչի։ (Խօսողը պահանջում է լռել, որ ինքը նա նորանից հարցնէ, թէ ինչո՞ւ է աղմուկ)։
—Աստուած տայ։ (ողջերթին)։
—Աստու պատի տակն ինք կենում, վունչիչ չինք իմանում։
—Աղկատը շափաթ գու՛քայ։ (աղքատութեան խորհրդը)։
—Աճկս քիզ համա էր ուռի, վուր էկմըր։
—Այավէրդի։ «Խմէ ու վէր գի»։
—Առվուղչութին։ (հանգստացողին)։
—Աստով մխիթարվիս։ (Թաղեցողներին)։
—Ազատ, ազատ. քու Աստուն ազատ։ (Բռնած ճնճղուկը յետոյ թողնելով՝ ազատութեան է տալիս)։
—Աւել-պակասի համա թողութին կ'օնիս։ (տանտէրը հիւրին ճաշելու վերջը)։

—Բարով, հազար բարի իս էկի։
—Բաղնիստ անուշ։ «Կլինքտ անուշ»։ (Բաղնիքից լուացուելուց յետոյ)։
—Բարի լուս։ «Աստու բարին»։
—Բարին ձիզ մօղ։ «Բարու տէր ըլլիք»։

—Բարով մաշիս, հինն ինձ բախշիս։
—Բարի սահաթի (ժամ) ըլլի։
—Բարի աչողում։

—Գլուխտ ապրի։ ([illegible])։
—Գալդ բարի ըլլի։ (ճանապարհորդությունից վերադարձին)։
—Գօղլի, վուրդլի էլլը «Օքրօղանա» ([illegible])։—Ինչի համա։ «Ձոնկյու համա»։
—Գնում ես, ձգան փուրն ես մտնում։ ([illegible])։
—Գնաս բարով, գաս բարով։ (ճանապարհ գնալիս)։
—Գլուխտ ապրի, դուն լաւ ըլլիս, շատ նեղացայ քու բէբախտութէնին։ ([illegible])։

—Գիրա մեզ արի։ ([illegible])։

—Էս վո՞ւր քամին է բերի ձեզ գիրա մեզ։
—Էս ինչնմէ՞ն է, վուր դուն միր կուռն ([illegible]) ես էկի։
—Էսէ՞նց քաղցր պառվիս։ ([illegible])։
—Էտ վո՞ւր Աստէմէն (կամ՝ խէչէմէն) է, վուր մեզ միտտ ես բերի։

—Ջոնկճի սիրեկան կու՛լիս։ ([illegible])։

—Թաքաւուրն ապրանծ կենայ։ ([illegible])։

—Ի՞նչ բարին հարցնիմ։
—Ի՞նչպէս է ձիր հրամանուց քէփը ([illegible]). դինջ ([illegible]), առուղջ իք։ «Կանք էլի՜»։
—Ի՞նչ ես անում, վո՞ւնց ես։ «Փառք Աստուծ»։
—Ի՞նչպէս դուք, ինչպէս ձիրերը։
—Ի՞նչտ է։ ([illegible])։
—Ի՞նչ իք անում, վո՞ւնց իք։ «Խըրգինքն ու գեղինքը ձեզ լաւութէնով հարցնէ»։

—Լաց ըլելով ի՞նչ կու օտկլա (օգտուրին):
—Լուսը քու տեսնողին: (ու ձեզ. հետևորդին ողջո՛յն):

—Ծառայութին: «Ծառայ Աստու»:

—Կուտիս: «Հիւանդ խոմ չի՞մ, վուր հարցնում իս:

—Համէ: «Հրամանքտ շատ»:
—Համեցէք: «Ապրեցէք»:
—Հալա (դեռ) փառք Աստու, քու չարը բարի է էլի:
—Հէնց գլուխնաս, օխտը եաղ (իւղ) ըլլիս, էնէնց իս անց կենում:
—Համեցէք: «Շնորհակալ իմ»—Լաւ ձեռի է: (ճաշի կոչ մը ըստ մերժելիս):
—Հարսնիք ունինք, համեցէք. գօզաւըը (հեծ գու) քամեցէք:
—Հոքով խիթարվիս: (ծնողին և զաւակին):
—Հոքիտ լուս դառնայ: (հոգի):

—Միր տղայ:

—Շնաւոր նուր տարի. բազում (կամ՝ ամեն) տարի ուրախութէնով էս օրը հասնիս: (Նոր տարուան շնորհաւորելիս):
—Շէն կենաս: «Աստուծ բարաքաթ (առատութիւն) տայ քու գուքնին (խանութ) առուտրին: (ծախողը և գնողը):
—Շնորհակալութին: «Անուշնիր»: (շնորհակալութեան նաև խօսքը):

—Զիս անց կենում էլ միր կուռը (ձող):

—Պարո՞ւն իս: (պատրաստ եմ):

—Ջաղցեմէն իմ գալի: (սովոր է խաղերուն պատասխանը):

—Վո՞ւրթէնը, թէ Աստուծ աչողայ:
—Վո՞ւնց իք: «Պահիլ է ձիր բարի աղօտկը»—Արժանաւորաց:

—Վուտխտ հինա խս դրլի, էլ մէր կուռը ([illegible]) չիս անց կենում։

—Վո՛ւնց իք։ «Քարին ածկի ([illegible]) տալով ապրում ինք»։

—Վո՛ւնց իք։ «Կանք էլլի»։

—Վո՛ւնց է։ «Մէ բարաթ ([illegible]) է»։

—Վո՛ւր խէչեմէն է, վուր դէսն խս անց կացի։

—Վո՛ւնց է։ «Ինչ նա է, վուր քու դո՛ւշմանը ([illegible])։

—Վո՛ւնց իս։ «Դուառայ իմ»։

—Տո՛։ ([illegible])։

—Տո՛, տնաշէ՛ն։

—Տօմբախն ([illegible]) ածա՛։ ([illegible])։

—Փառաւուր բլլա. Աստուծ կարքլտ հաստատ պահէ։ ([illegible])։

—Քա՛։ ([illegible])։

—Քի արքաութին։ ([illegible])։

—Ողորմած կենա՛յ։ «Ողորմի ծնողացտ»։ ([illegible])։

—Ողորմի Աստուծ։ «Ողորմի ծնողացտ» (նոյն)։

—Ողորմութին արա՛, աղչիկ պարուն։ «Թողութին արա՛, բարի ([illegible]) ջան»։ ([illegible])։

—Ուրախութէնի բաղնիս անիս, ջանով, օղչընձով ([illegible])։

—Ողորմած կենա՛յ, ում դուռն էլ վուր էկիլ իս։ ([illegible])։

—Ունթունելի ըլլի։ ([illegible])։

—Ուխտդ ունթունելի ըլլի, մուրազդ ([illegible]) կատարվի։ ([illegible])։

—Ո՞վ է միտը բերում։ ([illegible])։

ԺԱ

## ԾԱՂՐ ԵՒ ՀԱՆԱՔ

Առուտվայ բարի լուսն է։
Աքլրի փօշտով կու ղրգիմ խաբարը (համբաւ)։
Ակուներըը սև կու հաքնին քիզ վրայ։
Աղ խոմ չիս, վուր հալվիս։ ([illegible] քեզ [illegible] է
[illegible])։

Բոված սառուց կուտեցնիմ քիզ։
Բան շինող էիր էլի, պատի տակին կու թախ կենէիր։
—Բարի լուս քիզ։ «Բաղի ձուն քիզ»։
Բաց արաւ էլի բարի բերանը։ ([illegible] խօսողի հասցէին)։
Բարաքալլէ (կեցցէ) ձանշունց Գօգի, Թուրքին ասիր «նա՞ դուր
(ի՞նչ է), նա՞ դուր, նա՞ խաբար դուր (ի՞նչ համբաւ է)»։
([illegible] [illegible] Թուրքերէն չէ գիտցել)։

Գիշիրը վուր լուն կծէ, գիդացի՛, վուր իս իմ։
Գիժ խոմ չիմ, խիւ իմ։

Ինչէնց սիրում իմ քիզ, վունցոր աղինջը (եղինջը) պղնձումը։
—Իս ու՞ր իս «Գդակի տակը»։
Իժան է, Բէժանի արիւը։
Իտ լիզուն էլ վուր չունենաս, ակուներըը կուտէին քիզ։
Իծ ասա՛, օխչար շատ կայ։

Ինէկ էն գիղին, վուր մօվրավը (տանուտէր) դուն կու՚լիս։
—Էս օ՛վ է։ «Ի՛գը չէ, կով է»։

—Չղրատտոն ([illegible])։ «Սուխ մէ ուտի, պռաս կէ՛»։

—Թուլուխչէ։ «Գլուխտ ուռչէ՛»։
Թլվատ ([illegible]) խօմ չէ, քաղցը է խօսում։
Թէ ծարաւ ես, ծառ կուլ տու։
Թո՛ղ, բռնած ունիմ։ ([illegible])։
Թուրքի գլխին վուր խփես, քրիստոնեայ կու դառնայ։ ([illegible])։
Թիքէս ([illegible]) կուլ չի գնա, թէ դուն բէղամազ ըլլիս ([illegible])։

Իս էլ իմ դէդի (մայր) էրեխէն իմ։ ([illegible])։
—Ի՛վը։ «Ի՛փոր «էփը» գու՚քայ»։
—Իս չիմ ուզի։ «Վունցոր ըլլի, դուն ու «չիմ ուզին» փայ (բաժին) արէք»։
Իրիգնահացտ խօմ թէժ չէ՛ր։ ([illegible])։
Ինչ բուխալլի (խողովակ) վուտնիր ունէ՛ս ([illegible])։
Ինչ էրեսը բաց մեռնիլ կուլլէ՛ս ([illegible])։
Իս ու դուն ննգիր.
Մէ թաբախ գրկիռ.
Իս գցիմ, դուն կէր (ջե՛ր)։
Ինչէ՛ մէ պստի գործլի չը դրիր ծուցտ։ ([illegible])։

—Լա՛ւ, լաւ. «գնա՛ թէլաւ»։
Լաւ մուշտարի ([illegible]) ես, էքուց էլ արէ։ ([illegible])։
Լաւ է խաղում մեր փնթին.

Խնամէ՛, խնամէ՛, խնձրահամէ՛։

Խամփէրլի, ալխ փէրլի (Վր. [illegible]). Երծվնու տանձ խ կերլի։
Խլօպուղ էիր, դուս էկմր։ (Խլօպողը՝ ձնծաղիկը շուտ է բուսնում)։
Խուլ բօշուն (գնչու) գալի գցիլ տուն, չուստ (շուտ) կու իմանաս։
Խէչը վուր քու ռանգն (գոյն) ըլի, օչով չի համբուրլի։ (տգեղ մարդուն)։
Խախլով ([illegible]) ջուր կու կրիմ քու հարսնքումը։
Խնամի՛, խօշ (ուրախ) խ էկլի, դարդակ ու բօշ (դատարկ) խ էկլի, կոտրած դաւով խ էկլի, խոըված (կամ քաչալ) (ճաղատ) հաւով խ էկլի։

Թափ տուն, Լէլօն խաղում է.
Փ... չունէ, կաղում է։

Կալին արի՝ դարման տար. ջվալը (պարկ) բի՝ դարդակ տար։ ([illegible])։

—Հա՛ «Հջաւն աճկիտ տայ»։
Հաւի պէս էրկու վուտն ունէ։
Ցոպոպնէրուտ բռված սառուց ուտեցրէ։
Հենց գիդենաս՝ շէն տան գօգօ (Վր. [illegible]) ըլի քու հարսը։
Հասանիրը ([illegible]) վնուրդի ռաստ էկան ([illegible])։ ([illegible])։
Հենց գիդենաս՝ անճարի ճարն ըլի ու անխշատակի՝ խշատակը։ ([illegible])։
Հենց գիդենաս՝ սատանի հիդ փոխած ըլի։ ([illegible])։

Մեռնէ՛մ նրա փառք ու բերնին։ ([illegible])։
Մատխ չը կծէ՛ս ([illegible])։

Մինձ թիքէն ([illegible]) դէնը դի։ ([illegible])։

—Ձէն կենայ Պլտանանց Քիքին, էրիտ մէ ծակ աբասի (20 կ.)։ ([illegible])։

Զաղ ([illegible]) մի ուտի, գէր կլի. մէ պստի ձգան ծէր կլի։
Զուստ-չուստ ([illegible]) ասա, մտէտ չը ննգնի։

Պաշտիմ նրա զօրութինը։ ([illegible])։
Պատիրը մըդ քաշեցէք։ ([illegible])։
Պստի հարսը տանը չէ, մինձ հարսը հիւանդ է։ ([illegible])։

Ջգլած ([illegible]) սրտիս վրայ պխտիմ պաչ անի քիզ։

Սառը ջուր խմէ, սիրտտ կու հովնայ։
Սրտի՞ն. քարը ծտին։

Վո՞ւնց կու՛լի քու բանը։
—Վո՞ւնց է։ «Լուն ածկի ([illegible]) է տվի նրան, քէփին չէ»։ ([illegible])։

—Տաք պահէ, սառը քամին չը դիբչի։
—Տիղը մի սառեցնի, չուստ ([illegible]) արի։

Փուղ ունիս, մածուն ա՛ռ, գլխիտ ածա՛։
Փա՛ռ ([illegible]) քիզ վըլաւ, վառկէ չլաւ ([illegible])։

Քու խաթիր համա մէ խորված հաւ կուտիմ։
—Քանի՞ սահաթն ([illegible]) է։ «Էրեգվայ վախտն ([illegible]) է։
Քու բերնումն էլ զինի ածիմ հա՛։

Քու դէղէն քի պէս մէ օխտը պիտէր բերի։
—Քանի՜ տարեկան իս։ «Հերվայ դէսը մէ տարեկան իմ»։
Քու արով (յոյս) քու գլուխը մնայ։
Քար կու պատռէ՝ նրա քարոզը։ (ձուկ է)։
Քանի՜ աղբէր իք։ (որ աստղեր խելօք էք)։
Քաղկի ըիրթն է ու Գօրու բիրթը։ (շուկ է Քեծամաճոտամ)։
Քրքրվի՛, քրքրվի՛, Փիթօինց աղջիկն իս ու Տէր Ճժաօնինց (եղէ-
Աքա-Դելքեան) հարսն իս։

Օվ գիդէ վրէն լու էլ չէ թռի հա՛։ (այդ գողասանքին ուժանք չէ)։
—Ո՞ւր իս գնում։ «Ղ'օրխմաղինց տունն»։ (Վէշտ Վէ տեղ յաճախողին)։
Օխչրի միս չէ ուտում, էղնէն դմակ ունէ, կօսէ։
Օվոր էտ չի ուտի, ան (կոճ) գիշիրը կու մեռնի, ան ցերեկը։

ԺԲ

# ԿԱՆԱՆՑ ՍՈՒԳ

—Ամաղա (երեխաներ) հալալ (երաշխաւոր) արա, դէդէ ջան։ (որդին է ասում իր հօր Բաշէկին)։

—Դուն վուր գնում իս, ինձ ում արով (յոյս) իս թողնում։ (ասում է այրին իր ամուսնու Բաշէկին)։
—Դամբուլները (դամբա) կու բերէիր. մինձերն ինձ կու՚տէիր (տայիր). պստիկները՝ էրեխանցը. հիմի ծվ կու բերէ, աղա (պարոն) ջան։ (կինը ամուսնու վրայ)։
—Դունով ու մէկ (այս ինչ անուն) ջան։ (դստեր վրայ. Բարեկամուհի է եղել)։
—Թէ սաիր՝ արա (ձեռագործ) կու բերիմ.
Դիզլին կարա կու բերիմ.
Պառաւ շուն ու քօփակ (պառաւ շուն) շուն,
Ինչի՞ կերար իմ չուրս ձուն։ (պառաւ կինը ծեր մարդու վրայ)։

—Իմ, ջիգարով (ջիգար), Գէուրք ջան.
Ջիգարի գուղ, Գէուրք ջան.
Մխը վուր կու առնէիր
Ու մէ-մէ ջիգարն էլ հիդը կու գողնէի՞ր։ (ասում է կինը ամուսնու վրայ)։

—Կտրով ու մէկ (այս ինչ անուն) ջան։ (Բարեկամուհի է եղել)։

—Մէ-մէկ սալմ ուշ կու'լի, քու մանղը ու մինձին մեռնիմ։ ([illegible])։

—Քու լիքն աղլուխին (Թաշկինակ) մեռնիմ։ ([illegible])։

ԺԴ

# ՓՈՂՈՑԷ—ՓՈՂՈՑ ԾՐՋՈՂ ՄԱՆՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ (*կինտոների*) ԲԱՑԱԳԱՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ

—Արմ (ահա՛), շօթիքը՛։ ([illegible]), [illegible] է)։

—Յոլ-բոլ ([illegible]) կանանչի՛ն։

—Էս բուխին է՛. հենց գիդենաս նորահարսի ձեռնիր ըլի։

—Թանաք առէ՛ք։ ([illegible])։

—Ի՞նչ ունի՞ք խարար արած ([illegible]), կոտրած՝ զանգուլ, տաշտ, թարախ ([illegible])...։ ([illegible])։

—Խստակ մուժ ([illegible]) առէ՛ք, հոքում վարձկ (կամ՝ շահ) արէ՛ք, համեցէ՛ք ուտէ՛ք ([illegible])։

—Խստակ ննդրած կանանչի՛ն։

—Կարաքի պէս մօթալը՛ ([illegible])։

—Կարաք կերէ՛ք։ ([illegible])։

—Հինգ ջխտի (զույգ) խշտաշն (տերտժան) ծվ ունէ։ (շահմաթ չէքման է)։

—Հալիմա բակլէն։ (եփած բակլա է ծախում)։

—Մարսական բուխկ կերէք։

—Մածուն առէք։

—Մօթալ առայ, էղ (կամ կարագ) դուս էկաւ։

—Ննգրած կանանչէ՛ն, կօխտա (կոճ, կոճղէճ) իշլի բերած է, նորաՀարսի ննգրած է։

—Ձուշա (երկարայն) խիար (վարունգ) կերէք։

—Զարխած (ճախարակած) գազարը, ռանդած (հարթած) գազարը։

—Պա պա պա պա, ի՛նչ մխղը է, ի՛նչ մխղը է. եարաբ (եւրտէ) սրա ուտողը խսկի կու մեռնի՞։ (Նոր պտուղներին մեղր ծախողը)։

—Տեփուրը (թաքուր) մէ փուղ։ (կանաչ է ծախում փոքր խախալով)։

—Քօրփա (մատղաշ) խիարը՛ (վարունգ), կանանչէ՛ն։

ԺԸ

# ՁԱՆԱՁԱՆ ԵՐԿՐԱՑՈՑ ՄԱՍԻՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՒԵԼԻ ԵՒ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԵՐ

I

## ՁԱՆԱՁԱՆ ԵՐԿՐԱՑՈՑ ՄԱՍԻՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

Ախալցխեցի՝ կռօ։ (ձուկը՝ փրփրէրէն-եղբօրը)։
Ալէքսանդրապօլցի՝ փռնչի։
Աքուլեցի՝ գօլ (հօլ, գօլ-տայ տյի), սատանայ։
Աշտարակեցի՝ մեռել ուտող, գօռ (գերեզման) քաշող (ձեռոցներ թռող)։

Գօրըցի՝ մատրաքազ (ոչխամող)։
Գանձըցի՝ շուն, օսկոռ կրծող։

Էրեւանցի՝ շան ճրաք։

Խօյեցի՝ էշ ներկող։ (էշը ներկում են ու ծախում տեղը ձիու)։

Կարբեցի՝ սատանայ խափող։ (Կարբ՝ գիւղ Երեւանայ մօտ)։

Հաւլաբրեցի՝ մորեխ ուտող, շան ճրաք։ (Հաւլաբար՝ Թիֆլիսի մի մասը, ուր բնակւում են Երեւանից գաղթած հայք և սաստ շատ է եղել)։

Ճա տու՛ն, Հա տու՛ն (Գոնչին)՝ Յարանեցիք. բոլլիկ քօվլու (Դոլ-ծինկով)՝ Ըմրաղեցիք. ա՛ շուն, արի՛, ա՛ կնիկ, կորի՛ Գ՛ա-լաչեցիք. էշաքարվան (Էշէ կարվան)՝ Ճնողնեցիք. փինչխու-լակիր՝ Հաղպատեցիք. Հարսնասիրուն՝ Սանահնեցիք. խլէ-գախորով (Մոլէն խորովել)՝ Մաղանեցիք. լօթի-փօթի (Մեքի, տաղամ)՝ Ձուլավրեցիք. գուրդնակիր՝ Ճալըցիք։ (Վեադեր Թիֆ-լիսի և Ելիզավետպոլի նահանգների Դաղախ և Բորչալու գաւառ-ներում)։

Գ՛արաբաղցի՝ էշ, խուտ ուտող։
Գ՛ազախեցի՝ էշի գլուխ, կոշտ ու կոպիտ։

Նուխըցի՝ մարդմզար (Մարդ կզարկող)։

Ձուլավրեցի՝ արջ։
Ճամախեցի՝ լօթի (Մեքի, տաղամ)։

Սալմաստեցի՝ խաչագող։
Սղնախեցի՝ խուզ։

Քաղկցի (Թիֆլիսեցի)՝ մատակ (Ծամծո) Ծամող։

II

## ԱՒԵԼԻ ԵՒ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԵՐ

Ըզվինինք։ (Աղուանից երկիր)։
Ընփոխնինք։
Ըլուրինք։
Արտալա-Գէօ։ (Արտալու ծովը գեօլ)։
Ընքանինք։
Ընամուլթինք։
Ըղկատինք։
Ընփաինինք։ (Վայ՝ բաժին)։

Ածա-խմէ-ամութ-չէ։
Ալանդադինք։ ([illegible])։
Անշինինք։ ([illegible])։
Աքլար Ճուշան։

Բուրթլիկինք։ ([illegible])։
Բուլրուլինք։ ([illegible])։
Բարատինք։ ([illegible])։
Բուխի-քիլինք։ ([illegible])։

Գըլիր-Բէժօյինք։
Գիժ-դդակինք։
Գօնցխօ-Պապա։ ([illegible])։
Գառնակիրինք։
Գայլակիրինք։
Գաճիմուլօյինք։ ([illegible])։
Գարէծէլօյինք։ ([illegible])։
Գադինինք։ ([illegible])
Գնացական-Մնացական։
Գէլօյինք։ ([illegible])։
Գէմուչինք։ ([illegible])։
Գէշինք։
Գուրջի-Բէրօյինք։ ([illegible])։

Դանդուռինք։ ([illegible])։
Դայլաք-Բէրօյինք։ ([illegible])։
Դամբուլինք։ ([illegible])։
Դիդվուրինք։ ([illegible])։

Երդէն-Օսէփ։
Էշ-Գուրդէնինք։
Էրդէն-անդճանինք։
Իքա-Պետրուսինք։ ([illegible])։
Իստի-մտիկ-արմն։

Եաղլու ուտող։
Եավա-Օսէփ։ (Նաև՝ ծաղրածու)։

Զանգակ-շինողինք։
Զուռնաչունք։
Զռան-Պօղոս։

Թխխա-ճիլլինք։ (Վր. ոսկէ շատ)։
Թիլլի-կուճուր։ (Ըեղը փոքր կծէ)։
Թաղլինք։

Ժանգուտինք։
Ժանգլի տղայ։
Ժամհարինք։

Ի՛գշուողինք։
Իգիրմի-դօրդինք։ (քսան և չորս)։
Իշապնինք։
Իշի-աքանդազինք։ (ափանդաղ՝ աշխաւալ)։
Իշլի-նօղտի-տղայ։
Իշի-գերեզման։

Լգլանուցինք։
Լէգզլի-Պէպլինք։
Լիղկուտինք։
Լօխօշ։ (Մեծ բերանանք)։
Լէհէնջինք։ (չէհէն՝ ջուռա)։
Լատան-Մուսէս։ (լատան՝ յուն. եղէգյն)։

Խուզակլիրինք։
Խախուտինք։
Խուզարածինք։
Խուզապնինք։
Խօջինք։
Խաշապնինք։
Խարազինք։ (խարազ՝ կօշկակար)։

Ծակ-օսկուլինք:
Ծուղաղուզլինք: (ծաղաղաղ՝ ծառը (մաշէնայ գոպըգոյ) էշրող):
Ծըլլանլինք: (ծըլըլ՝ ծորել):
Կլէկած-Արութին: (անպատէա):
Կուտլօ-Գօզլինլինք: (էշող):
Կէծակ-բերող-Աւետիք:
Կօնօզլինք: (կծէ անունից):
Կունդլիկլինք: (կոնդ՝ գունդ. կոճահատ):
Կանկօլինք:
Կակազլինք: (կակազ՝ թլուատ):
Կորիզլինք:
Կօխտալինք: (կօխտա՝ կով, կովիկ):
Կունատլինք:
Կրէտլինք: (կրետ՝ իշամեղու):
Կարճիկլինք:
Կակլինինք:
Կէնճի-Ջուրաբ: (կէնճէ՝ կոպէճ-կօշկակար):
Կէնճօ: (նոյն):
Կոլ-Պետրոսլինք:
Կաշակիրլինք:
Կխտուրլինք: (կխտուր՝ գխտոր):
Կաճկաճլինք: (կաճկաճ՝ անծեղ):
Կիրկիտլինք: (կիրկիր՝ ջին):
Կօնդախտազլինք: (կօնդախ՝ երախակալ շինող):
Կօխտա-Սոլոմոն: (կօխտա՝ կով, կովիկ):
Կրէճօլինք: (կռէճ՝ ծառի կէճ):
Կլօկ-Նանօ: (կլօկ՝ կանանց թխսոտեր):
Կօնդուրմէրսինք:
Կօնչօլ-ուտողլինք: (կօնչօլ՝ խաշու հայով, խաշով, ջուով և ալիւով):
Կօմբալլինք: (կօմբալ՝ մահակ):
Կօնչլի-Թիքա: (կօնչօլ՝ խաշու. թիքա՝ պատառ):
Կոպտ-դրստէ-Մարիամ: (կոպ՝ կանանց գլխի զարդ):

Հասրաթինք։ (հասրաթ՝ կարօտ)։
Հաց ու պանրինք։
Հացի-գլլի-տղայ։
Հուրթ-ուտողինք։
Ցիղի-վուտով-անգաճ-քոլողինք։ (եղէ նման)։
Հացափուրինք։

Զագօինք։ (յագօ՝ գծուծ)։
Զէթ-ծախողինք։
Զարուակտուրինք։ (յաքէ՝ յագու)։
Զգնապնինք։
Զամօինք։

Ղ'ազաղինք։ (ղաղաղ՝ Թխագոյն)։
Ղ'աջարդուղինք։ (ղաջարդուղ՝ ատամներ խորող)։
Ղ'օղուխինք։ (ղ'օղուխ՝ հաւատուն)։

Ճիանուրի-գօգրա։ (ճիանուր՝ մի տեսակ ըռաթաւ. գօգրա՝ դդմամ, գլուխ)։
Ճպռի տղայ։ (ճպռոտ աչքերուոր)։
Ճիպլինինք։ (ճիպլ՝ պորտ)։
Ճաճինք։ (ճաճա՝ չէչ)։
Ճրաք-ուտողինք։
Ճուլօ-Պապինք։ (ճնաթ)։

Մաճար-Պապինք։ (մաճառ՝ թաղար)։
Մեռլի-ուտողինք։
Միրուք-Կօնի։
Մում-ածողինք։
Մարքրտէ-միրքաուրինք։
Մրուտինք։
Մազմանինք։
Մարթակլրինք։
Միղաուրինք։
Մումապատինք։

Մկներու-Թաքառը։ ([illegible])։
Մօդնի-Գէօ։ ([illegible])։

Նուրաստիղծեալինք։
Նաբաթինք։ (Նաբաթ՝ շաքար)։
Նախըրչունք։

Շալվար-Պետրոսինք։ (Շալվար՝ անդրավարտիք)։
Շուշխունինք։ ([illegible])։
Շուն-Մուսէսինք։
Շահմուլինք ([illegible])։
Շնհէրինք։

Չաքուչինք։ (Չաքուչ՝ մուրճ)։
Չար-աստղինք։
Չանչուխ։
Չարվադրինք։ (Չարվադար՝ [illegible])։
Չօնդուր-մանօր։ (Չօնգուր՝ մի տեսակ ջութակ. մանօր՝ [illegible])։

Պօշիկ-Ակոփ։ ([illegible])։
Պառաւ-Եօվանէ։
Պլիկինք։ ([illegible])։
Պուտիկ։ ([illegible])։
Պխդաստուս։
Պատի-ծակինք։
Պօխրօ։ ([illegible])։

Ջիմօինք։ (Ջիմշէր անունէն)։
Ջանդակինք։ ([illegible])։
Ջօջօխեթինք։ ([illegible])։
Ջխտինք։ (Ջուխտ՝ զոյգ)։
Ջրկիրինք։
Ջուլինք։ ([illegible])։

Ջօջօլինք։ (ջօջօ՝ մուլէն)։
Ջագինք։ (ջաֆէ՝ մէ. մույսա)։
Ջրատարլինք։

Ռուս-Օհանէզլինք։

Սուտ-Քրիստոսլինք։
Սատանայ-Գէօլինք։
Սխտուր-Գէօլինք։
Սանթէլօլինք։ (սանթէլ՝ մոմ)։

Տօճլինք։ (թօճ՝ թէճոր)։
Տէր-Կէկէլ։
Տօզանլինք։
Տօլմա-ուտող։
Տուտնգլի-պուպուգ։
Տէր-տուտուց։ (պապագայ՝ չլմօր)։
Տէր-վազէ-վազ։
Տալինլինք։ (Տայոյ ողլուրհէյ (Աելոյշեա)։

Փարդակլինք։ (ֆարդագ՝ պարապ)։
Փէլօլինք։ (Փէլիպպոս անունէն)։
Փոխա-դէգմազլինք։ (ոչ փոխուելով)։
Փիս-Աւետիք։ (ֆիս՝ վատ)։
Փասալինք։

Քինքլինլինք։ (քինգլու՝ ոխով)։
Քնթօ-Ակոփ։ (մեծ քթով)։
Քէչա-Եօվանէ։ (քէչա՝ թաղիք)։
Քացախլինք։
Քարտաշլինք։
Քիշմիշլինք։ (քիշմիշ՝ չամիչ)։

Օխչար-Նօնի։
Օխտը-Հաց-ուտող։
Օսկէ-մկրքանինք։
Օսկէ-փուքանինք։
Օրպակասինք։
Օրփուլիանինք։ ([illegible])։
Ուզտի-մզզսունք։ ([illegible])։
Օխտն-անդճանանք։
Օղի-գեալգի։ ([illegible])։

# ԵՐԵԽԱՆՑ ԹՈԹՈՎԱՆՔ

Ազմու (երեխայի արտաբերությունը բառագանձարանից)։

Բաբախա (հրել)։
Բոզօլա (նույն)։
Բօճօ (ոջիլ)։
Բաբա (հայր)։
Բակալա (մր. բադրջանի, գառան)։
Բուա (ջուր)։
Բլնիլ (բռնել)։
Բաօ (երեխայ. մանուկ)։

Գագագ (խանգնել)։
Գուլխ (գլուխ)։
Գօլի-գօլի (գլորել)։

Ջիգի (գեղեցիկ էր)։

Թըռուալա (թռչել, փախչել, թռչող այլոք)։
Թաթա (շանն են ասում)։

Լօլօ (լուանալ, լողացնել)։

Խիչի-խիչի (քորել, խշել)։
Խօխօ (խորովել)։

Ծըլ (դեծել. ճօճք)։
Ծիտօ (ծիտ, ճնճղուկ)։
Ծիծի (ծիծ, ստինք)։
Ծիտօ-բաբա (ծափ հայ. խաղ. հայր մայր խաղալով են երեխայք և ամեն մէկն իրեն ձեռք խոր դանէր տանում, խաղալիքը շարում մի տեղ և հերթով տալիս)։

Կօգօ (ձու)։
Կակա (միրգ)։
Կուծու (ծծել)։
Կինճի (մր. ճճիկ. [illegible])։
Կիպէ (ճմլել, փեճոքել)։
Կօկօ (դանակ)։
Կիտուտ (խեշտոտ, [illegible])։
Կուկուզ (կկզել)։

Հափու (ուտել)։
Հաչի-դուդա (ոտքի վրայ կանգնեցնել երեխային)։
Հապա (խաղալ, գրկել)։
Հաչու (չէ)։
Հօլօլա (օրօր. գլորել)։
Հափսա (խաղալիքն են տալիս)։
Հաքշա (հանեցէք քշում են)։

Ճանաք (ճրագ)։
Ճուլու (ճօճել)։

Նունու (քնել)։
Նանա (ճնել)։

Չիչի (միս)։

Պապալի (պահել)։
Պապար-պապար (պարել)։

Պինծէ ([illegible]):
Պուպուղ ([illegible]):

Ջուջուլա (հաւ):
Ջուջու (հաւերին [illegible]):
Ջիտա ([illegible]):

Տա՛ (տո՛ւր):
Տուտու ([illegible]):
Տօտօ ([illegible]):
Տօտա՛ ([illegible]):
Տիտի ([illegible]):
Տունտուլակ ([illegible]):
Տէ-տէ ([illegible]):

Փուփալա ([illegible]):
Փիփի ([illegible]):
Փիսօ (կատու):
Փալա ([illegible]):
Փուփու ([illegible]):
Փիշի (միզ, միզել):
Փա փու ([illegible]):
Փալա փուստ ([illegible]):

Քութիա ([illegible]):
Քութուլա ([illegible]):
Քիխի ([illegible]):
Քուքուա ([illegible]):
Օկոր ([illegible]):

ԺԻ

# ՈԺԵՐ ԵՒ ԴԱՐՁՈՒԱԾՆԵՐ

Ածու աճկը նրա վրայ է։ (Բախտաւոր է)։
Աճկս մնում է։ (Սպասում է)։
Ընդճուժտ օղի պէս անց կացրած ունեցէ՛ նրա ասած խօսկերը։
(Ի՛ մոռանար)։
Ընդճուժտ օղ շինէ՛ նրա խօսկերը։ (Նոյն)։
Ու Աստվաձ հասաւ աղանչաքը։
Ակռէքը կոտրեցի։ (Վախեցնել)։
Ածու փիշը ([illegible]) բռնած ունիմ։ ([illegible])։
Աճկս կոտրվել է։ (Վախեցել է)։
Ընկտորում մարթ է։ ([illegible])։
Ուելլի վունչիչ։ ([illegible])։
Ամութու գեղինը մտայ։ (Ամաչեց)։
Առանց կրակ էրվում իմ։
Ամեն բարութէնով լիքն է նրանց տունը։
Աշխրքի լափը ([illegible]) գլխին անաւ։ ([illegible])։
Անթոկ ([illegible]) կապիլ է ինձ։
Անգ ու մանգ էլաւ ([illegible])։
Ակլի խախկուլի օմքին է։ ([illegible])։
Աղբէրն աղբուրը չի տա էս գնով։ ([illegible])։
Ալար գալիս է։ ([illegible])։
Այնումը չէ զցում։ (Բանի տեղ չէ դնում)։
Ածու աճկը վրէն քաղցրացաւ։

*Ամադ* ([illegible])—*ըէհաւամ* ([illegible]) *արաւ*։ ([illegible])։
*Ասղի ծէրով խմ ապրում*։ ([illegible])։
*Աճկս վախեցած ունիմ*։ ([illegible])։
*Աճկով կերան ինձ*։ ([illegible])։
*Աճկումս խաղում էտ Թանաքամանը*։ ([illegible])։
*Ակին ու կրակին է անում բանը*։ ([illegible])։
*Աճկիրս գնում է քնի համա*։ ([illegible])։
*Աշխարքը մէկ մէկու գիրաւ*։ ([illegible])։
*Աճկս չէ կտրում*։ (չէ [illegible])։
*Աճկիրը տասն է արի*։ ([illegible])։
*Արեգագը կծում է*։ ([illegible])։
*Արտսունքով մեռիլ էր*։ ([illegible])։
*Արեգագը խփից գլխին*։ ([illegible])։
*Ամեն գինի ջուր չի վի կալնի*։ ([illegible])։
*Անհուտ ծաղիկ է*։ ([illegible])։
*Անգաճը ծանդր է*։ ([illegible])։
*Աճկիր շանց տու նրան*։ ([illegible])։
*Ապրանքը գին է բռնի*։ ([illegible])։
*Առուտուրը կանգնած է*։ ([illegible])։
*Ահը վի կալաւ ինձ*։ ([illegible])։
*Ամուլթի տակը մնացի*։ ([illegible])։
*Ախըլ-պակաս խօսկ մի ասի նրան*։ ([illegible])։
*Աճն է տալի բրինձը*։ ([illegible])։
*Ածած մուժ ըլի կ'օսխս էն մարթը*։ ([illegible])։
*Ապրանքը չի վի կալնի էտ գինը*։ ([illegible])։
*Աճկէն ննգաւ*։ ([illegible])։
*Աճկումը ննգնում է*։ ([illegible])։
*Աստ-կ'օսէտւմն ինև*։ ([illegible])։
*Անիշատակ վիր ննգաւ*։ ([illegible])։
*Անմիղ մի ասի*։ ([illegible])։
*Արուռ* ([illegible]) *չունէ էրեսին*։ ([illegible])։

Անկս վրէն մնաց։ ([illegible])։
Արք ունէ նրա վրայ։ ([illegible])։
Արնդագը ջարթիլ է նրան։ ([illegible])։
Արունը շըթի է տալի։ ([illegible])։
Անկը չը կանաց բաց անի։ ([illegible])։
Անգաճ արա իմ խօսկին։ ([illegible])։
Ուղի վրայ է հիմք դրի։ ([illegible])։
Ակռէք կփցրուց նրան։ ([illegible])։
Անկը գիրաւ։ ([illegible])։
Աստղի կտուր է։ ([illegible])։
Աշխարքը գլխիս մթնեցաւ։ ([illegible])։
Արէնթաթախ լեզու ունէ։ ([illegible])։
Անկը նի կթից։ ([illegible])։
Արուչի ([illegible]) ին շինի նրան։
Ամեն բանը բաշարում է։ ([illegible])։
Անկտ բաց արա։ ([illegible])։
Ապուխտ օմքին է։ ([illegible])։
Աշխարքը գընդաց։ ([illegible])։
Անգաճս թող գինչ ([illegible]) ըլլի։ ([illegible])։
Անգաճը մէ բան ննգաւ։ ([illegible])։
Ածած-գցած օմքին։ ([illegible])։
Անժամ բարդանում է։ ([illegible])։
Անծրուները վրայ լու է հալէն ([illegible])։ ([illegible])։
Աղօտկ է անում։ ([illegible])։
Աղօթում է սև դանկով։ ([illegible])։
Անկս չիմ խփի (կամ՝ չիմ կփցրի) էս գիշերը։ ([illegible])։
Անկը կփցրուց նրան։ ([illegible])։
Անկերը չռկլ է։ ([illegible])։
Անկս պէլանում է։ ([illegible])։
Անգաճ կալ ինձ։ ([illegible])։
Անկազմ էրեխայ է։ ([illegible])։
Ալ քու խարջ տեղ է։ ([illegible])։

Անունը չաղ է անում։ ([illegible])։
Ածուն աճան է։ ([illegible])։
Անկիր-անխում կամ։ ([illegible])։
Աճկիրս շաղվում է։ ([illegible])։
Առանց այլևայլ։ ([illegible])։
Աղջիկս հասիլ է։ ([illegible])։
Անարեգագ տեղ։ ([illegible])։
Ազիզ օր։ ([illegible])։
Ալքլարը կանչում է։ ([illegible])։
Ալքլարկանչուցին էկաւ։ ([illegible])։
Աչքիւը պատ պխտիմ քաշի։ ([illegible])։
Ալին-օլին մարթիք ին։ ([illegible])։
Ազգատրաք արաւ նրան։ ([illegible])։
Ափուռ-չփուռը մօդ արաւ, գնաց։ ([illegible])։
Անգլիկոր էլաւ։ ([illegible])։
Անդի-չանդի օմքին է։ ([illegible])։
Առաջը կտրից։ ([illegible])։
Աղիզ-մաղիզ պահած աղջիկ է։ ([illegible])։
Ափիզ-ցփիզ խօսկիրք։ ([illegible])։
Առաչն առաւ, տարաւ։ ([illegible])։
Առաչ ննգաւ, էրի։ ([illegible])։
Առօք-փառօք բազմած է։ ([illegible])։
Առուկ-փառուկ։ ([illegible])։
Աղի աղջիկ է։ ([illegible])։
Ալնի աղջիկ է։ ([illegible])։
Արնի դադաստան։ ([illegible])։
Ագուռ է կտրում։ ([illegible])։
Աղիս-մաղիս էտ կու կանգնի։ ([illegible])։
Ասկով-տակով կու ճանչնամ։ ([illegible])։
Աճկս ջուր կտրվեցաւ (կամ դառաւ)։ ([illegible])։
Առնում-ծախում ին մարթուն։ ([illegible])։
Ագուռ հաքցրուն պատումը։ ([illegible])։

Աչկէն գցից նրան։ ([illegible])։
Անդամս կանչում է։ ([illegible])։
Աչկումս չէ գալի աղջիկը։ ([illegible])։
Աչ կերանք ճանփին։ ([illegible])։
Աչկիս տակը կունենամ։ ([illegible])։
Աչկի լուսն ուտեցրուց նրան։ ([illegible])։
Անուն կտրած օմքին է։ ([illegible])։
Արէն-արտասունքով լաց է ըլում։ ([illegible])։
Աչկը բաց անել չէրլիտ։ ([illegible])։
Աշխարքումը էլ հէքիմ ([illegible]) չը մնաց, բժիշկ։ ([illegible])։
Աչ տվի նրան։ ([illegible])։
Ապրանքը վէր դիրաւ։ ([illegible])։
Աստուծ դէվէր մոլիկ էրլիտ նրան։ ([illegible])։
Անպաճու բան տու ինձ։ ([illegible])։
Ամուլթու էլ չը կամ։ ([illegible])։
Աստառը վրայ քաշից։ ([illegible])։
Ակռէքս կտրից թթու նուռը։ ([illegible])։
Աշխրքի բան ունիմ։ ([illegible])։
Ապրանքս պառկեցաւ։ ([illegible])։
Աչկս խափան է տալի։ ([illegible])։
Արնի տէր է։ ([illegible])։
Ամէն ջուր բերելով լվանում ինք բօչկէն ([illegible])։ ([illegible])։
Անծու դիրք է։ ([illegible])։
Ալթամադուղս բռնից։ ([illegible])։
Ասած ունէ։ ([illegible])։
Անծու աբով ([illegible]) իմ թողի ապրանքը։ ([illegible])։
Ուխլով մօղարածնիր ինձ։ ([illegible])։
Արուն է խարկում։ ([illegible])։
Աչկիրս պծղեցնում իմ։ ([illegible])։
Աչկի լուսը հատիլ է։ ([illegible])։
Աչկի լուսը դուս էկաւ։ ([illegible])։

Աճկիրս խառնվում է (…)։
Ապառաժ կտրվեցաւ (…)։
Աճկով արաւ (…)։
Աճկս նրա վրայ ունիմ բռնած։ (…)։
Ակռէքնիրը գրճտեցնում է նրա վրայ՝ (…)։
Արշինումն (…) ինչ կայ՝ (…)։
Անունը տալիս է։ (…)։
Անգաճս դէտն է։ (…)։
Աւելին մէջը խաղցրու։ (…)։
Աճկը էրգինքը կթիցա (…)։
Աճկս ճանփի վրայ է։ (…)։
Արասեմէն խօսի՝ (…)։
Անցկացած սիրում իմ նրան։ (…)։
Ալմաս մատնիք ունիմ մէ ակնանի՝ (…)։
Ընտիրտ կպան բանին։ (…)։
Ընգլուխ օմքին է։ (…)։
Ալուրը մուկը կտրից՝ (…)։
Ախ ու վիշ է անում։ (…)։
Աւելի անուն ունէ։ (…)։
Արշիգութին է անում նրա հիգ։ (…)։
Անզալ մարթ է։ (…)։
Աժալ-չաժալ օմքնիր ին։ (…)։
Ասար-բասար օմքնիր։ (…)։
Ամունք կայ։ (…)։
Աղի-աղի արտասունք է վէր ածում։ (…)։
Աճկիրս ման ի ման իմ ածում։ (…)։
Անգաճս էտի է։ (…)։
Անհրանելի բան է։ (…)։
Աճկիս տակը անց կացրի՝ (…)։
Ածիլ տիլի շուշէն։ (…)։
Աջնիկով պառկեցաւ (…)։
Այլա'կիրպ օմքին է։ (…)։

Աղուն ունին աղալու։ ([illegible])։
Աճկումը շատ էրեվաց։ ([illegible])։
Ախտուսս գալիս է։ ([illegible])։
Ամեն գնալով տանում ենք հեղենիրս։ ([illegible])։
Աղեգ-մազեգ։ ([illegible])։
Աքլրի պէս հանց ուզում է աթմորթու էրեսը գծլի։ ([illegible])։
Ալղի-ղաշտի օմքին է։ ([illegible])։
Աման-աշկարա։ ([illegible])։
Արթար էղ։ ([illegible])։
Անէրես մարթ է։ ([illegible])։
Ամեն Ամնու օր։ ([illegible])։
Առքի գնով եմ տալի։ ([illegible])։
Աղէկան կարքից։ ([illegible])։
Առասպել մարթ է։ ([illegible])։
Առաջին էրիտ։ ([illegible])։
Աշխատանքի մէջը մտաւ։ ([illegible])։
Անծրեւն օսկուսն անց կացաւ։ ([illegible])։
Աշխարք չէ մտի ջէր։ ([illegible])։
Արտոնքահամ է քէփ։ ([illegible])։
Արնաքամ էլաւ։ ([illegible])։
Ասիղ խոմ չէ, վաբ կորչի։ ([illegible])։
Աչքէքնէրտ ինչ ես շանց տալի փիս ([illegible]) ձեռու նման։ ([illegible])։
Աման-չաման։ ([illegible])։
Աճկածակ մարթ է։ ([illegible])։
Աճկարաց մարթ է։ ([illegible])։
Աճկերս բռնվեցաւ։ ([illegible])։
Աճկերը լցըվուց։ ([illegible])։
Աստղ-խսսող օմքին է։ ([illegible])։
Աճկերը վառեց նրա վրայ։ ([illegible])։
Աղանչաք-պաղանտաք է անում։ ([illegible])։

Ակռաւ է դառի։ ([illegible])։
Աղբէր դառանք։ ([illegible])։
Ալխաքօթ է նրանց տանը։ ([illegible])։
Աղ ու հաց լինք կերի մէտի։ ([illegible])։
Անգճումը ջրի ձէն է գալի։ ([illegible])։
Անգաճ դի՛ր նրան։ ([illegible])։
Աշխարքը սով ննգաւ։ ([illegible])։
Առուտվայ լուսը բաց էլաւ։ ([illegible])։
Աւարա ման է գալի։ ([illegible])։
Ալմասը լաւ ջուր ունէ։ ([illegible])։
Անց կացաւ ծովի էն էրեսը։ ([illegible])։
Ածու լիրան օրը։ ([illegible])։
Աստծութինը թէ կուտայ։ ([illegible])։
Ալմուլին գլուխն է ննգնում։ ([illegible])։
Անուն-անուն լիդ ասա։ ([illegible])։
Անմիզ-անգէթ ([illegible])։ ([illegible])։
Աճկալուս գնաց նրա մօդ։ ([illegible])։
Արարած աշխրքումը նրա հասը չի ըլի։ ([illegible])։
Արա-մարա զուքած է։ ([illegible])։
Արա-մարա ջուր է գալի։ ([illegible])։
Ալիշ-վէլիշ։ ([illegible])։
Արմածկս տարաւ։ ([illegible])։
Ալա-ուլումն լին։ ([illegible])։
Ակռէքս ակռքիս տված համփիրեցի։ ([illegible])։
Աթաղան-բարաղան էտէնց է էլի։ ([illegible])։
Աղկատ Ղադօ։ ([illegible])։
Ածած-մածած։ ([illegible])։
Ածած մարթ է։ ([illegible])։
Ամուլթի տակը մնացի։ ([illegible])։
Ախալուխ ([illegible]) չէ տեսի իմ ջանը։ ([illegible])։
Արմածկս բռնից։ ([illegible])։
Աւիլ-պակաս խօսկիրք։ ([illegible])։

Ըմբախուրի կանգ: ([illegible]):
Ըստուած կու մլի կայնէ: ([illegible]):
Ըճկլեր շանց տու: ([illegible]):
Ընդարտ բլիմ: ([illegible]):
Ըճկէ-աճկ խափիլց: ([illegible]):
Ըհեմէն ջուր դառաւ: ([illegible]):

Բօղազիտ ([illegible]) չի կանգնի: ([illegible]):
Բերնումս մի խօսի: ([illegible]):
Բերանը բաց մնաց: ([illegible]):
Բերնիս ջուրը գնաց: ([illegible]):
Բանը կտրուկ է: ([illegible]):
Բերնումը լեզու չունէ: ([illegible]):
Բերնի բայնիք է: ([illegible]):
Բերնումս էկաւ, ասի: ([illegible]):
Բերնումը սատանի լեզու ունէ: ([illegible]):
Բանս աչ է գնում: ([illegible]):
Բանս ձախ է գնում: ([illegible]):
Բերնի կապը կտրուկ է: ([illegible]):
Բանումը հոգին դուս է գալի: ([illegible]):
Բարակ հիւանդ է: ([illegible]):
Բարակ անձրեւ է գալի: ([illegible]):
Բարակ ծաղկատար է: ([illegible]):
Բարդս ([illegible]) կապեցի: ([illegible]):
Բերնէն ու փորէն է: ([illegible]):
Բաղի ([illegible]) էրեսը ծախեցի: ([illegible]):
Բանն ալլուս ([illegible]) նստեցաւ: ([illegible]):
Բերանը չափեցի: ([illegible]):
Բերնեմէն հացը կտրից, նրան էրիտ: ([illegible]):
Բուշտիս տրաքվեցաւ: ([illegible]):
Բդէ-բուդ ([illegible]) աղանչաք է անում: ([illegible]):
Բայլուշ ([illegible]) օմքին է, քանիսի գլուխն է կերի: ([illegible]):

Բողազումը ([illegible]) գլխիր է գալի։ ([illegible])։
Բերանը չի սրփի։ ([illegible])։
Բերանս չէ ճզմուի նրամէն։ ([illegible])։
Բերանս խափեցի։ ([illegible])։
Բախտաուր աստղի վրայ է ծնած։
Բանի տեղ չէ դնում ինձ։ ([illegible])։
Բերնի հովեմէն վախենում է։ ([illegible])։
Բանը մէ աբասու վրայ է ննգլի։ ([illegible])։
Բաղի էրեսը վի կալայ։ ([illegible])։
Բախտ չէ, ինչ է։ ([illegible])։
Բանն առաջ է գցում։ ([illegible])։
Բաս վրէն աղօտկ անիմ, չուտիմ։ ([illegible])։
Բուրթը վէր է տվի։ ([illegible])։
Բան շինից իր համա։ ([illegible])։
Բողմա էկաւ։ ([illegible])։
Բերան չէ բերում նրան։ ([illegible])։
Բախտի դուռը բաց էլաւ նրա համա։ ([illegible])։
Բերանս փոթոթից ծիծակէն ([illegible])։ ([illegible])։
Բողազ ([illegible])-մօղազս կրակ է ննգլի։ ([illegible])։
Բանի հիդ է։ ([illegible])։
Բանը խլթ ին գցում։ ([illegible])։
Բրօ-բրօ է անում։ ([illegible])։
Բերան-բերան կու խօսիմ։ ([illegible])։
Բիջ ([illegible]) կու դնինք նրա հիդ։ ([illegible])։
Բարաթը բաթլ ննգաւ։ ([illegible])։
Բլօմա գլուխ ունէ։ ([illegible])։
Բերնով չի չիդ ասվի։ ([illegible])։
Բերանս ցխում ին։ ([illegible])։
Բերնեմէս դուս ննգաւ խօսկը։ ([illegible])։
Բոնվեցաւ առչիւս ([illegible])։
Բղավում է, ինչ ջանումը ջան կայ։ ([illegible])։

Բօղազս (կոկորդս) վէր է էկլի: (ուռչել):
Բօղազս վի քաշիլ տվիլ: (հազ տալ):
Բերանս չէ գօրում, թէ ասիմ: (չեմ կարողանում):
Բերանս բաց արի: ([illegible]):
Բերան-պատառած օմքին է: ([illegible]):
Բաց արաւ խաշը (խմորի տեսակ) ջրումը: (լուծել):
Բաց ու խուփ է անում դուռը: (բանում և փակում):
Բերանս վուր արնով լիքն ըլի, չիմ կանայ լիդ ասի: ([illegible] որ նեղացած լինի):
Բօյդաղ տղէ է: ([illegible]):
Բերունի գինի: ([illegible]):
Բալթման-բալթման է խօսում: ([illegible]):
Բիլթովի կտրից օրագուլը ([illegible]): ([illegible]):
Բիլթովի է շինած: ([illegible]):
Բանը շատ թուլ է բռնում: ([illegible]):
Բանի վրայ չէ կանգնում: ([illegible]):
Բանի չէ կպչում: ([illegible]):
Բըլթաճան արինե ([illegible]):
Բաժան-բաժնութին ննգաւ նրանց մէջը: ([illegible]):
Բաս մտաւ նրա հէդ: ([illegible]):
Բարիշութին ննգաւ: (հաշտություն եղավ):
Բարիշելու վրայ ին: (հաշտվելու են):
Բան-ման:
Բօշ-բօղազ օմքին է: ([illegible]):
Բօշ-բերնանի օմքին է: ([illegible]):
Բօղլամիշ արին նրան: ([illegible]):
Բաղնիս վօրուղ արին: ([illegible]):
Բօօվ-բուսաթով տղամարթ է: ([illegible]):
Բարի կու խօսիմ քիզ համա: (բարեխոսություն):
Բէգզադէ օմքին է: ([illegible]):
Բանական մարթ է: ([illegible]):

Բանական խելք չունէ։ ([illegible])։
Բաղդադ էրես ունէ։ ([illegible])։
Բարձլի ծառ է։ ([illegible])։
Բախտը կտրում է։ (յաջողուած է)։
Բախտը բանում է։ (նոյն)։
Բասարաթս կապվեցաւ։ ([illegible])։
Բան չորթօրեց։ ([illegible])։
Բերան արաւ դասը։ ([illegible])։
Բանեմէս էլայ։ ([illegible])։
Բան չը կայ։ ([illegible])։
Բաց էլաւ փուրսս։ ([illegible])։
Բուրթ ու կծիկ է դառի։ ([illegible])։
Բանդի-բուստի օմքին է։ ([illegible])։
Բիդաթ է անում։ ([illegible])։
Բերնումը նստած մտիկ է տալի։ ([illegible])։
Բան-հոքի արաւ նրան։ ([illegible])։
Բէարուութին կերաւ։ ([illegible])։
Բերնէն գցից։ ([illegible])։
Բիթմիշ կ'օնիմ։ ([illegible])։
Բաց-բերան մարթ է։ ([illegible])։
Բանն էնէնց կտրեցին։ ([illegible])։
Բարդ ու բուրդ։ ([illegible])։
Բարդ ու բարխանա։ (նոյն)։
Բէդնամ արաւ նրան։ ([illegible])։
Բռնած ունին նրան։ ([illegible])։
Բալիշ (բարձ) էդի գլխի տակը։ ([illegible])։
Բրիլիանտի ջուր։ ([illegible])։
Բէչէսա ([illegible]) արաւ նրան։ ([illegible])։
Բերանը չի լիդ սրփի։ ([illegible])։
Բամբակը նստոր է։ ([illegible])։
Բերան-բերան գցեցին խօսկը։ ([illegible])։
Բերանս կրակ ընգաւ, ասի։ ([illegible])։
Բանքը բերնումս մոլրվիլ է։ ([illegible])։

Գլուխը լղից։ (խօբէլ, ...էշ շօ...էլ)։
Գլուխը վեր կալաւ, գնաց։ (հէօայօօ)։
Գլուխն առաւ, փախաւ։ (կլխօվէ խօբօօ)։
Գլուխը վէր լին արի։ (քօղ էն օօէլ խօբէլով)։
Գլխին չէ գնում հիւնդութիւնը։ (էնշնօխօբօօբէօն)։
Գլուխը հարփածի է գնում։ (հօբբօծ է յէօնօօմ)։
Գլուխը գժութէնի վրայ է գրի։ (խէնը է յէօնօօմ)։
Գլուխը չը գլղխնալու է տալի։ (չը հօօխօյօշ է յէօնօօմ)։
Գլուխը մահու է տալի։ (չէ օօշօօմ)։
Գլուխը փօթու է տալի։ (նօյն)։
Գլուխս դանդ մի անի։ (մէ՛ յօնյէօյնէլ)։
Գողնքի գնրի է։ (հէօօնք)։
Գլուխը հաւնած օմքին է։ (էնշնօհօօօն)։
Գդակը գլխումս պստկութին է անում։ (քօոր է)։
Գլուխը հարփինլուն է տվի։ (շօք օբբէյօշ)։
Գլխիս ղուղը (օօշէշ) մի տանի։ (մ՛ նէշօյնէլ)։
Գլխիս ցաւ դառաւ դրուստ։ (չէ հէօօնօօմ)։
Գլուխը կորցրուց։ (չէօբօօնէլ)։
Գլուխը գթիլ է։ (քծօմփօօէլ է)։
Գլաղի վրայ խաղանք։ (փբօշ փօն)։
Գիժ ու խելօք օմքին է։ (չէմօր)։
Գաղի տակն է ծախս անում։ (փօշօվ չօփէլօվ)։
Գաղը մինձութին է անում։ (քծ է)։
Գինուն մէքից ջուր խփէ։ (խօօնէ՛, օծօ՛)։
Գինին կպիլ է։ (հօբբէլ է)։
Գէլ ձեվլից նրա գլխին։ (նէշօյնէլ)։
Գլուխ ղուս տարաւ (է փօփօբ օծէլ)։
Գլուխս տարաւ (յօնյէօյբօօյ)։
Գլուխս խմը չէ։ (խօօնօօօծ է)։
Գլխիս զարփօշը (խօօփ) (կամ խուփը) վեր կացաւ։ (մէօփը մօբօ-բօօէլ)։
Գլխմէն ձեռը վեր է կալի։ (մօհն օշփէ փօփն է փբէլ)։

Գլուխ դի՛ էտ բանին։ (հետևի՛ր)։
Գլուխս բալքալէքը (կամ՝ բալէն) գցեցի։ (Ներս—Բեկ—Ն)։
Գեդնի հիդ է նստած։ (գետնի վրայ)։
Գեդնի հիդ հաւասրվեցաւ։ (ոչնչացաւ)։
Գումբուր-գումբուր լաց է ըլում։ (ողբում)։
Գիլաքաշ գնաց հիդը։ (հետևից ծածկաբար)։
Գունդ ու կծիկ է դառել։ (կուչ գալ)։
Գնալ-գալ չունէ նրանց մօդ։ (բարեկամութիւնը խզել է)։
Գնալ-գալուն կու պիտենայ։ (ուրիշ բան չի կարող անել)։
Գալով գուքամ, ամմ կու՛լի վուր ուշանամ։
Գլխումը տված (կամ՝ վէր տված, կամ՝ խփած) օմքին է։ (չարէ խփած, խելքը կորցրած)։
Գլուխը գնում է հինով։ (գլխին հէռ տանում)։
Գիրը գրի վրայ է գալի։ (շատ-շատ)։
Գլխին կանգնեցրուց։ (ավերել)։
Գլխիտ մէ՛ նստեցնի։ (երես մի՛ տալ)։
Գլուխն էլ վրէն էդի։ (ձրիաբար)։
Գիշեր-ցերեկ է կոտրում։ (աշխատում է գիշեր ու ցերեկ)։
Գլխին փալթթեցին աղջկան։ (ամուսնու տալ)։
Գերի են թափում։ (աղօթել)։
Գլխիտ ածիս, հերիք է։ (բավական է)։
Գդակը քէշն է կտրել։ (թեթևել է, ուրախ է)։
Գուղը կոտրվեցաւ։ (խոստովանեց մեղքը)։
Գարին գցեցինք։ (գուշակեցինք)։
Գեդնովն (կամ՝ գեդնօքն) էրիտ նրան։ (վայր գցեց, տապալեց)։
Գլխի չէ ննգնում։ (չէ հասկանում)։
Գուղ կատու է դրուստ։ (հնարագէտ գող)։
Գլուխը աղոցում է։ (աշխատում է սաստիկ)։
Գլխեմէս վի քաշվեցայ։ (ձանձրացայ)։
Գալացու բան է։ (չնչին)։
Գիժ խօմ չեմ։ (մի՞թէ ես համաձայնում)։
Գլուխ պիտի, վուր դիմնայ։ (դժուար գործ)։

Գլուխը վայ է տալիս։ (փաշէման է)։
Գլխշիրվայ նորաՀարս։ (ձանաք ջէն)։
Գլխամէջն ուռում է։ (տըրամագլըխէյ)։
Գլխամէջն Հանեցին։ (խէլփահան անէլ)։
Գլուխը կերաւ։ (մահը գոռշաքէլ)։
Գլխամէջն դուս է տալիս։ (ջըմբըջըմբը խօսամ)։
Գինին կու խլղտվի լէքը ձարբրումը (յաղամ)։ (տժամը և անյանամ գինին յաղամ միզով)։
Գլխամէջտ խօմ չէր կտրվի մէ աքասին։ (միրէ չանձէր)։
Գործած մարթ է։ (փորյամաս)։
Գլղաքունի մարթ է։ (պորըղմըֆա)։
Գլուխ գինի։ (Բանգագին)։
Գլխնիրը պատուտում ին։ (շատ չանվ անել)։
Գլխապատառ վազում է։ (շպաղով)։
Գլուխ-պատռած գնում է։ (նայն)։
Գլուխ վէր էրի։ (Բորմել)։
Գլուխ էրիտ նրան։ (ողջանել)։
Գլուխ էկաւ բանը։ (խափակաեյան)։
Գլխին զօռ է տալիս։ (Բանէր և հնարամ)։
Գնդնի Հէդ. սրվեցաւ նրա խաթրուս։ (շատ չանվ արաա)։
Գցել է զօրրա։ (հարԲել և ատաքէ)։
Գլխաուր մարթ է։ (խամաշարել գէտեյող)։
Գալալ-գալալ է գալիս։ (գալարել. փէթը նէշանալ)։
Գլխիս Ինչ բանիր է բերի, վուր գլղծնաս։ (շատ ճապաԲխննէր և արել)։
Գլխկամէջն կտրից։ (տըրամագլըխէյ պախաեյըրայ)։
Գլխէ ի գլուխ կարթաց։ (Բողար)։
Գուրծկլի կպաւ։ (գոռծ ֆահէյ)։
Գդալի բերան։ (ծայր)։
Գդալի փուր։ (փառ)։
Գնդնի կոճակ։ (խարճահասաք մարդ)։
Գլխի ննդաւ։ (հախայա)։

Գլխին ձեռը քսից (հոգնութեան. ժամանակ ճակտը)։
Գանգը ննգաւ (ներհաշտաց)։
Գանա (Դժե) աշխարքը չալով (յոյր) է ծածկած (անպէր էն)։
Գինու մազա (չոր միրգ և այլն)։
Գինին գլխումը նստել է (հարբել է)։
Գինին գլուխը ննգաւ (նոյն)։
Գաչանայ տերտոյն էս բանն էրի իմ գլուխը (խաղաղայ ընկերով)։
Գլգլգլուր է գալի (թափոալով)։
Գինը տակռումն (տերմագ) է կտրում (շատ պակաս գին է տալիս)։
Գուլրքի աճկիրը դուս թափեցաւ (հետաքրքրութիւն խաղաղել է)։
Գուլրքի աճկիրը վեր քաղից (հետաքրքրութեան ազդել)։
Գիժ ու միժ (ընդհանրապես)։
Գանկտաբանի հիդ իմ (վիճելու գործ ունի)։
Գլուխս կտրից (խոյտառակեց)։
Գլուխ-ուստա (մեծ վարպետ)։
Գօզրա (դդում) է, գօզրա (խելօք)։
Գալնու բաշտան (գաւառի դէմ)։
Գադա-գուդա օմքնիր ին (ընչքի. ազգը)։
Գում ու կլան էլաւ (անյայտացաւ)։
Գոչում է սիրտս քիզ համա (յանկարծ է ցանկացել տեսնել)։
Գրի տակն է նստած (խորհում է. сидитъ за книгой)։

Դարդկով լիքն է (տխուր, ցնծոտ)։
Դարդս կտրվիլ է ու նրա մօդ իմ գնում (չեմ ուզում գնալ)։
Դուս գնալ չունէ ապրանքը (չէ վաճառւում)։
Դուչվիլ է (հարբել է)։
Դարիվէր իմ (մտադրած եմ)։
Դրանց հունքն (հաց. ջրի առջև) էլ գիդիմ ու բունքն (բոյն) էլ։
(ամեն հանգամանք)։
Դունչը (ատել) չի լիդ սրտի (սէր է)։
Դէիգա (մօրաքոյր) Մալթօն բարով (նա էլ այգին է տարած, խմ
ասում)։

Դամուռն ([illegible]) է բանը։ ([illegible])։
Դամն էկաւ ու քաշից։ ([illegible])։
Դամ է քաշում։ ([illegible])։
Դամարն ([illegible]) է մտի։ ([illegible])։
Դամարը գթիլ է։ ([illegible])։
Դուն էն գլխէն էտէնց գիդիս։ ([illegible])։
Դինգը չէ կորում։ ([illegible])։
Դուդուկնիր ([illegible]) է փչում գլխիս։ ([illegible])։
Դունէ դուռն աղկատ է։
Դառն աղկատ է։
Դուչած հաւ (կամ՝ կատու, կամ՝ մուկն) է գառի։ ([illegible])։
Դիլն է տալի։ ([illegible])։
Դիզը վրայ էկաւ հիւնդինւ ([illegible])։
Դժար ցօնաղ ([illegible]) գնացող օմքին է։ ([illegible])։
Դավթրումտ ([illegible]) անց կացրու էտ խարջը ([illegible])։ ([illegible])։
Դոստօղրու ([illegible]) գնացի նրանց տուն։
Դաստա-չօնղուր ունէին։ ([illegible])։
Դախլակալվիլ է խարէն։ ([illegible])։
Դամրլա ([illegible])-ցօչաղ ([illegible]) օմքին է։ ([illegible])։
Դուս է գրի աղչկան։ ([illegible])։
Դիգար աշուղն է գառի նրանը։ ([illegible])։
Դուս պրծաւ բանիմէնւ ([illegible])։
Դուզը բռնից։ ([illegible])։
Դարդակ-դարդակ դուս է տալի։ ([illegible])։
Դժարս գալիս է։ ([illegible])։
Դուշմնի սրտով էլաւ։ ([illegible])։
Դիվլիր-դէվէր է անում։ ([illegible])։
Դէմ կացաւ նրան։ ([illegible])։
Դիփունին քիզ պէս գիդիս։ ([illegible])։
Դօշի տախտակ։ ([illegible])։
Դարդամահ էլաւ։ ([illegible])։
Դուր չէ գալի կնրակուրը։ ([illegible])։

Դուր է անում դիզը։ (օգնում է)։
Դաղ (չետան) ու դարաբ (յոբ) արաւ (հալածեց)։
Դուն մի ասի, գնացիլ է։ (Բանից եղելոց)։
Դաւթար տուր նրան։ (Թո՛ղ)։
Դաբրա արաւ ապրանքը։ (չէտ է խանգնել խառաջացած գինը թալոց)։
Դառ ու դարդակ օմքին է։ (փող չունի)։
Դուս գալով է ժամը։ (վերջանում է)։
Դուս գալու վրայ է պատարագը (նոյն)։
Դադապարտվում իմ էլլի։ (հոգուս մեղք եմ անում)։
Դուխ-դուխ է խօսում։ (Բառ. խոսեր)։
Դարբէ դարբ էլաւ։ (տանէ տուան ընկնել)։
Դուռը կապիր։ (չինեց)։
Դուռն էրեսին լիդ է դրած։ (ալջեց ընկած)։
Դէդէուլ օմքնիր։ (մօր խաղեց)։
Դիզին-փօխլօ (ծակէ) է կտրվիր։ (շատ է տեղնել)։
Դադա-դուդա չունէ։ (ավելի ալգափանվեր)։
Դօզա-դօզա (ափեղելով) կանչում է։
Դուն էլ իմ օրումն իս էլլի։ (իմ վիճակումն ես)։
Դավալու բան է։ (վիճելի գործ)։
Դամարը (երակ) ճխպտվիլ է։ (յգացել է)։
Դրա վրայ էրկուսն էլլի իմ բերրի։ (այդ պատճառով չեղայ եղեն էլ է ծնունել ինչ)։
Դօշս բռնվեցաւ։ (մղձաւանջ)։
Դունչը (ռունչ) հուփ տված օմքին է։ (հանգած)։
Դունչ ու պռնգով հանդիրեցաւ։ (դիմաց տեսավ)։
Դարց էկաւ իր միղկը։ (մեղաց գալ)։
Դռնօքը չիմ անց կենաս (մոտով չեմ գնալ)։
Դռնիրը մինձացրին։ (աղեղանել ծակեր)։
Դուռը վրէն կողպիր։ (էլ Թողեց փամ)։
Դէս Թաքաուրի տղայ, դէն Թաքաուրի տղայ, չէրեւաց, գում էլաւ։ (ամեն խաչման դռնել եմ)։
Դարդավառամ էլաւ (յամ)։

Դիզի համա վուր ուզննաս, չիս կանայ ճարի։ ([illegible])։
Դուն գիզիս ([illegible])։
Դաստա-դաստա։ ([illegible])։
Դանակը ցցից, Թոկը ([illegible]) կտրից ([illegible])։
Դժարատիզա ասում էր ([illegible])։
Դարդկնկու վրայ է։ ([illegible])։
Դուս արի հինգ մանէթը։ ([illegible])։
Դուշէշ ([illegible]) էկաւ նրա բանը։ ([illegible])։
Դինդիշխարի ([illegible]) օմքին է։ ([illegible])։
Դէզի ([illegible]) ծիծ կտրող օմքին է։ ([illegible])։
Դժարատիզա քոր է գալի։ ([illegible])։

Էղնը ժէշտ ([illegible]) է շինի։ ([illegible])։
Ըախէս ([illegible]) Թափի տվի նրամէն։ ([illegible])։
Ըախալամիշ ([illegible]) էլայ նրամէն։ ([illegible])։
Էս մածնի քիլէն դրամէն խնլօք է։ ([illegible])։
Էնդանցի տանձը լաւ մինձ խաբրուզակնմէն ([illegible]) չի վախննա։ ([illegible])։
Էլի իր էշն է քշում։ ([illegible])։
Էս ճանփէն բանէ։ ([illegible])։
Էն էլ Աստուծ շատ արաւ։ ([illegible])։
Էտ Թուղտը խօմ քիզ աշկիրտ չիմ տվի։ ([illegible])։
Էս ձմիռը ձմռվայ հունար ([illegible]) չունէ։ ([illegible])։
Էն ձիուն ձի կու համնի։ ([illegible])։
Էտու գլուխ ծիլ ունէ։ ([illegible])։
Էքուց-էլօրութին է։ ([illegible])։
Էրած տիղ է փուղը։ ([illegible])։
Էլ հիռու ճուր իս դնում։ ([illegible])։
Էրկու տակ քաղկումը խօսում ին նրա վրայ։ ([illegible])։
Էրգար ու բարակ փիքը է անում։ ([illegible])։

Իս ամիսն իրն է։ ([illegible])։
Իրեսը շուռ է տվել ինձնէն։ (հեռացել է, թշնամացել է)։
Իրեսը պահում է։ (դարձ-ը դարձրած է)։
Իլ ինս ու ջինս (ցեղ) չէ էրեվում։ (ոչ ոք)։
Իրես-էրես էլանք։ (դէմ առ դէմ խօսեցինք)։
Իս ռանգը (երանգ) էն ռանգի հիդ չէ գալի։ (չէ յարմար)։
Իրեսս չէ տալի։ (ամաչում եմ)։
Իրեսին ջուր չը կայ։ (ամօթ)։
Իրեսի կաշին հաստ է։ (անամօթ)։
Իրես չունէ նրա մօդ։ (ամաչում է նորանից)։
Իրես մի տար (մի լքեցնիլ)։
Իս մէ աքասին էլ նրա աճկումը կենայ։ (թող պահէ)։
Իրեսով տու ապրանքը։ ([illegible])։
Իրեսին կանգնեցրուց։ (դէմ առ դէմ)։
Իրեսը վեր է բերում։ (յանդգնացրած է)։
Իրեսը գոմշի կաշի է շինլի։ (անամօթ է)։
Իրեսմէն լուս է վէր գալի (կամ կաթում)։ (շատ ողորմած է)։
Իրես պատռած օմքին է։ (անամօթ)։
Իրեսի փարդէն պատռվիլ է։ (նոյն)։
Իրդէն-բարակ կցվեցաւ։ (երկար խօսակցութիւն)։
Իս սոօլի (ա. ոեղան) վուտը ցաւում է։ (ոեղանը խարխուլ է)։
Իս խօսկն էտի (կամ ձիգ մօդ) մնայ։ (խոստովանում)։
Իս խօսկը միր մէջը մնայ։ (նոյն)։
Իլ իլաջ (հնարք) ու մափար (ճողոպրութիւն) չունիմ նրամէն։ (ճար չունիմ)։
Իրեխայ-էրեխայ իս խօսում։ (երեխայի պէս միամիտ)։
Իշ մարթ է։ (յոգնած, անփոյթ)։
Ինքան տիղը գիժ խօմ չիմ, վուր նրան էտ խօսկն ասիմ։
Իստի մոլիկ արա։ (այդպէս խօսք արդար արածին նայեցէք)։
Իրնէկ էր էն օրերուն։ (երանի անցած օրերին)։
Իրկու օր մէկս մէկու վրայ էկաւ։ (շարունակ)։
Ինէնցն արէ։ (այն կողմը)։

Իրեսի գամփռը ([illegible]) վէր է գալի։ ([illegible])։
Իրեխէն ծծէն կտրել տալի։ ([illegible])։
Իկիլ իմ քիզ վրայ կախ։ ([illegible])։
Իրիկու ճանփայ ջուր էրբի։ ([illegible])։
Ինքան խօմ չըկայ, վուր փիքըր անէ։ ([illegible])։
Ին տունը նրա համա անութին չի անի։ ([illegible])։
Իրիկու խփխլուծը կտրից։ ([illegible])։
Իտէնց վուր անիմ, ճուր կէհայ։ ([illegible])։
Իլ ուրիշին հիլթ չէ տալի խօսելու։ ([illegible])։
Եայլազ-ևայլազ ապրում է։ ([illegible])։
Իս դարդամէն ([illegible]) էլ չիմ դուս գալի։ ([illegible])։
Ինդու վատան է ննդի։ ([illegible])։
Ինդու տրաքուցը կուննենան։ ([illegible])։
Իրիկու մատը վլի կալաւ։ ([illegible])։
Իլ փայդա չունէ։ ([illegible])։
Իրեսի հաէն ([illegible]) վէր է ընկում։ ([illegible])։
Իրեսը քաշից կալթնինը։ ([illegible])։
Իրեսը չիդ թիքից։ ([illegible])։
Իտոի-էնդի է անում։ ([illegible])։
Իրեխանց կարիք։ ([illegible])։
Իրես արաւ ինձ նրան։ ([illegible])։
Իրեխին հիդը դրէ։ ([illegible])։
Ին յանդի մարթ է։ ([illegible])։
Իդնէն էլաւ ու չըհասաւ։ ([illegible])։
Իս վուտնեբանկէտ։ ([illegible])։
Իրկու դանա ապրանք ունէ տարած։ ([illegible])։
Ինէկ էտու վրայ անց կենայ բանը։ ([illegible])։
Իլ գամ դու՛քամ։ ([illegible])։
Իրեսը վէր է անում։ ([illegible])։
Իփած կու ճանչնամ նրան։ ([illegible])։
Իփած մարթ է։ ([illegible])։

Իտ փուղումը նա ըստացել է հինգ մանէթ։ ([illegible])։
Իրեխին քուն դի։ ([illegible])։
Իրկու մարթու բան իմ չինում։ ([illegible])։
Ըարալու ու փարալու է։ ([illegible])։
Իրկու-էրեսանի օմքին է։ ([illegible])։
Ըալվար ([illegible])-ծախա ([illegible]) է ննգլի։ ([illegible])։
Իրեսը ծինծաղ չէ գալի։ ([illegible])։
Ըօնդընիրս ([illegible]) թլացաւ։ ([illegible])։
Իրերմանի իմ գալի նրա ձեռին։ ([illegible])։
Իս տարսը մարթ իմ։ ([illegible])։
Իլի էն գնելու վրայ է։ ([illegible])։
Իրենխայ էրլի։ ([illegible])։
Ի՛կած մարթ է։ ([illegible])։
Ի՛լաւ խմուրը։ ([illegible])։
Իշ կորվեցաւ։ ([illegible])։
Իս կտուրեմէն դէրիա չի գուս գա։ ([illegible])։
Ըօլա-դէղան օմքին է։ ([illegible])։
Իստումը նա էկաւ։ ([illegible])։
Ի՞ ջրի օրը պակսում է։ ([illegible])։
Իշ-թարաքամա մարթ է։ ([illegible])։
Իշես տված աղջիկ է։ ([illegible])։
Իրեսը բաց աղջիկ է։ ([illegible])։
Իրեսներուս ջուր էլա անինք։ ([illegible])։
Ին-էն էր, գնում էր ձեռնեմէս։ ([illegible])։
Իսանց էլ վունչիչ չիմ գիդի նրամէն։ ([illegible])։
Իմի իմ սասծն է գալի։ ([illegible])։
Ին աշխըքեմէն է խաբար տալի։ ([illegible])։
Իտով նարս ([illegible]) չի սաղանա։ ([illegible])։
Իրադի պէս մլոս է գալի։ ([illegible])։
Իսօր-էքուց է գցում բանը։ ([illegible])։
Իրեսին է խփում խօսկը։ ([illegible])։

Իրիկունն է տալիս (…)։
Իրիկուի վրայ մնաց բանը (…)։
Իր օրն է ու էն օրը։ (…)։
Իր չառու վրայ իս էրկուսն էլ իմ խմի։ (…, …)։
Իրիսոր վրէն ծիծաղում է։ (…)։
Իլ ինչ խօսկս էրգարացնիմ։ (…)։
Իսօրվայ պէս միտս է։ (…)։
Իր ինչ ասելու խօսկ էր։ (…)։
Ինէնց կու կարիմ, վուր օցի բերնումը կու անց կենայ։ (…)։
Ինէնց կու կարիմ, վուր կ'օսխս օցի բերնեմէն ըլի քաշած։ (նոյն)։

Ջուս չէ ադամում։ (…)։
Ջէհին (…) մէ դիփչէի։ (…)։
Ջանգկի ձէնի վրայ էկաւ։ (…)։
Ջագինն էստի կ'օնինք։ (…)։
Ջախոս խառնվեցաւ։ (…)։
Ջախոս ժամ էկաւ։ (…)։
Ջանդակը տալիս ինի։ (…)։
Ջարդանդը բռնից։ (…)։
Ջահլէս տարաւ էլի՛։ (…)։
Ջաբրադանը քար չի անի։ (…)։
Ջռնիխ գինի։ (…)։
Ջուքած-ջանգրած։ (…)։
Ջուքած-գլպլտած։ (նոյն)։
Ջարթնէ նրան օչով չէ էկի։ (…)։
Ջրա չին սափ։ (…)։
Ջէհացնում ին բանը։ (…)։
Ջարիգարի է բերում։ (…)։
Ջռփի մարթ է։ (…, …)։
Ջօլ-փօլ օմքին է։ (…)։
Ջիգիլ-միգիլ։ (…)։

Թթմնիրը դալովեցաւ։ ([illegible])։
Թաքուն տէս նրան։ ([illegible])։
Թօփի ([illegible]) գուլլի ([illegible]) պէս հասաւ։ ([illegible])։
Թուք ու մուքս կպաւ (կամ ցամքեցաւ)։ ([illegible])։
Թոկէն փախած մարթ է։ ([illegible])։
Թանգ է ծախում իր գլուխը։ ([illegible])։
Թէ կու լաւացնէ, նա կու լաւացնէ, ուրիշ օչով։ ([illegible])։
Թարաքամի քօչ ([illegible]) է գրուստ։ ([illegible])։
Թուրս չը կտրից։ ([illegible])։
Թափ տվի նրան։ ([illegible])։
Թօզը ([illegible]) վէր է տվի։ ([illegible])։
Թուր քաշից վրէն։ ([illegible])։
Թուման-ալթի ([illegible]) արաւ։ ([illegible])։
Թաթարախանի ([illegible]) շինից բանը։ ([illegible])։
Թավլիքը քաշից։ ([illegible])։
Թօլաքեմէն դուս էկաւ։ ([illegible])։
Թուչունքի թիւով հացրուց։ ([illegible])։
Թաք ([illegible]) ու թուք հիւանդ է։ ([illegible])։
Թիւ է տալի նրան։ ([illegible])։
Թանդ ու կրակ ունիմ առած ապրանքը։ ([illegible])։
Թավրիզու է էկլի։ ([illegible])։
Թաց փէշտմալ ([illegible]) է դառի գրուստ։ ([illegible])։
Թարջիմալը քաշից։ ([illegible])։
Թութխա ([illegible]) է։ ([illegible])։
Թալաքա լին անում։ ([illegible])։
Թնթլնլով տարաւ։ ([illegible])։
Թօփախորով տրաւ նրան։ ([illegible])։
Թաշախուստով գլպլտված է։ ([illegible])։
Թամամ աղչկիրք լին։ ([illegible])։
Թնթիւ ձեռն ունէ։ ([illegible])։
Թնթիւ օմքին է։ ([illegible])։

Թարգը չէ տալիս։ ([illegible])։
Թէրէյ-թօխում օմքնիր ին։ ([illegible])։
Թանթախ մարթ է։ ([illegible])։
Թխթխլ-բխթխլ է անում։ ([illegible])։
Թէյլիկ-մէյլիկ է գալիս։ ([illegible])։
Թուշ գնաց նրանց տուն։ ([illegible])։
Թարժած արաւ քնեմէն։ ([illegible])։
Թքով կպցրած է։ ([illegible])։
Թէ Աստուձ կ'օնէ։ ([illegible])։
Թուղտը կտրից։ ([illegible])։
Թօրա (կամ՝ թարդ) արա՛ էտ խասխաթը ([illegible])։ ([illegible])։
Թթու խօսկիր է ասում։ ([illegible])։
Թիլը կապ ննգաւ։ ([illegible])։
Թամխլ-թամխլ է գալիս։ ([illegible])։
Թանձ ու խաւթալ ([illegible]) սկզբին է։ ([illegible])։
Թարէշ ին անում։ ([illegible])։
Թամահ է գցում։ ([illegible])։
Թրնկից նրան։ ([illegible])։
Թրնվ- թրնվ է տալիս։ ([illegible])։
Թուղտը կու խօսի։ ([illegible])։
Թափշուրմիշ արի նրան։ ([illegible])։
Թիլը կտրած չէ էլի հալբաթ Աստծմէն։ ([illegible])։
Թափ-թագա։ ([illegible])։
Ընկալնիլ ին իժճում։ ([illegible])։
Թացրուց բջին նրանց մօդ։ ([illegible])։
Թացնիլ էրխտ գլուխը։ ([illegible])։
Թօնդիրը կուզը տնէ։ ([illegible])։
Թօնդրեմէն դուս էրխտ թխած հացը։ ([illegible])։
Թշերեմէն արուն է կաթում։ ([illegible])։

Թառչօխ է տալի հաւը մաճօրլին: ([illegible]):
Թէ գ՚ուզիս՝ վուռղ էլ մի տա: ([illegible]):
Թէ վէր էլ է ննգնում, կատվի պէս վուտներու վրայ է կանգնում: ([illegible]):

Ժամը կերան: ([illegible]):
Ժամեմէն յիդ չէ ննգնում: ([illegible]):
Ժամը դուռ էկաւ: ([illegible]):
Ժաժ ու մաժ արի: ([illegible]):
Ժանգ ու ժունգը վէր է գալի էրեսեմէն: ([illegible]):
Ժատալի զնաց: ([illegible]):
Ժանգն էրկաթն ուտում է: ([illegible]):
Ժամի էրես չիմ տեսի: ([illegible]):
Ժանգը նրա վրայ ածաւ: ([illegible]):

Իմ ձեռով իմ տունը քանդեցի: ([illegible]):
Իմ մէրգը նրան չի մնա: ([illegible]):
Իմ բօղազի ([illegible]) ճանփէն էլ չիմ գիդի էնէնց: ([illegible]):
Ի՛ղ վուր վիՃվի նրանց տանը, կու վի քաղվի: ([illegible]):
Ի՛ս ասիմ՝ հալուր, դուն ասա՝ հազար: ([illegible]):
Ի՛քա ([illegible]) դազգա ([illegible]) սարքից: ([illegible]):
Իր քաշն օսկի է նստի նա ինձ: ([illegible]):
Ի՛ս նրա կէնճին ([illegible]) ջուրը զցեցի: ([illegible]):
Ինքն իրան ակռանաքը գցից: ([illegible]):
Ինչօր բերնումը զալիս է, դուս է տալի: ([illegible]):
Ինչկի մէ փլատօ ([illegible]) չը շուռ գայ վրէս, իմ բանը չի գրստվի: ([illegible]):

Ինձ նրա բերանը մէ՜ գցի։ (Վ՛ Թաշ-ամաղէլ)։
Ի՞նչտ կու պակսի։ (Ջուու չունի)։
Ինծի մսի պէս ի՞նչ ես ձգվլի։ (-եպնէ պեա)։
Իմ շունչը չիգ. բերող վուրթին պստիկս է։ (-ելբեկէ)։
Իմ պահող-թաղող վուրթին նա է։ (հոգոյով)։
Իմ համ շանց տվող վուրթին նա է։ (հնողանր, խամարար)։
Ինձմէն նրա մօդ. վունչինչ չը գիդենաս։ (չոտա նորան եմ մանին կ
Բան)։
Ինձմէնիգուս բան չը գիդենաս։ (եմ խողեյ Բան չոտա)։
Ի՛ս էլ գիդիմ։ (Բոյ եւ ե պոպոհամ)։
Ի՛ս քիզ նրան գիդէի։ (խործեյէ)։
Ինչ հունար (չնորհք) ասիս, ձեռնեմէն գալիս է։ (հնարոքեպ)։
Իմ աճկով տեսնիս նրան։ (-պեկլէ է)։
Ինձ Աստուած չէ տիղծի բանս։ (եւ մորտ չէ՛մ)։
Իր կաշվումը չէ դնջանում (հոնգոպոնով)։ (խորսչո-Բեեեյ Բորյր գործերամ ե խոռնլամ)։
Ի՞նչ էրեսով գնամ նրա մօդ։ (-մոչամ է)։
Ինչ բանի դնում ինք, նա չէ կանացի բաշարի։ (Բէչ գործ յանյնամ են, չէ խորողանամ խոպորել)։
Իստակ մմի (մեշրամոմ) պէս հալվիլ է։ (եէհորոյել է)։
Ինձ վրայ արք (եբառոնօ) է բանեցնում։ (Ճծոռբեն է -նոմ)։
Ի՛դն ու միղը դառան։ (հոշպոեյն)։
Իր փուրի աուչիւը (կամ՝ մօդ.) ամուլթով (կամ՝ սիւէրես) չի չի մնա։ (օոշյոծ չէ ճող, եոր գործը Բօզ խորքէ եր տնէ)։
Իմ տիղն ունէ բռնած։ (եմ պեչն է նշոնոխոել)։
Ինչ՞ումս անց կացաւ նրա տված փուղը։ (-նօքոոպ է եչել)։
Ի՞նչ խօսկ ունիմ։ (հոմոյոյն եմ)։
Իր բանումն իզի (-րէ) է։
Իլաջս ու մափարս (հնորօ) կտրվեցաւ։ (-նյոոոյէ է եչել)։
Ի՛ս օրով իմ նրամէնս։ (պորօօ Ճծ եմ)։
Ի՛ս նրա ձեռը չիմ բռնում։ (չէմ որքելոմ)։
Իմ սիրտը չի վի կալնի։ (հոճոյ չէ Բոյ)։

Իր խօսքի վրայ է կանգնած։ ([illegible])։
Ինչպէս շահ ու պէտքն է։ ([illegible])։
Իր օրնութիւն էտէնց է էլի։ ([illegible])։
Իմ ակուքի օմքին է։ ([illegible])։
Իր օրվայ կրակ դառաւ նրա համար։ ([illegible])։
Իր խօսքի վրայ դրուստ դուս էկաւ։ ([illegible])։
Ի՞ս վուր քունն ըլիմ։ ([illegible])։
Ի՞ս նրան լաւաշիմ։ ([illegible])։
Իրանու գլխու բան է բռնում։ ([illegible])։
Ի՞նչ դարով էս նրան գթիլ իմ։ ([illegible])։
Իմ միսը կտրողը չը տեսնէ իմ տեսած օրերը։ ([illegible])։
Իշի տեղ է գցում ինձ։ ([illegible])։
Ի՞նչ էս էրեխութիւն անում։ ([illegible])։
Ինչ ապրանք է։ ([illegible])։
Իմ յօժար կամով տալիս իմ։ ([illegible])։
Ի՞ս նրա վրայ գնացի։ ([illegible])։
Իմացա՞ր թէ վո՞ւրդի ասաւ։ ([illegible])։
Ի՞նչ էս փուլ գալի։ ([illegible])։
Ինչի՞ր էս թխթխկեցնում։ ([illegible])։
Ի՞ս էլ էտի իմ գալի։ ([illegible])։
Ի՞ս էլ էտի իմ։ ([illegible])։
Ինձ վրայ ըլի։ ([illegible])։
Իմ միղկը մի՛ վի կալնի։ ([illegible])։
Ինչացո՞ւ է։ ([illegible])։
Ի՞նչ արած է։ ([illegible])։
Ի՞նչտ կու վէր գայ։ ([illegible])։
Իմ ձեռը, քու եախէն ([illegible])։ ([illegible])։
Իմ փեսէն պէտի զամբիլով ([illegible]) դէվէր գայ էրդնքեմէն։ ([illegible])։
Ինչկի էս նրան բան հասկացրի, իմն ինձ հասաւ։ ([illegible])։

Ինչքա՜ն պէտքն է։ ([illegible])։
Իս տու՛, քի տամ օմքին է։ ([illegible])։
Իմ հացումը աղ չը կայ։ ([illegible])։
Ի՞նչ ունիք բաժնելու ([illegible])։
Ի՞նչ ունիք փայ ([illegible]) անելու։ ([illegible])։
Ինձի-ինձ էրվում իմ, փոթոթվում։
Ի՛ղ քամնցաւ սրտին։ ([illegible])։
Իմ խօսկը նրա մօդ բէփում։ ([illegible])։
— Ի՞նչ իմ ասում։ ([illegible])։
Իր թքածը լպստից ([illegible])։ ([illegible])։
Իրա վուստոլ էկաւ։ ([illegible])։
Իշարաթով իմաց արաւ։ ([illegible])։
Իշի պէս սախտ մնաց։ ([illegible])։
Ինձ իրանց կնիկ շինեցին։ ([illegible])։
Ինչքա՜ն իս գլուխտ էն տիզը դնում։ ([illegible])։
Իշի քամին բռնից ([illegible])։
Ի՞նչ տամ, վուր մէ լաւ բան ասիս։ ([illegible])։
Ի՞նչ իս նորահարսի պէս նստի։ ([illegible])։
Իմ հալալութենմէն կորայ։ ([illegible])։
Իրան-իրան գամըը (կամ՝ գրդարըը) ննգաւ։ ([illegible])։
Իծի ցաւ դառաւ գլխիս։ ([illegible])։
Իշի թօփուխի ([illegible]) պէս մնաց։ ([illegible])։
Ինչքա՞ր չէ անց կացի գլխիս ([illegible])։
Իշի պէս զռում է։ ([illegible])։
Իմ շնքի վրայ (կամ՝ իմ շնքին) ըլլի։ ([illegible])։
Իմ թուրն էլ ([illegible]) նրա մօդ չէ կտրում։ ([illegible])։
Իս կանգնած իմ քիզ համա։ ([illegible])։
Իր մտկի հիդ է ննգի։ ([illegible])։
Իր գաղի վրայ (կամ՝ գաղով) է չափում։ ([illegible])։

Իրա ճիղը վրէն քսից: ([illegible]):
Ի՞ղի պէս ջրի էրեսն է անում: ([illegible]):
Ինչկլի հիմի վո՞ւրդի էիր: ([illegible]):
Իշի տօլ ([illegible]) է դառլի: ([illegible]):
Ինձ վրայ կանգնում է, թէ... ([illegible]):
Ի՞նչ գլխիս իմ տալիս: ([illegible]):
Իմն աւելի գնաց նրա վրայ: ([illegible]):
Ի՞նչ ունինք սակուօ: ([illegible]):
Ի՞նչ դախլ էլաք էստի: ([illegible]):
Իմ մէջը խօսում իմ: ([illegible]):
Իր օրվայ կնիկ է: ([illegible]):
Իր օրումը չի ըլի էտ թաշար ([illegible]) բան: ([illegible]):
Ինչ կէր-չըկէր էրխտ նրան: ([illegible]):
Իմն ինձ հասաւ: ([illegible]):
Ի՞րիք վուտն ունիմ: ([illegible]):
Իմ բանը նրա մօդ առաջացրու: ([illegible]):
Ի՞նչ արած է: ([illegible]):
Ի՞նչ կ'օնիմ: ([illegible]):
Ի՞փ ժամանակ նա գնաց: ([illegible]):
Ի՞փ է գալի ջուրը: ([illegible]):
Ի՞փ կ'օնէ: ([illegible]):
Ի՞փն է, գնացիլ է: ([illegible]):
Ի՞րգրի օմքին էր մօդ արած: ([illegible]):
Իրիցատուն ին: ([illegible]):
Իշի մշակ է: ([illegible]):
Իմացի նրանց իվն ու ինչը: ([illegible]):
Իմքնին վուր ակռէքտ կփցնիս, էլ ձեռը չիս վի կալնի: ([illegible]):
Իմքին դառնո՞ւմ իս, թէ չէ: ([illegible]):
Իրա համա տիղ արաւ: ([illegible]):
Իստակ ճ՞փը գամ: ([illegible]):
Իստակ-զանազան: ([illegible]):

Իրա տվածը ինքը տարաւ։ (Աստուած. Յովնանի մասին)։
Ի՞նչ անբախտ է։ (Հաց չէ)։
Իր օրին շտապում է։ (Իւր գործը շտապում է մաքրել)։
Իշի պկու (ձուղ) օմքին է։ (չէմար)։
Ի՞րիք տարի է գալի։ (տեսել)։
Իշխան թղտիր ունիմ։ (Իշխանութեան չէ Իշխեր)։
Իրմէն գնաց։ (սիրտը նեղանալ)։
Իր կամացն է։ (Իւր կամքն է)։
Ի՞նչ լիշելու է մէ շալին։ (չափ է խօսել 5 ժ. մասին)։
Իրգնքի աստղերու հիդ. է խաղում։ (աստղաբաշխութիւն)։
Իմ դարդը մէ քաշի։ (Մ' հոգալ)։
Իր խօսկի տէրն է։ (հաստատամիտ)։
Իմ վէքիլը (փոխանորդ) խոմ չէ՞ս։
Ի՞ս էլ քըրհով (ձորյով) մուլքս (կալք) տամ, նա էլ. տեսնենք՝ ո՞ւմ մուլքն է գլուխ խփում։ (տեսնենք ո՞ւմ կալքը աւելի առ-տէգետ կը տայ)։
Ի՞նչ քար տամ գլխիս։ (ճար չունիմ. մոլորուել է)։
Իմ ձեռքին է նա։ (Իմ իշխանութեան տակն է)։
Իմ ինչի՞ս վէջն է։ (Ինչի՞ս պէտքն է)։
Իրգնքի փանարը (լապտեր) վառ է։ (լուսին)։
Իշտահս չէ տալի։ (ախորժակ չունիմ. Միտս չունիմ այդ բանը կատարելու)։
Իշի կուդու (ագի) պէս վունց կարճանում ին, վունց էրգարում։ (անփոփոխ են)։
Իծանիրը մօղ էլան։ (չարութիւնն առաւ)։
Իրա լիզվեմէն կրակն է ննգլի։ (Իւր լեզուն չափել է)։
Ի՞նչ անիմ, ի՞նչ չանիմ։ (տարակուսանք)։
Իրա մահով չի մեռնի նա։ (Բնական մահով չի մեռնիլ)։
Իր սսածի վրայ է կանգնած։ (յամառութիւն)։
Ի՞նչ բուղկիր ես ուտում։ (անկարգ խօսքին)։

Լէնքին ու էրգէնքին ին քաշում։ (Բամբասում են)։

Լուսին-լուսին է էրևում։ (ուշ-ուշ)։
Լաւ իր ու օտրի տէր է։ (լաւ [illegible])։
Լուսնիակի կտուր է դրուստ։ (շատ [illegible] է)։
Լվածկին լիզակ տուր։ ([illegible])։
Լաւ գնումը ծախեցի։ (լաւ գնով)։
Լուսէ ի լուսա ([illegible])։
Լաւ փուտն ունէ։ (յաջող)։
Լաւ ձեռք ունէ։ ([illegible])։
Լաւ ձեռն ունէ։ (յաջողութիւն)։
Լիզուն փուրը ննգաւ։ (վախեցաւ)։
Լիզուն էրգարացրել է։ ([illegible])։
Լաւ օրիր է անում։ (լաւ եղանակ)։
Լաւ հավէք է բռնում։ (նոյն)։
Լաւ կայ իր համա։ (հարուստ է)։
Լաւ փուղ շինից իրա համա։ (վաստակեց)։
Լաւ հարաքաթ է անում։ (շատ ջանք է անում)։
Լէն-լէն իս ձեվում։ ([illegible] ես [illegible])։
Լիգր-լիգր է խօսում։ ([illegible])։
Լաց ու շիվան ունին։ (լաց և կոծ)։
Լէվին-լէվին է անում։ ([illegible])։
Լէնգթէմուրի (Թամերլան) է ձքվի։ ([illegible])։
Լացս գալիս է։ ([illegible] եմ)։
Լիզվիս կծեցի։ ([illegible])։
Լուլի խցկան է դառի։ ([illegible])։
Լիզուն կապ ննգաւ։ ([illegible])։
Լաւ է, դռնիրտ չիմ կոտրտում։ ([illegible] շատ գալով)։
Լտուտկ արաւ։ ([illegible])։
Լացս կուլ իմ տալի։ (լացս պահում եմ)։
Լուսն ու մութը բաժնվելիս էկաւ։ ([illegible])։
Լուս ու թաքուն կրում ին։ ([illegible])։
Լաւութին շատ ունիմ նրա վրայ։ (շատ երախտիք եմ արել նրան)։
Լիթօնս բլաւ։ ([illegible])։

Լաւ գնաց տուն։ ([illegible])։
Լաւ ապրիլ ունէ։ ([illegible])։
Լաւ ապրելումն է։ ([illegible])։
Լաւ է նստած մըէն դէրբէն։ ([illegible])։
Լունխակը բոլոլիլ է։ ([illegible])։
Լախէն կտրեցէք։ ([illegible])։
Լիզխ պատռվեցաւ։ ([illegible])։
Լիզին ջուր կոլվեցաւ։ ([illegible])։
Լիզվխ ծէրը վրայ է կանգնած։ ([illegible])։
Լօյօ մարթ է։ ([illegible])։
Լէնքէ-լէնք լող է գնում։ ([illegible])։
Լուսնխակ գիշեր։ ([illegible])։
Լվածկը բօխչա ([illegible])։ ([illegible])։
Լօնգլ օմքին է։ ([illegible])։
Լաւ տեղ ննգաւ աղջիկը։ ([illegible])։
Լուսը ննգաւ։ ([illegible])։
Լուս ննգաւ։ ([illegible])։
Լի օր։ ([illegible])։
Լափղ է անում։ ([illegible])։
Լափղ չը տեսայ քեզ համար։ ([illegible])։
Լղղած աղջիկ է։ ([illegible])։
Լպուզ օմքին է։ ([illegible])։
Լիղ չէ խմանում։ ([illegible])։
Լիզու է կտրվել։ ([illegible])։
Լիզուս փաթթոթվեց։ ([illegible])։
Լիզվակուխ արին նրան։ ([illegible])։
Լէզգի է գրուստ։ ([illegible])։
Լէզգէվար է բան բռնում։ ([illegible])։
Լուրի ([illegible]) պէս սիրտս տրաքում է։ ([illegible])։
Լաւ քերթող օմքնիր լին։ ([illegible])։
Լուսաւորվիլ է։ ([illegible])։
Լիզվանիկ օմքին է։ ([illegible])։

Լիզուն կոտրից էրեխէն։ ([illegible])։
Լպստած օմքին է։ ([illegible])։
Լըլրեցնում է բերնումը։ ([illegible])։
Լմլմեցնում է խօսկերքը։ ([illegible])։
Լխլխկալով ման է գալի։ ([illegible])։
Լկրթվել է էրեխէն։ ([illegible])։
Լօթի-փօթի օմքնիր ին։ ([illegible])։
Լուռ ու մունջ։ ([illegible])։
Լխտիկ-լխտիկ։ ([illegible])։
Լկռաճաչ դուս է տալի։ ([illegible])։
Լիրթ ու թուքս էրվեցաւ։ ([illegible])։
Լաւ է դարսի։ ([illegible])։
Լաւ օր չի քաշի նրա ձեռւին։ ([illegible])։
Լաւ-լաւ խօսկիր է մխտում նրա համա։ ([illegible])։
Լառ գինին ջուր շատ է վի կալնում։ ([illegible])։

Խէչի տակը մէ գցի ինձ։ ([illegible])։
Խուզի դալիլ ([illegible]) է։ ([illegible])։
Խուզի մսի գնով առայ։ ([illegible])։
Խօսկի վրայ իմ ասում։ ([illegible])։
Խօսկի գէլիշ իմ ասում։ ([illegible])։
Խաթրը մէ կոտրի։ ([illegible])։
Խիլքն աճկերումն ունէ։ ([illegible])։
Խօսկը գեղլին չէ գցում։ ([illegible])։
Խօսկս նրա մօտ չէ անց կենում (կամ՝ դուս գնում)։ ([illegible])։
Խօսկն էրեսին է տալի (կամ՝ խփում)։ ([illegible])։
Խիլքը ջվալն ([illegible]) էգի։ ([illegible])։
Խիլքս բան չէ կտրում։ ([illegible])։
Խուռը ակեմէն է դուս տալի։ ([illegible])։

Խամթրով կոբած իմ։ ([illegible])։
Խամթրեմէն չըդուս էկայ։ ([illegible])։
Խիլքը ցաւում է։ ([illegible])։
Խալխի բերանն է ննգլի։ ([illegible])։
Խօսկ դուս քաշեցի նրամէն։ ([illegible])։
Խօսկը շատ տխղն է ասում։ ([illegible])։
Խախլի տակն (կամ՝ մէջն) ինչ մնաց։ ([illegible])։
Խիլքը տանուլ էրխտ։ ([illegible])։
Խիլքը չափեցինք։ ([illegible])։
Խիթար խօսեցայ։ ([illegible])։
Խիլքս վրէս չէ։ ([illegible])։
Խիլքումս չէ գալի։ ([illegible])։
Խիլքիտ աղ անիմ։ ([illegible])։
Խօսկ խօսկի էլանք։ ([illegible])։
Խօսկը մէկ լին արի։ ([illegible])։
Խառն ի բշտուբ։ ([illegible])։
Խօսկ կապեցինք։ ([illegible])։
Խիլք դնողնիր շատ ունէ։ ([illegible])։
Խունակը ([illegible]) վէր է էկլի։ ([illegible])։
Խամթրին դէդմիշ ([illegible]) մի ըլի։ ([illegible])։
Խօրխճ-մօրխճ է գալի։ ([illegible])։
Խօսկեմէս չիմ դուս գա։ ([illegible])։
Խիլքի աղկատ։ ([illegible])։
Խիլքի գառափ։ ([illegible])։
Խասխաթը ([illegible]) վիր է կալի։ ([illegible])։
Խօսկիրքը վիր է քաղի։ ([illegible])։
Խիլքէն արին վուրթուս։ ([illegible])։
Խիալ ([illegible]) է տանում։ ([illegible])։
Խիալ է վի կալնում։ ([illegible])։
Խիլքի վրայ չէ։ ([illegible])։
Խարփուխը դխխունիս կնքից։ ([illegible])։

Խճալաթ ([illegible]) չես քաշում։ ([illegible] է)։
Խփեցի, գնացի էնդյանց։ ([illegible])։
Խիլքիս ծէրը գնաց։ ([illegible])։
Խաւար է շանց տալի հալիլէն։ ([illegible])։
Խմուրը շատ ջուր է վի կալնում։ ([illegible])։
Խիղճս դալիս է։ ([illegible])։
Խկռօ միրք։ ([illegible])։
Խօսկ ննգաւ նրա վրայ։ ([illegible])։
Խօսկ բաց արաւ։ ([illegible])։
Խօսկը բերնումս մոլոլիլ է։ ([illegible])։
Խիստ է խրվլի։ ([illegible] է)։
Խաշլամա դունչ ու պռունգ ունէ։ ([illegible])։
Խիլքէ ի դուս բան է։ ([illegible])։
Խմելուն էրխտ գլուխը։ ([illegible])։
Խմելու մէջը մտանք։ ([illegible])։
Խաղացրու վուտտ։ ([illegible])։
Խաղացնում է նրան։ ([illegible])։
Խիլքը գլուխն էկաւ։ ([illegible] է, [illegible] է)։
Խիլքտ մօղաւուրէ։ ([illegible])։
Խօսելով չիմ խօսի, թէ...
Խօսկի դէփը իմ ասում։ ([illegible])։
Խմուրն էկաւ։ ([illegible])։
Խօսկիրը կուլ է տալի։ ([illegible])։
Խօսկ չունէ։ ([illegible] է)։
Խափռով տարաւ։ ([illegible])։
Խօշտարութին ([illegible]) մի անի։ ([illegible])։
Խաէնութին է անում։ ([illegible])։
Խէյրար ([illegible])-խեցատ ([illegible]) օմքնիր ին։ ([illegible])։
Խաթրջամ կաց։ ([illegible])։
Խնդմնդալի առաջ էկաւ։ ([illegible])։
Խնուց ու նուրուց։ (շատ)։

Խփից անկիրը։ ([illegible])։
Խփից ոխլլա։ ([illegible])։
Խալխի սատա-կօտէն ([illegible], [illegible]) վեր կալաւ նրան։ ([illegible])։
Խօսկի տէր մարդ է։ ([illegible])։
Խիլքս չէ հասնում էտ բանին։ ([illegible])։
Խիլքումը խօմ նստած չիմ։ ([illegible])։
Խուրջինի անկ։ ([illegible])։
Խիլքի գուդա ([illegible]) է։ ([illegible])։
Խիլքի կօլօփ ([illegible]) է։ ([illegible])։
Խիլքամաղ էլաւ։ ([illegible])։
Խիլքահան արին։ ([illegible])։
Խալիչի ([illegible]) խաւ։
Խիլքս տարաւ։ ([illegible], [illegible])։
Խիլքս չէ գնում քիդ համար։ ([illegible])։
Խաբարը ([illegible]) անգաճս ընգաւ։ ([illegible])։
Խնձուրը կէս անխս, գրուստ իր մամէն է։ ([illegible])։
Խէչի համա մուռ (կամ փուղ) չիդ գրինք։ ([illegible])։
Խունացիլ ([illegible]) է։ ([illegible])։
Խուղ է դառի։ ([illegible])։
Խօսկը բերնումը ծամում է։ ([illegible])։
Խառնվում է անկիրս։ ([illegible])։
Խառնվում է սիրտս։ ([illegible])։
Խառնվում է ոտկը (օր)։ ([illegible])։

Ծալպակաս (կամ ծալը պակաս) միքին է։ ([illegible])։
Ծուրբէլի ([illegible]) պէս կպիլ է, չէ պուկ գալի։ ([illegible])։
Ծէբօփ ([illegible]) պէս կպիլ է։ ([illegible])։
Ծէրը բաց էլաւ։ ([illegible])։

Ծուռն աճկով է մտիկ տալի ինձ վրայ։ ([illegible])։
Ծնգնիրս չէ գալի։ ([illegible])։
Ծարաւու խեղտվում եմ։ (շատ ծարաւ եմ)։
Ծմակի ([illegible]) աթմորթի է։ ([illegible])։
Ծաղկով հիւանդ է։ (ծաղիկ հիւանդութիւն ունի)։
Ծնգան խուփս բանվել է։ ([illegible])։
Ծարա-մարա է խօսում։ ([illegible])։
Ծափիկա-ծափիկա է խօսում։ ([illegible])։
Ծուրբէլա ([illegible]) քաշից։ ([illegible])։
Ծուռը ճանփի վրայ է ման գալի։ ([illegible])։
Ծապտու-լէլօ օմքին է։ ([illegible])։
Ծուռ ու մուռ։
Ծառ դէրիս է հաքի։ ([illegible])։
Ծանդրացել է կնիկը։ (յղի)։
Ծանդրած է կովը։ (յղի կով)։
Ծիծաղու կտորից մից։ ([illegible])։
Ծնգան տակը պահած աղջիկ է։ ([illegible])։
Ծլիկ-ծվլիկ ([illegible]) քանդից։ ([illegible])։
Ծլում են ու ծկռտում։ ([illegible])։
Ծրտի-պրտի օմքնիր են։ ([illegible])։
Ծծէն կտրեցինք էրեխին։ ([illegible])։
Ծապլիկ ս օմքին է։ ([illegible])։
Ծպտուն ([illegible]) մի հանի։ ([illegible])։
Ծով է նրա կարողութինը։ (մեծ է)։
Ծակ ու ծուկ։
Ծէքի հիդ գնացի։ ([illegible])։
Ծիծիրուռի պէս կպել է։ ([illegible])։
Ծաղկեցրուց պատմութինը։ ([illegible])։
Ծանդր ու բարակ նստել է։ (չէ հեռանում)։
Ծլաշար ([illegible]) գնում են։ ([illegible])։

Ծովը կտրից, անց կացաւ ([illegible]).
Ծծի վրայ կտրած մարթ է։ ([illegible]).
Ծարաւը կտրից։ ([illegible]):
Ծակուցը մէջքիս լիդ էլթող ինձ։ ([illegible]).
Ծանդը հիւանդ է։ ([illegible]):
Ծնով տռուտուր։ ([illegible]).
Ծովխանը խաղում է։ ([illegible]).
Ծղծղայի ([illegible]) ալրում ինք։ ([illegible]):
Ծէրը ծէրին ձլիւ ([illegible]) ինք հասցնում։ ([illegible]):
Ծիպը ոլած օմքին է։ ([illegible]).

Կրակ է վէր ածում ձեռնըրեմէն։ ([illegible]).
Կրակի պէս բան է շինում։ ([illegible]):
Կարկտի պէս վրայ է տալի։ ([illegible]).
Կաշի ու օսկոռ է դառէ։ ([illegible]):
Կաց ու կամ է անում։ ([illegible]):
Կամ ու կում է անում։ ([illegible]):
Կապելու դիժ է։ ([illegible]):
Կուղին ([illegible]) ծվացւ ([illegible]):
Կպրով կնքած օմքին է։ ([illegible]).
Կուռը դէմ էրիտ։ ([illegible]):
Կշտան ցաւը բռնիլ է։ ([illegible]).
Կրակը գնում է։ ([illegible]).
Կրտղի ([illegible]) է տալի նրա հիդ։ ([illegible]).
Կինծի-պինծի մօդ. արաւ։ ([illegible]):
Կզկնիրքը բռնից։ ([illegible]).
Կարթալնու բաշտան ([illegible]) ասաւ։ ([illegible]).
Կպիլ է թուղթը։ ([illegible]).
Կպիլ է գինին։ ([illegible]):

Կպչի կարաս ([illegible])։
Կտրվելու օմքին է։ ([illegible])։
Կերածը քնթեժէն դուս էկաւ ([illegible])։
Կարճութին է անում դէրիէն։ ([illegible])։
Կտրական գինն էս է։ ([illegible])։
Կլմփուցի է տայի։ ([illegible])։
Կուլի վրայ է կանգնած։ ([illegible])։
Կոտրվեցաւ դուզը։ ([illegible])։
Կոտրվեցաւ աճկս։ ([illegible])։
Կոտրվեցաւ քունս։ ([illegible])։
Կոտրվեցաւ քափը։ ([illegible])։
Կոտրվեցաւ անունը։ ([illegible])։
Կոտրեցինք ապրնքի գինը։ ([illegible])։
Կէս աթմորթի է գալի ([illegible])։
Կուլի կոմրալ ([illegible]) օմքին է։ ([illegible])։
Կուլի մամիդա ([illegible]) է։ ([illegible])։
Կուլ տվին նրան էն խօսկի համա։ ([illegible])։
Կնիկը վուրթի էրի։ ([illegible])։
Կրակ էրիտ։ ([illegible])։
Կրակ է անում։ ([illegible])։
Կրակ է չաղ անում։ ([illegible])։
Կտրած մարթ է։ ([illegible])։
Կնիկ է, ինչ կնգան պլտի։ ([illegible])։
Կուր ու կապ ([illegible]) էլաւ բանը։ ([illegible])։
Կուշտ լաց էլաւ։ ([illegible])։
Կխատ-պուատ ([illegible])։ ([illegible])։
Կապից նրան խօսկով։ ([illegible])։
Կուռը տվի։ ([illegible])։
Կարկտան չէ բռնում։ ([illegible])։
Կօտօշ քաշիլ էրիտ։ ([illegible])։
Կուզկով ապրանք է։ ([illegible])։
Կոճակ տղայ է։ ([illegible])։

Կրակի տէր է։ ([illegible])։
Կու դլխիչիմ նրանց տունն ([illegible])։
Կփցրին գօշերը ([illegible])։ ([illegible])։
Կէօքն է ննջի կարասը։ ([illegible])։
Կկլայի ձէն ունէ։ ([illegible])։
Կկկեցնում է խաղը։ ([illegible])։
Կամի բան է։ ([illegible])։
Կտուր-մտուր։
Կտուր-բրթուճ։ ([illegible])։
Կէս կյաս ([illegible])։
Կխլականտուրներով է խօսում։ ([illegible])։
Կապը կտրած մարթ է։ ([illegible])։
Կուզկը հաստ է։ ([illegible])։
Կլանում ին փուղերը։ ([illegible])։
Կէսօրի հէր հաց ին ուտում։ ([illegible])։
Կերակուր ին մօզ բերում։ ([illegible])։
Կտար-կտար է գալի։ ([illegible])։
Կերմըր։ ([illegible])։
Կանգնած իմ նրա համար։ ([illegible])։
Կծկած պանիրը վուր աղաջուրը դնիս, կու չիդ գայ։ ([illegible])։
Կանանչու գնով դէն ածի ապրանքը։ ([illegible])։
Կուչ ու հուփ է գալի։ ([illegible])։
Կնքիլու էրեխայ։ ([illegible])։
Կրակի պէս էրվում է նարէս ([illegible])։ ([illegible])։
Կրակի գին է ապրանքը։ ([illegible])։
Կուղի ([illegible]) կփցնող օմքին է։ ([illegible])։
Կփցրինք նրանց մէկս մէկու։ ([illegible])։
Կոկուծ հաց։ ([illegible])։
Կուպրի-կօճատ։ ([illegible])։
Կուս ու կոկոմ։ ([illegible])։
Կուշտ խմեցի ջուրը։ ([illegible])։

Կերած-խմած։
Կուտր ննգաւ։ ([illegible])։
Կինձի ([illegible])-կործան ալաւ նրան։ ([illegible])։
Կուռը բռնող չունէ։ ([illegible])։
Կշտնովն անց է կացլի։ ([illegible])։
Կուղխան ([illegible]) օմքին է։ ([illegible])։
Կուղի-կուզ է ման գալի։ ([illegible])։
Կծպծան ([illegible]) մաճար ([illegible])։ ([illegible])։
Կալթն է կալթում բերնեմէն։ ([illegible])։
Կտրեցին դուքանը ([illegible])։ ([illegible])։
Կտրից անգաճը։ ([illegible])։
Կտրից վուտր նրանցմէն։ ([illegible])։
Կտրվեցաւ կալթը։ ([illegible])։
Կտրվեցաւ անձրևը։ ([illegible])։
Կտրվեցաւ շունչս։ ([illegible])։
Կտրվեցաւ անունը։ ([illegible])։
Կրուխի ([illegible]) պէս տանը նստած է։ ([illegible])։
Կտուց կտուցին չէ կանացի տա։ ([illegible])։
Կ'օսխա, ձիու չանա ([illegible]) ըլլի։ ([illegible])։

Հանգած մարթ է։ ([illegible])։
Հազար շուն ու գէլ կայ։ ([illegible])։
Հաւտի կու բերլիմ նրան։ ([illegible])։
Հին Աստուձը միտն է բերլի։ ([illegible])։
Հօրն ու մօրն է քաշլի։ ([illegible])։
Հէրն ու մէրը քաշից։ ([illegible])։
Հէնց գիգլիմ մէճկումս սառը ջուր ին ածում։ ([illegible])։
Հարուր թումնին (10 [illegible]) չի առի թէ՝ կաս թէ չը կաս։ ([illegible])։
Հրամանքնիր է ծախում գլխիս։ ([illegible])։
Հազալու ձէնի վրայ ճանչցայ։ ([illegible])։

Ճանած թրի պէս կանգնած է ինձ համար։ (պատրաստ է ինչ համար)։
Ճէնց գլխէնաս հոքեմէն է կտրում։ (շատ ծեծ է տալիս)։
Ճունք (հաստ. ջլէ այտք) ու բունքով (բռի) կու ճանչնամ։ (դէմքի ու դէմքը)։
Ճակատակի պէս առջևս բռնվեցաւ։ (չսպասած մարդը պատահել է)։
Ճագի հէտ փաթկվիլ է։ (երեսը ծամածռում հակառակ է)։
Ճանաք-մասխարութին է։ (ծաղր բան չէ)։
Ճարաքաթս գնացել է։ (ուժասպառ ընկել)։
Ճէստի ձի ունէ, էրգնքի աստղերու հէտ է խաղում։ (շատ շատն է)։
Ճարմնքի թադարիքը տեսան։ (պատրաստութիւնն արին)։
Ճարմնքի թադարիքումն ին։ (պատրաստութեան մէջ են)։
Ճոքէ-հոքի բարեկամ է։ (մտերիմ)։
Ճաւադար է գալի նրան։ (պաշտպանում է)։
Ճա ու չէ է անում։ (համ ու հում)։
Ճա ու չէումն ին։ (տարակուսանք)։
Ճայ-հուի մէչն ին։ (պատրաստութեան մէջ)։
Ճարցումս չի ըլի էտ մեղկը։ (ներելի է)։
Ճանաք չէ վի կալնում։ (սրտին դիպչում է)։
Ճացը քնթեմէս հանեցին։ (ճաշելուց յետոյ վերադարձրել են)։
Ճարինքը կրկին էրխու։ (կեներանայ)։
Ճաց կայ էս գուրծկումը։ (կարօտ)։
Ցապաղնիրը մոդ. էլան։ (բոլորովին. ջնջուեցին եկել)։
Ճագարներով է խօսում։ (ծեծ-ծեծ է բերում)։
Ճոքին ակռքով ունէ բռնած։ (դժուարութեամբ համբերում է)։
Ճալրաթ Աստուած էսէնց էր կամեցի մեզ համար։ (տարաբախտութեան ժամանակ)։
Ցեղ ու առաջ է խօսում։ (առանց մտածելու)։
Ցեղ ու առաջ չէ մտիկ տալի։ (անզգոյշ)։
Ցեղ ու առաջ տարած ունէ փուղը։ (շտապ շտապ ժամանակներում)։
Ճէնց բռնէ, թէ... (այսպէս համարէ)։
Ճայ քրիստոնայ մարթ է։ (խղճմտանքով մարդ)։

Հացով մարդ է։ (հիւրասէր, առատաձեռն)։
Հուջաթ մի բլի։ (Մի՛ լինիր յամառ)։
Հուջաթութիւն մի անի։ (նոյն)։
Համարար (անթերծելի) ու կամարար։
Ցիմար-իմաստուն։ (ո՛չ գիժ է, ո՛չ իմաստուն)։
Հարապատիկ է անում։ (ազերսանքով հրաւիրում է)։
Ցիդ էկած օմքին է։ (փորձառու)։
Հիւլի լողացի (Հաց բան ուտելիս ընկերներից ներողութիւն է խնդրում)։
Հիւլի յարգից։ (նոյն)։
Ցիդ է գցում փուղը։ (դանդաղում է)։
Հարուր թուման ջուր (կամ՝ ցամաք արաղ) փուղ ունէ։ (դրամատէր, առատ դրամ)։
Հինդ Նիկալայ մանէթ։ (Նիկոլայ ոսկի. հինգ ռուբլի ժամանակի ոսկեդրամ)։
Հին օրէնքիլայ մարդ է։ (հնասէր)։
Հալալ կաթնակեր է։ (բարեհամբոյր)։
Հոքի է, հոքի՛։ (բարի, ազնիւ)։
Հոքին տալիս է նրա համար։ (շատ սիրում է)։
Հինդ մանէթ առաջ իմ։ (Հաստատ եմ է)։
Հիդը ննգլի։ (Հետը յարմարուիր)։
Ցիդ ննգաւ մօղեմէն։ (նորավաճառութեան ընկել է)։
Հաց չէկաւ էս տարի։ (հունձը առատ չէր)։
Ցանդումն էկաւ բանը։ (յարմար)։
Ցանդը վիր է կալի։ (բնաւորութեան անձնուրաց է)։
Ցանդով է առում տադը։ (լաւ եղանակով)։
Հալբաթ (երեւի) ճակտին էսէնց էր գրած։ (ճակատագիր)։
Հալբաթ (երեւի) նրա գլխին մէ բան կայ։ (պարագայութիւն)։
Հազարն թումնին (10 ռ.) խօսկ չի առի։ (ամենեւին ոչ)։
Հարաշ-ուտող, հարաշ-խմող մարդ է։ (Հաբաշ՝ խաղաղ. անհոգ, անհոգի)։
Հազղի պտղտանք։ (խաղողի հատիկներ)։
Հաղուղը պտղեցի։ (ողկոյզից հատիկները քաղել)։

*Ճուտով իմացայ։* ([illegible])։
*Ճալիցի, անդաձն ածի։* ([illegible])։
*Ճալիցի անդձուածը։* ([illegible])։
*Ճէսար արին, տաս թուման կանգնեցրին։* ([illegible])։
*Ճացը կուղը տու. թոնդրումը։* ([illegible])։
*Ճալվարա* ([illegible]) *թղտկը է գալի։* ([illegible])։
*Ցրէտիկէնը էլ չիմ ուզի։* ([illegible])։
*Ճուր-զուր է անում։* ([illegible])։
*Ճարր ու Հուրրով։* ([illegible])։
*Ճարրա է գալի։* ([illegible])։
*Ճոլ կպաւ բանին։* ([illegible])։
*Ճոլ է գալի։* ([illegible])։
*Ճխնդութէնի տկրացաւ։* ([illegible])։
*Ճագցրու ջոխու վրէն Հալըճէն։* ([illegible])։
*Ճու ու ճիւ։* ([illegible])։
*Ճուշ կ'օնիմ վրէն։* ([illegible])։
*Ճէրիք ածա, լաւ է։* ([illegible])։
*Ճասար-Բասարնեըու* ([illegible]) *պէս ինչ վրայ թափեցաք։* ([illegible])։
*Ցիդ մէկէլանց առա։* ([illegible])։
*Ճախ* ([illegible]) *կ'օնինք նրան։* ([illegible])։
*Ճատիկ է էփում։* ([illegible])։
*Ճաշա կերաւ պարտկը։* ([illegible])։
*Ճոքէվուրթի է մի կալի նրան։* ([illegible])։
*Ճոքէվարք է ննդի։* ([illegible])։
*Ճացի զունդ* ([illegible])։ ([illegible])։
*Ճացի պռունդ։* ([illegible])։
*Ճէնց գլդենաս շամփուր է կուլ տվի։* ([illegible])։
*Ճադիր-Հադրարաշի։* ([illegible])։
*Ճարց ու բարով է գրի։* ([illegible])։
*Ճաչի-Հաչի է անում։* ([illegible])։
*Ցիղին-լիղին մէ թուման ած է։* ([illegible])։

*Հարա-մաղալթ* (ոչնչութեան)։ ([illegible])։
*Հարսնիքը կերանք*։ (Նորա հարսանիքին էինք)։
*Հաւնվէն բռնած լինչկլի...* ([illegible])։
*Հէսաբի* (հաշիւ) *տակը վուր գցիս, չաժ է*։ (հաշուով)։
*Հացը դուս է տալի թոնդրեմէն*։ (հանում է)։
*Համակից էլէք մէկ-մէկու*։ (հաշտ)։
*Հրաշալի օմքին է*։ (շատ գեղեցիկ, գերազանց)։
*Հախեմէն* (երեսանից) *էկայ*։ (պարտքել, պարտահատոյց լինել)։
*Հախս* (կողմ) *կտրից*։ ([illegible])։
*Հախեմէս արաւ*։ ([illegible])։
*Ցիդ էկաւ կէս ճանփեմէն*։ (վերադարձաւ)։
*Հիդն էկաւ ինչօրի տուն*։ (հետևեց)։
*Ցիդ վի կալաւ*։ (յետ առաւ)։
*Հանց էկաւ թէ չէ, գնացի նրա մօդ*։ (իսկոյն)։
*Հարցնիմ, իմանամ, վուր...* (տեղեկանալ)։
*Հաջաթ* (գործիք) *չէ*։ (պէտք չունի)։
*Հուրիան-բրիան* (խուռն) *արին նրան*։ (ծաղր ու ծանակ անել. բարոյապէս պատժել)։
*Հէսաբ արաւ տասն ու մէ մանէթի վրայ*։ (11 մանէթով)։
*Հէքիմ դուս էկաւ տղէս*։ (Բժիշկ դարձաւ)։
*Հուլ* (այն խոշորանալու ակը) *ու մալաք* (հրեշտակ) *է*։ (սիրուն)։
*Հուրի ու փէրի է*։ (գեղեցկութեան չաստուածուհի, յաւերժահարսն. շատ գեղեցիկ)։
*Հրեղէն օմքին է*։ (շատ գեղեցիկ)։
*Հալ ու մաշ է ըլում*։ (տանջւում է)։
*Հասար* (պարիսպ) *քաշեցին*։ (պարիսպ շինեցին)։
*Համը տարաւ*։ ([illegible])։
*Հէնց գիղիմ, մազերեմէս վի քաշեցին*։ (շատ է չարչարուել)։
*Հոքէդատ կնիկ է*։ (չարախօս)։
*Հա-գիմ*։ (խորհեմ)։
*Հազար ու մէ բան ունիմ*։ (շատ)։
*Հայրէ ցվուրթի վունչիչ չասխ նրան*։ (Բոլորովին)։

Հախվէրմազ մարթ է։ (պարտքը չը վճարող)։
Հալղում (կամ՝ ալղում) ([illegible])-բաստումումն ([illegible]) է։
([illegible])։
Հացի հասրաթ (կարօտ) է։ (խեղճ)։
Հէքիմազինգը գնացի։ ([illegible])։
Հինդ մանէթի վրայ է կանգնած։ ([illegible])։
Հմփի-հմփի։ ([illegible])։
Հրամանքնիր է ծախում ինձ վրայ։ ([illegible])։
Հոքուս ջուր էղի։ ([illegible])։
Հասաա ([illegible]), դէլ մանի թութ ([illegible]) ես անում։
([illegible])։
Հիւու ճւր ես գնում։ ([illegible])։
Հոքէ ի զագը ([illegible]) կտրից, նրան էրիտ։ ([illegible])։
Հոքին սատաններու վրայ է ծախի։ ([illegible])։
Հնդուհաւի պէս ուռիլ է (կամ՝ փքվիլ է)։ ([illegible])։
Հնդուհաւի պէս քինթը վէր է թողի։ ([illegible])։
Հաուղի ([illegible]) խցկան։ ([illegible])։
Հաւի պէս թուխս է նստի։ ([illegible])։
Հանաքը դէնը կ՚էնայ։ ([illegible])։
Հաւերու հիդ ին քնում։ ([illegible])։
Հոքէ-հոքի բարեկմիր ին։ ([illegible])։
Հոքին տալիս է նրա համա։ ([illegible])։
Հէնց բանէ։ ([illegible])։

Ջաւար-ձաւար ([illegible]) դուս է տալի։ ([illegible])։
Ջեռը չէ տըլլի գուրծկլին։ ([illegible])։
Ջեռք տու նրան։ (օգնել)։
Ջեռիս բան ունիմ։ ([illegible])։
Ջեռին վունչինչ չունէ։ ([illegible])։
Ջեռը դարդակ մարթ է։ (նոյն)։

Ձեռնեմէն էկաւ ու չարմաւ (չկարաց չանել):
Ձեռք ձեռքի էլանք (դաշնադրութիւն):
Ձեռք քաշից թղտի վրայ (ստորագրեց):
Ձեռը քաշից նրամէն (հրաժարուեց):
Ձեռնեմէս գնաց (զրկուեց):
Ձեռնեմէս դուս պրծաւ (փախաւ):
Ձեռը ծուռն է (գող է):
Ձեռն խոտակ ունէ: ([illegible]):
Ձեռներեմէն կրակ է վէր առում (ժիր է):
Ձեռն ու փուտս կապեցիր (արգելեցիր):
Ձեռնէ ձեռը խափից (չտուաւ):
Ձեռի աղլխի (Թուրքերէն) պէս բանեցնում է նրան: (անխնայ գործի հանում):
Ձեռը պակաս մարթ է (խեղճ):
Ձիանիրը հուշտ էլան (երկպառակեցան):
Ձին գլուխը խլից (ինքնագլուխ, անհնազանդ):
Ձեռք տալու բան է (օգտակար է):
Ձեռը բաց օմքին է (առատաձեռն է):
Ձիւսի վրայ կարէ (ըստ ձևի):
Ձեռնեմէս փունչից չէ գալի (անկարող է):
Ձեռը վրայ քաշից ([illegible] և թողեց):
Ձեռը վրայ էրլի (նոյն):
Ձեռով է անում (խնամքով է):
Ձեռն ու փուտն է անում (ջանք անել):
Ձին չափի գցից (յետ քաշեց):
Ձախ անկս լաւ չիմ փորցի ([illegible]):
Ձեռք չէ տալի էտ գինը (թանկ է առնողին):
Ձեռը չէ մեկնում (ծոյլ):
Ձեռը մեկնելով ման է գալի (մուրալ):
Ձեռը չէ կպցնում բանին (ծոյլ):
Ձեռխս ջուր կտրեցրուց փուղը ([illegible]):
Ձեռը տաք է (հաջողակ):

Ձու չի դնի քիզ համա էտ մէ աքաղաղին։ (օգուտ չէ բերել)։
Ձեռս չէ զօրում։ (ույժս չէ հասնի. միջոց չէ ունիմ)։
Ձուկը բըթում է։ (շատ է հասնի)։
Ձուկը թքռում է։ (ձւել)։
Ձեռն ինձ վրայ չէկաւ։ (անյաջող ելել է օր. ձեռնարկածը ապարդիւն անց-
նելը)։
Ձէթ մարթ է։ (անբարեշտ)։
Ձեռը գլխին քոլից։ (յաջողութեան ձեռաց)։
Ձեռը բռնից։ (օգնեց)։
Ձեռը վէր կալաւ նրանից։ (հրաժարուել է)։
Ձէնը վէր է էլի։ (հանդարտուել է)։
Ձէնէ-ձէն արէք։ (նոյն)։
Ձէն տվինք նրանց։ (հրաւիրեցինք, կանչեցինք)։
Ձէն ու ձուն։
Ձուն ու ձմեռ։
Ձեռի տակը մինձացրուց նրան։ (իր հովանաւորութեան տակ)։
Ձեռս ծով է բռնում։ (ո՞վ է արգելում)։
Ձեռը դէմ է անում։ (ողորմութիւն խնդրում)։
Ձեռը վրայ հարից։ (մեղմել)։
Ձեռը տաքեմէն սառին չէ դիփցնում։ (գործից փախչող)։
Ձեռը ձեռի վրայ դրած մնացիլ է։ (դանդաղ)։
Ձէնն աշխարքը վէր է կալի։ (տարածուել է համբաւը)։
Ձեռնիկս էլ իմը չէ։ (շատ է դողդողել)։
Ձեռը թեթեւ է։ (ասում են նորան, որի միջնորդութիւնը յաջողու-
թիւն է բերում)։

Ղ'այլաթումը (ջանք) հոքին դուս է գալի։ (շատ է աշխատում)։
Ղ'իամաթումը (հանդերձեալ կեանք) չըլի նրա հինգ աքաղին։ (օգուտ
չէ տալ)։
Ղ'ադար է։ (պատիժ է՞)։
Ղ'աշխարաղը (յոնք և երես) բաց է։ (ազատ է)։
Ղ'աշխարաղը վէր է թողի։ (տխրել է)։

Գ՚իստով ունիմ տարած ապրանքը։ ([illegible])։
Գուզս կերաւ։ ([illegible])։
Գուզս տարաւ։ ([illegible])։
Գ՚իմիշս չէ գալի։ ([illegible])։
Գ՚իմիշ չէ անում։ (նոյն)։
Գունգը ծաղկել է։ ([illegible])։
Գ՚արաւլութիւն է քաշում։ ([illegible] է)։
Գ՚նամիշ է անում։ ([illegible])։
Գ՚լիջս չը կտրից։ ([illegible])։
Գ՚ուաթս թէ պատել էր… ([illegible])։
Գ՚աշտի ([illegible])-աման օմքին է։ ([illegible])։
Գ՚ալըի ([illegible])-ղուլար ([illegible]) օմքին է։ ([illegible])։
Գ՚թլուղ ([illegible]) խօմ չէ՞ ննգլի։ ([illegible])։
Գ՚իմա-ղիմա կտորից սուխը։ ([illegible])։
Գ՚սմաթս չէ կտրում։ ([illegible])։
Գ՚իամաթի ([illegible]) է։ ([illegible])։
Գ՚գլբաշ ([illegible]) մարթ է։ ([illegible])։
Գ՚անարա վուր տան (կամ քաշին) ([illegible]), մէ գրօշ չիմ աւելցնի։ ([illegible])։

Ճարու ([illegible]) գոմէշ է գառլի։ ([illegible] է)։
Ճիանուրը ([illegible]) սարքից։ ([illegible])։
Ճար ու ճրաք մէ վուրթի ունէ։ ([illegible])։
Ճանապար շանց էրիտ նրան։ ([illegible])։
Ճանփու էգլի նրան։ ([illegible])։
Ճանփէս կտրից։ ([illegible])։
Ճինճուն ժաժ է ննգլի։ ([illegible] է)։
Ճինճուն ուրախացնում է։ ([illegible])։
Ճանփէս բռնել է։ ([illegible] է)։
Ճանփէս պահում է։ (նոյն)։

*Ճամփայ ընկանք*։ (ուղեւորուեցանք)։
*Ճիճապատառ է գալիս* (տրտմագին է)։
*Ճիճինատրաք է ըլում*։ (նոյն)։
*Ճիճինի էրի ինձ*։ (տրտմեցուց)։
*Ճանանչս գալիս է*։ (ճանաչում եմ)։
*Ճամփխլայ խարջ օմքին է*։ (ճանապարհի համար յարմար)։
*Ճամփէն ջէր կտրած չէ*։ (ճարահատած չէ)։
*Ճամփի վրայ է կանգնած*։ (պատրաստ է ուղեւորուելու)։
*Ճաշնիկուս* (ճաշակս) *չէ գալիս* (չեմ հաւանում)։
*Ճամփայ է*։ (ազատ երթեւեկելի է)։
*Ճում ննդաւ վուտա*։ (ոչ ջնջել կարելի կամ յիշել ես)։
*Ճուտկող տղայ է*։ (պզտիկ ընկեր)։
*Ճօթուտվում է խիստ* (կատաղել, պատառոտել)։
*Ճաճուան շուք է*։ (աղաւնի)։
*Ճէրք* (բերանիս) *ցցեց ինձ*։ (շատ նեղացուց)։

*Մոխրքեմէս կտրում իմ, նրան ուտեցնում*։ (ինչ որ ունեմ տալիս եմ)։
*Մէ սուտ Աստուծածնի պէս է մտիկ տալիս* (խոժոռ դէմ է)։
*Մխճկլին մազ է էկի* (կամ՝ դուս էկի)։ (հայրապետել է)։
*Մէճկը դախմացրել է*։ (նոյն)։
*Մէ ծամելու մաստակ ունիմ*։ (խօսք չունիմ տամ)։
*Մէ ծամելու էրծաթ չունիմ*։ (բոլորովին)։
*Մէ ծխտ աւելցրեց*։ (Մէկ ափ, 20 կ.)։
*Մէ նալեմէն* (դայր) *աւելի չած է*։ (Մէկ բաճէ)։
*Մէ քար դու՛քայ*։ (Մէկ քար)։
*Մէ քինթ էկաւ*։ (Մէկ քաշող)։
*Մինձ արնի տէր է* (հարստութեան)։
*Մէ ածկով է մտիկ տալի նրան*։ (ողորմած չէ)։
*Մատին փաթթիլ ին ինձ*։ (խօսելու ատարկայ են շինել)։
*Մէ խօսկ մխաճ նրա մօդ*։ (բարեխօսէ՛ք)։
*Մէկ էօղանց է ասում, մէկ՝ էնդղանց*։ (անկայ)։

Մէկն էսօր է ասում, մէկն՝ էգուց։ (դանդաղ)։
Մէ վուտը գերեզմանումն է։ (շատ ծեր է)։
Մէ խօսք էր, լիզվիս ծէրեմէն թռաւ։ (անզգուշութեամբ)։
Միղաց-պատուհաս բան էկաւ նրան։ (դժբախտութեամբ)։
Մէչ տիղը գլխի էրկու-իրեք մանէթ է խաղում։ ([illegible] 2—3 ռ. է)։
Մէ աւելի խօսք չը փախցնիս բերնեմէտ։ ([illegible])։
Մէկ լինք ասի, էրկու լինք ասի, վուր չէ անում։ (շատ [illegible])։
Մեռնիլ-կենթնութիւն կայ։ (փոփոխական է [illegible], [illegible] է)։
Մէ սուտ քնեցայ։ (փոքր ինչ)։
Մօթլի գուղա (մահակ) է դառլի (գիրացել է)։
Մէ գրօշի համա հոքին տալիս է։ (ծոյլ)։
Մէ գրօշի վրայ դողում է։ (նոյն)։
Մէ թիզ կարճ բունէ դէրլէնի։ ([illegible])։
Մէ մատը գիր գրէ։ (փոքրիկ)։
Մէ պստի մսի է էկլի։ (փոքր ինչ գիրացել է)։
Մէ-էրկու շապիք լինձմէն աւել կու՛լիս մաշլի։ ([illegible])։
Ման ին ածում նրան։ (խելքը վրան չէ)։
Մէ թիզ բացրացաւ ուրախուս ([illegible])։
Մատը վախեցրած ունէ։ (յափշտակած)։
Մէչը խօմ չէ՞ նստած։ (ինչ գիտեմ ինչի [illegible])։
Մէ ձվի աղ չիմ գիղի օչովեմէն։ ([illegible] չեմ տեսել, [illegible])։
Մէ արտսունք ջուր չունինք։ (մի կաթիլ)։
Մէ իմքին վի կացրինք նրա համա։ (մի բան, փոքր ինչ դրամ գո-յացնենք)։
Մէ քաղաք է ու նաւ (նոր [illegible] է)։
Մէ փուր հացի գերի է։ ([illegible])։
Մուլքը էրեսին չի ծիծաղում։ ([illegible])։
Մէ կտուր հացի տէր դառաւ։ (գործի կամ կարողութեան տէր)։
Մսի էրես չիմ տեսի։ (չեմ կերել)։
Մինձկիս զօլը (ուժը) կտրվեցաւ։ (դադրել է)։

Մինձկիս պատրուքը ([illegible]) կորվեցաւ։ (Նոյն)։
Մինձկիս Թիլը ([illegible]) կորվեցաւ։ (Նոյն)։
Մինձկիս Իլիկը ([illegible]) կորվեցաւ։ (Նոյն)։
Մամով մէկ ին, դէդով չէ։ ([illegible])։
Մէ լաւութին էիր պարտ, արիր։ ([illegible])։
Միտոն-աւագան ինք։ ([illegible])։
Մէկ-մէկու միս ին ուտում։ ([illegible])։
Մատի պտղունցներով ([illegible]) բուրթ է քրքրում։
Մէնակութին է քաշում։ ([illegible])։
Մէ տարի է գալի, ինչոր նրան չիմ տեսի։ ([illegible])։
Մեռնիլը խուղին պահ տվինք։ ([illegible])։
Մազ պրծաւ, վէր էր ննդնում։ ([illegible])։
Մինը մլի վրայ գալիս է խալխը։ ([illegible])։
Մէ վուտն չատի է, մէ վուտն էնդլի։ ([illegible])։
Մէ ղալամ ձեռը վի կալայ նրամէն։ ([illegible])։
Մուրազը ([illegible]) փուրումը մնաց։ ([illegible])։
Մուշտրու ([illegible]) աճկով տնդղեցի։ ([illegible])։
Մէ արասու տօլ ([illegible]) ջուր է գալի։ ([illegible])։
Մէ իմքնով չը հարցուց միզ։ ([illegible])։
Մէ բերան չասաւ, Թէ կացէ։ ([illegible])։
Մէ բերան չէրի միզ։ ([illegible])։
Մէ տակ օմքին է։ ([illegible])։
Մնամ վուր նա պիտի ըլլի։ ([illegible])։
Մօրն է գցի։ ([illegible])։
Մեռնիլը Րփը պիտիք վի կալնի։ ([illegible])։
Մարթատիղ չէ դցում նրան։ ([illegible])։
Մարթատիղ չէ դնում նրան։ (Նոյն)։
Մահվան քըտինքը վրայ արաւ։ ([illegible])։
Մանէթանուցն անց կացրի։ ([illegible])։

Մէ վարձկ ունէր հալըաթ։ ([illegible])։
Մում է անում։ ([illegible])։
Մօր ծիծ կտրող ոմքին է։ (չարագործ)։
Մէ Աստու օխնած մարթ է։ (բարի)։
Մէ Աստու գառը մարթ է։ (հանդարտ)։
Մազը չէ տալի։ ([illegible])։
Մոխրքս ծամում ին։ (բամբասում են)։
Մխա ուտում ին։ (նոյն)։
Մոխրքս ուտում իմ։ ([illegible])։
Մինք նրանց առաջը կտրեցինք (կամ՝ տվինք)։ (առաջն ընկնել)։
Մէ չուր գլուխ ունիմ։ (միայնակ)։
Մալաչինի կոմշի։ ([illegible])։
Մամալ (որյ) սուտ։ (մեծ սուտ)։
Մէ խօսկ գցէ (կամ՝ մխսէ) նրա մօղ։ (մի՛ խօսք բանալ)։
Միզկի վուրթի։ (աղքատ)։
Մատին կծից։ ([illegible])։
Մէ նրա բանդիվա ինք։ ([illegible])։
Մէճկս չէ գալի։ (չեմ կարող)։
Մըզկս գալիս է։ (յոգնում եմ, ձանձրանում եմ)։
Մէ շափաթ է գալի։ ([illegible])։
Մինձ լիրթ ու թուք ունէ։ ([illegible])։
Մէկ էլ տեսնիս։ (յանկարծ, անսպասելի կերպով)։
Մէ շաի չիմ գիդի նրամէնս։ ([illegible])։
Մէճկս բունվիլ է։ ([illegible])։
Մածուն առէք ոմքին է։ ([illegible])։
Մարդով առուտուր է անում։ (առանց քաշելու, կշռելու, կամ համրելու)։
Մէ հարցնող չունիմ։ ([illegible])։
Մէճկը գեդնին չէ տալի։ (հպարտ)։
Մազիրս բիզ-բիզ է ըլում։ ([illegible])։
Մախլամա։ (ինչ և իցէ)։
Մուլքն (կալք) իր գլուխը կերել է։ (եկամուտը չէ ծածկել ծախսը)։

Մէ ձեռք շուր կարից։ (Ձէ ձէ հաց հագուստ)։
Մէ աճկտ չուրս շինէ։ (Չփոշութիւն)։
Մինձ-մինձ է բրթում։ (Ջերմոտ)։
Մէ-էրկու շառւ տէր է դառլ։ (Մէկ դրամ է վաստակել)։
Մինձ թաղարիքնիր ին տեսնում։ (Դատարկաբանութիւններ են անում)։
Մինձ թանթանէք ունին։ (Ջերմ ծախսեր)։
Մէ մանէթ կու հանէ էտ մէ քթուց խնձուրը։ (Վաճառականեայ էր գործում)։
Մէ տուն գիժ ին։ (Բոլորը)։
Մահինի (կամ մահվան) դուռը ննգաւ (կամ հասաւ)։ (Ձեռնելու ձեռ. առաջին նշանակել)։
Միտկս վրէս չէ։ (Չհեռացած է. չզբաղուած է)։
Միչի վրայ խէրխվում (ուշացել) է։ (Ջանք է առնում)։
Մաղցս խառնվեցաւ։ (Վշտանալ, վերադառնալ)։
Մէ գլուխ տանում իմ տալի։ (Անընդհատ)։
Մինս է կտրում դարփունը։ (Բուռն հասանել)։
Մուքթա (չէ) հաց ուտող օմքին է։ (Դրդաբոյծ)։
Մուքթա-խորոմ օմքին է։ (Նոյն)։
Մախսի կանգնելով կու տամ։ (Մեղմին)։
Մախսի դուս գնալով կէհամ։ (Վերջին)։
Մավթուլի (երէ-բերայ թել) մէ գլուխն էստի է, մէ գլուխն՝ էնդին։ (Ծայր)։
Մէ ստաքան (բաժակ) արաղն (օղի) ու նրա ջանը։ (Բանական է)։
Մէկս մէկու գիրանք։ (Վերադարել)։
Մի՛ ննգնի նրա հիդ։ (Նոր օրինակին մի՛ հետևիր)։
Մէճկ տվէք մէկ մէկու։ (Ավելցու)։
Մարթ մէջ գցէ։ (Միջնորդել)։
Մի՛ ասի, էն էլ մէ բան է։ (Մի՛ արհամարհիր)։
Մանա-մասկան։ (Տրամաբանել)։
Մանաքարի իմ ծախում։ (Առաջ գալ)։
Մէկս մէկէն արաւ միզ։ (Հեռանալ. Բաժանուել)։

Մումը կփցրուց։ ([illegible])։
Մէ պստի կարկտան ունէ շալիքը։ ([illegible])։
Մի՛ սխպտկեցնի նրա մօղ. էտ բանը։ ([illegible])։
Մէչը մնացլի։ ([illegible])։
Մրոխլը գլխիս չը գըլի։ ([illegible])։
Մէչ է տալի ցաւը։ ([illegible])։
Մէչէ-մէչ դուս կնրաւ չրչիլը։ ([illegible])։
Մէ օրվայ պաշար է։ ([illegible])։
Մէ վուտն առաջ վո՛ւրդլի էիր։ ([illegible])։
Մարթը մարթու վրայ իմ ղրգում նրա մօղ։ ([illegible])։
Մեռլի վրայ գնաց։ ([illegible])։
Միր տանը արաղ ([illegible]) չի ժամ գա։ ([illegible])։
Մէ բանի չէ կպչում։ ([illegible])։
Մէ բանի վրայ չէ կանգնում։ ([illegible])։
Մէ աբասին տարաւ, քարօքն էրխտ։ ([illegible])։
Մինձ էրազնիր է տեսնում։ ([illegible])։
Մշկի պէս հաց է։ ([illegible])։
Մէ շափթվայ վրայ գու՛քամ։ ([illegible])։
Մտկահան է արի նրան։ ([illegible])։
Մտկէն էլիլ է։ ([illegible])։
Մազս շինիլ տվի։ ([illegible])։
Մտկուսս դրիլ իմ։ ([illegible])։
Մինձ-սիրտ օմքին է։ ([illegible])։
Մէ-էրկու պուտ ջուր կաթեցրու։ ([illegible])։
Մազէ կարմունջ։ ([illegible])։
Մանդրա-մժիղ ([illegible])։ ([illegible])։
Մէկնանց էլ չիմ ունեցլի։ ([illegible])։
Մլթօնու ([illegible]) ջինս ([illegible]) է։ ([illegible])։
Մկրատ է, դրան ինչը կու կտրէ։ ([illegible])։
Մխսվիլ է։ ([illegible])։
Մանդր-մունդր։

Մէ ծաղիկ ունիմ։ ([illegible])։
Մէկ ու մէկ մնաց բանը։ ([illegible])։
Մէկը-մէկէլ աշխատից։ ([illegible])։
Մունջ դէլ է։ ([illegible])։
Մէ մանուսը։ ([illegible])։
Մէ հոքէուրը։ (Նոյն)։
Մէ շատ համա ծվում իմ։ ([illegible])։
Մազա-մուզա։
Մէկը տասն է շինում։ ([illegible])։
Մէ բարաթ ([illegible]) դառաւ հիւանդը։ ([illegible])։
Մօղ չիմ գնա էտ բանին։ ([illegible])։
Մէ գազումն ինչ կայ։ ([illegible])։
Մթնով էկաւ։ ([illegible])։
Մէ Ըսծու տանի օմքին է։ ([illegible])։
Մնացած օմքին է։ ([illegible])։
Մէ բռունց է դառի։ ([illegible])։
Մինձերեմէն է տրաքտրքվում։ ([illegible])։
Մէ էրեսատից չունիմ, վուր գնամ։ ([illegible])։
Մէ գլուխ սասում է։ ([illegible])։
Մէ բանումն էլա անց կենայ իմ չարչարանքը։ ([illegible])։
Մէ մատի լէնքը։ ([illegible])։
Մի շնացնի նրան։ ([illegible])։
Մէ ծլանտի իմքին։ ([illegible])։
Մինք չինք ասի։ ([illegible])։
Մէկն էրկու շինից։ ([illegible])։
Մէ էրես Թխից։ ([illegible])։
Միրուք է Թողի։ ([illegible] отпустилъ бороду)։
Միրուք է կանգնցրի։ (Նոյն)։
Մինձա-բիլէԹ։ ([illegible])։
Մանդրա-փուղ։ ([illegible])։
Մանդրա-գլուխ շաքար։
Մինձա- գլուխ շաքար։

Մավա չէ գնում նրան։ (չէ հավանում)։
Մութը ննգաւ։ (մթնեց)։
Մէ բարի, Աստու հաճելի մարթ է։
Մինձ բանտրումն է։ (մեծ դժուարութիւններով և չարչարանքով)։
Մնաց ձեռը ծուցումը։ (ծուլօրէն)։
Մոծակ մարթ է։ (չարաճճի, ձանձրալի)։
Մէ խօսկով, բէզրիցայ։ (մէկ բառով)։
Միզկ ու կրակ բան էկաւ նրան։ (ծռլյանք, տձևաշտութիւն)։
Միզկի բանիր է պտուտ գալի միր քաղկումը։ (անփութութեամբ չէ ե)։
Մէ հատ քօշով տասէրկու դուռը ման դու՛քայ։ (ճաղ է)։
Մէ ջիլաւ (աւնչ) դուռնա ածաւ։ (մէջ անտամ ածելով մէջո և տակը մնացած մաս ածելը)։
Մօղիկ է ձիզ վրա՛յ։ (յեղանակ)։
Մարթու ճախճմէն (օլիք) կպաւ։ (չէ հանդուրժում)։
Մինձ բան կու տեսնէ։ (խօսող և չարել)։
Մտկումս էլ չէ անց կացի էտ բանը։ (չեմ մոռացել)։
Մաղար-մախաթ օմքին է։ (հնարագէտ)։
Մատը բերնումը մնաց արմցած։ (զարմանք)։
Մնաց սառած։ (զարմանք)։
Մէ փուրացաւանք կունենայ։ (մի սփոփութիւն)։
Մէկ ու ճար է։ (մանօր)։
Մայլ մնացի նրա սիրունութէնի վրայ։ (շմայլած)։
Մէ քանի օր մէկ-մէկու վրայ։ (շարունակ)։
Մէ հարցնող ըլի, թէ… (հարցնող չը կայ)։
Մաղրուն էլայ։ (դատարկ ծով)։
Մէ-էրկու շահի (5 կ.)-բիստի (2 կ.) ունէ իր համա։ (ծախքի դրամ)։
Մէ-էրկու շաու ծէր ունիմ։ (նոյն)։
Մէ օր էլ Աստուծ ինձ կու տայ։ (յաւիտենական և իրեն)։
Միսը ծամում ին, արունը խմում։ (ծամծմել)։
Մարաքա (ծոցուի) շինեցին նրա բանը։ (հաշուել են)։
Մարաքումը խառնվեցաւ։ (մարդ միջ և խառնակել)։

Մէջը ննջաւ էրկու վուտով։ ([illegible])։
Մինձախնձուր գիղէ էտ բաղը։ ([illegible])։
Միղկ ու վարձկ կայ էտ բանի մէջը։ ([illegible])։
Մաշս ձէն է տալի էստի գալը։ ([illegible])։
Մէ սսաքան ([illegible]) չառւ հիդ վ՛ունց լու։ ([illegible])։
Մհլամը ([illegible]) գործում է ճարէն ([illegible])։ ([illegible])։
Մոււթը վէր է թողի։ ([illegible])։
Մէնակութին է քաշում։ ([illegible])։
Մէ գրվանքէն ([illegible]) մէջը խաղում է։ ([illegible])։
Մէ փուղ շինից։ ([illegible])։
Մնացի վիր քաշված։ ([illegible])։
Մէ գրօշի խիլք չունէ։ ([illegible])։

Նրա քամագումը օրթունք կայ։ ([illegible])։
Նա իր հացը կերաւ։ ([illegible])։
Նազ ու թիզը նրա վրայ է ծախում։ ([illegible])։
Նրամէն էլ մարթ էս պատիժը կրէ։ ([illegible])։
Նրա միղկը մի վի կալնի։ ([illegible])։
Նրա միղկը մի ննգնի։ ([illegible])։
Նրա փուղեմէն արուն կու դուս գայ։ ([illegible])։
Նէքսի ոկեմէն է խօսում։ ([illegible])։
Նախունակ մի տա։ ([illegible])։
Նրա փուղումն արուն կայ։ ([illegible])։
Նրա համա ժամն ու գիլի հարսնիքը մէկ է։ ([illegible])։
Նրանց փսակը քանդեցին։ ([illegible])։
Նրանց որխկուցն էլ հօրէս վիր կու՛լի։ ([illegible])։

Նա՛ փայդա։ ([illegible])։
Նա՛ ապրանք։ ([illegible])։
Նրանց խօսկը մէկ է։ ([illegible])։
Նրա աշխարք մտնելու վախտն է։ ([illegible])։
Նիմ-նիմ արինք ([illegible]) բանը։ ([illegible])։
Նրա խօսկերքը հենց գիդենաս աւետրան ըլլի։ ([illegible])։
Նրա թուրը երկու կռնեմէն ([illegible]) էլ կտրում է։ ([illegible])։
Նա մէ մահ էր պարտ (կամ՝ պարտական)։ ([illegible])։
Նա օ՛վ է ննգած։ ([illegible])։
Նշնումս գալիս է։ ([illegible])։
Նրա խարջ օմքին է։ ([illegible])։
Նա էլ լուրեր ([illegible]) է ունեցի։ ([illegible])։
Նրա օհտեմէն օվ գու՛քայ։ ([illegible])։
Նրա առջիւն օվ կանայ կանգնի։ ([illegible])։
Նրա համա խմն ու քունը չըկայ։ ([illegible])։
Նրա մահը վիր արին (կամ՝ չաւ արին)։ ([illegible])։
Նրա բարաթը ([illegible]) ջուր արա՛, խմէ։ ([illegible])։
Նրա մատն էտ բանումը խառն է։ ([illegible])։
Նրա մատը մէջն է։ ([illegible])։
Նա նրա հիդ չունէ։ ([illegible])։
Նրա գլղի վրայ լաւ է։ ([illegible])։
Նրա դէմուդէմն իս խաղացի։ ([illegible])։
Նրա փուրացուանքն ուրիշ տիղ է։ ([illegible])։
Նրա վրայ է գցում։ ([illegible])։
Նրա վրայ գնացի։ ([illegible])։
Նրա բռնած ճանփով մի ման գա։ ([illegible])։
Նման անի նրան։ ([illegible])։
Նրա անելունը չըլլի։ ([illegible])։
Նրանց կուռը ([illegible]) կտրեցին բանը։ ([illegible])։
Նրան էլ խօսկ ննգաւ։ ([illegible])։
Նրա անճկեմէն ննգաւ։ ([illegible])։

Նրա աչու. չիմ կանայ գա։ (ահէյ)։
Նրա սարարը մէ ննդնի։ (գոտճոռ մ՚ տօռնաւ)։
Նաղ անդաճ ունէ։ (խօշ)։
Նաղ ու թիղ է անում։ (նազրազըշմ է)։
Նրա փանդը (հնդըս) վիր է կալի։ (յարմարըշմ է)։
Նրա դարդն ինձ տարիլ է։ (մոռծմօնյ վեր է նորա համար)։
Նի ու դուս է անում։ (նէրս — դուրս. մտնել, ելնել)։
Նա նրա մօդ (կամ նրա հիդ) չէ դալի։ (բնաւորութեամբ չէ յարմար-
ւում)։
Նրա վրայ ձեւած (կամ կտրած) է։ (յարմար է)։
Նմանութին է տալի։ (ֆորմ ինչ նման է)։
Նրա սխալէն (ջէղ) վիր ննդաւ։ (բուռըրդէն ջէղը արծըրյել է)։
Նրամէն ձեռը վիր է կալի։ (թողել է անօգնական, հեռացել է)։
Նավսը (ոնյոխուռոթիմոն) կտրից։ (վերջացաւ ոռմո)։
Նրա մօդ վունչիչ մէ սխպտկեցնի։ (յայտնել)։
Նրա մնդկու էրվեցանք։ (խղճահարուել)։
Նա լաւ մէճկ է նրա համար։ (նեյոփ)։
Նստած է սկամու (ս. աթոռ) վրայ լիդ ննդած։ (ձիջ-ը դէմ է
դառել)։
Նրա վրայ կնիկ ուզից։ (նորանից յետոյ, երկրորդ կին)։
Նա տասն է, նա մէկ չէ։ (նա նորանից շատ գերազանց է)։
Նրանց աուկ ու տակումը չըկայ քիդպէսը։ (բուն ազնիվ ձեղ)։
Նրանց տունը շէդան-դէդան է։ (շատ եկող-գնացող ունի)։
Նամուսի ադկատ։ (պատուասէր, ամենայոլ)։
Նրամէն վունչիչ չիմ դիդի։ (օգուտ չեմ տեսել)։
Նրա բանը ծիծաղ է։ (ծաղրալի)։
Ննքսիւ ալրաւ փուղիրը։ (գողացան)։
Նրանը չըլլի։ (նա էլ պղծել էր ....)։
Նրանց օսկոռը գուղութէնումն է դախմացի։ (գողութեան ոսկոր է)։
Նստած սիրտ ունէ։ (հանդարտ)։
Նստած կնիկարմատ է։ (ֆորցուած)։
Նստած աղչիկ է։ (հասած աղջիկ)։

Նրա աբով մի մնա։ ([illegible])։
Նրա վրայ է կալած բանը։ ([illegible])։
Նաղլա-Նաղլա է տալի (կամ՝ անում, կամ՝ զցում)։ ([illegible] է)։
Նա ինձմէն նաշում է։ ([illegible] է)։
Նրա խօսքն էլ դուս գնալ չունէ։ ([illegible] է)։
Նրա բախտին քար մի գցի։ ([illegible])։
Նրա խօսքը գետնին չի վէր գցի։ ([illegible])։
Նիղ բռնէ՛ շուրս։ ([illegible])։
Նրանց չարն ու բարին իմացի։ ([illegible])։
Նաղար-Նուղար։ ([illegible])։
Նաչար-բէչար։ ([illegible])։
Նրա վրայ ուր խո գցում։ ([illegible])։
Նրա վրայ փուղ չի կորչի։ ([illegible])։
Նրամէն ներքն է։ ([illegible])։
Նշնով ասաւ։ ([illegible])։
Նշան դի։ ([illegible])։
Նշան արա։ ([illegible])։
Նուր է գլխի ննգնում։ ([illegible])։
Նրա աճկի փուշն է։ ([illegible])։
Նստեցաւ խօսկս գլխումը (կամ՝ խիլքումը)։ ([illegible])։
Նստեցաւ հարուր թումնումը։ ([illegible])։
Նստեցաւ իմ խօսկը։ ([illegible])։
Նստեցաւ ապրանքը հարուր թումանի։ ([illegible])։
Նստեցաւ կզկներքումը։ ([illegible])։
Նախչվնու աբասի։ ([illegible])։
Նրա ակռքնիրը կոտրտեցի։ ([illegible])։
Նրա համա շիրն ու շաքարը մէկ է։ ([illegible])։
Նրա փիշն ([illegible]) է բռնի։ ([illegible] է)։
Նրա արնի գինը վճարից։ ([illegible])։
Նրա աճկումը աղչիկ չէ գալի։ (չէ [illegible])։

Նա էլի իրա էշն է քշում։ (ֆամաֆոր)։
Նա էլի իր սազն (նաաաֆարան) է ածում։ (նոյն)։
Նրա կշտնումն է անց կացել։ (Հըփաբանաամ է)։
Նրա տխղը չի կանայ բռնի։ (տար է նարանէյ)։
Նրա անդաձը ննգաւ էտ խօսկը։ (ըեյ)։
Նխոռվանիդը քաշից վրէն։ (նեան արյաֆեյ)։
Նրա խօսելու հերդ վուր ննգնխ, ճուր կէհայ։ (էը դեար է ըեհ-նարան)։
Նրա ձեռննմէն չիմ իմանում, ինչ անիմ։ (էը գեաեմ, բաշդե-աշատաեմ)։
Նա նրա արուն է խմում։ (աըեանաըբա բշնաձ)։
Նրա տակի մասխարէն (ծաշըածա) է։ (աշխարաշ նմանըա)։
Նի մտաւ ջանը։ (նեըա մտնեւ. էը հեաանաշ)։
Նիշադուըը (անաշաղը) շատ էր։ (շատ բան է շինվամ խաշաաաաձ)։
Նրա ձէնի վրայ էկաւ։ (յայնը ըեըան դեա)։
Նիղ տխղն է ննգնի նա։ (դժաար տեշ)։
Նրա խօսկը չվանի (դարան) վրայ չին դնի։ (բանէ տեշ չըն համարեն)։
Նա ուզում է իմ բաղի վրայ շէնանա։ (իմ այգիում)։
Նամ-նամ օմքին է։ (դանդաշ)։
Նրանց սասն (յայն) ու սօրաղը (շըաշ) կտրվեցաւ։ (անհետացան)։
Նշանը քանդեցինք։ (նշան դրած աղջկայ և տղայի գործը քանդեց են)։
Նրանց իզն (հետք) ու թօզը (փոշի) չը մնաց։ (անհետացաւ)։
Նրան մտիկ տալով չէ կշտանում։ (շատ սիրելի է)։
Նրա ամեն մէ մազի տակը մէ մէ սատանայ կայ։ (խաբեբայ)։
Նստիլ ին, ճանջ ին բռնում։ (դարդագութիւն)։
Նրա գլխումը վուռնչիչ չէ տուն գնում։ (ըմբռնաշաշ, անհնազանդ)։
Նրա սրտումը խօմ նստած չիմ։ (չիմ ճարտաշ իմանալ նրա միտքը)։

Ձուրերու շորվէն (արփաաաչ) վէր է էկել։ (հնացել է)։
Ձան փայ (բաժին) մի շինի էտ թիքէն (դատարկ)։ (մի՛ բաշխիր)։
Ձնանուց ու գիլանուց մի անի։ (նոյն)։
Ձան լափը (ջերաչաղ) գլխին ածաւ։ (հայհոյել)։

*Ջան լեզուն բերնումն ունէ։* ([illegible])։
*Ջաշմաւն* ([illegible]) *դուս կանգնած է։* ([illegible])։
*Ջան ապրելումն է։* ([illegible])։
*Ջան պէս դալթրեցայ։* ([illegible])։
*Ջորշուփնիր կերայ նրամէն։* ([illegible])։
*Ջատ-շատ քար պատովի, դրա գինը հինգ մանէթ։* ([illegible])։
*Ջան զարմն է։*
*Ջատ է փուլ գալի։* ([illegible])։
*Ջան նամուս (կամ՝ էրես) ունէ։* ([illegible])։
*Ջան օր է քաշում։* ([illegible])։
*Ջան օրումն է։* ([illegible])։
*Ջառ. գցից։* ([illegible])։
*Ջան պէս իմացաւ։* ([illegible])։
*Ջան պէս կոնկռնում է։* ([illegible])։
*Ջուլօն* ([illegible]) *յիդ տոււ։* ([illegible])։
*Ջատ սարիր ու ձուրիր կայ սրա ու նրա մէջը։* ([illegible])։
*Ջրթի էրիտ դախլը* ([illegible]) *նաշտար* ([illegible]) *տալիս։* ([illegible])։
*Ջատ քամի կուտէ ճանփին։* ([illegible])։
*Ջուն մարթ է։* ([illegible])։
*Ջամփրի պէս պտուտ է գալի գողնքումը։* ([illegible])։
*Ջունչս կրկնվում է։* ([illegible])։
*Ջյնքիս կապեցին։* ([illegible])։
*Ջանը կտրից։* ([illegible])։
*Ջօրեղէնը* ([illegible]) *շատ ջուր է խմեցնում։* ([illegible])։
*Ջատ հիռու խ բռնում քիզմէն էտ բանը։* ([illegible])։
*Ջէլէխ-մէլէխ օմքին է։* ([illegible])։

Ճալակն է ննգնում։ ([illegible])։
Ճուրճրու գինը ([illegible]) Հանից։ ([illegible])։
Ճուքը ննգաւ։ ([illegible])։
Ճրխկայի ձէն ունէ։ ([illegible])։
Ճապկի ննգիր։ ([illegible])։
Ճահի թամբալ։ ([illegible])։
Ճուքիր է անում։ ([illegible])։
Ճուրումը խաղում է։ ([illegible])։
Ճահ իմ քաշում։ ([illegible])։
Ճատ տեսնում է, քիչ ուտում։ ([illegible])։
Ճահիմէն ([illegible]) փաք ([illegible]) չունէ։ ([illegible])։
Ճուք-պապանաք է։ ([illegible])։
Ճատ է սիրում փառաց բան։ ([illegible])։
Ճահին շահ ածաւ։ ([illegible])։
Ճատ մէ վի քաշի նրան։ ([illegible])։
Ճատ առաջ է նրա մօդ։ ([illegible])։
Ճահն էլ վրէն ալէ։ ([illegible])։
Ճան շնթռուց է ու գլխի կօնկօռնուց նրանց տունը։ ([illegible])։
Ճէշ (6) ու բէշ (5) էկաւ բանը։ ([illegible])։
Ճէշ (6) ու փանջ (5) տղայ է։ ([illegible])։
Ճնուրքով խմէ չայն։ ([illegible])։
Ճատ չար ու բարի տեսած մարդ է։ ([illegible])։
Ճան հիդ կապեցի նրան։ ([illegible])։
Ճան տիզ չին գցում նրան։ ([illegible])։
Ճուշա ([illegible]) գցիլ տվի (կամ՝ նստեցնել տվի) փանջարումը։ ([illegible])։
Ճահը գլուխ դառաւ։ ([illegible])։
Ճատ հինդութին իմ քաշի։ ([illegible])։
Ճատ բան կու տեսնէ մյ։ ([illegible])։
Ճան չարչարանքումն իմ։ ([illegible])։
Ճատ մարթու էրեսը չէ բռնում։ ([illegible])։

Ճուլղուրաքարի ([illegible]) պէս տուն ննգաւ։ ([illegible])։
Ճաքրէ հաց։ ([illegible])։
Ճահը էս գլխէն դուս արի։ ([illegible])։

Չիմ ու չում է անում. ([illegible])։
Չանով ([illegible]) վի կալան նրան։ ([illegible])։
Չարէ-չար ([illegible]) մօցիքլիր ([illegible]) է, վուր բանում է նրանց տանեժէն։ ([illegible])։
Չէշմակը ([illegible]) կորցրել է։ ([illegible])։
Չոքէ-չոք գնաց։ ([illegible])։
Չրթի-փրթի է անում։ ([illegible])։
Չանարագար ([illegible]) ալթմորթի է։ ([illegible])։
Չէ ուզում, վուր արեգագը լուս տայ։ ([illegible])։
Չխրթմի ([illegible]) ռանգ է տալի։ ([illegible])։
Չիք չորէքշաբթի։ ([illegible])։
Չախմախ ([illegible]) կտուր է դրուստ։ ([illegible])։
Չրի խուրգա ([illegible]) արաւ փուղը։ ([illegible])։
Չլա է մտի։ ([illegible])։
Չառ էրեսը չիմ պահում։ ([illegible])։
Չրմնամ, թէ նա գայ։ ([illegible])։
Չաչանակ է կտրվի։ ([illegible])։
Չէ կանացի ծպտա ահեմէն։ ([illegible])։
Չաթս կտրվեցաւ։ ([illegible])։
Չոլ ու քէչվան։ ([illegible])։
Չոլ ու փալաս։ ([illegible])։
Չոլ ու մուլ։ ([illegible])։
Չանգալ ([illegible]) է գառել։ ([illegible])։
Չաթու ([illegible])-քէսան ([illegible]) օմքին է։ ([illegible])։
Չարան-փարան է անում։ ([illegible])։
Չարօզ է անում։ ([illegible])։
Չէ տեսնում իմ արած լաւութիւնը։ ([illegible])։

Ձէ վուր մէքից գլուխս ցաւում է։ ([illegible])։
Ձէ՛ վուր քիզ ասում էի։ ([illegible])։
Ձի վէր ննգնի նրամէն։ ([illegible])։
Ձաւ արին նրա մահը։ ([illegible])։
Ձմչմակիր օմքին է։ ([illegible])։
Ձմահաւան օմքին է։ ([illegible])։
Ձխխլի-պխտօ օմքին է։ ([illegible])։
Ձուրիկ-չուրիկ մարթ է։ ([illegible])։
Ձաապանդ օմքին է։ ([illegible])։
Ձիթ դէրիա ունէ հաքին։ ([illegible])։
Ձին թողնում, վուր մարթ աճկ բաց անէ։ ([illegible])։
Ձի աալի, թէ ուրուքմին կաա, թէ չը կաա։ ([illegible])։
Ձաուն էստի չէճիր։ ([illegible])։
Ձափ է գցում ձին։ ([illegible])։
Ձը քաշից մէ սահաթ, նա էլ էկաւ։ ([illegible])։

Պարապ-սարապ ման է գալի։ ([illegible])։
Պարզ ջրեմէն չէ։ ([illegible])։
Պտուղ չունին։ ([illegible])։
Պակասութէնի մէչն իմ։ ([illegible])։
Պուճուկցին վարթը։ ([illegible])։
Պատ է շարում։ ([illegible])։
Պունդէ-պռունդ։ ([illegible])։
Պատիւ չէ պահում։ ([illegible])։
Պարարտ կու՚լի ձուգը, թէ էրկու օր ջրումը պահվի ու իժում էփվի։ ([illegible])։
Պապիրոս ([illegible]) է քաշում։ ([illegible])։
Պատկիրք է քաշում։ ([illegible])։
Պարտկին մօտ չէ գալի։ ([illegible])։
Պղտուր ջրումը ձուգն է բռնում։ ([illegible])։
Պատկիրքը կտրվիլ է։ ([illegible])։

Պարտկը կոտրից։ ([illegible])։
Պատռտվում է ու ճոթռտվում։ ([illegible])։
Պռնգներեմէն վէր էկաւ։ ([illegible])։
Պատկերքը վէր է բերում։ ([illegible])։
Պարզկկայ գիշեր է։ ([illegible])։
Պուրտիգուս պառկիլ է։ ([illegible])։
Պրճվալին ([illegible]) լիք էթող։ ([illegible])։
Պրճվալի կանգնեցաւ սրտին։ ([illegible])։
Պարտկի տակը մնաց։ ([illegible])։
Պարտկումը խեղտվում է։ ([illegible])։
Պարտկեմէն չը դուս էկայ։ ([illegible])։
Պանդուրի ([illegible]) տվին, դուս արին։ ([illegible])։
Պուզերտ չի աւելնա էտով։ ([illegible])։
Պատարաքը կից է։ ([illegible])։
Պատը նստեցաւ։ ([illegible])։
Պրիկ-պրիկ է գալի։ ([illegible])։
Պասը կոտրից։ ([illegible])։
Պատիժ դառաւ գլխիս։ ([illegible])։
Պատէ պատ է ման գալի։ ([illegible])։
Պապի գինն է ուզում։ ([illegible])։
Պրծնելու վրայ է։ ([illegible])։
Պղինձը վրէն դի։ ([illegible])։
Պուստ ու պօլիկ։ ([illegible])։
Պարտկը վրէն կոտրվեցաւ։ ([illegible])։
Պատրաստ կացի։ ([illegible])։
Պէծ պծի է տալի։ ([illegible])։
Պարտկ ու պատուհասով լիքն է։ ([illegible])։
Պուրտն էտումն է կտրվի։ ([illegible])։
Պրծնիլ չըկայ նրան։ ([illegible])։
Պաս է նրա համա էտ բանը։ ([illegible])։
Պիտիս ծամի ու բերանը դնի։ ([illegible])։

Պռոշներեմէն (կամ՝ էրեսեմէն) կաթն է վէր գալի, թշերեմէն արուն է կաթում։ ([illegible], кровь съ молокомъ)։

Ջիգարը ([illegible]) լվացած ունէ։ ([illegible])։
Ջուրը վարարիլ է։ ([illegible])։
Ջուրը գցեցի մէ մանէթը։ ([illegible])։
Ջանիս վրայ չիմ։ ([illegible])։
Ջուրը ջրեմէն կու հանէ հա՛։ ([illegible])։
Ջորին կորցրիլ է։ ([illegible])։
Ջուր կտրվեցաւ փուղիրս։ ([illegible])։
Ջամումն ինչ կանգնեցաւ։ ([illegible])։
Ջիրումը ([illegible]) մկնիր ին խաղում։ ([illegible])։
Ջիրին ծանդրութին է տալի փուղը։ ([illegible])։
Ջուրն էլ գցիս, կրակն էլ գցիս. էլի կու դուս գայ։ ([illegible])։
Ջուղարը ջվալով ունէ պահած։ ([illegible])։
Ջէր ձվումն իս ծվում ու էտէնց խօսա՛ում։ ([illegible])։
Ջէր չէլած, խօսում է։ ([illegible])։
Ջէր վուտը չէ էլի, խօսում է։ ([illegible])։
Ջուր ու գինի օմքին է։ ([illegible])։
Ջղրու ճինճինա իմ գալի։ ([illegible])։
Ջէր ափթա ([illegible]) չիմ արի։ ([illegible])։
Ջրի պէս է կարթում։ ([illegible])։
Ջրի պէս անգիր է արի։ ([illegible])։
Ջուր տու՛ քշէ՛ օմքին է։ ([illegible])։
Ջուրն էկիլ է, նրանցը տարիլ է։ ([illegible])։
Ջանս դուղ ննգաւ։ ([illegible])։
Ջիգարը ([illegible]) քաշում է։ ([illegible])։
Ջրի ջուքամ ունէ։ ([illegible])։
Ջանդան-բէզար ([illegible]) էլայ նրամէն։ ([illegible])։
Ջիգր է մտի նրա հիգ։ ([illegible])։
Ջուն-ջունի բերին ինձ։ ([illegible])։

Ջիր կտրող մարդ է։ ([illegible])։
Ջամադկիր կապից նրա համա։ ([illegible])։
Ջինս ([illegible]) ու ջլազով ([illegible]) վեր ննգաւ։ ([illegible])։
Ջանին վունչիչ չէ կպչում։ ([illegible])։
Ջուխտ ([illegible]) քինթ էկաւ։ ([illegible])։
Ջէր մուրդի խա ([illegible])։
Ջէր էլի գլխումն ունէ։ ([illegible])։
Ջղրաբազար բան է։ ([illegible])։
Ջէր խօմ ունիմ ու խմում էլ Աստուծ օղորմած է։ ([illegible])։
Ջուրը բերնումտ կում արա։ ([illegible])։
Ջիգար ([illegible]) ապրանք է։ ([illegible])։
Ջրի գնացիլ ես։ ([illegible] ходилъ ли по воду)։
Ջրի տարած (կամ՝ ջրատար) օմքին է։ ([illegible])։
Ջրի ճանփայ ին կտրի։ ([illegible])։
Ջիբումս գլխէլի։ ([illegible])։
Ջանս փշաքաղվում է։ ([illegible])։
Ջանս չէ գալի։ ([illegible])։
Ջուրը վէր է ննգլի։ ([illegible])։
Ջանջալ ([illegible]) մարդ է։ ([illegible])։
Ջանքաշ մարդ է։ ([illegible])։
Ջրատրաք էլաւ։ ([illegible])։
Ջափա մի քաշի։ ([illegible])։
Ջան ([illegible]) ու ջիգար ([illegible]) օմքնիր ին։ ([illegible])։
Ջարդ ու փուրդ արաւ։ ([illegible])։
Ջարդ ու փշուր։ ([illegible])։
Ջարդ էրծաթ։ ([illegible])։
Ջանումը նստեցաւ։ ([illegible])։
Ջանն է ննգլի։ ([illegible])։

Ռանգ ու ռունգն ([illegible]) էրիտ։ ([illegible])։
Ռանգն առաւ ու էրիտ։ ([illegible])։
Ռանգը ռանգի հետ չէ գալի։ ([illegible])։
Ռահմ դցէ՛ նրա սիրտը։ ([illegible])։
Ռանգ-մռանգը գնաց։ ([illegible])։
Ռէշիթ մարթ է։ ([illegible])։
Ռօկի ([illegible]) մարթիք ին։ ([illegible])։
Ռազի չի՞ս։ ([illegible])։
Ռանգից ([illegible]) իր աղջկան։ ([illegible])։
Ռանգը դուս էրիտ չայնի։ ([illegible])։

Սիրտ դնող չունիմ։ ([illegible])։
Սուտ վլի կալնող ապրանք է էս ապրանքը։ ([illegible])։
Սարփի ([illegible]) գլխ է։ ([illegible])։
Սարփէն չէ տալի։ ([illegible])։
Սիրտը փուրը ննդաւ։ ([illegible])։
Սիրտս ասում է՝ թէ գնամ։ ([illegible])։
Սուտ է սատանի պէս ([illegible])։
Սիրտը նեքսեմէն (կամ՝ նեքսեմյանց) է ունեցի։ ([illegible])։
Սրտիս դռնիրը բաց էլաւ։ ([illegible])։
Սրա միսը չի էփվի։ ([illegible])։
Սրտնմէջս արուն է կաթում։ ([illegible])։
Սառցի վրայ նստեցրուց։ ([illegible])։
Սառը դեդնին նստեցրուց։ ([illegible])։
Սառցի վրայ գլխեցաւ պարտկը։ ([illegible])։
Սառը (կամ՝ սիւ, կամ՝ չուր) քարի վրայ նստեցրուց։ ([illegible])։
Սրտին լիղ քավեցաւ։ ([illegible])։
Սրտումս չէ գալի։ ([illegible])։
Սւէն-սիպտկէն խաբարութին չունէ։ ([illegible])։
Սուտը փուգով է առնում։ ([illegible])։
Սուտ փուղ է կտրում։ ([illegible])։

Սիրտս թան է դառել։ (ձանձրացել է)։
Սիրտս բուրթ է դառել։ (նոյն)։
Սատանի ճանփէն կու գթնէ։ (ճարպիկ, հնարագէտ)։
Սրթամ է անում ինձ։ ([illegible])։
Սիրտս էտ բանի վրայ տաք չէ։ (յօժար չեմ)։
Սով ննգաւ քաղկումը։ (սով է պատահել)։
Սիրտը հովրուց։ ([illegible])։
Սալթ ([illegible]) ու սուրա ([illegible]) օմքին։ ([illegible])։
Սիրտ արաւ, դուս թռաւ։ (սիրտը [illegible])։
Սուտ դուս էկաւ նրանց մօտ։ (խոստումը չէ կատարել)։
Սիրտ շանց տոււ նրան։ (սիրտ տուեց. քաջալերութեան)։
Սիրտս լնթվեցաւ։ (սիրտը ծանրացել է, որ. [illegible])։
Սիրտը դարդկից։ (նեղութիւնը յայտնել է խօսելով)։
Սիրտ է տալի նրան։ (քաջալերում է)։
Սիրտս բռնից կերակուրը։ (ծանրացել է)։
Սիրտս կտրվեցաւ նրամէն։ (բարեկամութիւնը ընդհատուեց)։
Սիրտս գնում է։ (սիրտը նեղանում է)։
Սիրտս կանգնեցաւ։ (հանդարտուեցաւ [illegible]. [illegible])։
Սիրտս չէ վիզ կալնում նրա ասած խօսկը։ (չէ ընդունում)։
Սիրտը կպել է աղչկան։ (սիրահարուել)։
Սրտին գլբել է։ ([illegible] է [illegible]. [illegible])։
Սիրտս կտրվել է։ (տխրութեան մէջ է)։
Սիրտս բարկել է։ (նեղսրտուել է)։
Սիրտս թիլի վրայ կախ ննգաւ։ (սրտնեղութիւն)։
Սիրտս ճղմոտում է։ (ցաւում է սիրտը)։
Սրտումս տեղ չունիմ։ (նեղուած է հոգով)։
Սիրտ չունիմ։ (նոյն)։
Սիրտ չունէ նրա վրայ։ (ատելի ընկել է)։
Սրտիս ծէրը գնաց (կամ՝ մղկտաց)։ (յաւէտ)։
Սիրտս փուրումս թուլացաւ։ (սրտնեղութիւն)։

Սիրտս փուրումս շուռ էկաւ: (երկիւղ):
Սիրտս թալթում է: (բաբախում):
Սիրտս փղցկում է: (սրտնեղութիւն):
Սիրտս փոխեցին: (դիտաւորութիւնը):
Սիրտը վէր էկաւ: (հաւանել):
Սիրտս լքցվեցաւ: (վհատուել):
Սիրտս լի.քն է նրամէն: (նոյն):
Սրտիս դռնիրը բաց էլաւ: (ուրախանալ է):
Սիրտս բաց էլաւ: (նոյն):
Սիրտս չէ տալի: (չեմ ուզում):
Սիրտս չէ քաշում: (նոյն):
Սիրտս վիրաւորվեցաւ նրամէն:
Սիրտս լի է ամեն բարութէնով: (աչքը կուշտ է):
Սիրտը շահէ: (համոզական խօսք ասել):
Սրտաբաց տիղ է: (ուրախ):
Սիրտը քար ու ապառաժ է կտրվի: (խորամանկ է դառել):
Սիրտը տիղն էլաւ: (ջղաբորբոք ձայնը):
Սիրտ ալտի ըլի, վուր դիմնայ: (նեղացած է):
Սիւը սիպտիեմէն չէ ջոգում: (անհանգստացող):
Սուփրէն (սփռոց) վի քաղվեցաւ: (նորա բանը վերջացաւ):
Սուտը բռնեցի: (ստութիւնը իմացայ):
Սիրունի կզկնովն անց է կացի: ([illegible]):
Սիրունի շուքը (լոյս) դիբիլ է նրան: ([illegible]):
Սև ու մութ օրեր է քաշում: (նեղութեան մէջ է):
Սապուն տու մազերուն (կամ լվածկին): (ծեծ):
Սատանի վուտը կոտրից: (վերջացաւ նրա շատ երկար սպասելուց յետոյ):
Սաւած հաղուղը յիդ կու թողնէ: ([illegible] պարտութեան է գալիս):
Սութուլ է շահմաին: (դուրս հանուած չէ):
Սիրտը վիր աձաւ: (փոխեց):
Սիլի-բիլի է անում: (յաղթական փաղաքշել):

Սիրտս ճարալու (վիրաւոր) խոցց է։ (վիրաւորուած է)։
Սիւցրու, իրան տուն (տիամայ թաղ)։
Սիւցէ էստի։ (Ի՞նչ տղայոց և մեղքէր)։
Սիլլա ուտեցրուց։ (ապտակ կերաւ)։
Սիլլա հասցրուց։ (նոյն)։
Սիլլա կպցրուց։ (նոյն)։
Սիրտս լիդ է ընկում տղէս (Մխիթարուած է)։
Սիրունատիս օմքին է։ (գեղեցիկ)։
Սիւ-մունդուգալ (ածխացած. խանձող)։ (շատ սեւ)։
Սիւ-տխտխ։ (շատ սեւ)։
Սատանականց գնացի։ (անդրշիրիմեան է գնել)։
Սատկած օմքին է։ (Թալայմաքթ)։
Սրած օմքին է։ (յիրք)։
Սուտ-խոսան մարթ է։ (ստախօս)։
Սրտամնալ է էլլի (չոր է ձեռէլ)։
Սուտ ու մուտ։
Սուս ու փուս։
Սիւլի է տալլի (սև գոյն է բռնել)։
Սրտանց սիրում իմ։ (՚է սրտէ)։
Սատանի սրուց օմքին է։ (Ճարպիկ)։
Սուփրի սէլաւ (հեղեղ) օմքին է։ (շատ առատ)։
Սէլի ակը։ (ակն)։
Սաղացրուց ճարէն (վէրք)։ (Բուժել)։
Սաղացրուց փթթած ապրանքը։ (Վաճառեց շատ ապրանքը շատ գնով)։
Սաղացրուց հին նիսիէն։ (պարտքերը վճարել է)։
Ստաքնի (Ս. Բժշկ) տակը արաղ (օղի) է ծախում։ (Բժշկել)։
Սուք է անում։ (սուգ)։
Սիրաթս գնաց։ (երեսի գոյնը)։
Սաղ-սալամաթ։ (ողջ առողջ)։
Սիպտակ-լուսաթաթախ օմքին է։ (շատ սպիտակ)։
Ստաքնի պռունգ։ (Բժշկի եզր)։
Սար ու ձորը նրա համա մէկ է։ (անհոգ է)։

Սանդուխտ տվինք բաղնիմէն։ ([illegible])։
Սովի սողոմ (կամ սողան) օձքին է։ ([illegible])։
Սլվլուց օձքին է։ ([illegible])։
Սրտումս խոմ չէր նստած։ ([illegible])։
Սուսիրէն ([illegible]) շէն արէք։ ([illegible])։
Սիրտս պակսեցաւ նրամէն։ ([illegible])։
Սրտապակաս է նրա վրայ։ (նոյն)։
Սատանէն վրէն նստիլ է հայրաթ։ ([illegible])։
Սատանին թարս ([illegible]) նայնող օձքին է։ ([illegible])։
Սատանները հիդ դաս է տվլ։ (նոյն)։
Ցիրիլ է տալի իր գլուխը։ ([illegible])։

Վուտը կտրից նրանց տանեմէն։ ([illegible])։
Վուտներումը բուխաւ ([illegible]) գցեցին։ ([illegible])։
Վուտնիրը կապեցինք։ (նոյն)։
Վունչիչ դուռը չունէ։ ([illegible])։
Վրացու սուսիրա ([illegible]) է։ ([illegible])։
Վուրդլոր վուր է, դու՚քայ։ ([illegible])։
Վիզ չէ կալնում։ ([illegible])։
Վրէն չէ գնում էտ բանը։ (նոյն)։
Վուրմանց էլ գ՚ուզխս սիրծէ։ ([illegible])։
Վիրչ չունէ։ ([illegible])։
Վէր ին սկում նրան։ ([illegible])։
Վէրի էտամէն ([illegible]) քրիհով ([illegible]) է տալի։ ([illegible])։
Վերնատունը դարդակ է։ (նոյն)։
Վա՛յ տէր կու կանչէ մուլքը ([illegible])։ ([illegible])։
Վուտը ծանդր ունէ։ ([illegible])։
Վուտի վրայ կանգնեցրուց նրան։ ([illegible])։
Վուտեմէն չուստ ([illegible]) է, խիլքեմէն թեթիւ։ ([illegible])։
Վուտնիրս խոմ ջրումը չէ մնացի։ ([illegible])։

Վուտը կոտրած տանը նստէր (անշարժ)։
Վուտնամանը լաւ էկաւ վուտումը։ (յարմար է)։
Վունչիչ թափառութին չէ անում։ (շրջագայութիւն չանէ)։
Վախտը գլոզէ։ (ժամանակից է խաբուած)։
Վունչիչ անճկ չը տեսնէ, ինչ նրան բան էկաւ։ (դժբախտութիւն է պատահել)։
Վուրդի նա, վուրդի սա։ (շատ տարբեր են)։
Վիր նստեցաւ սիրտը։ (ընկճուել)։
Վէր նստեցաւ բշտածը, ուռածը, խարէն։ (ուռուցքը իջել է, չքացել է)։
Վիր ննգաւ նրանց օջախը։ (անհետացել է)։
Վէր ննգաւ, մեռաւ։ (վայր ընկնել)։
Վիր խփից փուղերը։ (փչացրել է)։
Վրան վէր տվինք։ (արգելել)։
Վէր տվինք խուտը։ (հնձել)։
Վրէս փուղ չունիմ։ (հետս)։
Վուտը լիդ խփից։ (փուշը ծակել է. երթեւեկութիւնը ընդհատել է)։
Վուրթու կսկիծը տեսաւ։ (մահը)։
Վիրչանալու վրայ է։ (մօտ է)։
Վի կալաւ մազը։ (խուզեց)։
Վուրթկերանց անճկն է։ (ամենափոքրը)։
Վէր գիրաւ ապրանքը։ (ձեռը գրաւեց)։
Վունց մեռնում է, վունց ապրում։ (երկարատեւ հիւանդի մասին)։
Վրէս գնվեցաւ փուղը։ (պարտք)։
Վիր գրել տվլի նրանց տունը։ (վաճառելու հրաման)։
Վիր ննգնելու օմքին է։ (ծերացած)։
Վայ էն գիմնալուն, վուր իս գիմցայ։ (ծանր վիճակ)։
Վայն էկիլ է, տարիլ է ինձ։ (նոյն)։
Վունց փուղը գիդիմ, վունց փուղի շահը։ (չեմ տեսել)։
Վուր աղիս-մաղիս, գլխի տաս շատ խմքին չէ կանգնիր։ (ամէն չէ գոյանալ)։

Վունցոր էրգէնքն ու գեդէնքը, էնէնց հէռու էն։ ([illegible])։
Վուրթէնն էլ վուր կնքէս, էլի կու խօսէ։ ([illegible])։
Վո՛ւնց գլուխն է խմանում, վո՛ւնց վուրքը։ ([illegible])։
Վուտէս քըէհը ([illegible]) գուս էկայ։ ([illegible])։
Վունչէչ ճար ([illegible]) ու էլաջ ([illegible]) չէ ըլում նրան։ ([illegible])։
Վըէն արի մէ մանէթը։ ([illegible])։
Վո՛ւնց քնած էի, վո՛ւնց զարթուն։ ([illegible])։
Վուտնեըումս ջուր կանգնեցաւ (կամ՝ վէր էկաւ)։ ([illegible])։
Վուտի վրայ է առուտուր անում։ ([illegible])։
Վուտնէս էմը չէ։ ([illegible])։
Վրայ պրծաւ նրա վրայ։ ([illegible])։
Վո՛ւր մէկի բերանը կապիմ (կամ՝ ցխիմ)։ ([illegible])։
Վախտ-բէվախտ գլխիս կանգնում է։ ([illegible])։
Վուտս չը վրայ էկաւ։ ([illegible])։
Վիր ու նէստ է անում։ ([illegible])։
Վուրթութեննեմէն կտրվեցաւ։ ([illegible])։
Վունչչով չը հարցուց միզ։ ([illegible])։
Վուղչ աշխարք, վուղչ դունիա ([illegible]) գիդէ էտ խաբարը։ ([illegible])։
Վունչէչ չի անի։ ([illegible])։
Վուտը ղալիմ էղի։ ([illegible])։
Վուտը ղալիմացրուց։ ([illegible])։
Վուտը չը փոխիլ էրէտ։ ([illegible])։
Վուտը չը փոխից հինգ մանեթեմէն։ ([illegible])։
Վունչչումս չանցկացաւ։ ([illegible])։
Վուտի էրեսը մաշվեցաւ շատ գնալ-գալով։ ([illegible])։
Վուտս մժմժում է։ ([illegible])։
Վրայ ութն է սահաթէնը։ ([illegible])։

Վուտը փափուկ է։ ([illegible])։
Վերի թարէքին ([illegible]) բազմեցաւ։ ([illegible])։
Վզակութին տալիս է։ ([illegible])։
Վիր ու վիր թռաւ։ ([illegible])։
Վայ թէ տակը մնամ։ ([illegible])։
Վուտս բռնվեցաւ։ ([illegible])։
Վրեններուս խոմ ծախած չէ՞։ ([illegible])։
Վուր չիմ տեսնում նրան, գլխիս ցաւը բռնում է։ ([illegible])։
Վուտի հիդ հաւսրվեցաւ։ ([illegible])։
Վունչինչ չը դառանք։ ([illegible])։
Վուտս մեկնեցի։ ([illegible])։
Վուրթէցի վուրթի ([illegible])։
Վի կալաւ ու ասաւ։ ([illegible])։
Վրայ է գցում։ ([illegible])։
Վրայ ննգաւ։ ([illegible])։
Վրայ է տալի։ ([illegible])։
Վրայ ու վրայ ասաւ։ ([illegible])։
Վայ-նաչարի ([illegible]) ապրում ինք։ ([illegible])։
Վրէտ մէ՛ վի կալնի էտ խօսկը։ ([illegible])։
Վունցոր գլուխս միտս գայ, էնէնց է նա։ ([illegible])։
Վրայ դառան նրայ վրայ։ ([illegible])։
Վէր արաւ միրուքը։ ([illegible])։
Վունցոր նստած է, էնէնց իմ տալի։ ([illegible])։
Վուտով-ձեռով է անում։ ([illegible])։
Վիր լին քաշի ապրանքը։ ([illegible])։
Վունցոր ըլի, էտ մեռելը պիտինք թաղի։ ([illegible])։
Վուտով-գլխով մէջը ննգաւ։ ([illegible])։
Վի կալան, վէր դրին։ ([illegible])։
Վունչինչ չէ մտնում նրա գլխումը։ ([illegible])։

Վունչին չի վէր գա նրամէն։ ([illegible])։
Վունչչումը չին խառնում ինձ։ ([illegible])։
Վազան մառը։ ([illegible])։
Վրէն լաւ է նստած շուրը։ ([illegible])։
Վունչչիմէն վունչին չը մնաց։ ([illegible])։

Տկճուրը խիւքը գլխին է։ ([illegible])։
Տառը մառխս վուր մում վառիմ, էլի չի աւտա։ ([illegible])։
Տօպրակս ([illegible]) թափ տվլի։ ([illegible])։
Տրիխ հաքցրուց։ ([illegible])։
Տիղն ու տիղը ջուր կտրվեցաւ։ ([illegible])։
Տիղն ու տիղը հանգաւ։ ([illegible])։
Տաք ու հով է տալի։ ([illegible])։
Տաքնում է ու հովնում է։ ([illegible])։
Տանձ ին ջաղան անում։ ([illegible])։
Տան փուզէն լաւը չէ։ ([illegible])։
Տարի օրիր է անում։ ([illegible])։
Տանում ին ու բերում ին խղճին։ ([illegible])։
Տարվայ գլխին տղայ էրի։ ([illegible])։
Տունը քանդից աղչկայ վրայ։ ([illegible])։
Տեսնիս՝ ծ՛վ է բերի միրքը։ ([illegible])։
Տափակ-տափակ է խօսում։ ([illegible])։
Տախտակը փուր է արի։ ([illegible])։
Տիղ իմ գցիլ տվլի ինձ համա։ ([illegible])։
Տիղ ննգած տիղը։ ([illegible])։
Տիղը ննգաւ։ ([illegible])։
Տիղը վուր ննգնիլ։ ([illegible])։
Տիղ ունէ արած։ ([illegible])։
Տիղն ու տիղը մնաց։ ([illegible])։
Տիղը չը կայ։ ([illegible])։
Տարխուն ([illegible]) է գալի նրանց բաղումը ([illegible])։ ([illegible])։

Տանում է ամանը։ ([illegible])։
Տանող-բերող օձքին է։ ([illegible])։
Տանուլ տվի թղթումը։ ([illegible])։
Տանուլ էրիտ խիլքը։ ([illegible])։
Տանուլ տու միջմէն։ ([illegible])։
Տարած-տրորած օձքին է։ ([illegible])։
Տակը տարած ունէ։ ([illegible])։
Տարիք կու քաշէ։ ([illegible])։
Տարիքը շուռ է գալի։ ([illegible])։
Տարի շինից էլի։ ([illegible])։
Տիզեմէս ննգայ։ ([illegible])։
Տարին տասէրկու ամիս։ ([illegible])։
Տանն է։ ([illegible])։
Տօնքախ անձա ([illegible])։
Տուրս ու տալիք շատ ունէ։ ([illegible])։
Տուրս կացաւ նրան։ ([illegible])։
Տաք ջուր։ ([illegible])։
Տանգիկնի ակռէք։ ([illegible])։
Տանող-տանողի վրայ է։ ([illegible])։
Տակռումը ([illegible]) կորիցս։ ([illegible])։
Տիզն է։ ([illegible])։
Տուտուց-տուտուց մի դուս տար։ ([illegible])։
Տան ճրաքս հանգաւ։ ([illegible])։
Տու, թէ կու՚տասս։ ([illegible])։
Տուր ու գմփուցս։ ([illegible])։
Տվին, հա տվին։ ([illegible])։
Տարվայ վրայ է կալած։ ([illegible])։
Տնէ տուն ման է գալի։ ([illegible])։
Տանէ ցտանու խօսինքս։ ([illegible])։
Տակէ տակ օձքին է։ ([illegible])։
Տանեմէն կրվում ինքս։ ([illegible])։
Տաքցնում-դողցնում է։ ([illegible])։

Տայլիկ-տայլիկ տղերք ունէ։ ([illegible])։
Տխուկ կնիկարմատ է։ ([illegible])։
Տաք-տաք կպան բանին։ ([illegible])։
Տարով է խօսում։ ([illegible])։
Տվլի, անց կացայ։ ([illegible])։
Տուն ու դուս է անում։ ([illegible])։
Տնքալու ձէն մնր էլաւ։ ([illegible])։
Տղայ էրի։ ([illegible])։
Տղով պառկեցաւ։ ([illegible])։
Տալուչ գլուխը կերաւ։ ([illegible])։
Տխտ գնացի։ ([illegible])։
Տխտ ու ճանանչ։ ([illegible])։
Տանտ կու պակսիմ։ ([illegible])։
Տուն բանեցի։ ([illegible])։
Տունը տան վրայ կու դնէ։ ([illegible])։
Տէրէ տէր էլանի։ ([illegible])։
Տէր չունէ ու տիրական։ ([illegible])։
Տրաքած օմքին է։ ([illegible])։
Տուստուսալի գնաց։ ([illegible])։
Տրխկուցն է։ ([illegible])։
Տարին ի բուն։ ([illegible])։
Տնիր, սարաէք ([illegible]) է ձքլի։ ([illegible])։
Տակը դրի հինգ թումանը։ ([illegible])։
Տիրուչը միչեմէն հանից։ ([illegible])։

Ցաւս բռնից։ ([illegible])։
Ցափ-տկլուր։ ([illegible])։
Ցափ-մէնակ։ ([illegible])։
Ցածր ապրանք։ ([illegible])։
Ցաւին ճար էլաւ։ ([illegible])։
Ցաւի գլուխը չէ իմանում։ ([illegible])։
Ցիմ-ցլիմ դէն գցից։ ([illegible])։

Ցամաք օմքին է։ ([illegible])։
Ցամաք-ցամաք ուտեցրուց խոսկերքը՝ ([illegible])։
Ցրտումը փէտացայ։ ([illegible])։
Ցաւ ննգաւ քաղկումը՝ ([illegible])։
Ցրտի տարած է ձմերուկը՝ ([illegible])։
Ցուրտը խփել է՝ ([illegible])։
Ցցում խոսկերք է անում՝ ([illegible])։
Ցուրտ կերանք՝ ([illegible])։
Ցաւ կտրվեցաւ գլխիս՝ ([illegible])։
Ցմխկած օմքին է՝ ([illegible])։
Ցամքեցրուց ձեռացս ([illegible], [illegible])։
Ցուրտ-դիմամաթ ([illegible]) որ է՝ ([illegible])։

Փլս ([illegible]) էրազ է տեսի հալբաթ՝ ([illegible])։
Փափուկ-փափուկ ուտեցրի խոսկերքը՝ ([illegible])։
Փուտը դնող օմքին է՝ ([illegible])։
Փուղ շինեց՝ ([illegible])։
Փքած օմքին է՝ ([illegible])։
Փայդա չըկայ նրամէնը՝ ([illegible])։
Փառք ու բերանը բաց արաւ էլի՝ ([illegible])։
Փուրը վքնվել է՝ ([illegible])։
Փուրումը բանեցրուց՝ ([illegible])։
Փուրաւիր օմքին է՝ ([illegible])։
Փուրն աւիրեց՝ ([illegible])։
Փասա-փուչէն քաշեց, գնաց՝ ([illegible])։
Փլփլի ([illegible]) դօստ ([illegible]) է՝ ([illegible])։
Փլփլը ծեծէ՝ ([illegible])։
Փշի ծէրին է նստած՝ ([illegible], на иголкахъ)։
Փուղի հետ կռիւ է տալի՝ ([illegible])։
Փալանը ([illegible]) վէր գցեց՝ ([illegible])։
Փոխանը վուտնիրն է ննգլի՝ ([illegible])։
Փուրս վից-վից է անում՝ ([illegible])։

Փուղը ձեռիս ջուր կտրուեցաւ։ ([illegible])։
Փուղերս երկնցաւ նրա վրայ։ ([illegible])։
Փուղի շահ իմ քաշում։ ([illegible])։
Փուրը դարդկեց։ ([illegible])։
Փուրը դէս ու դէն է մաճ անում։ ([illegible])։
Փխս վուտն ունէ։ ([illegible])։
Փուրումը գէլ (կամ՝ արծիւ) ունէ։ ([illegible])։
Փուրը մէճկին կայիլ է։ ([illegible])։
Փուղխս դրխտէն ([illegible]) կտրեցին։ ([illegible])։
Փուղխս սիքէն ([illegible]) կտրից։ ([illegible])։
Փէշակս չէ դուս գնում։ ([illegible])։
Փախտօնի ([illegible]) ձէնը աջիգ կ՛օնէ։ ([illegible])։
Փուղի համա իր հօրը կու ծախէ։ ([illegible])։
Փափուկ էրես ունէ։ ([illegible])։
Փուանգի սուրաթ ([illegible]) էրես ունէ։ ([illegible])։
Փափա ([illegible]) ու ճաճա ([illegible]) է դառի։ ([illegible])։
Փուղի ձէնը վուր իմանում է, Ըլթամայ դուղը բռնում է։ ([illegible])։
Փուղի հէդ խաղում է։ ([illegible])։
Փուղումը լվլվում է։ ([illegible])։
Փուրի բօձի ([illegible])։ ([illegible])։
Փուղի տիղն արիլ ճա։ ([illegible])։
Փուղ է գնվում նրա վրայ։ ([illegible])։
Փուղի էրես չիմ տեսի։ ([illegible])։
Փլաւը խխղտած է։ ([illegible])։
Փուրը գեդնին է քսում։ ([illegible])։
Փափկեցրուց նրան։ ([illegible])։
Փլան-փստան։ ([illegible])։
Փափուկ-մափուկ։ ([illegible])։

Փարագի ասում է նաւ ([illegible])։
Փալաս-փուլաս ([illegible])։
Փոշին տվիլ է փափին։ ([illegible])։
Փուղն ու խուղը մէկ է նրա համար ([illegible])։
Փասկած խօմ չէ՞ս նրա հիդ։ ([illegible])։
Փանջարա ([illegible]) է թողի պատուումը։ ([illegible])։
Փաշա է ու դրօշա ([illegible]) է։ ([illegible])։
Փուղերը նեքսիւ արաւ։ ([illegible])։
Փուղերը տակովն արաւ։ ([illegible])։

Քու մէ մազին էլ չիմ դիբչի։ ([illegible])։
Քար մի խառնի միր մէջը։ ([illegible])։
Քէփին ([illegible]) դէգմիշ ([illegible]) մի ըլի։ ([illegible])։
Քէփին մի դիբչի։ ([illegible])։
Քու տօլ ([illegible]) խիլք ղնգնեբուծս էլ ունիմ։ ([illegible])։
Քու մէջն էլ խափվեցայ։ ([illegible])։
Քու գլուխ չունիմ։ ([illegible])։
Քու սիրտ չունիմ։ ([illegible])։
Քարխանին ([illegible]) կօճն ([illegible]) է պակաս։ ([illegible])։
Քաշիլ է հօրն ու մօրը։ ([illegible])։
Քամին վէր ննգաւ։ ([illegible])։
Քունը գլուխս ննգաւ։ ([illegible])։
Քունս փախաւ։ ([illegible])։
Քնթեժէն հանից։ ([illegible])։
Քնթեժէս մուխը հանից։ ([illegible])։
Քու սրտովն էլայ։ ([illegible])։
Քրտինքը վրայ է անում։ ([illegible])։
Քրտնքումը լիղ է տալի։ ([illegible])։
Քէփը ծուվեցաւ։ ([illegible])։
Քնթով է ինձ վրայ։ ([illegible])։

Քնթէն վէր ննգած իր մամէն է։ ([illegible])։
Քաղցր է ծախվում ապրանքը։ ([illegible])։
Քաղցր աճկով է մտիկ տալի ինձ վրայ։ ([illegible])։
Քու խիլքի բան չէ։ ([illegible])։
Քաշից դաղանակը ([illegible]) վրէն։ ([illegible])։
Քաղցած կլմփուցի իմ տալի։ ([illegible])։
Քուրս նրա ձեռին է։ ([illegible])։
Քու խիլքը նրա խիլքի հէդ վ՛ունց գու՚քայ աքա։ ([illegible])։
Քամու ջաղաց է գլուստ ([illegible])։
Քանի՞ ղայամ ապրանք ունիս դուքնումը։ ([illegible])։
Քանի մարթու դ՚ուզիս, կանայ ջուղաբ տա։ ([illegible])։
Քու լաուլթէնի տակեմէն կու գուս գամ։ ([illegible])։
Քու կուռը բռնողն ծվ է։ ([illegible])։
Քու խարջ օմքին է։ ([illegible])։
Քանի իշտահը ([illegible]) տալիս էր, կերաւ։ ([illegible])։
Քրխտուսի էշ է։ ([illegible])։
Քարա ([illegible]) կէհայ մէ աբասու համա։ ([illegible])։
Քար պատուլի, գրա գինը հինգ մանէթ է։ ([illegible])։
Քու դարդն ին քաշում։ ([illegible])։
Քիզմէն չիմ արմնում։ ([illegible])։
Քու մուռտալ ([illegible]) ղունդը չիմ փոխի նրա ուլ ([illegible]) ու բարի ([illegible]) հիդ։ ([illegible])։
Քու օրումն էտէնց գիդլա դուն։ ([illegible])։
Քալփաթինով ([illegible]) չիս կանայ հանի նրա ջանեմէն փուղը։ ([illegible])։
Քիանց էլ օչով չունիմ։ ([illegible])։
Քանի գնում էր, աւելի զօրիղանում էր ձէնը։ ([illegible])։
Քանի գնաց, էնդղայ փչացաւ։ ([illegible])։
Քիդ մօդ (կամ՝ հէդ) իմ։ ([illegible])։
Քանի վուր ջիրումը ([illegible]) բակլայ կէր, գլխուխանքը գովում էին նրան։ ([illegible])։

Քու խօսկը նա նանա գլխէ։ (Նա ուշադրութիւն չէ դարձնում)։
Քու ասելունը չըլլի։ (Դա էլ այդպէս էլի ասում)։
Քու լաւութիւնը ակռէքս կորիցս։ (Չեմ մոռանալ քո լաւութիւնը)։
Քէսպ գնաց նրա հիդ։ (Մեռել)։
Քրիհ (ձորչ) իմ քաշում։ (Հառաչում)։
Քաշվում է նրամէնւ (Ամաչել)։
Քու գլուխը մինձ օմքին գլղխա։ (Քեզ վրայ մեծ համարում ունի)։
Քար ու ապառաժ կտրվեցաւ, չասաւ։ (Յամառել)։
Քար ու քօրինա (Թաքէլ) դառաւ։ (Կարծր)։
Քարեմէն ննզած օմքին է։ (Հզոր)։
Քնթին կպած է նրանց տունը։ (Շատ մօտ է)։
Քու դրուշմանը, ինչոր նա է։ (Ճիշդ քեզ նման է)։
Քուչէն (փողոց) տարաւ տան քունջը (անկիւն)։ (Անկիւնը քաշել է)։
Քուչի դռնեմէն բռնած ինչկլի տան քիմը (անկիւն)։ (Ամբողջ)։
Քացխեցրուց աղչկան։ (Ուշ են մարդու տուել)։
Քաղաք գիշերնիր է անում։ (Խռխռոց)։
Քիչ մնաց, ձեռնեմէս գնում էր։ (Մահամերձ է եղել)։
Քար ըլէր, չէր դիմնա. էն ես էի, վուր դիմցայ։ (Համբերել)։
Քու խօսկի վրայ իմ գալի։ (Քո խօսքին համաձայն եմ)։
Քնեցրուց նրան։ (Խաբեց)։
Քրիհը (տան ձորչ) վրէս կտրվեցաւ։ (Բարկացաւ)։
Քիզմէն հաց չէ ուզում ու կուտ չէ ուզում։ (Անվնաս է)։
Քարէկարկուտի պէս վրայ է տալի։ (Արագախօս)։
Քու խօսելով իմ փուրը չի կշտանա։ (Անօգուտ են խօսքերդ)։
Քամի կու վլի կենայ։ (Հոգս չը քաշէ. անտարբերութիւն)։
Քամիք է փչում։ (Նոյն)։
Քամարը բօշացիլ (Թուլացել) է։ (Նիհարել է)։
Քռացիլ է։ (Շատ է հարբել. խաբուել է)։
Քնթումն է խօսում։ (Դուրս չէ խօսում)։
Քէփով է։ (Հարբած)։
Քամուտը դուս արէլ։ (Զարը որտեղ չը լինի)։
Քանի առիս, լաւ կայ իր համար։ (Կարողանալ)։

Քիչ փայլ ([illegible]) ունէ՛ վայր մարթկերանցմէն. ([illegible]):

Քօռանամ ու կուրանամ ես. ([illegible]):

Քիզմէն ի դուս ասա. ([illegible]).

Քարը քավեցանք, գնացինք. ([illegible]):

Քունը թխից. ([illegible]):

Քունը Հանից. ([illegible]):

Քունս տանում է. ([illegible]):

Քուն մտաւ. ([illegible]):

Քաճկիրը ([illegible]) մօդ էլան. ([illegible]).

Քաշ տվի, տարայ. ([illegible]).

Քարը ծալէ. ([illegible]):

Քուլթէշ ([illegible]) Հանից. ([illegible]):

Քարսազ էլաւ. ([illegible]).

Քարնկից օմքին է. ([illegible]).

Քնթի մազ օմքին է. ([illegible]):

Քու վամաթը նա է. ([illegible]).

Քէփ չունիմ. ([illegible]):

Քուն չէ գալի իմ աճկումը. ([illegible]):

Քուն չունիմ. ([illegible]).

Քինթ ու պռունգ շանց էլիտ. ([illegible]).

Քինթ ու պռունգով է էկլի. ([illegible]).

Քինթ ու պռունգը վէր է թողի. ([illegible]):

Քինթը վի քաշող օմքին է. ([illegible]):

Քնթին տվինն ([illegible]):

Քունջ ու պուճախն ([illegible]) է ննգլի. ([illegible]):

Քանցխ կորվեցաւ. ([illegible]).

Քէփս չէ տալի. ([illegible]):

Քօլի-բղօ ([illegible]) օմքին է. ([illegible]):

Քիչ ու միչ. ([illegible]).

Քէթխուդինց չրաղն ([illegible]) է. ([illegible]).

Քէթխուդինց աճկն է։ ([illegible])։
Քամու է տալի նրա խօսկերը։ ([illegible])։
Քուն էղի էրեխին։ ([illegible])։
Քուլը ([illegible]) քամու էրիտ։ ([illegible])։
Քորեկատիղս առում է։ ([illegible])։
Քարն էրվեցաւ ([illegible])։
Քուչի ընկրանն։ ([illegible])։
Քուչի գլուխ։ ([illegible])։
Քարի վրայ ջիդ նստեցաւ։ ([illegible])։
Քարթու հաց։ ([illegible])։
Քէփը քօք ([illegible]) է։ ([illegible])։
Քօքից անդաճը։ ([illegible])։
Քօքից սահաթը ([illegible])։ ([illegible])։
Քէփս կոտրվեցաւ։ ([illegible])։
Քափը քաշից։ ([illegible])։
Քաշում է իր կուռը ([illegible])։ ([illegible])։
Քու ցաւը տարաւ։ ([illegible])։
Քնթի տակը ծիծաղում է։ ([illegible])։
Քարեմէն փուղ կու հանէ, հեստի տղայ է։ ([illegible])։
Քանի մանէթ կու կտրէ։ ([illegible])։
Քանի մանէթ կու բռնէ։ ([illegible])։
Քանի թուման իս առաչ։ ([illegible])։
Քէլէխ ([illegible]) խօմ չէ։ ([illegible])։
Քարօքն էրիտ նրան։ ([illegible])։
Քնած օմքին է։ ([illegible])։
Քնած դալալ ([illegible]) է։ ([illegible])։
Քանդած քօխի ([illegible])։ ([illegible])։
Քօխի-քալաման ([illegible])։ ([illegible])։

Օվկիանի ծովը գցեցիր։ ([illegible])։
Օսկոռ գցից բերանը։ ([illegible])։

Ոսկոր է ուզում Հայրաթ։ ([illegible])։

Ուղտի լօխմի ([illegible]) պէս խօսկերքը բերնումը ծամում է։ ([illegible])։

Ուրախութիւնը փուրը գցեցիր։ ([illegible])։

Օգնէլգութին ([illegible]) է անում, ([illegible])։

Օյին ([illegible]) խաղաց գլխին։ ([illegible])։

Ո՞վ կանայ նրա հետ խօսի։ ([illegible])։

Օր չէ շանց տալի նրան։ ([illegible])։

Օչով սրտումս չէ գալի։ ([illegible])։

Օչով աճկումս չէ գալի ([illegible])։

Օրվայ հացի կարօտ է։ ([illegible])։

Օխտն աճկ դուքան ունէ։ ([illegible])։

Օխտն աճկանի ջաղաց շինից։ ([illegible])։

Ո՞վ է տվլի ([illegible])։

Օրը կերած մարթ է։ ([illegible])։

Օրով (կամ՝ օրօք) մարթ է։ ([illegible])։

Օրանց օմքին է։ ([illegible])։

Օչով չէ էկլի։ ([illegible])։

Օչով չիմ դրգում։ ([illegible])։

Ոսկու սէլը դուռնը կոտրվեցաւ։ ([illegible])։

Օգուր (-էր) ննգաւ թուղտ խաղալու հիդ։ ([illegible])։

Օջախի վրայ օջախ կու դնէ, հէստի աղջիկ է։ ([illegible])։

Օրթում-հաւատ է անում։ ([illegible])։

Օրթում-կրակն է ննգնում։ ([illegible])։

Օրթում է ուտում։ ([illegible])։

Ութի չորէքշաբթի։ ([illegible])։

Ութի ուրփաթ։ ([illegible])։

Օճօրքը թափ տվլի։ ([illegible])։

Ուրախու վուտի վրայ չէ կանգնում։ ([illegible])։

Ո՞վ է ուտում։ ([illegible])։

Ոսկու ապրանք է։ ([illegible])։

Օսկոռը հաստ է։ (խոշոր մարդ)։
Օսկռտանքը համբըրվում է։ (շատ նիհար է)։
Օտկը բաց էլաւ։ (եղանակը դարձել է)։
Ունքերը գնում է։ ([illegible] է)։
Ուռի պէս դողաց։ (շատ է վախեցել)։
Ուրախ ռանգ ունէ չիթը։ (գեղեցիկ գոյն)։
Օլորքներս յէդ գնաց։ (կամ յէդ է տվէր)։ (ուղղութիւնը փոխուել է. Ետը յետ է գնացել)։
Օլոր-օլոր է խօսում։ (հնարագիտութեամբ)։
Օլորովէ կու իմանամ բանը։ (ոլոր-մոլոր ճանապարհով. հնարագիտութեամբ)։
Օլորքով մարթ է։ (հնարագէտ)։
Օլոր-մոլոր է գալի։ (ոլոր-մոլոր)։
Ուտելը յէդ է գցում։ (դադարեցնում է)։
Ուտել չունէ։ (չէ ուտում)։
Օխտն արասնմէն աւել ինչ գիդէ։ (չար է)։
Ունքերը տոթիլ է։ (թթուել է)։
Ունքերը կիտել է։ (նոյն)։
Օճորքը ([illegible]) ջուր է գողնում։ (տանը խաբում է)։
Ո՛ւմ գլուխը պատռիմ (կամ կոտրիմ)։ (ո՞ւմը գանգատուեմ)։
Ուղտ շինից էր հօր կաէնքը (խոյ)։ ([illegible])։
Օճորքը դարդակ է։ (գլուխը դատարկ է. յիմար է)։
Ո՛ւմը կ՚օսխ։ (չէ լսում)։
Օրէ ցոր։ (հետզհետէ)։
Ում հօրն ու մօրն ուշունց տաս, վուր էտ գինը չըտան։ (ամէնքը կը տան)։
Օրէնը հինգ-վէց թումնին չի հարցնի։ (առատ է ծախսում)։
Օրէնը էրէք ճանփայ է գալի։ (երեք անգամ)։
Ո՛ւր էս տուր տալի նրան։ (ինչո՞ւ ես նորա յետեւը գնում)։
Օխտը ճաղ (օտար) ինք նրա համար։ (հեռաւոր)։
Օսկոռ-մօսկոռ։
Ուտող-ուտողի վրայ է։ (ով հասնում է, ուտում է)։

*Ունեցած-չունեցածս նրան տվի։* (Բոլորը)։
*Ուջեմէն* (ծոյր) *տալիս է։* (Շորանակ)։
*Ուսուլ* (հնդիկ)-*փուսուլտ քաշէ։* (Խորէր)։
*Ումիկս* (յոյս) *կտրվեցաւ։* (Յոյսս կտրեց է եղել)։
*Ուռած է վրէս* (Ղոջրոյած)։
*Օց մարթ է։* (Խորամանք)։
*Օջախը վրէն է։* (Նոր հրոյ է տան հոգու)։
*Օսաղ* (ողբուսն) *կացէ։* (Դժոյլ)։
*Ութօրէնքվայ պաս։* (Ծննդեան պահք, որ 8 օր է)։
*Օխայ։* (Ախորժելի է)։
*Օր-ցերեկով էկաւ։* (Լոյս ժամանակ)։
*Օց-օց է ման գալի* (Օյոյն)։
*Օրպակաս էլաւ էրեխէն։* (Երեխան ծնուել է 7 կամ 9 ամսից մի քանի օր առաջ)։
*Ուժս չէ պատում։* (Չեմ կարող. կարողութիւնս չէր է)։
*Ուժս չէ ադրում։* (Նոյն)։
*Ուժս չէ գալի։* (Նոյն)։
*Օթմիշ* (պյուռել) *է գալի* (փրփրվում է)։

ԺԸ

# ՀԵՔԻԱԹՆԵՐ

## 1.

### ՄԱՐԹՈՒՍ ՃԱԿՏԻ ԳԻՐԸ.

Էլել է ու չէ էլել, մի թագաւոր է էլել։ Ունենում է մի տղայ։ Սա մի օր առաւօտեան իր նազիր-վէզիրով (վզուրկ. մեծամեծք) դուս է գնում մերին (անտառ) հուրս անելու։ Շատ է ման գալի, քէշ է ման գալի, չատն ու քէշը Աստուծ գիդէ, հասնում է մի մինձ մե-րի։ Տեսնում է, վուր հեռու, մերու գլխումը, մի բացը տեղ մի օթախ (սենեակ) է շինած ու բուխարեմէջն (վառարան) մուխ է դիւլիր գալի։ Թագաւուրի վուրթին ուզում է իմանայ, թէ ով է կենում էնդի։ Գնում է էն մխի վրայ, մտնում է օթախը. իր մարթկե-րանցը կի թողնում է մերումը հեռու-մօտիկ։ Թուրմէ (իբրեւ թէ) նստած է ըլում էնդի սիպտա միրքանի մի ծեր մարթ տախտի վրայ ու առչիւը դրած է ունենում մի դավթար (մատեան), թա-նաքաման ու ղ՚ալամ (գրիչ)։ Հարցնում է թագաւուրի տղէն թէ՝ «Ծո՛վ իս, ի՞նչ իս շինում էստի, էս մերումը մէնակ»։ Նա թէ՝ «Ի՞նչ իս հարցնում. էկիլ իս, անց կացի Ճանփէդ, գնա»։

Խժում էնդ՚գա աղանչայք է անում թագաւուրի վուրթին, վուր էն ծեր մարթուն դրուստն (ուղիղ) ասեցնել է տալի։ Ծերը թէ՝ «Ես բախտ գրողն իմ, կ՚օսէ, ու էս դավթրով մարթու ճակտին գրածն իմ իմանում»։ Խնդրում է թագաւուրի վուրթին, իր ճակտին գրածն էլ ասէ իրան. պատմում է թէ ինքն ով է։ Ծերը չուռ ու մուռ է

տալի գավաթարը, կարթում է ու ասում նրան թէ՝ «Թաքաւուրն ապրած կենա. տեսնում եմ քու իղբալը (բաղդ), քու բախտն էսէնց է խօսում, վուր դուն վլան-վլան (այս ինչ) նախարարնի աղջկան պիտիս ուզի. նա է քու ղ'սմաթը (բաղդ), Ճակատիդ նա է գրած»:

Թաքաւուրի աղէն շատ նեղանում է. բարկացած դուս է գալի էնդ'անց ու իր մարթկերանցով շատ է ման գալի մերումը հուրս անելու. Մթնում է ու տուն յեդ գալիս տեսնում է Թաքաւուրի վուրթին մերու վուրքումը մէ քօխի (կորճիթ): Ցուն է գնում էնդի. Տախտի վրայ հիւանդ աղջիկ է ըլում պառկած. աղջիկը քնած է ըլում ու նրա աղկատ հէրն ու մէրը գեղնի վրայ նստած մաշլաթ (զրոյց) են էլի անում. Թաքաւուրի վուրթին վարաւուրդով (նայելով) իմանում է, վուր տանտէրը մէ խեղճ նախարարան էր. Միտն է գալի էն ծեր բախտ դրողի խօսկն ու փիքր է անում (խորհել), վուր մէ օյն գայ (խաղ խաղալ) նախարարնի աղջկան. Խնդրում է նախարարնին թէ՝ «էս գիշեր թող, կ'ասէ, էստի ըլիմ. մթնացաւ, չեմ կանայ էլ տուն գնայ». Լաւ չէր ուզում նախարարանը նրան ունթունի. տեղ չ'ունիմ, կ'ասէ, ամա էլ «չէ» չէր տալի.

Թաքաւուրի վուրթին ղրգում է իր մարթկերանցը, բլօմա (շատ) խօրագ (խորտիկ) է բերել տալի ու գինի, նախարարնին ու նրա կնգան մէ լաւ-լաղաթի հարփեցնում է, տեղն ու տեղը քնեցնում. Ն'վոր գիվունքը քնած խումվում են էլի, վէր է կենում էս քու Թաքաւուրի աղէն, հանում է խանչալն (դաշոյն) ու խփում է հիւանդ աղջկայ փուրումը. իր խելքումը ըրպանում է, գլխօքը մէ տօպրակ (պարկ) օսկի է գնում ու հայդա (հեռանալ) քաշվում է էնդ'անց դիբա տուն: «Ըրպանեցի, պըծայ, մյ ղավլթառ (պառաւ), ասում է իրան-իրան Թաքաւուրի վուրթին, մէթամ (իբր թէ) ինձ համա ֆալ (կախարդանք) բաց արէր ու բան իմացարէ».

Գանք հիմի նախարարնենց տուն. Վուր լուսանում է, ուշկի են գալի նախարարանն ու իր կնիկը, վէր են կենում, տեսնում են, ինչ են տեսնում. Իրանց աղջկայ փուրը կտրած է ու էնդ'գամի արուն ու ջուր է գնացի, վուր գուր-գուր կանգնիլ էր գեղնի վրա՛ կարմիր ու սիպտակ: Թուրմէ նրանց աղջիկը քանի տարի

ծղ՚ալմանկ (չրգող) է ունենում, փուրն ուռել է, տեղն է ննգէ ու նրա միջկու էրվում է էլի Թուրմէ տեսնողն ու իմանողը։ Թաքաուրի տղի խանջալը հետի Թաճարն է գերչում էն աղչկայ փուրին, վուր սըպանելու տեղ, նրան բժշկում է. խանջալը նրա համա դեղ է դառնում, փուրումը գուր էլած արունն ու ջուրը դուս է գալի ու աղչիկը պրծնում է մէ քանի օրումը, դառնում է սաղ-սալամաթ (ողջ-առողջ)։ Վեր են կալնում տաքրկով օսկին, գնում են քաղաք ու տուն ու տեղ են դառնում օրինաուր կարգով-սարքով։ Աղչկան մարթու տալու են հաղրում ու օր օրվայ վրայ մնում են էլի, վուր բախտը բաց ըլի։

Մէ օր Թաքաուրի տղէն անց է էլի կենում նրանց կուռը (կողմ), տեսնում է մէ շատ սիրուն աղչիկ զուքած-ջանդըրած (զարդարած)։ Թաքաուրի տղի աճկումը ննգնում է սա ու իր հօրը յեղ-ասում թէ՝ «էսէնց էսէնց մէ սիրուն աղչիկ իմ տեսի. թէ գ՚ուզիմ՝ նրան, թէ չէ, ուրիշ օչով աճկումս չէ գալի»։ Թաքաուրը կամք է տալի, ղրգում է էն աղչկանց տուն, խօսեցնում է նրա հօր ու մօր հետ ու էրկու-երեք օրվայ մէջը հարսնիք է անում մինձ խարըր-ներով (մեծածախս) օխտն օր ու օխտը գիշեր։ Էսէնց բախտա՞ ուրվում է նախըրավնի աղչիկն ու կատարվում է բախտ գրողի խօսկը։

Թաքաուրի վուրթին ինչ գեղէր արա, թէ իր ուզած աղչիկը նախըրավնի աղչիկն է. իսկի փքրումն (միտք) էլ չէր անց կացնի՝ Անց է կենում ժամանակ ու Թաքաուրի վուրթու բարեկմերը մէ օր բաղնսումը վարաուրդ են անում (նկատել), վուր իրանց հարսի փուրը էնէնց էրգէն ու մէկ կոպտոն (կոշտ ծեռով) արած, կարածի պէս է։ Էտ բանը Թաքաուրի վուրթու անգաճն է ննգնում. հարց ու փուրց է անում իր կնգան ու աղչիկը բաց է ըլում, յեղ-ասում իր գլխին անց կացած բաները մէ-մէկ։ Թաքաուրի տղէն էն սա-հաթին (ժամ) մատին կծում է (վրայ ընկնիլ) ու միտն է բերում բախտ գրող ծերին։ Էն ժուգն իմանում է, վուր զուրթ. ինչոր մարթուս ճակտին գրած է, չի ըլի, թէ չըկատարվի։ Փառք էրեա Ածուն, վուր իր նասիբ (բաղդ) էլած նախըրավնի աղչկան էնէնց

հրաշկով ազատւից մաշինէն ու իր փուշերով մարաքէքը (մարգամէջ) խառնից ու իր կնիկ չինից։

Մարթ ու կնիկ բախտաւորութէնի մէչն անց կացրին իրանց օրը ինչվըր մահն ու Աստուծ փառք տալի։ Զարն էնդի, բարին էստի։

---

## 2.

### ԽԻՂՃ ՍՕՎԴԱԳԱՐ (վաճառական).

Էլել է ու չէ էլել, մէ սօվդագար մարթ է էլէ. ունեննում է մէ սիրուն կնիկ ու էրկու էլ տղայ։ Լաւ առուտուրումն է ըլում, ամա արբ սան, մէբաշ (յանկարծ) ձախվում է գուրծկը, կուտը (սնանկ) է ննգնում։ Վուրգ'անց է ըլում, վուրգ'անց չէ ըլում, լուս է ննգնում մէ չէն սօվդագար, խլում է էս խեղճ սօվդագրի կնգան, փախցնում է, տանում ուրիշ երգիր։ Խեղճ սօվդագարը մնում է տարէկուսած-մոլորած. քու գուշմանը, ինչոր նրա բանն է ըլում։ Ի՞նչ անէ, ը՞նչ չանէ. վիր է կալնում իր էրկու էրեխանցն ու գլուխը մի քաշում, ռադ ըլում (հեռանալ) էնդ'անցօրեմէն։ Շատ է մառն էկէ, քիչ է մառն էկէ. շատն ու քիչը Աստուծ գիդէ։ Անց է կենում մէ օր, էրկու օր, մէ շաբաթ, մէ ամիս. վերչ չունէր նրա ճանփուրթութենը։

Մէ տեղ նրանցը մէ մենձ ջուր է ռաստ գալի (պատահիլ), վուր մէչը սլիտէկին անց կենայ։ Ինքը լաւ գուս է գնում էնթի ափը, ամա, գուն բէրախտութէնին մուտիկ արա, էրկու վուրթունեվէտ ջուրը տարել է։ Շատ է խեղճ սօվդագարը իր գլխին վայ տալի, ամա էլ ը՞նչ կու օգնէր։ Տարել է նրանցը ջուրը, տարել է ու մէկին մէ ջաղցպան հանում է սաղ-սալամաթ (ողջ-առողջ), մէկէլին էլ տեսնում է մէ նախրապան, գուս է բերում ջրեմէն ու պահում իր մօտ։

Հիմի էն խեղճ սօվդագրի բանը։ Մէ էրկու սահաթ (ժամ) էլ մառն է էկէ նա ու հասել է ուրիշ թաքաւըրի խուղ։ Գէշլատած-ճոթռատած մառն է էլէ գալի խեղճը, օղորմութէն ուզելով սրամէն-

նրամէն ու էհէնց ևօլա է էլի գնում (կառավարում)։ Վէրջը, վուր չատ ման է գալի, հասնում է մէ մինձ քաղաք, Թաքաւուրի տախտի քաղաքը։ Թուրմէ էնդի էն է, նուր մեռել է նըրանց Թաքաւուրը ու իրանց համա ուրիշ Թաքաւուր ջոգելու Թադարիքումն (պատրաստութիւն) ին էլի։ Մէկ էլ էն Թահար (տեսակ) վարք ին ունեցի նըրանք, վուր Թուրմէ Թաքաւուր ջոգելիս մէ Թռչունք ին էլի Թողնում ու ում վրայ ճըրէք չէր նստել էր էն Թռչունքը, նըրան ին էլի Թաքաւուր նստեցնում իրանց համա։

Մօդ ին էլի քաղկցիքը մէ մինձ մէյդան (հրապարակ) տեղ ու էն աղկատ սօվդագարն էլ Թուրմէ Թամաշաւուրներու (հանդիսական) մէջն է ըլում։ Վիր ին Թողնում Թռչունքը։ Դէսն է պտտում գալի, դէնն է պտտում գալի, գնում է ու նստում է էն խեղճ սօվդագրի գլխին։ Արա էլ ինչ։ Խալխը (ժողովուրդ) Թէ՝ «չէ վունց կու'լի։ դա ինչ Թաքաւուրացու մարԹ է, վուր մեզ համա Թաքաւուր ջոգինք դրան»։ Մախլաս (ինչ եւ իցէ), մէկէլ էքսն էլի մօղ ին էլի։ վիր ին Թողի Թռչունքը։ Գնացել է ու էլի էն սօվդագրի գըլխին է նստի։ Մինձ ղ'ալմաղ'ալ (աղմուկ) է ննգնում խալխի մէջը։ Վրայ ճըրէք օրն էլ վուր մօդ ին էլի, քաղկցիքը բռնել ին էն աղկատին, տարել ին մէ մուԹ սարդփումն (նկուղ) ին դցում, վուր Թռչունքը նըրան չըտեսնէ։ Ամա, դուն էլ չը մեռնիս։ Թռչունքը դէսն է Թռչում, դէնն է Թռչում, գնում է, գԹնում է էն խեղճ սօվդագրին ու վըրէն նստում։ Բանը պըծվել է. Թաքաւուրութինը հաստատվել է էնօրնեվէտ։ ՂուրԹ վուր լաւ Թաքաւուր է դուս կանգնում սա. օղորմասիրտ, բարի ու խելօք։ Խալխն էլ խիստ է սիրում նըրան։

Անց է կենում ժամանակ։ Ջաղցպանն ու նախըրպանը ջրեմէն հանած էրեխանցը տանում ին Թաքաւուրի մօդ ու բախշել ին նըրան ղ'ուլուղ (ծառայութիւն) անելու։ Թաքաւուրն ունԹունել է ու իր պալատումն է էլի պահում։

Հէնց էտ վախտը, վունց է ըլում, վունց չէ ըլում, սըրանց դէդին (մայր) փախցնող սօվդագարը բերել էր իր կնգան, Թաքաւուրի սարաէրու (պալատ) հետու-մօդիկ մէ վրան է վէր Թող-

նում. Նրան կնոջը պահում ու ինքը գնում է Թաքաւորի մօտ. գան-գատ բան է ունենցի թուրմէ. Ամա չունքի (որովհետև) վախենում է էլի, վուր օչով չը փախցնէ կնգան, խնդրում է Թաքաւորին, վուր մէ էրկու մարթ զ'արաուլութին (պահապան) քաշէ իր կնգայ վրանի մօտ. Թաքաւորը կամաուրվում է ու էն էրկու տղին ղրգում է զ'արաուլութին անելու։ Հրամանք է անում, թէ վրանի մէչը տուն չը մանին, դուսը կայնէք, ինչկի էս մարթը գայ, տէրութին անէ իր կնգան. Գնում ին էն էրկու տղէն ու ման ին էլի գալի վրանի մօղըիկ. Ամա, ի՞նչ կու փիքըր անէին, թէ իրանք աղբրտիք ին ու վրանումը նստած կնիկն էլ իրանց դէդէն է. Իրանք խօսում ին էլի մէկան. Իժում մէկին ասիլ է. թէ չատ ուշացաւ անիծած սօվ-դագարը, մէ հեքիաթ կու գիղենաս, ասա.—Ի՞նչ հեքիաթ ասիմ, կ'ասէ. հեքիաթ է ու հեքիաթ իմ գլխին անցկացած բանիրը—Թէ վո՞ւնց. «Ա՛յ վունց. Իմ հէրը կնիկ է ունենում ու չատ սիրում է էլի նրան. Մէ չէն մարթ գալիս է, իմ դէդին փախցնում է։ Իժում ջրումն անցկենալիս, ջուրը տարիլ է ինձ ու ջաղցապանը հանիլ է, մինձացրիլ է ու Թաքաւորին բախշի իմ գլուխըս». Էս խօսվածկութինն իմանում է վրանումը նստած կնիկը ու խիստ (շատ) նշնումն է գալի նրանց պատմածը. Տուն է կանչում իր մօտ ու ճանչնում է, վուր իր վուրթիքն ին. Փաթթվում ին մէկիս-մէկու ու դէդէն խան (երկար) մէկլին է էլի պաչպչում, խան մէկէլին. Նստում ին իժում (յետոյ) իրանց դէդի աչ ու ձախ ու քաղցր մաս-լաաթի (զրոյց) մէչը մտնում.

Շէն սօվդագարը բանը վիրչացրիլ էր ու յէդ է էլի գալի. Հանց տեսնում է, վուր էն զ'արաուլնիրը նստած ին իր կնգայ մօտ, էն սահաթին վաղիլ է դիբրա Թաքաւորը, թէ՝ «էս ի՞նչ Թա-հար (կերպ) մարթիք ուղիր ինձ, վուր դուն հրամանք արիր վրանի դուսը ման գան, նրանք կի կնգաս մօտ նստած մասլահաթ ին անում». Թաքաւորը կանչում է կնգան էլ ու իր մարթիկերանց էլ։ Կնիկարմաին վուր տեսիլ է Թաքաւորը, էն սահաթին ճանչցիլ է, վուր իր կնիկն է. Կնիկը ճանանչեցնում է իր վուրթիկերանցը ու փաթթվում ին մէկիս մէկու. Թաքաւորը վիր է կալնում, խլում է

սօվդագըրմէն իր կնգան ու նրան կօրցնել է տալ[illegible]ըրէշ ծըգէր. Համ (էլ) կօրած կնգան է գթնում, համ վուրթիկըրանցը ու ապ-րում էն ինչկլի էրանց մահը ամէն բանով լիացած. Չարն էնդի, բարին էստի.

---

### 3.

## ԱՇՈՒՂ Ղ'ԱՐԻԲԸ (*)

Կհնում է էլի վաղ ժամանակ միր Թիփլիս քաղկումը մէ մինձ գօվլըթաւոէր (հարուստ) Թուրք, անունը Աեաղ աղա. Ունեցել է մէ ճար ու ճրաք, ագիգ-մագիգ, պէտըլած ու նխշած աղչիկ, անունը Շահսանամ. Էէնց էն ժամանակը քաղկումն ըլում է աղկատ Աշուղ Ղ'արիբը ու քամանչէն (նուագարան) ձեռին ման է էլի գալի քուչա-քուչա (փողոցէ-փողոց), գնում հարսանքնիրը, մէջլսնիրն (հրաւէրք) ու քէփ (խրախճանք) շանց տալի խալխին իր սազի ծվծվեցնելովն ու քաղցր բաեաթնըրով (երգ). Մէ չէր (անգամ) սա հարսնքումը տեսնում է Շահսանամին ու տեսնելն ու բաշտան (տեսնելուն պէս) սըտումն է ննգնում. Սիրել էն նրանք մէկս մէկու, ամա Աշուղ Ղ'արիբը իմանում է էլի, վուր նրանց մարթ ու կնգութինը շատ դժար գլուխ գալու բան է, չունքի (որովհետեւ) ինքը խեղճ էր։

Մէ օր աշուղ Ղ'արիբը սէյր (զբօսնել) է էլի անում բաղումը (այգի), բեզրել է (յոգնել) ու քունը տարել է մէ վաղնի (որթ) թալարի (այգու ծածկոյ) տակը։ Էէնց էտ վուխտը (ժամանակ) Շահսանամը իր տոլ (հասակակից) աղչկերանցով անց է էլի կենում Թուրմէ (իբր թէ) էնթէնը. Մէ աղչիկ, վուր տեսնում է Աշուղին էնդի քնած, գիլաքաշ

---

(*) Այս հեքիաթը հետեւողութիւն է հանգուցեալ Գ. Ախվերդեանի հաղորդած աւանդութեանը (Սայեաթ-Նովայ. 1852. եր. 59 և 60) և առաջ բանաստեղծ Լէրմոնտովի „Ашикъ Керибъ“ անունով հեքիաթի.

(յամրաբար) գնում է կամաց-կամաց, մօտ է գնում նրա մօտ ու ասում՝ «ա՜յ անխիղճ, ի՞նչ վախտի քնել է, վուր քնել իս. զարթի, ժաժ ու մաժ արի, հորէնա սիրեկանտ անց է կենում դէսը»։ Նա զարթնել է, ամա աղչիկն էլ թռել էր, գնացել։ Շահսանամը, վուր իմանում է իր տօլ աղչկայ սասծը, բարգանում է վրէն։ Իժում էն աղչիկը ասում է Շահսանամին թէ՝ «վուր իմանաս ո՞ւմն ասի էն խօսկերը, էսէնց չէիր խօսի ինձ հէդ։ Քու Աշուղ Ղ՛արիբն էր նա»։ Շահսանամը թէ՝ «քու Աստու խաթեր (համար), տա՛ր ինձ նրա մօտ»։ Շահսանամը տեսնում է Աշուղին գարդուտ-փքրուտ, քաղցը մասլահաթ (զրոյց) է անում հէդը, վուր նրա սիրտը բաց ըլի։ Աշուղ Ղ՛արիբը թէ՝ «վո՞ւնց չըլիմ գարդուտ, վո՞ւնց չը փիքր անիմ. սիրում իմ ես քիզ, ամա ես գիդիմ, վուր դուն իմը չիս կանայ դառնա վո՛ւչ մէ ժամանակ»։ Աղչիկը թէ «ումիկտ (յոյս) մի կտրի, ասա իմ հօրը, աղանչաք արա, կու՛լի վուր նա խնդիրքտ կատարի ու էնդղա վուղ ու բաժինք տայ ինձ, վուր քիզ էլ է հէրիք, ու ինձ էլ»։ Ջուղաբ (պատասխան) է տալի Աշուղը թէ՝ «շատ լաւ իս ասում ու գիդիմ էլ, վուր Ասաղ աղէն շատ բան կու տայ իր աղչկան. ո՞ւմ համա գ՛ուզէ իր դօվլաթը (հարստութիւն). ամա վա՛յ թէ դուն վիրչն ինձ մուննաթ (պարտաւորութիւն) գնիս թէ՝ «ա՛յ, դուն խիղճ էիր, ես չէն ու դուն ինձմով հարուստացար»։ Ումիկս կտրած է, Շահսանամ ջան, դժար թէ ես չէնանամ մէ օր. ամա քանի շունչս բերնումս է, քիզմէն աւել ես օշովլին չիմ կանայ սիրի։ Թէ ըլիս՝ դուն, թէ չէ՝ օշովլ»։ Աղչիկը ինքն էլ շատ էր սիրում նրան, ամա էլի լաւ չէր աւտում նրա խօսկերուն ու ուզել է նրան փորցի։ «Գիդի՞ս, ինչ կ՚օսիմ քիզ, ասել է աղչիկը նրան, ես էլ քիզմէնի դուս (բացի քեզ) մարթ չիմ ուզի, ամա խնդրում իմ կատարիս իմ սասծը։ Դուն պիտիս գնայ, թամամ (ամբողջ) օխտը տարի ղ՛արիբութէն (օտարութիւն) քաշիս ու օխտը տարվայ վրայ գաս էստի. ես քիզ կու մնամ. չէն գու՛քաս, թէ խիղճ, իմը կու՛լիս. ամա թէ մէ օրն էլա անց իս կացըի վադեմէն (ժամանակից), գիդենաս, վուր ես էլ քունը չիմ ըլի։ Շահվէլադուն կու տայ ինձ իմ հէրը»։ Աշուղ Ղ՛արիբը ղ՛արուլ է անում (հաւանի)։

Գնում է Աշուղ Ղ՛արիբը տուն, պաչպչում է իր մօր ձեռներն ու իր պստի քվէր Թշերն ու Ճանփայ է ննգնում քաղկիմէն խուրջինն (բակնղամ) ուսին, մէ փէտ էլ ձեռին։ Մէ քիչ տեղ վուր գնում է, տեսնում է, վուր էդնիմէն՚ մէ ձիաուր մարթ է գալի։ Ցից է մանիկ տալի, տեսնում է, վուր Շահվէլադն է։ Ի՛վոր ձող է գնում, Շահվէլադը Թէ՝ «բարի աչողում, պատովական Աշուղ, Աստուած բարի Ճանապար տայ. խնդրում իմ, ինձ էլ հիդտ ննգիր չինիս»։ Աշուղը յաւ ուրախ չէր, ամմա «չէ» չըկանաց ասի, կամք էրիտ։ Խէլիմ (բաւականաչափ) Ճանփայ ին անց կենում սրանք մէկտի, վիրջը մէ մինձ ջուր պիտէին անց կենայ Թուրմէ։ Շահվէլադը Թէ՝ «շուրտ հանք ու լիղ տալով դուս գնա էնԹի ափը. ես էլ գալիս իմ»։ Աշուղը շուրերը հանիլ է ու անց կացի ջրի էնԹի ափը։ Ինչ՚անց վուր յիդ է մանիկ տվի, տեսնում է, վուր Շահվէլադը վիր է կալի նրա շուրերը, ձի է նստի ու քշում դիբա քաղաք։ Տանում է Շահվէլադը էն շուրերն Աշուղինց տուն ու ասում նրա դէդին Թէ՝ «քու վուրԹին խեղդվեցաւ մէ մինձ ջրի մէջն ու ամ էս էլ նրա շուրերը»։ Շատ վայ է տվի իր գլխին կսկծու դէդէն, ամմա էլ ինչ կու ստկէր. վիր է կալի իր վուրԹու շուրերը, տարի Շահսանամի մօտ ու Թէ՝ «աճկս դուս գայ, վուրԹիս խեղդվիլ է ջրումը։ Հորէսա շուրերն էլ բերիլ է Շահվէլադը։ Էստումէն դէնը դուն քու գլխին չարա արա, էլ իմ վուրԹունը չկա»։ Շահսանամը կի խսկի էլ դարդ չէ անում, քմքանծիծաղ անելով ասում է նրան՝ «դէդի ջան, մի ստատա էտ Թահար խաբրներուն (համբաւ). էտ դէփ Շահվէլադի մօգօնածն (հնարած) է։ Ինչկլի օխտը տարին անց չըկենայ, օչով չի կանայ իմ մարԹ դառնայ»։ Խսկի մտէն չէ էլի գցում Թուրմէ Շահսանամը իր սիրեկան Աշուղին ու ամէն օր նրա սիրած խաղերն է էլի կէկլեցնում (գնղգնղնլ) Թէ տանն ու Թէ բաղումը ու աճկը Ճանփին մնում է էլի նրան։

Մէր տկլուր (մերկ) ճանփուրԹը գնում է գեղը. էնդի շուր ին տալի նրան ու հաց։ Աշուղը մէ-էրկու յաւ խաղ է ասում գեղցեբու համա։ Իժում անց է էլի կենում էս գեղեմէն էն գեղն ու մէ քաղկեմէն մէկէլ քաղաքն ու ամէն տեղ ասում է էլի իր խաղերը։

Դիվահնքը մայլ են էլի մնում (զմայլվել) ու շշկլածի պես մտիկ տալի նրան. էն Թահար խաղեր ջէր (դեռ) օշողի բերնեմէն չէին լսացել: Վերջը հասնում է նա Խալաֆ քաղաքը. Թուրմէ էն վախտը կենում է էլի էնդի մէ փաշա, վուր շատ սիրում է էլի աշուղնե- րուն. Աշուղը տուն է գնում մէ ղ'ավախանա (սրճարան), ուզում է քամանչա ու վեր է քաշում բահաթեն ու մուխամբաղները (երգեր՝ տեսակներ). Շատ վախտ Թուրմէ էն քաղկումը փաշէն պտուել է էլի տալի մէ լաւ աշուղ. ումնոր տանում են էլի, վունց մէկեն չէ էլի հաւնում. Մեր աշուղեն էլ տանում են փաշի մօդ. Բաց է ա- նում էնդի մեր աշուղը բերանը ու էր սիրեկան Շահսանամի գովքն ասում քամանչի վրայ. Շատ դուր է գալի փաշին էս խաղը. Խէլտ սիրում է Աշուղին ու էլ չէ Թողի նրան էր տանեմէն. Մենձ զօվ- լաթ է մօդ անում նա փաշի տանը. Թէ օսկեն ու Թէ էրծաթը Ջրի պէս գալիս է էլի նրա ձեռը: Շուրերն էլ փոխվում է ու աւելի տեսուկ մարթ է դառնում նա էն շուրերումը. «Շուր տու, կօսէ. շնուք առամ». Անց է էլի կենում ժամանակը. ամմա նրա մտկեմէն կի չէ էլի գնում էր սիրեկան Շահսանամը. Շատ Երգրներ է ման գալի՝ Ստամբօլ, Հարբաշ, Ի'գիպտոսս ու շտապում է էլի Թիփլիս քաղաքը: Երազումը մէ գեշեր տեսնում է, վուր մէկէլ օրը նրա Շահսանամեն պետէն ուրեշի վրայ փսակե. Սերպապատու զար- Թում է, վեր Թռչում գողնքեմէն, Թամքում ձեն ու Խանփայ ննգնում: Լաւ եօրղա (արագընթաց) ձի է էլի տակը ու ենչ ջանումը ջան է ունեցի, քշում է էլի. Աստղերու հեդ խաղալով վազում է էլի ձեն, ամմա Գ'արս վուր հասնում է, կէս օրեմէն անց է ըլում. Ու- մեկը կարվում է, սիրեկանը ձեռնեմէն Թռչում է էլի. Դեվլեր է գնում մէ բացը սարի վրայ ու ձէն տալի՝ «Տէր Աստված, Թէ հեմի ենձ քօմագ (օգնական) չես ըլի, էլ ե՞նչ կ'օնեմ եմ գլուխը». Նա խօսկն ասում է ու ուզում է էն բացը սարեմէն դէվէր ննգնի. Ամմա մէքաշ (յանկարծ) խէվեմէն (ծոր) մէ ձէն է գալի Թէ՝ «էա ե՞նչ ես անում, այ Աշուղ»: Դէվէր է մտիկ տալի, տեսնում է սիպտա ձիով մէ մարթ է ըլում կանգնած. «Ուզում եմ մեռնի», ջուղաբ է տվի մեր Աշուղը: «Նստի դէվէր աըԹ, ասում է ձիաւորը.

գնանք, թէ մեռնել ես ուզում. ես կու սըպանեմ քեզ»։ Աշուղը գէմէր է գնում. «Ջափ գցելով (արշաւանք) արի իմ ձիու էգնէն, ասում է ձիաւորը»։ «Ի՞նչ ես հրամանք անում, չուղար է տվել Աշուղը, վռնոց կանեամ քու ձիու էգնէն հասնի. դա թռչունքի պէս է թռչում ու ես լօնգի (անագին) խուրջինով (բանկողաթ) պիտիմ ըլխ-ըլխկայ (ծանր գնալ) քու էգնէն»։ «Բաս թէ էտէնց է, ասում է ձիաւորը, խուրջինս բե, ձիուս վրայ գցէ ու արի հեգս»։ Աշուղը կատարում է նրա հրամանքը, աման անխուրջին էլ չէ էլի կանացի գնա էն ձիու հեգ։ Վերջը ձիաւորը վուր տեսնում է, շատ է բեզրած (յոգնել) Աշուղը, ասում է նրան՝ «արի, նստի իմ էգնէն ու աչք խփի՝ վուրդի ես գնում»։ «Կու խնդրեմ, չուղար է տվել Աշուղը, վուր ինչկի մուլթը ինձ Թիփլիս տանիս»։ «Աչկերդ խփէ, ասում է ձիաւորը. հեմի բաց արա»։ Բաց է անում աչկերն ու տեսնում մեր Աշուղը, վուր Թիփլիս է հասի։

Աշուղը վէր է բերում ձիէմէն իր խուրջինն ու շնորհակալութին անում ձիաւորին։ «Շատ շնորհակալ իմ, իմ փրգող-ազատող ձիաւոր. ես գիփունին էլ կու պատմիմ, թէ մէ օրումը գուն ինձ Գ՛արսեմէն Թիփլիս հասցրիր. աման ճէլ կու ասայ. ինչ սարութ (ապացոյց) կանեամ նրանց շանց տամ»։ «Հաւ, ասում է ձիաւորը, կռացի ու ձիուս տակեմէն մէ բուռը խուղ վէ կալ ու տար հեգդ. թէ չ՛աւատան քու խօսկին, մէ օխտը տարվայ քոռ (կոյր) կնիկարմատ բերել տու, էտ խուղն աչկերուն քսէ ու էն սահաթին աչկերը բաց կու՛լի»։ Աշուղը վէր է կալնում խուղը ու կռացած տեղեմէն վուր վէր է քաշվի, մտիկ է տվի, տեսի, վուր էլ ձիաւոր չըկայ էնգի։ Վրայ է ննգի աշուղը, վուր էն ձիաւորը պիտի Սուրփ Սարքիսն ըլէր։

Աշուղ Գ՛արիբը վուռնցոր ըլում է, մթնումը գթնում է իրանց տունը, դուռը դխդխկեցնում (զարկել). «բաց արէք, կ՛օսէ, ձեր Աստու խաթիր (համար), քաղցած-ծարաւ ղ՛արիբ մարթ իմ, տուն թողէք ինձ, դէգի ջան, քու Ճանփուրթ վուրթու արիւը թէ կու սիրիս»։ Պառաւ կնիկն էնդ՛անց թէ՝ «ես ինչ ունիմ, վուր քեզ ինչ տամ. գնա, հորէն էս գիշեր մինձ հարսնիք կայ քաղկումը, էնգի

կուտեցնեին ու կու խմեցնեին քեզ»։ «Դէզգի ջան, էլի ասում է Աշուղը, խնդրում եմ, տուն թող ինձ. ես էստի օչով չունեմ, օչովեն չեմ ճանչնում. քու ճանփուրթին թէ կու սիրես, թող ինձ, տուն գամ»։ Դէզգէն չէ էլի անում, ամա աղչիկը վեր է կացել, բաց արել դուռն ու տուն թողել Աշուղ Ղ'արիբին։ Օչով չէ ճանչնում նրան։ Նստում է գեղնի վրայ ու գէս ու գէն մտան անում աճկերը։ Տեսնում է պատի վրայ քաշ արած եր քամանչէն թողուա-թափրխուա (փոշոտ) հէնց էնղի, վուրղխոր եր հետով քաշ էր արել։ «Էտ ի՞նչ է, հարցնում է Աշուղը»։ Պառաւ կնիկը թարգմանում է՝ «քեզ ի՞նչ, կ'ասէ, ինչըր վուր է. աղկատ մարթ էս, մէ թէքա (պատառ) հաց կուտան, կե. քնե ու էքուց գնա էլի քու ճանփէն»։ «Ի՞ս քեզ ասում եմ, վուր դուն եմ հալալ (ճարպաղատ) դէզգէն էս ու սա էլ եմ հալալ քուրը. խնդրում եմ, ասա, ի՞նչ է էն պատի վրայ քաշ արածը»։ «Քամանչա է, քամանչա, ասում է բղավելով (գոչել) պառաւ կնիկը»։ «Քամանչէն ի՞նչ է, հարցնում է Աշուղը»։ «Էն թահար բան է, ասում է պառաւ կնիկը, վուր աշուղը վերէն կ'ածէ ու խաղեր կ'ասէ»։ Աշուղ Ղ'արիբն ասում է եր քուրը թէ՝ «վէր բե, տեսնեմ, ի՞նչ թահար իմքեն է»։ «Չէ, շէ ըէ, ասում է պառաւը. օխտը տարի է էտ քամանչէն էտէնց քաշ է արած. էտ եմ քամբախտ տղի քամանչէն է ու օչովի ձեռը չէ գերի գըան»։ Քուրը գէվէր է բերի քամանչէն ու ավի եր աղբուրը։ Աշուղ Ղ'արիբն առնում է քամանչէն ու գերա ըրգենքը մտիկ տալով աղօտկ անում թէ՝ «մեխ Աստված, թէ եմ սրտի մուրազեն (իղձ) պխտեմ հասնի, խնդրում եմ, վուր էս քամանչէն էլի էն ձէնը հանէ, վուր էս օխտը տարի առաջ ունէր»։ Ածում է ու շատ սիրուն ձէներ է դուս էկէ։ Բաց է արի իժում բերանն ու կէկլեցնում, թէ՝ «Ես բէրախտ Ղ'արիբն եմ, անդէր ու անտիրական Աշուղն եմ. ամա եմ Սուրբ Սարգիսն ինձ քամաղ արաւ (օգնել) ու գէվէր էրի սարեմէն։ Աղկատ եմ ես, ամա, քու վուրթին եմ, դէզգի ջան, քու ճանփուրթ վուրթին»։ Պառաւը կե չէ էլի ասում, թարգմանում է էլի, թէ՝ «մը եչի, կ'ասէ, եմ վուրթու անունը։ Հոքէտ օխտը տարի է, վուրթիս կորած է ու շատ լաց ըէլեմէն քուռացայ ջուխտ (զոյգ) աճկով։ Ձէնտ շատ նման է եմ տղի ձէնին,

խաբար (իրանի) խօմ չՙս տեսի նրան»։ Քանի Աշուղն ասում է, վուր ինքն է նրա ողջն. նա էլի չէ ստում։ Խմում վուր չարէն (ճար) կտրվում է, Աշուղը թէ՝ «դէդի ջան, չՙ ըլի էս քամանչէն տանիմ հարսնիքը. էս գիշեր վուր մինձ հարսնիք կայ՝ էնդի։ Քուրս կու տանէ. կ՚էհամ, կ՚ածիմ, խաղեր կ՚ասիմ ու ինչոր ճարիմ, կու բերիմ, կէսը՝ ձիզ, կէսն՝ ինձ»։ Պառաւը չէ էլի անում. ամա Թիփոր Աշուղն ասում է. թէ՝ «մէ իմքին խաբար անիմ (ասիրել), իմ լեզը խուրջինիմէն ձեռս կու վի կալնիմ»։ Պառաւը քամսիլ է ձեռնիրը, տեսնում վուր խուրջինը օսկով լիքն է. տուր է տալի։ Քվիրն առաջն է գցում ու գնում Աշուղ Ղ՚արիբը հարսնքաուրներու տուն։

Էն գիշեր Շահվէլադու հարսնիքն է էլի ու նորահարսն էլ ըլում է Շահսանամը։ Շահվէլադը ուրախու չըկէր, Շահսանամը կի տօլ աղջկերանց հէդ նստած լաց է էլի ըլում. մէ ձեռով բռնած է ունենում շուշով (շիշ) մահաղեղ ու մէկէլ ձեռով խանջալ (դաշոյն)։ Օրթում է ունեցի կերած, վուր էն գիշերնեվէտ փսակի էդնէն սըպանէ իր գլուխը իր ձեռով։ Աշուղը գնում է հարսնքաուրներու մօդ թէ՝ «թողէք ինձ էլ, մէ ճանփուրթ մարթ իմ, էս էլ իմ քամանչով ու խաղերով քէփ (զուարճութիւն) կու շանց տամ ձիզ»։ Ուրախ-ուրախ տուն է տանում Շահվէլադը նրան ու նստեցնում։ Հարցնում է նրան խմում թէ՝ «ամ աշուղ, քու անունն ինչ է»։ Նա թէ՝ «իմ անունը Շինդի-Գեօրարուըզ (այժմ կը տեսնէք) է»։ «Էտ ինչ թահար անուն է», ասում էն գիփունքը ու ծիծաղում. Աշուղ Ղ՚արիբը ջուղաբ է տվի թէ՝ «ճիփոր իմ գէդէն ինձ վրայ էրքօքիս է էլի ու պատահելու է ըլում, մեր հարեվնիրը հարցնում էն թէ՝ տղայ է, թէ աղջիկ. նրանցը թուրմէ ջուղաբ էն էլի տալի մեր տանցիքը թէ՝ շինդի-գեօրարուըզ։ Էտու համա էլ իմ անունը դրել էն Շինդի-Գեօրարուըզ»։

Վէր է կալնում խմում քամանչէն, ածում ու հէդն էլ կըկլեցնում է էլի Աշուղը քաղցր ձէնով թէ՝ «Ղ՚արս էի ես էսօր ճաշէն ու երեգնապահվայ նամազս (աղօթք) կատարեցի Թիֆլիս։ Առաւօտ օխնէ էն սիպտա ձին, վուր էհէնց շուտ (արագ) հասցրուց ինձ Շահսանամի հարսնքին»։ Շահսանամը ձէնի վրայ ճանչնում է իր Աշուղ

Ղ՛արիբին ու էն սահաթին վէր է գցում մահագիղն էլ ու խան-ջալն էլ. «Ըսէնց իս կատարո՞ւմ քու օրթումը», բղավում են տոլ աղջիկները. Էսէնց չուստ փոխեցի՞ր խոսկդ ու Շահվէլադի կնիկն իս դառնո՞ւմ»։ «Դուք չէք Ճանչնում, ամա իմ սիրտը կի Ճանչցաւ իմ սիրեկնի ձէնը», ասում է Շահսանամը ու վէր կալնում, մկրատով կտրում փարդէն (պարդան). Դուս է մնեկ ալի. տեսի, վուր զուրթ իր Աշուղ Ղ՛արիբն է խաղիր ասողը։ Դուս է թռչում, փաթթվում նրան ու էրկուսնիվէկ վէր են թափի ուրախու թու-լացած. Շահվէլադի աղբէրը հանիլ է թուրը, ուզում է էլի էրկու-սիննիվէկ տիգն ու տէղը բանհօքի անէ. ամա Շահվէլադը չէ թողի. «Էնմի դիփունքս ասառում ինք, ասում է Նորափիսէն, վուր դուն իս Աշուղ Ղ՛արիբը. ամա մէ պատմէ մէզ, թէ ախար դուն վո՞նց անց կացար էնդ՛դա Ճանփէն էկէս օրումը»։ Աշուղ Ղ՛արիբը թէ՝ «բաս բիրէք էսոր իմ դէդին. Հօրէսա օխտը տարի է, ինչոր նրա աՃկերը լուսաուրված (կոյր) է. Նրա աՃկերը վուր բաց անիմ, էլի չէք ասիմ»։ Ղրգում են, էն սահաթին Աշուղի մօրը բիրում են։ Աշուղը հանում է իր ծուցեմէն մէ բուռը խուղ, ջուր անում ու քսում իր դէդի աՃկերուն. «տեսէ՞ք, խալխ, ջամահաթ (ժողովուրդ), էս Սուրբ Սարգսի զօրութինն է, վուր դէդէս տեսնում է, մեռնիմ նրա օղորմութէնինն»։ Դէդի աՃկերը բաց է ըլում. Հարսնքաւոր-ները մնացիլ էն պէլացած (զմայլած)։ Էն գիշերնեվէն հարսնիք են անում Շահսանամին ու Աշուղ Ղ՛արիբին ու էսէնց հասնում սրանք իրանց մուրազին։

Ամա Շահվէլադուն չէ թողի Աշուղ Ղ՛արիբը անմուրազ. վէր է կալի, լաւ փուղով-բաժնքով տալիս է նրան իր քվիրը ու չուստ նրանցն էլ փսակում ու մէկտի ուրախութին անում։

## 4.

### ՊՍՏԻ ՄՈՒԿԸ

Էնէլ է, չէ էնէ, մէ չէն սօվդագար (վաճառական) է էնէ. ունեցել է ճրեք տղայ. Իփոր վուրթեքը մինձացել են, հէրը ուզել է նրանցը հառուստ-հառուստ թուման (10 ռ.) թանխա (դրամագլուխ) ճանփու գնում ու ասում թէ՝ «վուր ճանփով էլ գ՚ուզեք գնացէք, մէնակ փլան-փլան (այս ինչ) ճանփով մէք գնաք»: Մինձն ու միջնեկը գնացել են իրանց հօր ասած լաւ ճանփեքով. պստիկը կի միտքը է արէ թէ՝ «արբ ու հօրս դաշլա արած (արգելած) ճանփով կէհամ, տեսնեմ ինչ պիտի ըլէ էնդէ»:

Պստի տղէն խիստ կտրուկ է ըլում ու շատ սիրունատես. Շատ է գնում, քիչ է գնում, հասնում է մէ մինձ տափ տեղ. տեսնում է, վուր մէ մարթ կանգնած է, վուտներու տակը դրել է մէ մեռել ու ծեծում ու չարթում է, քանի էլ չանումը ջան կայ. էս պստի տղէն ձիով առաջ է գնում ու ասում թէ՝ «էս ինչ բան է, էտ էլ չէի իմացել, վուր մեռած մարթուն օմքին ծեծէ». Նարար (երանի) ինչ է արէ քեզ դա, վուր էտէնց ծեծում իս»: Նա թէ՝ «էլ ինչ, ինչ է արէ, մէ հօքեպահուստ հառուստ թուման փուղ ունէի, փուխ տվի սրան ու քանի կենթանի էր, չէրէտ ինձ. հիմի էլ ծեծելով ջիգրս (ոխ) հանում իմ»:

Տղէն իր մտկումը միտքը է անում թէ՝ «էստումէն էլ լաւ վարձկ բան էլ ինչ կանած անիս». Վէր է կալնում իր հառուստ թուման թանխէն տալիս է նրան ու խնդրում է մեռլին դաթար տայ ու թաղէ:

Թողնում է սրան էտտի ու ինքը գնում է իր ճանփէն. Տափումը ռաստ է գալի (պատահել) էս տղին մէ պստի մուկը. Մուկը սրան թէ՝ «չի ըլի՞, վուր ինձ էլ հետդ տանիս, ննգեր դառնանք. ինչոր ճարինք, փայ (բաժին) անինք»: Տղէն թէ՝ «ինչ կ՚օնեմ քեզ. խուրջինումս շատ խօրաք (խորտիկ) ունեմ, գիտի դուն կուտիս». չէ

էլի ուզում տանի։ Աման մուկը շատ է խնդրի ու նա էլ խուրջինն է գցի, տարել է հետը։

Ճանփին ասում են գալի մէ քանի Ճանփուրթնիր, ուրիշ երգրնմէն են ըլում թուրմէ (իբր թէ) յեդ գալի ու ասում են էս տղին՝ «ուր ես գնում էտ Ճանփով, քամբախտ (դժբաղդ) տեղ ես գնում»։ Աման սա չէ լսում, գնում է ու հասնում ուրիշ թաքաուրի երգիր։ Թաղկեմէն գուռը մէ քոխի (խրճիթ) է տեսնում, մէջը մէ պառաւ կնիկ է ըլում ու չունքի օրը մթնացել էր, գնացել է էն պառւի մօտ ու խնդրել է, վուր տեղ տայ իրան քնելու։ Կնիկը թէ՝ «քեզ հանգերելու համա վունչիչ չունիմ, այ Ճանփուրթ. ամա զ'օնադն Աստուծն է. արի, քնի. ուտելու կի վունչիչ չունիմ. թողութին կ'օնիս»։ Սա թէ՝ «վունչիչ չիմ ուզի քիզմէն. խուրջինս լիքն է ամէն բարութիննով»։ Էն գիշերը հարց ու փուրց է անում տղէն պառւին էն երգրի ադաթը (դրութիւն)։ Կնիկը թէ՝ «էն քաղկումն է էս երգրի թաքաուրը. նա մէ սիրուն աղչիկ ունէ, լեզուն կապ է ննգած, չէ կանացի խօսի։ Թաքաուրն ասել է, թէ օվոր իմ աղչկան կու խօսեցնէ, նրան կու տամ, կ'ասէ, աղչկա։ Շատ տղէրք էկել են, նստել են թաքաուրի պալատի առչևը խնամաքարի վրայ ու աղչկան չին կանացի խօսեցնի։ Թաքաուրը գլխուններց գլուխը կտրել է տվի ու նրանց քալլերով (գանգ) իր պալատի հասարն (պարիսպ) է շինի»։ Պառաւը վուր իմանում է, թէ էս տղէն քաղաքն է գնում, խնդրում է՝ «մի գնա, կ'ասէ, էնդ'անց կեանքան չ'ըս կանայ յեդ գայ»։ Ամա տղէն չէ լսում ու գնում է։

Գնացել է տղէն քաղաք ու նստել է թաքաուրի պալատի առչևը խնամաքարի վրայ։ Գնալիս չէ ուզեցի էն պստի մկան հետը տանի. ամա մուկը շատ է խնդրում, վուր տանէ ու ինչոր ասէ նրան, ամէն բան լսէ։ Տղէն էլ տանում է հետը։ Հանց վուր նստում է սա խնամաքարի վրայ, գալիս են, տանում են էս տղին թաքաուրի աղչկայ օթախը։ Օսկէ շանդններով (մոմակալ) ու թանգագին խալեով (գորգ) է սարքած ըլում նրա օթախը։ Մէջն օչով չէ ըլում սավայի (բացի) աղչկան։ Օթախի մէ քնջնումը (անկիւն) կի թաքուն տեղ է էլի սարքած թաքաուրի զ'արաուլներու (պահապան) համա. նրանք էնդ'անց

պխտէին վարպուրդ անի (նկատի), թէ կու խօսեցնէ տղէն աղջկան թէ չէ։

Թագաւորն ապսպրել է էս տղին, թէ՝ «Երեք գէր խօսեցնես, կ՚օսէ, աղջկա, քեզ կու տամ նրան էլ ու իմ կարողութենն էլ»։ Մկան խորուրթով էս տղէն մտնում է թէ չէ աղջկայ օթախը, ջի- բեմէն (գրպան) դուս է թողի մկան. Սա մէ քնչնումը թախ է կացի. Տղէն հանց տեսել է աղջկան, թէ՝ «բարով ձեզ թանգագին խալիք ու խալիչէք, ընչպէս էք»։ Մուկը բարակ ձէնով էնդ՚անց ջուղար է տըլի թէ՝ «բարով, հազար բարի ես էկե. շատ ուրախ իմ քու գալուն»։ Աղջիկը շատ զարմանում է, ամա խօսողին կի չէ էլի տեսնում. Ջերգը շատ է գալի ու մէկրաշ (յանկարծ) ասում է թէ՝ «էս ճվ է համարցակվում թագուն մանի իմ օթախը»։ Թագաւորի գ՚արաուլներն իմանում են աղջկայ խօսիլն ու թագաւորին խաբար (համբաւ) անում. Տարի քեզ ումրը (կեանք), վուր ուրախանում է թա- գաւորը։ Տղէն մկան էլի ջիբն է դնում ու հեղը տանում էն պառւի տուն. Մէկէլ էքսն էլի գնում է էն տղէն թագաւորի աղ- ջկայ մօղ, մկանն էլ հետն է տանում, Տուն վուր մտնում է, էլի մկանը թողնում է օթախումը ու թէ՝ «բարօվ ձեզ, թագաւորի սի- րուն օթախնէր, պատեր ու ամեն սարք ու կարգք»։ Մուկն էլի ջու- ղար է տալի թէ՝ «շատ ուրախ իմ քու գալուն»։ Աղջկայ արունը ջգրու գլուխն է ննգնում ու էլի մէկրաշ ասում, թէ՝ «պխտիմ իմա- նալ տա, թէ ճվ է իմ օթախումը թախ կացած»։ Տղէն էս գամօքը լաւ տնդղում (զննել) է աղջկան ու աճկումը շատ դուր է գալի, ամա վունչէւ չէ ասում։ Գ՚արաուլներն էլի տեսնում են էս ու թագաւո- րին խաբար տալի. Վրայ երեք օրն էլի էնէնց գնում է տղէն աղ- ջկայ մօղ ու տուն է գնում թէ չէ, թէ՝ «բարօվ ձեզ, թագաւորի բարեկմեր ու ասկականներ, շատ ուրախ իմ, վուր դուք լաւ էք»։ Էլի մուկը ջուղար է տալի. Աղջիկը չէ համփերում, էլի խօսում է. Թագաւորը վուր իմանում է, շատ ուրախանում է ու աղջկան տալիս է էն տղին. Օխտն օրն ու օխտը գիշեր հարսնիք են կատարում. Մուկն էլ էնդի է մնում տղի մօղ։

Անց է կենում ժամանակ։ Տղէն թէ՝ «գ՚ուզիմ իմ հօր տուն գնամ»։

Թագաւորը վեր է կալնում, բարցում է ուղտանները ամեն բարութեննով ու օսկով ու ճամփու է դնում իր աղջկան էլ հետը։ Ի՛փոր հասնում են էն տափը, վուրդեոր մուկը սատ էր էկի տղին, մուկը թէ՝ «կայնց էստի, վունցոր բարեւել (պայմանադրել) ենք, պիտենք փայ (բաժին) անի մեր ճարանքը»։ Տղէն ամեն բարութենը հալալ (ուղիղ) փայ է անում ու ջուգ-ջուգ դարսում. բանը հնգնում է աղջկայ վրայ։ Մուկը թէ՝ «աղջկան էլ պիտենք փայ անի»։ Տղի մեղկը գալիս է, թէ՝ «թող վուղչ-վուղչ քեզ ըլի սա, կ'օսէ, ամա կէս անել չեմ կանայ»։ Մուկը չէ զ'արուլ անում (համաձայնիլ)։ Ինքը դառնում է մարթ, բռնել է տալի զ'ուլուղչերուն (ծառայ) աղջկայ ձեռները, թուրը վե կալնում ու վրայ բերում աղջկայ գլխին։ Սարսափը բռնում է աղջկան, մէրաշ ծեկա տալի (ծլել)։ Մարթ դառած մկան ձեռը դողդղում է ու յեղ է քաշում։ Էլի վրայ է բերում թուրը։ Էլի էնէնց։ Վրայ երեք ջէր էլ վուր հարբ ու հուրբով (ոյժ) վրայ է բերում թուրը, աղջիկը խեստ է վախեննում ու էն ահի վրայ օրցկում է (փսխել) ու բերնեմէն վէր է գցում բնով օցեր։ Թուրմէ փուրն օցերով լեքն է ըլում ու լեզուն էլ էնդումէն է էլի կապած։ Օցերը վուր դուս են գալի, աղչեկն ուրախ-ուրախ խօսում է իր մարթու հեդ։ Իժում էն մարթ դառած մուկը թագաւորի փեսին ասում է՝ «Ես էս էի ուզում, ա՛յ մարթ Աստու. չեմ ուզի վո՛ւնց իմ փայ օսկին ու գինաթը (Թանգագին իր) ու վո՛ւնց քու կնգան։ Աստուած քեզ բարով վէէլել տա՛յ, վունցոր քու սիրտը գուզէ։ Ի՛ս էն մեռած մարթու հոգին իմ, վուր էս քանի տարի առաջ ինձ պարտկան տիրուչ ծեծելեմէն ազատեցիր ու գնջացրիր։ դուն էլ թափվիս ու ազատվիս ամեն ցաւեմէն ու նեղութեննեմէն»։

Առնեմէն երեք խնձուր դէվէր էկաւ. մէկը ասօղին, մէկը լսօղին, մէկը բարի հերչակին։

## 5.

### ԹԻԶՄԷՆ ՄԻՆՉ ՄԱՐԹ ՆՕԹԱՐ (ծառայ) ՄԻ՛ ԲՕՆԻ.

Կլնի է, չէ կլնի, մէ մարթ է կլի. ունենում է երեքքսան թուման (10 ռ.) փուղ։ Վեր է կալի ու էտ փուղը փայ-փայ (բաժին-բաժին) է արի. քսան թումանը տվել է իր կնգան, քսան թումանն ինքն է վի կալի ու քսան թումանն էլ տվել է իր մէ տղին ու ասել է նրան թէ՝ «վուրթի, ես ծերացել իմ, հեմի գնա ու դուն քեզ համա փուղ աշխատէ ու ապրի»։ Տղէն վեր է կալի փուղն ու գնացել է. շատ է գնացի, քիչ է գնացի, հասել է մէ տեղ։ Տեսնում է, վուր մէ ուստա (վարպետ) աշկերտներ է կարթացնում. մէկին ծեծում է, մէկի վրայ բարգանում է ու մէկի գլխին ձեռը քսում։ Շատ դուր է էկի էս բանը տղին ու ասել է ուստին թէ՝ «առ էս քսան թումանը քի կու տամ, թէ կու սովրեցնես քու գեղեցածը»։ Ուստէն վեր է կալնում սրան ու մէ-էրկու տարումը սովրում է էս տղէն իր ուստի գեղեցածը թամամ (բոլոր):

Իժում տղէն գնում է իր հօր ու մօր մօտ ու ասում նրանցը թէ՝ «էնչ պիտիմ անի. գնացի երգրէ-երգեր, Ճանփին փուղերս կորցրի. հեմի խնդրում իմ, դէդի ջան, վուր քու քսան թումանը ինձ տաս»։ Դէդէն տվել է փուղերը ու տղէն էլի գնում է։ Գնում է, գնում, տեսնում է մէ տեղ մէ մարթ է էլի նստած, սազ ածում։ Մօտ է գնում ու ասում թէ՝ «առ էս իմ ունեցած քսան թումանը քեզ կու տամ, սովրեցրու ինձ քու ածելը»։ Էն մարթը վեր է կալնում, սովրեցնում է սազ ածելը։ Քիչ ժուղումը սա իր ուստեմէն էլ լաւ է էլի ածում ու էլի վեր է կենում տղէն, գնում իրանց տուն։

Ձեռը դարդակ մտնում է էս տղէն իրանց տուն ու խնդրում է հօրը, վուր նա էլ իր փայ քսան թումանը նրան տայ։ Հէրն էլ տվել է։ Տղէն գնում է, հասնում է մէ քաղաք, տեսնում է, վուր էրկու մարթ նստած նարդի ին էլի խաղում. մէկն ուրախ է ըլում,

մէկէկը դարդուտ, չգրած։ Շատ է հաւնում էս խաղն ու ասում է նրանցմէն մէկին թէ՝ «Ես քեզ կու տամ իմ ունեցած քսան թումանը, թէ կու սովրեցնես նարդի խաղալը»։ Նա էլ սովրեցնում է ու մէ տարվայ մէջը էնէնց սովրում է, վուր օչով չէ էլի կանացի տանի նրամէն։

Վերջը տղէն վեր է կենում, գնում է էլի իրանց տուն. տեսնում է, վուր հէրն ու մէրը շատ խեղճ են։ Ասել են նրանք իրանց վուրթուն թէ՝ «տախտը, վուրթի, վճուրգի էնք ինչկի հեմի. մեզ չատի խաստակ կոտորեցիր. մեր երեքքսան թումանը տարար ու էլ յետ չը մտիկ արիր»։ Տղէն վուր տեսնում է իր հօրն ու մօր նեղութինը, ասում է նրանցը թէ՝ «տարէք ինձ մէյդան (հրապարակ), ծախեցէք ու վուր հարցնեն, թէ ես ինչ փէշակ (արհեստ) գիտեմ, ասէք թէ՝ ձիու, քարի ու ուսաղի փէշակ գիտեմ»։ Նրանք էլ տարել են ծախելու։ Մօդ է գնում մէ չէն սովդագար ու հարցնում թէ՝ «դուք վուր սրան ծախում էք, սա ինչ փէշակ գիտէ»։ Նրանք թէ՝ «ձիու, քարի ու ուսաղի փէշակ գիտէ»։ Տղէն կի ասում է սովդագրին թէ՝ «աղա, քեզմէն մինձ մարթ նօքար մի բռնի»։ Սովդագրին խէստ չիգրն է էկի էս խօսկը ու հարուր թումանն է տվի, առի էն տղին։ Տղէն գնում է սովդագրի հէտ ու փուղերը տանում են նրա հէրն ու մէրը։

Մէ օր թուրմէ էս տղի աղի ննգները գնում է իրանց երգերը։ Բեջը վուր տեսնում է, թէ աղէն իր ննգրուչը պահ էրեր իր ապրանքը, խնդրում է, վուր իրան էլ հէտը տնէ։ Աղէն մէ գիր է գրի իր կնգայ վրայ ու մէջը գրի թէ՝ «Ես էս բջին ղրգում իմ, սրան քար ու կիր կրել տուր ու ինչկի իմ գալը տուն շինել տուր»։ Աղէն էս գիրը տվել է իր ննգրուչը։

Գնացել են աղի ննգերն ու էս տղէն Ճանփայ. նստել են գէմի (նաւ)։ Գէմին գնում է, գնում ու մէ տեղ գէմ ննգնում։ Գէմչին ասում է թէ՝ «մէ շախմաթ ախտենք էատի մնա, կ'օսէ»։ Նստում են գէմչին (նաւավար) ու աղի ննգերը նարդի են խաղում։ Մէ քել ժուգվայ էգնէն աղի ննգերը ապրնքի կէսը տանուլ է տալի խաղումը։ Գէմէր է գնում էն աղի մօդ ու ասում, վուր ապրնքի կէսը գնացել է։

Տղէն թէ՝ «Ինչ հաջալթ (վնաս չունի), էսօր տանուլ տվիր, էգուց կու տանիս»։ Էլի գիվիր է գնում ու խաղում։ Դիվիր գնալիս աղէն ասում է իր աղի ննգրուշը թէ՝ «աղա, խաղալումը չըլի թէ կորցնիս աղիս տված գիրը»։ Նա էլ միր է կալի, պահ տվի աղին։ Սա բաց է անում գիրը ու իմանում նրա զօրութինը։ Իժում էն գիրը պատառում է ու նրա մագիար (փոխարէն) ուրիշը գրում, թէ՝ «էս գիրը վուր տանես, էն օրնիվէտ իմ սիրուն աղջկան կու տաս էս գիր բերողին ու ինչկի իմ գալը կու փակիս»։ Ծալում է գիրն ու ծուցումը պահում։ Աղի ննգիրը էլի գէվէր է գնում նրա մօդ, թէ՝ «մի աղայ, միր ապրանքը գիժի-միանալ տանուլ տվիր»։ Տղէն էլի թէ՝ «Ինչ հաջալթ է, աղա, էսօր կու տանուլ տաս, էգուց կու տանիս»։ Վիրշը աղէն ասում է իր աղի ննգրուշը թէ՝ «մէ տասն օսկի բան տու ինձ»։ Նա էլ տալիս է։ Սա միր է կալի, Չիրիքն ուրիշ իմքնով լցնում ու վիրեվանց զարբում օսկիքը։ Դիվիր է գնում, խնդրում գէմչուն, թէ նարդի խաղանք։ Աղի ննգիրն էլ կանգնում է էնդի։ Էս աղէն հանիլ է չէր մէ օսկին, խաղում է, տանուլ տալի։ Իժում էլի ու իրիք սահաթումը աղէն չիդ է տանում գէմչումէն իր աղի ապրանքը ու վիրշը գէմին էլ է տանում։ Մէկէլ էգսը գէմին պիտէր դուս էր գնացի։ Ափին վուր հասնում ին, գէմչին ուզում է թուրմէ գէմին տա էն աղին։ Նա թէ՝ «չիմ ուզի իս քու գէմին. ինձ միշտ անփուղ ման ածա, կ'օսէ, ուրիշ վուճչիշ չիմ ուզի»։

Իժում ինքն ու իր աղի ննգիրը գնացիլ ին։ Ճանփին մէ տիղ կանգնիլ ին գնջանայու։ Դէմուդէմը մէ կօշկ (ամրոց) է ըլում. դուռը նստած է ըլում մէ էրգէն սիպտա միրքով մարթ։ Տղէն մօդ է գնում ու հարցնում թէ՝ «դուն ինչ մարթ իս»։ Նա թէ՝ «իս էաղ'անցի թաքաուրի աղէն իմ. հէրս վուր միռիլ է, ինձմէն աւիլ օչով չէ մնացի։ Էստի, էս կօշկումը մէ աղջիկ կայ ու քանի ժամանակ է ուզում իմ տեսնի ու չիմ կանացի»։ Տղէն ասում է թէ՝ «ինձ ինչ կու տաս, կ'օսէ, վուր նրան քիզ շանց տամ»։ Նա թէ՝ «իս կու տամ, կ'օսէ, իմ թաքաուրութինը»։ Տղէն միր է կալնում իր սազը, նստում ու ածում։ Նրա ածիլու վրայ աղջիկը գէվէր է

մանկի տալը ու Թաքաւորի աղջէն տեսնում է աղջկան։ Խժում էլի անում է ու ինչոր էն երգրումը Թուշունք է էլի, գիժ էնդի է մօդ-էլի. ընէնց լաւ է էլի անում. Նա վուր տեսնում է աղջիկը, գժվէր է գալի. Թաքաւորի աղջէն ուրախու էլ չէ էլի գիդացի, թէ ինչ-անէ ու ուզում է էլի իր Թաքաւորութինը էն աղին տա։ Տղէն տասում է նրան թէ՝ «չիմ ուզի, կ'ասէ, իս քու Թաքաւորութինը. մէնակ էս իմ խնդրում, վուր էստի մէ մարթ կու անց կենայ ան-բաշխօրթ (առանց անցաթղթի), նրան մէ թողնի էնզ'անց. Նա վուր գայ, ինձ էլ էստի տալալրէ»։

Տղէն էնզ'անց գնում է ու գիրը տալի իր աղի կնգան։ Նա վուր կարթում է, շշկլվում է, թէ էս ինչ է գրում մարթս. էնզ'գա մինձ մարթիք ուզում են աղջկա, չինք տալի ու հիմի նա էս ինչ է գրում։ Ամա իրա մարթու հրամանքն էլի, չէ կոտրում ու էն տաճաթին փատկում է իր աղջկան էն աղի հիդ։ Աղէն ինչոր գալիս է ըլում իրանց տուն, Թաքաւորն ապսալրում է նրան թէ՝ «արա վճւրդի է բաշխօրթատ»։ Նա չէ ունեցի ու Թաքաւորն էլ վէր է կալի, պահել է սրան իր մօդ տասն ու մէ օր ու վրայ տասէրկու օրը Թաքաւորն ապսալրել է էն աղին։ Նա խնդրում է Թաքաւորին թէ՝ «սրան իմ խաթրու (համար) թող, կ'ասէ»։ Թաքաւորը թողել է։ Էնզ'անց աղէն ու նօքարը մէտի գնացել են տուն։ Աղէն տեսնում է, վուր տունը շինած չէ ու բարգանում է իր կնգայ վրայ. Կնիկը թէ՝ «իս ինչ անիմ. ինչոր գրել էիր, էնէնց էլ կատարեցի. դուն գրել էիր՝ աղջկա տուր էս աղին, իս էլ տվի, ինչ անիմ. աճա գիրն էլ»։

Սօվդագարը շուտ է գալի, տասում իր փեսին թէ՝ «դուն մեղ չունիս, կ'ասէ, վուրթի. քիզ վուր տանում էի, դուն ինձ ասիր, թէ՝ «քիզմէն մինձ մարթ նօքար մէ բանի»։

6

## ԻՐԻՔ ԽՈՒՐԹ ԱՂՋԻԿԸ

Մէ մարթ առչի կնգամէն ճրիք աղչիկ է ունենում ու վրայ էրկու կնիկ է ուզում։ Ի՛րիք աղչիկն էլ շատ սիրուն ին ըլում։ Խուրթ մէրը միշտ նախատակ է էլի անում իր մարթուն, թէ ինչիլի էս աղչիկերանցա չը կորցնիս, ես չիմ կանայ էստի կիննա։ Միշտ էսէնց բեզրած է ըլում մարթը իր կնգամէն։

Մէ գամ հէրը խնձուր է բերում տուն, մէկը ջիրումն (զրպան) է ունենում, մէկը չէքմէքումը (կօշիկ) ու մէկը մէճկումը։ Տուն վուր գալիս է, չէքմէքը հաննելիս աղչիկը տեսնում է խնձուրը. վրայ ննգնում ու ուտում. իժում մէ խնձուրն էլ մէկէլ աղչիկն է գըթնում. իժում վրայ ճրիքը՝ Հէրը թէ՝ «գուզվ՞ք գըա ծառը շանց կուտամ ձիզ»։ Նրանք ուրախ-ուրախ գնում ին։ Մամէն (մայր) վաղօրօք մէ մինձ հուր է փորի էն ծառի տակը ու վրէն խալիչա (գորգ) գցի, վուր չէրեվայ։ Հէրը գիվիր է գնում ծառի վրայ, խնձուրը թափ տալի. աղչիկերքը վուր վրայ ին թափում, խնձուրն ուզում ին մօղ անի, ննգնում ին հուրը։ Հէրը յիդ է գալի տուն ու կնգան պատմում թէ՝ «ահըն, քու սրտի ուզածը կատարեցի, աղչիկերանցս տարայ, կորցրի. տեսնիմ հիմի վո՞ւնց կու՛լիս»։ Կնիկն իժում համով է էլի իր մարթու հիդ։

Էն աղչիկերքը հուրումը մէ քանի օր, քանի խնձուր է էլի, խնձուրով ին եօլա գնացի, իժում մնացել ին քաղցած։ Վուր քաղցածութինը խիստ զոռ է անում սրանց, ասել ին թէ՝ մէկլին սըպանինք ու ուտինք. Ջըվէթ դուս գնանք, կ'օսէ, ու ում ջըվէթն էլ կարճ ըլի, նրան ուտինք։ Պստի քվիր ջըվէթն է ըլում կարճ։ Սա խնդրում է քվիրտերանցը թէ՝ մէ գլուխս քթվեցէք։ Սրանց քթվելու վախտը ինքը գեդինը թուրմէ (յիրրև. Ձէ) փորփրում է. փորում է, փորում ու մէ քանի նուշ ու քիշմիշ է գըթնում։ Տալիս է քվիրտերանցը ու էլ չին սըպանում իրանց պստի քվիրը։ Ամէն օր թուրմէ էսէնց ին

անում ու ապրում։ Հենց նրանց տակը Թագաւորի Թավլէջն (ախոռ) է ըլում ու ձիանէրուն նուշ ու քիշմիշ են էլի ուտեցնում։ Թագաւորը վարպարուրդ է անում, վուր ձիանէրը լղարում են. բարկանում է, թէ՝ Հայլրաթ (երեւի) լաւ չէք ուտեցնում ձիանէրուն։ Դէս էն ննգնում, գէն էն ննգնում ու մէ օր էլ տեսնում են, վուր մէ ինչոր աղչիկ է գէմէր էկէ օճրքեմէն (առաստաղ), փէշէրը լցրէ նուշ ու քիշմիշով ու ուտում է տանէ։ Բռնում էն սրան, տանում Թագաւորի մօտ։ Թագաւորը աղչկան հարց ու փուրց է անում. նա էլ պատմում է իրանց գլխի վրայ անց կացածը։ Էս վուր իմանում է, Թագաւորը Ճրէքէննեմէս բերէլ է տալի իր պալատը։ Հարցնում է նրանց, թէ օվ ինչ շնուրք ունէ։ Մէնձն ասում է թէ՝ լաւ խալիչա գործէլ գիդիմ, էն լէնքն ու էրգէնքը կու գործիմ, վուր քու վուղչ զ'օշունը (զորք) վրէն կանգնի, էլի կու լեղ ծալվի։ Միջնիկն ասում է թէ՝ էս շատ լաւ կերակրեր էփել գիդիմ։ Պստիկն էլ ասում է թէ՝ էս օսկէ քօչրաուր (ցլունք, թանթուլ) տղայ կու բերիմ։ Թագաւորը փորցում է ու էրկու մէնձ քուրը կատարում են իրանց ասածը։ Թագաւորը պստիկի վրայ փսակվում է, շունքի (որովայնու) գէփունանց օխրունը նա է ըլում ու նրա մէկէլ քվէրտեբանցն էլ իր տանն է պահում։

Տարվայ գլխին Թագաւորի կնիկը պառկում է ու օսկէ քօչրաուր տղայ է բերում։ Ամա (բայց) շունքի նրա քվէրտիքը էնադ (քէն) էն էլի ննգած նրա հէդ, տառի հէդ խօսկը մէկ էն անում. օսկէ քօչրաուր տղին գնում էն զանդուկը ու ջուրը գցում ու էրեխի տէղ շան լակուտ էն դնում։ Թագաւորը վուր իմանում է, թէ շան լակոտ է բերէ կնիկը, նեղանում է ու Թավլէջն է գցել տալի նրան։ Մէնձ քվէրտիքը կի Թուրմէ փառք ու պատիւի մէջն էն ըլում Թագաւորի պալատումը։

Զանդուկը գէմ է ննգնում մէ ջաղցի չարխին (անիւ)։ Ջաղցպանը հանում է, տեսնում է մէջը մէ օսկէ քօչրաուր տղայ. ինքն էլ վուրթի չէ ունենում. պահում է իրա համա ու օխլը տարով էր մէնձանում, նա Թուրմէ օրով է էլի բոյ (հասակ) անում։

Մէ ուրիշ Երգրումը Թուրմէ Թագաւորը մէ սիրուն աղչիկ է

ունենում նշանելու։ Օվ գնում է էլի, չէ էլի հասնում ու գլխունի գլուխը կտրել տալի։ Սա, էս թագավորի տղէն էլ վուր իմանում է էս խաբարը (համբաւ), գնում է գէմ ու գէմը նրա մօզ. Ճանփին շատ մարթ չէ էլի ձեռք տալի էտ բանը, ամա չէ լսում։ Աղջկան էրեվում է սա թէ չէ, աղջիկը հասնում, ուզում է ու գլխի սաղ արարած-աշխարքը չաւ է ըլում (ծոյակուիլ) էս խաբարը։

Օսկէ քօշըրաուրի հօրն էլ հասնում է էս խաբարը։ Թագաւուրը միքը է անում, միքը է անում, կանչում է իր նազիր վէզիրներուն, զրգում է, գթնիլ է տալի էն ջադդաղնին և ամեն բան բաց է ըլում։ Կանչում է Թագաւուրը Թամկիլեմէն իր կնգան ու հարցնում թէ՝ դըրուստ դուն շուն բերի՞ր։ Նա թէ՝ «չէ, կ'օսէ, ես օսկէ քօշըրաուր տղայ բերի. ամա քվիրտեքս դուշմնութէնով իմ տղին կորցրին ու շունը դրին նրա տեղը»։

Թագաւուրն էլի բաղեշում (ճաշտունել) է իր կնգայ հեդ ու նրա քվիրտերանցը կապել է տալի ձիու կուզուն (ագի) ու էնէնց թէքաթէքա (մաս-մաս) անել տվի։

Զարն էնգի. բարին էստի։

---

## 7

### ԽՈՒՐԹ ՄԷՐԸ

Մէ մարթ վըրայ էրկու կնիկ է ուզում։ Առջի կնգամէն ունենում է մէ շատ սիրուն ու խելօք աղջիկ. վըրայ էրկու կնգամէն էլ ըլում է մէ խէստ գիժ ու չար բնութէնի տէր աղջիկ։ Մէրը խուրթ աղջկան զրգում ու նէղացնում է էլի. իր հալալ (հարազատ) աղջկան կի լաւ է էլի պահում։ Խուրթ աղջկան գէդէն ամեն օր թուրմէ զրգում է էլի տավը կովերն արծեցնելու։ Աղջիկը սաղ օրով գնում է էլի տավը ու հացի չուր կտուրտանքն ուտում։ *)

---

*) Վարիանտ (մի այլ ձեւ)։ Դէգիփուխը վուր զրգում է էլի իր

Մէ օր էլ վուր գնում է էլի տափը, Ճանփին մէ քարի վրայ յեղ է նստում. նստում է թէ չէ, քարը վէր է ընգնում ու աղջիկը գէվէր է ընգնում մէ գարբսա։ Թուրմէ էն քարի տակը գարբսի պօլօզակն (երդիկ) է ըլում. Դարբսումը տախտի վրայ նստած է ըլում մէ պառաւ կնիկ ու խճճած թելը յեղ է էլի տալի, հէդն էլ ասում *)

Աստուծ օղորմի էն պառւի հօքուն,
Վուր կու նստէր չորէք Ճանփին.
Լիզը գզէր, լիզը մանէր.
Լիզը խճուճը խառնէր։

Պառաւը շատ կիղտոտ է ըլում ու կանչում է աղջկան թէ՝ քթվէ, կ'օսէ, ինձ. Աղջիկը տեսնում է, վուր գլուխն օջլոտ է ու չէնքը օրլթնքոտ. ամա վունչէչ չէ ասում. խառկում է գլուխը. Պառաւը հարցնում է թէ՝ ինչ կայ, վուրթի, գլխումս. նա թէ՝ վունչէչ, կ'օսէ, դէդի, ինչ խառակ գլուխ էս ունեցել. Խ'չեոր սըրծ-

---

խուրթ աղջկան ասփը կօփերն արծեցնելու. Թուրմէ արէնը մէ· մէ հացի կուտ է էլի տալէ ներան, թէ՝ տար, կ'օսէ, էկողին էլ ուտեցրու, գնացողին էլ ուտեցրու, դուն էլ կէ՛ ու էլի կուտը վուղէ յետ բէ՛ տուն. Իէզն աղջիկը դը-նում է էլի տափը. մէ քանի օր քաղցած քաղցած տուն յետ գալի ու կուտը վուղէ յետ տանում. Տափումը Թուրքն քաղցածութենեմն լաց է ըլում ու դէսին վայ տալի. Խեմում կուճը մօտ է գնում աղջկայ մօտ ու ասում թէ՝ մէ՛ ոչ ըէ, կ'օսէ, ի՛նչ քաղցում էս, աէ՛, էմ պուճը ծծէ՛ ու կու կշտանաս։ Աման հրամանքով Թուրքն պուտկեմն կաթն է դուս գալի ու աղջիկը կշտանում ու կուտն ձեռը չը տալի. Դէգեխուխը զարմանում է, թէ ինչ թաղարն է էս խուրթ աղջիկը ապրում անուտէլ-անխմէլ.

*) Վարիանտ (մի այլ ձեւ)։ Խուրթ աղջիկը տափումը նստած էլէկ է էլի մանում. էլէկը մըրաշ (յանկարծ) ձեռնեմն վէր է ընգնում ու գէվէր է ընգնում հէրթի պօլօզակը (երդիկ)։ Էնդէ Թուրքն զարբսումը պառաւ կնիկը տախտի վրայ նստած խճուճ է էլի յեղ տալի. Աղջիկը ձէն է տալի ներան պօլօզակեմն թէ՝ դէդի ջան, մէ էս էլէկը հասցրու ինձ։ Նա թէ՝ արէ՛ ու առ։ Աղջիկը գէվէր է գնում։

նում է, պառաւն ասում է, թէ՝ էտի կժով ջուր կայ, գլուխս լվա։ Թուրմէ էնդի էրկու լէքը կուժ է ըլում՝ մէկումը սիպտակ ջուր է ըլում, մէկէլումը՝ սև ջուր։ Սրան պառաւը սիպտակ ջրի կուժն է շանց տալի։ Գլուխը վուր լվանում է, աղչկայ մազերը օսկի է դառնում։ Պառաւը տալիս է սրան մարքրտով կարած ու օսկէ կրնգններով քօշիք, մարքրտէ շուրէր, օխնում ու ճանփու է դցում, թէ՝ Աստուած քեզ բախտաւորէ, կ'օսէ, շունքի էտէնց խոնար էս։ *)

Աղչիկը գնում է էլի իր կովերն է արծեցնում ու իրիգնապահը գնում է տուն։ Տանը իր խուրթ քուրը վարաուրդ է անում օսկէ մազերը, շունքի, զուրթ է, թէգուզ յեղ կապած է ուննենում գլուխը, ամա մազերու ծէրերն էրեվում է էլի։ Սա ասում է իր դէդէին ու մէրը ստիպում է իր խուրթ աղչկան, վուր իր հալալ աղչկան էլ տանէ էն պառաւի մօդ։

Գնում են էրկու քվիրտիքը, նստում են էլի էն քարի վրայ. քարը վէր է ննգնում ու իրանք ննգնում են դարբասը պառաւկնգայ մօդ։ Պառաւը հէմի էս գեղձ աղչկան է մօդ կանչում, թէ՝ մէ քթվէ, կ'օսէ, գլուխս։ Աղչիկը վուր տեսնում է նրա օջլներն ու օրթունքները, փի՜փ, փի՜փ անելով յեղ է քաշվում։ Պառաւն ասում է՝ էտի կժով ջուր կայ, գլուխս լվա։ Գլուխը սև ջրով է լվանալ տալի ու աղչկայ ճակատի վրայ մէ սև պուզ է դուս գալի։ Աղչիկը տրաքած-պատռած գալիս է տուն ու դէդէն, վուր տեսնում է, ուփօ (ափսի) է էլի նաՀատակում ու չարչրում իր խուրթ աղչկան։ Քանի կտրել են տալ տալի դալաքին (սափրիչ) էն աղչկայ պուզը, էնդդայ էրգարանում է էլի։

*) Վարիանտ (մի այլ ձեւ). Պառաւը քէչէրով (բղուղ) ԹԹխիր է ուննենում դարսած, մէկումը օցիր, մէկէլումը դեղնիր։ Աղչկան հարցնում է թէ՝ ե՞նչ թահար ԹԹխիր ուտիմ։ Նա թէ՝ ե՜ւփ ե՜ւփ, ե՞նչ լաւ ԹԹխիր ունիս, ենչ լաւ պահած է։ Պառաւը վուր տեսնում է աղչկայ արարմունքը, շատ հաւանում է ու ասում է թէ՝ դուս գնա, բաղումը ախխիր (առու) է գալի. մէկումը սև ջուր է, մէկէլումը՝ դեղին ջուր։ Սև ջրին մօդ չը գնաս ու դեղին ջրումը լվա գլուխդ։ Լվանում է ու մազերը օսկէ է դառնում։

Նա ժամանակը թուրմէ էր քաղկումը թաքաւորի տղի հարս-նիքին է բլում մինձ խարբեներով. սաղ քաղաքը գժվել է. Թամաշա գնացին Նա օսկէ մաղերարը աղջկան թուրմէ տանն են թողնում. Սա թաքուն հաքնում է իր մարքըրաէ շորերն ու օսկէ քօշերը, գնում է հարսնքի կուռը, մտնում է թաքաւորի թավլէէն, մէ սաղ ձիու վրայ նստում է ու թաքաւորի պալատի առչևը շաժի գցում, խալխումն էրեվում ու էլի չէղ տանում է ձին, թավլէումը կա-պում. ինքը շտապով գնում իրանց տուն, մինթամ վունչինչ խաբար չէ էլի, ամա բանն էն է, վուր շտապելումը մէ քօշին թաքաւորի պալատի առչևը վէր է ննգնում. Թաքաւորի նօքըրները (ծառայ) գըթ-նում են էն քօշին ու շանց տալի թաքաւորին. *) Նա վուր քօշին տեսնում է, հրաման է անում, վուր էն քօշու տէրուչը անպատճառ գըթնեն ու ում վուտումն էլ գայ, կ'օսէ, էն քօշին ու էնդու մէ հատն էլ ունենայ, նա իմ հարս կու դառնայ. Ման են գալի, ման են գալի, չեն գըթնում. Վէրչը գալիս են էս խուրթ մօր տուն. Հարց-նում են ըլըղճ աղջկան, վուտումը չէ գալի. Խժում կանչում են սի-րուն աղջկան, հարցնում են ու դ'ալերի (կաղապար) պէս գալիս է վուտումը. Դէղէն չէ էլի աւսում. Ամա ճիտը աղջիկը բերում է քօշու մէկէլ հատն էլ ու էն մարքըրաէ շորերը, մնում է բերանը բաց. **)

---

*) Վարիանտ (մի այլ ձեւ). Քօշին ննդել է ջրի աղբյուրը (առու) ու-ր'վոր թագաւորի ձիաներուն բերում են ջուր խմացնելու, ձիաները խրտնում են, մօտ չեն գնում. Բէկերքն (ծառայ) իմանում մտիկ են տալի ջրումը, տես-նում են ինչոր պըղպըլում է. Հանում են քօշին ու տանում թագաւորին շանց տալի:

**) Վարիանտ (մի այլ ձեւ). Ն'վոր գեղեցկուհին խմանում է, թէ թա-գաւորի մարդիկը ինչ բանի համար են գալի. իր աղջկան դուքում է ու խուրթ աղջկան թոնի կացնում քթոցի տակը. վուր էն մարդիկը չը տեսնեն նը-րան. Ջուքան աղջկայ վուտումը անդղում են էն քօշին ու չէ էլի գալի վու-տումը. էն մարդկերանցմէն մէկը նստած է ըլում էն քթոցի վրայ. Խուրթ աղջիկը ծուրքն չէ համբերում ու տակիցն մախաթով (ճներիւն) ծակում է

Տանում են էս սիրուն աղջկան թագաւորի պալատը։ Թագաւորը վուր տեսնում է, շատ է հաւնում աղջկան ու իր մէկէլ տղի համա է ուզում։ Օխտն օր ու օխտը գիշեր մինձ հարսնիք են կատարում ու էն գրնած ու չարչրած աղջիկը վերչն էսէնց բախտաւորվում է։

Չարն էնդի, բարին էստի։

---

## 8.

## ԼԱԻՈՒԹԻՆ ԱՐԱ՛, ՋՈՒՐԸ ԳՑԷ՛. ՁՈՒԳԸ ՉԻՄԱՆԱՑ, ԱՍՏՈՒԱԾ ԿՈՒ ԻՄԱՆԱՑ *)

Ըլում են մէ հէր ու վուրթի, հրի ափին ամեն օր չանգլապնութին (կարթով ձկնորսութիւն) անում, ձուգն են բռնում։ Մէ օր գցում են չանգալը ջուրը, դուս է գալի մէ օսկէ ձուգը։ Հէրն ասում է, թէ՝ վուրթի, էս ձուգը թագաւորի լաիգ (արժանի) իմքին է, արի, պահենք ու տանենք, թագաւորին փէշքաշ (ընծայ) անենք. Նա միգ, ուրիշ վունչիշ չունի, մեր տարվայ հացն էլա կու տայ։ Հէրը ձուգը կապում է ջրի դ'բաղին (եզր) ու ինքը գնում ուրիշ տեղ։ Տղէն լաւ տնգղում է էն ձուգը. տեսնում, վուր մէ հրաշալի իմքին է։ Փեքը է անում, ինչոր գուցէ հէրս ասէ, կ'օսէ, պիտիմ էս ձգանն էլի լեղ մէկէլանց ջուրը գցիմ։ Էնէնց էլ անում է։ Ի'վոր հէրը ետ է գալի, տեսնում է, վուր ձուգը չըկայ. շատ բարգանում է ու ասում իր վուրթուն թէ՝ գնա, կորի, էլ աչկիս չէրեվաս։

---

էլի էն մարթու վուտնիրը՝ Խնում էն մարթը վեր է թռչում, թէ՝ հալբաթ քթուցէ տակը օձերն էայ, կ'օսէ. Դուս են բերում խուրթ աղջկան, հագցնում են քուշին ու վուտուտը դ'ալեվէ (կաղապար) դէմ գալիս է։

*) Այս հեքիաթը թէպէտ համանման է Ա-րդ «Պառի մուկը» մանկական հեքիաթին, բայց որովհետև էրրև վարիանտ գնելու անյարմար էր, դնում եմ այստեղ առանձին։

Ցղէն գնում է տուն, պատմում է իր գէղին էս բանն ու ուզում է Ճանփայ ննգնի։ Գէղէն ջխնում է նրան, բրիք հաց տալի ու ասում՝ վուրթի, Ճանփայ գնալիս վուր ննգիր ուզենաս, ասա, թէ վուր էս հացերը փայ անելիս, զ'ուէն (հացի հաստ կողմը) ինքը վի կալնէ ու հացի զունգը (բարակ ծայր) քիզ տայ, նրան ննգիր մի շինի, ու ան թէ դուն վուր Ճանփին լիզ մնաս, նա քիզ չը մուլափ տայ (չը սպանէ), նրան էլ մի ուզի. ամա ավոր քիզ մուլափ տայ ու հալալ (ուղիղ) փայ (բաժին) անէ, նրա հիդ ննգրութին արա։

Գնում է Ճանփայ։ Ջէր մէկն է պատահում։ Մէ հացը տալիս է նրան. ամա տեսնում է, վուր սրան զրգում է, թողնում է անց կենում։ Գնում է առաջ, մէկ էլ ուրիշն է ռաստ գալի, նա էլ էնէնց. սրան էլ է թողնում։ Իժում վրայ բրիքն է պատահում. նա էն հացը հում (եւ) հալալ կէս է անում, համ էլ Ճանփին սրան մնում է, իփոր սա զ'ասիդի (գլխութեամբ) վուտը լիզ է խփում փորցելու համար։ Սրա հիդ ննգրանում է ու գնում ին։

Ճանփին կանանչ խուտումը տեսնում ին սրանք մէ գուրգըգուրղը նրա ննգրուչը ձէն է տալի, թէ՝ ❧ ըլի վուր ինձ էլ տանիք հիդեններա։ Ննգիրը միթամ Ճանչնում է նրան ու թէ՝ գուրղ մամիգա (ծորաքոյր), էսոր ինչ իս շինում։ Վիր է կալնում, գցում խուրջինն (բակլուայ) ու հիդը տանում։ Հասնում ին մէ քաղաք։ Հարցնում ին սրանք թէ՝ էս քաղկումն ինչ խաբար կայ։ Ասում ին թէ՝ էսոր թաքաւուրի աղջիկը քանի տարի է չէ խօսում ու թաքաւուրն ասիլ է, թէ ավոր աղչկա խօսեցնէ, նրան կու տամ։

Գուրգը խնդրում է թէ՝ ինձ էլ հիդեններա տարէք ու ինչոր ասիմ, լսեցէք։ Տանում ին սրան իրանց հիդ։ Վուր մտնում ին թաքաւուրի պալատը, տեսնում ին, վուր մէ մինձ օթախումը նըստեցրել ին թաքաւուրի աղչկան ու ամեն թահար չալիչ ին գալի (ջանր անել), օյիններ (ճարտարխոսութիւն) անում վուր խօսեցնեն։ Վուրտուն ին գնում, գուրղն ասում է, թէ օթախումը մութը կուրը (կողմ) նստեցէք ու ինձ թողէք։ Նստում ին սրանք ու գուրգը գնում է փիխուզի (մեծ մոմակալ) տակը մտնում։ Ննգիրն ասում է թէ՝ փիխուզ աղջէր, արա մէ առակ ասա։

Գուրգը փիսուզի տակեմէն մեԹած մարԹու ձէնով խօսում է ու ասում: «Մէ տղայ մարԹու տված քուր է ունենում. Մէ օր գնում է նրա տիս. Փեսէն ու քուրը ուրախանում են ու օրան պատիւ տալու համա փլաւ են ուզում էփեն. Տանը ջուր չէ ըլում. ՄարԹը գնում է ջրի. էլ չէ յեդ գալի. Իժում քուրը իր աղբուրն է ղրգում ջուր բերելու, նա էլ չէ յեդ գալի: Վերջը ինքն է գնում, տեսնէ (որ տեսնէ), Թէ ինչ խաբար է. Տեսնում է, վուր էրկուսն էլ սըպանած են ու մարԹու լէշի (դիակ) կուռը աղբուր գլուխն է դրած ու աղբուր լէշի կուռը՝ մարԹու գլուխը. Զոքում է, Աստուծուն աղանչանք անում ու էս մեռածները կենդանանում են՝ աղբուր լէշը մարԹու գլխով ու մարԹու լէշը աղբուր գլխով. Կնիկը մոլորվում է, Թէ իր մարԹը վո՞ւրը պիտի ըլի. Արա իմացէ՛ք. Խալխը վուրն ինչ է ասում, վուրն ինչ. Շատ կռվում, դ'ալմաղ'ալ (աղմուկ) անում. Վերջը Թագաւորի աղջիկը չէ համփիրում, Թէ՝ քուրն աղբուրը չէ պաչ անում. Վուր լէշն էլ մարԹունն է, էն մարԹը հախ է էն աղջկան: Փիսուզի տակեմէն գուրգն էլ ձէն է տալի Թէ՝ բաս դուն էլ հախ իս մեր տղին. Գնում են, իմաց են տալի. վուր աղջիկը խօսեցաւ, կ'օսէ, էսէնց էսէնց ինչոր էրկու մարԹ էկան ու նրանք խօսեցին.

Թագաւորը հրամանք է անում իր նազիր վէզիրներուն, վուր գնան, լաւ իմանան: Մէկէլ գիշերն էլի գալիս են էրկու ընգերը ու էլի էն գուրգը մտնում է փիսուզի տակը. Էն տղի ընգերն էլի ասում է Թէ՝ փիսուզ աղբէր, մէ առակ կու գիդենաս. Էլի գուրգն ասում է, Թէ՝ «Մէ տեղ երեք աղբէր էին՝ մէկը տէրացու, մէկը դուրգալ (ձիան), մէկը դերցիկ. Մէ գիշեր դուրգալի քունը չէ տանում, վեր է կենում, փէտէ աղջիկ է շինում, դուռը ցից անում. Իժում դերցիկն է զարԹում, տեսնում է էս փէտէ աղջիկը. շորեր է կարում, հագցնում. Վերջը զարԹում է տէրացուն, տեսնում է էն փէտէ աղջկան. Շատ աղօԹք է անում ու էն աղջկան Աստծու հրամանքով հոգի է տալի, կենդանացնում. Ո՞ւմն է հախ էն աղջիկը. Վուրն ինչ է ասում, վուրն ինչ. էլի դ'ալմաղ'ալ է ընգնում. Աղջիկն էլի չէ համփիրում, Թէ՝ ինչ իք կռվում. դուրգալն ու դերցիկը

իրանց հախը տանեն, աղջիկը տիրացուինն է, չունքի չունչ տվողը նա է։ Էլի գուրզը փխուցի տակեմէն թէ՝ էն աղջիկը տիրացուին է հախ, գուն էլ մեր տղին էս հախ։

Ասում են թաքաուրին։ Վրայ ճրեք գերեր թաքաուրն ինքն է գնում տեսնելու։ Էլի գալիս են էն երկու ննգերը, գուրզն էլ հետը։ Տղի ննգերն էլի թէ՝ փխուզ աղրէր, մէ տայ կու գեղենաս, տամ։ Նա էլ ասում է թէ՝ «մէ տեղ մէ սերուն աղջիկ է ըլում ու թուրմէ նրա մօղեկ ճրեք աղրէր են էլի կենում ու ամեն մէկն էլ ուզում է նրա վրայ փռակվի։ Վերջն աղջիկը թէ՝ գնացէք, կ՚ռսէ, Ճանփայ, օվոր լաւ աշխատանքով յեղ գայ, նրան գ՚ուզիմ։ Գնում են, գնում. մէ տեղ թուրմէ Ճանփէն ճրեք է բաժնվում։ Բացը Ճանփէն քարի վրայ գրած է ըլում՝ օվոր գնայ, բարով հեղ գայ. մէջի Ճանփի վրայ թէ՝ օվոր գնայ, ան յեղ գայ, ան չէ. Ներքի Ճանփի վրայ թէ՝ օվոր գէնը գնայ, վուշ յեղ գայ։ Մենձը գնում է բացը Ճանփով, մէջնեկը՝ մէջի Ճանփով ու պստիկը՝ ներքի Ճանփով։ Գնում է պստի աղրէրը ու Ճանփէն բռնում է, վուր մէ տեղ ճրեք գիւ կայ, ինչոր փայ են անում ու կռվում են։ Խ՚վոր տեսնում են սրան, ասում են իրանց մէջը թէ՝ ալթամորթին խնլօք կու՚լի, արի, սրան հարցնենք։ Կանչում են ու ասում՝ այ, մենք ճրեք իմքին ունինք փայ անելու՝ մէ գդակ, մէ խալիչա ու մէ սուփրա, ամեն մէկն էլ իր հունարն (շնորհը) ունէ. գդակը վուր ծածկես, էլ չես էրեվա ուրիշներուն, խալիչէն թռցնում է, վուրդի ուզես տանում է. սուփրէն էլ՝ ինչ կերակուր էլ ուզես, էն սահաթին սարքծում է։ Էս տղէն վեր է կալնում, նետվանեղ է գցում ու վուրդևոր նետը վէր է ննգնում, ղրգում է գիւերուն էնդի ու ասում թէ՝ օվոր ինձ մօտ առաջ առաջ գու՚քայ, գդակը նրան կու տամ, օվոր նրա էգնէն՝ խալիչէն ու օվոր վերջը՝ սուփրէն։ Էտէնց էլ անում է, գցում է նետվանեղը ու հանց գիւերը վազում են թէ չէ, էս տղէն ծածկում է գդակը, վր կալնում սուփրէն, նստում խալիչի վրայ ու թռչում, գնում իր մէջնեկ աղրուր մօտ։ Տեսնում է, վուր նա հէքիմ է դառե, գլխաւոր հէքիմ։ Խ՚ծում էրկուսնեվէտ նստում են խալիչի վրայ, գնում մենձ աղրուր մօտ։ Տեսնում են, վուր նա զրբաց է դառե։

Գիր են բաց անել տալի ու խմանում են, վուր էն աղջիկը շատ հիւանդ է ու թէ մէ կէս սահաթ ուշ հասնի հէքիմը, հոքին կու տայ։ Գանի աղբէրը նստեցնում է սրանցը խալիչի վրայ ու տանում աղչկայ մօտ։ Հիւանդը խոխոռում է էլի։ Հէքիմը դեղ է տալի աղչկան ու լաւացնում։ Հիմի, ձեզ իմ հարցնում՝ վո՞ւր աղբուրը կու ննգնի էն աղջիկը»։ Էլի գ՚ալմաղ՚ալ է ննգնում, չին կանացի խմանա. վուրն ինչ է ասում, վուրն ինչ։ «Իժում աղջիկը թէ՝ «հէքիմին՝ իր հէքմահախը, գըրացին՝ իր գիր բաց անելու հախը. աղջիկը պստիկ աղբուրն է հախ, չունքի նա վուր իր խալիչով չէր տարի, վունց գըրացն ու վունց հէքիմը չէին կանայ հասնի էն աղչկան ու լաւացնէին»։ Գուրգն էլ էնդ՚անց թէ՝ բաս դուն էլ մեր տղէն ես հախ։

Թաքաուրն ուրախանում է, օխտն օր ու օխտը գիշեր հարսնիք է անում, փսակում է իր աղչկան էն տղի հեզ։ Ի՛փոր Նորահարսն ու Նորափեսէն մտնում են քնելու օթախը, տղի ննգերը չէ հեռանում էնդ՚անց։ Նորափեսի չիգըր գալիս է, ամա էլ խաթրու բան չէ ասում։ Քնում են, ամա ննգրուչ քունը չէ տանում։ Քնած ժուգը աղչկայ բերնեմէն օցիր է դուս գալի. տղի ննգերը կոտորում է, աղլուղն (Թաշկինակ) անում, պահում։ Մէկէլ էքսը թաքաուրին խաբար է գնում, թէ Նորափեսէն կենթանի է։ Թուրմէ քանի չէր էսէնց փսակել է թաքաուրն իր աղչկան ու փսակի մէկէլ էքսը աղջիկը կենթան է ըլում, տղէն մեռած։ Շատ ուրախանում են։

Անց է կենում ժամանակ, վերջը էս տղէն ուզում է գնա իրանց տուն։ Թաքաւուրը բարցում է բեռնիրը ամեն բարութէնով ու Ճանփու դնում։ Ի՛փոր գնում են, հասնում են վուրդգեր գուրգն էր պատահի. գուրգը թէ՝ ինձ թողէք, գնամ իմ տեղը։ Թողնում են։ Իժում սրանք հասնում են վուրդղեր էն ննգերն էր ռաստ էկել։ Նա թէ՝ ա՛յ մենք էստի ննգեր դառանք. արի, փայ անենք մեր Ճարանը։ Ամեն բան փայ են անում, մնում է աղջիկը։ Վեր է կալնում տղի ննգերը չուրս բհեր է ցցում գեղնումը ու էն աղչկայ ձեռներն ու վուտները գ՚ախմ կապում բհերներու վրայ, ու թուրը հանում, վրայ բերում վէէն, թէ՝ սրան էլ պիտենք կէս անել։ Վրայ Բեեք չէրն էլ վուր վրայ է բերում թուրը հարբ ու հուրբով, էս

*աղջիկը շատ վախենում է ու ահեմէն օրցկում է, գնի բռով ացիր է վէր ածում քնրնեմէն: Խժում աղի ընգերը շանց է տալի աղջկով կարգած ացերը: Աղջիկը լաճնում է խոտան ու արցակ խաղում. Տղի ընգերը թէ՝ ես էս էի ուզում, վուր դուն ազատվիս ու բախտաւորվիս. դիփ էլ քեզ՝ զինութն էլ ու աղջիկն էլ, ինձ պէտք չէ: Ես էն ոսկէ ձուկն իմ, վուր ինձ հէրտ վուր բռնից, դուն ինձ ծովը գցեցիր, ազատեցիր: Ասում է ու ծովը ընգնում.*

*Տղէն մնում է տէղն ու տէղը սառած ու երան երան ասում՝ բարութին արա, ջուրը գցէ. ձուկը չիմանայ, Աստուած կու իմանայ. Չարն էնդի, բարին էստի.*

---

## 9.

### ՌԱՇԸ, ԱՆ ԹԻՒԱՈՐԻ ՀՐԵՂԷՆ ՁԻՆ *)

*Ըլում է, չէ էլի, մէ չանգլապան* (կարթով ձկնորս) *է էլի. Աուչի կնիկը վուր մեռնում է, վրայ էրկու կնիկ է ուզում: Առջի կնգամէն երեք աղջիկ է ունենում, դէդիկվուլը* (մօրու) *չէ էլի սիրում իր խուրթ աղջկերանցը: Մարթը թուրմէ ձուկն է էլի բռնում ու էնգով կառավարում իր օղլուշաղը ու ամեն օր թուրմէ հինգ ձուկն է էլի բռնում, գլխունի համա մէ-մէկի. Դէդիկվուլը իր մարթուն թէ՝ սայ էս երեք աղջկան վուր չունենանք, էս հինգ ձգնեմէն էրկուսը մենք կ'ուտենք ու երեքը կու ծախենք, փուղ կու շինենք: Մէկ-էրկու ու էս մարթու զահլէն վուր գնում է* (ձանձրանալ), *մէ օր վէր է կալնում իր աղջկերանցը ու տանում կորցնելու: Տանում է սրանցը մէ բացը սարի վրայ ու մէ կծիկ է տալի, թէ՝ «էս կծիկը գլորեցէք, կ'օսէ, ու վուրդիէոր կանգնի, էնդի մէ մինձ խնձուրի*

---

*) Այս հէքիաթը ունի նմանութիւն 6-րդ «Երեք խուրթ աղջիկ» մակագրով հէքիաթին.

ծառ կայ, հիւսի խնձուրնիք ունէ էն ծառը, վուր ուտելով չիք կշտանայ։ Գլորում են կծիկը. գնում է գնում ու հիռու մէ խուրը ձուրի մէջն է ննգնում, վուր խսկի մարթու վուտը չէ էլի դիբչում էնգի։ Հէրը թողնում է նրանց ու յիդ գալի տուն. ամա էն օրվա-մէն դէնը ճրիք ձգան մաղխար (փոխանակ) էրկուսն ամել չէ էլի բռնում.

Ճրիք աղջիկը ձուրումը զուրթ գթնում են խնձուրի ծառը. կերել են ու ճիփոր խնձուրը հատնում է, մնում են քաղցած. Քաղ-ցածութինը վուր սրանցը շատ նիղացնում է, վիբչը վիճակ են գցում, ումնոր վիճակը ննգնի. կ'ուտէ, նրան պիտինք ուտի։ Վիճակը ննգնում է պստի քվիրը. Նա թէ՝ «չլաւ կու՚կի, ամա մէ պստի համփիրեցէք, գլուխս քթվեցէք». Քվիրտիքը գլուխը քթվում են էլի ու ինքը մատով գեղինը փորփրում. Փորում է, փորում ու վիբչը մէ քանի հատիկ նուշ ու քիշմիշ է գթնում. Հանում է, տալիս է իր քվիրտիրանցը, ուտում ու էլ պստի քվիրը չին սըպանում. Էն փորած տիղը խուրնացնում են ու թուրմէ նրա տակը թաքաւուրի թաւխլէն (ախոռ) է ըլում ու թաքաւուրի ձիաններուն նուշ ու քիշմիշ են էլի ուտեցնում. Դէհվէր է էլի գնում պստի քուրն ամէն օր, գի-վիր բերում փիշով (բդանցք) նուշ ու քիշմիշն ու էտով ապրում. Թաքաւուրը վարժարդ. է անում, վուր ձիանիրը լղարում են (նիհա-րել) ու բարգանում է, թէ էրեվում է ձիաններու նուշն ու քիշմիշը գողնում ին, չիք ուտեցնում օրինաւոր. Ձիապաննիրը զ'արաւուլու-թին են քաշում ու տեսնում, վուր օճորքեմէջն (առաստաղ) մէ ինչոր աղջիկ դէհվէր էկաւ. փիշխեքը լըցրուց նուշ ու քիշմիշով ու ուզում է գիվիր գնա. Վրայ են ննգնում սրան, հա բռնում, տանում թա-քաւուրի մօղ. Թաքաւուրը հարց ու փուրց է անում, թէ ճվ իս, ինչ աղջիկ իս. Նա էլ ասում է թէ՝ մինք ճրիք քուր ինք ու իրանց գլխին անց կացածը պատմում է. Բերիլ է տալի թաքաւուրը նրա էրկու քվիրն էլ ու ուզում է սըպանիլ տա. Պստի աղջիկը թէ՝ «ինչի՞ իս մեզ սըպանում, մինք ճրիքս էլ շնուրք ունինք՝ մինձ քուրս հիստի հաց թխիլ գեդէ, վուր մէ թխելումը թխած հացը վուզդ զ'օշունին (զորք) կու հերիք գայ. միշնիկս հիստի խալիչա (գորգ)

ծառ կայ, հէստի խնձուրները ունէ էն ծառը, վուր ուտելով չէք կշտանայ։ Գլորում են կծիկը. գնում է գնում ու հեռու մէ խուրը ձուրի մէջն է ննգնում, վուր իսկի մարդու վուտը չէ էլի դիպչում էնդի. Հէրը թողնում է նրանցն ու յէտ գալի տուն. ամեն էն օրվա-մէն դէնը երէք ձգան մաղխար (փոխանակ) էրկուսն ատել չէ էլի բռնում.

Իրէք աղջիկը ձուրումը զուրթ գթնում են խնձուրի ծառը. կերել են ու երկու խնձուրը հատնում է, մնում են քաղցած. Քաղցածութենը վուր սրանցը շատ նեղացնում է, վերջը վիճակ են գցում, ումնոր վիճակը ննգնի, կ'ուտէ, նրան պէտինք ուտի. Վիճակը ննգնում է պստի քվերը. Նա թէ՝ «լաւ կու՞լի, ամա մէ պստի համփերեցէք, գլուխս քթվեցէք»։ Քվերտեքը գլուխը քթվում են էլի ու ինքը մատով գեղինը փորփրում. Փորում է, փորում ու վերջը մէ քանի հատիկ նուշ ու քիշմիշ է գթնում. Հանում է, տալիս է իր քվերտերանցը, ուտում ու էլ պստի քվերը չին սըպանում. Էն փորած տեղը խուրնացնում են ու թուրմէ նրա տակը Թաքաւուրի Թաւլէն (ախոռ) է ըլում ու Թաքաւուրի ձիաններուն նուշ ու քիշմիշ են էլի ուտեցնում. Դէվէր է էլի գնում պստի քուրն ամեն օր, դի-վեր բերում փեշով (բղանդը) նուշ ու քիշմիշն ու էստով ապրում. Թաքաւուրը վարժուրդ է անում, վուր ձիանները լղարում են (նիհա-րին) ու բարգանում է, թէ էրեվում է ձիաններու նուշն ու քիշմիշը գողնում էք, չէք ուտեցնում օրինաւոր. Ձիապանները զ'արաւուլու-թեն են քաշում ու տեսնում, վուր օճորքեմէն (առաստաղ) մէ ինչոր աղջիկ դէվէր էկաւ. փեշերքը լեցրուց նուշ ու քիշմիշով ու ուզում է դիվեր գնալ. Վրայ են ննգնում սրան, հա բռնում, տանում Թա-քաւուրի մօտ. Թաքաւուրը հարց ու փուրց է անում, թէ ով ես, ինչ աղջիկ ես. Նա էլ ասում է թէ՝ մենք երէք քուր ենք ու իրանց գլխին անց կացածը պատմում է. Բերել է տալի Թաքաւուրը նրա էրկու քվերն էլ ու ուզում է սըպանել տա. Պստի աղջիկը թէ՝ «ինչի՞ ես մեզ սըպանում, մենք երէքս էլ շնուրք ունենք՝ մենձ քուրս հեստի հաց թխել գէդէ, վուր մէ թխելումը թխած հացը վուղջ զ'օշունեն (զորք) կու հերեք գայ. միջնեկս հեստի խալիչա (գորգ)

գործիլ գեղջ, վուր քու գ'օշունը դիփ միանայ վրէն կու տեղաւորվի ու էլի կէսը ցեղ կու ծայվի. Իս էլ օսկէ քօշրաուր (ցորնը, քանդրալ ունեցող) աղայ ու աղջիկ կու բերիմ»։ Թաքաւուրը թէ՝ էտունք դիփ գրուստ է, բաս չիմ սըպանի։ Մինձ ու միջնեկը շանց ին տալի իրանց մարիփաթը (շնորհք) ու Թաքաւուրը փառկվում է պստի աղջկայ վրայ ու նրա քվիրտերանցն էլ իրա մօտ պահում իր պալատումը։

Տարին անց է կենում ու տարվայ գլխին Թաքաւուրի կնիկը պառկում է, էրկու վուրթի է բերում՝ մէ աղայ, մէ աղջիկ, էրկուսն էլ օսկէ քօշրաուր։ Քվիրտէքը խօսկ ին կապում, տատին իրանց կուռը գցում. օսկէ քօշրաուր աղին ու աղջկան մէ պստի գ'ութով (արկղ) ջուրն ին գցիլ տալի ու նրանց տեղը էրկու շան լակոտ դնիլ տալի։ Թաքաւուրը վուր իմանում է, թէ իր կնիկը շան լակտընիր է բերի, բարգանում է, կնգան պալատեմէկն դուս անում ու մէ խէչմէրուկ (ճանապարհի խաչմերուկ կից) ճանփի վրայ կիսատ թաղել տալի ու հրամանք անում, վուր ամեն անց ու դարց անող էրեսին թքէ։ Թաքաւուրի քվիրէքը կի մնում ին սարաէրումը (պալատ) փառքի ու պատւի մէջը։

Տանում է ջուրը էն գ'ութին, տանում է ու մէ տեղ ափին դէմ է ննգնում. Թուրմէ էնդի մէ ծիր Ճքնաուր մարթ է ըլում, աշխըրքեմէկն ձեռը վի կալած. Սա վուր տեսնում է, գ'ութին դուս է քաշում. բաց է անում, տեսնում է, վուր մէջը նուր ծնած էրկու էրեխայ կայ օսկէ քօշրաուր։ Փառք է տալի Աստուն, վուր սրանք մահեմէկն ազատվում ին. Հէնց էլ Աստուն թէ՝ արժ իս սրանցն Ենչ պիտիմ անի, վունց պահիմ։ Նրա կացած տեղը թուրմէ մէ հարսնա (վայրենի) տեղ է ըլում, վունչիչ չէ էլի գթնվում. Էս խօսկի վրայ Աստու հրամանքով էս Ճքնաուրին էրկու ծիծ է ըլում ու էն էրեխանցը ծծով պահում. Էրեխէքը մինձանում ին, դառնում ին տասնու օխտը տասնուութը տարեկան. Էս Ճքնաուրի համբրած օրն էլ գալիս է, վուր պիտի մեռնի էր. Կանչում է էն էրեխանցը, օխնում, թէ՝ իս մեռանում իմ, դուք մնք վախենա. մէ ջոխի է տալի նրանցը, թէ՝ էս ջոխին կու տանիք, կէհաք-կէհաք ու վիրչը մէ մինձ քար

կու տեսնէք. Ճրէք չէր խփեցէք էս չոխով, էնդ'անց մէ ռաշ կու դուս գայ ու ինչոր ուզէք, նա կու կատարէ.

Էնէնց էլ ըլում է. Ճգնաւորը մեռնում է, թաղում են, տանում են չոխին, տեսնում են էն մենձ քարը, խփում ճրէք չէր ու թամքած ռաշը դուս գալի. Նստում են սրանք ռաշի վրայ ու գնում. Թուրմէ ռաշը գետնի վրայ չէ էլի ման գալի, հրեղէն թեւաւոր է ըլում ու գետի ճրգնքումն է էլի թռչում. Տանում է, տանում ու նրանցը իրանց հօր ճրգերն է հասցնում. Կանգնում է, նրանց համա տուն շինում, կարքում, սարքում ու ինքը ուզում է գնայ, ամա գնալեմէյն առաջ ասում է տղին թէ՝ իմ մազը գզէ ու ճփոր մազս կրակ տաս, էն սահաթին կու սաղծվիմ. Ասում է ու թռչում, գնում. Խաբարը հասնում է թաքաւորին, թէ էսէնց-էսէնց էս քաղկումը մէ խամ աղջիկ ու տղայ են էկել, քաղկեմէյն դուսը. հեստի սիրուն են, հեստի սիրուն, կ'ասիս աստղի կտուր ըլին. Թաքաւորը կանչիլ է տալի էն տղին իր պալատը ու վուր տեսնում է, շատ հաւնում ու ասում, վուր ամեն օր իրա մօտ գնայ պալատը. Չիգարն (քարդ) իմանում է, վուր իր վուրթին է. Սա էլ թուրմէ ամեն օր գնում է թաքաւորի մօտ ու անց ու դարց աննելիս խէշմէրուկ Ճանփի վրայ թաղած իր գէգին թքում, չունքի թաքաւորի հրամանքն է ըլում.

Էրկու քվիրտիքը վրայ են ննգնում, վուր էստի մէ բան կայ, չունքի տեսնում են, վուր էս տղէն օսկէ քօչրաուր է ու ուզում են մէ թահարը նրան փչացնիլ տա. Կանչում են իրանց պառաւ տատին ու խնդրում, վուր էն տղի գլխին մէ բան բերէ, թէ չէ, ծէրը կու բաց ըլէր, թաքաւորը կու իմանէր ու իրանցը կու կորցնէր. Տատը հարցնելով-հարցնելով գթնում է էն տղի տունը, տեսնում է նրա քվիրը ու սատանութէնով խօսում հետը. Թէ՝ էս ինչ է, կ'ասէ, էստի ձիր ապրելը. ափսոս չէ՞ք, էսէնց սիրուն ըլիմ ու էս թահար խեղճ ապրէ՞մ. Քու աղբուրն ասա, կ'ասէ, փլան-փլան ճրգրումը ճրէք դեւ կայ, նրանց առջեւը մէ շամչրաղ (յակինթ) կայ, մէ պլպլում է, մէ պլպլում. վուր սաղ աշխրքին լուս տալի. էն շամչրաղը վուր քու Ճակտին չըլի, բաս դուն ինչացմու իս էս

թվիր սիրտը շատ ուզում է էն շամչրաղը ու աղբուրը խնդրում,
վուր իր հաժա բերէ։ Աղբէրը վեր է կալնում, ռաշի մազին կրակ
է տալի, գալիս է ռաշը ու խմանում է, վուր շամչրաղն է ուզում
բերի ադէն, ասում է թէ՝ շատ դժար է, կ'ասէ, նրա բերելը, չունքի
ճրէք դև առաչիններուն դրած ունին ու թէ մէ օմքին նրանց կուռն
անց կինեայ, վայ նրա միգիլը, դևի թիքա-թիքա (մաս-մաս) կ'անին.
կու տանիմ, կ'ասէ, թուշելով ու քու մարիփաթն (շնորհք) է, թէ
կանաս, ճիփոր ճս նրանց միչովն անց կացնիմ, մէկբաշ թացնիս շամ-
չրաղը։ Տղէն նստում է թէ չէ ռաշի վրայ, ռաշը թռցնում ճը-
գինքը թուչունքի պէս ու թուրմէ ճիփոր հասնում է, էն դևերը
քնած ին ըլում, շամչրաղն առաչիններուն դրած։ Տղէն մէկբաշ ձի-
էմէն քաշ է ննգնում ու թացնում շամչրաղը։ Դևերը էս ձէնի
վրայ զարթնում ին ու վուր տեսնում ին շամչրաղը չըկայ, էղնէն
ին ննգնում, սար ու ձուր գլխի քար ու քանդ անում, ամա վունչիչ
չին կանացի անի, չունքի նրանք ճրգնքումն էլի թռչում։ Տանում
է ադէն, տալի շամչրաղն իր թվիրը ու էն օրը թաքաւուրի մօտ չէ
գնացի. մէկէլ էքսը վուր գնացել է, թաքաւուրը հարցնում է թէ՝
ինչի՞ էրեկ չէկար. սա թէ՝ գլուխս ցաւում էր, էնդուր։

Էն էրկու քուրը վուր տեսնում ին ադին էլի սաղ-սալամաթ
(ողջ-առողջ) ետ էկած, էլի զրգում ին պառաւ տատին, վուր մէ թա-
հարը նրան կորցնէ։ Գնում է տատը էլի էն աղչկայ մօտ թէ՝ «էտ
շամչրաղն ինչ է. փլան-փլան տեղը մէ հրեղէն սուփրա (սփռոց)
կայ, էն վուր բերել տաս, էլ ինչ բան չըննիլ, էլ ինչ նեղանալ. ինչ
թահար կերակուր սիրտդ ուզէ, ամեն բան մէչը կու՚լի»։ Քուրն
էլի աղբուրը խնդրում է, վուր էն սուփրէն բերէ։ Տղէն էլի կրակ է
տալի ձիու մազին, գալիս է ռաշը ու խմանում, վուր էն հրեղէն
սուփրէն է ուզում բերի. ասում է թէ՝ անկարելի է նրա բերելը,
չունքի օխտանասուն դևի ձեռին է. թէ նրանց ձեռը ննգնիս, թոզ
(փոշի) ու թափրախա (հող) վեր կ'անին։ Տղէն վուր շատ խնդրում է,
խժում նա թէ՝ ճս թուշելով կու տանիմ ու թէ կանաս, քաշ ննգճ
զուն ու թացրու սուփրէն, ճիփոր դևերու մէչ տեղն ըլիմ թռչում։
Նստում է ձին, թռչում. հանց վուր էն դևերու մէչ տեղը անց է էլի

կացնում, տղէն մէջքաշ ձիւէմէն քաշ ննգնում, ձեռը տալիս, սուփրէն թացնում, տանում։ Դեւերը վազում են էգնէն, Ճանփէն ամեն բան քանդելով-քանդքնդելով. ամա նրանցը վռւրղ՛անց կու հասնէին։ Մէ-կէլ էքսն էլի գնում է տղէն թաքաւուրի մօտ. նա թէ՝ ինչո՞ւ էրեգ չէկար. սա էլի ասում է թէ՝ գլուխս ցաւում էր, էնդուր։

Տեսնում են թաքաւուրի քեֆնիքը, վուր էլի պըծել է տղէն, կանչում են պառաւ տատին, վուր աւելի հէռու տեղ ղրգէ, անդի-կոր անէ տղին, թէ չէ բանը բանեմէն անց է կենում։ Գնում է տատը էն աղջկայ մօտ ու ասում թէ՝ էս դիփ լաւ, ինչոր ունիք, ամա ձիզ մէ բան էլ է պակաս. փլան-փլան տեղը բաղը սարի վրայ կօշկումը (աշտարակ) մէ սիրուն աղջիկ կայ, անունը Գօզալ, նա վուր քու հարսը ըլլի, ինչացմո՞ւ էք։ Ասում է աղբուրը, վուր ան-պատճառ էն աղջկան բերէ։ Կըակ է տալի տղէն ձիու մազին. գա-լիս է ռաշը ու վուր իմանում է նա, թէ Գօզալին է ուզում բերի, ասում է թէ՝ էս բանը կի անկարելի է, վունչչով չի ըլլի, չունքի զուլթ է, ես կանամ տանի քեզ նրա կօշկի մօտ. ամա կօշկը էրկաթէ գռներով կողպած է ու օվոր գնում է նրան ուզելու, պէտի սանդխա-ներով դեւերը գնայ. հանց վուտը դնում է սանդխտի մէ վուտի վրայ, կանչում՝ Գօզալ, նա ձէն է տալի՝ չօռ. (ցաւ) ու գնացողը ինչկլի ծնգնէրը քար է դառնում. վուտը վուր դնում է վրայ էրկու վուտի վրայ, կանչում՝ Գօզալ, նա էլի ասում է՝ չօռ ու ինչկլի բօղազը քար դառնում ու իվոր վրայ իրեք վուտի վրայ է ուզում վուտը փոխի ու ասում՝ Գօզալ, նա էլի ասում՝ չօռ ու գլուխն էլ քարանում ու նրա կօշկի բոլորի չուրչը թաքաւուրենիր տախս, նրանց զ'օղուննիր տախս, դիփ քարացած կանգնած են։ Տղէն, թէ՝ պէտս տանի, ձիւը չէ վի կալնում. Թռչում է ռաշը ու հասցնում էն կօշ-կին։ Տեսնում է տղէն, վուր զուլթ դիփ քարացած մարթիք են կանգնած նրա բոլորի չուրչը։ Տուն է գնում կօշկումը, հանց վուտը դնում է սանդխտի վրայ, սա կանչում է՝ Գօզալ, ձէն է գալի՝ չօռ. տղի վուտնիրը քարանում է. վրայ էրկու վուտի վրայ էլի սա կանչում է՝ Գօզալ, նա ասում՝ չօռ ու ինչկլի բօղազը քարանում ու վրայ իրեք վուտի վրայ վուր դնում է վուտն ու կանչում՝ Գօ-

գալ ու աղջիկն էն-էն էր ուզում է էլի թէ ասի՝ չոռ, մէքաշ էն ճրնատուրի ազատկով ու Աստու հրամանքով հրեշտակը սրան մէ սիլլա (ապտակ) է խփում, թէ՝ վուր ուզում ես ասի՝ չոռ, մէ մատիկ էլ արա, թէ ումն ես ասում է։ Դուրթ աղջիկը մատիկ է տալի աղին, տեսնում է վուր մէ սիրուն օսկէ քոշբատուր ադայ է ու էլ չէ ասում՝ չոռ։ Տղին զիվիր է տանում իրա մօտ ու շատ սիրում մէկս մէկու։ Ամա բանն էն է, վուր աղէն ուզում է էլի նրան էնդ'անց տանի իրանց տուն. աղջիկը թէ՝ չի ըլի, էնդ'անց դուս գնամ թէ չէ, էն սահաթին էս իմ թիլիսմով (յուռութք) քարացած մարթիքը զիվի կու կենդանանան ու միզ ծվիկ-ծվիկ կ'անին։ Տղէն, թէ՝ ռաշ ունիմ ու քիզ զիվի թռչելով կու տանիմ։ Հանց աղջկան աղէն ռաշով թռցնում է, էն քարացած մարթիքը մէքաշ կենդանանում են ու գոռում-գոչումով վրայ թափում կօշկին, քար ու քանդ անում ու գժւում ու պռճոկում էնդ'անցօրէն։

Գողալին բերում է աղէն իր քվիր մօտ ու սա չունքի ջաղուրազ (կախարդ) է ըլում, վալ (ճմայք) է բաց անում, իմանում է ու պատմում սրանցը, վուր սրանք էն աշխարքի թաքաւուրի վուրթիքն են ու խրատում է աղին, վուր թաքաւուրին մեծրէ իրա մօտ ճաշի։ Մէկէլ էքսը գնում է աղէն թաքաւուրի մօտ ու Գողալի խօսկով թաքաւուրի կնդալ ու իր գէզի էրեսին չէ թքում ու թաքաւուրը վուր իմանում է, բարգանում է, թէ ինչի՞ հրամանքս չես կատարի. նա թէ՝ ինչպէս կարելի է, վուր վուրթին իր գէզին թքէ։ Թաքաւուրը թէ՝ ինչ գէզա, ինչ ես ասում. նա թէ՝ էքուց միզ մօտ ճաշին համեցէք ու ճաշէն էզնէն կու իմանաք։ Թաքաւուրը չէ էլի գնում ջէր ու վիրշը իր նազիր-վէզիրով օէլր անելով ուզում է գնա. ամա ինչ է տեսնում՝ իրա պալատեմէն կցած ինչկլի էն աղի տունը զիվի զար վարշա վիխանդազ (փառց) է էլի զցած, աչ ու ձախ ծառեր տնգած թահար թահար ծաղկներով ու թռչունքները վրէն ծլվլում ու շարքով գ'ուլուղչիքը կանգնած, ձեռնեններուն օսկով լիքը սինիք բռնած։ Թաքաւուրն արմնում է շատ։ Գնում է էն աղի տուն, տեսնում է, վուր իրա պալատեմէն լաւն է ու հանդերձէն էլ՝ թաքաւուրական։ Ճաշը վուր ուտում են, թաքաւուրը

հարցնում է՝ վերը տանեն. Նա չէ համոզվում, Գոզալը տանը գալի ու տանում թէ՝ էս տղէն ու աղջիկը քո վորթիքն էն, քու քենիքը կորցրին սրանցը ու քու կնիկը անմեղ-անգէթ (ի զուր) տանջվում է էսքան տարի. Էնդու համա էլ սա ասում թէ՝ ինչպէս կարելի է, վոր տղէն դէցին թէքէ. Էն սահաթին թաքաւորը փաթթվում է իր վորթիքերանցը, բերել տալի իր կնգան, մեղայ գալի նրան ու իր էրկու քենուն կապել է տալի էն սաչի կուչուն ու թրիվ-թրիվ տալով ջարթ ու փշուր անել տալի. Ջարն էնդի ու բարին էստի.

---

## 10.

## ՕՒՏՆ ԱՂԲԵՐՆ ՈՒ ՄԷ ՔՈՒՐԸ

Մէ մարթ ու կնիկ են ըլում. Թուրմէ սրանցը դէփ տղէրք է ըլում, աղջիկ չեն ունենում. Օխտը վորթինէվէտ տղայ են ըլում. Աղբրտիքը շատ սրտով ուզում են էլի, վոր Աստուծ նրանցը մէ քուր տայ. Սրանց դէգէն էլի թուրմէ պառավառաւուր է ըլում ու ճժոր պառկելու վախտը գալիս է, էս տղէրքը խնդրում են տատին (մանկաբարձ), թէ մենք կեճանք, կ'ասէ, դէմուդէմի սարի գլուխը ու ու մեզ նշնով իմաց արա թէ տղայ էլաւ, թէ աղջիկ. Թէ տղայ ըլի՝ մէ մենձ ջոխու վրայ սեւ փալաս կապէ ու շանց տուր մեզ ու թէ աղջիկ՝ կարմիր փալաս. Տատը չար հոգի կնիկարմատ է ըլում, սրանց օջախի լաւութինը չէ ուզում. Ծընդդանը պառկում է, աղջիկ է բերում, ամմա սա սեւ փալասն է շանց տալի տղերանցը.

Տղէրքը վոր իմանում են, թէ իրանցն էլի աղբէր է էլի, էլ տուն չեն ըեդ գալի, առնում են գլուխը, կորչում. Շատ են գնում, քիչ են գնում, հասնում են ուրիշ ճրգեր. Էնդի իրանց համա մէ կօշկ են շինում ու էնդի ապրում։ Ցերեկը գնում են էլի հուրսի ու իրիգնապահը գալի տուն, հուրսի միսն ուտում ու էտէնց ապրում.

Նրանց նուր ծնած քուրը մենձանում է ու վէց-օխտը տարե-

կան վախտը քուչումը իր տօլ (հասակակից) էրեխանց հետ խաղում. Սա թուրմէ մէ պստի շուն է ունենում՝ անունը Բուլղի, մէշտ իրա հետ է էլի մեան անում ու շատ էլ սիրում. Մէ օր ինչոր բանի վրայ խօսկ խօսկի է ընկում իր ընկերանց հետ ու օրթում է ուտում աղջիկը թէ՝ իմ Բուլղու արիւը գէդէնայ։ Հարեւնները վուր իմանում են, թէ՝ խուլս գլխիտ, օխտն աղբուրա թողէլ իս ու շան արիւն իս օրթում ուտում. Աղջիկը չէր իմացի թէ աղբրտիք ունէ, առաջի իմանալն էր. Հարցնում է իր հօրն ու մօրը ու իմանում է, վուր գուրթ օխտն աղբէր ունէ ու հօրէտա օխտը տարի է, վուր կօրած էն։

Աղջիկը վէր է կալնում իր շանը ու Ճանփայ ընգնում. ուզում է էլի վունցոր ըլի իր աղբրտերանցը գթնէ, չունքի նրանք իրա պատճառով էն գլխնէրը կօրցրի։ Գնում է, գնում ու Ճանփին ռաստ է գալի օրան մէ գիւի դէդա, մէ աժդահա կնիկարմատ, թուրմէ օխտը լեզը արճիճ բերնումը դրած մաստկի պէս ծամում է էլի։ Աղջիկը վուր տեսնում է գիւի դէդին, թէ՝ բարի լուս քէզ, դէդի ջան, չի ըլՄ, կ'ուտէ, սովրեցնիս, թէ իմ աղբրտիքը վո՞ւրդի էն. Նա թէ՝ բախտ ունէիր, վուր ինձ բարով տվիր, թէ չէ, քեզ համ-համ կուլ կու տէի։ Իժում սովրեցնում է թէ՝ էսէնց-էսէնց կեհաս փլան տեղը, էնդի մէ բացը սարի վրայ քու աղբրտիքը կօշկ ունին շինած ու էնդի են կենում.

Գնում է աղջիկն ու գթնում է էն կօշկը ու մէ թահարը մտնում է մէջը։ Տեսնում է, վուր պատերու վրայ թահար-թահար հուրսի մսեր է քաշ արած. Վէր է կալնում, տունն աւլում, խոտկում, կերակուրն էփում, սուփրէն սարքում ու ինքը թաքս կենում. Աղբրտիքը գալիս են, տեսնում են, վուր ամեն բան սարքած շինած է. զարմանում են ու փիքր են անում, թէ՝ հալբաթ մէ օմքին տուն է էկի էստի։ Վրայ էրկու օրն էլի էնէնց. Իժում պստի աղբէրը մէ օր թաքս է կենում կօշկումը, վուր իմանայ, թէ ով է գալի իրանց տուն. Տեսնում է, վուր պատեմէն դուս է գալի մէ աղջիկ, աւլում է, խոտկում է, սուփրէն սարքում ու ուզում է թաքս կենալ. Վրայ է ընգնում նրան տղէն ու բռնում է. Աղջիկը պատա-

մում է, թէ իրանց քուրն է։ Աղբէրն ուրախանում է, փաթթվում, պաչպչում։ Ի՛վոր մնացած վեց աղբէրն էլ գալիս են տուն, շատ ուրախանում են ու խմում էնենց մէջտի ապրում։ Աղբէրտիքը գնում են էլի հօրսի ու քուրը տանը մնում, սարքում ու կարգում ամէն բանը։ Աղբէրտիքը սրան ասում են, վուր տանեմէջն չը դուս գնայ մէնակ ու թէ օմքին գայ, չը տուն թողնէ։

Մէ օր թուրմէ աղջիկը կօշկումը մէնակ է ըլում, գալիս է էն դէւի դէզէն, դուռը դըղդղըկեցնում։ Սա չէ էլի դուռը բաց անում, խմում վուր շատ խնդրում է դէւի դէզէն ու իր գլուխը Ճանանչեցնում է, աղջիկը բաց է անում դուռը, տուն թողնում։ Թուրմէ էն աղջկայ աղբէրտիքը էն դէւի դէզի վուրթուն սըպանել են քանի տարի առաջ ու իրանց կօշկի մօտ թաղի. դէւի դէզէն աշխատում է էլի իրա վուրթու սըպանողներու ջիգրը հանէ. Աղբէրտիքը վուր գալիս են տուն, տեսնում են մէ խաղ (օտար) կնիկարմատ, ջըրեններուն գալիս է, նիզանում են. ամա իվոր քուրն ասում է թէ՝ սա մէ լաւ կնիկարմատ է, ինձ վրայ էլ շատ լաւութին ունէ, սա գթնել էրէտ ձիր կօշկը, թողնում են իրանց տանը. Դէւի դէզէն մէ ինչոր ջուր է տալի աղջկան, վուր տանէ ու իր տղի գերեզմնի վրայ անծէ. Աղջիկն անում է ու գերեզմնի վրայ համիմ է դուս գալի։ Էս համիմը քաղել է տալի աղջկան ու կերակրումը բանեցնում, Ի՛վոր օխտն աղբէրն ուտում են էն համիմով կերակուրը, դէւի մէջտի օխչըներ են դառնում։ Դէւի դէզէն փախչում է ու մնում է էն աղջիկը օխտը օխչըի մէջը։

Վէր է կալնում աղջիկը էն օխտն օխչարն ու իր շունը, դուս է բերում կօշկեմէջն ու գնում է էնդ'անց տափումն արծեցնելով. Շատ է գնում, քիչ է գնում, մէ տեղ թուրմէ ռաստ են գալի սրան թաքաւուրն ու իր նազիր-վէզիրները, հօրս են էլի անում. Թաքաւուրը վուր տեսնում է աղջկան, շատ հաւանում է, շունքի շատ սիրուն է ըլում. խնդրում է աղջկան, վուր իր կնիկ դառնայ. Նա չէ էլի անում, վէրջը կամք է տվի, ամա խնդրել է, վուր էն օխտն օխչարը ու շունը իր տանը պահէ պատւով. Թաքաւուրը խօսկ է տալի. Փսակվում են մինձ խարընիքով ու մէջտի ապրում էն օխչըներն էլ հետը։

Թուրմէ, մի սար, Թաքաւուրի մէ քօծը (աղախին) չան նման է ըլում իր աղջիկպարնին ու ուզում է նրան մէ օխն գա։ Մէ օր ախըր անելով տանում է քօծն իր աղջիկպարնին դիրա ծովը ու ծովի ափը վուր հասնում են, շուրերը հանում է, բընցում (դրթըել), գցում ծովը. ինքը հաքնում է նրա շուրերն ու գնում տուն։ Թաքաւուրի կնգան մէ մինձ ձուգը կուլ է տալի։ Քօծը գնում է գողընքումը պառկում, մինթամ հիւանդ է ու վուննչով չէ էլի լաւնում. Մէ օր սա կանգնում է Թաքաւուրի վրայ, թէ՝ պխտիս մինձ օխչարը մորթի, չունքի էն օխչընհրեմէն վախենում է էլի, վուր բանը չը բաց ըլի. Թաքաւուրը թէ՝ ախար դուն ասում էիր, վուր լաւ պահինք ու պահպանինք, հիմի ուզում իս մորթի՞։ Նա թէ՝ ինչ անիմ, ջանն ազիզ է, էրազումս տեսայ, ինչկի դրա պօլօճիկները (երինկա-մանը) չուտիմ խորված, չիմ պրծնի.

Օխչընները վուր իմանում են սրանց միտքը, թէ պխտին մորթի. գուս են թափում բղղալով դիրա ծովը ու ծովի ափին կանգնած բանչում։ Սրանց ձէնը վուր իմանում է ձգան փուրումը նրանց քուրը, նա էլ էնդ՚անց է բղաւում ու ձուգը քաշվում է դիրա ծովի դ՚րաղն ու պտուտ-պտուտ է էլի գալի։ Էնդ՚դա բղաւում են օխչըններն ու էն աղջիկը ձգան փուրեմէն, վուր խալխը մօդ է ըլում. Թաքաւուրին էլ իմաց են տալի էս խաբարը. Էն սահաթին նաւերով տուն են գնում ծովը, բռնում են էն ձուգը, մորթում, աղչկան հանում փուրեմէն սաղ-սալամաթ. Թաքաւուրը տեսնում է, վուր իր կնիկն է, տանում է տուն ու էն քօծին գցել տալի ծովը. Թաքաւուրի կնիկը պատմում է մարթուն իր գլխին անց կացածը ու էն էլ, թէ էն օխչընները իր աղբրտիքն են ու Աստու հրամանքով էն օխչընները դառնում են էլի մարթ ու իրանց քվեր հետ ապրում ու փառաբանութին տալի Աստուն.

Նրանք հասան իրանց մուրազին (խոժ);, դուք էլ հասնիք ձեր մուրազին.

Հեքիաթ, հեքիաթ պապս,
Դ՚աշղա *) քուռակ տակս.

*) (ճակատին սպիտակ նիշ ունեցող).

Մէկ անգուկ հազ չալանկոց,
Մէկ սերուն աղչիկ քամաքը.
Հա՛ գնամ ու հա՛ գնամ.

11.

ԲԱԽՏ

Ըլում են, չեն ըլում, օխտն աղբէր են ըլում ու իրանց կնգըգներանցով ապրում են էլի մէտեղ։ Թուրմէ սրանց բախտը խէտա կալած է ըլում. ինչքը ցանում են էլի, թէ ուրիշի համա մէկին քսան ու եառսուն է էլի գալի, սրանց համա հինգ ու վեցն էլ չէ էլի գալի ու էնէնց ամեն բանը։ Իժում իրանց մէչը փիքր են անում ու վճռում, վուր տան մենձութինը պտրի հարսին տան, յունքի ամէն թահար փորցում են ու բանը մինչա ձախ է էլի գնում։

Պտրի հարսը ընկալնում է մենձութինը։ Մէկ գամ սա փորցելու համա, գեչերը վուր սուն են գալի աղամարթիքը, ասում է նրանցը թէ՝ էքուց պիտիք մեր արտը հնձի. Թուրմէ չէր կանանչ է էլի արտը, ամա աղամարթիքը լսում են ու առաւտեհան վազ-վազ գնում են արտը հնձելու։ Պտրի հարսը նրանց գնալու էդնէն մէ օխքին է ղրգում, վուր տեսնէ, թէ զուրթ հնձում են, էլ չը թողնէ, ասէ, վուր պտրի հարսն ասաւ՝ էլ մէք հնձի։ Նրանք հընձելը ըսկսել են, թուրմէ ու էստով պտրի հարսն իմացել է, վուր նրանք լսում են իրան։ Իժում ասում է աղամարթկերանցը, վուր դուսը թէ մէ էնէնց անկի ննգնելու իմքին գլթնին, բերեն տուն, բազումը մէ քնջնումը մօղ անեն։ Մէկ աղբէրը մէ օր դուսը տեսնում է մէ սատկած պտրիկ օց, բերում է իրանց բաղի չափարի (ցանկ) վրայ գցում։ Պտրի հարսը մէկէլ էքսը, վունցոր սովրութին է ունեցել, շատ վաղ զուռ է գալի բաղը, տեսնէ թէ ինչ են բերի

ագամարթիքը։ Տեսնում է, վոր իրանց չափարի վրայ մէ սատկած օց է ննգած. Հենց վոր ուզում է մօդ գնա, մէրաչ Երգնքեմէն մէ լագլագ (արագիլ) գէվէր է Թռչում, վէր կալնում օցն ու բերնեմէն վէր է ննգնում մէ Թանգագին Թաքաւորական բոխմրաղ (մանեակ)։ Լագլագը Թռչում է, բոխմրաղն աղջիկը վէր կալնում, պահում ու օչովքին վունչինչ չասում։ Թուրմէ Թաքաւորի աղչկանն է ըլում էն բոխմրաղը, կորցրել է, լագլագը Թռցրել, տարել։

Թաքաւորը վուղչ իր Երգրումը մարԹիք է ման անում, պտուել տալի։ Ամեն տեղ հարցնում են, իմանում հերԹը գալիս է էս պստի հարսին։ Սա ասում է՝ Ես կու գԹնեմ։ Տանում են Թաքաւորի մօդ ու աղչիկը խնդրում է վոր՝ Ես կու գԹնեմ, կ՚ասէ, ձեր կորուստը, ԹԷ իմ խնդիրքը կու կատարես։ Թա՛քաւորը խոստանում է։ Պստի հարսը տալիս է բոխմրաղն ու խնդրում է, վոր Թաքաւորը հրաման անէ, վոր իր Թաքաւորութեանումը Երեք գիշեր օչով մում չը վառէ։ Թաքաւորը կատարում է խնդիրքը։

Պստի հարսը գալիս է իրանց տուն, օչովքին վունչինչ չէ ասում։ Իրիգնապահը օչովի տանը մում չէ վառվում. սա կի իրանց տանը չրաղդան (լուսաւորել) է անում ու ինքը չը քնում, դուռն էդնէն Թախ կենում։ Կէս գիշերին, Եփոր դիփունքը քնած են ըլում, տուն է գալի սրանց տուն մէ ծեր մարԹ. վուսը տուն է դնում, դէսն է մաիկ տալի, դէնն է մաիկ տալի ու յեդ գնում։ Մէկէլ էքսը էլի էնէնց մոմերով տունը չրաղդան է անում ու Թախ կենում դռան էդնէն։ Էն ծեր մարԹն էլի գալիս է, գնում է ինչկլի տախտն ու էլի յեդ գնում։ Վրայ Երեք գիշեր կի վոր տուն է գնում էն ծեր մարԹը, նստում է տախտի վրայ։ Պստի հարսը մօդ է գնում, բարովում, ԹԷ՝ էս վո՞րդի էիր, ինչի՞ մեր կուռը (կողմ) չէիր անց կենում, մեզ մոկահան էս արել։ Վուտները լվանում է, իրիգնահաց ուտեցնում ու գողինք գցում, մէչը պառկեցնում։ Առաւոտեհան վէր է կենում պստի հարսը, տեսնում է, վոր գողինքը գցած է ու մէչն օչով չը կայ։

Էն օրվամէն դէնը սրանց բախտը յեդ է գալի։ Ինչ ցանում են էլի, դիփունանցմէն սրանց համա շատ է էլի գալի. ինչ բանին

կպչում են էլի. մինչ աչողութիւն են ունենում: Օձակը գալիս է վուտի վրայ է կանգնում ու բախտաւորվում. Ու էս օխտն աղբէրը փրած են տալի Անձունն, վուր իրանց պստի հարսի շնուրքով աջողութիւն է տվի նրանց օձակին.

Անց է կենում ժամանակ. նրանց պստի աղբէրը մեռնում է ու պստի հարսի վուրդիէվրութէնի մէ տարին վուր լրվում է, վունցոր նրանց աղաթն (սովորութիւն) է էլի. տվել են նրան նրա փայն ու Խանփու գնում իրա հօրանց տուն: Նրա գնալն է ըլում ու սրանց օձակումը ամէն բանի թարսվիլը (գլխիվայր լինել), մէ խօսկով բախտը գնում է ու էլի վազուցվայ պէս գիփ ամէն բան ձախ է գնում ու յէղն ու յէղը աղկատանում.

Մէ օր թուրմէ վազ առաւոտհան մինչ աղբէրը դուս է գալի բագը, տեսնում է, վուր մինչ ձուն է էկէլ ու տանեմէջն ջէր օչով չէ դուս գնացի, ամա իրանց դռնեմէջն ձնի վրայ մարթու վուտի տեղերն է էրեվում. Զարմանում է, թէ՝ ախար ջէր տանը գիփ քնած են ու ճվ պխտի ըլի դուս գնացի իրանց տանեմէջն. էն վուտի տեղերու հըջի (հետք) վրայ գնացել է, գնացել է ու հասնում է իրանց պստի հարսի հօրանց տուն. վուտի տեղերն էնդի վերջանում է. Իմանում է, վուր իրանց տանեմէջն դուս էկողը բախտն է էլի, վուր իրանց պստի հարսի հէդ գնացել է: Պստի հարսի հօրանց տունը լցվում է ամէն բարութէնով. ամա իրանց բախտը գնում է ու գնում. Զարն էնդի, բարէն էստի.

---

## 12.

### ԳԻԺՆ ՈՒ ԽԵԼՕՔԸ

Ըլում են, չեն ըլում, էրկու աղբէր են ըլում, մէկը գիժ ու մէկը խելօք. Իրանց ճրգըրումը աչողութիւն չեն ունենում ու գնում են Խանփայ վուղ աշխատելու. ճանփին շատ քաղցում են, մըթ-

Նում է, տուն են գնում մէ ջաղաց։ Էնդի մէ պստի ալուր են մաղանում, գիժը մէ թաշկարն իրա համար հաց է թխում, ուտում, կշտանում ու գնում։ Խեչօքը մնում է էն գիշեր էնդի։ Գիշերը քունը չէ տանում։ Իմանում է, վուր գալիս են ջաղացումը թախ կենալու՝ դէլն, ադվէսն ու արջը։ Սրանք իրանց մէջը թուրմէ մառսամթ (գրոյց) են էլի անում։ Ադվէսն ասում է՝ ամեն մարթ էլ իրա ուրախութիւնն ունէ, ես էլ մէ տեղ մէ ուրախութիւն ունեմ. փլան (այս ինչ) տեղ մերուսը մէ ծառ կայ, էն ծառի տակը մէ մենձ մուկը բուն ունէ, մէջը մէ տապրակ ոսկի կայ. գնում եմ, էն ծառի ճուղկը կտրում ու մկան բնին խփում. մուկը դուս է գալի, բերում է ոսկիքն ինձ տալի. ուրախանում եմ ու էլի լեղ տալի իրան։ Դէլն ասում է՝ ես էլ փլան տեղը սուրսումը (ձոր) մէ օխչար ունեմ, ճակատին սիւ նշան ունէ, ես էլ էնդով եմ ուրախանում. էն օխչրի շնուքն էն է, վուր նրա չիգարը (լեարդ) քոռացած մարթու աճկերուն լուս կու՚տայ։ Իժում արջն է ասում թէ՝ փլան տեղ մէ ազրուսխանա կայ ազրով լիքը, օչով վունչինչ չէ իմանում, թէ էնդի ինչ կայ։ Առաւոտհման վաղ գնում եմ էնդի, ազրը լեղ քաշում, բաց անում էնդի թաղած ոսկով լիքը օխտը կարսի բերանը, ուրախանում եմ ոսկերու վրայ, էլի կարսները ծածկում, ազրը վրէն անում ու գնում եմ բանին.

Խեչօքը դիփ մեխանայ իմանում է էստունք ու մեկը պահում. Մէկէլ էքսը վեր է կենում, գնում է ջէր ադվէսի ասած ծառի մօդ։ Ճուղկը կտրում է, խփում է մենձ մկան ծակին, դուս է գալի մուկը, սա խփում է, մկանը սըպանում, ոսկիքը վեր կալնում ու տանում։ Իժում գնում է, գթնում է էն սուրսօն, չօրնին (ձորին) մէ օսկի է տալի ու առնում սիւ նշնով օխչարը։ Տանում է, օխչարը մորթում ու չիգարը հանում։ Իմանում է, վուր էնգ՚անցի թաքաւորի աճկերը լուսաւորվէլ է. գնում է էն չիգարով նրա աճկերը լուացնում։ Թաքաւորը մենձ բախշէշնիր (պարգեւ) է տալի ու հարցնում է, թէ՝ էլի ինչ ես ուզում։ Սա թէ՝ ուրիշ վունչինչ չեմ ուզում, փլան տեղը մէ ազրուսխանա կայ, էն ինձ բախշէ, էնդի տուն կու շինեմ ինձ համար կենալու։ Թաքաւորը տալիս է։ Ազրն իսակէլ

է տալի. Թաքուն օխտը կտրոփ օսկեքը գտրցկում է ու էնդի մինձ տնիր շինում ու մէջը կենում ամեն բարութենով լիւ։

Մէ օր Թուրմէ սա տան առջիւը մտն է գալի ու նրա գեժ աղբէրը փաղցած-ծարաւ գալիս է սրա դռան առջիւը օղորմութին ուզելու. Խելօք աղբէրը ճանչնում է իր գեժ աղբօրը։ Հարցնում է, թէ՝ էս վօնց էս դուն էսէնց շինացի. նա էլ պատմում է իր գլխին անց կացածը։

Գեժ աղբէրն էլ մեր է կենում, գնում էն ջաղացը, վուրդեղ խելօք աղբէրը շէնանալու ճանփէն գթել էր։ Գնում է, թախ կենում ջաղցումը։ Գալիս են էլի աղվէսը, գէլն ու արջը ու մասլահաթ անում։ Աղվէսն ասում է թէ՝ էսօր առուտեհճան գնամ, տեսնիմ, իմ մկանը սըղանել են ու օսկեքը տարի, ինձ Թողի տարէկուսած։ Գէլն էլ ասում թէ՝ իմ ուրախացնող սեւ նշնով օխչարը տարել են ուրօքէմէն, էլ չէ երեւում։ Արջն էլ թէ՝ աղբուսխանէս քար ու քանդ են արի, օսկեքը հանի ու մինձ տնիր շինի տեղը։ Էս վօնց է էլի, վուր գիւխուններս խարաբեն էլ աշխարք է ննգի. Հալբաթ էսար վուր խօսում էինք, մեզ անգաճ անող կէր։ Դէսն են ննգնում, դէնն են ննգնում, տեսնում են մարթու հոտ է գալի։ Գթնում են գեժ աղբուրը, դուս քաշում ու գզգզում, իրանց չիգրը (ոխ) հանում, թէ հալբաթ սա կու՛էր Թաքուն անգաճ անողը, վուր մեզ էսէնց մաղքուն արաւ (վնասել)։

---

## 13.

### ԽՂԲԱԼ (բաղդ) ԳՐՈՂԸ

Մէ գիւղումը մէ ռանչպար (երկրագործ) մարթ է ըլում. Վար ու ցան է անում, շատ չալիշ (ջանք) գալի, ամմա բախտ չէ ունենում, շատ պակաս է էլի գալի պտուղը։ Վուր տեսնում է, չէ ըլում, չէ աշողում բանը. Թողնում է տուն ու տեղը, գնում է իրանց

գիշերներն եղբայր գրողին պառկելու, փոքր բալքի (դուռը) նա բաց անէ սրա բախտը։

Գնում է, գնում ու ճամփին առաջ է գալիս սրան մէկ գէլ։ Հարցնում է սրան, թէ՝ ուր ես գնում։ Նա էլ ասում է.—Իմա փոքր եղբայր գրողի մօտ եմ գնում, մէկ իմ եղբայրն էլ իմացի, ասում է գէլը. հորէսա քանի ժամանակ է բախտս կապած է. փորթէնն էլ գնում եմ, փոքր սուրօին էլ մօտ եմ կենում, թէ մէկ ոխչար փախցնեմ, ուտեմ, շները փրայ են թափում, չեն թողնում։ Էս մարթն էլ խոստանում է գէլին։

Անց է կենում խէլիմ (բառալան) տեղ, մէկ ջուր է պատահում սրան ճամփին։ Զէ իմանում, թէ փունց անց կենայ ջրումը։ Մէ մինճ ձուգն է գալիս ջրի ափն ու խօսում էն մարթու հէդ, հարցնում է թէ՝ ուր ես գնում, ինչի՞ համար։ Նա էլ ասում է։ Ձուգն էլ թէ՝ բաս, փոքր գնաս, մէկ իմ եղբայրն էլ իմացի, թէ ինչի կու պըրծնիմ ես իմ գլխացաւեմէն։ Նստեցնում է էս ձուգը մարթուն իր մէճկին ու անց կացնում էնթի ափը։

Իժում առաջ է գալիս սրան գեղումը մէ վուրփեւէվէրի կնիկ-արմատ, թուրմէ չէն մարթու կնիկ է էլի, իր մարթու մեռնելու էգնէն էլ նրա դաղաստանը չէ էլի անց կենում, գեղցիքը զըզում են էլի։ Վուր իմանում է սա, թէ էս մարթը եղբայր գրողի մօտ է գնում, խնդրում է, փոքր իր բախտն էլ իմանայ ու յէդ գալիս ասէ իրան։

Էս ճանփորդը գնում է, վերջը գթնում է եղբայր գրողի տունը։ Տուն փոքր մտնում է, տեսնում է շատ թաճար-թաճար մարթիք նստոտած մնում են իրանց եղբայրն իմանալու համար։ Սա հարց ու փուրց է անում, թէ իր եղբայրը վո՞րն է։ Ցանց են տալի մէկ բէ-րանքսիզէր պառկած ծեր մարթ, թէ՝ սա է։ Ինչ հալով նրան զարթեցնում է ու հարցնում է կարգով ջէր իր եղբայրը, իժում գէլինը, ձգանն ու վուրփեւէվէրի կնգանը։ —Քու եղբայրն, ասում է էն մարթուն, էն է, փոքր քու տրան գլխումը կարսով օսկէք է թաղած, քանդէ, հանէ ու քու բախտն էլ է։ Վուրփեւէվէրու համա ասում է, թէ՝ գուզիս փոքր դաղաստանս անց կենայ, պէտս

մարթ ուզի։ Ջգան համա ասել է թէ՝ ուզում ես գլխիտ ցաւն անց կենայ, բերնումտ թանգագին ակը վուր ունիս, էն վէր գցէ ու կու պրծնիս։ Գիլի համա էլ ասում է, թէ՝ քու եղբալը մէ գիժ մարթ կու՚լի․ համց անենիս, բանէ ու կէ, էլ ձեռնեմէա մէ թողնի։

Նստունք գիժ վուր իմանում է, ռանչպար մարթը յեդ է գալի։ Առաջ տեսնում է Ճանփին էն վուրփիւլէրուն. սա ասում է նրա եղբալը․ վուրփիւլէրին թէ՝ արի, քիզ վրայ լաւ մարթ ումը կու Ճարիմ, քիզ վրայ կու փսակիլիմ. էնդ՚գա կարողութին ունիմ, վուր քիզ էլ է հերիք, ինձ էլ․ Նա թէ՝ ինչ իմ անում, ինչ գլխիս իմ տալի քու կաչնքը, չիմ ուզի։ Անց է կենում, գնում է, հասնում էն ջրին։ Ձուգը դուս է գալի, հարցնում իր եղբալը։ Էս մարթը վրէն նստում է, թէ՝ չէր առաջ դուս տալը, կ՚ասէ, էնթի ախը, իժում կ՚ասիմ։ Դուս վուր տանում է, մարթն ասում է։ Ձուգը թքում է, վէր է գցում էն անգին ակը բերնեմէն. Էս մարթը շպրտում է, դէն գցում, թէ՝ ինչ գլխիս իմ տալի, կ՚ասէ. Ես իմ եղբալն ունիմ։ Վերջը վուր գնում է, Ճանփին ռաստ է գալի էն գէլը։ Թուրմէ քանի օր քաղցածութենեմէն կլմփուցի տալով դէս ու դէն է ննգնում։ Էս ռանչպարը պատմում է կարգով, թէ եղբալ գրողն ինչ է տւի էն վուրփիւլէրու համա ու ինքը ինչ չուղար արի, իժում էն ձգան համա ու ինքը չէ մի կալի անգին քարը։ Վերջը գէլին թէ՝ քու բախտը, կ՚ասէ, մէ գիժ մարթ է, վուր ռաստ գայ, բանէ ու կէ։—Նստունք վուր իմանում իմ, ազբէր, չուղար է ալի գէլը մարթուն, տեսնում իմ, վուր քանի չէր բախտն իր վուտով դռանտ կանգնել է ու դուն փախել իս նրամէն, էլ քիզմէն գիժ մարթ վուրդի կանամ գթնի։ Էս ասում է, վրայ է ննգնում նրան, ծվլիկ-ծվլիկ անում։

## 14.

### ԱԹԱՄԱՎՈՒՐԹՈՒ ՄԷՋԸ ԲԱՓԱ (*երախտագիտութին*) ՉԸ ԿԱՑ

*Մէ մարթ մէ օր մերու մէչոկը անց կենալիս տեսնում է, վուր ծառերու տակեմէն ինչոր մուխ է դուս գալի։ Մօտ է գնում, թուրմէ մինձ կրակ է վառվում, էն կրակի մէջը մէ ինչոր գ'ուլթի (արկղ) կայ, կրակը կպէլ է, վառվում է ու մէջն ինչոր ծվում է։ Վուտը խփում է, գ'ուլթին հանում է ու մէչեմէն մէ օց է դուս գալի։ Օցը վաթթվում է էս մարթու շլնքին, ուզում է թուրմէ նրան խեղդի։ Էն մարթը թէ՝ ես քեզ կրակի մէչեմէն ազատեցի ու դուն ինձ խեղդում ես, Աստուծ կու վէ կալնէ։ Օցը թէ՝ հում կաթնակերի մէջը բաֆա (երախտագիտութին) չը կայ։*

*Քիչ անց է կենում մարթը, տեսնում է գալի մէ եզը, էս մարթը պատմում է նրան իր գլխին անց կացածը, տեսնէ թէ՝ ինչ կ'ասէ։ Եզը թէ՝ ես տաս-տասնուհինգ տարի գ'ուղուղ արի իմ տիրուջը, ջանս չէի խնայում, ամեն թահարը չալիշ էի գալի նրա համար. ամա հիմի վուր պառավեցայ ու բանել էլ չիմ կանացի, դուս է արի տանեմէն, գցի էս մերին. Ճիժ գիդէ վուր գաղանի կերակուր պիտիմ դառնամ էստի։ Ղուրթ է ասում օցը՝ աթամավուրթու մէջը բաֆա չը կայ. հուփ տու, օց ադրէլ։ Օցն առնլի հուփ է տալի ու էս մարթը վազէ վազ գնում է էնդ'անց։*

*Ռաստ է գալի մէ ձի։ Սրան է անում էս մարթը իր պատմութինը։ Ձին թէ՝ էտ ինչ ես արմնում. թաքաւուրի առաչի ձին ես էի. նրա թամբիլումն (ախոռ) իմ հատը չը կէր. տասը տարի աւել գ'ուլուղ արի նրան. ամա ծերոր պառավեցայ, դուս արին թամբլեմէն ու էսնց տափերումը ննգած արծում իմ. Ճիժ գիդէ ում կերակուր պիտիմ դառնամ։ Ղուրթ է ասում օցը՝ աթամավուրթու մէջը բաֆա չը կայ. հուփ տու, օց ադրէլ։*

*Էս մարթը վայ տալով գնում է, վուր մէ օմքնու էլ հարցնէ ու խժում օցը սըպանում է, թող սըպանէ։ Ռաստ է գալի մէ աղ-*

վէճու էս մարթը գլուխ էլ պատմում է իր դարդը: Նա փիքր է անում, փիքր է անում ու ծիծաղելով ասում թէ՝ ինչ էս ասում, էս վճինց կուլի, օձը վճինց կու մանէր էս պատի գ'ուլթումը. էս մարթն էլ ու օձն էլ թէ՝ Աստուած, էրգէնք, երդում-կըակն են ննջնում. աղվէսը չէ ուզում.—Արա մէ տեսնեմ, կ'օնէ, թէ էս պատի գ'ուլթումը էնող'գա օձը վճինց մտաւ: Օձը գէվէր է գալի, մանում է գ'ուլթին. աղվէսը մարթուն աճկով անում. ու էս մարթը մի կալնում, էն օձը սատկեցնում: Մնում են էս մարթն ու աղվէսը:

Էստ խօսնչումը թուրմէ թաքաւուրի աղէն հուրս անելով մօտ է էլի գալի էնթէնը: Աղվէսը հուրս անողներուն վուր տեսնում է, փախչում, մանում իր սորան (սոր, բոյն): Էն մարթը մօտ է գնում թաքաւուրի աղին ասում թէ՝ թաքաւուրն սպրանձ կենայ, էս սահաթին էս սրբունը մէ հեսաի աղվէս մտաւ, հեսաի մորթի ունէր, վուր ինչ ասիս, ամ էր: Էն սահաթին թաքաւուրի աղէն հրամանք է անում իր գ'ուլուղչիներուն, մտնի էն տալի աղվէսին սորումը: Էլ վուր մխին չէ կանացի գիմնա, դուս է գալի աղվէսն ու տանում էն մարթուն թէ՝ օվրը օմքնու լաւութին կ'օնէ, էս է նրա ջուղաբը: Դուրթ էր ասում օձը թէ՝ ադամամարդութու մէջը բարիք չը կայ: Բռնում են աղվէսին չնիրն ու սատկեցնում:

---

## 15.

### ԼԻԴԻ ԳԶՈՂ, ԼԻԴԻ ՄԱՆՈՂ ԱՂՋԻԿԸ

Մէ կնիկարմատ է ըլում, իր անչնուրք աղչկայ անունը դնում է՝ լիդի գզող, լիդի մանող, մէ օրումը համ (եւ) խնձող, համ (եւ) խնձուճը հանող: Էսէնց է վէր արի (ծուլանիկ) նրա անունը, վուր չուսա կանենայ մարթու տաս: Էնդ'անցնիքը լաւ գիտենում են աղչկայ մարիֆաթը (շնորհք) ու մօտ չեն էլի գնում: Մէ օր էս աղչկայ անունը վուր իմանում է մէ ուրիշ օւքցի (երկրացի) վաճառական,

երան-երան փիքր է անում, թէ՝ արի, էս աղջկան գ՚ուզեմ, տարէնը ճղ դէղէ քանի բարդաման (մեծ պարկ) բամբակ գզէ ու մանէ. Նա կու գզէ ու կու մանէ բամբակը ու Բս կու առնեմ, կու ծախեմ, մէ քանի տարումը մենձ գովլթի (հարստութիւն) տէր կու դառնանք։ Աղաչփում է էս աղջէն աղջկայ դէդէին թէ՝ աղջիկտա ուզում եմ. Դէդէն հարց ու փորց է անում, իմանում է, վուր էա մարթը լաւ կայ իր համա։ Կամք է տալի ու փառակվում են։

Մէ քանի շաբթվայ վրայ թուրմէ էս աղջէն ուզում է Ճանփայ ննգնի ուրիշ երգիր առուտուրի. զրգում է տուն էրկու-երեք հարուր բարդաման բամբակ, վուր ինչկէմ իր յեդ գալը կնիկը գզէ ու մանէ։ Մարթը գնում է ու էս աղջիկը բոյըրադնիրը (դրօշակ) վեր քաշում, գեփ քէփ անելու. էդնէն է ըլում ու բամբակի բարդանէքը անձեռ-տալ թողնում։ Մարթը գիր է գրում, թէ՝ փլան օրը գալիս եմ, էս աղջիկը հայ հարայն է ննգնում. Բաց է անում մէ բարդանէն, կէսին նստում է, մէ կռնեմէն գզում է, մէ կռնեմէն ջահրով (այնիպա) մանում։ Վուր քաղցում է, չէ մի կենում անգեմէն, գէ-գին խնդրում, վուր իմքին տայ ուտելու. Դէդէն փիքր է անում թէ՝ պանիր ու հաց տամ, պիտի մէ ձեռը բանդ ըլի, բանեմէն յեդ կու ննգնի, կ՚օնէ ու վեր է կալնում շորվա (բրնձից ջրալի կերակուր) է եփում, անում աղջկայ գլխին, վուր անձեռքծատալ ուտէ։ Թուրմէ էռէնց աղջիկը գզում ու մանում է էլի բամբակը ու գլ-խեմէն շորվէն վէր է էլի գալի բերանը, լիզվով լպստում ու կըլ-տանում։

Հենց էս աղջկայ գլխին օձորքումը (առաստաղ) սատանէն բուն է ունենում դրած ու նրա էրեխի բուգը (կոկորդ) ուռած է ըլում ու վունչչով չէ էլի լափում։ Սատանի աղջէն էնգ՚անց վուր տեսնում է էս աղջկայ գլխին շորվէն անում լպստելով ուտէին ու ձեռն ու վուստով բանիրը, մէրաշ սատնել փառակում է ու էա ծիծաղելու վրայ ուռուծիկը բէչում է, լաւնում։ Սատանէն էս վուր տեսնում է, շատ ուրախանում է։ Դէվէր է գալի, շնորհակալութին անում ու հարցնում է թէ՝ ինչ իք ուզում, վուր Բս էլ ձիզ համա կատարեմ։ Աղջկայ դէդէն փիքր է անում, թէ էստուցմէն դժար վախտ էլ ենի

կռանենամ, ասում է թէ՝ էս բարդաններու թումբակը մանած չենք. Էս աքլն ու էնդ'դա թամբկի մանվիլն ու շուլօէք (կարծ) գառնալը մէկ է ըլում. Էս աղջիկը ապասվում է բաններմէն ու ճխոլ մարթը գալիս է, ուրախ-ուրախ հանդիպում:

Փեսէն վուր տեսնում է, մինճ շնորակալութին է անում իր զոնկճին, վուր էս թահար շնուրքով աղջիկ ունէ. Մարթը կնգայ ճակտին պաչ է անում ու զոնկճին ասում, վուր մէ լաւ ճաշ հազրէ, փէփ անէնք. Լաւ քէփի վախտը նրանց սուփրի կշտին մէ օթիզ (սեւ բզէզ) է էլի անց կենում. Զոնքաճը ուստա կնիկարմատ է ըլում, վեր է կենում սուփրեմէն, օթիզին գլուխ տալի, թէ՝ էս վուրդի էիր, մամիգա (մօրաքոյր) ջան, էսզ'դա ժուգ մեր կուտք չէիր անց կենում. Փեսէն զարմանքով մտիկ է տալի, թէ էս կնիկն ինչ է ասում, հարցնում թէ՝ օթիզը վուրդ'անցի մամիգա է ձեզ. Զոնքաճը թէ՝ բաս չես գիդի, վուրթի. էս օխնած մամիգէս շատ բանըար կնիկարմատ էր, շատ բաներմէն էնքան պստկացաւ, էնքան պստկացաւ, վուր էսէնց օթիզ դառաւ. Մեր տակը էսէնց զ'ալրաթով (խնայող) էւ Փեսէն թէ՝ զո՞ւրթ.— Ղուրթ. Փեսէն լեղ է շուռ գալի իր կնգան թէ՝ բաս էլ չըլիմ— չըմանամ, վուր էստումէն գէնը էլ քու ձեռին բան չը տեսնիմ. «Թռան ինչ գուզէ. Ջուխտ աճկով լուսս. Տարի քեզ ումըը, վուր ուրախանում է էս աղջիկը ու էլ ձեռը բանին չը կպցնում.

---

## 16.

### Ց Ե Թ Ռ Ա Ն

Մէ մարթ աղայ է ունենում, ատէլի անունը դնում էն Ցեթռան, չունքի վախլուկ է ըլում ու ահու տանեմէն չէ էլի դուս գալի. Թուրմէ ամեն թահար աշխատում էն, վուր լեղ սովրեցնիլ տան էս խասիաթը (բնութիւն), ամմա չէն կանացի: Մէ օր էլ դ'առեդի (գիտութեամբ) հերթկեմէն հարեվնի տղէն մէ քաղա է դէվէք գցում ու բղավում վերեվանց, թէ՝ արծ դուս, տես ինչ խաբար է,

րին, մէջսի փայ անեն։ Թուրմէ ամեն օր գնում են դեւերը մերին հուրս անելու, բերում են ամեն թազար հուրսի մսեր, մէջսի ուտում, Ցեխթանը կի տեղեմէջն չէ էլի ժամ գալի։ Նատ ջգրեններուն գալիս է, վուր էս մարթը անմեղ սրանց աշխատանքն ուտում է ու մէ թազար ուզում են սրամէջն ագատվել։

Մէ գեշեր խորհուրթ են անում դեւերը սրան սըպանել։ Ցեխթանն իմանում է սրանց միտքն ու իր գողնքումը մէ մենձ կունձի (կոճղ) է դնում ու ինքը ուրիշ տեղ քնում։ Կէս գեշերին դեւերը տուն են գնում, իրանց էրկաթէ գըուզներով (կոմբալ, մահակ) օխանեվէլու մէ-մէկի խփում են կունձուն ու դուս են գնում։ Հենց իմանում են, թէ սըպանել են, ագատվել։ Էքկէլ էքան առուտեհան Ցեխթանը դուս է գնում դեւերու մօտ, թէ՝ էս ինչ շատ լվանիր իք ունեցել, իրիկուն օխտը ջէր լվանիրը կծեցին ինձ, չը թողին վուր լաւ քնիմ։ Էս դեւերը զարմանում են, թէ էս ինչ թազար մարթ է, վուր էս լոնգի (անտղին) էրկաթէ գըուզներու գերշէնը լվի կծել է ասում։

Խժում դեւերը Ցեխթանին, թէ՝ այ մենք հերթով հուրս անելու ենք գնում, դուն էլ պիտի գնաս։ Իրանց հուրս գնալու մենձ էրկաթը վէր են գցում սարի փեշի վրայ ու ասում, վուր էնգով գնայ հուրս անելու։ Առուտեհան վաղ Ցեխթանը դուս է գնում, ուզում է ժամ տա էն էրկաթը, չէ կանացի, արա ձեռքին վռնց կանէր բռնի։ Վեր է կալնում, կամաց-կամաց ժամ տալով սարեմէջն դէմէր է գլորում էրկաթը ձորի մէչն ու էնդի մէ քանի ծառեր է տակովն անում, Ճխլում։ Գնում է, իժում ասում դեւերուն թէ՝ էս ինչ ջոխի իք տվի ինձ, ես խոմ ծէտ սըպանելու չէի գնում, հուրէնա ձեր էրկաթը ձուրումն է ննգած։

Դեւերը տեսնում են, վուր սրամէջն խէր (օգուտ) չըկայ ու փիքր են անում բաժնվի սրամէջն։ Բաժնում են իրանց ունեցած-չունեցածը ուղթը հալալ փայ, մէ փայն տալի սրան ու իրանց պտի ագրուր չալակը տալի Ցեխթանին ու նրա փայ աշխատանքն էլ ու Ճամփու դնում։

Պառի դեւը տանում է Ցեխթանին չալկած նրանց տուն, վէր

բերում բարդն ու չեզ վազում։ Գիշերը սրան մէկ մարթ է տանում գալի ու իմանում Ցեխոտանի արարմունքը ու գիշեն ասում, թէ՝ Ցեխոտանը մեզ խափել է, նա էտ ուժը չունէ, աբե, քու տաշեշը նրան բութթու ակէս գեղնօքը առամ. Դիւը թէ՝ վայ, թէ խափիս, փախչիս, բաս աբէ, էս հասա թողով քու վռսան ու իմ վռսը կապենք մէյմի, վոր չը կաննենա փախչի։

Համց հետուէմէն տեսնում է Ցեխոտանը վոր դիւը ելեր է գալի ու մէ մարթ էլ բերում, իմանում է, վոր էր սուտը կու բռնին, սիրտ է անում ու էնդ՚անց բղավում է էն մարթուն թէ՝ այ մարթ, քու հէրն իմ հօրը օխտը գիւէ կաշի էր պարտ, էտ մէկը խոմ բերում իս, մեջն էլ չալղ կու տանիմ։

Դիւն էս վոր իմանում է, տհու պուկ է գալի, փախչում, էնչ փախչում, վոր վռնց սար է հարցնում ու վռնց ձոր, ու էն էլ վրայ թողով կապած մարթուն կոտր-բրթուճ անում գեղնէն քաշէ քաշ տալեմէն։

---

## 17.

## ՕՑՆ ՈՒ ԾԻՐ ՄԱՐԹԸ.

Մէ ծեր մարթ է ըլում, մէ վուրթի է ունենում։ Էս ծերը թուրմէ շատ բարի մարթ է ըլում ու մէ օցի հեզ բարեկամանում է. Ամեն օր թուրմէ օցի բնի մօղ տանում է էլի քաղցրեղէն, օցը դուս է էլի գալի ու մէ-մէ թանգագին ակը տալի։ Բերում է էլի տուն ու էտով կառավարվում են էլի։ Էս ծեր մարթը վոր տեսնում է էրա մահի մօղկենալը, վէր է կալնում էր վուրթուն, տանում օցի հեզ բարեկամացնում ու ասում նրան թէ՝ էտուամէն դէնը ջանս չէ գալի, ես էլ չեմ կանայ գա քեզ մօղ, տղէս գու՛քայ։

Իժում թուրմէ տղէն է էլի գնում օցի մօղ, էլի էնէնց քաղցրեղէն է տանում ու թանգագին ակնեըը ըստանում։ Մէ օր էլ էս

տղի մանկութիւնն անց է կենում թէ՝ ասի, էն օցին սըպանեմ, բունը խամ թանգագին ակներով լիքը կունենամ, կու քանդեմ բունը, դէմի մխանամ կու տանեմ ու մէքաշ (յանկարծ) կու չքնանամ, էլ ամեն օր գնալ-գալ չի պէտենայ։ Մէ օր վուր գնում է տղէն օցի մօղ, տանում թանգագին ակը ու հենց վուր օցը յեղ է շուռ գալի, թէ բունը մանի, կացնով խփում է ու օցի կուտին (աղի) կտրում։ Օցը խօրէն-մօրէն գալով (այրուելով) յեղ է շուռ գալի, վրայ նընգ-նում էն տղին ու էնդիէվէա սըպանում։

Հէրը վուր տեսնում է տղէն ուշացաւ, գնում է, իմանայ, թէ ինչ խաբար է։ Տեսնում է, վուր օցի բնի մօղ վէր է ննգած իր տղէն մեռած։ Դուս է կանչում օցին ու լաց ըլելով հարցնում, թէ՝ էս ինչ խաբար է։ Օցը դուս է գալի, կտրած կուտին չանց տալի նշան, յեղ պատմում նրա տղի արարմունքն ու ասում՝ մնաս բարով, կ'ոսէ, բարեկամ. էլ էստուց հետէն դէնը իս ինձ համա, դուն քեզ համա. մեր էսքան տարվայ բարեկամութինը կտրվեցաւ, վերջացաւ. չունքի քանի վուր իս էս կտրած կուտուս կու մտիկ տամ ու դուն էս վուրթուտ կսկիծը միտդ կու բերես, էլ չինք կանայ մեր բարեկամութինն անի։

---

## 18.

### ՕՑՆ ՈՒ ՁՕՐԱՆԸ (Շուշի).

Ըլում է, չէ ըլում, մէ թաքաւոր է ըլում։ Մէ օր սա էրազումը տեսնում է, վուր ծըգնքեմէն մէ թուր էր քաշ էլած ու սրա գլխին պտուտ էր գալի։ Շատ է շփոթվում թաքաւորը, մարթիք է մօղ անում, հարց ու փուրց անում, վուր էս էրազի միտկն իմանան ու օչով չէ կանացի։ Խժում թաքաւորը մարթիք է ման անում քաղկէ-քաղաք ու գեղէ-գեղ, վուր բալքի (դուցէ) մէ մարթ դուս գայ ու էրազը յեղ ասէ. մէնձ փուղ է խոստանում։ Չէ գըթնվում էլի օչով։

Մէ չօբան վրա Թագաւորի հրամանքն իմանում է, Թուրմէ իրան-իրան օխչարը արանձինքս մտմտալով ասում է թէ՝ ինչ լաւ կը՛լի, կ՛ասէ, վրա Թագաւորի էրազն իմանամ ու մէրաչ չէնանամ, պըձնիմ էսգ՛գա չարչարանքնիմէն․ էտ խօսկը ննգնում է մէ օցի անգամը ու թէ՝ իս վրա առվըրեցնիմ, կ՛ասէ, Թագաւորըն ինչոր բախշէշ (պարգեւ) տայ, կէսն ինձ կու տայ․ Չօբանը թէ՝ ուրախութինով․ Օցն ասում է չօբնին թէ՝ կէհնա, Թագաւորին կ՛ասիս, վրա էս տարի քու գուշմնիրը մէրաչ կու վրայ տան քու Թագաւորութինի վրայ, գու՛քան քիզ վրայ կոխէ, պատրաստ կացի․ Գնում է չօբանը Թագաւորին ասում․ Թագաւորը լսում է օրան ու ամէն պատրաստութին տեսնում է, գ՛օշուննիրը (զօրք) հագրում ու զուրթ էլ գուշմանը գալիս է մէրաչ, ամա վունչէլ չէ կանացի պակսեցնի օրան, չունքի գիփ ամէն բերթիրը գ՛ախմացրած (ամրացրած) է ունեննում․ Կանչում է Թագաւորը չօբնին ու մինձ բախշէշ տալի։ Չօբանը օցին միտը չէ բերում․

Անց է կիննում ժամանակ ու Թագաւորը էլի մէ էրազ է տեսնում՝ մէթամ ճըգնքիմէն մէ աղվէս է էլի քաշ էլած․ Կանչիլ է տալի էլի էն չօբնին էս էրազն էլ յիդ պատմելու․ Չօբանն ինչ գիդէր, ինչ էր սուտ ու մէ քանի օր ժամանակ է ուզի․ Գնում է, գթնում է էն օցին ու ասում թէ՝ զուրթ է, իս քիզ մօդ սուէրես իմ, խօսկս չը կատարեցի, ամա էս վրայ էրկու գամն էլ ինձ սովրեցրու ու իս գիդիմ ու իմ մարթութինը, ինչոր հիմի ըստանամ Թագաւորիմէն, էնդու կէսն էլ կու բերիմ ու առչիգվայ բախշիշի կէսն էլ։ Օցն ասում է թէ՝ կ՛ասիս Թագաւորին, էտ աղվէսն էնդու-նշան է, վրա էս տարին քու Թագաւորութինումը խալխը գիփ կու շուռ գայ, էլ մէկս մէկու աւատալ չի ըլի, վունց հէրը վուրթուն կու Ճանչնայ ու վունց մինձը պստիկին․ Գնում է, ասում է չօբանը Թագաւորին ու դըրուստ էնէնց էլ կատարվում է․ Թագաւորն ուկրօ (ոսկի) մինձ բախշիշ է տալի նրան․ Չօբանն էլի չէ գնում օցի մօդ․

Վրայ ճըխք տարին Թագաւորն էլի էրազ է տեսնում՝ մէթամ ճըգնքիմէն մէ կչիաք է էլի քաշ արած․ Թագաւորը կանչէլ է տալի էս չօբնին, վրա էս էրազն էլ յիդ պատմէ․ Չօբանն էլի

ժամանակ է ուզում ու գնում օցի մօտ։ Աղաչանք-պաղատանք անում, թէ էս էրաշն էլ վուր սովրեցնէ, անպատճառ կու բերէ իրա ամեն ճարանի կէսը։ Օցն էլի սովրեցնում է թէ՝ կ'օսես թաքաւուրին, վուր էս տարի քու երգրումը հալալութին կու՛լի, ամենքը սէրով ու համովութենով կու՛լին մէկմէկու հէդ, վունց կոխէ, վունչէր, ու իրանց ունեցած-չունեցածը գիտունքը մէջտի բարերար վատ կ'օնին, օչովի սիրտը չին պակսեցնի։ Գնում է չօբանը թաքաւուրին պատմում ու էնէնց էլ կատարվում։ Էլի ունիբո մինձ բախշիշ է ըստանում։

Վէր է կալնում չօբանը գլխի միանալ թաքաւուրի աված բախշիշներն ու տանում օցին տալի։ Օցը թէ՝ շատ շնորհակալ իմ. թրի տարին չէկար, չունքի կռւի տարի էր ու դուն էլ դուշմնութին արիր. աղվէսի տարին էլ միտտ չը բերիր, չունքի աշխրքումը բաւիա (հաւատարմութիւն) չէր մնացի ու դուն էլ արած լաւութինս մոռացար ու կչաքի տարին, երբոր ամեն բան հաշտացվեցաւ ու էլ իմն ու քուն չը կալ, դուն հիմի էս բերում ունեցած-չունեցածս. չիմ ուզում, գլխի քէզ ըլի։ Ի՛ս քէզ փորցում էի. Իս Աստու հրիշտակն իմ. քէզ ըլի էտ գինաթը։ Ասում է ու հանգչում։

---

## 19.

### ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ՆՐԱ ՕԽՏԸ ՏՂԷՆ

Էլել է, չէ էլի, մէ թաքաւուր է էլի, ունենում է օխտը տղայ։ Շատ խելօք մարթ է ըլում էս թաքաւուրն ու միշտ իր տղերանցը խըրատում է էլի, վուր սրանք մէկմէկու հէդ սէրով ըլին։

Թաքաւուրը վուր շատ ծերանում է ու տեսնում է, վուր իր մահը մօտ է կացի, մէ օր կանչում է տղերանցն իրա մօտ, տալիս նրանցը օխտը ջըխանուց մէ կապուց, թէ՝ արմ էս կապուցը կոտրեցէք, կ'օսէ։ Չէք մէկին է տալի, թէ կոտրէ, իժում մէկէլին ու

նրանք քանի էլ վուր չալիշ ին գալի, չին կանացի կոտրի։ Վիրջը վիր է կալնում էն կապուցը թարքաուրն ու թէ՝ դուք չը կանացիք կոտրի, մէ մանիկ արէք, ես ինչ թաշար կու կոտրիմ։ Քանդում է կապուցը, հանում ջոխիքն ու մէ-մէկ վիր կալնում էրկու ձեռով կոտրատում։ Խէտում հարցնում է աղերանցը, թէ՝ ինչ իմացաք, կ'ասէ, էսուումէն։ Տղէրքը թէ՝ վունչիչ չիմացանք։ Թարքաուրն իմում էրգար-բարակ պատմում է նրանցը թէ՝ էս էն է, կ'ասէ, վուր ամէն մէ ջոխին դուրթ է հէշտ կոտրելու է, երիոր հանած է կապուցեն-մէն, ամա երիոր էտ ջոխիքը մէկս մէկու հէդ գ'ախմ կապում իս, վունչչով չի կանայ մարթ կոտրի։ Թէ դուք էլ, վուրթիք, իմ էգ-նէն սէրով կու'լիք ու մէկս մէկիմէն անբաժան մէկ-մէկու թիւ կու'տաք, խօմ գիդացէք, վուր ձիր դուշմանը չի կանայ ձիր մէ մազին դիպչի ու գ'ախմ կու'լի ձիր թարքաւրութինը. ամա թէ վուր մէկմ դէսը կիհաք, մէկմ՝ դէնը, ամէն մէկմ ջուգ-ջուգ բան կու բռնէք, էն ժուղը ձիր ուժը կու թյանայ ու վունցոր էս ջո-խիքը անսաք. ինէնց էլ դուք հէշտ կու կոտրվիք ու կու փչանաք ձիր թշնամու ձեռով։ Էս է իմ անդէրձը (կտակ), բարով վիլեցէք իմ կարողութինն ու իմ խրատը, քանի կաք, միաաններում պահեցէք։

---

## 20.

### ՃԳՆԱՒՈՐԸ

Մէ հարուստ մարթ է էլի, մինձ առուտուրումն ու մինձ աշխատանքումը, թուրմէ օր-օրվայ վրայ բազմանում է սրա կարողութինը։ Վիրջը միտն է գալի աշխարհիս ունայնութինը, ուզում է հոգի գադելու ճանփի վրայ կանգնի։

Թողնում է իր ունեցած-չունեցածն ու գնում է քաղկեմէն դուս մէ անապատումը ճգնվելու։ Շատ տարի թուրմէ գ'ուլուղ է անում նա էնդի ու վիրջը սրան ափիզայ իմ չինում. Էն անապա-

տունը էնէնց գարդաղութին է ըլում, վուր ինչըր նրանց մինձաւըը հրամանք էր արէլ, գիփունքն էլ պէտի կատարէլ էին։

Մէ օր սրանց մինձաւըը հրամայում է էս ափիղին թէ՝ մէր վանքի Չուր կրող էշը պատվիլ է ու էլ բանի պէտոկ չէ, վի կալ, տար փողոցը. ինչըր տան, ծախէ, գնա. Թուրմէ էշը համ (էւ) քուսուտ է ըլում, համ անակուէք ու համ անկուղի (անպոչ)։

Ափիղէն տանում է էշը փողոցը. Չէր թուրմէ օրով հարցնող չէ ըլում. վիրջը գալիս է մէ մարթ, տնղղում է էշն ու հարցնում ափիղին թէ՝ էս ինչ թահար էշ է, կուղի չունէ. Ափիղէն թէ՝ հա, էս էշը շատ թամբալ (դանդաղ) էր բան չինէլումը. մէ օր ցխումը վէր ննգաւ բէռը բարցած ու կուղեմէն վուր բռնիլ ին վի քաշէլու, հա՞ կուղէն գՉըվիլ է. Խժում էն մարթը թէ՝ վա՛, ականջներ էլ չէ ունեցի։ Նա թէ՝ պատռաւ է ու էնդուր. Քուռը վուր տեսնում է, էն մարթը թէ՝ էտ հերեք չէ, մաղն էլ վէր ավաժ է, ծվ կու առնէ գլան, վուր բազար ես գցում. Ափիղէն թէ՝ հարա (վէրք) ունէր միջկին ու վիրջը քուս դառաւ ու մազը վէր էրեկ։

Վիր է կալնում ափիղէն էշն ու իրիգնապահը տանում ըէդ վանքը։ Մինձաւըը վուր տեսնում է, թէ իշին էլի յէդ ին բիրի, հարցնում է թէ՝ բաս ախար օրով չը ծող էկիր. վունչիէ գին չէրի՞տ։ Նա պատմում է, թէ էսէնց-էսէնց մէկն առուտուր արաւ ու ես էլ էսէնց ասի։ Մինձաւըը թէ՝ ապրաթխէր, ինչոր զուն ինքս փոնիլ ես իշին, ծվ կու առնէր. պիտէիր զովլի, սուտ-սուտ մէ էրկու ըմքին աւելցնի, վուր ծախվիլ էր։ Ափիղէն էտու վրայ թէ՝ ես վուր չէր աշխարական էի ու մինձ առուտրումը, էտ սուտ խօսիլը ինձ բեզրեցրուց ու էկայ էստի հոքի դաղելու. էնդի էլի աժ էր սուտ ասիլը, շունքի աշխատանքը շատ էր ու հիմի ուզում ես էստի էս մէ քուսուտ, անակուէք ու անկուղի իշի համա սուտ ասեցնիլ տա՛. չէ՛, չիմ կանայ։

## 21.

## ՍՈՒՏ ՓԱԼ ԲԱՑ ԱՆՈՂԸ (կախարդ)

Մէ տեղ էլել են մէ մարդ ու կնիկ, շատ խեղճ են ըլում ու մարդը վուչ մէ փէշտակ (արհեստ) չէ գիդենում։ Սրանց հարեվանը փալ բաց անող է էլի ու իր փէշտակով շատ փուղ աշխատում։ Էս խեղճ մարդու կնիկը ամեն օր իր մարդուն թէ՝ գնա էլ վուր փալ բաց անող դառնաս, մենք էլ կու չէնանանք։ Մարդը թէ՝ ախար ես վուր վունչէչ չեմ գիդի, ինչպէս պէտեմ փալ բաց անի։ Վուր շատ զոր է անում կնիկը, էս խեղճ մարդն էլ վեր է կալնում մէ խալիչի կտուր ու բազարումը մէ քնջնումը գցում, վրէն նստում ու ասում, վուր փալ բաց անող է. մէ քանի անմեղ թղթի կտուրտանք էլ հէդը տանում։

Մէ օր գալիս է սրա մօդ մէ ուղտապան, ասում թէ՝ էսէնց-էսէնց ուղտանիքս վուր քշում էի էս քաղաքը, ճանփին յեդ մտիկ տամ, տեսնեմ, մէ ուղտը չը կայ. գէսը ննգայ, գէնը ննգայ. չը կայ, գում էլաւ (անյայտացաւ)։ Խնդրում եմ, վունցոր ըլի ուղտս գթնես։ Նա սուտ իր թղթի կտուրտանքը շուռ ու մուռ տալի. փեքր անում, փեքր անում, տալիս է նրան մէ թղթի կտուր, կուլ է տալ տալի, մէկն էլ ծուցն է դնում ու թէ՝ գնա, կ'օսէ, երեք օրումը քու կորուստը կու գթնես։ Մէ խօսկով ուզեցել է մէ բան աւէլ վուր էն մարդուն իր գլխեմէջն ռադ անէ։ Ուղտապանը գնում է, մէկէլ ուղտանիքը առաջն անում, քշում։ Տափը վուր դուս է գնում, մէ տասնեկ փուրցաւ է գալի սրան ու գէս ու գէն է ննգնում։ Տեսնում է տափումը իր կորած ուղտը մէ տեղ արծում է կանանչ խոտի վրայ։

Շատ ուրախանում է, փալ բաց անողին լաւ բաղշիշ (պարգեւ) տալի ու գիփունին պատմում, վուր մէ զօրբա փալ բաց անող է էկել։ Աշխարքը շատ է ննգնում (հաւաքվում) էս խաբարն ու սուտ ու զուրթ անելով էս մարդը լաւ փուղ է էլի աշխատում, էրանց հարեվնի վրայ էլ աւելի։

Թուրմէ էն երգրի Թաքաւուրը մէ գօմ մէ Թանգագին ակն է կորցնում տանը, կանչում է իր փալ բաց անողին, ամա նա փոնտէչ չէ կանացի իմանալ։

Ուրիշ չաստ փալ բաց անողնիր էն տանում Թաքաւուրի մօտ, նրանք էլ չին գթնում Թաքաւուրի կորուստը։ Վիրջը էս նուր փալ բաց անողին էն տանում։ Զէ էլի գնում, կնիկը զօրով ղրգում է։ Թաքաւուրը հրամանք է անում, վուր իմ կորցրած ակը պէտք է գթնիս, թէ չէ գլուխտ կտրիլ կու տամ։ Սրան աշխմէն գուզը թօնիլ է, չէ գիդացի ինչ անէ, վիրջը էնէնց բիրնումն էկիլ է, թէ՝ մէ քառասուն օր ինձ ժամանակ տու, կ'ասէ. կերթամ տանը կու նստիմ ու գավթրնիրս չաւ կու անդղիմ։

Թուրմէ էն ակը Թաքաւուրի բջիրքն (ծառայ) էն գողցի ու ճիփոր իմանում էն, վուր փալ բաց անողը քառասուն օր վադա (ժամանակ) է ուզի ու իրանք էլ քառասուն հոքի էն ըլում, խիալ (կարծիք) էն տանում թէ՝ չըլի՞ թէ սա մէ բան գիդէ։ Էտ պատճառով էտ բջիրքը Թուրմէ իրանց մէջի մէ խօսկ էն կապում, վուր իրիգնապահնիրը հիրթով գնան էս փալ բաց անողի տան կշտին անց կենան, փարատուրդ անին, բան-ման իմանան։ Առջի գիշիրը մէկն է գնում, նրա տան կուռն անց կենում։ Սուտ փալ բաց անողը դարդուտ-փքրուտ, Թուրմէ վուր մթնում է, իր կնգան ասում թէ՝ ա՛ կնիկ, էս մէկն անց կացաւ (միթամ թէ՝ մէ օրն անց է կացի), մնաց եառասուն ու ինը։ Գուղ բիջն էս խօսկն իմանում է ու իր ընգերներանցը պատմում։ Վրայ էրկու օրը մէկէլն է անց կենում փալ բաց անողի տան կշտին։ Սա էլի իր կնգան թէ՝ ա՛ կնիկ, էս էլ վրայ էրկուսն անց կացաւ, մնաց եառասուն ու ութը։ Էսէնց օրերն անց է կենում ու փալ բաց անողը ամեն իրիգնապահն էս խօսկն ասում, իր գլխին փնյ տալի, վուր քառասուն օրը կու լռվի ու Թաքաւուրը գլուխը կտրիլ կու տայ։ Ամա էն գուղերու սրտումն էլ ահ է ընգնում ու մէ քանի օրվայ վրայ գնում էն փալ բաց անողի մօտ ու բաց ըլում թէ՝ էս մինք խօմ գիդինք, վուր դուն իմանում էս մեր գուղութինը, մէ Թահարը միզ ազատէ։ Սուտ փալ բաց անողի կզկնիրքը թօնում է, սուտ ասում թէ՝ ես գիդէի, ամա քառ-

սուտ օր վազող (ժամանակ) ուզեցի, վուր ձեզ պատմեմ։ Խժում նրանցը խորուրթ է տալի թէ՝ էն ակը տարէք թաքաւուրի բաղերեմէն մէկին կուլ տալ տվէք ու էն բաղի մէ թևը (կամ՝ վուտը) կտրեցէք. օչովին մեք ասի. ես ձեզ կու պատմեմ։ Էնէնց էլ անում են բէկէքը։

Թագաւուն օրվայ վրայ էս սուտ փայլ բաց անողը գնում է թաքաւուրի մօտ. առաջ էր զավթերումն է մաեկ տալի, խժում կանչել տալի սանն օվոր էլել է, նրանցը անդգում, գեփ ամեն քօծերուն ու բէկէրուն. խժում ասում է, վուր պալատի բաղումը դուռ ռերին ձիանքը, հաւերը, բաղերը, գեվունեին մաեկ տալի ու վերջը էն թևը կտրած բաղին վուր տեսնում է, ձեռը գնում է վըէն, թէ՝ թաքաւուրն աղբած կենայ, սրա մէջն է քու կորչուոր։ Էն սաճախթին մոլթել էն տալի բաղը ու փուրեմէն էն ակը հանում։ Թաքաւուրը ուրախանում է, մինձ փէշքշներ տալի ու սրան էր պալատի փայլ բաց անող շինում։

Շատ է խնդրում սա թաքաւուրին, վուր էրան թողնէ, էնքը մէ խեղճ մարթ է, գժար է նրա համար թաքաւուրի տանը կենալը։ Թաքաւուրը չէ անում ու պահում էրա մօտ։ Թուրմէ վուրդխոր գնում է էլի, հէդը տանում ու մինձ փառք ու պատւով պահում։ Ամա էս սուտ փայլ բաց անողը փիքր է անում, վուր մէ օր սրա սուտը կու բանվի ու հօքով-մարմնով կու կորչի. ուզում է թէ մէ էնէնց բան անէ, վուր թաքաւուրը սրան ազատէ։

Մէ օր թաքաւուրը սրան հէդը բաղնիսն է ուզում տանի։ Էս մարթը փիքր է անում, թէ՝ արի, սուտ գժութին կ՚անեմ, գժե-գժե մէ էնէնց բան կ՚անեմ, վուր ասեն թէ՝ գիժ է ու թաքաւուրն ինձ դուս անէ։ Թաքաւուրը վուր մանում է բաղնիսը ու սապնաթաթախ նստած է ըլում հաւուզի (աւազան) առչևը, մէքաշ էս մարթը գժէ-գիժ թռչոտելով վըայ է ննգնում թաքաւուրին, վէ քաշում ու բաղնեսմէն դուս վազեցնում։ Նրանց դուս գալն ու էն բաղնսի քանդվելը մէկ է ըլում։ Թաքաւուրը սրան փաթթվում, պաչպչում ու թէ՝ չունքի դուն էնէնց խմաստուն մարթ էս ու ինձ մահեմէն թափեցիր, ես քեզ վունչչով չեմ թողնի ու վէ կալնում էր կէս

խանչինէն (զանձ) սրան բախշում։ Ամա էս մարթը թաքաւուրի վուռնէրքը ննգնում, թէ՝ Աստու կարող զօրութենով էս քու կինքն ազատեցի, քու վուրթկերանց աքէւ սողտարա (ծառար) ինձ էլ աղատութին տուէ։

Վէրչը թաքաւուրը թողնում է սրան ու գնում էս մարթը իր կնգայ մօտ, ապրում ամեն բարութենով լիացած։ Զարն էնդէ, բարին էստէ։

---

## 22.

### ԱՄԵՆ ՕՄՔՆՈՒ ՎԱՐՄԻԸ ԻՐԱ ԱՌԱՋԸ ԿԵՐԹԱՑ

Մէ մարթ է ըլում, թուրմէ սա մոկումը գնում է իրա հօրին զարյերու համա գնա էրուսաղէմ ու լուսի վէր գալը տեսնէ։ Իր ունեցած-չունեցածը ծախում-ծախծխում է, փուղ շինում ու մէ ձի առնում, հաղըվում է վուր Ճանփայ ննգնի էրուսաղէմ։ Մէ քանի իր Ճանանչ մարթկերանցն էլ մոկեմէն հանում է ու իր հէտ ընգէր շինում։

Գնում են մէկտէ ձիանէրով, հասնում են մէ գիղ. էտէ ուզում են գիշերեն։ Սրանք էնդէ գնում են ժամը, էս մարթը տեսնում է, վուր մէ մարթ ժամումը կանգնած աղէ-աղէ աղօտանք է յափում ու Աստուն աղաչանք անում։ Վրայ էրկու օրն էլի էնէնց։ Ու էս մարթը մոկումը գնում է թէ՝ պէտէմ իմանա, կ'ասէ, թէ էս ինչ մարթ է ու սրա դարդն ինչ է։ Գիւղաքաղ (յամբաշալ) գնում է սրա կէնէն։ Տեսնում է, վուր էս մարթը աղքատախանեմէն մէ առակած հու մէ կալէու, փէշէ տակը թաքցրուց ու գնաց։ Մէկէլ էքսը սրան բռնում է էս մարթը, հարց ու փուրց անում, թէ՝ դուն ինչ մարթ էս, ինչի համա էս ամեն օր լաց ըլում ու էն առակած հացն ինչ կ'անէիր։

էն լաց ըլող մարթը պատմում է սրան թէ՝ էս էսէնց չէն էր, լաւ առուտուրումը. բանս էկաւ, ձախվեցաւ, կոտրացայ (սնան-

կանայ)։ Հիմի մէկ ցամաք հացի կարօտ եմ ու ամեն օր աւ. Աստ-ւած պաշտպանում, վրայ ինձ քոմագ անէ։ Կնիկս հիւանդ է, քաղ-ցած-ծարաւ, էն օրը սրտով ինձմէն հաւ ուզեց. փուղ չունէի, վրայ առել է. մի կալայ էն սատկած հաւը մորթեցի, խաշեցի, էփեցի ու ուտեցրի։ Էս մարդը փէքը է անում թէ՝ էսամէն էլ մենձ վարձկ բան ինչ կու՞լի. ծախում է ձին ու իր ունեցած-չունե-ցածը տալիս է էն խեղճ մարդուն ու էլ չէ ուզում գնա Երուսա-ղէմ։ Ընգերտիքը ձեռը չեն մի կալնում սրամէն՝ թէ գնանք. սա չէ գնում, մնում է էնդի ու ընգերտիքը գնում են Երուսաղէմ լուսը տեսնելու։ Վուր դուս են գնում գեղեմէն, թուրմէ տեսնում են, վուր իրանց ընգերը ձիով իրանց առաջը ընգած գնում է։ Զարմանե-րուն գալիս է թէ՝ ինչի՞ խափեց, ասաւ չեմ գա ու հիմի կի էկել է։ Վուր հասնում են Երուսաղէմ, նրանցմէն առաջ նա է առաջ ընդի ու լուսի մէջը մանի, լուսը վրէն վէր էկի. սրանք էլ տեսնում են լուսը, հոգին գաղում ու յէդ գալի։ Ճանփին էլի թուրմէ էն մարդը սրանց առաջը ընգած գալիս է էլի։ Հասնում են էլի էն գեղը։ Ընգերտիքը գնում են էն մարդու մօտ թէ՝ ախպեր դուն մեզ ինչի՞ խափեցիր. ասիր աւր չեմ գա ու դուն կի մեր առաջը ըն-գած ձին չափ գցելով վազում էիր. էնդ՚գա ձէն տվինք, կանչե-ցինք, մէ յէդ էլ չը մտիկ արիր։ Սա օրթում-հաւատում, թէ՝ ես տե-ղեմէս էլ չեմ ժաժ էկի։ Սրանք չեն էլի հաւատում նրան։ Վերջը գնում են դաղամէրի մօտ ու պատմում են էս բանը։ Դաղամէրը վուր իմանում է էս պատմութինը, խելօք մարդ է ըլում, վրայ է ընգնում, թէ՝ էս մարդը հեստի վարձկ է առի էստի էն խեղճ մարդուն, վուր էտ իրա վարձկը տարել է սրան Երուսաղէմ ու ձիզմէն առաջ լուսին արժանացրել, չունքի տասած է՝ ամեն օմքնու վարձկը իրա առաջը կերթայ։ Էն վուր էրեւացել է ձեզ ձիով, էն սրա հոգին է էլի, չունքի տասում եք՝ քանի էլ ուզում էինք էգնէն հասնի, չէինք կանացի։ Վերջը ձէլի (հալը) նրա ընգերտիքը աւատում են, վուր էս մարդը տեղեմէն չէր ժաժ էկի ու էնէնց իր հոգին գաղի։

## 23.

### ԹԱՔԱՒՈՐՆ ՈՒ ԳԻՆԻՆ

Մէ Երզրումը մէ Թաքաւոր է ըլում. Սա Թուրմէ մէ օր անց է կեննում քաղկեմէն դուս, տեսնում է, վօւր մէ հարփած մարթ վէր է ննգած, քնած ու ակռանները անկերն ուտում. Շատ ջիգըն է գալի, թէ մարթ գիննեմէն էսէնց վուէնց դառնայ. Հրամանք է անում խժում, վուր էլ օչով խրա Թաքաւորութեննումը գինի չը խմէ, ու թէ խմանայ, ան տեսնէ, գլուխը կու կտրել տայ. Էսէնց սաստիկ է ըլում Թաքաւորի հրամանքն ու գինւունքն էլ կտտրում են էլի.

Թուրմէ էն քաղկումը մէ մարթ մէ զ'օջաղ տղայ է ուննենում. Թաքաւորի հրամանքը վուր դուս է գալի, սրանք սարդըփումը (նկուղ) էրկու կարսով լաւ գինի են ուննենում, ափսուսում են, չեն գէն անում. Էս տղէն Թաքուն-Թաքուն գէվէր է էլի գնում սարդափը. ամեն օր մէ ամնով գիննեն խմում ու օչովին չասում. Էս ժուքը Թուրմէ Թաքաւորի ասլանի մէկը փախել է, գէշէրնէրը քաղկումը ման գալի ու օչով չէ էլի կանացի բռնի նրան. Էս տղէն քէփը քօք (լարած) դուս է գալի տաննեմէն, բռնում, էն ասլանի բերանը պատռում, վէր գցում:

Մէկէլ էքսը խաբարը գնում է Թաքաւորի մօդ թէ՝ էսէնց-էսէնց քու ասլանի բերանը օվոր պատռել է, վէր գցի: Հրամանք է անում Թաքաւորը, վուր էստու անոզն էրեվայ: Գնում է Թաքաւորի մօդ էս տղէն. Թաքաւորը սրան հարցնում է թէ՝ դուն պատռեցիր ասլանի բերանը. Թէ՝ իս. Խժում թէ՝ վունց, կ'օսէ, արա մէ ասլան էլ կու բռնել տամ, բերանը պատռէ. Սա թէ՝ լաւ, ամա խնդրում իմ, մէ կէս սահաթ ժամանակ տաս, կերթամ տուն ու էս սահաթին չիդ գու՛քամ:

Գնում է էս տղէն, էն գիննեմէն մէ-էրկու աման կոնծում է, արունը եռ գալի. գնում Թաքաւորի մօդ, վրայ ննգնում մէքրաշ վէր

թողած ասլանին ու բերանը պատռում։ Թաքաւորը զարմանում է, թէ՝ էս արարմունքտ ինչայ, ամեն քու տան գնալն ու գալն ինչ էր։ Տղէն վախենում է, վուր թաքաւորը գլուխը չը կտրել տայ. խնդրում է, թէ՝ կ'ասեմ, թէ չես սպանի։ Թաքաւորը խօսկ է տալի։ Տղէն բաց է ըլում, թէ՝ ես վունց կանէի էն ասլաններու բերանը պատռէի, թէ վուր մեր տանը պահած հէն գեննին չըլէր. ղ'ուաթն (ույժ) իմը կի չէր, էն գինունն էր։

Էստու վրայ թաքաւորը հրամանք է անում, վուր էլի թող խալխը գինի խմէ, կ'ասէ. ամա էնէնց չը խմեն, վուր ակուններ զան, ամէկերը հանեն. էնէնց խմեն, վուր ասլանի բերան պատռեն. միթամ թէ՝ չափավ վուր խմիք՝ ուժ կու տայ, կ'ասէ, ու չափա-մէն դուս խմելը՝ ակուններու կերակուր էշ (գէշ) կու շինէ։

---

## 24.

### ԲԱԶԱԶ (ճոթավաճառ)

Մէ չէն բազազ է ըլում. բանը շատ աչողած է գնում թուրմէ. Մէ օր չիթը չափիլիս էրկթէ գազը ձեռն է առնում թէ չէ, վուր չափէ, գազը մէջի վրայ կոտրվում է։ Շուտ ու մուտ է տալի գազը, վուր տեսնէ թէ հէն կոտրած խօմ չէ. տեսնում է, վուր վունցի փուչէ (փտտուած) չունէ կոտրած տեղը։ Զարմանում է ու փիքր է անում, թէ էս նշանը հալբաթ էն է, վուր գործկերս ձախ պի-տի գնայ։

Կողպում է էն օրնիվէն դուքանը (խանութ), բալնքները տալի էր կնգան ու ասում, թէ՝ ես գնում եմ ուրիշ երգեր. դուքանս կող-պած կենայ, տարէնը մէ գեր կու ղրգեմ քեզ համա ու կու իմաց տամ թէ վուրդի եմ։ Կէր է կենում, գնում դ'արերութեն (սառ-րութին)։

Գնում է, գնում ու վերջը տեսնում է, վուր մէ գեղի վուր-քումը մէ մենձ բաղ կայ։ Տուն է գնում էնղի ու խնդրում է, վուր

իրան նօքար վի կաշնին, բաղմնչութին կ'օնէ։ Բաղի տէրը ընկալնում է ու հարցնում թէ՝ տարէնը ինչ պիտիմ տա, ինչ տօնլուղ (ռոճիկ) իս ուզում։ Նա թէ՝ տօնլուղ չիմ ուզի, տարին վուր լրվի, ինձ էս մէ ծառի պտուղը կու տաս։ Ձեռով շանց է տալի ծառը։ Տէրը ղ'ապուլ է անում։

Տարին վուր լրվիլ է, ամեն ծառերը պտուղ ին տվի, էն մէ ծառը կի խաստակ (բոլորովին) չորցիլ է։ Մէկէլ տարին թուրմէ բաղի տէրն ուզում է ջամաղիր (ռոճիկ) կտրէ, սա էլի չէ անում, էլի մէ ուրիշ ծառի պտուղն է ուզում։ Էն տարին էլ ամեն ծառ. պտուղ է տվի ու էն ծառը կի չորցիլ է։ Տէրը թէ՝ չի ըլի, էտէնց լաւ գ'ուլուղ իս անում էսքան ժամանակ ու գուզիմ, վուր ասիս, քու տարեկան հախն (վարձ) ինչ իս ուզում։ Նա ջամաղիր չէ ուզում, էլի մէ ուրիշ ծառ. է նշան դնում ու նրա պտուղն է ուզում։

Բոլորվում է էս վրայ երեք տարին էլ ու էն ծառը էնդ'գա պտուղ էր տվի, էնդ'գայ պտուղ, վուր սաղ բաղումն ինչոր ծառեր կէր, էնքան չէր ըլի։ Ուզում է թողնի էս բաղպղը իր աղին ու էն ծառն էլ հիգն ու ինքն ուզում է յիդ գա։ Բաղի տէրը զարմանում է թէ՝ էս գուն ինչ թահար մարթ իս. քու պրարմունքը իս չիմ իմանում։ Բաղպղը յիդ է ասում իր գլխի վրայ անց կացածը թէ՝ վուր տիսայ էրկթէ գազխս կտրվիլը, տաի, վուր բախտս ծռվիլ է, էրեսը շուռ է տվի ինձմէն, գուրծկերուս թարգը տվի (դադարից) ինչկի յիդ մէկէկլանց էրեսն իմ կուռը կ'օնէր. էրկու տարի իմ ջոգած ծառը չորցաւ, գնում էր բախտս. հիմի էս տարի տեսայ, վուր բախտս էրեսն իմ կուռն է արի. վերցում էլ, ուրիշ վունչիչ։

Ասում է ու գնում իրանց երգիրը։ Բաց է անում իր կողպած դուքանը, մտիկ է տալի դազգհի վրայ, տեսնում, վուր էն կտրած գազը վուղչացիլ է։ Փառք է տվի Աստուծ ու էլի իր բանի վրայ կանգնի ու թուրմէ մէկն էրկուսով է էլի գաղում իր առուտուրումը։

## 25.

### ԴԱԴԱՄԷՐ

Մէ խեղճ մարթ թուրմէ մէ չէն մարթու հետ դատալու (վէճ) գուրծկ է ունեցել. շատ են աշխատել մէ թաշար վերջացնել նրա հետ բանը, ամա չէ ըլում. չէնը գրնում է (գրփել) է էլի խղճէն ու բանը ննգնում է դադամէրի ձեռը։

Գուրծկին էրգար է քաշում դադամէրի մօտ. խեղճն արթար է ըլում, ամա չէնը էնդ'գայ քըրթամ է գնում դադամէրի տակը, վուր գուրծկը քաշքշէ, էրգարացնել է էլի տալի նրան.

Վերջը խեղճ մարթը մէ կացին է տանում փէշքաշ (ընծայ) դադամէրի համա ու ճիվոր էստու էղնէն դադամէրը սրանց գուրծկը քննում է էլի. էրկուսնեվէկա առջեւն են ըլում կանգնած։ Ամա չունքի դադամէրին չէնը բռնած է ունենում, գուրծկին ուզում է չէնի կուռը (կողմ) կտրի։ Խեղճը դադամէրին միթամ միտն է ուզում գցի իր տված կացինը. թէ՝ աղա, խնդրում եմ, կացնի պէս կտրէ՛ գրուստ ու առանց էրեսպաշտութէնի։

Չէն մարթը թուրմէ խօսելիս լեզվի ծէրին օսկի է ունենում պահած ու ամեն բերան բաց անելիս դադամէրին չանց տալի. Դադամէրը էն խեղճ մարթուն թէ՝ վո՛նց կտրեմ աբա կացնի պէս, տեսնո՞ւմ ես դրա խօսկը, բերնեմէջն դեղի կրակ է վէր անում. գուն սուս էս, սա՝ գուրթ.

---

## 26.

### ԲԷԴՕՎԼԱԹ (շռայլ) ՎՈՒՐԹԻՆ

Մէ չէն մարթ է ըլում, ունենում է մէ տղայ։ Շատ վատ ննգրակ է ունենում էս տղէն ու նրանցը մաէկ տալով ենքն էլ փչանում է։ Ինչքան էլ փուղ է էլի ննգնում էս տղի ձեռը, տանում է էլի, իր ննգրտերանց հետ միասին, քէփ անում։ Շատ է խրատում հէրը, վուր նրանցմէէն ձեռը վի կալնէ, ամա չէ կանացի

Թարգ անել տա. Թուրմէ Ննգրութքը սրա զուզը (աղեղ) ծծում են ու մինձ փուշեր փչացնել տալի.

Վերջը հէրը վուր տեսնում է վունչիչ ճար ու ելաչ (ճարբ) չը կայ, էր մեռնելու առաչ մէր է կալնում էրանց նեքսի օթախումը օճորքի (առաստաղ) էրկու տախտակը թաքուն գցլում է ու մէ մինձ տոպրկով ոսկի է պահում էնդի. տախտակներն էլի կպցընում է էր տեղն ու տախտակի մէջը մէ մինձ մելա խփում ու մեխի վրայ էլ մէ էրգէն թօկ քաշ անում. Մեռնելու առաչ էր վուրթուն ասում է թէ՝ լաւ է, վուր քու վազ խասախաթը (սովորութիւն) իմ մեռնելուց էտնէն էլա թողնես. թէ չը թողնես ու գէփ մնաս, ունեցած-չունեցածդ ուտես, պրծնես, գնա մէր նեքսի օթախումը քաշ արած թօկով խեղտվէ.

Հէրը մեռնում է ու տղէն էլի էր ձեն է էլի քշում. ամեն օր քէփ ու զօզ (խրախճանք) է ունենում էր ննգրութերանց հետ ու չէ անց կենում մէ տարի, հօր թողած կարողութիւնը ուղտ է չէնում. Ննգրութքը վուր տեսնում են էլ վունչիչ չունէ, էրեսը շուռ են տալի սրամէն ու պատահած ժամանակը էրանց գլուխը չը ճանանչելու դնում.

Վուր տեսնում է էս տղէն բանը շատ վատ է ու էլ տալելու ճանփայ չըկայ, մտկումը գնում է վուր խեղտվի ու միտն է բէրում էր հօր արած թօկը. Տուն է գնում նեքսի օթախը, տեսնում է, վուր ըստը մէ թօկ է քաշ արած օճորքեմէջնե. Թօկը գցում է չըլինքն ու ըզգում է խեղտվի. Հանց վուր թօկումէջն քաշ է ննգնում, թօկը գնլում է տախտակն ու օճորքեմէջն ոսկով լէքը տոպրակը մէր ննգնում վրէն. Բաց է անում, տեսնում ոսկէք. Իմանում է էր հօր ղստութիւնը վուր էսէնց սրա դառն օրվայ համա փուշեր է պահէ. Փուշերը մէր է կալնում. բանի կանգնում ու էր վազուցվայ ննգրութերանցմէջն ձեռը մէ կալնում. Ննգրութքը վուր տեսնում են, թէ սրա մէչն էլի փուշեր էրեվաց, նուր մէկէլանց ուզում են գրսատանա (բարեկամանալ), ամմա սա էլ վունչչավ չէ մօզ թողնում նրանցը, չունքի փորցել էր, թէ ինչ պտուղներ էլ վուր էին.

## 27.

### ՁԱԼՈՒՄ (ընկոտ) ԿՆԻԿ

Մէ մարթ ունենում է մէ կնիկ, ամմ հեստի անկոտրում, թարս խասիաթի տէր, վուր Աստված փըրգէ ու Ցէրն ազատէ։ Ինչ մարթուն հուլուլ-հուլուլ է էլի բերում (չարչարել)։ Էս մարթը չէ գիդացի, թէ ինչ անէ, վուր մէ թահարը նրամէն պրծնի. վունչինչ ճար ու իլաջ (հնարք) չէ գթնում։

Մէ օր թուրմէ անց է կենում քաղկեմէջն դուս տեղ, տեսնում է կնգի մէ ինչոր մինձ հուր (հոր) կայ։ Մտիկ է տալի, վուր հուրը շատ խուրն է։ Փիքր է անում, վուր էստումէջն էլ լաւ տեղ իր կնգայ համա չի կանայ գթնի. էստի վուր գցիմ, կ'օսէ, կու պրծնիմ ու կու ազատվիմ նրամէն։

Վիր է կալնում մէ ուստուլթէնով տանում է կնգան էնգի, մէջրաշ բլնցում (գրթցել) ու գցում հուրը։ Ինքը գնում է տուն հանգարգված։

Մէ քանի ժուգ վուր անց է կենում, էս մարթը մէ օր թէ՝ մէ գնամ, կ'օսէ, տեսնիմ էլի էն հուրը։ Մօտ է գնում, թուրմէ հուրեմէջն ինչոր ձէնիր է գալի։ Անգաճ է անում, տեսնում, վուր իր կնգայ ձէնը չէ։ Թուրմէ հուրումը սատանայ է ըլում ու նրա ձէնն է էլի։ Սատանէն էս մարթու ձէնը վուր իմանում է, էնդ'անց թէ՝ Աստուծ կու սիրիս, էստի ինչոր մէ կնիկարմատ դէվէր ննգաւ ու հոգիս հանում, ջանդան բէզար (ձանձրացնել) է անում ինձ, օրս դառնացրիլ է. խնդրում իմ դիվէր քաշիս, տանիս, ազատիս ինձ րամէջն։ Իր կնգան արմ ինչ կու հանէր սա ու սատանին դիվէր է քաշում, կնգան էն հուրումը թողնում։ Սատանէն էս մարթուն թէ՝ գնա, հէքմութին արա էստումէջն դէնը. Երոր տեսնիս վուր իս հիւնդի վուտնիրու կուտն (կողմ) ըլիմ, էն հիւնդին ձեռը չը տաս, չի լաւնա. ամմ թէ տեսնիս, վուր իս գլխօքն իմ նստած՝ կու լաւացնիս։ Էսէնց էլ անում է թուրմէ էն մարթը ու մինձ փուղիր աշխատում, չունքի վուչ մէ հիւանդ նրա ձեռին չէ էլի մեռնում։

Աշխարքը շատ է ըլում ([illegible]) էս խաբարը, էնէնց վուր մէ գամ Թաքաւուրի տղէն վուր խէտը հիւանդանում է. սրան էն կանչում. Գնում է, տեսնում, վուր սատանէն հիւանդի վուտներու կուլն է նստած, ամա էլի տուն է գնում. Սատանէն սրան Թաքուն Թէ՝ ախար ես քեզ չասի, վուր ձեռը չը տամ. Էս մարթը Թէ՝ ես խոմ էստու համա չը տուն էկայ, վուր հիւանդին ձեռը տամ. սուտ մօգօնում է (Ճարել), Թէ էկայ քեզ ասիմ, վուր էն կնիկը հուրեմէն գուս է էկի ու քեզ պտռում է. Թէ՝ գո՞ւրթ.—գուրթ. Էն սահաթին սատանէն պուկ է գալի էնղ՚անց ու գլուխը կորցնում, վուր էն կնգայ ձեռը չը ննգի. Էս մարթը գնում է, հիւանդին էլ սիրուն լաւացնում ու մինձ բաղշիշներ (պարգև) ըստանում.

---

## 28.

### ՕՐՍԱՆԴՈՒԼ.

Էլել է, չէ էլի մէ մինձ մարթ է էլի. փառկվում է սա մէ շատ սիրուն աղչկայ վրայ, սակայն սիրունութինը կնիկը լաւ խասիաթի (բնութիւն) ակեր, աբուռով (պարկեշտանք) ու խէտա ամանչկոտ է ըլում. վուր կ՚օսէն, էր չվաքեմէն (սուտեր) էլ քաշվող օմքէն է էլի. Քանի տարի վուրթի չէ էլի բերում ու Թիֆոր էրքոքսացել է, ամուլթու օչովլի մօղ չէ էլի աշկարա անում.

Վուր տեսնում է, Թէ պառկելու ժամանակը մօղ է կացի, վիր է կենում, Թաքուն գնում է մօղիկ մերին (անտառ) ու էնղի է բերում վուրթուն. Թօղնում է նրան էն մերումը ու ինքը յէդ գալի տուն, մէԹամ վունչէչ խաբար չըկայ. Ինքը կի չուստ-չուստ գնում է էլի մերումը էրեխին տես. տեսնում է վուր մէ պախրա (այծեամն) ամեն օր Թուրմէ գնում է ու նրա վուրթուն ծիծ է տալի. Էս աղջիկը էր վուրթու անունը դնում է Օրսանդուլ.

Ամմա դէղի սիրտը վօնց կու համբերէր, Թուրմէ ամեն օր Թաքուն էս աղչիկը լաց է ըլում, աղի-աղի արտասունք վէր ածում ու էս նանէն ասում՝

Նանա՜ նանա, Օրօրանգուլ,
Օրօ անխլնայ, Օրօրանգուլ,
Մենձափօթօլ կարաշուր,
Մանղըմափօթօլ կռանչուր.
Բամին փչէ, օրօրէ.
Լուսնկակը քուլօրէ.
Պախըրէն գու՛քայ, ծին կու տայ.
Ցիզար (Թոր) չունէ, ճնչ կու տայ.
Մէ լաւ էլ ածկի (արագի) կու տայ։

Մէկ-էրկու ջէր վուր էատունք տեսնում ու իմանում է սրա ակեսուրը, խեալ (կարծիք) է տանում, թէ անպատճառ մէ էն թաշար քան կու՛լի. Հարց ու փուրց է անում ու վերջը կտրում նրան ու տանցնիլ է տալի իր գլխին անց կացածը։

Մարթն ու ակեսուրը հայհարա (շտապով) վազում են հարսի հեդ միասին ու ճնչ են տեսնում. էրեխէն էկել է, մենձացել է ու պախրէն գլխին կանգնած, ծին է էլի տալի. Անծուն փառաւորանութեին են տվի, վուր նա իր սորդնածին չի կորցնի ու վեր են կալնում, բերում էրեխին տուն. պախրին էլ իր վուրթով տանում են հեդեները իրանց մօդ ու պահում ու պահպանում իրանց ջուխտ (զոյգ) աճկի լուսի պէս։

## 29.

### ԱՃԿԸՆ ԳՑԱԾ ՎՈՒՐԹԻՆ

Ըլում է, չէ ըլում, մէ թաքաւոր է ըլում. ունենում է էրկու աղչիկ՝ մէկը սիրուն ու շատ էլ սիրում է էլի, մէկէլը գեղձ, էրկու աճկով քոռ (կոյր) ու իր աճկէն գցած. Սիրունը մարթու է գնացի ու հէրը մենձ փուղ ու բաժինք է տվի. քոռ աղչիկը մնում է տանը. օչով նրա ուզող չէ լուս ննգնում. Համ (եւ) քոռ է ըլում, համ էլ գըգած. փեքր է աղի, վուր մարթու գնալն էլի լաւ կու՛լի. քալքի (գալէ) մարթը սիրէ, չունքի իրա սիրտը բարի է. Հէրը

շրջում է նազիր-վէզիրներուն, թէ՝ չգնացէք, օխտը ճանփին ռաստ գալը բերէք էստի, նրան պիտի տամ էս աղջկան:

Նազիր-վէզիրներուն պատահում է մէ նախրապան ու սրան բռնում են ու բերում թագաւորի պալատը: Հէրն ասում է իր քոռ աղջկան, թէ՝ սա է քու բախտը, սրան պիտի ուզիս: Տալիս է փող ու բաժինք ու ճանփու դնում:

Գնում են մարթ ու կնիկ ջոկ իրանց համար տուն ու տեղ են դառնում ու նախրապանն էլ ձեռը չէ վի կալնում իր նախրապնութենեմէն: Շատ սէրով են էլի մարթ ու կնիկ: Իր քոռ կնգան թուրմէ երամէն չէ հեռացնում նախրապանը. ուրօր գնում է էլի, հերդը տանում: Գնում են էլի նախրի հեդ մէկի ու մէկի էլ յեդ են էլի գալի տուն:

Սրանց նախրումը մէ քուսուս հուրթ է ըլում. քանի էլ վուր նրան գեղ են անում, վունչչով չէ էլի լանում: Տափումը մէ աղբուր է ըլում, թուրմէ օխտը տարէնը մէ չէր էն աղբուրը ամեն ցաւի բժշկող է դառնում: Սրանք կի չեն գիդենում էտ բանը: Հէնց էն տարի բժշկելու տարին է ըլում: Հուրթը թուրմէ գնում է երան-երան էն աղբուրումը լողնում ու քուսն խասակ լանում է:

Փէքը է անում նախրապանը, թէ՝ էս հուրթի քուսը վուր սաղեցրուց, կու՞լի վուր իմ կնգայ աչկերուն էլ դուռ անէ էն ջուրը: Տանում է ամեն օր իր քոռ կնգան ու նրա աչկերը լվանում աղբուրի ջրով: Աստուծութենը տալիս է ու էս քոռի աչկերը բաց է ըլում: Տեսնում են, վուր էս ջուրը մենձ զօրութին ունէ. վեր են կալնում իրանց կժերը էն ջրով լցնում, տանում տուն: Ճանփին մէ տեղ քիչ ջուր է վիթվում ու վիթած տեղը մէ մենձ պալատ է դառնում: Թողնում են սրանք իրանց տունն ու էս պալատումն են պարքվում:

Էս խաբարը հէնէ հէն է ընգնում ու հասնում թագաւորի ականջը: Կանչում է թագաւորը էտ քոռ աղջկան, հարց ու փորց է անում ու իմանում է բանի զօրութինը: Աղջիկը չէ թաքցնում, պատմում է ամեն բան տեղն ու տեղը: Թագաւորը ինքն էլ հիւանդութին է ունենում, խնդրում է, վուր նրան էլ տանեն էն ջրով

լեցնեին։ Եսա՛ է լեղնում թռչունները էն աղբյուրումը, ամա նրա ջուրին մունչև ձար չէ ըլում. թուրմէ չէր օխտը տարին լըվւած չէ էլի ու ջուրն էլ չէ էլի թռչկում։ Թռչունքի հետնդութիւնը քանի գնում է, յէղն ու յէղը ատելնում է ու էնէնց անդնդանքով անց է կացնում իրա օրը։ Նախըրապանն ու իր կնիկը կի առաւէրուան (պարտո) են ապրում առք-ապրանքով (ալչ-ավերջ), ուրախ, սէրով ու ամէն բարութէնով էլ չի Զարն էնգի, բարին էսանի։

---

## 30.

### ԿԱՏՎՈՎ. ՈՒԺԻ ՓՈՐՑԻԼԸ

Էլել է, չէ էլի, մէ քաղկումը էրկու օջախ (դհրդատան) է էլի։ Մէ տանը մէ պառաւ մէր է ըլում ու մէ չատա ղ'օչաղ (քաջ) ու կարուկ աղայ է ունենում. մէկէլ տանն էլ պառաւ կնիկ է ըլում, մէ վուրթի է ունենում հում ու դամբլա (դանդաղ)։ Էս էրկուսի տղէրքն էլ դօստ (բարեկամ) են ըլում, շունքի հարեւան են էլի։ Ինոր սրանց կարքելու ժամանակը գալիս է, տանաչ էն կարուկ աղին է փաւսկում դէդէն։

Նարամինուսին դէդէն խրատել է, վուր հարանքի գիշերը իրանց գողնքումը մէ կատու թաւխ կացնէ ու խրատում է, թէ ինչ անի։ Հարսնիքն անում են, պրծնում ու բերող Նորահարս-նորափեսէն գնում են քնելու, աղէն կատուն գողնքումը թաւխ կացրած է ունենում։ Տղէն հանց տեսնում է, վուր գողնքումը կատու է պառկած. վրայ է ննգնում, չպտտում է ու հետի ուժով պատողն է տալի, վուր կատուն տեղն ու տեղը բանհօքի է ըլում։ Նորահարսի սիրտը դուղ է ննգնում ու ասում իրան-իրան թէ՝ «էս ինչ չար մարթ է էլի. սրամէն մուղ'աթի (զզուշ) պիտիմ ըլի, թէ չէ կատվի օրը իմ գլխին էլ կու հանդնիցնէ»։ Ու էս աղչկայ սրտումը ահ է ննգնում, մէյա խօնար ըլում իր մարթուն, նրա խօսկի վրայ ման գալի ու էնէնց սէրով ապրում։

Անց է կէննում ժամանակ ու էս կարուկ աղի խախտաւորու-

Թէնը վուր տեսնում է, դամբլա տղէն էլ խնդրում է իր դէդին Թէ՛ ինձ էլ փսակէ, կ՚ուզէ։ Սրան դէդէն շուտ կարգում է. տան մէ հետի պէծմեան կրակ (չար) աղջիկայ է ուսած գալի. վուր Աստուած Թափիճ ու Ցէրն ազատէ։ Դիմի հուլուլ-հուլուլ է էլի խաղցնում իր մարթուն, կռիւն ու շփոթը սրանց տանը անպակաս է ըլում. Մարթն էլ Թուլ մարթ, չէ էլի կանացի իր կնգայ գլուխը պանթի. Վուր չարէն շատ կոտրվում է, գնում է էս դամբլա տղէն իր դաստ կարուկ տղի մօտ ու հարցնում Թէ՛ «էս վունց է, աղբէր՛ վուր դուք էսէնց օէրով իք ապրում. մինք կի, իս ու իմ կնիկը դըռուստ շուն ու կատու ինք դառէ. դուն մէ բան կու գիդենաս՝ վուր դուք էսէնց բախտաւոր իք»։ Կարուկ բարեկամը յիդ է ասում կատվի պատմութինը։

Էս Թուլ մարթն էլ գնում է, իր դէդին ասում, վուր իրանց գողնքումն էլ մէ կատու Թախ կացնէ. Հանց վուր մարթ ու կնիկ տուն ին գնում իրանց քնելու օթախը, մարթը կատուն տեսնում է Թէ չէ գողնքումը, մէբաշ չարանում է. վրայ է ննգնում կատվին ու ուժով պատին խփում. Կնիկն էս վուր տեսնում է, ծիծաղելով հանդարտ-հանդարտ ասում է իր մարթուն՝ խուզը գլխիտ, էս վաղ պինէիր անի, այ մարթ, հիմի ուշ է. բանը բաններէն անց է կացի. էլ քու Թուրը չի կանայ կտրի. վէր ննգի քու տիղը»։

## 31.

### ՎՐԱՑ ԷՐԿՈՒ ԿՆԻԿԸ

Ըլում է, չէ ըլում, մէ մարթ է ըլում, շատ սիրուն էլ կնիկ է ունենում ու մէկիկ մէկու համա գլուխը յիդ դըրած ին ըլում. Ցըի գէշէն էլ մէ շատ յարգէւոր կնիկմարդատ է ըլում ու շատ սիրում է էլի Թուրմէ իր կնգան, Թէ՛ «դուն շատ ապրիս ինձ համա». Աստված մէ արանցէ, դուն վուր մեռնիս, իս էս աշխարքիմէն ձեռք կու վի կալնիմ, էլ կնիկ չիմ ուզի իմ օրումըս»։ Ամէն օր վուր էս խօսքն իմանում է իր մարթու բերնիմէն, կնիկը վէրը փիքր է անում

թէ՝ «սարի, մի օրն գու՛քամ սրա գլխին, կու փորցիմ»։ Ի՛նչքը մարթն ուրիշ բերքեր է գնում առուտրի, հարսն ու սկեսուրը խօսկ են կապում ու օրնը սարքում։

Անց է կենում ժամանակ. մարթը գրում է, թէ փլան-փլան օրը գալիս իմ։ Հարս ու սկեսուր վեր են կալնում, իրանց օթախումը գերեզմանի պէս մէ բան են շինում. մէթժամ հարսը մեռել է ու մէջը թաղել են. հարսէն կի սկեսուրը թախ է կացնում հարսին տանը։ Գալիս է մարթը տուն ու թուրմէ տանն իրանց տանու գահանէն է էլ նստած ու մէ քանի բարեկամներ։ Մարթը տեսնում է, վուր կնիկը չէ էրևում։ Հարցնում է թէ՝ «կնիկս ու՞ր է»։ Դէդէն ու ախպէրը սրան մէ թահարն իմաց են անում նրա մահը ու պատմում են թէ՝ «էրկու շաբաթ առաջ մեռաւ, քու չարը տարաւ ու մէկէլ օթախումը թաղեցինք, վուր գուն սրտով հովցնիս»։ Տէրտէրն էլ գերեզմանը սուս օխնում է ու խէթար խօսում։ Մարթը լաց-շիվան, էլ ինչ ասել գ՚ուզէ. ամա ինչ կու անկէր։

Դէդէն թէ՝ ինչ իս գլուխս սըպանում, վուրթի. աշխարքումը խօմ աղջիկը չէ կոտրվի, կ՚ասէ, էնդուսմէն լաւը կու ճարիմ իս քեզ համար»։ Տղէն չէր գ՚ամիմ է էլի կանգնած, «չէ» «չէ» էլի անում ու ժժում համառուրվում է. մէ շաբթումը մէթժամ բանը մալամաթ են անում (կարգադրել) ու վրայ էրկու կնգայ վրայ պէտի փսակվէլ էր։ Դէդէն ասում է տղին, թէ՝ «էս աղջիկը շատ քաշվող աղջիկ է, վուրթի, շատ չը խօսիս հէտը. էրեսը մարթու շանց տալեմէն ամանչում է»։

Փաթթած-կոլլած, էրեսին քօղը ծածկած, բերում են նրա առաջի կնգան, նուր փսակում են մէթժամ, հարսնիքն անում ու երեգնահացի էգնէն տուն են գնում նրանք քնելու օթախը։ Էն աղջկան թուրմէ սուս գողցնում է, ու չէ կանդացի քնել։ Մարթն ուզում է սրա սիրտը չէր բերի, ամա վուշինչով չէ կանդացել։ Հարցնում է թէ՝ «ինչ է, ինչի իս էաէնց»։ Կնիկը գողգղալով, ձէնը փոխած ասում է թէ՝ «վախենում իմ, որ էն առաջի կնգանս վուր էն օթախումը թաղել էք, անկերումս էրևում է էնձ ու վախեն-

ցնում»։ Մարթը վեր է թռչում գազանքեմէն ու դէպի վրայ գոռում թէ՝ «գնդե՛ր, գնդե՛ր, կա՛ ինչ քան էլ տուր, ինձ։ Էն գոմբէզոսին (գերեզմանը փոխած) վրա՛ր չէի թողի, տանջնումը մէջը կուռանէ հը. Էս անգամ քունը չէ տանում»։—Մեռնի դէպէն ջանին, ասում է դէպէնին, ինչ կէր տուր, վուր ջանս սիրում կեր, ասի մօզէկ կուռ՛նէ, սիրում քէչ յէր կու բերէ»։

Խօսում այդպէս ծեծանը գալիս է, չէ համփերում, գլուխը լուա է գցում ու մարթուն թէ՝ «դուն չէիր, ախ մարթ, վուր քու օրումը վրայ ելելու կնէկ չէիր ուզում. լաւ մէ շափթումը մարսեցիր ինձ ու չուստ գոմբէզոն էլ իս տնում։ Խոճնոց է էլի քու սէրը»։ Մարթը մէջէն է գալի ու վէրջն աւելի սէրով ու համոզմունքով իր ապրում։

## 32.

## ԱՆԲԱՐԻՇ ՍԿՍՈՒՐԸ

Էլիլ է, չի էլի, մէ մարթ է էլի, կնէկ է ունենում ու հէրը ջանս սէրով ապրում է էլի։ Ցդի դէդէն մէ չար-պառաւհաս խանումթի տէր կնէկարմատ է ըլում ու իր հարսին տանջում ասում։ Հարսը մէջէս գալդում ու փթթում է ըլում ու խեղճնապահնեքը, մարթը վուր տուն է էլի գալի, այդպէս բերնեմէն մէ խօսկ չէ կամացի իմանալ. ունքերը կիտած, լուռ ու մունջ նստած է ըլում։ Խօսք-կռվոց, էս մարթն էլ չէ համփերում։

Վէր է կենում, գնում է մարթը մէ աշէլ (ծեր) քօսա (քարծ) մարթու մօտ խորհուրդ հարցնելու։ Քօսէն թէ՝ «ադրէր, էրեվում է, դէդէն լաւ չէ պահում կնգանս, քաղցած-ծարաւ ու զրգած կու՛նէ խեղճը. Արդ, թէ իմ խօսկէն չէս ասում, մէ օր մէ էփած հաւ կօլէ լօշումն ու հերթեկնեմէն (երդիկ) դէմէր գցէ ձէր տուն ու տես, թամաշա արա»։ Մարթը գնում է տուն ու հանց անում է, վուր դէդէն կուժն ուսին ջրի է գնում, դէմէր է գցում հերթեկնեմէն լօշումը փաթթած էփած հաւ. Կնէկը թուրմէ տունն աւելելիս է

բլում. լոշն ու հացը վրա պահում է, աւելը ձեռնեմէն վեր է գցում ու վրայ ննջնում լոշին ու հացին, ուտում ու հեղն էլ ասում թէ՝ «բեզ էլ մեռնիմ ու քու գէմէր գցողին էլ»։

Էս խօսկը վրա խմանում է մարթը, գնում է, պատմում քոջին իր տեսածը։ Քօջն թէ՝ «տեսնում, վրա գէփ քու դէղի բանն է էլի. քաղցած է էլի թողնում կնգատ։ Բաս թէ կուէնց է. արբ մէ սին գանք քու դէղի գլխին։ Աստ թէ՝ մեթամ կնգատ էլ չիս սիրում, չունքի դիփ տխրած է. դուս արա կնգատ տաննեմէն ու խմում սատ դէղիտ, թէ ուրիշ կնիկ իս ուզում։ Ես կու հաքնիմ, կ'սսէ, պղչկայ շուրերը ու ես գէղիմ, կ'սսէ, խմումս»։

Ցղէն գնում է տուն ու դէղին տասում, թէ «էլ չիմ կանայ», կ'սսէ, էս թաշար կնգայ հէդ եօլա գնա (կառավարուիլ)։ Կնգան կի (խոկ կնոջը) թաքուն խմաց է տալի բանի զօրութինը, վրա չը նիգանայ, չունքի շատ է էլի սիրում նրան։ Դէդէն թէ՝ «շատ լաւ կ'անիս, վրաթթ, ու թէ սրամէն դուն ձեռը մի կալնիս, ամ էս իմ հոքէպահուստ երեք օսկին, էտավ հարսնիք արա»։

Ճանփու էն գցում կնգան էրա հօրանց տուն ու մէ քանի օրվայ վրայ էս մարթը մեթամ պխաի նուրմէկէկէլանց փսակվիլ էր։ Քօջն պղչկայ շուրերը հաքնում, գնում է էգեղեցի, փսակվում էն ու յէդ գալի տուն։ Հանց նորահարս-նորափեսէն վրացը տուն էն գնում տան շէմքը, նորահարսը վօնից տանում է ու վօնից բերում, պատուէն թէ՝ «քօփակ» (սատոա շուն), էնչ էս տաչէս կանգնում, յէդ քաշվէ, կորէ։ Խմում վրա նստել էն էրեքնահոցի վրայ, թուրմէ դէղէն ուրախու շատ է էլի ծիծաղում ու իր մի-մինձ ակռէքները էրեվացնում։ Նորահարսը թէ՝ «մէ ննգի (ընկոյզ) քար տվէք, էս քոփկի ակռէքները պխտեմ հանիմ»։ Վէր է կալնում քարն ու ակռէքները վէր ածում։ Սկիսէր սերտը դուռ է ննգնում ու չէ խմանում, թէ վօրը ծակը մտնի իր նոր հարսի ահէս։

Ցղէն խմում թաքուն հարցնում է դէղին թէ՝ «հեա, վօնց է. վօնց իս հանում էս իմ նոր կնգանը»։ Սա թէ՝ «կայ էլի, վուրթիթ»։—«Հա, թէ չիս հաւնում, կ'սսէ, կու դուս անիմ, էլի իմ առաջի կնգան կու բերիմ»։ Մէրը թէ՝ «մեռնիմ դէղէն Ջանիտ, ամ հո-

քէսա (ռան) մէ վէց օսկի էլի ունիմ իմ Թաղմիլու (Թաղման դրամ), քի կու տամ, Թաքը բերես էլի քու տաչի կնգանը ու էս գաղմանին գլխեմէս ունող տնիրս։ Ցղէն ուրախ-ուրախ բերում է էլի իր տաչի կնգան տուն ու հարսն ու սկեսուրը ուրախ ապրում են կացնում իրանց օրը։

## 33.

### ՏՈՒՏՈՒՑ (յիմար) ԿՆԻԿ.

Մէ մարթ ու կնիկ են ըլում, կնիկը համ (էլ) տուտուց է ըլում, համ (էլ) ցուպլուտ (ծոյլ)։ Վունչիչ բանի ձեռը չէ էլի կպցնում։ Մարթը մէ օր վէր է կալնում, երկու լիտր բամբակ է առնում, բերում տուն. Թէ՝ ա կնիկ, բերել իմ էս բամբակը, գզէ, մանէ ու կտաւ գործէ մեզ համա, շապիք կ'օնինք (կը շինենք), շալկի ննգիր։ Կնիկը Թէ՝ էս ինչ Թահար է գզած էս բամբակը, լաւը չէ։ Տանում է բամբակը Չրի վրայ, բղավում է, գորտներուն ձէն է տալի Թէ՝ Մարիամ Մաքթաղ, ա՛յ էս բամբակը լաւ գզեցէք, էքուց գու՛քամ, կու տանիմ։ Գցում է բամբակը ջուրը, ինքը գնում տուն։

Մարթն իրիգնապահը հարցնում է կնգան Թէ՝ ինչ արիր, գզեցիր բամբակը Թէ չէ։ Նա Թէ՝ էքուց կու՛լի։ Մէկէլ էքսը գնում է կնիկը Չրի վրայ, բղավում է էլի Թէ՝ Մարիամ Մաքթաղ, արա՛ հազիր է Թէ չէ։ Գորտները կռկռալով ձէն են տալի։ Սա վունները հանում է, մտնում ջուրը ու Թուրմէ պտտում է էլի գզած բամբակը։ Վուտը դիպչում մէ օսկէ ագուխն (աղիւս), հանում է, տանում տուն։

Իրիգնապահը կնիկը շանց է տալի մարթուն օսկէ աղուսը, Թէ՝ ա՛յ քեզ համա էս է ղրգի Մարիամ Մաքթաղը. բամբակը չէրիտ, բամբկի սափՌիյէն (բամբակի փոխարէն) փողցալ բիրի։ Մարթը ուրախանում է, վէր է կալնում էն օսկէ աղուսը օձորքի (առասաղի) տակնակի էգնէն պահում։

Կնիկը մէկէլ էքօը տեսնում է, վուր քուչումը մէ բիչ ճերեք տեկկեն (խրծիկ) է մտան անում ծախու։ Կանչում է, առնում ու էն սակէ ադուօը տալի նրան։ Նստեցնում է էտ ճերեք տեկկենը թունըրի գլխին. մէկի անունը դնում է Վարդխասախարը, մէկինը՝ Մուշկխասախարը ու վրայ ճերեքենն էլ՝ Ամբրխասախարը։ Ու ասում է մէկին թէ՝ դուն քուչի դուռը բաց արա. մէկէլին թէ՝ դուն մոխ քաշը քաշէ ու վրայ ճերեքին էլ թէ՝ դուն էլ տունն ավլէ։ Ինքը ուտում է, խմում, պառկում, քնում։ Մարթը գալիս է, օչով դուռը բաց անող չէ ըլում։ Հերթիկեմէն գէմէը է գալի, տեսնում է՝ կնիկը հարփած ու ամեն բան անկարգ։ Հարցնում է թէ՝ ինչ խաբար է։ Նա թէ՝ հոքէսա էս ճերեք քօծն (աղախին) իմ առի քեզ համա ղ'ուլուղ անելու։ Մարթը թէ՝ քեզ ծվ էրեր։ Սա թէ՝ ծախում էին, առայ ու էն սակէ ադուօը տվի։ Մարթը վէր է կալնում փէտը ու սրան մէկ թէ էրկու ու տանեսմէն դուս անում։

Գնում է կնիկը մէ սարի ծէրին նստում։ Տեսնում է մէ ակռաւ կռկռալով թռչում է էլի։ Սա նրան թէ՝ չէ, չիմ գա, անմիտ իս կանչում։ Իժում մէ շուն է անց կենում, հաչում սրա վրայ։ Սա թէ՝ չէ, չիմ գա, վուր տրաքվէս։ Իժում թուրմէ թաքաւուրի քարվանեմէն օսկով ու մարքրտով բարցած մէ ուղտ Xանփէն կորցրէլ է ու սրա առչեւօքը անց կենում գլուխը տըմբտմբեցնելով։ Սա նրան էլ թէ՝ չիմ գա, չէ։ կանչանն (ագռաւ) էկաւ, չը գնացի, հաչանն (շուն) էկաւ՝ չը գնացի, ուղտ բարօն, քու աղէղ խաթեր համա գու՛քամ։ Վէր է կալնում, էն ուղտին տանում է մէթանը էրանց տուն։ Մարթը ուղտի բերած գէնաթը (Թանգագին իրեղէնք) պարտակում է (դարնէլ) եւ կնգան թոնդրումը թաք կացնում. Թոնդրի վրայ տախտակներ ծածկում ու հաւերուն վրէն կուտ տալի։ Հաւերը կռկռալով մտան են էլի գալի վրէն ու մարթը կնգան խաբում թէ՝ մուլալի տուն, կարկուտ է գալի։ Ինքը մորթում է ուղտը, էփում, թախ կացնում։ Կնիկը վուր դուս է գալի, իր գլխին անց կացածը պատմում է հարեւններուն։ Թագաւորի մուլուզչիքը (սպասաւոր) հարցնելով գալիս են սրանց տուն, մարթուն տանում են պօլիցէն (ոստիկանութիւն)։ Կնիկը մարթուն թէ՝ այ մարթ,

վուր գնում, խոյ Հանդիսին ինձ համա հենա ու խաղրեք (տոնեսման) անա, բե՛։ Մարթին ասում է էն մարթիկերանցը, թէ՝ ինչ էք ալա խոսկի հետ ննգեւ, սա ինչ խելք ունի, սա վուր խելք տներնայ, ենձմէն հեմի էսաւնք գ'ուզէ՞։ Մարթն խոսում կնգան թէ՝ ալ կնիկ, էս գնում եմ, գտանը էսա մուղ'աթեթութին արա (պարապանեյ) ենչկի եմ գալը։

Մարթուն տանում են ու նա վուր պոլիցամը ուշանում է, կնիկը երանց տան դուռը հանում է կրնգաեմէն, շալկում, տանում պոլիցէն։ Մարթը թէ՝ ուր էս բերե դուռը։ Կնիկը թէ՝ ինչ անիմ, ուշացար. դուռն էլ մենակ չը թողի, վուր ախր թէ մուղ'աթեթ կաց, հեդս բերի, վուր օչով չըտանէ։ Մարթն ասում է խոսում մե-ծաւուրներուն թէ՝ արա սա ինչ խելք ունէ, վուր սրան ասում էք, տեսնում էք ինչ է ասում. էս սրան տունը պահ տվի, սա դուռը հանել է, բերե, տունը բաց թողի, էկե։ Սա սարսաղ (յիմար) է ու թէ չէք ասում, փոխցեցէք սոկու ու կրակի վրայ, տեսէք սո-կեն կու մի կալնէ, թէ կրակը։ Բերում են մէ ամնով սոկի, մէ ամնով էլ չաղ արած կրակ, առչևը դնում։ Կնիկը ուրախ-ուրախ մօտ է գնում կրակին։ Ձեռները վրէն տաքցնում, փաթթվում, թէ՝ մեռնեմ քու ջանին, ինչ լաւն է։ Մեծաւուրները տեսնում են, վուր կնիկը զուրթ սարսաղ է, թողնում են մարթուն։ Ու էսէնց էն ուղտի բերած սոկին ու մարքրիտը նրանցն է մնում։

---

## 34.

### ԾՏԻ ՎՈՒՏԻ ՓՈՒՇԸ

Ըլնում է, չէ ըլնում, մէ ծիտ է ըլնում։ Մէ գամ սրա վուտումը փուշ է խրվում։ Դէս է թռչում, դէն է թռչում. տեսնում է մէ կնիկ թոնդրումը հաց է թխում։ Մօտ է գնում թէ՝ «դէյդի ջան, մէ էս փուշը հանէ»։ Էն կնիկը հանում է փուշը, գցում թոնդիրը։ Ծիտը գնում է ու էլի յեդ գալի նրա մօտ թէ՝ «դէյդի, դէյդի, իմ

փուշն էս տանը։ Վ՜ուրղ'անց էր ամէն օրա՝ Ծիտը մէկ խոնչա (խոնճ) թխած լօշն առնում, դուռս թռչում նրանց առաջեւն։

Գնում է, գնում ու տափումը տեսնում, վուր օխչարաւնիրը ամթառ-րը (փեթը) րրթում են կաթնումն ու մածնումն ու ուտում են։ Ծիտը նրանցը թէ՝ «ուր էք ամթարը րրթում. այ հորէստ լօշը բրթեցէ՞ք»։ Բրթում են, ուտում ու խժում ծիտն էլի գալիս է, իր լօշերն է ուզում՝ Կերել, պրծել էին նրանք ու էլ որա վ՜ուրղ'անց կու'ակէն (կըտային)։ Սա թէ՝ «լօշս թէ չէք տա, ձիր օխչարն առնիմ, դուռս թռչիմ»։ Վէր է կալնում մէկ օխչար, թռչում, գնում է։

Գնում է, տեսնում, վուր մէկ տեղ հարսնիք կայ։ Էշը մորթել են հարսնքութենի։ «Դէն անճք, դէն անճք, կ'ասէ, օխչարը կու'-տամ, մորթեցէք»։ Նրանք էլ օխչարը մորթել են, կերել, հարսնիքն արել։ Դէսն է թռչում, դէնն է թռչում ծիտն ու էլի յէտ գալի թէ՝ «իմ օխչարը տվէք»։ Կերել էին, մարսել. էլ վ՜ուրղ'անց կու'ակէն։ Սա թէ՝ «իմ օխչարը չէք տա, դէս թռչիմ, դէն թռչիմ, հարսին առնիմ, դուռս թռչիմ»։

Փախցնում է հարսին ու ճանփին տեսնում է մէկ ծառի տակը մէկ աշուղ չօնգուրը (մի տեսակ չալգաւ) ձեռին անում է էլի։ Շատ է դուր գալի չօնգուրը ու թէ՝ «չօնգուրն էս տուր, հարսին քեզ կու'-տամ»։ Հարսին տալիս է նրան ու ծիտը՝ չօնգուրն ուսին՝ ածելով գնում է՝

Չօնգուր, չօնգուր.
Դուն հասա մանիս, ես քարակ.
Փուշը տվէլ, լօշը առայ.
Լօշը տվէլ, օխչարն առայ.
Օխչար տվէլ, հարսին առայ.
Հարսը տվէլ, չօնգուրն առայ.
Ցնգլի՛, ցնգլի՛,
Իս հասա մանիմ, դուռն քարակ։

Մաև է էլի գալի էսէնց ամէն տեղ ու իրա համար վէուղ այ-խատում։

---

## 35.

## ՄՈՐԹԱԾ ԱՂԲԷՐԸ

Մէկ մարթ ու կնիկ են ըլում. Մարթը իր առաջի կնգանից էրկու վուրթի է ունենում՝ մէկ տղայ, մէկ աղչիկ. Դէդէփուխը (մօրու) ատելով-ատում է էլի իր խորթ վուրթիկերանցը. Ինքն էլ անվուրթի է ըլում, չունքի ցաւադար է էլի. Ամեն թաճար դեղեր են տալի կնգան, շատ հէքիմներ են բերում, ամա վունչինչ չի անում. Ինչ աղէգ կերակուր էլ ուզում էր կնիկը, մարթը էն սահաթին առեղծում էր. Իր խորթ վուրթկերանցը խան (երբեմն) դէսն էր ղրգել տալի իր մարթուն, խան դէնը, մէկ քանի օրով, վուր չը տեսնէ նրանց էրեսը.

Մէկ օր էլ կնիկը իր մարթուն թէ՝ ինձ թէ կու սիրես, ալտես քու տղին մորթի ու նրա միսն ինձ ուտեցնի. Շատ դժար բան էր մարթու համար, ամա վերջը չարէն կտրած մորթում է իր տղին, էփում են ու ուտեցնում հիւանդ կնգանը. Կնիկը իր մուրազին (խղծ) հասնում է, վուր սըպանել է տղի իր խորթ վուրթուն.

Թուրմէ աղբուր մորթելու ժուդը քուրը տանը չէ ըլում, ուրոր ղըրգած է ունենում դէդէփուխը. Վուր գալիս է, շատ քաղցած է ըլում, խնդրում է դէդէփուխին, վուր մէկ իմքին տայ ուտելու. Դէդէփուխը թէ՝ հօրէտ թախչումը մսի կտուրտանք կայ, վէ կալ, կէր. Տեսնում է, վուր էն միսը իր աղբուր վուտնիրն ու ձեռնիրն է էփած. Նստում է, վէ՛նց ուտում, վունչինչ. լաց ըլում ու լաց ըլելումը քաղցած-քաղցած քունը տանում է.

Թուրմէ էն մորթած տղի հօքին ծիտ է դառնում ու թըռչում գէս ու դէն. Թռչելով գնում է մէկ դուքնի գլխին ծվվալով ասում՝

Ծիտ իմ, ծիտ իմ, կու ծվվամ.
Աղունակ իմ, կու գռնտամ.
Հօր մորթած իմ, մօր կերած իմ.
Աղէգ քվէր լաց էլած իմ։

(Վերջին երկու տողը ասվում է եւ այսպէս)

Հէրս մորթից, մէրս կերաւ.

Սիրուն քուրս վրէս լաց էլաւ:

Դուքնդարը վեր է կալնում ու էն ծտին մէ խմքնով ասղներ է բախշում. Ծիտը տանում է ասղները ու իրանց տան հերթկի գլխին պտտում գալի ու էլի էն խաղն ասում. Դէզգիվունը գիշեր է մտիկ տալի թէ չէ, ծիտը ասղները աչկերն է անում ու քոռացնում.

Իժում էլի ծիտը գնում է, խաղն ասում էն դուքնդարի համա ու էլի ասղներ են տալի. Էտ ասղներն էլ տանում է իրանց հերթկեմէջն հօր աչկերն է անում ու նրա աչկերն էլ քոռացնում.

Մէ օր էլ իժում մէ բաղալի դուքնի գլխին է ծիտն էն խաղն ասում. Բաղալը մէ բաղդղի աղլուխ է տալի. Ծիտը տանում է էն աղլուխն ու իրանց տան հերթկեմէջն գէշէր է գցում իր քվեր համա ու ինքն էլ գէշէր է թռչում նրա մօտ. Քուրն էն ծիտը վր կալնում, պաչպչում ու վրէն լաց ըլում. Ասծու հրամանքով ծիտն էլի տղայ է դառնում ու քուրն ու աղբէրը մէտեղ ապրում. Քոռացած գէդէն ու մամէն կի աչկերու ցաւի կսկծու չուստ մեռնում են ու իրանց պատաժը կըրում.

---

## 36.

### Դ՛ՈՆԱԴ (ճիւր)

Մէ մարթ է ըլում. սա վուր փսակվում է, հարսնքի էդնէն խէչաղրէրը մնում է նրանց տանը զ'օնաղ. Հարսնիքը աշունքին է ըլում. ամա խէչաղրէրը նուր տարութին էլ էնդի է էլի, նրանցմէն չէ էլի ռադ ըլում. Վուր շատ զահլէն գնում է էս մարթ ու կընգանը, մարթը փիքր է անում թէ՝ «աղբ, ա կնիկ, մինք սուտ կռվինք ու բալքի մեր անհամութինը վուր տեսնէ սա, թեղրի ու գնայ»:

Մէ օր մարթը զ'ախդի (գիտումնաւոր) ասում է կնգան թէ՝ «էսօր անպատճառ ինձ համա մէ արխալուխ (բաճկոն)

պիտակն կարէր ինչինչի մութը, արխալուխս մաշվել էր»։ Իրիգնապահը գալիս է մարթը, տեսնում է, վուր արխալուխը հագին չէ. վրայ է ծնգնում կնգան, չչպում ու տուս վրայ է էլի քաշվում, մեթամ ուզում է ծեծի. Խէչաւգրէրը մէջ է ննգնում ու ազատում հաղաղեցնի նրանց։ Մարթը քիչ հանդստանում է ու խէչաւգրուրը թէ՝ «չէն քու գնալու ճանփէն գիգենայ, վուր գուն պխտիս գնայ, վուր էս քու խաթրըն է, կնգաս չեմ ծեծում, թէ չէ, չեմ գիդի, թէ ինչ կ'անեմ»։ Խէչաւգրէրը թէ՝ «ամնաշնհը, էն ձեր ամբրի հացը գիդենայ, վուր մենք մէկտի պխտենք ուտի, թէ գուն կնգատ էլի բէզամաղ էս արի, չեմ գիդի, թէ ինչ կ'անեմ»։

Էս վուր իմանում են, մարթ ու կնիկ ձէնները կտրում են։ Նուր տարվայ էգնէն սրանք էլի մէ էտ թաղար բան են սարքում. Խօսելիս խէչաւգրէրը թէ՝ «էն կարմիր ձուն գիդենայ, վուր Զատկին մենք պխտենք մէկտի կոտրի, թէ գուն էտ խասիաթեմէն ձեռը չես վեկալնի, ես ձեզ եմ օրումը մէնակ չեմ թողնի. գուք մէկս մէկու կուտէք առանց ինձ»։

Մարթ ու կնիկ էս խօսկը վուր իմանում են, թողնում են իրանց դարսողութինը, վուր բալքի դ'օնադը իրան-իրան Աստուծ մօզաուրէ ու գնայ իրանց տուն։

## 37.

## ԴԱՐՄՆԻ ՏԱԿԻ ԿՆԻԿԸ

Մէ մարթ ու կնիկ են ըլում ու թուրմէ շատ սէրով են էլի ապրում։ Մէ օր մարթը դ'օնադ է բերում իրանց տուն ու թուրմէ գիգումն են էլի ապրում սրանք։ Հաց ուտելիս կնիկը մէջբաշ օրոշտում է. նրա օրոշտի վրայ դ'օնադի օրոշտն էլ գալիս է։ Մարթը կարծիք է ննգնում, իր մտկումը փիքր է անում թէ՝ «էրեվում է սրանք մտկումը մէ թաքուն բան ունին, վուր մէկ-մէկու նշան տվին, թէ չէ հէնց էն սահաթին վուրդի ունէր դ'օնադս օրոշտը

պտտհանձ։ Պ՚ոնաղը ձուր գնում է, մարմնը մեր է հալնում, կնքան սըպըանում է ու մաքսաքումը դարմնի տակը թաղում։

Անց է կենում խէլի (բաւական) վուխտ։ Մէ օր Թուրմէ էս մարթը ուրէշ տեղ չ՚օնաղ է ըլում, նրա սանամէրը մէքան օրօչ-տում է ու սրա օրոշան էլ գալիս է։ Խմում միսն է գալէ էս մար-թուն իր կնիկը, վայ է տալէ իր գլխին ու երանձ-կրան տսում՝ «օրոշան օրոշա կու բերէ. վայ իմ դարմնի տակի կնիկ»։ Կնիկը չըխս (բոլորովին) միզ չէ ունեցել, ամա էլ ինչ կու ասիկէր։

---

## 38.

### ՀԱՐՍԻԿՈՒԼ

Մէ տանը նուր հարս է ըլում, շատ խոնար ու ամանչկոտ ու խիստ քաշվում է ըլում իր սկեսրակ ու սկեսուրմէկն։ Ամա մէ վադ-տավարութին է ունեցել։ Թուրմէ կերակուր էփելիս հաշէն տալու պղնձեմէկն մէ մսի կտուր է էլի հանում համաշա (միշտ) ու թա-քուն անուշ անում։

Մէ օր էլ Թուրմէ տանն օչով չըլիս ու պղնձումը օխչըր միսն էփվում։ Հանում է մէքաշ մէ կտուր միս ու շտապով ուզեցել է ուտի. վուր օչով չը վըրայ հասնի։ Հէնց Թիքէն ծամելիս է ըլում, վուր տուն է գալէ սկեսուրը։ Հարսը դէօն է գցում Թիքէն բեր-նումը, դէնն է գցում ու ուզում է, մինթամ վուր շտապով կուլ տա. ամա ոսկորը կոլոլ ոսկոռն է ըլում, բողազումը չէ անց կենում, մնում է բգումը ու նորահարսը խեղտվում է։

Էն օրվամէն դէսը էն կոլոլ ոսկռի անունը հարսիկուլ են ասում։

---

## 39.

### ՓԱՓԱ (խաշիլ)

Երկու աղբէր իրանց կնգներանցով մէտի են էլի կենում, վունցոր վաղ ժամանակ սովորութին է ըլում, անբաժան: Ցէքէր կնգէքը մէշտ կըռւըն են էլի տալի (կռվում), չը բարիշում: Էսօր-էքուց, էս աղբրտերանց զահլէն գնում է, չին գիդացի թէ ինչ անէին. Մարթիքը մէ օր տանը նստած ասում են էլի թէ՝ «ախպէր միզ ինչ ձեռք կու տայ բաժնվիլը. տնիրս մէկ, մուլքներուս մէկ, ապրէլ-կենթնութին է, մէկս մէկու քօմագ կու՚լինք. խօմ կու քանդվինք, վուր ջուգ-ջուգ ապրինք»: Էնդ'անց նրա կնիկը գուս է ննգնում, ղ'ըաղ (մի կողմ) քաշում իր մարթուն ու ասում՝ «դուն ինչ գիդիս. ղ'այրաթն (խնայողութիւն) էն չախը կու՚լի. թաք (երանի) դուն բաժնվիս քու աղբուրմէն ու իժում ես գիդիմ, վունցոր կու ապրիցնիմ քիզ. էն չախը ես քիզ դիփ հացը հացով կուտիցնիմ. էստումէն էլ աւելի ղ'այրա՞թ»։

Մարթը էս վուր իմանում է, բաժնվլում է իր աղբուրմէն ու ջուգ օջախ դառնում. Կնիկն էլ կատարում է իր խօսկը. Թուրմէ ամէն օր նրան դիփ փափա է ուտեցնում. Հացը հացով է, կ'օսէ, բաս ինչ է.

## 40.

### ԱՍՏՈՒՋ ԲԷԹԱՐՆՍՄԷՆ (վատթար) ՊԱՀԷ՛

Մէ սօվդագար մարթ բըրէք-չուրս տարի Ճանփութ է էլի. տուտուսուրը վիրչացնում է ու յիդ է էլի գալի իրանց երգիրը: Ճանփին տափումը տեսնում է, վուր մէ մարթու քալլա (գանգ) թուշտում է ու ասում է իրան-իրան՝ «Աստուծ բէթարեմէն ազատէ»:

Սօվդագարը զարմանում է, թէ եարաբ (երանի) էստումէն բէթար էլ ինչ պիտի ըլի, վուր սա էսէնց է ասում. Վիր է կալնում էս քալլէն, դնում մէ պստի դ'ուլթումը (արկղ), տանում իրանց տուն.

կնգան էլ ասում է, թէ էս զ'ուլթին ամանաթ (աւանդ) է, ձեռք չտաս։

Մարթը վուր դուս է գնում տանիցէն, կնգայ սիրտը չէ 'համբերում. բաց է անում զ'ուլթին, տեսնում է մէջը մարթու քալլա։ Փէքր է անում, թէ հայրաթ մարթս ուրիշ երգրումը երա համա սիրեկան է ունեցի ու վուր մեռել է, շատ սիրելեմէն նրա քալլէն բերի հէգը։ Կնիկը չարանում է, նեղանում, վառել է տալի թոնդիրն ու քալլէն գցում մէջը, էրում։

Մարթը յէդ է գալի տուն, տեսնում է զ'ուլթին բաց ու քալլէն էլ մէջը չըկայ։ Հարցնում է կնգան ու իմանում է, վուր քալլէն թոնդրումը կրակածխուղ (մոխիր) է դառել։ Խժում սովդագարն երան-երան ասում է՝ «փառք Քեզ Աստուած. էնդու համա էր ասում խեղճը, թէ՝ Աստուած բէթարեմէն պահէ ու ազատէ»։

---

## 41.

### ՈՒՂՏԸ ՄԻ ՓՈՒՂ

Մէ մամա ու վուրթի են ըլում, էնէնց խեղճ են էլի, վուր էրկու գրօշ չին ունեցի կանանչու փուղ։ Մէ օր տղէն քուչումը տեսնում է, վուր մէ ուղտապական քուչա-քուչա մէ ուղտ է էլի ման անում ծախու ու բղավում՝ «ուղտը մէ փուղ»։ Տուն է վազում տղէն մամի մօդ, թէ՝ «մամի ջան, ուղտը մէ փուղով են տալի. ինչ էժան է, արի, առնինք»։ Մամէն թէ՝ «թանգ է, վուրթի»։

Անց է կենում ժամանակ. մամա ու վուրթի զ'այլբաթով (խնայողութիւն) լաւ փուղ են շինում իրանց համար։ Էս վախտը տղէն տեսնում է քուչումը, վուր մէ ուղտապական ծախու մէ ուղտ է ման անում ու ասում՝ «ուղտը խուն թուման»։ Մամէն վուր էս իմանում է, կանչում է տղին թէ՝ «չուստ գնա, կ'առէ, վուրթի, էտէն ուղտը, շատ էժան է, ձեռնէրեմէս չըգնայ»։ Տղէն զարմանում է, թէ՝ ուղտը մէ փուղ էր, մամէս ասաւ՝ թանգ է. հէմի խուն թուման է ու էժան։ Մամէն թէ՝ «վուրթի, ճիրոք ուղտը մէ փուղ

էր, ինձ համա մի փուղը հազար թուման աժ էր. հիմիկվայ խոսն թումանը աճկումս չի էրեւվում. հիմի փուղն ու խուղը մէկ է ինձ համա։

## 42

## ՁԱՐՁԱՐԱՆՔՈՎ ԱՇԽԱՏԱԾ ԱԲԱՍԻՆ

Մի մինձ սովդագար մարթ մի տղայ է ունենում ու թուրմէ ամեն օր տալիս է էլի նրան մի-մի արասի, թէ՝ «տար, կ՚օսէ, վըւրթի, ջուրը գցէ»։ Վուրթին տանում է էլի էն արասիքը, շպըր-տում, ջուրը գցում. էհէնց մի քանի տարի։ Տղէն վունչինչ գուրծի չի ըլում, իր հոր տանը ուտում-խմում, քէփ անում։

Մի օր էլ սովդագարը իր բարեկամներուն ասում է թէ՝ «վուր-թիս վուր գայ ձիզ մօդ փուղ ուզելու, չը փուխ տաք»։ Խրում վուրթուն թէ՝ «էսօր դուն գնա, մի արասի աշխատէ, բէ, տեսնիմ քու գազած փուղն ինչ թահարն էս»։ Տղէն ուզում է բարեկամներ-մէն փուխ կալնէ, նրանք չին տալի։ Փիքր է անում, փիքր է ա-նում, թէ վո՞նց աշխատէ։ Չարէն կտրած գնում է էն մի օրը մշա-կութին է անում. վուտնիրը հանած թուրմէ կիր է էլի շաղխում սաղ օրը։ Մի արասին ըստանում է ու բիրում հօրը շանց տալի։ Հէրը մէկէլ էքսն էլի ասում է նրան թէ՝ «տար, կ՚օսէ, էս քու աշխատած մի արասին ջուրը գցէ»։ Տղէն թէ՝ «ախպար, մամի ջան, վո՞նց դէն գցիմ ես էս արասին. գիդե՞ս ինչ՚դա չարչարանքով իմ ճարէ, վուտիս պճղնիրը ջէր հիմի էլ էրվում է կրեմէն. չիմ կանայ դէն գցի. ձեռս չի զօրում»։

Հէրն էսոր վրայ թէ՝ «բառս ես վուր էսքան ժուղ մի-մի արասին տալիս էի, դուն լաւ հիշա-հիշա տանում էիր, շպըրտում. իմ արասիքը կի հենց գիդիս պակաս աշխատանքով էր գազած։ Էտէնց իմացիր. վուրթի, ամեն բանը»։

## 43.

### ԱԽՄԱԽ (տխմար) ՄԱՐԹ

Մէ խեղճ մարթ ու կնիկ էն ըլում. ունենում էն էլի մէ կով ու էնդով եօլա էն էլի գնում (կառավարում). Մէ օր Թուրմէ էն կովը կնիկն է էլի տանում ջրի վրայ, մէ օր՝ մարթը։ Մարթ ու կնիկ մէ օր էլ խօսա բռա էն մնում (համաձայնում) մէկ-մէկու հեդ. կնիկը թէ՝ գօւն պիտիս տանի էսօր. մարթը թէ՝ չէ, գօւն պիտիս տանի էսօր. Վերջը խօսկ էն կապում, վուր օվոր սաղ օրը մունջ կենայ, ինքն ձէն-ծպտուն չը հանէ, նրան չը դրգենք, կ'օսէ. մէկէլ էքօր կովի հեդ ջուրը։

Նստում էն մարթ ու կնիկ լուռ ու մունջ։ Կնիկը վուր խիստ բեզրում է, գնում է հարևանինեց տուն, խօսում է, խօսում, սիրտը դարդկում է. Մարթը մնում է տանը. Էտ վախտը գալիս է սրանց տուն մէ աղկատ օղորմութիւն ուզելու. Մարթը ձէն չէ տալի. Աղկատն էլի ուզում է. Նա վունչինչ չէ ասում, մօտ է գնում, հենց իմանում է թէ խուլ է, բացը բղաւում է. էլի նա ձէն չէ հանում։ Աղկատը վեր է կալնում, ինչոր տանն ըլում է ու չէ ըլում, գլխի մխանայ սրփում, տանում է. Թուրմէ մարթը տեղեմէկն էլ չէ ժաժ գալի։

Կնիկը վուր յեդ է գալի տուն, վունչինչ աճկ չը տենէ, ինչոր նա է տենանում. տունը ջլխս (բոլորովին) դատարկ է հանդիպում. Վրայ է ընգնում մէքաշ մարթուն, էլ չը համբերում, թէ՝ «տօճ, Ճառ կտրած. էս ինչ էս արե. ճժ է դարդկի տունս». Մարթը թէ՝ «հօն, բռնեցի. ամ տարաւ գօւն խօսեցար. էքուց բռա կովը գօւն պիտիս տանի ջուրը»։

## 44.

### ԸԳՆԳԼԵՑԻ ՇԻՆՈՂ ԹԱԳԱՒՈՐԸ

Վաղ ժամանակ Թուրմէ Ստամբօլ մէ քրիստոնայ Թագաուր է էլի ու ուզեցել է մէ հետի մինձ էգեղեցի շինէ, վուր հառը

չունենայ սաղ աշխարքումը։ Հիգն էլ էնէնց դարսողութին է անում, վուր եազ (սարր) ոմքնու մասը խառը չըլի էտ շինութենումը։ Հրամանք է անում ուստերուն ու մշակներուն, վուր ուրիշ ոմքին չը մօզ թողնին քանդելու ու օշովեմէն էլ մէ գրոշ, մէ մանգ'ուլ չէ էլի վր կալնում էն էգեղեցու համա, թէ ինչ է, վուր էն էգեղեցի շինելու վարձկը գիժ իր հոգուն գնայ։

Ի'վուր էգեղեցին շինում, պրծնում են, զուրթ վուր մէ հրաշալի իմքին է դուս գալի. ամեն ճրգըեմէն գալիս են էլի մոտիկ տալու ու գլխունքը մայլ են էլի մնում (զմայլի), չունքի էրանց ճրգըումը էտ թաճար էգեղեցի վունց էլել էր ու վունց կու'լէր։ Թագաւորն էլ շատ ուրախ է ըլում։

Մէ գիշեր էրազ է տեսնում թագաւորը ու միթամ հրեշտակն ասում է նրան, թէ՝ «գուն հէնց գիդիս, կ'ասէ, թէ էտ էգեղեցու վարձկը քունն է. շատ սղալ իս. վարձկը քունը կի չէ, կ'ասէ. էն խեղճ պառաւ կնգանն է, վուր ամեն թաճար չալէշ է էկի, քանի ամիս չարչրվել է, վուր վունցոր ըլի մէ ուստութենով իր մասը խառնէ էգեղեցումը, ամմ չէ էլի կանենում. ուստէքն ու մշակները չին էլի մօզ թողնում։ Վերշը գնում է էտ կնիկը մէ մշակեմէն ջրի խէլազա (փարչ) է ուզում, ջուր խմում ու թաքուն քերնումը պահած մէ պատի կէնճի (խոփ) է ունենում, գցում խէլազէն։ Ջուրն ածում են կիրը, կէնճին էլ մէչըն է ննգնում ու էգեղեցումն է քանում։ Մէնձ վարձկը, կ'ասէ, նրանն է, էն խեղճ կնգանը, ասում է հրեշտակը թագաւորին. քու արած վարձկը վունչինչ»։

Թագաւորը զարթում է քնեմէն ու էն էրազը իրա օրումը չէ կանացի մտէն գցի ու էտէնց իր միտկը տանջելով անց է կացնում իր օրը։

## 45.

### ԹՂԹԱՏ (կակաղ) ԱՂՋԿՈՒՐՔԸ

Մի վուրփինկերի կնիկ ճրեք մարթու տալու աղջիկ է ունենում, ճրեքնովկա թըխլաւ։ Օվոր իմանում է էլի գըրանց էտ այրը (արատ), չէ էլի ուզում։ Աղջիկերքը տանը թըթվում ին էլի։ Դէդէն մէջտ խըրատում է էլի, վուր ուշովի հէդ շը խօսին։ Ամա չունքի փողարը պստի քաղաք է էլի, գըփունանցը այդնի է էլի գըրանց փուշը, չին էլի կանացի թարքընի։

Մի գամ թուրմէ մի գ'արիր (օտարական) տղայ է ճանգում մէրը ու ուզում է ափալ-թափալ (յանկարծ) մէկին ու մէկի աղջիկան կպցնէ նրան։ Գնում-գալիս է էլի տղէն նրանց տուն ու մէջտ գէ-գէն է էլի խօսում նրա հէդ, աղջիկերքը ձէն-ծպտուն չին էլի հանում։ Մի օր էլ թուրմէ էտէնց տղէն գըրանց մօդ նստած է ըլում օթախումը։ Մի բաշ քընջնիմէն մի մուկն է դուս ննգի ու դէս ու դէն է էլի վազվզում։ Մինձ աղջիկը թէ՝ «մուկը (մուկը), մուկը»։ Միջնիկ աղջիկը թէ՝ «ծակը (ծակը) մտաւ, ծակը մտաւ»։ Խէում պստի աղջիկը միթամ գլուխը դուրթելով (արդարացնել) ասում է՝ «գէդի ջան, վունց տեսիլ իմ ու վունց տ'օսիմ (կ'ասեմ)»։ Տղէն իմանում է նրանց թըխլաւութինը ու ձեռք վի կալնում նրանցմէն. տեսնում է, վուր ականաթն ին էլի ուզում գցի նրան։

---

## 46.

### ԽԾԱՆԻՐԸ

Մի մարթ փողոցումը էրկու ուլ է առնում ու խրխընապահը տանում է տուն. կնիկն ու գէդէն տանը չին ըլում. պահում է տախտի տակն ու գնում բանի։ Էն գիշիր տուն վուր գալիս է, կըն-գան ու գէդին վունչիչ չէ ասում թէ ուլիր է առի։ Մէքրաշ քնած տէղէն կէս գիշիրին մարթը վիր է թռչում գողնքումը, չունքի ի-

ծառերը միտն է գալի, ու թէ՝ էյ կնիկ, ա՛ կնիկ, խծանքը, խծանքը»։ Կնիկը վախենում է շատ, գլխին վայ է տալի, թէ՝ «ջուրն էկել է, ինձ տարել է. մարթուս հանդերուքս (խնծութին) է էկե հալբաթ»։—Ա՛ կնիկ, խծանքը, խծանքը, բաս չը տեսա՞ր խծանքը», ասում է էլի մարթը կնգան. Կնիկը դողդղալով զարթեցնում է իր սկեսրը։ Իժում ազէն իր դէդին թէ՝ դէդը, դէդը, բաս չէ՞ս գիտի, խծանքը, խծանքը»։—Ի՞նչ խծանքը, վուրթի, Դաւիթ. էստի խծանքը չըկայ, ուշկի արի, վուրթի ջան»։ Էրեսին էլ բլոմա (շատ) ջուր է շաղ տալի. մեր Դաւիթը օտապանում է (սթափվի), գէս ու գէն մտիկ տալի. պտտտում է էլի. Էտ վախտը տախտի տակեմէջն ուլը մկկում է ու մեր Դաւիթը յէդ է պատմում, վուր գըրուստ իծանքը է առել ու նրանք կը իրան գժի տեղ էն դնում.

---

## 47.

### ՈՒՂՏԻ ՁԱՔԸ

Մէ գամ ուղտի ձաքը մտնում է մէ մարթու տուն, ասում՝ «շատ հիւանդ իմ ու անդէր-մունդուէկ, ինձ տիրութին արա»։ Մարթու մեղկը գալիս է, տուն է թողնում ու պահում է էլի. Վերջը լաւացել է էն ուղտի ձաքը, ամա չունքի էրկու-թրէք տարի էր անցկացել, մենձացել էր, մենձ ուղտ էր դառել. Մարթն ուզում է էլի ճանփու դնի, ամա դուն բէքախտութենին մտիկ արա, էլ դռնենումը չէ էլի մտնում, չէ կտնացի դուս գա. Մարթը շատ է փիքր անում. վերջը վեր է կալնում տան դռները քանդում է, պատը վէր բերում, ճանփէն լէնացնում ու էնէնց ճանփու դնում ուղտին իրա տանեմէջէն։

(Փոխաբերական մտքով ուղտը պարտք է նշանակում).

---

## 48.

### ԾԱՆԴՐ-ԾԱՆԴՐ ԽՕՍԻ

*Մէ վուրփևվէրի կնիկ նշնելու տղայ է ունենում, մէ աշխարք յրանեած, յրդուս կանգնած ամքին է ըլում, հալալ—միամիտ։ Ի՛վոր նշնվում է էս տղէն ու կցում իր անհրանց տանը գնալ-գալը, գէղէն սրան խրատում է, թէ՝ վուրթի ջան, անհրանցս տանը ծանդր-ծանդր խօսի, գլուխս թէթէւ մի բռնի, վուր աքէն թէ խելօք է։*

*Տղէն վուր գնում է անհրանց տուն, նրանք էսզ՚անց-էնզ՚անց սրան խօսեցնում են. նա կի ամէն մէկի խօսկին թէ՝ Մասուսի սարը, օվկիանի ծովը, Հազար լեռը, Հազրուր փութ ու գիփի ծանդր ու մինձ բաներու անուններ է տալի։ Մէկ-էրկու ու աղչկայ տէրերը վուր տեսնում են, էս տղէն վունցոր միքաշվածի աչս է, էլ չին տալի աղչկան, դարդակ ճանփու գնում։*

---

## 49.

### ԳՆԱՑ ԹԱՆԳՈՒԹԻՆԸ. ԳԱՑ ԷԺՆՈՒԹԻՆԸ

*Էրկու քուր են ըլում, մինձը առաչ չէն է էլի ու իժում խըղճանում ու պստի քուրը չէն է ըլում ու մէ օր խիղճ քուրը գնում է զ՚օնաղ չէնի մօդ, տեսնում է, վուր նա նազուք է թխում։ Խիղճ քվիրը վուր տեսնում է, չէն քուրը տաք-տաք նազքնիրը տակն է գնում, վրէն նստում է, վուր նա վարտուրդ չանէ, չուզէ։ Խիղճ քուրը թէ՝ գնայ թանգութինը, գայ էժնութինը, էրվի վ..., ամաչէ էրեսը։ Դարդակ ճանփու է ցցում սրան։ Սովն անց է կենում, մինձ քուրը չէնանում է, պստիկն աղկտանում ու մէ օր հիմի սա է գնում իր մինձ քվիր մօդ զ՚օնաղ։ Մինձ քուրը թուրմէ նազքնիր է էլի թխում, գուս տվի ու թօնդրի կշտին փռուտի։ Վուր տեսնում է իր պստի քվիրը, թէ՝ արի, քուրիկ ջան, կը ինչքան սիրտս տայ,*

## 48.

### ԾԱՆԴՐ-ԾԱՆԴՐ ԽՕՍԻ՛

Մէ վուրփեմէքրի կնիկ նշնելու տղայ է ունենում, մէ աշխարք չըռնեռած, չըդուս կանգնած օմքին է ըլում, հալալ—միամիտ. Ի՛վոր նշնվում է էս տղէն ու կցում իր աներանց տանը գնալ-գալը, դէղէն սրան խրատում է, թէ՝ վուրթի ջան, աներանցա տանը ծանդր-ծանդր խօսի, գլուխս թեթեւ մի բռնի, վուր ասեն թէ խելօք է.

Տղէն վուր գնում է աներանց տուն, նրանք էսղ'անց-էնղ'անց սրան խօսեցնում են. նա կի ամեն մէկ խօսկին թէ՝ Մասիսի սարը, օվկիանի ծովը, հազար լեղը, հարուր փութ ու գիփ ծանդր ու մինձ բաներու անուններ է տալի. Մէկ-էրկու ու աղչկայ տէրերը վուր տեսնում են, էս տղէն վունցոր միքաշվածի պէս է, էլ չին տալի աղչկան, դարդակ ճանփու դնում.

## 49.

### ԳՆԱՑ ԹԱՆԳՈՒԹԻՆԸ, ԳԱՑ ԷԺՆՈՒԹԻՆԸ

Էրկու քուր են ըլում, մինձը առաջ չէն է էլի ու իժում խըղճանում ու պստի քուրը չէն է ըլում ու մէ օր խեղճ քուրը գնում է զ'օնաղ չէնի մօտ, տեսնում է, վուր նա նազուք է թխում. Խեղճ քվիրը վուր տեսնում է, չէն քուրը տաք-տաք նազքները տակն է գնում, վրէն նստում է, վուր նա վարառուրդ չանէ, չուզէ. Խեղճ քուրը թէ՝ գնայ թանգութինը, գայ էժնութինը, էրվի վ..., ամանչի էրեսը. Դարդակ ճանփու է գցում սրան. Սուվն անց է կենում, մինձ քուրը չէնանում է, պստիկն աղկտանում ու մէ օր հիմի սա է գնում իր մինձ քվիր մօտ զ'օնաղ. Մինձ քուրը թուրմէ նազքներ է էլի թխում, դուս տվի ու թոնդրի կշտին փռոտի. Վուր տեսնում է իր պստի քվիրը, թէ՝ արի, քուրիկ ջան, կի ինչքան սիրտդ տայ,

տանը ինչքան ուզեննաս. գնայ Թանգութինը, գայ էժնութինը, էրվի վ..., ամանչի էրեսը։ Պատի քուրն ամութը գեղինն է մընում, թէ՝ կոնճամ, կրակամնխուգը (մոխիր) կու շաղխիմ, կուտիմ ու քու դուռը կի չիմ գա։

## 50.

### ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Մէ տանը մէ կատու է ըլում ու մէ շուն։ Սրանք մէ օր էս թաճար մասխաթ (զրոյց) էն ունենում, վուր ծիտն իմանում է ու մեզ մօտ խաբար է բերում։

Կատուն ասիլ է՝ մէ արաաի չունիմ, մէ կաշի ունիմ, ապրում իմ. էնէկ իմ տէրը օխտը քոռ աղչիկ ունենայ, օխտը թիքէն (պատառ) ձեռնէն խլիմ, ուտիմ։

Շունն ասիլ է՝ էնէկ իմ աղէն օխտը տղայ ունենայ, օխտն աղլուխ (թաշկինակ) տուն կու բերին, օխտը փայն (բաժին) ինձ կուտան, կու կշտանամ։

## ՎԵՐՋԱԲԱՆ

*Այս գիրքս վերջացած, լոյս աշխարհ է տեսնում և ես ան-կարող գտնուելով սոյն մի քանի խօսքերը յառաջաբանումս գրել, այժմ այս տողերով ուզում եմ լրացնել թերի մնացած կէտերը։*

*Նախ և առաջ քաղցր պարտաւորութիւնս եմ համարում հրապարակօրէն խորին շնորհակալութիւնս յայտնելու այն անձանց, որոնք այսպէս թէ այնպէս օգնեցին ժողովածուիս կազմելուն, մի քանիսը կարևոր խորհուրդներ տալով, միւսները նիւթ հաղորդելով, այլք օգնելով օտարազգի (տաճկական, պարսկական և արաբական) բառերը և դարձուածները պարզաբանելու։ Այս նոցա անունները՝ պրօֆեսօր Քերովբէ Պատկանեան, Արգար Յովհաննիսեան, Սեդրակ Մանդինեան, Գաբրիէլ Սունդուկեան, Աղեքսանդր Երիցեան, Աղեքսանդր Քիշմիշեան. Զաքարիա Գրիգորեան, Միքայէլ Քոչարեան, Յովսէփ Փանդոյեան, Աբիսողոմ Յովհաննիսեան, Կարապետ Քոչարեան և Գալուստ Շէրմազանեան, մանաւանդ այս վերջին երկուսը, որոնք այս գրքի տպագրութեան միջոցին շատ երեկոներ նուիրեցին, նպաստելով ինձ թէ նիւթեր հաղորդելով և թէ պարզաբանելով ինձ անյայտ օտարազգի բառերը։ Ունիմ և մի այլ աւելի երկար ցուցակ բուն թիֆլիսեցի արանց և կանանց, որոնք կենդանի աղբիւր են եղել ինձ համար ժողովածուս կազմելիս և մեծ մասամբ պառաւ կանայք, բայց նոցա խնդրանօք չեմ յիշում անունները, նոցա համեստութիւնը պահպանելու համար։ Բայց և այնպէս մատուցանում եմ նոցա նմանապէս իմ խորին շնորհակալութիւնը։*

*Գալով այժմ ժողովածուիս նիւթին և նորա դասաւորութեանը, պիտի ասեմ 1.) Առածների և Ասացուածների բաժնում աշխատել եմ նախ դնել առածները և յետոյ ասացուածները, բայց, ինչպէս ընթերցողները կը նկատեն, ասացուածների շարքում մի քանի տեղ մնացել են և առածներ. 2.) համանման առածները և ասացուած-ները դրել եմ առանց զանցառութեան, թէպէտ նոցա տարբերու-թիւնը շատ փոքր է եղել, ցանկալով պահպանել բոլոր ձևերը. 3.) Ոճերի և Դարձուածների բաժնում, որովհետև դոքա դրուած են այբբենական կարգով և պատահական բառով սկսվում, անխու-սափելի եղան կրկնութիւնք. 4.) մի քանի տեղ ասացուածները մտել են Ոճերի և Դարձուածների բաժնում սխալմամբ. 5.) ստա-*

բարդի և գաւառական բառերի բացատրութիւնը դրել եմ բացատրելի բառերին կից. աւելի դիւրութիւն տալու ընթերցողին, թէպէտ շատ տեղ աղեղացնում է այդ բազմաթիւ փակագծերի գործածութիւնը. 6.) մի քանի տեղ (շատ սակաւ) որևիցէ առածը կամ ասացուածը պահպանելու համար վստահացել եմ տպագրութեան համար անտեղի բառի փոխանակ մի այլ բառ դնելու. 7.) ամբողջ ժողովածուիս մէջ օտարազգի բառերը բացատրել եմ ուրիշների օգնութեամբ և որովհետև շատ այդպիսի բառեր աղճատ ձևով են գործածում և արտաբերում Թիֆլիսեցիք, վասն որոյ մի քանի տեղ անշուշտ կը պատահին սխալ բացատրութիւնք, թէպէտ ամեն կերպ ջանք եմ դրել դորա համար և հենց այդ պատճառով գըրքիս տպագրելուց յետոյ վերջումը դրել եմ մի ցուցակ՝ նկատած անճիշտ բացատրութեանց մասին. 8.) մի քանի տեղ բառերի դիմացը դրել եմ հարցական նշաններ, ցոյց տալու, որ դոցա բացատրութիւնը ինձ անյայտ է և. մի քանի տեղ անբացատրելի բառերը՝ տատատա, բատատատա, շըլդըրա, տաշտարօրա և այլն, որոնց մի քանիսը գուցէ աղճատուած օտարազգի բառեր լինեն, թողել եմ առանց բացատրութեան.

Ինձ մնում է այժմ ասել ընդունած ուղղագրութեանս մասին. Յառաջաբանումս ասածին այնքանը կարող եմ աւելացնել, որ ես ամեն կերպ աշխատել եմ բառերի տեղական արտասանութիւնը պահպանել ճշդութեամբ, իսկ ուղղագրութեանս մէջ ես ինքս այժըմ գիրքս վերջացրած ժամանակը նկատում եմ մի քանի անյարմար կէտեր, օրինակ՝ դրել եմ էրեվնեցի, թըրվ-թըրվ տալ, վերեվանց և անձրիւ, առչիւը և այլն: Շատ կըցանկայի լսել մասնագէտների կարծիքը առհասարակ ընդունած ուղղագրութեանս մասին:

Ի վերջոյ աւելորդ չեմ համարում ասել երկու խօսք լաւծ տրտունջիս մասին, որ կարող է տեղի տալ իբրև վիրաւորուելու մի քանիսին, որոնց աւելի անունները կամ ազգերը ես դրել եմ այս գրքում. Բոլորովին մի այդպիսի ցանկութիւն չեմ ունեցել ում և իցէ սիրտը վիրաւորելու. միակ նպատակս եղել է ցոյց տալ ժողովրդի սրամտութեան աստիճանը. Իսկ եթէ այնու ամենայնիւ նեղացողներ լինին, նոցա մխիթարելու ասում եմ, որ այդ ցուցակում դրել եմ և իմ հանգուցեալ հօր աւելի անունը՝ ծիւ-կծած՝ երեսին ասի ունենալու պատճառով.

Գ. Տ. Ա.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ *)

## ԱՂՕԹՔՆԵՐ

### 1.

Թոնդրի Թորոս,
Աքսան Պօղոս,
Դուս արէ,
Տակը շ··· էկել է։

(Գիշերն անկողնում ջրվէժ անող երեխային, այս սովորութիւնը յետ գցել տալու համար, շալակած խփում են սենեակի չորս անկիւններին երեք չարաթ գիշեր)։

---

### 2.

Մաշը միսս է։

(Ասում են, երբ մէկի ակռնըը ծվում է)։

---

### 3.

Ծիղ իս՝ դուս արի.
Խուղ իս՝ Հալվի։

(Ասում են աչքում մի բան ընկած ժամանակը, աչքը տրորելով)։

---

*) Այստեղ դնում եմ իբրև Յաւելուած այն, ինչ որ այս գրքէ տըպագրութեան ժամանակը ձեռքս ընկաւ և անկարող գտնուեցայ իւր տեղը դնելու գըրքում։

Գ. Տ. Ա.

1.

Ճալա Հալա,
Ննգիրս Հալա.
Ջանգակն իս, թէ բամբակը։

(Երեխանց խաղ).

---

2.

Իղ է, իղ է.
Զվաձիղ է.
Օվոր գ՚ուզէ,
Նա վի քաղէ։

(Երեխանց խաղ).

---

3.

Հեքիաթ, Հեքիաթ պապս,
Ղ՛աշղա *) քուռակ տակս.
Մէ սնդուկ Հաց շալակս,
Մէ սիրուն աղջիկ քամագս։
Հա գնամ ու Հա գնամ։

(Հեքիաթների վերջին).

---

4.

Քուրը ([illegible]) ննգայ՝ Քուռը՝ ննգայ.
Աղբէր ննգայ՝ աղբուս ննգայ.

---

*) Ճակատին սպիտակ նիշ ունեցող։

Հէրը ննգայ՝ Հաւըր ննգայ.
Մէրը ննգայ՝ մաւըր ննգայ.
Մարթը ննգայ՝ վարթը ննգայ։
(Ասել է ուշ մարդու տուած աղջիկը կամ մարդու տալու այրի կինը)։

---

5.

Արի՛, Դոնդի՛ ([illegible]), Հաց կե՛.
Գինին մուքթա (յէք) է.
Գլուխտ ուռիլ է.
Քինթա քուփթա է։

---

6.

Իս գնացի Ճապալա ([illegible]).
Ճանփին մէ պախրա կալայ.
Ջէլլաննիրը խնդրեցին՝
Դուն միգի ազատ արա՛։
Գնացի շահի դուռը,
Ձահն սաս՝ բարաքալլա ([illegible])։

---

7.

—Իմ հաւը խոմ գէտը չէ՞ էկի.
«Դէս ու դէն գնաց։
—Վուտին ինչ ունէր.
«Ձիր ու չամիչ։
—Օ՞վ ու ո՞վ կերան.
«Հարսն ու փեսէն։

— Հարսը վո՞ւր տախտին.
«Էրծըթէ տախտին»։
— Փեսէն վո՞ւր տախտին։
«Ոսկէ տախտին»։

8.

Արուդբուդա, բուդբուդա,
Ջգրաշէնը քէթխուդա (տանուտէր).
Խունդն ու մումը ծվ կու տայ՝
Ձիօթնց Մնլքօն կու տայ։
Էս թաղը էրէք թաղ է,
Մէջը բլրուլի բաղ է.
Եօրղան (վէրմակ)-դօշակ գցած է.
Բարց ու բալիշ դրած է,
Քալօն (աշխէտ ձիուն) մէջը պառկած է,
Մնլքօն կշտին կանգնած է։
Քալօն ասաւ՝ մէ ջուր տու.
Մնլքօն ասաւ՝ դալթար տու.
Էրնխէն փուփ է ուզում.
Կճուճը խուփ է ուզում։

## ԱՌԱԾՆԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

Ասա՝ ում մօտ ես ման գալի. ես ասեմ թէ՝ դուն ինչ մարթ ես։
Անձրեւ օրը հաւերուն ջուր տվող շատ կու՛լի։
Ակռաւը գոմշի մէճկը քթվում է իրա փուրի համա։
Ամեն մարթու սրտումը մէ ասլան (առիւծ) կայ պառկած։
Ամենքի գուռնի վրայ խաղալ չի ըլի։
Ակռէքտ ցաւում է՝ հանէ, վուր պրծնես. հարեվանտ փիսն է՝ հեռացէ, պրծնես։

Ասում են թէ՝ էշն է քած (էգ)․ դուն ասած իս՝ քուռակն էլ է քած։

Ամեն ագար (յա—) ագար է․ ամեն տակաւի (տըմբ—) գաշար է։

Ամեն Ղ՚ազարին աղկատ Ղ՚ազար չին սախ․ ամեն տակուուն կարմիր գազար չին սախ․ ամեն մարթուն խօջա (Ներսէս) Նազար չին սախ։

Անձու անկը վուր քիզ վրայ քաղցր ըլի, մասղի դառը իր վուտով գու՚քայ քու դուռը։

Ամեն օմքնու վարձկը իրա առաջը կերթայ։

Արջը խաղի էգնէն ննգաւ, տանձը մտէն գցից։

Արա, մէ արասի (20 ֆ.) տու, բալքամ (Կ—յէ) հինգ շախ (25 ֆ.) տամ։ (Իէ գին ԽՏ)։

Արեգակին ասում է՝ դուն մէր մոլի (Տ—յ Տ—ն), էս դուս գամ։ (Շ—ր գե—յ է)։

Ախիլ է կուտը (Բ—ին ըն—ծ Խ—ի Կ—տ), մոխլ է մութը։ (Ի—ր —ի յ—ն—յ—ծը յ—ն է Կյ—)։

Բաղնսի ջրով խաթր (դոստ—) է անում։

Բէվախտ էկած ղ՚օնաղը իր քիսաէն (ք—ֆ) կուտէ։

Բարեկամը գլխին է մոխկ տալի, դուշմանը՝ վուտին։

Բուրթը տված շուն կու նմանի։ (Շ—ր Իէշո)։

Գժի աղուէն Աստուած կու աղայ։

Գէլը քաղցածութենէն չէր կանացի գալիվէրը գիմիր գնա․ սախն՝ էնքան կերել է, չէ կանացի ման գա։

Գուղը վուր տանու ըլի, էգը հիրթկեմէն կու դուս քաշին։

Գուղը վուր մէ տեղ ուզում է մտնի, առաջ վախչելու ճանփէն է վիկքը անում։

Գարի ունիս, քու ձիուն ուտեցրու։

Գեղնի տակը կերակուր վուր էփին, աղ գցողը դուն իս։ (Հ—, ֆ—յ——)։

Գէլ ննգաւ վուրը՞տ։ (Շ—ֆ—)։

Գառդակ իշի թօփրէն (դաշ) էրուսաղէմ կերթայ ու գու՛քայ։
Գամըլա ([illegible]) մարթու ձեռնիրը համաշա ([illegible]) փլաւ է ուտում։

Էշը կերան, կուշտու ([illegible]) վրայ խռովեցան։
Էշս գէլը կերաւ, գէլն էլ մէ գէլ ըլէր։
Էրեխի լիզուն դէդէն կու իմանայ։
Էժան մսի խաշուն շուննն է կերի։ ([illegible])։
Էրուսաղէմ գնաց, քոռ վարթապետի ձեռին պաչ արաւ։
Էրեխէն ասաւ՝ փայս ([illegible]) քիչ է, էն էլ էկաւ, կատուն խլից։
Էշը դաղում ին ([illegible]), դուն հենց գլուխս քարաբ ([illegible]) ին խորվում։
Էլի էն ջուրը, էլի էն ջաղացը։ ([illegible])։
Էրկու իշի գարի չի կանայ փայ անի ([illegible])։

Իր սրտի ուզածն ասողը՝ սրտի չուզածը կու իմանայ։
Ինչ տէրտէրն է, էն էլ ժողովուրթը։
Ինչկլի տուրն էկաւ, ահը գլուխը տարաւ։
Իմացիլ ին խորովածի հոտ է գալի, էն կի չէ վուր էշ ին դաղում ([illegible])։
Իշին ասին՝ անկտ լուս, քիդ քուռակ էլաւ. ինչ անիմ, ասիլ է, իմ բեռը կի չը պակսեցաւ ու։
Ինչկլի արխումը ([illegible]) ջուր գու՛քայ, գրդնի անկիլը դուս գու՛քայ։
Ինչոր խօսում է, հենց գլիգենաս թէ աւետրանի կուզկին ըլի գրած։ ([illegible])։
Իրդնքեմէն թուչունք է վէր բերում։ ([illegible])։

Լիզվի պէս քաղցր բան չը կայ, լիզվի պէս դառը բան չը կայ։
Լօղմանի հէքիմը ([illegible]) օխտը ուղտի բեռը ակուքի գիր է պատրաստի, դիփունեմէն առաջ ակռէք հանելու դաղն ([illegible]) է քաշ արի։

*Լաւ մարթու անունն իմացի, էրեսը մի տեսնի։*
*Լաւութիւն արա, ջուրը գցէ. ձուկը չիմանայ, Աստուած կու իմանայ։*
*Լաւութէնին չինք գիմնում, անրխտութէնին գլխնում ինք։*

*Խարազի* ([illegible]) *լախչիքը* ([illegible]) *ծակ կու՛լի։*
*Խուզն ասաւ՝ ինչոր գոմիքս* ([illegible]) *ուեղցան, գլխի պզտուր ջուր իմ խմում։* ([illegible])։
*Խլօպուզը* ([illegible]) *քու, է կերի, խնձաղինը* ([illegible]) *սուտ է ասի, ամառվան օրինակը՝ փունջ մանուշակ։* ([illegible])։
*Խիղճը մեռնի՝ օճորքը* ([illegible]) *չիմանայ. շէնը մեռնի՝ աշխարքն իմանայ։*
*Խուզը Ալլօի գլխին, վուր Մարտոզի չը գառնայ։* ([illegible])։
*Խափեցի, տաշտը մեճկխտ կապեցի։* ([illegible])։
*Խուրդա* ([illegible])*-չարեքա* ([illegible]) *է անում։* ([illegible])։

*Ծառի օրթունքը իր միջեմէն բաշամ դու՛քայ* ([illegible])։
*Ծովեմէն մէ գդալ ջուր վի կուլնիս, ծովի ջուրը չի պակսի։*
*Ծառն ասել է կացնին՝ դուն ինձ չիս կանայ կտրի, թէ կութը ինձմէն չըլէր։*
*Ծովեմէն անց կացայ, գրումը խիղտվեցայ։*

*Կուտ ունիս, քու հաւերուն ուտեցրու։*
*Կանց պուտը կարմիր չըկայ, վուր կտրիս, սիրտը սև է։*
*Կատվի վախչիլը (կամ՝ փաղչիլը) ինչկլի մարաքն է։*
*Կովը՝ հուրթին, հորթը՝ կովին, գլուխը ցաւի Նախրարածին։*
*Կատուն իր փուրի համա մուկն է բռնում։*
*Կուտը մէր տանն է ուտում, ձուն ուրիշ տեղ դնում։* ([illegible])։
*Կաղ իշով քարվանն* ([illegible]) *իս խառնվում։*

Հարուր միրքեմէն վուր մէ-մէ մազ գՋլիս, մէ միրուք կու գառնայ։
Հում կաթնակիրի (կամ՝ աթամալուրթու) մէջը բափա ([illegible]) չը կայ։
Հարցնելով, Հարցնելով Հնդստան կեՀան։
Հարեւմնի Հարսը սիրուն կու՛լի։
Հին Ջվալին ([illegible])՝ նուր տանգլիր ([illegible])։ ([illegible])։
Հօր փէշակը վուրթու կնիկն է։
Հարսնիք գնամ՝ ինչ տուն տանիմ. մաստակ ծամիմ՝ ինչ կուլ տանիմ։
Հացի կտրածը թուրը չի կտրի։
Հուրթը վուր կովի առաջը ննգնի, գէլը կուտէ։
Հացը գրած, բանն անխծած։
Հարեւմնիտ Համա մէ կով ուզէ, վուր Աստուծ քիզ էրկուսը տայ։
Հառ բախլին ([illegible]) ու թուրքի շառ ([illegible]) գցիլը Աստուծ ազատէ։
Ցաղօն տանը չէ։ ([illegible])։
Հենց գլղենաս՝ շաՀ Թամազի թուռն ըլի։ ([illegible])։

Ձիու վուտնիրը վուր Ջրումն ըլի, շվեցնիլ ([illegible]) չի ուզի։
Ձուգն ու միսը մէ պղնձումը չի էփվի։

Ղ'օչաղ գուղը տանտիրուչը գուղ կու բռնէ։

Մամասախլիսի ([illegible]) վրայ լուս վէր էկաւ. օ՜վ տեսաւ՝ գլխը։
Մուկը ծակը չէր մտնում, ցախաւելը կուղուն կապեցին։
Մտնելու առաջ փիքը արա, թէ վո՞ւնց պիտիս դուս գաս։
Մէ ղալիմ էրեսը լաւ է, քանց տանու գուլթանը։
Մեռլի վրայ ան լաւ խօսէ, ան վուՆչինչ մի ասի։
Մարթ ինչ ատողի կու ծնի, կու ծնի։
Մրչիմը վուր կու թիւաւուրվի, անկն էն չախը կու դուս գայ։

Մարտն ու Ապրիլը վօր առջևա ըլի, վօ՛ւնց մի գոմի ձմեռը, վօ՛ւնց մի վառնի։

Մասր վօր խոխո, խալ ([illegible]) կու վի կալնէ։ ([illegible])։

Մարթն էլ դուն էս, դդակն էլ դուն ունես ծածկած։ ([illegible])։

Մազը ծակ է։ ([illegible])։

Մաշ ու կինքս էս դէրնէս է։ ([illegible])։

Ներքևվանց լիձ է էրում, դրսևվանց ուրիշներուն։ ([illegible])։

Նախշվնու արատի խո տալլ՛։ ([illegible])։

Շան հաչալն էլ մէ փէշակ է։

Շունը թէ տէր ունէ, գիլլինն էլ Աստուած է։

Շնիրը կռվեցան, բօշու ([illegible]) բանն աջողվեցաւ։

Շուրին ([illegible]) գողնողը առաջ բունը կու պատրաստէ։

Շան կուդին հազար մանգանէն ([illegible]) դնիս, չի դրստվի։

Շունը շան թանթլիկը ([illegible]) չի ծամի։

Շան բերնեմէն ազատվեցայ, գիլլի բերանը ննգայ։

Շլինքը, հէնց գլդենաս, տանձի կուլթ ըլի դառի։ ([illegible])։

Չրտխան ի՛նչ տեսաւ. իր դէգի վուտը։

Չամիչը փլաւի վրայ կու սազ գայ։

Չրին՝ մէկ ու չամչին՝ էրկու, ինչկլի կուլթը՝ տաաէրկու։ ([illegible])։

Պարնի գլխին լափ ածինք։ ([illegible])։

Ջուր խմելիս օցն էլ մարթուն չի դիբչի։

Ջան ունիմ անելու, պահում իմ բաժնվելու։ ([illegible])։

Ռ.. տուցաղը ([illegible]) չի ըլի էնէնց ու թուրքի գերին, վունցոր էս իմ։

Սուփ Գէուրքի համա վօր մատաղ ([illegible]) ին տանում, գիլլի աճկը քօռանում է։

Վունցոր ապրանքը հէրն ու մէր չունէ. էնէնց էլ տուակը (կամ՝ հնքխաթը) հէրն ու մէր չունէ։ ([illegible])։

Վուր ջուրն ինձ կու խեղդէ, էս նրան ծով կ'օսիմ։

Վունց դաշտի թրքումն էս, վունց սարի մրքումն էս ([illegible])։

Վերի արտի ցորենն էս։ ([illegible])։

Տաք հացը փուխ է։ ([illegible])։

Տաշտն ու մաղը կտիրն ծվ է գրի, վուր էս գնիմ։ ([illegible])։

Տղայ, տղայ. օսկէ ջղա ([illegible])։ ([illegible])։

Տանձը գէվէր ննգնի բերնումս, կուլթն էլ բացը մնայ։ ([illegible])։

—Փլանը քիզ անխծում է։ «Իրա անգաճն ուփրօ ([illegible]) մօդիկ է» ([illegible])։

Փեսի շվաք՝ փշի շվաք։

—Փուղ, աամ, փուղ։ «Ջան ([illegible]), աամ, ջան։

Քօւրն ասին՝ մուժը թանգ է։

Քօւ էգը խիալով ([illegible]) է ման գալի։

Քուսուտ էծը աղբուրի ակնեմէն ջուր կու խմէ։

Քու պարկեմէն թանձր արա, իմ պարկեմէն նօստրն արա։

Օխչրի դմակ չէ ուտում, կուղեմէն ([illegible]) մօդիկ է, կ'օսէ։

Օխտը ծովեմէն, մէ կովեմէն։ ([illegible])։

Օսկոռ բերող շունը օսկոռ կու տանէ էլ։

Ուղտը թողիլ էս, լվի էգնէն էս ման գալի։

Ուղտի վրայ նստողը կուզէ-կուզ ([illegible]) ման չի գա։

Ուստա ([illegible]) մարթը էրկու վուտով մէջը կու ննգնի (կամ՝ կու խրվի)։ ([illegible])։

Օցն իր պուրտով, ջուշն ([illegible]) իր թիւով չի կանայ էստի գա ([illegible])։

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Պապը սարումը, վուտնիրը կրակումը (կամ դաշտումը)։
(Փուքր).

---

## ՕՐՀՆԱՆՔ ԵՒ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՔ

Վուստ ուղուր ([illegible]) ըլի։
Տունտ ծակվի. բրնձով լքցվի։ ([illegible])։

---

## ԱՆԷԾՔ ԵՒ ՑԻՁՈՅ

Մէճկտ փուսին, աճկտ հիրթին ([illegible])։ ([illegible],
[illegible])։
Մէ ծակ գդալով օղորմի նրան։
Ձ.. ցամքի Ջատկի շարթին։
Տրաքվիս ու պատռվիս։
Քու արանքը քու առչիւը դէմ գայ։
Քու սատղը ծլկվի ([illegible])։

---

## ՍՊԱՌՆԱԼԻՔ

Պանղուրի ([illegible]) կու տամ, պանչուրի խաղաս։

---

## ՓԱՂԱՔՇԱՆՔ

Ջանմ սան։ ([illegible])։

---

## ԽԱՂԲ ԵՒ ՀԱՆԱՔ

Անուշ արի, փեսայ ջան։ ([illegible])։
Ցուրտը մրսում է, կատուն գցում է։
Մ՛ւմ տունն իս հարցնում։ ([illegible])։

---

## ԱՒԵԼԻ ԵՒ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԵՐ

Արթար-Աւետիք։
Աքլար-Ճուշան։
Բիխլու-Պետրոս։ ([illegible])։
Բակլա-Սարուխան։ ([illegible])։
Բլու-Օհան։ ([illegible])։
Բումբուլաճէ։ ([illegible])։
Գմակ-Օհանէս։
Գնգրու-Սողոման։ ([illegible])։
Գիլիրճինք։ ([illegible])։
Եար-սիրեկան-Եօվանէ։ ([illegible])։
Եանշաղի-տղայ։ ([illegible])։
Զարբազան-Մաթօ։ ([illegible])։
Զօկ-Կարապետ։
Զօլ-զօլ-Ստեփան։ ([illegible])։
Թիղ-Գէօ։ ([illegible])։
Իշի-կծած-Աւետիք։
Լօբի-Գաբօ։
Խանգճալղունք։
Ծուլի-աքլար։
Կոլատինք։ ([illegible])։
Կուզիան-Ահարոն։ ([illegible])։
Կարտուկանինք։ ([illegible])։
Կուճի-Աւետիք։ ([illegible])։
Հաուշտրինք։
Հարնինք։
Հուտած-Աւետիք։
Ձիու-կծած։
Ճանճուռի-տղայ։ ([illegible])։
Ճշմարիտ-Աւետիք։
Ճինճարի-տղայ։ ([illegible])։

Ճանկօխնք։
Ճիրվէուլ- Սոլոման։ ([illegible])։
Մասրա-Գէօ։ ([illegible])։
Մաքուքինք։ ([illegible])։
Միրկիանինք։
Շամչի-Մելքօ։ ([illegible])։
Շաշ-Աւաքինք։ ([illegible])։
Զօլախ-Փարոխդ։ ([illegible])։
Զթրարինք։ ([illegible])։
Պարապ-Սարքիս
Պաճօ-Սոլոման։ ([illegible])։
Պօլտի-Խանում։ ([illegible])։
Ջօնջօլ-Խատի։ ([illegible])։
Սիւ-Գէօ։
Վիրխ-Չոխինք։ ([illegible])։
Տէր-պուլիկ։ ([illegible])։
Փարեշինք։ ([illegible])։
Քաջիլ-Պետրուս
Քիշմիշ-Թամադ։
Օ՚վ-պիտի-պիտի։

---

## ԵՐԵԽԱՆՑ ԹՈԹՈՎԱՆՔ

Կօլօ-բաբա։ ([illegible])։
Ձիրօ-Ձիրօ։ ([illegible])։

---

## ՈՃԵՐ ԵՒ ԴԱՐՁՈՒԱԾՆԵՐ

Ամոռ կոյս կողմանէ իմ խօսում։
Աճկիրը բնումը խաղում է։ ([illegible])։
Աղի-աղի արտասունք է չափում։ ([illegible])։

Թնգթնգում է երեխէն մրքի համար (յանխանալ)։
Ինչ հիւանդ է. մէ չամչին օխտը ջէր ([illegible]) է կծում։
Իր քաշն օսկի է նստի նա ինձ։ ([illegible])։
Կոճկնիր է կապի պտուղը (կամ ծաղիկը)։ ([illegible])։
Կցնուրթ կուղիմ իմ նրան։ ([illegible])։
Կախմանգ օմքին է։ ([illegible])։
Հուլ-հուլի խաղցրուց։ ([illegible])։
Հացեմէն կուտ կու հանխա։ ([illegible])։
Հացի կցնուրթ։ ([illegible])։
Ճան կոճի օմքին է։ ([illegible])։
Վուտնիրքս ննգաւ։ ([illegible])։
Տաշտ ու մաղը կապից։ ([illegible])։
Տաշտն ու մաղը շալկին ման է գալի. ծխոը, փուր ծխո է, բուն է շինում։ ([illegible])։
Փափուկ փուշ օմքին է։ ([illegible])։
Փուլ ու քանդ էլաւ։ ([illegible])։
Փուղի հետ քաշվեցայ։ ([illegible])։
Քարին ու թփին են տվի մէճկը։ ([illegible])։
Քուևն առաւ։ ([illegible])։
Քէք էլ խօսկ համաւ։ ([illegible])։
Օխտը-հարսի-սիւէրնոր ([illegible])։

# ՑԱՆԿ

Երես.

Նուէր Գէորգ Ալխազեանի անմոռանալի յիշատակին . . 3
Յառաջաբան . . . . . . . . . . . . . . . . . 5

## Ա. ԱՂՕԹՔՆԵՐ

1. Թիֆլիսեցու մաղթանքը Տէրունական աղօթքից յետոյ. 13
2. Իս տունը տաճարինն է . . . . . . . . . . . . 14
3. Պօղոս Պետրոս Ընթանիոս . . . . . . . . . . . 15
4. Մտայ ի տիղս, ի գերեզմանս . . . . . . . . . »
5. Խաչսին ու Քրիստոսին . . . . . . . . . . . »
6. Ըհա քու շան ակռէքը. . . . . . . . . . . . 16
7. Ղո՛նդ, դո՛նդ, էտի կա՛ց . . . . . . . . . . »
8. Լուսինը նուր շնաՀատր . . . . . . . . . . »
9. Ալալիօս, Գալալիօս . . . . . . . . . . . . »
10. Մէրն ու վուրթին. . . . . . . . . . . . . 17
11. Աստուծ օղորմի էն պաուի Հոքուն . . . . . . »
12. Աստուծ օղորմի անփշատակ Մանիշակի Հոքուն. . . »
13. Միր կտիր էդնէն ծով կայ . . . . . . . . . »
14. Մէրն ու վուրթին չորէք ճանփին դիփ լացէին . . 18
15. Գուչին, բուչին, ձօրէկ խան . . . . . . . . »
16. Քու սկեսուրը Հարս կու սիրէ . . . . . . . . »
17. Սրովկը վար արաւ . . . . . . . . . . . . . 19
18. Օվոր խօսի, խոստովանի. . . . . . . . . . . »
19. Գմբրի, դմբրի, դմբրակալի . . . . . . . . . »
20. Հաւկուրը մխոս է. . . . . . . . . . . . . »
21. Քու[illegible]փայ խուղը (ֆլան) է ուտում . . . . . . . 20
22. Մօզիկ բարեկամ շատ ունէ . . . . . . . . . »
23. Ես քի մաշիմ, դուն ինձ չէ . . . . . . . . . »

## Բ. ԵՐԳԵՐ

### I

### ԵՐԵԽԱՆՑ ԵՐԳԵՐ ԵՒ ԽԱՂԵՐ


1. Քար պահուկ, պահուկ, պահուկ . . . . . . . . . 21
2. Ականա՛, գէգա . . . . . . . . . . . . . . . . 22
3. Դէգլի, գէգլի, ո՞ւր ես գնում . . . . . . . . . »
4. Դօլ դօլ ախբան . . . . . . . . . . . . . . . »
5. Ոտատա, քատատա, շամամշու . . . . . . . . . 23
6. Տիտօխին, տխտմօրօխին . . . . . . . . . . . »
7. Մինամ կատու . . . . . . . . . . . . . . . . 24
8. Էշը ջուրը տարել էս . . . . . . . . . . . . »
9. Էն ո՞վ է գալի . . . . . . . . . . . . . . . »
10. Կոպալ, կոպալ . . . . . . . . . . . . . . . 25
11. Ծլի՛տ, ծլի՛տ, ծտաքուն . . . . . . . . . . »
12. Մէկ, էրկու, տասնու վից . . . . . . . . . . 26
13. Ջան, ջան, կիրագի . . . . . . . . . . . . . »
14. Լուսացաւ, լուսացաւ . . . . . . . . . . . . »
15. Արեգա՛գ, արեգա՛գ, դուս արի . . . . . . . . 27
16. Էքուց կիրագի է . . . . . . . . . . . . . . »


### II

### ԴԱՆԴԱՆՆԵՐ


17. Դա՛ն դա՛ն, դլինկլիկօ ջան . . . . . . . . . 28
18. Դա՛ն դա՛ն, դնգուցը . . . . . . . . . . . . »
19. Դա՛ն դա՛ն, աննման . . . . . . . . . . . . . »
20. Դա՛ն դա՛ն, դա՛ն չունիս . . . . . . . . . . »
21. Դա՛ն դա՛նի, դա՛ն արա . . . . . . . . . . . 29
22. Դա՛ն դա՛նի դա՛ն, դնգուցն ես . . . . . . . »
23. Դա՛ն դա՛նի, դա՛նեցի . . . . . . . . . . . »
24. Դա՛ն դա՛ն, դա՛ն, շվիլի . . . . . . . . . . »
25. Դա՛ն դա՛նի, դա՛ն դանի . . . . . . . . . . 30

26. Դա՛ն դա՛նի, դիարն ես . . . . . . . . . . . . . . »
27. Դա՛ն դա՛նի, դա՛ն դա՛նի . . . . . . . . . . . . . »
28. Դա՛ն դա՛նի, դա՛ն դա՛նի . . . . . . . . . . . . . 31

## III

## ԵՐԳԵՐ ՀԵՔԻԱԹՆԵՐԻՑ

29. Ծիտ իմ, ծիտ իմ, կու ծլվլամ . . . . . . . . . . 32
30. Նանա նանա, Օրանդուլ . . . . . . . . . . . . 33
31. Զօնդուր, չօնդուր . . . . . . . . . . . . . . . »

## IV

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ԱՇՈՒՂՆԵՐԻ ԵՐԳԵՐ

32. Էրթի քալի, էրթի վաժի ջուրը գնում է օ . . . . . 34
33. Վի կացան ու վերի քուչէն խալեցին . . . . . . . 35
34. Փնթի կնգայ թարխին ասիմ . . . . . . . . . . . »
35. Խոյանց գնացի Մարնէուլ . . . . . . . . . . . . 36
36. Քու զօզլիկը Գանջու թիլ է . . . . . . . . . . . 37
37. Թաքաուրս ես, դխւանս արա, թաք քու արևն կու սիրիս . . . . . . . . . . . . . . . 39
38. Գէլն ու չոբանը մէկս մէկու ռաստ էկան . . . . . »
39. Մէ տարի գնացի Չիթախինց բաղը . . . . . . . . 40
40. Ալթամորթի, քու Ասծու մօղ դրուստ կաց . . . . . 41
41. Խարաղի աղաթն է, կու կրծէ կաշին . . . . . . . 42
42. Օվ վարթ, եա իմ քիզ մօղ դալու . . . . . . . . . 43
43. Ճամչի- Մեղքօն տեճաւ էրազ . . . . . . . . . . »
44. Էս տարվայ օխնածնիրը գլխի լօթի ուստա . . . . »
45. Հաշտուլ գէղէն ու Մանթաշը . . . . . . . . . . 44
46. Նազ ես անում, Հազ ես անում . . . . . . . . . »
47. Դարդս դարդիս մէկն է . . . . . . . . . . . . . »
48. Ա՛ տըղայ, դռնովն արէ . . . . . . . . . . . . »
49. Բօխտ սալբու չինարի . . . . . . . . . . . . . 45
50. Մէ օր ինչկլի մուլթը տուցաղ պաճեցիր . . . . . »

51. Աքլորը կու կանչէ վաղուին . . . . . . . . . . 46
52. Վանքումը բաց կ'օնին մասունքն ու խաչը . . . . »
53. Պառաւ պապը կրակ ու պէծ էր . . . . . . . . »

## Ե

## ՈՏԱՆԱՒՈՐՈՎ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ

54. Հարէ՛, հարէ՛, խնոցի . . . . . . . . . . . . »
55. Բարի լուս քի, առուտեհան . . . . . . . . . . 47
56. Մունթիկ, մունթիկ . . . . . . . . . . . . . »
57. Վանքին խալի . . . . . . . . . . . . . . . 48
58. Երկուշաբթի՝ շըլդօրա . . . . . . . . . . . »
59. Բանն ինչ կ'օնիս, տղուտ է . . . . . . . . . 49
60. Տաւշահնուց խուրդա արա՛, ա՛ռ մէ չարէք միս, բատօնօ . . . . . . . . . . . . . . . »
61. Մկրատը կու դնիմ ձիւով ու կարով . . . . . . . 50
62. Էվօ-Մէվօի տղայ իս . . . . . . . . . . . . »
63. Թարխանադինց Գօգին . . . . . . . . . . . . »
64. Օհանջանինց աղչիկը . . . . . . . . . . . . 51
65. Թարխանադինց քօծը . . . . . . . . . . . . »
66. Արութին . . . . . . . . . . . . . . . . . »
67. Իս ու իմ հօքին . . . . . . . . . . . . . . »
68. Շուշա բաղրիջան . . . . . . . . . . . . . . 52
69. Ուլ էիր ու տիկ դառար . . . . . . . . . . . »
70. Տարան, տվին Տէր Օհանին . . . . . . . . . . »
71. Աղչիկ ունիմ հունարի . . . . . . . . . . . . 53
72. Գէղաս քալօ Նազունդի . . . . . . . . . . . »
73. Մեռնի՛ դէդէն, քի համա . . . . . . . . . . . »
74. Անիչկէն մեռնի կտիրը . . . . . . . . . . . . 54
75. Ունքիրը շօրի-շօրը . . . . . . . . . . . . . »
76. Սարի էծ իս, էղ չունիս . . . . . . . . . . . »
77. Սատանայ, սատանայ . . . . . . . . . . . . »

78. Խապանախի, շօրշօրի . . . . . . . . . . . . . . 55
79. Դիմպլիպլիտօ, նաղարա . . . . . . . . . . . »
80. Վարանցովը գցից . . . . . . . . . . . . . . »
81. Ջղրաշէնը ջիղը է արի . . . . . . . . . . . . 56
82. Ամէն, ամէն, ախմ ձիգ . . . . . . . . . . . »
83. Դուն վուր ինձ ասիր՝ գնա՛, ասա՛ . . . . . . . . »
84. Ձօխուրը ննդաւ կարասը . . . . . . . . . . . »
85. Քաչալ, քաչալ, քաչքաշի . . . . . . . . . . . 57
86. Ձօլախ, չօլախ, չօլ գցէ՛ . . . . . . . . . . . »
87. Արի՛, գնա՛նք գամօժնէն . . . . . . . . . . . »

VI

ՋԱՆԳՈՒԼՈՒՄՆԵՐ . . . . . . . . . . . . . . . . . »
Գ. ԱՌԱԾՆԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ . . . . . . . . . . 65

Դ. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԵՒ ԾՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

I

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ . . . . . . . . . . . . . . . . . . 175

II

ԾՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ . . . . . . . . . . . . . . . . 178
Ե. ՕՐՀՆԱՆՔ ԵՒ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՔ . . . . . . . 179
Զ. ԱՆԷԾՔ ԵՒ ՑԻԾՈՑ . . . . . . . . . . . . . . 185
Է. ԵՐԴՈՒՄՆ . . . . . . . . . . . . . . . . . . 197
Ը. ՍՊԱՌՆԱԼԻՔ . . . . . . . . . . . . . . . . . 202
Թ. ՓԱՂԱՔՇԱՆՔ ԵՒ ԽՆԴԻՐ . . . . . . . . . . . 207
Ժ. ՈՂՋՈՅՆ ԵՒ ՇՆՈՐՀԱԽՈՐՈՒԹԻՒՆ . . . . . . . . 210
ԺԱ. ԾԱՂՐ ԵՒ ՀԱՆԱՔ . . . . . . . . . . . . . . 214
ԺԲ. ԿԱՆԱՆՑ ՍՈՒԳ . . . . . . . . . . . . . . . 219
ԺԳ. ԿԵՆԱՑՆԵՐ . . . . . . . . . . . . . . . . . 221
ԺԴ. ՓՈՂՈՑԷ-ՓՈՂՈՑ ՇՐՋՈՂ ՄԱՆՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ (չարչի-ների) ԲԱՑԱԳԱՆՉՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . . . . . . 223

ԺԵ. ՁԱՆԱԶԱՆ ԵՐԿՐԱՑՈՑ ՄԱՍԻՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱԻԵԼԻ ԵՒ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԵՐ

I

ՁԱՆԱԶԱՆ ԵՐԿՐԱՑՈՑ ՄԱՍԻՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ . . . . . . . 225

II

ԱԻԵԼԻ ԵՒ ՀԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ ԵՒ ԱԶԳԵՐ . . . . . . . . 226

ԺԶ. ԵՐԵԽԱՆՑ ԹՈԹՈՎԱՆՔ . . . . . . . . . . . 234

ԺԷ. ՈՃԵՐ ԵՒ ԴԱՐՁՈՒԱԾՆԵՐ . . . . . . . . . . 237

ԺԸ. ՀԵՔԻԱԹՆԵՐ

1. Մարթուս ճակտի գիրը . . . . . . . . . . . 328
2. Խեղճ սովդագարը . . . . . . . . . . . . . 331
3. Աշուղ Ղ'արիբը . . . . . . . . . . . . . 334
4. Պստի մուկը . . . . . . . . . . . . . . . 342
5. Քիզմէն մինձ մարթ նօքար մէ բռնի . . . . . . 346
6. Իրեք խուրթ աղչիկ . . . . . . . . . . . . 350
7. Խուրթ մէրը . . . . . . . . . . . . . . . 352
8. Լաւութին արա, ջուրը գցէ. ձուգը չիմանայ, Աստուծ կու իմանայ . . . . . . . . . . 356
9. Ռաշը, ան թիւաուր հրեղէն ձին . . . . . . . 361
10. Օխտն աղբէրն ու մէ քուրը . . . . . . . . 368
11. Բախտ . . . . . . . . . . . . . . . . . 372
12. Գիժն ու խելօքը . . . . . . . . . . . . . 374
13. Իղբալ գրողը . . . . . . . . . . . . . . 376
14. Աթամավութու մէջը բաւխա չը կայ . . . . . . 379
15. Լիդր գգող, լիդր մանող աղչիկը . . . . . . . 380
16. Ցեթռան . . . . . . . . . . . . . . . . . 382
17. Օցն ու ծեր մարթը . . . . . . . . . . . . 385
18. Օցն ու չօբանը . . . . . . . . . . . . . 386
19. Թաքաւուրն ու օխտը վուրթին . . . . . . . . 388
20. Ճքնաւուր . . . . . . . . . . . . . . . . 389
21. Սուտ փալ բաց անողը . . . . . . . . . . . 391

22. Ամեն օմքնու վարծկը իրա առաջը կերթայ . . . 394
23. Թաքաւուրն ու գինին . . . . . . . . . . . 396
24. Բազազ . . . . . . . . . . . . . . . . 397
25. Դաղամէր . . . . . . . . . . . . . . . 399
26. Բէզօվլամթ վուրթին . . . . . . . . . . . »
27. Զալում կնիկ . . . . . . . . . . . . . 401
28. Օրսանդուլ . . . . . . . . . . . . . . 402
29. Ըճկէն գցած վուրթին . . . . . . . . . . 403
30. Կատվով ուժի փորցիլը . . . . . . . . . 405
31. Վրայ էրկու կնիկը . . . . . . . . . . . 406
32. Ընրաբիշ սկեսուրը . . . . . . . . . . . 408
33. Տուտուց կնիկ . . . . . . . . . . . . . 410
34. Ծառի վուտի փուշը . . . . . . . . . . . 412
35. Մորթած աղբէրը . . . . . . . . . . . . 414
36. Գ'օնաղ . . . . . . . . . . . . . . . . 415
37. Դարմնի տակի կնիկը . . . . . . . . . . 416
38. Հարսիկուլ . . . . . . . . . . . . . . 417
39. Փափա . . . . . . . . . . . . . . . . 418
40. Աստուծ ըլթարեմէն պահէ . . . . . . . . »
41. Ուղտը մէ փուղ . . . . . . . . . . . . 419
42. Ձարչարանքով աշխատած աքասին . . . . . . 420
43. Ախմախ մարթ . . . . . . . . . . . . . 421
44. Էգեղեցի շինող թաքաւրը . . . . . . . . »
45. Թլվատ աղջկերքը . . . . . . . . . . . 423
46. Իծանիրը . . . . . . . . . . . . . . . »
47. Ուղտի ձաքը . . . . . . . . . . . . . 424
48. Ծանդր-ծանդր խօսէ . . . . . . . . . . 425
49. Գնալ թանգութինը, գալ էժնութինը . . . . . »
50. Ձունն ու կատուն . . . . . . . . . . . 426
Վերջաբան . . . . . . . . . . . . . . . 427
Յաւելուած . . . . . . . . . . . . . . . 429

## ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

ԵՒ

## ԹԵՐԻ ՄՆԱՑԱԾ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ *)

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 19 | 18 | տմպլ. . . . . . . . | (տխմրուլ՝ անագի ջուն) |
| 22 | 1 | Ակտնա. . . . . . . . | (ականք, նայեր) |
| » | 13 | Կոտմի . . . . . . . . | Կոտմի (երեւի՝ Կոզմի—Թիֆլիսի հին եկեղեցի) |
| » | 19 | մխտ * . . . . . . . . | մխա |
| » | 25 | Ին աթալ . . . . . . | Դին աթար (հասատը կը ձգէ) |
| » | 26 | Դամբուլ գ'աթալ. . . | Դամուր գ'աթար (երկաթ կը խառնէ) |
| 25 | 10 | սալակ . . . . . . . . | (կոզով) |
| » | 11 | թալակ . . . . . . . . | (թակարդ) |
| » | 14 | Նա գուս արաւ. . . . | Նա գուս արաւ՝ Նա բալի սաստ, Նա հալն սաստ. Նա կուտ գցեց. Նա մի քաշեց: |
| 30 | 3 | Քորէն (եզր). . . . . | (ժապաւէն) |
| » | 6 | (ուհճանի գոյն...). . . | (ռաւճանի, շաւճապրամի գոյն...) |
| » | 16 | Քաղքի * . . . . . . | Քաղկի (**) |
| » | 18 | շափրատտ (կլոծքի զարդ) | (սփոփչ. արու և էգ կոճակ մետաղեայ) |
| » | 19 | շարէք . . . . . . . . | ($2^1/_4$ փութա) |
| » | 20 | Վէրա. . . . . . . . . | (քաղաքին մասն) |
| » | 21 | Օրթաճալա . . . . . | (մր. կղզի. քաղաքին մասն. այգիք) |
| » | 22 | Կրծանիս . . . . . . | (կամ Սերանատոր. այգիք քաղաքին մօտ. առաջ գիւղ է եղել) |

*) Խակակէս տպագրական սխալները խաչանիշով են նշանակուած: Իսկ ճիշտ վերաբերում է բացատրութեանց. ես գրել եմ այն շրջագայութեան բառերի գիմացը, որ կարողացել եմ բացատրել, դուցէ մի քանիսը ոչ բոլորովին ճիշդ. իսկ չըր հասկացածներս թողել եմ. նմանապէս թողել եմ առանց բացատրութեան ընդհանրացած սովորական բառերը:

**) Մի քանի տեղ կրկնուած միանման սխալը միայն մի տեղ եմ գրել:

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 31 | 7 | այլթափէն (մեռաղեայ ջրաման) . . . . . : | (երբեղ) |
| » | 14 | շամամէ. . . . . . . . | (շամամ՝ փոքրիկ սեխ) |
| » | 15 | թամամես (մօրդ համար տալքի) . . . . | (նմանես) |
| » | 20 | սուրա . . . . . . . . | (դորակ) |
| » | 21 | կուլա. . . . . . . . . | (երեւի կէկլայ բառից. երկայնավիզ ջրաման) |
| » | 22 | Թայ ֆուհարգար . . . | (գոյնզգոյն նկարի նման) |
| » | 23 | Դ.'այամքրի ծառ. . . | (ծառազարդ կտաւեղէն) |
| » | 24 | մաղա . . . . . . . . | (աղանդեր. ակռամաժէնք) |
| » | 28 | Շաքեր . . . . . . . | (Շաքի՝ Նուխու գաւառ) |
| » | » | չերվան . . . . . . . . | (Շամախու նահանգ) |
| » | 29 | նարդեվանը դեվան խան | (սանդուխով դատարան) |
| » | 15 | քօծ . . . . . . . . . | (աղախին) |
| » | 16 | բեջ. . . . . . . . . . | (ծառայ) |
| » | 18 | գունտամ . . . . . . . | (աղաւնու վռնչումն) |
| » | 20 | աղեգ. . . . . . . . | (նաղելի) |
| 33 | 7 | Պախրէն . . . . . . . | (կխտար. այծեամն) |
| 34 | 17 | պղենձը. . . . . . . . | կաղթսան |
| 35 | 10 | երկու* . . . . . . . . | երեք |
| 36 | 8 | Զար չեքիլէն. . . . . | (ոսկեթել լաչաք, շղարշ. կողպատ) |
| » | 26 | Աչն-օրնը . . . . . . . | (աչքակապութիւն. չնչին բան) |
| 37 | 5 | քափը . . . . . . . . | (փրփուր) |
| » | 23 | գաղը. . . . . . . . . | (խարան) |
| 38 | 14 | քարվան . . . . . . . | (կարաւան) |
| » | 15 | Եանա-եանա. . . . . | (տոչորեալ) |
| 39 | 1 | թաք. . . . . . . . . | (երանի թէ) |
| » | 9 | ջավահիր . . . . . . | (գոհար) |
| » | » | եար . . . . . . . . . | (սիրահար) |
| » | 13 | խէրը. . . . . . . . . | (օգուտ, բարի) |
| » | » | շառը. . . . . . . . . | (զրպարտութիւն. չար) |
| » | 14 | գոռ՚գամ ? . . . . . | գոռ՚քամ |
| » | 16 | խեխառիմ ? . . . . . | խեղդեմ |
| 40 | 3 | եղրայ . . . . . . . | (բաղդ) |
| » | 4 | չնքեա . . . . . . . . | (չնքի. պարանոց) |

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 41 | 1 | բարաստ (տարաբաղդ) | (բարաշխ. խիստ, անյաջող) |
| » | 14 | մօտ * . . . . . . . . | մօդ |
| » | 15 | Սթխով (հաւասով). . | (ջերմեռանդ սրտով) |
| 42 | 1 | հալ . . . . . . . . . | (ողպխուլթիւն) |
| » | 2 | մալ . . . . . . . . . | (ինչք) |
| » | 5 | դամ ու դօվրան (վայելչութիւն) . . . . . | դամ (ցնծութիւն, ու դօվրան (ժամանակ) |
| 43 | 3 | էշխեճէն . . . . . . | (սէր) |
| » | 5 | Խէյվանուձո. . . . . | (ծառուղի, թալար, սարքնայ) |
| » | 15 | լօթի. . . . . . . . . | (մերկ, ճշմարտախօս, արբեցող) |
| 44 | 2 | խաշը. . . . . . . . . | (քալլափաշա. ոչխարի ոտն ու գլուխը) |
| » | 21 | Թիղանը . . . . . . . | (կրեղան) |
| 45 | 1 | Բօխո. . . . . . . . . | (հասակ) |
| » | 8 | հախ . . . . . . . . . | (իրաւունք) |
| 47 | 2 | չվան. . . . . . . . . | (պարան) |
| » | 6 | չօմախ . . . . . . . . | (մահակ) |
| » | 11 | Մունթիկ . . . . . . . | (մոնթ, գալիր) |
| 48 | 2 | Կուր (գիւղի անուն). . | Կ'ուր (գիւղ էջմիածնայ մօտ) |
| » | 16 | ջհուր. . . . . . . . . | (հրէայ) |
| 49 | 10 | խուրդա արա . . . . | (մանրացնել) |
| 50 | 7 | նօքար . . . . . . . . | (ծառայ) |
| 51 | 2 | լափչիքը . . . . . . . | (կօշիկ) |
| » | 4 | շուրշխելէն . . . . . | (սուջուխ) |
| 52 | 1 | բադրիջան . . . . . | (պոռինջան. սմբուկ) |
| » | 5 | սանթուրը . . . . . | (տաւիղ) |
| » | 13 | Լուլէտ . . . . . . . . | (խողովակ. փողրակ) |
| 53 | 15 | (խրխնջալ) * . . . . | (խրխնջել) |
| » | 19 | Փայուսակ՝ հրուշակ . | (խորխոխ) |
| 54 | 5 | թախչումը . . . . . . | (պտրահան, պատուհան, բաց դարակ. դոլապ) |
| » | 15 | ծուտի-պուտի . . . . . | (լիմար-լիմար. չնչին) |
| 55 | 2 | Չէթիսխելի, ջօնջօլի. . | Չէթիսխելի (ձիթապտուղ), ջօնջօլի (փարփար) |
| » | 3 | Օրագուլի . . . . . . . | (սաղմոն) |

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| » | 5 | Դիմպլեպիտո, նաղարա | (Թմբուկ) |
| 56 | 1 | Ջիգր . . . . . . . . | (ոխ) |
| 58 | 15 | Ախտալուխը. . . . . . | (բաճկոն, Թիկնոց) |
| 59 | 10 | չարդախտուր . . . . . | (տան առաջի ծածկոց) |
| » | 12 | մեր * . . . . . . . . | միր |
| » | 13 | տերն (չայտնի). . . . | (հաէր. բաց օդ) |
| » | 20 | գեշերխ * . . . . . . | գիշերխ |
| 60 | 24 | դ'այԹան . . . . . . | (մետաքսեայ հիւսուածք բոլորաձև) |
| » | 36 | մահանա . . . . . . | (պատճառանք. պաղայք) |
| 63 | 13 | խօջէն . . . . . . | (ներքինի. ուսումնական, ալեւոր, հարուստ վաճառական) |
| » | 35 | Հօրէն * . . . . . . . | Հօրէն |
| 65 | 5 | Թյաշէ . . . . . . . | (տաշեղ) |
| 66 | 20 | հասնիք * . . . . . | հարսնիք |
| 69 | 31 | իծիր * . . . . . . . . | իծին |
| 70 | 2 | նէյնիմ-նէյնիմը. . . . | (ինչ անեմ, ինչ անեմ) |
| 72 | 12 | Ամանաթը (պատանդ) | (աւանդ) |
| 77 | 16 | կնդանը։ (?). . . . . | կնդանը։ (անաղուհաց մարդուն որքան էլ տանցնես, այքը կնոջըդ վրայ կը լինի) |
| » | 30 | սանամէր։ (ծոյլ մարդուն). . . . . . . | սանամէր։ (նազիկ կամ նիհար ոգմնուն) |
| 86 | 32 | արէ * . . . . . . . . | Գարէ |
| 92 | 14 | գուզ'է * . . . . . . . | գ'ուզէ |
| 93 | 28 | չախմախ (գայլախազ, | |
| | 29 | կոռուկ). . . . . . . | (հրահան, կոռուկ) |
| 96 | 4 | դ'օշերուն (Թեզանիք). | (Թեզանիքի ծայր, Թեւի Թաթ) |
| 99 | 1 | կու տրաքացնէ * . . . | կու տրաքեցնէ |
| » | 30 | կէնճի (մանր քար). . | (խիճ) |
| 104 | 5 | վէր ննգնի (նիհարել) | (տօռանալ) |
| 109 | 4 | չալխանէն. . . . . . | (փոքրիկ կաԹսայ) |
| » | 15 | անում * . . . . . . . | անուն |
| 112 | 3 | խաշու . . . . . . . | (արգանակ) |
| 113 | 1 | զղճուԹին (զեղծ). . . | (ախեղծ) |
| » | 28 | Խօսն * . . . . . . . . | Խօսքն |

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| 117 | 7 | կու գփփշի * . . . . | կու գերշի |
| 120 | 11 | հոգայ * . . . . . . . | հոգա՛ |
| 121 | 3-4 | ուսզում է * . . . . | ուզում է |
| 126 | 10 | խուռք * . . . . . . | խուրը |
| » | 16 | կոզպէքը * . . . . . | կողպէքը |
| 130 | 30 | հել ու բահար . . . | հել (շուշմեր) ու բահար (համեմունք) |
| 131 | 20 | չի կփշի * . . . . . . | չի կպչի |
| 134 | 26 | ականչից * . . . . . . | ականջից |
| 135 | 9 | Մանէն (փոխադարձ) . | (Ես՝ ծաղը) |
| 141 | 10 | դալի * . . . . . . . | գալի |
| » | 24 | Ջավզ * . . . . . . . | (Հնդիկ ընկոյզ) |
| 145 | 9 | չի սորվի * . . . . . . | չիս սորվի |
| 147 | 18 | Շահրուզադն բաղը վար. (կայք ունի անօգուտ, միայն անունով). . . | (Շահրուզադը այգի ունի. պարտքով ծանրաբեռնած կայք ունեցողին). |
| 148 | 24 | հուղ * . . . . . . . . | խուղ |
| 150 | 25 | Զօմարդի (վստահ, կըտրուկ) . . . . . . . | (առատաձեռն) |
| 151 | 21 | չախչախն (չանչախ) . | (չխչխկոց. ջախջախ) |
| 153 | 28 | (Սփ կերք-Գիւտ Խաչի) | (Սփ կերք՝ Սբ. Գէորգայ զօրավարի օրը, սեպտեմբերի վերջին) |
| 157 | 8 | գորգռում է * . . . . | գոռգռում է |
| » | 27 | Վելա-վելա . . . . . | (վելալար) |
| 163 | 29 | Փողը * . . . . . . . . | Փուղը |
| 167 | 18 | քօսէն (անմօրուս) . . | (քարձ) |
| 170 | 3 | իս * . . . . . . . . . | ես |
| 173 | 25 | հաքի * . . . . . . . | աքի |
| 176 | 26 | (պառուահան) * . . . . | (պորահան) |
| 187 | 25 | Գիժ լէլօ (?). . . . . | (անուն). |
| 188 | 19 | մաշխալա (մոմակալ) . | (ջահ. կերոն) |
| 193 | 7 | Պեպկիկա (բեբ). . . . | (ակնակապիճք) |
| 195 | 20 | Բառա (խուլ) * . . . . | Բօռ. (կոյր) |
| 203 | 22 | տունը * . . . . . . . | տուն |
| 206 | 10 | փուստ (մաշկ) ու փալանգա (վազը) կու | |

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| | | հանիմ . . . . . . . | (երեւի՝ վազքի պէս կը մաշկեմ քեզ) |
| 215 | 1 | Մոմբամբ (տանուտէր). | (կառավարիչ) |
| 228 | 16 | Իչի-նոզախ-տղայ . . . | (նոզատ՝ չկամ) |
| 229 | 28 | Կոնդուրմէրսինք . . . | (գեօնդար՝ ուղարկեցէք. մէրսին՝ որ տայ) |
| 230 | 12 | զաղադ * . . . . . | զ'ադադ |
| 231 | 20 | Գոտիկ. (պտուկներիս). . | (դուրս ընկնող). |
| » | 13 | զաչարդուղ * . . . . | զ'աչարդուղ |
| 240 | 16 | Անգի-չանգի * . . . . | Անգի-չանգի |
| 255 | 5 | Դժարատեղս տասում է, (աչքը խաղում է): . | (մի որ և. եցէ աչքը խաղում է, որ վատ ունի փորձած): |
| 266 | 29 | վաստակոում ս. . . . | վաստակոում ես |
| 269 | 17 | երեւսց * . . . . . . | երեւեց |
| 272 | 32 | Խնուց ու նուրուց. (չատ). | Հնուց ու նուրուց: (մոռացած բարեկամի հետ նորոգել բարեկամութիւնը). |
| 275 | 6 | Մնով առուտուր. (գեղչելով առուտուր): . . | (ծմէնի՝ խաչու, արգանակ. չահաւէտ առուտուր). |
| » | 12 | Միտը սրած ամքին է . | (բացի գրած բացատրութիւնից և՝ վարպետ, տատանայ). |
| 282 | 22 | յաւերժահարսան * . . | յաւէրժահարսունք |
| 298 | 27 | Նախչմնու արաափ (եփ). | (լաւ դրամ): |
| 302 | 2 | Շաքրէ հաց. (հրուշակ). | (շաքարահաց). |
| 307 | 7 | Ռօկի (ոսս) . . . . . | (ոսկի արժառ. մարխ, չրա) |
| 311 | 2 | Սօփի սօզօմ (կամ սօզան) ամքին է. (կերծաւոր) . . . . . . | (Ճշմարիտ մարդ). |
| 314 | 8 | գլխիս * . . . . . . . | գլխիս |
| 315 | 16 | Տան փուզէն յաւը չէ. (անյաջող). . . . . | (փուզա՝ պահապան ոգի) |
| 321 | 20 | գարդն են * . . . . . | գարդն եմ |
| 332 | 16 | Թուշունքը* . . . . | Թուշունքը. |
| 333 | 5 | Թաքատրըը * . . . . | Թաքաուըը |

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| » | 29 | մարթկերանց էլ՝ | մարթկերանցն էլ |
| 338 | 28 | տունը | տուն |
| 349 | 13 | հրամանքն էնի | հրամանքն է էնի |
| 350 | 13 | Հէրր | Հէրը |
| 353 | 22 | աց ըլի | լաց ըլի |
| 363 | 4 | Մինձ | Մինձն |
| » | 24 | հեգ էլ | հեգն էլ |
| 380 | 12 | ապրանձ | ապրած |
| 384 | 31 | Ճամփու | Ճանփու |

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

(ծռ)
ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0638980

Уксп
2767